Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ԿՏՐԻՃ ՍԱՐԴԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

(ինչպե՞ս կործանվեց Հայաստանի Հանրապետությունը)

ԵՐԵՎԱՆ
«ՆԱԻՐԻ»
2007

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ս 260

Սարդարյան Կտրիճ
Ս 260 Հայաստանը համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում.– Եր.: Նաիրի, 2007, 256 էջ:

Քսաներորդ դարասկիզբ, առաջին տասնամյակներ: Համաշ խարհային կատակլիզմներ՝ Առաջին աշխարհամարտ, ռուսական հեղափոխություններ, Եվրոպայի, Ռուսաստանի, Թուրքիայի քաղաքական խաղեր, դավեր: Հայաստան: Ռազմական, քաղաքական, դիվանագիտական բարդագույն իրավիճակում հայտնված Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարությունը, կուսակցությունները, սփյուռքահայ ազգային գործիչները, ողջ մեր ժողովուրդը ճգնում է ելք գտնել հնարավորինս անվնաս ու անխաթար դուրս գալու իրադրությունից, շարունակելու պետական շինարարության գործը, վերադառնալու խաղաղ, ստեղծագործ կյանքի:

Բարդ և հակասական այս իրադրությունում հայ ժողովուրդը ձեռք բերեց պետականություն, որը կորցրել էր հարյուրամյակներ առաջ:

Կտրիճ Սարդարյանն այս գրքում հաջող փորձ է արել դիտարկելու այդ բախտորոշ դարաշրջանի անցքերը անկողմնակալ հայացքով, առանց զգացմունքայնությանը տուրք տալու, միայն ու միայն փաստերի, վավերագրերի, ժամանակակիցների (հայ և օտար) վկայությունների վրա հենվելով: Արժեքավոր այս աշխատությունը լույս է սփռում մեր պատմության ամենակնճռոտ շրջաններից մեկի կարևորագույն և ոչ մինչև վերջ ուսումնասիրված ու գնահատված շատ հարցերի վրա:

Գիրքը հասցեագրվում է մասնագետներին և հայոց պատմությամբ հետաքրքրվող ընթերցողների լայն շրջաններին:

Ս 0503020913 / 705(01)2007 — 2007

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-550-01485-1

© Կտրիճ Սարդարյան, 2007
© «Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ, 2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք 5

ԳԼՈՒԽ I

Մայիսյան իրադարձությունները և ռուս-հայկական բանակցությունները 25

ԳԼՈՒԽ II

Հայաստանը պարտության մատնելու բոլշևիկյան ծրագիրը 87

ԳԼՈՒԽ III

Քեմալականների հարձակումը Հայաստանի վրա 110

ԳԼՈՒԽ IV

Հայաստանի խորհրդայնացումը 160

Վերջաբանի փոխարեն

Համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում 228

ՄՈՒՏՔ

Իշխանության անցնելով՝ բոլշևիկյան կուսակցությունն աշխարհն արհեստականորեն բաժանեց երկու հակադիր մասերի: Համապատասխան դասակարգային այդ բաժանման՝ աշխարհի մի մասում համաշխարհային իմպերիալիզմն էր իր դաշնակից մանր պետություններով, իսկ մյուս մասում՝ նրա դեմ պայքարի ելած պրոլետարիատը Սովետական Ռուսաստանի գլխավորությամբ: Այս վերջինս էլ պետք է գլխավորեր իմպերիալիզմի դեմ պայքարը հանուն համաշխարհային հեղափոխության հաղթանակի: Քաղաքացիական պատերազմում հաղթանակ տանելուց հետո բոլշևիկյան կուսակցությունը և նրա ստեղծած Կոմինտերնը ձեռնամուխ եղան համաշխարհային հեղափոխության իրագործմանը:

1920թ. ստեղծվեցին համաշխարհային հեղափոխության Արևմտյան և Արևելյան ճակատները: Այս գրքի նպատակն է՝ ցույց տալ, թե ինչպես Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում: Նաև փաստերով հերքել այն գիտական ու քաղաքական մոլորությունը, համաձայն որի քեմալական Թուրքիայի ու բոլշևիկյան Ռուսաստանի երկընտրանքում Հայաստանի կառավարությունը չկողմնորոշվեց դեպի վերջինս, և արդյունքում ունեցանք տարածքային մեծ կորուստներ: Այս և նմանատիպ մոտեցումները վերջին հաշվով հանգեցնում են տրամաբանական այն եզրակացությանը, որ Հայաստանը չի կարող ինքնուրույն պետություն դառնալ ու պետականորեն զարգանալ աշխարհաքաղաքական այս բարդ տարածաշրջանում: Անշուշտ, վիճահարույց է, աշխարհաքաղաքական դիրքի մասին դիտարկումները՝ մանավանդ, որ դրանք արվում են անցանկալի հարմարեցումներով, ինչը մեր հումանիտար մտքի ամենախոցելի կողմն է: Ես կարծել ու կարծում եմ, որ Հայաստան երկիրն աշխարհաքաղաքական բարդ, բայց միևնույն ժամանակ բարենպաստ դիրք ունի: Ուստի խնդիրը վերաբերում է ոչ թե աշխարհագրությանն, այլ քաղաքական հայացքին ու գործին, այն պարզ ու բացատրելի ճշմարտությամբ, որ աշխարհում գոյություն չունի բացարձակ լավ կամ վատ դիրք: Կա լավ կամ վատ հայացք ու գործ, որից էլ դիրքը դառնում է նպաստավոր կամ աննպաստ: Այսինքն՝ քաղաքականությունն է այն հիմնական գործիքը, որը կռում և բարենպաստ է դարձնում այն տարածքը, որն Աստծո կամոք բաժին է ընկել այս կամ այն ժողովրդին: Մեզանում միշտ ստացվել է այնպես, որ քաղաքականությունը ոչ ճիշտ կամ ոչ օրինաչափ ճանապարհով տանողները հետագայում գրքեր են գրում, որոնցով առաջին

պլան են մղվում ինքնարդարացումն ու քաղաքական երկրորդական գործոնները: Կան և կլինեն առանձին ձայներ, որոնք առաջ են քաշում պատասխանատվության գործոնը, բայց ընդհանուր շարժի ու երթի տրամաբանության մեջ դրանք կորչում են: Այդ պատճառով էլ ունենում ենք նույն տրամաբանությունն ու կենսափիլիսոփայությունը: Այսինքն՝ պատմությունն ու կորցրած հայրենիքի ձգտման կենսափիլիսոփայությունը դառնում են այդ նույն հայրենիքի մասի վրա ստեղծված պետության գլխավոր ընդդիմախոսները, իսկ ներսից ախտահարելուց ու կործանելուց հետո գալիս է ինքնարդարացման ու պատասխանատվությունից խուսափելու շրջանը, որը և ջանադրաբար կատարում են պետական գործը տանուլ տված մարդիկ: Ապրելու ու գործելու այս կենսափիլիսոփայությանը վերջ կարելի է դնել քաղաքական հայացքն ու գործն «անքննելիության խորհրդի» կապանքներից ազատելու միջոցով: Այդ առումով էլ Հայաստանի առաջին հանրապետության կործանման պատմությունն իր հիմնական գործոնների շարժառիթներով ուսումնասիրելն ու վեր հանելը արդիական է ու քաղաքական առումով ուսանելի: Այն պատճառով, որ այդ փորձի վրա մենք պետք է տեսնենք, որ Հայաստանի առաջին հանրապետության կործանման հիմնական պատճառը պետության ու հայրենիքի գաղափարների ու ըմբռնումների նույնականացման մեջ էր: 1918թ. հունիսին Հայաստանի Հանրապետությունը ծնունդ առավ 12 հազար քառակուսի կիլոմետր տարածքով: Չնայած ներքին ընդվզմանն ու զայրույթին՝ 1918թ. հունիս-նոյեմբեր ամիսներին կառավարությունը ոչ միայն տարավ այս պարտադրանք-հարկադրանքը, այլև օրինաչափ քայլեր կատարելով՝ կարողացավ ճիշտ քննություն բռնել: Բոլորը հայիոյում ու դավաճանական էին համարում 1918թ. հունիսին Թուրքիայի հետ կնքված Բաթումի պայմանագիրը, բայց հակադրվելով հասարակական կարծիքին՝ կառավարության նախագահը գտնում էր, որ Հայաստանը պետք է կատարի Բաթումի պայմանագրի դրույթները և միջպետական հարաբերություններ պահպանի Թուրքիո հետ: Այսինքն՝ կառավարությունը դիմակայում էր հասարակական կարծիքին: Տեսանելի հակասությո՞ւն է: Իհարկե այո, բայց հենց այդ հակասությունը հաղթահարելով էր, որ կառավարությունը կարողացավ երկիրը դուրս բերել անելանելի թվացող վիճակից: Հետագայում, երբ Հայաստանի համար բարենպաստ աշխարհաքաղաքական փոփոխությունների հետևանքով Հայաստանը 12 հազար քառակուսի կիլոմետրից ընդլայնվեց ու դարձավ 60 հազար քառակուսի կիլոմետր, ու թվում էր, թե կառավարությունը պետք է պահեր իր որդեգրած քաղաքականությունը, դրությունը մեկեն փոխվեց: Հիմնական պատճառն այն էր, որ վերացավ պարտադրանքը, որովհետև առաջին աշխարհամարտում պարտություն կրեց Գերմանա-թուրքական խմբավորումը: Առաջին պլան մղվեցին

հայրենիքը պետության հետ շփոթող գործիչները: Ճակատագիրը ևս իր գործը կատարեց: Այդ բախտորոշ շրջանում շարքից դուրս եկան Քաջազնունու կառավարության երկու հիմնական անդամները: Նոյեմբերին իր չափավոր քաղաքական հայացքների համար սպանվեց Խ. Կարճիկյանը, հունվարին տիֆից մահացավ Ա. Մանուկյանը: Հայաստանի համար բարենպաստ ընթացք բերող նոր իրողությունը Հայաստանի քաղաքական գործիչներին ոգևորեց այն աստիճանի, որ նա անմիջապես խզեց դիվանագիտական հարաբերությունները Թուրքիայի հետ: Պոլսում գործող հայկական պատվիրակներ Ավ. Ահարոնյանը, Ալ. Խատիսյանը և Միք. Պապաջանյանը, նույնիսկ չսպասելով կառավարության ցուցումին, անմիջապես վերադարձան Հայաստան: Ահա թե ինչ է պատմում այդ օրերին Պոլսում կատարվող իրադարձությունների մասին Ալ. Խատիսյանը. «Հոկտեմբերի 20-ին (1918թ. – Կ.Ս.) երեկոյան ժամը 11-ին մեզ մոտ եկավ Ռեուֆ բեյի համհարզը և խնդրեց գնալ ծովային նախարարի մոտ: Նա մեզ ասաց. «Այս գիշեր ես պիտի երթամ անգլիական ծովակալի մոտ (Լեմնոս կղզի – Կ.Ս.) զինադադար կնքելու, կառաջարկեմ Ձեզ ալ անոր մոտ երթալ ինձ հետ միասին: Թող անգլիացիները տեսնեն, որ մենք հաշտված ենք»: Այնուհետև Խատիսյանը տալիս է իր «դիվանագիտական պատասխանը» հետևյալ մանրամասնությամբ. «Հիշելով Ռեուֆ բեյի անհաշտ դիրքը Տրապիզոնի խորհրդաժողովում՝ ես հարցում արեցի, թե ինչպես պիտի ըլլան մեր սահմանները: Ան պատասխանեց. «1914թ. սահմանները, սրբագրությամբ ի հաշիվ Ալաշկերտի հովտի»: Մենք, հարկավ, չէինք կրնալ մեր հավանությունը տալ: Դաշնակիցները հաղթած էին, իսկ մեր հույսը կապված էր անոնց հաղթանակի հետ: Եվ չգացինք: Մյուս օրը Ռեուֆ բեյը եկավ մեզ մոտ, իր հետ բերած էր զինադադարի պայմաններ, մենք անմիջապես ըմբռնեցինք, որ Հայաստանի ազատությունն ապահովված չէ: Զինադադարը չէր պահանջեր Հայաստանի գրավումը դաշնակից զորքերով, զինաթափ չէր աներ Թուրքիան և կը պարունակեր այն բոլոր դժբախտ կարելիությունները, որոնք ապագային իրողություն դարձան»[1]: Վերջին տողերը տասնամյակների հեռվից արված դատողություններ են անշուշտ, որովհետև, եթե «իրենք անմիջապես ըմբռնեցին» կատարվածը, ապա հետագայում էլ կգործեին հենց այդ ըմբռնումով: Այս ամենի մեջ կարևոր է նաև այն հանգամանքը, որ Պոլսում գտնվող պատվիրակությունը գործել է իր հայեցողությամբ՝ առանց կառավարությանը տեղյակ պահելու: Արխիվային նյութերը նաև ցույց են տալիս, որ Խատիսյանը չի պատմում ողջ եղելությունը: Բեռլինում գտնվող Չամուրը 1918թ. հոկտեմբերի 13-ին Ա. Ջամալյանին հղած նամակում հայտ-

[1] *Ալ. Խատիսյան,* Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1968, էջ 113:

նում է. «Թուրքական կառավարությունը դիմել է մեր ներկայացուցիչներին՝ խնդրելով միջնորդի դերով հանդես գալ իր և Անտանտի միջև»:

Նշեմ, որ կառավարությունն այս ամենի մասին ոչինչ չգիտեր: Ջամոևի նամակից հասկանում ենք, որ այդ հարցերը կարգավորում էին Բեռլինում գտնվող Օհանջանյանը և Աճեմյանը: Այդ մասին Ջամոևը գրում է. «Աջեմովը և Օհանջանովը հարմար և անհրաժեշտ գտան, որ ստեղծված քաղաքական իրադրությունը պահանջում է, որպեսզի Խատիսովը և Ահարոնյանը գան Բեռլին: Այդ մասին նրանց ուղարկվեց համապատասխան հեռագիր: Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունից Համոյին հայտնեցին, որ անժամանակ է Պոլսի հայկական պատվիրակությանը կանչելը, որովհետև նրանք զբաղված են Թուրքիայի հետ լուրջ բանակցություններով: Չնայած դրան, որոշվեց նրանց ետ կանչել:»[2]: Թե Հ. Օհանջանյանին ով էր լիազորել Հայաստանի հետ կապված նման դժվարագույն ու նաև բախտորոշ հարցերը լուծել՝ մնում է անհայտ: Զարմանալի է, որ պարտված Թուրքիայի հետ կարելի էր դիվանագիտական հարաբերությունները խզել առանց կառավարության գիտության: Էլ չեմ անդրադառնում Անտանտի պետությունների և Թուրքիայի միջև հաշտության միջնորդ դառնալու վերջինիս առաջարկը մերժելու հարցին, որը հաստատում է նաև Ալ. Խատիսյանը: Այս ոչ պետական մոտեցումները թերևս հնարավոր էին դառնում, որովհետև հայ քաղաքական գործիչները գլուխները կորցրել էին ոգևորությունից: Այսինքն՝ այն պահին, երբ հարկավոր էր առավելագույնս օգտվել քաղաքական բարենպաստ դրությունից, նրանք գործում էին ճիշտ հակառակ տրամաբանությամբ, որովհետև չգիտես որտեղից վերցրել էին, որ պատերազմում հաղթանակած խմբակցության երկրները Հայաստանի դաշնակիցներն էին: Այս մտքից Հայաստանի ղեկավարները համառորեն ձեռք չէին քաշում նաև այն բանից հետո, երբ Անդրկովկասում դաշնակից պետությունների ներկայացուցիչները նրանց պարզ ու առանց դիվանագիտական հնարքների ասում էին, որ «Դուք մեր դաշնակիցները չեք»: Ահա թե այդ մասին ինչ վկայություն է թողել իրադարձությունների մասնակից Արտ. Բաբալյանը՝ հիշատակելով 1918թ. դեկտեմբերին Հայաստանի վարչապետ Հ. Քաջազնունու և դաշնակիցների ներկայացուցիչ Ֆորեստ Ուոկկերի այդ թեմայով ունեցած հետևյալ խոսակցությունը. «Ով ասաց Ձեզ, որ դուք մեր դաշնակիցներն եք,– հարցրեց զորավար Ուոկկերը Քաջազնունուն,– ի պատասխան վերջինիս տրտունջի Անդրկովկասում Անգլիայի վարած քաղաքականության վերաբերյալ»: Այնուհետև Բաբալյանը նշում է, որ այդ կեցվածքը բնավ դուր չէր գալիս դաշնակիցներին, որովհետև դրանով «մենք չէինք կարողանում ապացուցել, որ մենք ձգտում ենք անկախ ապրելու»[3]: Այսքանից հետո էլ Հայաստանը հույսը դրեց հաղթանակած դաշնակից պետությունների վրա և 1919թ. հունվարից քաղաքականությունը կառուցեց Փարիզի խաղաղության կոնֆերանսի աշխատանքների ավարտի սպասումով: Քանի որ հայ քաղաքական միտքը ինքնարդարացման նպատակով քավության նոխազ է դարձնում դաշնակցությանը, պետք է նշել, որ ինչպես 1918 հունիս-նոյեմբերին, այնպես էլ դրանից հետո ընկած երկու փուլերի հեղինակն էլ դաշնակցությունն է: 1918թ. մայիսի վերջից սկսած, երբ Թիֆլիսում ընթանում էին կառավարություն ձևավորելու աշխատանքները, հայ ժողովրդական կուսակցությունը Միք. Պապաջանյանի գլխավորությամբ գտնում էր, որ դաշնակցությունը չպետք է կառավարություն կազմի: Փաստում էին, որ դաշնակցությունը չի կարող հարաբերություններ կառուցել Թուրքիայի հետ և իբրև նա չափավոր չէ իր պահանջների մեջ: 1918թ. նոյեմբերին,երբ կառավարությունը քննարկում էր Փարիզի վեհաժողովի պատվիրակության և տարածքների պահաջների չափի հարցը, պարզվեց, որ ամենաչափավորը դաշնակցությունն է: Նույն Միք. Պապաջանյանը գտնում է, որ պետք է վեհաժողովում բարձրացնել ծովից ծով Հայաստանի հարցը: Զարմանալին այն է, որ դաշնակցությունը, լինելով չափավոր պահանջների կողմնակից, այնուամենայնիվ, Փարիզ մեկնող պատվիրակության կազմում ընդգրկեց նույն Միք. Պապաջանյանին: Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ հայ քաղաքական ուժերը տեսականորեն հասկանում էին՝ ինչ ասել է ռացիոնալություն, բայց ահա ինչպես գործնականում վարել այդ ռացիոնալ քաղաքականությունը, նրանք չգիտեին: Այլապես չէին ոգևորվի Թուրքիայի պարտությունից և չէին խզի դիվանագիտական հարաբերությունները: Եվ եթե այս ամենին գումարենք այն, որ Փարիզ մեկնող պատվիրակությունը վեհաժողովում առաջ քաշվելիք հարցերը պետք է համաձայներ այնտեղ գործող ազգային պատվիրակության հետ՝ Պողոս Նուպար փաշայի գլխավորությամբ, պարզ կտեսնենք, որ արտաքին քաղաքականությունն ամբողջությամբ հանձնվեց գաղութահայությանը: Խոսքս վերաբերում է գաղութահայ լեզվամտածողությանն ու գործելակերպին, որը բնականաբար չէր ենթարկվելու պետական օրինաչափություններին: Ու քանի դեռ հայրենիքի մի մասի վրա ստեղծված պետությունը բախվում էր կորցրած հայրենիքի տեսլականին, չէր կարող խոսք լինել պետական քաղաքականության մասին: Որպեսզի պարզ պատկերացում կազմվի, որ 1919թ. արևմտահայությունն էր քաղաքականությանը տոն տվողն իր լեզվամտածողությամբ ու գործելակերպով, բերենք հետևյալ փաստերը: 1919թ. փետրվարին Երևանում կայացավ արևմտահայության

[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, ցֆ, գ. 62, թ. 7-8:

[3] *Ա. Բաբալյան,* էջեր Հայաստանի անկախության պատմությունեն, Հայրենիք, 1923,N 9, էջ 106:

երկրորդ համագումարը: Համագումարը, առանց հարցնելու կառավարության կարծիքը, հայտարարեց, որ ինքը Հայաստանը միացյալ և անկախ է ճանաչում: Այսինքն՝ միացյալ և անկախ Հայաստանի գաղափարն առաջ է քաշել արևմտահայության համագումարը, որից հետո միայն, երբ հայ իրականությունն սկսեց փոթորկվել այդ գաղափարի շուրջ և այն բռնեց «ժողովրդի սրտերն ու մտքերը», կառավարությունն ստիպված էր ամիսներ հետո խորհրդարանի որոշմամբ ընդունել այն և դնել արտաքին քաղաքականության հիմքում[4]: Կառավարությունը փաստորեն աշխատում էր մեղմել կրքերը և համաձայնության եզրեր գտնել արևմտահայության և արևելահայության միջև: Այսինքն՝ քաղաքականությունն իջեցվում էր ժողովրդի այս կամ այն հատվածի ընկալման մակարդակին, դրանից բխող բոլոր հետևանքներով: Նույն 1919թ. գարնանը արևմտահայության պահանջով 12 արևմտահայեր ընդգրկվցին խորհրդարանի կազմում: Այս անգամ կրքերը հանդարտվելու փոխարեն ավելի սրվեցին: 1919թ. մայիսի 28-ին Հայաստանը «միացյալ ու անկախ» հռչակող կառավարության ակտը և 12 արևմտահայերի ընդգրկումը խորհրդարանի կազմում հանգեցրեց նրան, որ 1918թ. նոյեմբերին ստեղծված կոալիցիոն կառավարությունն ընկավ: Հայ ժողովրդականներն ըմբոստացան և դուրս եկան կառավարության կազմից: Խորհրդարանում այդ որոշումների դեմ արտահայտվեցին նաև սոցիալ-դեմոկրատների և սոցիալ-հեղափոխականների ֆրակցիաները: Արդյունքում 1919 թվականի հունիսի 5-ին խորհուրդը դադարեցրեց իր գործունեությունը: Եվ այս ներքին անկայունությունն ու քաղաքական խժդժությունները կատարվում էին մի շրջանում, երբ դաշնակիցները Հայաստանին էին հանձնել Կարսի մարզը և Շարուր-Նախիջևանը: Բրիտանական գեներալ Բիչը Կարսի բանալիները վարչապետ Խատիսյանին հանձնելիս, նկատի ունենալով Հայաստանի ներքին անկայունությունը, ասում է. «Ամրացրեք պետական մեխանիզմները և անմիջական հարաբերություններ հաստատեք թուրքերի հետ»: «Կատարելագործեք պետական մեխանիզմները և հարաբերություն հաստատեք թուրքերի հետ, բավարարվեք ձեռք բերածով և ապագան ձերը կլինի»: Քանի բրիտանական գեներալներ են ջանացել գլխավոր հարցի վրա ուղղել Հանրապետության ղեկավարների ուշադրությունը: Բայց անիմաստ, որովհետև բրիտանական գործիչներին որակում էին թրքամետներ: 1919 թվականին բրիտանական հրամանատարությունը Հայաստանի կառավարությանն առաջարկում է անգլիական գեներալներ վերցնել հայկական բանակ՝ որպես հրահանգիչներ: Կառավարությունը քննարկում է այս հարցը և մերժում է՝ գտնելով, որ «անգլիական քաղաքականությունը վնասակար է Հայաստանի համար»[5]: Զարմանալի գործելակերպ էր որդեգրել Հայաստանի կառավարությունն այն առումով, որ մի կողմից տարածում էր, թե Անգլիան իր մեծ դաշնակիցն է, իսկ մյուս կողմից չէր լսում ու չէր կատարում նրա ասածները՝ գտնելով, որ նրա քաղաքականությունն ունի պրոմուսուլմանական ուղղվածություն: Պատճառն այն է, որ Անգլիան Անդրկովկասում գործող իր զինվորական ներկայացուցիչների միջոցով Հայաստանի կառավարությանն առաջարկում էր հաշտվել 60 հազար քառակուսի կմ տարածքով պետություն ունենալու գաղափարի հետ և ավելին չպահանջել: Այստեղ էր ողջ հակասությունը, որովհետև Հայաստանի կառավարությունը պահանջում էր կորցրած հայրենիքը, իսկ Անգլիան առաջարկում էր բավարարվել ձեռք բերածով: Իմանալով հանդերձ, որ Փարիզի խաղաղության վեհաժողովի աշխատանքներում գլխավոր դերակատարը Անգլիան էր, Հայաստանի կառավարությունը հավատում ու հեռանկար էր կառուցում Փարիզի վեհաժողովի «արդարամիտ որոշման» հույսով, միևնույն ժամանակ պարբերաբար վեհաժողովին բողոքում էր, որ Անդրկովկասում Անգլիան վարում է պրոմուսուլմանական քաղաքականություն: Հավանաբար, ելնելով այս իրողությունից, Փարիզում գործող երկու հայկական պատվիրակությունները եկան այն եզրակացության, որ հայկական հարցը ամբողջությամբ կլուծվի, եթե նրա մանդատը վերցնի ԱՄՆ-ը: Բազում դիմումներ ստանալուց հետո ԱՄՆ նախագահ Վիլսոնը 1919թ. սեպտեմբերին գնդապետ Հարբորտին ուղարկում է Հայաստան՝ երկիրն ուսումնասիրելու: Հարբորտը Թուրքիայի վրայով անցնում է Հայաստան: Ալ. Խատիսյանը, իր գրքում անդրադառնալով Հարբորտի առաքելությանը, պատմում է հետևյալը. «Հարբորտը մի օր մենակ մնալով իմ աշխատասենյակում ասաց, որ ինձ ողջույն է բերած Անգորայի կառավարության նախագահ Ռեուֆ բեյից: Ռեուֆ բեյը պատրաստակամություն էր հայտնել անմիջապես բանակցությունների մեջ մտնել Երևանի կառավարության հետ: Հարբորտը իր կողմէ խորհուրդ տվեց սկսել այդ բանակցությունները: Մենք այդ խորհուրդին չհետևեցինք, հավատալով, որ մեր հարցերը պետք է լուծվեն Փարիզի մեջ»[6]: Հայաստանի հետ անմիջական բանակցություններ սկսելու Թուրքիայի արած առաջարկությունների մասին հիշատակում է նաև Խորեն եպիսկոպոսը 1919թ. դեկտեմբերին, Գևորգ Ե կաթողիկոսին գրած նամակում: Նա այդ մասին կաթողիկոսին գրում է. «Վերջերս եղել են պաշտոնական առաջարկներ տաճիկներից, որոնք խոստանում են որոշ զիջումներ անել, եթե սկսվեն բանակցությունները մեզ հետ»[7]: Թուրքիայի կողմից արված այս բոլոր ա-

[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 1:

[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 205, պ. 6:

[6] *Ալ. Խատիսյան*, նշ. աշխատություն, էջ 191-192:

[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 5 ց. 5, գ. 205, թ. 6:

ռաջարկները մնում էին անպատասխան: Այսքան առաջարկներից հետո բնական հարց է առաջանում, թե ինչն էր խանգարում, որ Փարիզի վեհաժողովին զուգահեռ Հայաստանի կառավարությունը փորձեր նաև ուղիղ բանակցություններ սկսել Թուրքիայի հետ: Ալ. Խատիսյանը, ամեն անգամ հիշելով Թուրքիայի հետ ուղիղ բանակցություններ սկսելու օտարների հորդորների մասին, գտնում է հարցի մեջ չխորանալու ձևը: Մի դեպքում, հայ քաղաքական կյանքի այս գլխավոր հարցի մասին խոսելիս այն փակում է՝ փաստելով տարածքները, որոնք մնում էին Թուրքիային. մյուս դեպքում՝ Փարիզի վեհաժողովը: Եվ այդ ամենը նա անում է այնպիսի հեշտությամբ, որ կարծեք նա ոչ թե եղել է Հայաստանի կառավարության նախագահը՝ այսինքն՝ պատմություն կերտողը, այլ դիտորդի դերում գտնվող մի վկա: Թերևս այստեղ է թաղված հայ կյանքն առաջնորդնողների գործն ու այն արդարացնող խոսքը ժողովրդի ընկալման մակարդակին իջեցնելու գաղտնիքը: Ժողովուրդն էր այդպես ցանկանում, իրենք էլ այդպես անում էին: Այլապես այդ քաղաքական չափումներով նման անպատասխանատու եզրահանգումները նա այդքան հեշտությամբ չէր կարող անել: Ավելին, նա նույնիսկ հպարտությամբ է նշում Թուրքիայի հետ անմիջական բանակցությունների մեջ մտնելու հերթական առաջարկի մերժումը, որովհետև գիտեր, որ ընթերցողն իրեն ճիշտ կհասկանա ու չի մեղադրի, որովհետև հայությունն այդպես էլ մտածում է. «Այդքան զոհերից ու զրկանքներից հետո ինչպես կարելի է Թուրքիայի հետ բանակցել»: Ահա այստեղից սկսվում ու այստեղ էլ վերջանում են աշխարհագրական դիրքի մասին անկրկնելի ու սնամեջ խոսակցությունները, որով և ծածկվում կամ որի միջոցով փակվում են բոլոր քաղաքական բացթողումներն ու թերությունները: Նույն այս տրամաբանությամբ Հայաստանի կառավարությունը 1919թ. դեկտեմբերի 9-ի նիստում մերժեց անդրկովկասյան պետությունների կոնֆեդերացիա ստեղծելու՝ Վրաստանի և Ադրբեջանի առաջարկությունը, որը պաշտպանում էին Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները: Պատճառաբանությունը գրեթե նույնն էր. «Այժմ անհնարին է կոնֆեդերացիա ստեղծել Վրաստանի և Ադրբեջանի հետ, քանի որ մեր սահմանները հայտնի չեն»[8]: Այսինքն՝ կառավարությունը մինչև Սևրի պայմանագրի կնքումը մերժում էր բոլոր առաջարկությունները: Թուրքիայի հետ բանակցություններ վարելու մի առաջարկություն էլ Ալ. Խատիսյանը մերժել է 1920թ. հուլիսին, երբ թուրք բոլշևիկյան հեղափոխական շղթան արդեն փաթաթվել էր Հայաստանին և սպառնում էր նրա անկախ գոյությանը: Այդ մասին ևս մեզ տեղյակ է դարձնում նույն Ալ. Խատիսյանը: 1920թ. մայիսին նա վարչապետությունից ազատվել էր բոլշևիկյան խռովությունների կապակցությամբ և կառավարությունը նրան

[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 205, թ. 3:

գործուղել էր Եվրոպա՝ օգնություն կազմակերպելու առաքելությամբ: Ահա այդ ճանապարհորդության ժամանակ էլ Պոլսում՝ 1920թ. հուլիսին նա հանդիպում է ամերիկյան դերծովակալ Բրիստոլին և երկար զրույց ունենում նրա հետ: Բրիստոլը գնդապետ Հարբորտի նման Խատիսյանին խորհուրդ է տալիս ընդհատել ճանապարհորդությունը Եվրոպա և բանակցություններ սկսել Թուրքիայի կառավարության հետ: Բրիստոլի միջնորդությամբ նա գաղտնի հանդիպում է ունենում Թուրքիայի ներքին գործերի նախարար Ռեշատ փաշայի հետ: Այդ հանդիպման մասին Խատիսյանը պատմում է հետևյալը. «Ան(Ռեշատ փաշան) թղթի վրա գծեց Հայաստանի հնարավոր սահմանները՝ Հայաստանի հողերի մեջ մտցնելով ամբողջ Ռուսահայաստանը, Ալաշկերտի և Բասենի հովիտները և իբրև նավահանգիստ՝ Ռիզեն: Այդպիսով Վանը, Մուշը, Էրզրումը և Տրապիզոնը կանցնեին Թուրքիային»[9]:Այս ամենը շարադրելուց հետո այս անգամ էլ Խատիսյանը փաստում է, որ Ռեշատ փաշան վերջում ավելացրել է, որ իրենց խոսակցության շարունակությունը պետք է տեղի ունենա Փարիզի մեջ: Այսինքն՝ թուրք նախարարը հասկացնում է, որ Փարիզում եթե առաջ քաշենք տարածքային չափավոր պայմաններ, դրանք ընդունելի կարող են լինել Թուրքիայի համար: Ուստի լիազորություններ չունենալու Խատիսյանի փաստարկը համոզիչ չէ, որովհետև, ինչպես տեսանք, լիազորություններ ունեցած ժամանակ էլ նա նույն ձևով էր վարվել: Ես չեմ պնդում, որ եթե Խատիսյանը անարդերծովակալ Բրիստոլի հորդորներին և մնալով Պոլսում՝ շարունակեր բանակցությունները, փայլուն արդյունք էր ստանալու: Խնդիրն այն էր, որ նա ոչ միայն խուսափել է, այլև կառավարությանը տեղյակ չի պահել այդ մասին: Որովհետև գիտեր, որ բոլորն էլ իր պես են մոտենում հարցին: Ամբողջին ձգտելով՝ նրանք չէին ցանկանում լսել արդեն ունեցած տարածքներով Թուրքիայի հետ բանակցություններ սկսելու մասին: Խնդիրն այն է, որ Նուպար փաշան հասել էր իր նպատակին՝ Հայաստանի Հանրապետությունն արհամարհանքով անվանելով «Արարատյան», նա ստեղծել էր Փարիզի վեհաժողովի միջոցով մեծ Հայաստան ստեղծելու տեսլականը, և կառավարությունն ու դաշնակցությունը, որոնք սկզբից ունեին չափավոր մոտեցումներ, հետզհետե ընկան այդ ազդեցության տակ: Ստեղծվել էր համազգային այնպիսի մթնոլորտ, որի պայմաններում ոչ ոք չէր համաձայնվի գործել պետական չափանիշներով: Կարելի է ասել, որ կառավարությունը, տարածքային հարցերում չհամաձայնվելով հանդերձ ազգային պատվիրակության հետ, դարձել էր նրա ստեղծած հոգեբանական մթնոլորտի գերին: Ահա թե ինչ է գրում այդ մասին նույն Խատիսյանը. «Սահմանների վերաբերյալ հայ ժողովուրդը յանձին իր ղեկավար շրջանակներու, մեծ սխալ գործեց չափա-

[9] *Ալ. Խատիսյան,* նշ. աշխատութ., Աթենք, 1930, էջ 199:

զանց մեծ պահանջներ առաջադրելով, առանց հաշվի առնելու իր ուժերն ու միջազգային կարելիությունները: Մենք մինչև Կիլիկիա պահանջելով՝ անկարելի դարձրինք որևէ բանավոր համաձայնություն ոչ միայն թուրքերուն հետ այն պահուն, երբ անոնք տկար էին և անոնց հետ դեռ կարելի էր խոսիլ, այլ նաև շահագրգռված մեծ պետություններու հետ: ...Ամեն պարագային տակ պետք է ըսել, թե Հայաստանի սահմանների մասին Երևանն անհամեմատ ավելի չափավոր ու զուսպ էր, քան մեր գաղութները Փարիզի ղեկավարությամբ, որոնք օտար, յաճախ անպատասխանատու մարդոց ներշնչումների ենթարկելով՝ անկարելիության ետևեն ինկան և երբեմն կատարված իրողության առաջ դրին նաև Հայաստանի կառավարությանը»[10]: Տեսնում ենք, թե ինչպես է չքմեղանում Խատիսյանը: Ճշմարտությունն ասելով հանդերձ՝ նա չի կարողանում ասել գլխավորը, որ կատարվածի համար հիմնական մեղավորն ու պատասխանատուն ինքն էր ու իր գլխավորած կառավարությունը, որն առաջնորդվում էր ոչ թե քաղաքական իրողություններով, այլ կորցրած հայրենիքը վերագտնելու անիրական երազանքներով: Ասել է թե՝ Խատիսյանն ու իր գործընկերները չգիտեին, թե ի՞նչ է պետությունը և որն է նրա ֆունկցիոնալ առանձնահատկությունը, ինչո՞վ է այն տարբերվում կուսակցությունից կամ հասարակական կազմակերպությունից: Այլապես նա չէր ասի, որ տարածքների հարցում կառավարությունը չափավոր էր, իսկ մեղավորներն անպատասխանատու մարդիկ էին, որոնք «կատարված իրողության առաջ դրին կառավարությանը»: Ծանոթ մտայնություն է: Դաշնակիցները տեսնում էին Փարիզի վեհաժողովի որոշմանը սպասող Հայաստանի այս կրավորական վիճակը և խորհուրդ էին տալիս վարել Անդրկովկասի պայմաններին համապատասխան քաղաքականություն: Դաշնակիցների միջնորդությամբ 1919թ. Թիֆլիսում մի քանի հանդիպում- բանակցություններ կազմակերպվեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միջև եղած տարածքային հարցերը լուծելու նպատակով, որոնք լուրջ արդյունք չէին տալիս: Ու այդպես շարունակվեց մինչև 1920թ. գարուն, երբ Հայաստանը հայտնվեց թուրք- բոլշևիկյան շրջափակման մեջ: Հայաստանի կառավարության դիրքորոշումները կապված էին քաղաքական մեծ տեղաշարժերի հետ, և նա 1919թ. ներքին կռիվներից բացի ուրիշ ոչինչ չէր անում: Նաև ուշադրության կենտրոնում էր բանակն ու բանակաշինությունը: Բայց այս հարցում ևս հոգեբանական բարդույթ գոյություն ուներ: Խոսքն այն մասին է, որ Վեղիբասարում և Զանգիբասարում տեղական մուսուլմանների խռովությունների ճնշման հաջողությունը կառավարությանը ներշնչել էր, որ Հայաստանն ունի տարածաշրջանի ամենամարտունակ բանակը և ոչ համապատասխան գերագնահատվում էր հայկական բանակի կարողությունը:

[10] *Ալ. Խատիսյան,* նշ. աշխ., էջ 127-128:

Մամուլում տեղի անտեղի խոսվում էր այն մասին, որ հայկական բանակը կարող է հրաշքներ գործել և որպես ապացույց՝ փաստվում էին տեղական կռիվները: Այս ամենը ստեղծում էր այն թյուր կարծիքը, որ Հայաստանի բանակը կարող է դիմակայել գալիք մարտահրավերները և մասնավորապես կարող է հաղթել առաջին աշխարհամարտում պարտված թուրքական զորքին: Այսինքն՝ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության մեջ ցանկալին ներկայացվում էր իրականության փոխարեն: Այդ գործոնների միացումն էլ ստեղծում էր ապագայի թյուր պատկերներ: Հարմարեցումները և ցանկալին իրականության փոխարեն հրամցնելը ժողովրդին դարձնում էր հրաշքի սպասող: Պետության ղեկավարները, քաղաքականությունը կառուցելով ժողովրդի, կորցրած հայրենիքը վերագտնելու պարզունակ ընկալումների վրա, գործը տանում էին մինչպետական շրջանի չափումներով: Փաստորեն 1919-1920թթ. Հայաստանի վարած արտաքին քաղաքականությունը գրեթե ոչնչով չէր տարբերվում հայկական հարցը միջազգային ատյանների միջոցով լուծելու նախորդ տասնամյակների քաղաքականությունից: Այսինքն՝ չկային քաղաքական իրողություններից ելնող պետական մոտեցումներ ու գործելակերպ: Նախորդ տարիների հույսերի ու հուսախաբությունների, քաղաքական պատրանքների ու գայթակղությունների քաղաքականությունը բարձրացվել ու գրավել էր պետական՝ բոլորովին այլ մոտեցումներ ու չափումներ պահանջող քաղաքականության տեղը: Այդ պատճառով էլ անդրադարձա այն երեք միջադեպերին, երբ կարելի ու անհրաժեշտ էր, որ 1918թ. հոկտեմբերին չխզվեին հարաբերությունները Թուրքիայի հետ: Առավել ևս, որ Գերմանիան և Թուրքիան դիմել էին Պոլսում գործող հայկական պատվիրակությանը՝ որպես միջնորդ հանդես գալ հաղթանակած դաշնակից պետությունների և պարտված Թուրքիայի միջև: Ինչպես նշեցինք, Հ. Օհանջանյանը և Ավ. Ահարոնյանը ավելորդ համարեցին այդ մասին կառավարությանը տեղյակ պահել և ինքնագլուխ որոշեցին ետ կանչել Պոլսում գործող հայկական պատվիրակությանը և խզել հարաբերությունները Թուրքիո հետ: Սա խոսում է այն մասին, որ հայ քաղաքական գործիչներն ու դիվանագետները չեն ենթադրել, որ մերժելով Գերմանիայի և Թուրքիայի նման առաջարկությունը, իրենք կորցրել են բարենպաստ պահից օգտվելու աննախադեպ հնարավորություն: Հայկական պատվիրակության կողմից միջնորդ առաքելության ստանձնումը մերժելուց հետո Ռեուֆ բեյը՝ որպես միջնորդ, Լեմնոս կղզի է տանում գերի ընկած անգլիական գեներալ Թաունսենդին[11], և տասն օր հետո ստորագրվում է Մուդրոսի պայմանագիրը: Առաջին աշխարհամարտում պարտվելուց հետո Թուրքիայի վիճակն իսկապես շատ ծանր էր: Այդ շրջանում տիրող մթնոլոր-

[11] *Г. Алиев,* Турция в период правление младотурок, М. 1972, с 324.

տի մասին խոսելիս Մ. Քեմալը վկայում է, որ Սուլթան Վահիդեդդինն ասում էր. «Մենք պետք է ընդունենք անգլիացիների բոլոր պայմանները, որքան էլ որ դրանք ծանր լինեն... Ես կարծում եմ, որ անգլիացիները հավատարիմ կմնան մեր հանդեպ ունեցած դարավոր բարեկամությանն ու համակրանքին: Կանցնի որոշ ժամանակ և մենք կշահենք նրանց համակրանքը»[12]: Հավանաբար, այս խոսքերը Սուլթանն ասել է այն ժամանակ, երբ ծովային նախարար Ռեուֆ բեյը նրան զեկուցել է, որ հայկական պատվիրակությունը մերժել է Լեմնոս մեկնելու առաջարկությունը: Հայկական պատվիրակության այս բացթողումը որևէ փաստարկով արդարացնել հնարավոր չէ: Առավել ևս, որ Ալ. Խատիսյանն ինքն է վկայում Ռեուֆ բեյի ասածները Հայաստանին տրվելիք տարածքների մասին: Հավանաբար, Խատիսյանն առաջնորդվել էր այն տրամաբանությամբ, որ եթե Հայաստանն ստանձնի Թուրքիայի և Անգլիայի միջև միջնորդի դերը և թուրքական պատվիրակության հետ մեկնի Լեմնոս կղզի, անգլիական կողմը կմտածի, որ Հայաստանը ոչ թե հաղթող կողմի դաշնակիցն է, այլ պարտված Թուրքիայի: Այլ կերպ չի բացատրվում այն հանգամանքը, որ Թուրքիայի կողմից Լեմնոս մեկնելու առաջարկությունն ստանալուց անմիջապես հետո հայկական պատվիրակությունը հեռացավ Պոլսից: Ժամանակի քաղաքական գործիչներից ոչ մեկը չի անդրադարձել այս հարցին և բացատրություն չի տվել, թե ինչու՞ Հայաստանի Հանրապետությունը խզեց դիվանագիտական հարաբերությունները պարտված Թուրքիայի հետ: Նրանք լավագույն դեպքում այդ քայլը բնական են համարում այն տրամաբանությամբ, որ Հայաստանը հաղթանակած կողմի դաշնակիցն էր ու բնական է, որ հայկական կողմը պետք է խզեր հարաբերությունները Թուրքիայի հետ: Աշխարհագրական դիրքն ինչ կարող է անել նման բացատրությունների առաջ՝ անբարենպաստ դառնալուց բացի: Այլ պատճառաբանություն չէր էլ կարող լինել, որովհետև Պոլսից Երևան վերադարձած պատվիրակությունը նույն կազմով 1919թ. դեկտեմբերին մեկնեց Փարիզ: Ճիշտ է, Ալ. Խատիսյանին փոխարինեց Հ. Օհանջանյանը, բայց դա եղել է վարչապետ Քաջազնունու խնդրանքով, որ Խատիսյանի ներկայությունն Հայաստանում ավելի անհրաժեշտ է: 1918թ. հոկտեմբերից խզելով դիվանագիտական հարաբերությունները, իսկ հետագայում էլ բաց թողնելով առիթները ու չցանկանալով բանակցությունների մեջ մտնել հարևան Թուրքիայի հետ, Հայաստանը ճակատագրական սխալ գործեց: Նկատի ունեմ այն հանգամանքը, որ Հայաստանի նման դիրքորոշումը զգալի դեր խաղաց, որ քեմալականները մերձեցան բոլշևիկների հետ: Կարսը գրավելուց հետո Ռուշտի փաշան Հայաստանի խնամատարության նախարար Արտ.Բաբալյանին ասել է, որ «Դուք, չցանկանալով հարաբերություններ հաստատել մեզ հետ, մեզ նետեցիք բոլշևիկների գիրկը», հեգնանքով ավելացնելով. «Ես այժմ բոլշևիկ եմ»: Այս ամենը կարելի է հաստատել բազում փաստեր բերելով: Մ. Քեմալը ևս չի թաքցրել, որ Մեծ Հայաստան ու Մեծ Հունաստան ստեղծելու վտանգին դիմակայելու համար իրենք սկսեցին համագործակցության եզրեր փնտրել բոլշևիկների հետ: Հնարավոր ընդդիմախոսներն անմիջապես կհարցնեն, իսկ Ադրբեջանն ու Վրաստանը ինչու՞ չկարողացան պահել անկախությունը: Այս օրինաչափ հարցադրումն ունի երկու պատասխան: Առաջինը կապված է իմ այն մոտեցմանը, թե ինչպես կատարվեց քեմալականների և բոլշևիկների քաղաքական մերձեցումը: Այսինքն՝ եթե չլիներ այդ մերձեցումը, Ադրբեջանը չէր խորհրդայնացվի: Եվ երկրորդ, որ Ադրբեջանն ու Վրաստանը, անկախությունը կորցնելով հանդերձ, չունեցան այն կորուստները, որ ունեցավ Հայաստանը: Այսինքն՝ Անդրկովկասի երեք հանրապետությունների անկախության ձեռք բերումը և կորուստը սերտորեն կապակցված են: Այդ ամբողջության մեջ մեծ դեր է խաղացել Հայաստանի և Թուրքիայի թշնամանքի հարցը: Այս գլխավոր խնդրի քննարկմամբ էլ թեման դառնում է արդիական: Չցանկանալով հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ՝ Հայաստանի առաջին հանրապետությունը նախապատրաստեց իր կործանումը: Այս փաստը խոսում է այն մասին, որ առանց Թուրքիայի հետ միջպետական հարաբերություններ հաստատելու՝ չի կարող լինել անկախ ու զարգացող Հայաստան:

Այս հարցում, իհարկե, աշխարհագրական դիրքը շատ կարևոր դեր է խաղում, որովհետև Հայաստանի արևմտյան անմիջական հարևան պետությունը Թուրքիան է: Ամենամեծ սահմանը Հայաստանն ունի Թուրքիայի հետ: Հայաստանից Եվրոպա և Մերձավոր Արևելք տանող բոլոր կարճ ճանապարհներն անցնում են Թուրքիայով: Ուստի Թուրքիայի հետ հարաբերություններ չունենալը նշանակում է աշխարհագրական խաչմերուկ-դիրքը վերածել փակուղու և արհեստականորեն խախտել աշխարհագրական դիրքի նպաստավորությունն՝ այն դարձնելով բացառիկ աննպաստ: Այսինքն՝ երևույթը կապված է քաղաքական հայացքի ու գործի հետ, որովհետև դրանով է տվյալ երկրի դիրքը դառնում նպաստավոր կամ աննպաստ: Այդ պատճառով էլ գրքում խոսելով Հայաստանի Հանրապետության կործանման մասին՝ մեր ուշադրության կենտրոնում է լինելու վարված քաղաքականության տրամաբանությունը: Այդտեղ է թաղված մեր քաղաքական պատմության «անքննելի խորհուրդը», որով միշտ արդարացել են անկատար գործի հեղինակները: Քաղաքական մշտահոլով կրկնությունների արդարացումը հարմարեցումներն են ու աշխարհագրական դիրքի շեփորումները:

Այդ ամենը գիտության և հատկապես քաղաքական գիտության հետ կապ չունի, բայց ամուր կապված է մեծ տեղաշարժերի մեջ մեր շահը

[12] *М. Кемал.* Путь новой Турции, Москва, 1929 г., т 2, с 354.

փնտրելու նպատակահարմար հակվածության հետ: 1878թ. սկսած մեր քաղաքական միտքը փորձում է, «պատեհությունից» օգտվելով, հարց լուծել: Դրա համար էլ ամեն հերթական փորձ դառնում է նոր փորձանք սեփական ժողովրդի գլխին: Միջազգային ատյաններում հարց լուծելու ավանդույթը նաև ավանդական սովորություն է դարձրել արդյունքի համար մեծ պետություններին մեղադրելը: Սա ևս հարմարեցումների դյուրին ճանապարհ է, որով լեցուն է մեր պատմական ու գեղարվեստական գրականությունը: Չախողված փորձը և այդ փորձի դասերը խորությամբ և համակողմանի ուսումնասիրելու և կատարվածից ավարտուն եզրակացություն անելու փոխարեն մեղադրում ենք մեկ Եվրոպային, մեկ Ռուսաստանին: Նման բազում պատումներ կան կապված 1920թ. Հայաստանի առաջին հանրապետության պատմության հետ:

Հայաստանի առաջին հանրապետության եվրոպական մոլորության քննադատությունը ճիշտ է: Բայց դա կես ճշմարտություն է, և այդ կեսի շուրջ գլուխ ջարդելը ոչինչ չի կարող տալ, որովհետև դրան հակադրվող մյուս կեսը, թե իբր հարցը կլուծվեր՝ Եվրոպայից ձեռք քաշելով ու Ռուսաստանին դիմելով, նույնքան ցանկալի է ու ոչ իրական: Նման մոտեցում հանդես բերողները պարզապես անտեղյակություն են ցուցաբերում բոլշևիկների վարած քաղաքականությունից: Ուստի Հայաստանի Հանրապետության ղեկավարներին այդ առումով մեղադրելը ինքնանպատակ զբաղմունք է, որովհետև 1878թ. սկսած Հայկական հարցի լուծումը հայ քաղաքական առաջնորդներին տանում էր մեկ Եվրոպա, մեկ Ռուսաստան: Տանուլ տալուց կամ հերթական ձախողումից հետո քննադատվել են եվրոպամետները և ռուսամետները կամ երկուսը միասին և այսպես շարունակ: Ու այս ամենն արվում է այն բանի համար, որ քաղաքական միտքը չգա վերջնական եզրակացության, որ պետք է վերջնականապես ձեռք քաշել միջնորդների կամ միջազգային ատյանների միջոցով հարցեր լուծելու մինչպետական շրջանի ավանդույթից: Հայաստանի առաջին հանրապետության իշխանություններին քննադատել՝ նշանակում է քննել ու դատողություն անել համապատասխան նրանց գործերի: Այլապես այդ քննադատությունը դառնում է ինքնանպատակ ու դուռ է բացում նույն սխալների շարունակական կրկնության առաջ: Խորհրդային պատմագրության հետ այս տեսակետը սնել է նաև Հայաստանի խորհրդարանի պատգամավոր 1920թ. հայ-ռուսական մոսկովյան բանակցություններում Հայաստանի պատվիրակության անդամ Հ. Տերտերյանը: Նա 1954թ. «Հայրենիք» ամսագրում տպագրում է «Հայաստանի հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները» վերնագրով հուշերը: Համբարձում Տերտերյանը, որը Սերգո Օրջոնիկիձեի մտերիմ ընկերն էր, ետին թվով ամբողջապես ծուռ հայելու մեջ է ներկայացրել

Մոսկվայի բանակցությունները: Չիչերինի և Կարախանի՝ դիվանագիտական նկատառումներով ասված հայանպաստ խոսքերը փաստելով՝ նա եզրակացնում է, որ եթե Հայաստանի կառավարությունը ձեռք քաշեր Եվրոպայից և հարցի լուծումը փնտրեր Ռուսաստանում, պատմությունը բոլորովին այլ ընթացք կունենար: Գրքում փաստերով ցույց է տրված, որ իրականում Հայաստանի կառավարությունը հակառուսական քաղաքականություն չի վարել: Պահի ողջ բարդությունն այն էր, որ Հայաստանը հայտնվել էր համաշխարհային հեղափոխության խաչմերուկում, որի պատճառով էլ հակաթուրքական քաղաքականությունը մեխանիկորեն դիտվում էր որպես հակաբոլշևիկյան: Հայաստանի հակաբոլշևիկյան քաղաքականությունը թերևս եղել է այն, որ հայ բանագնացները Մոսկվայում Չիչերինին ու Կարախանին ջանում էին ցույց տալ, որ քեմալա-բոլշևիկյան դաշինքը հակաբնական է ու չի բխում Ռուսաստանի շահերից: Իրականությունն այն էր, որ Ռուսաստանը չէր կարող մի կողմից բավարարել Թուրքիայի և Ադրբեջանի պահանջները, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի: Ուստի շինծու ու հակագիտական է այն մոտեցումը, որ եթե Հայաստանը Ադրբեջանի օրինակով ինքնակամ խորհրդայնացվեր, չէր ունենա տարածքային կորուստներ: Փաստերով ցույց է տրված, որ նման բան չէր կարող լինել, որովհետև դա հակասում էր քեմալա-բոլշևիկյան ծրագրերին: Հակաբոլշևիզմն այս հարցում քիչ դեր է խաղացել, այն առումով, որ եթե նույնիսկ Հայաստանի կառավարությունը ձեռք քաշեր Եվրոպայից և փարվեր Ռուսաստանին, միևնույն է, ունենալու էր տարածքների նույն կորուստը: Իսկ եվրոպամետների, ռուսամետների և հակառուսների բանավեճը հայ քաղաքական կյանքի հին, բայց չհնացած հիվանդությունն է: Դրա դրսևորումները լավ պատկերացնելու համար բավարար է նայել այսօրվա հայ քաղաքական կյանքի պատկերը, և պարզ կտեսնենք, թե ինչպես և ի՞նչ պատճառներով են ռուսամետները դառնում եվրոպամետներ: Այս դյուրաթեքության հիմքում ընկած է միջազգային ատյանների միջոցով սեփական հարցերը լուծելու քաղաքական ռոմանտիզմը: Այստեղ է թաղված ճգնաժամի բուն պատճառը, որի մասին համառորեն լռել ու լռում է հայ քաղաքական ու հումանիտար միտքը, որովհետև այլ քաղաքական մոտեցում նրանք պարզապես չեն պատկերացնում: Այդ ամենը սկսվել է 1878 թվականից և շարունակվում է մինչև օրս: Եթե ժամանակին բազմակողմանիորեն քննարկված ու համապատասխան քաղաքական հետևություն արված լիներ 1878-1915 թվականներին հայկական հարցը միջազգային ատյանների միջոցով լուծելու պատմության դասերից, չէր կրկնվի Առաջին հանրապետության ողբերգական պատմությունը: Հարցերի միջազգայնացումը դյուրին ճանապարհ է նույն այն առումով, որ ձախողման համար ոչ ոք պատասխան չի տալիս, ու հարցը փակվում է մեծ տերու-

թյուններին մեղադրելով: 1920թ. պետության տարածքների ուղիղ կեսը կորցնելու համար ոչ ոք պատասխանատվության չենթարկվեց: Կարծեք թե ոչինչ էլ չէր պատահել, որովհետև կատարվածը սովորական երևույթ էր հայ իրականության համար: Հարցը փակվում է օտարներին մեղադրող անիմաստ բանավեճերով ու արդյունքում նաև մեղավոր է ճանաչվում սեփական ժողովուրդը: Իրենք ժողովրդին տրամադրում ու դարձնում են իրենց ռոմանտիկ քաղաքական գործերի գերին և հայտարարում, որ իբր, «այդպես էր ուզում ժողովուրդը»: Այսինքն՝ ժողովուրդը պետք է ոտքի կանգներ ու ասեր, որ Մեծ Հայաստան չենք ուզում, բավարարվեք ունեցածով և վարեք տարածաշրջանային իրողություններից բխող քաղաքականություն: Ահա այդ պարագայում նրանք կհասկանային, թե ինչ ասել է լուրջ քաղաքականություն և կիրագործեին այն: Մոտավորապես այսպես է կարծում պատասխանատուների մեծ մասը: Եթե առաջին վարչապետ Քաջազնունին քաջություն ունեցավ խոսելու սեփական կուսակցության քաղաքական մոլորությունների մասին, վերջին վարչապետ Ս.Վրացյանը կատարվածն հանրագումարեց ու 1920թ. նոյեմբերին հայտարարեց, որ «եթե ցանկանում ենք պետություն ունենալ, պետք է ձեռք քաշենք օտարների միջոցով մեր հարցերը լուծելու գայթակղությունից ու հաշտ լինել Թուրքիո հետ», ապա ճիշտ հակառակն է արել Ալ.Խատիսյանը: Նա իր «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» հավակնոտ վերտառությամբ հուշերում կամ գրքում ամբողջապես արդարացնում է կատարվածը: Զարմանում ես, թե ռուսական կայսրության մի քանի քաղաքների քաղաքապետ եղած այս մարդը ինչպես կարող էր այդչափ անհասու լինել քաղաքական արվեստին: Նրա կողքին կար Կարսի նահանգապետ Ստ.Ղորղանյանը, օրինակը, որը ցարիզմի ժամանակ ևս եղել էր պետական ծառայող: Լրջմիտ ու քաղաքականության մեջ թրծված անձնավորություն, որի՝ կառավարությանը հղած բազում գրությունները պարզապես հիացմունք են պատճառում իրենց քաղաքական շրջահայացությամբ ու լայնախոհությամբ: Պետական մտածողության մի եզակի ու փայլուն օրինակ, որն իր հայացքների ու գործելակերպի համար ենթարկվում էր ազգայնականների հալածանքներին: Ցավոք, հայ հասարակությունը և առավել ևս քաղաքական գործիչները, որոնք նրանից պետք է դասեր առնեն, չեն ճանաչում Ստ.Ղորղանյան պետական գործչին: Նման վիճակի գլխավոր պատճառն այն է, որ Կարսի նահանգապետի «եղած տարածքների վրա ամուր պետություն ստեղծելու, կարգ ու կանոն հաստատելու, խմբակային մոտեցումներին վերջ դնելու» և պետական այլ հարցադրումները խորթ էին հայ իրականությանը: Նա պարզ տեսնում ու հասկանում էր, որ Փարիզի վեհաժողովի որոշումներին սպասելը պարզապես պարապուրդի է մատնել Հայաստանը: 1920թ. փետրվարի 29-ին նախարարնե-

րի խորհրդի նախագահին գրած նամակում, անդրադառնալով կաղրային հարցին, Կարսի նահանգապետը նշում է, որ «եթե մեր գավառական պետական գործիչների շարքերը լցվեն միայն թերուսներով, միայն այն մարդկանցով, որոնք ուզում են ապահովել իրենց ու հեռանալ, մենք կմոտենանք պետական սնանկության... Մենք կանգնած ենք պետական կատաստրոֆայի մեծ անդունդի առաջ»[13]:

Նույն բանը Խատիսյանին ասել էին նաև օտարները. «Ամրապնդեք նորաստեղծ պետությունը և բավարարվեք ձեռք բերած տարածքներով»: Վերը նշեցինք, որ նման հարցադրումները որակում էին որպես թրքամետություն՝ դրան համապատասխան վերաբերմունքով: Եվ այդ ամենին ազգային տոնայնություն հաղորդողը վարչապետ Ալ.Խատիսյանն էր: Կառավարության ղեկավարն էր ու կատարվածի համար հիմնական պատասխանատուն: Նույն Խատիսյանն էր 1918թ. ստորագրել Բաթումի պայմանագիրը, որով ընդամենը 12 հազար քառակուսի կիլոմետր տարածքի վրա ծնվեց Հայաստանի անկախ հանրապետությունը: Սա ծնունդն էր: Զարմանալի է, որ Խատիսյանը ստորագրել էր Բաթումի պայմանագիրը և դա ազգադավություն չէր համարում: Ահա, երբ դրանից ընդամենը մեկ տարի հետո Հայաստանն ունեցավ 60 հզ.թ. կիլոմետր, նույն Խատիսյանն ազգադավություն էր համարում այդ տարածքով բանակցություն սկսելը և նոր պայմանագիր ստորագրելը Թուրքիայի հետ: Հայաստանի զարգացումն հենց այն է, որ նրա տարածքներն, ընդամենը մեկ տարում, հինգ անգամ ընդարձակվեցին: Խատիսյանն ու նրա գործընկերներն այդպես էլ չհասկացան, որ զարգացում ասածը հենց դա էր և որ Բաթումի պայմանագիրը պետք է փոխարինվեր նոր հայ-թուրքական պայմանագրով, որը կլիներ այդ զարգացման վավերացումը: Հանրապետության ծագման ու զարգացման այս բուն խնդրի մասին խոսելու և բացատրելու փոխարեն, թե օբյեկտիվ զարգացումն ինչու խաթարեցին իրենց սուբյեկտիվ գործելաձևով, Խատիսյանն իր գրքում երկար խոսում է Փարիզյան ազգային սպասումների մասին:

Հայաստանի առաջին հանրապետությունը չկարողացավ պետական քաղաքականության չափումներով բեկել և հաղթահարել ազգային երթի դարավոր տրամաբանությունը: Այստեղ է չարիքի արմատը, որը ներսից ախտահարեց ամեն ինչ: Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարները չգիտեին այն պարզ ճշմարտությունը, որ պետության հիմնական խնդիրը ոչ թե պատմական, այլ ներկային ու ապագային վերաբերող հարցերի լուծումն էր: Թող որ սպասեին նաև փարիզյան խաղաղության վեհաժողովի ավարտին, որն իրենց կարծիքով լուծելու էր Մեծ Հայաստանի հարցը, բայց հանգամանքն այդ բնավ չէր խանգարում ունեցած տարածքներով

[13] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 126, թ. 3:

դիվանագիտական հարաբերություններ ունենալ Թուրքիայի հետ: Մեկը մյուսին չէր խանգարում: Ավելին, Փարիզյան վեհաժողովը հայտնի չափով ճնշում էր պարտված Թուրքիայի վրա և նպաստում, որ վերջինը համաձայնվի ճանաչելու 60 հզ.ք.կմ տարածքով Հայաստանը: Նպաստավորություն ասածը հենց սա էր: Պետության դերը հավասարեցվում էր եկեղեցու կառավարման շրջանի տրամաբանության հետ, որ ոչ թե մենք, այլ մեծ տերությունները պետք է լուծեն մեր հարցերը: Քանի անգամներ են Խատիսյանը, Ահարոնյանը, Շանթը ասել ու կրկնել, որ մենք չենք բանակցի մեր թշնամի թուրքի հետ: Ստում էին ու կեղծում, որովհետև այդ նպաստավոր շրջանում էին մեծամտանում ու այդպես ասում, իսկ աննպաստ շրջանում լավ էլ բանակցում էին ու պայմանագիր կնքում: Ինչպես վերը նշվեց, նույն Խատիսյանը 1918թ. բանակցեց ու ստորագրեց Բաթումի պայմանագիրը: 1919թ. «ջարդարար թուրքի» հետ բանակցությունների սեղանի շուրջ չնստող Խատիսյանն էր, որ դեռ պետք է բանակցեր ու 1920թ. դեկտեմբերին ստորագրեր Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Այս ամենի մասին նրանք չքմեղանալով ասում են, որ Բաթումի ու Ալեքսանդրապոլի պայմանագրերը հանգամանքների բերումով ու հարկադրաբար են ստորագրել, այլ ոչ թե սեփական կամքով: Այսինքն՝ մենք թուրքի հետ էլի սեղան նստողը չէինք, եթե հարկադրված չլինեինք: Իսկապես որ խորհրդավոր ու անքննելի մոտեցում է ու պետական գործի հետ ոչ մի կապ չունեցող: Եկեղեցու կառավարման շրջանում նման վարմունքն ինչ-որ տեղ արդարացվում է: Ինչը չես կարող ասել պետության պարագայում: Այսինքն՝ եթե նպաստավոր պայմաններում նստես թուրքի հետ բանակցությունների, դա կդիտվի ազգադավություն: Բոլորովին այլ բան է, որ դա անում ես հարկադրաբար: Այդ պարագայում ինչպես ժամանակակիցները, այնպես էլ սերունդները քեզ ճիշտ կհասկանան ու կներեն: Սրանով է, որ պետության դերը հավասարվել է Հայ Դատի գրասենյակի դերին, որովհետև պետության խնդիրն էր հարցերը լուծել, երբ ժամանակը նպաստավոր է: Միանգամայն ճիշտ է Քաջազնունին, որը կատարվածը հանրագումարում է մեկ նախադասությունով. «Մենք պետական մարդիկ չենք եղել»: Իսկ եղած հատուկենտ պետական այրերը, որոնց մեջ էր իր մոտեցումներով առանձնացող Կարսի նահանգապետ Ստ.Ղորղանյանը, պարզապես չգիտեին ինչպես վարվել հրաշքի սպասումի այդ «հերոսական» ու հեղձուցիչ մթնոլորտում: Վերջինը 1919թ. կառավարությանը հղած զեկուցագրերում նշում է տիրող մթնոլորտի հնարավոր հետևանքները: Փաստում է, որ Կարսի զորքերի հրամանատարը ամրոցի ռազմական դիրքերը ամրացնելու, նահանգում զինվորական կարգ ու կանոն հաստատելու փոխարեն զբաղված է քեֆեր կազմակերպելով ու հայրենասիրական երգեր երգելով: Խոսքը վերաբերում էր Դանիել Բեկ-Փիրումյանին, որը իրեն վստահված ռազմական տեղամասի գործերը կարգավորելու փոխարեն մտածում էր, որ շուտով Եվրոպան Մեծ Հայաստանի հարցը կլուծի, և ինքը կդառնա Էրզրումի գեներալ-նահանգապետը: Փաստերը վկայում են, որ Կարսի ամրոցը բարձիթողի վիճակում էր, իսկ գեներալներն իրենց գործն անելու փոխարեն զբաղված էին սահմանային գոտում բնակվող քուրդ և հույն ազգաբնակչությանն իրար դեմ հանելով և նրանց ունեցվածքի թալանով: Այս արատավոր երևույթի մասին ևս կառավարությանը պարբերաբար տեղյակ է պահում Ստ.Ղորղանյանը: Նա գրում է, որ Կարսի մարզը Հայաստանին հանձնելուց հետո քրդերի և հույների առաջնորդները եկել էին իր մոտ, համբուրել էին հայկական դրոշը՝ նշելով, որ ազատվեցին թրքական լծից ու բարեխղճորեն ծառայելու են Հայաստանի Հանրապետությանը: Ղորղանյանը նշում է, որ այդ ամենից ընդամենը մի քանի ամիս հետո զինվորականների կողմից սկսվում է քրդերի ու հույների ունեցվածքի թալանն ու հարկահանությունը, և ինքն անկարող է այդ անպետական երևույթի առաջն առնելու: Բերում է բազում օրինակներ և նշում, թե այդ գործը ղեկավարում է սահմանային զորքերի հրամանատար գեներալ Հովսեփյանը, որին հովանավորում է Բեկ-Փիրումյանը: Կառավարությունը 1919թ. մի քանի հանձնաժողով է ուղարկում Կարս՝ տեղում հարցն ուսումնասիրելու: Արդյունքում՝ ոչինչ, որովհետև գեներալները պատճառաբանում են, որ սահմանագլխին բնակվող «օտար տարրերին» պետք է թուլացնել: Այդ ամենի հետևանքը եղավ այն, որ կառավարությունը «հոգնելով» նահանգապետի ահազանգերից, Դ.Բեկ-Փիրումյանին կարգեց Կարսի գեներալ-նահանգապետ ու Ստ.Ղորղանյանին ենթարկեցրեց նրան: Հույների հարկահանության հարցով զբաղվեց Հունաստանի կառավարությունը և վերջինիս միջնորդությամբ շուրջ 40 հազար հույներ 1919թ. Արդահանի շրջանից արտագաղթեցին Հունաստան: Քրդերը գնդապետ Կաղիմովի գլխավորությամբ սկսեցին աշխատել Թուրքիայի օգտին, իսկ երբ սկսվեց քեմալական զորքերի հարձակումը, քրդերն ամբողջությամբ անցան նրանց կողմը: Այսպիսի բարոյահոգեբանական մթնոլորտ էր տիրում Կարսի մարզում, և նահանգապետը ոչինչ չէր կարող անել դրությունը շտկելու առումով: Վատ մարդու համբավ էր ձեռք բերել Կարսի նահանգապետը՝ դրան համապատասխան վերաբերմունքով: Իրադարձությունների մեկ ուրիշ մասնակից՝ Հայաստանի Կարմիր խաչի ընկերության նախագահ Գ. Չալխուշյանը հետևյալ կերպ է բնութագրում տիրող մթնոլորտը. «Ռուսահայերը ընդհանուր առումով չէին հավատա նոր պետությանը և կսպասեին, որ նորեն ռուսները պիտի գան ու պիտի տիրեն երկրին: Տաճկահայերը կերազեին ուրիշ Հայաստան, ուր Վանն էր, Կարինը,. Խարբերդը»[14]: Շահերի ու հակվածության խոր հակա-

[14] *Գ. Չալխուշյան,* Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923, էջ 16:

սություն կար հայ հանրության մեջ, որին նպաստում էր նաև կառավարման ապակենտրոն խորհրդարանական ձևը:

1919թ. հոկտեմբերի 6-ին Թախտաջյանը Պոլսից նամակով վարչապետին հայտնում է, որ ամերիկացիները պահանջում են հայ ազգի միասնությունը՝ սպառնալով դադարեցնել Հայաստանին ցույց տրվող օգնությունը[15]: Տաճկահայերը չէին ընդունում գոյություն ունեցող Հայաստանն առանց Տաճկահայաստանի ու այն արհամարհանքով անվանում էին Ռուսահայաստան: Արդեն ասել ենք, որ սրանց պարագլուխը Փարիզում գտնվող Պողոս Նուպար փաշան էր: Ռուսահայերն էլ չէին հավատում Հայաստանի անկախությանը և սպասում էին ռուսների վերադարձին: Վերջիններիս հոգեբանական կրողներն ու առաջնորդները ռուսական նախկին բանակի ռուսախոս հայ սպաներն էին: Ճիշտ է, նրանք սպասում էին Դենիկինին, հետո՝ Վրանգելին, բայց ակնհայտ էր, որ նրանց պարտությունից հետո պետք է սպասեին բոլշևիկներին: Փաստորեն, տաճկահայերի ու ռուսահայերի հին վեճը ամբողջապես ներծծվել էր պետական գործի մեջ՝ դրանից բխող տեսանելի հետևանքներով: Այս հարցում կարևորն այն է, որ նրանք լուրջ չէին ընդունում անկախ Հայաստանը: Սա առանցքային հարց է, որովհետև հիմնականում այդ երևույթի հետ էր կապված հայկական բանակի բարոյալքումը: Խատիսյանն անդրադառնալով այդ հարցին՝ նշում է, որ «բանակի դժբախտությունն էր հայ սպայությունը... Հայ սպան ընդհանուր առմամբ խորթ էր իրեն ենթակա հայ զինվորին և հաճախ նույնիսկ չէր էլ հասկանում նրա լեզուն»[16]:Խոսքը ոչ այնքան լեզվի իմացությանն էր վերաբերում, որքան լեզվամտածողությանը, որին խորթ էր ու հոգեբանորեն անընդունելի Հայաստան պետությունը:

Ստեղծվելիք մեծ հայրենիքի սպասումին զուգահեռ անընդհատ խոսվում ու քննարկվում էր ամենաժողովրդավարական պառլամենտական պետություն ունենալու անհրաժեշտությունը: Այդպես անցավ ուղիղ մեկ տարի: Այդ ընթացքում Օսմանյան կայսրության փլատակների տակից բարձրացավ ու ամրապնդվեց քեմալական շարժումը, որի արդյունքում 1920թ. գարնանից Հայաստանը հայտնվեց քեմալաբոլշևիկյան հեղափոխական դաշինքի շրջափակման օղակում: Գիրքը նվիրված է համաշխարհային հեղափոխության դրոշի ներքո Հայաստանի հանդեպ քեմալականների և բոլշևիկների կատարած հանցագործություններին: Փաստերով ցույց են տրված, թե ինչպես ծրագրավորվեց և խեղդամահ արվեց Հայաստանի առաջին հանրապետությունը:

[15] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, g. 1, գ. 35, թ. 198:
[16] Հայրենիք, 1925, հուլիս. N 9, էջ 105:

ԳԼՈՒԽ I

ՄԱՅԻՍՅԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1920թ. գարնանը քեմալականների ու բոլշևիկների մերձեցման շնորհիվ Անդրկովկասը հայտնվեց քաղաքական ծանր կացության մեջ: Վտանգն ընդհանուր ուժերով դիմակայելու նպատակով ապրիլի 19-24- ը Թիֆլիսում գումարվում է Անդրկովկասի երեք հանրապետությունների կոնֆերանս: Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչները մի քանի օր շարունակ քննարկեցին, արձանագրեցին, որ Անդրկովկասին վտանգ է սպառնում, բայց ինչպես լինում էր նման հանդիպումների ժամանակ, որևէ գործնական եզրակացության չեկան: Սա անդրկովկասյան հանրապետությունների 2-րդ կոնֆերանսն էր: Առաջինը տեղի էր ունեցել 1918թ. նոյեմբերին, որին Հայաստանը չէր մասնակցել: Թիֆլիսի կոնֆերանսի նախաձեռնողն ու մտահոգ կողմը Վրաստանն էր: Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորին գտնում էր, որ վտանգը դիմակայելու համար պետք է վերջ դնել հայ-ադրբեջանական բախումներին: Հայաստանի պատվիրակության ղեկավար Հ.Օհանջանյանը պահանջում էր նախ «որոշել վեճի առարկան» և հետո խոսել այն դադարեցնելու մասին: Ադրբեջանի պատվիրակությունը Խան Խոյսկու գլխավորությամբ անտարբեր էր վերաբերվում հայ-ադրբեջանական բախումներին վերջ դնելու Գեգեչկորու հարցադրումներին: Թերևս այն պատճառով, որ տեղյակ էր, որ հաշված օրեր են մնացել Ադրբեջանի անկախ գոյությանը: Անդրկովկասյան հանրապետությունների կոնֆերանսը ոչինչ չտվեց, ու պարզ դարձավ, որ մասնակիցներն ի զորու չեն համագործակցելու: Թերևս այդ կոնֆերանսն ունեցավ այն նշանակությունը, որ բոլշևիկները, տեսնելով նրանց միջև գոյություն ունեցող տարաձայնությունները, որոշեցին մեկեն խորհրդային կարգեր հաստատել ողջ Անդրկովկասում: 1920թ. ապրիլին Ադրբեջանի խորհրդայնացումից հետո սկսվեցին գործողությունները Հայաստանի դեմ: Հայաստանում մայիս ամսին տեղի ունեցած խռովությունները ցույց են տալիս, որ տարերային ոչինչ չէր եղել: Հայաստանի ներքին խառնակությունները սկսվեցին այն բանից հետո, երբ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո կարմիր զորաջոկատները Ղարաբաղի և Իջևանի ուղղությամբ սկսեցին գործողությունները: 1920թ. ապրիլի 29-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանը հեռագրում է Բաքու, Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիմա-

նովին: Նա այդ հեռագրով պահանջում է, որ Ադրբեջանը զորքերը դուրս բերի Ղարաբաղից և Զանգեզուրից: Հ. Օհանջանյանը նաև նշում է, որ Խորհրդային Ադրբեջանը չի կարող շարունակողը հանդիսանալ մուսափաթական Ադրբեջանի հակահայկական քաղաքականության[17]: Խնդիրն այն էր, որ 1920թ. մարտի 22-ին ադրբեջանական զորքերը մտել էին Ղարաբաղ, և ապրիլին տեղի էր ունեցել Շուշիի հայտնի ջարդը:

Հայաստանի սահմանամերձ շրջաններում ընթանում էին ռազմական գործողություններ: Այդ մասին է վկայում նաև 1920թ. մայիսի 1-ին Ս. Օրջոնիկիձեի Հայաստանի արտաքին գործերի նախարարին հղած հեռագիրը: Օրջոնիկիձեն Հայաստանի կառավարությունից պահանջում է, որ 24 ժամվա ընթացքում հայկական զորքերը դուրս բերվեն Սովետական Ադրբեջանի տարածքներից և դադարեցվեն ռազմական գործողությունները: Այնուհետև, ՌՍՖՍՀ կառավարության անունից նշվում է, որ դրված պայմանների չկատարելը կդիտվի որպես մարտահրավեր ՌՍՖՍՀ կառավարությանը և պահանջը կկատարվի կարմիր զորքերի կողմից[18]: Փաստորեն, Օրջոնիկիձեն ՌՍՖՍՀ կառավարության անունից վերջնագիր է ներկայացնում Հայաստանի կառավարությանը:

Պատահական չէ նաև, որ Օրջոնիկիձեի հետ միասին այդ վերջնագիրը ստորագրել էին նաև կովկասյան ճակատի կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամներ Կիրովը և Լևանդովսկին: Ակնհայտ է, որ նրանց խոսքը վերաբերում էր Ղարաբաղին և Զանգեզուրին:

Մայիսի 2-ին պատասխան նոտայում Հ. Օհանջանյանն Օրջոնիկիձեին հայտնում է, որ Ադրբեջանի տարածքում հայկական զորքեր չկան: Այնուհետև Օհանջանյանն անցնում է Ղարաբաղի հարցին և պնդում, որ Ղարաբաղն ուր համագումարներով հաստատել է իր կամքը՝ չմտնել Ադրբեջանի տարածքի մեջ: Օհանջանյանը պահանջում է, որ ադրբեջանական զորքերը դուրս բերվեն Ղարաբաղից և ազգաբնակչությանը հնարավորություն տան 9-րդ անգամ արտահայտելու իր կամքը: Նաև պահանջում է, որ «ՌՍՖՍՀ իր ներկայացուցիչներից չեզոք մի հանձնաժողով ուղարկի Ղարաբաղ՝ տեղում իրադրությունը պարզելու»: Նույն օրը Հ. Օհանջանյանը մի ուրիշ հեռագիր էլ է ուղարկում Օրջոնիկիձեին, որում ասված է. «Ի հավելումն Ձեր մայիսի 1-ի նոտայի իմ պատասխանի, պատիվ ունեմ հայտնելու, որ Ձեր նոտայում բարձրացված հարցերը քննարկելու համար անհրաժեշտ է ՌՍՖՍՀ և Հայաստանի կառավարության ներկայացուցիչների հանդիպումը: Նշանակեք տեղը և ժամանակը»[19]: Այս հեռագիրը ստանալուց հետո

[17] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 218, գ. 35, թ. 141:
[18] Նույն տեղում, թ. 137:
[19] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, թ. 138:

Օրջոնիկիձեն Բաքվում Հայաստանի ներկայացուցչին հայտնում է, որ պետք է անհապաղ սկսել բանակցությունները ՌՍՖՍՀ կառավարության հետ: Դրանից հետո՝ 1920թ. մայիսի 4-ին արդեն Հայաստանի կառավարության նախագահ դարձած Հ. Օհանջանյանը հեռագրում է Մոսկվա՝ ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինին. «...Հայաստանի Հանրապետության կառավարությունը առաջարկում է ՌՍՖՍՀ կառավարությանը սկսել բանակցությունները երկու երկրների միջև պայմանագրային հարաբերություններ հաստատելու նպատակով, որի համար հիմք պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչումը ՌՍՖՍՀ-ի կողմից[20]: Այնուհետև Հ. Օհանջանյանը Գ. Չիչերինին հայտնում է, որ ՌՍՖՍՀ կառավարության հետ բանակցություններ վարելու նպատակով հայկական պատվիրակության անդամները դուրս են եկել Հայաստանից և «արդեն գտնվում են Ձեր հանրապետության տարածքում»: 1920թ. մայիսի 7-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարին հղած հեռագրում Հ. Օհանջանյանը Վրաստանի կառավարությանը տեղյակ է պահում, որ պատվիրակություն է ուղարկվել Մոսկվա՝ բանակցություններ վարելու և պայմանագիր կնքելու նպատակով: Այս հեռագրում ևս Օհանջանյանը ընդգծում է, որ ՌՍՖՍՀ-ի հետ պայմանագիր ստորագրելու նախապայմանը Հայաստանի անկախության ճանաչումն է: Հեռագրի վերջում Հ. Օհանջանյանը նշում է, որ «իմ կառավարությունում ևս իշխում է այն տեսակետը, որ ում կողմից էլ անտեսվի սուվերենության իրավունքը մենք զենքով կպաշտպանենք այն»[21]: Այս տողերը ցույց են տալիս, որ Հայաստանի կառավարության մեջ, դեռևս բանակցությունները չսկսած, կասկած գոյություն ուներ, որ ՌՍՖՍՀ կառավարությունը, համաձայնվելով հանդերձ Հայաստանի հետ բանակցություններ վարելուն, կարող էր չճանաչել նրա անկախությունը: Այլապես Վրաստանի արտաքին գործերի նախարարին հղած հեռագրում որևէ իմաստ չուներ նման մտահոգություն հայտնելը: Այս մտահոգությունը կամ անհանգստությունը թերևս պայմանավորված էր այն հանգամանքով, որ ՌՍՖՍՀ կառավարությունը հանդես էր գալիս ի պաշտպանություն Ադրբեջանի: Ադրբեջանի սովետական իշխանությունն էլ այդ հանգամանքը վարպետորեն օգտագործում էր: Վերը նշվեց, որ 1920թ. ապրիլի 29-ին Նարիմանովին հղած հեռագրով Հ. Օհանջանյանը պահանջում էր, որ Ադրբեջանը զորքերը դուրս բերի Ղարաբաղից: Հաջորդ օրը Ադրբեջանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Հուսեյնովը Հայաստանի կառավարությանը հղում էր հետևյալ բովանդակությամբ հեռագիրը. «Ադրբեջանի բանվորա-գյուղացիական կառավարությունը ի դեմս հեղկոմի պահանջում է

[20] Հ. Հ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, թ. 23:
[21] Նույն տեղում, թ. 31:

1. Մաքրել Ձեր զորքերից Ղարաբաղի և Զանգեզուրի տարածքները: 2. Հեռանալ Ձեր սահմանները և 3. Դադարեցնել ազգամիջյան կոտորածները, հակառակ պարագայում Ադրբեջանի հեղկոմը իրեն պատերազմական դրության մեջ կհամարի Հայաստանի կառավարության հետ»[22]: Այս և մայիսի 1-ի Օրջոնիկիձեի վերջնագրերի կապակցությամբ Վրաստանի սոցիալ-դեմոկրատների օրգան "Борьба" թերթը մայիսի 4-ին գրում է. «Ռուսաստանի «սովետական իշխանության» և Ադրբեջանի «սովետական իշխանության» վերջնագիրը Հայաստանին Ղարաբաղը և Զանգեզուրը մաքրելու մասին,Անդրկովկասում «սոցիալիստական» հեղափոխություն իրականացնելու առաջին քայլերն են: Պանթուրքիստա- բոլշևիկյան բլոկի ծրագիրն իրականացվում է: ՌՍՖՍՀ-ի և Անատոլիայի միջև միջանցքը գցվում է հայկական հողերի վրայով: Ազգերի ինքնորոշման իրավունքը կրկին բռնաբարվում է բոլշևիկների կողմից»[23]: Ադրբեջանի հեղկոմը որպեսզի ցույց տա, որ Հայաստանի հետ պատերազմական դրության մեջ է, ապրիլի 30-ին Բաքվում ձերբակալում է Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչներին Մ. Հարությունյանի գլխավորությամբ:

Գնալով դրությունը ծանրանում է: Արգելք է դրվում Ադրբեջանից Հայաստան առաքվող նավթամթերքների վրա: 1920թ. մայիսի 4-ին Հ. Օհանջանյանը պատասխանում է Հուսեյնովի ապրիլի 30-ի նոտային: Նա կտրականապես հերքում է Ադրբեջանի պահանջները Ղարաբաղի և Զանգեզուրի վերաբերյալ: Նշում է, որ այդ մասին հայտնվել է նաև Օրջոնիկիձեին: Հ. Օհանջանյանը Ադրբեջանի հեղկոմին առաջարկում է դադարեցնել ռազմական գործողությունները և Հայաստանի կառավարության հետ սկսել բանակցությունները սահմանները որոշելու համար[24]: Այդ օրերին Հայաստանի նոր կառավարությունը եռանդուն գործողություններ է ծավալում արտաքին և, հատկապես, ներքին խժդժությունները կանխելու նպատակով: Նաև գործընթացներ են սկսվում Վրաստանի հետ դաշինք կազմելու ուղղությամբ: 1920թ. մայիսի 6-ին Հ. Օհանջանյանը հեռագրում է Թիֆլիս և Տ. Բեկզադյանին հայտնում է, որ «կառավարությունը վճռականորեն պաշտպանելու է անկախ Հայաստանի սահմանները բոլոր թշնամիներից: Մասնավորապես շարունակվելու են ռազմական գործողությունները Ադրբեջանի դեմ Ղարաբաղում և մյուս տեղերում: Կառավարությունը պատրաստ է այդ պայքարում համագործակցել Վրաստանի հետ: Նույն վճռականությամբ պայքարելու ենք ներքին հակապետական թշնամիների դեմ»[25]: Մայիսի կեսերին, երբ

[22] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 43:
[23] Նույն տեղում, թ. 44:
[24] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, թ. 24-25:
[25] Նույն տեղում, գ. 21, թ. 103:

պարզ դարձավ, որ բոլշևիկների տեղական ապստամբությունները ճնշվում են, Ադրբեջանը ևս համաձայնում է բանակցություններ սկսել Հայաստանի հետ: Այդ մասին մայիսի 8-ին Հայաստանի կառավարությանը հայտնում է Ադրբեջանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Մ. Հուսեյնովը: Մայիսի 13-ին Հ. Օհանջանյանը հեռագրում է Բաքու՝ Հուսեյնովին (պատճեն՝ Չիչերինին, Լենինին). «Ի պատասխան Ձեր մայիսի 8-ի ռադիո-հաղորդագրության, հայտնում եմ հետևյալը.– Ձեր կառավարության հարձակումները Հայաստանի կառավարության դեմ ստիպում են հայտնել Ձեզ, որ Ադրբեջանի հեղաշրջման իսկական իմաստը գնահատված և ըմբռնված է հայ ժողովրդի և կառավարության կողմից ինչպես որ հարկն է... Միացած տաճիկ իմպերիալիստների հետ դուք ամեն ինչ անում եք Հայաստանի գոյությունը ոչնչացնելու համար... Այնուամենայնիվ հարատև խաղաղասիրական զգացմունքներից ելնելով՝ իմ կառավարությունը ընդունում է Ձեր կառավարության առաջարկությունը սկսել բանակցությունները երկու հանրապետությունների միջև գոյություն ունեցող բոլոր վիճելի հարցերը լուծելու համար: Որպես լիազոր ներկայացուցիչներ՝ Հայաստանի կառավարությունը նշանակում է Բաքվում իր ներկայացուցիչ Մ. Հարությունյանին և Ղարաբաղ մեկնած Պապովյանին ու բժ. Յուզբաշյանին, որոնց խնդրում եմ այդ մասին տեղեկացնել: Բանակցությունների համար իմ կառավարությունն առաջարկում է Ղազախ քաղաքը»[26]: Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը բանտից ազատվում է մայիսի 18-ին: Նույն օրը նա տեսնվում է Նարիմանովի և Հուսեյնովի հետ: Նրանք խոստանում են ազատել ներկայացուցչության մյուս ձերբակալված անդամներին և բացել կնքված ներկայացուցչության շենքը: Հայաստանի ներկայացուցչության շենքը բացվում է հունիսի 1-ին և ձերբակալված ներկայացուցչության անդամներն ազատ են արձակվում: Ինչ վերաբերում է հայ-ադրբեջանական բանակցություններին, ապա դրանք ձգձգվում են: Հայ-ադրբեջանական կոնֆերանս գումարելու մի համաձայնություն էլ Թիֆլիսում 1920թ. հուլիսի 2-ին է ձեռք բերվում Հուսեյնովի և Բեկզադյանի հանդիպման ժամանակ: Նրանք որոշում են կոնֆերանսը գումարել հուլիսի 15-ին, Թիֆլիսում կամ Ղազախում: Ադրբեջանն անընդհատ ձգձգում է բանակցությունները և շարունակում ռազմական գործողությունները Ղարաբաղում և Զանգեզուրում: Ու քանի որ մարտերին մասնակցում էին նաև կարմիր բանակի զորաջոկատները, Հայաստանի կառավարությունը որոշում է Ղարաբաղից ետ կանչել Դրոյի էքսպեդիցիոն կորպուսը: Ղարաբաղից նահանջելիս Դրոն նաև Նժդեհից է պահանջում թողնել Զանգեզուրը: Նժդեհը չի ենթարկվում Դրոյի հրամանին և մնում է Զանգեզուրում ու շարունակում

[26] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 100, ց. 2, գ. 112, թ. 1-2:

պայքարը: Այս քայլերը կառավարությունը ստիպված էր կատարում, որպեսզի բոլշևիկներին առիթ չտա Մոսկվայում ընթացող բանակցություններում կոշտ դիրք գրավելու Հայաստանի հանդեպ: Փաստորեն, Ադրբեջանը չէր կատարում որևէ պայմանավորվածություն: 1920թ. հուլիսի 2-ին Թիֆլիսում Հուսեյնովը և Բեկզադյանը հարաբերությունները մեղմելու համաձայնություն էին ձեռք բերել մինչ հայ-ադրբեջանական բանակցություններն սկսվելը: Անընդհատ նորանոր լուրեր էին հասնում Բաքվում կատարված գնդակահարությունների մասին: Ղարաբաղում և Զանգեզուրում շարունակվում են ձերբակալություններն ու պարենամթերքի բռնագրավումները: Հայաստանի դրությունը բարդանում էր նաև նրանով, որ մայիսին Իջևան էին մտել կարմիր բանակի երկու հեծյալ գնդեր: Հայաստանը հայտնվել էր չափազանց ծանր կացության մեջ, եթե այս արտաքին խառնաշփոթին գումարենք նաև ներքին անցքերը: Անշուշտ, Հայաստանի կառավարությունը կատարվածի մասին անմիջապես տեղյակ է պահում «դաշնակից» պետություններին և Փարիզի վեհաժողովին, բայց դրանից, բնական է, ոչինչ չէր փոխվում: Հայաստանի կառավարությունը, վճռական գործողություններով հանդերձ, Ղարաբաղի ու Զանգեզուրի հարցում իրեն զուսպ էր պահում, որովհետև գիտեր, որ բոլշևիկների հետաքրքրության առարկան, համաշխարհային հեղափոխության առումով, Թուրքիային ու Պարսկաստանին միացնող գիծն էր: Այդ առումով էլ անհամբեր սպասում էին մոսկովյան բանակցությունների արդյունքին, այսինքն՝ կարևոր էր, թե Մոսկվան ի՞նչ վերաբերմունք ցույց կտար Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջևան ստրատեգիական տարածքի վերաբերյալ: Հայաստանի կառավարության անդամները միամտորեն հավատում էին, որ Մոսկվայի բանակցություններում այդ տարածքների միացումով է ճանաչվելու Հայաստանի անկախությունը: Առավել ևս, որ մայիսի 11-ին Շանթը հուսադրող հեռագիր էր ուղարկել Վլադիկավկազից: 1920թ. մայիսի 12-ին կառավարության նախագահ և արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանը այդ մասին հեռագրով հայտնում է Թիֆլիս՝ Տ. Բեկզադյանին. «Շանթը Վլադիկավկազից հայտնել է, որ նախնական համաձայնություն կայացվել է (ՌՍՖՍՀ հետ), մեր անկախությունը ճանաչելու և ներքին գործերին չխառնվելու պայմանով»[27]:Նման լուրերը հուսադրող էին նաև այն պատճառով, որ 1920թ. մայիսի 7-ին ՌՍՖՍՀ-ը ճանաչել էր Վրաստանի անկախությունը: Սակայն այս համեմատությունը տեղին չէր, որովհետև բոլշևիկները տարբեր մոտեցումներ ունեին Հայաստանի և Վրաստանի հանդեպ:

Նկատենք, որ ընդամենը մեկ շաբաթ է անցնում Վլադիկավկազից ստացված նախնական համաձայնության մասին լուրից, և, հանկարծ, կարմիր բանակի երկու գունդ մայիսի 20-ին հարձակվում և գրավում են Քարվանսարայը (Իջևան): Եվ, քանի որ Շանթի պատվիրակության հետ Հայաստանի կառավարությունը կապ չուներ, Օհանջանյանը 1920թ. մայիսի 20-ին հեռագրում է Թիֆլիս՝ Բեկզադյանին. «Անմիջապես իմ անունից հեռագրեք Չիչերինին, որ մայիսի 20-ին Ադրբեջանի տարածքից Քարվանսարայ են մտել երկու սովետական հեծյալ գնդեր: Հայաստանի անկախությունը ոտնահարող նման քայլերը գտնելով անթույլատրելի և նկատի ունենալով, որ մենք արդեն սկսել ենք բանակցություններ երկու երկրների միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու համար, խնդրում եմ անմիջապես կարգադրեք, որ Կարմիր բանակի գնդերը դուրս գան հայկական տարածքից»[28]: Այս միջադեպը ցույց է տալիս, որ ի սկզբանե ՌՍՖՍՀ կառավարությունը լուրջ չէր վերաբերվել Հայաստանի հետ Մոսկվայում վարվելիք բանակցություններին: Դժվար է պատկերացնել, որ մի կողմից ՌՍՖՍՀ-ը համաձայնեց Մոսկվայում բանակցություններ վարել Հայաստանի հետ՝ նրա անկախությունը ճանաչելու պայմանով, իսկ մյուս կողմից՝ կարմիր բանակի զորաջոկատները երկու ուղղությամբ հարձակվում էին նույն պետության տարածքների վրա: Կարմիր բանակի զորագնդերը Իջևանից հետո գրավում են նաև Դիլիջանը: 1920թ. մայիսի 22-ին Հ. Օհանջանյանը հեռագրում է Տ. Բեկզադյանին. «Անմիջապես հեռագրեք Չիչերինին, որ այդ զորքերը շարունակում են իրենց առաջխաղացումը և գրավել են Դիլիջանը: Խնդրեք, որ անմիջապես այդ զորքերը ետ կանչեն Հայաստանից, դրանով ստեղծելով հնարավորություն երկու կառավարությունների միջև վարվող բանակցությունների համար»[29]:Կարմիր զորագնդերի մուտքը Իջևան և Դիլիջան ինչ-որ ձևով բացատրում է Օրջոնիկիձեն 1920թ. մայիսի 22-ին ՌՍՖՍՀ կառավարությանը տված հետևյալ հեռագրում. «Գիշերը վերադարձա Ղարաբաղից: Թե հայ և թե մուսուլմանական բնակչությունն ուրախությամբ է դիմավորում ռուսական կարմիր զորքերին: Կարծում եմ, որ Շուշիի, Նախիջևանի, Օրդուբադի, Ջուլֆայի շրջանները կգրավվեն առանց դիմադրության: Հայերի կողմից ամսի 10-ին Ալեքսանդրապոլում տեղական բանվորները, կայազորը և զրահագնացքը հռչակել են Հայկական ռեսպուբլիկա: Սովետական իշխանությունը պահպանվել է չորս օր, որից հետո ապստամբությունը ճնշվել է: Դիլիջանի շրջանից եկել են հայ կոմունիստներ՝ խնդրելով աջակցել իրենց»[30]: Պարզ երևում է, որ Օրջոնիկիձեն տեղյակ էր, որ կարմիր գնդեր են մտել Դիլիջան: Հայաստանի համար ստեղծվել

[27] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 100, ց. 2, գ. 112, թ. 1 - 2:

[28] Նույն տեղում, գ. 211, թ. 128:

[29] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 211, թ. 141:

[30] ՀՍՍՌ և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Երևան, 1960, էջ 323:

էր այնպիսի իրադրություն, որ Դիլիջան մտած գնդերը եթե առաջ շարժվեին, կառավարությունը ոչինչ չէր կարող անել, որովհետև կաթվածահար վիճակում էր: Ահա այդ պահին, երբ հնարավոր էր Հայաստանի խորհրդայնացումը, նույն Օրջոնիկիձեի հրամանով Դիլիջան հասած երկու հեծելագնդերը նահանջում և դուրս են գալիս Հայաստանի սահմաններից: Այս վիճահարույց խնդրին դեռևս կանդրադառնանք, որովհետև դրանից հետո բոլշևիկյան կենտրոնը ձեռք քաշեց ուժի միջոցով Հայաստանը խորհրդայնացնելուց:

Հայաստանում տիրող վիճակի մասին պարզ պատկերացում կազմելու համար կարևոր է Ալեքսանդրապոլի բոլշևիկ ապստամբների առաջնորդ հայկական բանակի կապիտան Մուսայելյանի և գեներալ Գամազովի 1920թ. մայիսի 10-ի հեռախոսային խոսակցությունը: Գեներալը Մուսայելյանին ասում է. «Ձեզ հայտնի է, որ թշնամին քնած չէ և հետևում է մեզ: Ադրբեջանը բանակցությունների մեջ է մտել Վրաստանի հետ, որպեսզի ամբողջ ուժերը կենտրոնացնի մեր դեմ: Չեչենները և 12-րդ դիվիզիան (թուրքական) պատրաստ են հարձակման մեր դեմ: Այդպիսի ծանր պայմաններում բանակի ողջ ուժերը պետք է ուղղվեն թշնամու դեմ: Այդ ամենը դուք նկատի ունեցե՞լ եք կարմիր դրոշ բարձրացնելիս»: Կապիտանը գեներալին պատասխանում է. «Ես հավատում եմ, որ իսկապես դաշնակցական կառավարության օրոք մեր հարևանները հարձակվելու են Հայաստանի վրա և այդ ժամանակ մենք ոչ մեկից որևէ օգնություն չենք կարող սպասել»[31]: Հայկական բանակի երկու սպաների այս երկխոսության մեջ բերված հարցադրումների շուրջ է պտտվել քաղաքական միտքը: Ով էր ճիշտ՝ գեներա՞լը, թե՞ կապիտանը: Բացի այդ մեզանում կառավարության դեմ մայիսյան խռովությունը ներկայացվել է ինչպես վարժապետների ձեռքի գործ, բայց իրականում ըմբոստացել էր բանակը: Հանգամանք, որի վրա կառավարությունը պատշաճ ուշադրություն չէր դարձրել: Պատկերն անմխիթարական էր այն առումով, որ կարմիր բանակի երկու գնդերը հեշտությամբ կոտրեցին հայ-ադրբեջանական սահմանի հայկական կայազորի դիմադրությունը և գրավեցին Իջևանն ու Դիլիջանն առանց որևէ դիմադրության հանդիպելու: Նույն պատկերն էր Նոր Բայազետում: Խռովարարները Բասարգեչարում տեղակայված զորամասի զինվորներն էին: Խայտառակությունն այն էր, որ նրանք ձերբակալում են գեներալ Սիլիկյանին, որը հայկական բանակի արևելյան խմբի հրամանատարն էր: Խռովարարները Սիլիկյանի փոխարեն զորքերի հրամանատար են կարգում ֆետֆեբել Ա. Նալբանդյանին, իսկ պրապորշչիկ Հայկ Գրիգորյանի հրամանատարությամբ ջոկատը շարժվում և գրավում է Նոր Բայազետը: Հակակառավարական խռովության պատճառները Նոր Բայազետում ճշտելու, օրինական իշխանություն հաստատելու և գեներալ Սիլիկյանին բանտից ազատելու նպատակով մայիսի 13-ին Ներքին Ղարանլուղ մեկնած պատգամավորներ Գ. Քեշիշյանը և Գ. Շիրինյանը կառավարությանը հղած հունիսի 9-ի զեկուցագրում նշում են, որ «Նոր Բայազետում պարզվեց, որ ոչ միայն Ղարանլուղ արշավելու, այլև քաղաքը տեղական ուժերով պաշտպանելու ոչ մի հնարավորություն չկար անհիշխանության և խուճապի պատճառով: Գլուխները չէին կորցրել և պատրաստ էին մեր կարգադրությունները կատարելու միայն միլիցիայի պետը և գավառական կոմիսարը մի քանի տասնյակ միլիցիոներներով»: Պատգամավորների զեկուցագրից պարզ երևում է, որ գավառում տեղակայված արևելյան զորախումբը միացել էր խռովարարներին: Խռովությունը ճնշվում է մայիսի 19-ին, երբ տեղ է հասնում Քանաքեռից ժամանած զորախումբը: Մայիսին կատարված իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլշևիկյան ազդեցությունը հայկական բանակում մեծ էր: Իհարկե, մայիսյան իրադարձություններից հետո կառավարությունը դրությունը փոխելու նպատակով մեծ ջանքեր գործադրեց: Բայց խոսքը տիրող հոգեբանության մասին էր, որը ցույց է տալիս, որ եթե կարմիր բանակի երկու հեծյալ գնդերը Օրջոնիկիձեի ցուցումով ետ չկանչվեին՝ Հայաստանում խորհրդայնացումն անխուսափելի էր դառնալու: Կատարվածից կարելի է անել այն հետևությունը, որ Մոսկվան չցանկացավ, որ մայիսյան իրադարձությունները Հայաստանում վերջանան խորհրդային կարգերի հաստատումով: Այդ մասին 1920թ. հունիսի 12-ին ասում է Ս. Օրջոնիկիձեն Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանին: Մ. Հարությունյանի այն դիտարկմանը, որ բոլշևիկները կամենում են կառավարությունը տապալել և սովետական իշխանություն հաստատել Հայաստանում, Օրջոնիկիձեն պատասխանում է. «Ես Ձեզ ասում եմ, որ սովետական իշխանությունը մտադրություն չունի իր զորքերով Հայաստանը գրավելու: Թե ի՞նչ նկատառումներով, այդ մի կողմ թողնենք, բայց և այնպես մենք Ձեր ներքին գործերին չենք խառնվի, բայց չենք կարող անտարբեր նայել մեր ընկերների (կոմունիստների – Կ.Ս.) հալածանքներին: Ես մտածում էի հեռագրել Մոսկվա, որպեսզի Ձեր պատվիրակությանը այնտեղ կալանավորեն: Լավ կլինի, որ մեր ընկերներին թույլ տրվի Հայաստանից հեռանալ և ժամանակավորապես մնալ սահմանների վրա»[32]: Օրջոնիկիձեի այս հարցադրումները պատասխանում են մի շարք կնճռոտ ու վիճահարույց հարցերի: Դրանցից առաջինն այն է, որ եթե բոլշևիկները ցանկանային, ապա մայիսին Հայաստանը կխորհրդայնացվեր զենքի ուժով: Փաստորեն, Օրջոնիկիձեն հերքում է ժամանակին իրենց իսկ կողմից շրջանառու դարձրած այն

[31] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 220, թ. 14-15:

[32] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 85, թ. 9:

տեսակետը, որ Անդրկովկասը միանգամից չխորհրդայնացվեց, որովհետև համապատասխան ուժերը ետ էին կանչվել «լեհական ճակատ» ուղարկվելու համար: Այստեղ, իհարկե, կարելի է նաև նկատել, որ բոլշևիկների խոսքն ու գործը տարբեր էր, և չի կարելի որևէ թեզ զարգացնել՝ ելնելով Օրջոնիկիձեի ասածներից: Դա ճիշտ է, բայց կար նաև իրադարձությունների զարգացման ընդհանուր տրամաբանությունը: Այսինքն՝ այդ փուլում բոլշևիկներին իսկապես ձեռնտու չէր Հայաստանի խորհրդայնացումը: Նրանց ավելի շատ հետաքրքրում էր Ղարաբաղ–Զանգեզուր–Նախիջևան գիծը՝ քեմալականներին միանալու համար: Թերևս այդ նկատի ուներ Օրջոնիկիձեն, երբ Մ. Հարությունյանին չէր ասում, թե ինչ նկատառումներով ձեռնտու չէ Հայաստանի խորհրդայնացումը: Նա չէր էլ կարող ասել, որ այդ քայլը ժամանակավրեպ էր ոչ թե բոլշևիկների, այլ նրանց դաշնակից քեմալականների համար: Հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ մայիսին Հայաստանի խորհրդայնացումը քեմալականներին ձեռնտու չէր, որովհետև դրանից հետո նրանք լուրջ խնդիրներ կունենային տարածքների հարցում: Խոսքը վերաբերում է Կարսի մարզին, որին հավակնում էին քեմալականները: Չնայած որ նրանք դեպքերի զարգացման նման հնարավորությունն էլ էին նախատեսել: Հենց իրադարձությունների զարգացման նման հնարավոր տարբերակի դեպքում էր նախատեսված, որ հունիսին պետք է տեղի ունենար քեմալականների հարձակումը Հայաստանի վրա: Չնայած առումով 1920թ. հունիսյան հարձակումը հետաձգվեց Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինի պահանջով, բայց միևնույն է այդ հարձակումը նախատեսված և կապված էր Հայաստանում իրադարձությունների հնարավոր զարգացումների հետ: Փաստերի համադրությունը ցույց է տալիս, որ քեմալականներն էին թելադրում անդրկովկասյան իրադարձությունները և բոլշևիկները չէին կարողանում անտեսել նրանց մոտեցումները: Առավել ևս, եթե նկատի ունենանք, որ քեմալականների կողմից բոլշևիկների հետ համագործակցությունը հիմնականում կապված էր Հայաստանի հետ: Այսինքն՝ քեմալականներին ձեռնտու չէր մինչև Սևրի պայմանագրի ստորագրումը Հայաստանի դեմ ակտիվ ռազմական գործողությունների ծավալումը և նրանք հասան այն բանին, որ ՌՍՖՍՀ-ը համաձայնեց նրանց մոտեցմանը և մայիսի վերջին ետ կանչեց Դիլիջանը գրաված իր զորքերը: Ավելի ճիշտ, այդ երկու գնդի մուտքը Հայաստան ցուցադրական բնույթ էր կրում: Նրանց պետք էր, որ այդ քայլով հայ բոլշևիկներին ցույց տային, թե իրենց դիմումի համաձայն զորքերը մտցրին Իջևան և Դիլիջան, բայց արդեն ուշ էր, որովհետև մյուս տեղերում Հայաստանի կառավարությունն արդեն ճնշել էր խռովությունները: Միայն այն փաստը, որ բոլշևիկյան երկու հեծյալ գնդերը Իջևան մտան մայիսի 20-ին, այսինքն՝

այն ժամանակ, երբ խռովություններն արդեն ճնշված էին, ինքնին խոսում է այն մասին, որ այդ քայլը ցուցադրական բնույթ էր կրում: Այսինքն՝ եթե այդ գնդերը Իջևան մտնեին մայիսի 10-ին, ապա իրադարձությունները Հայաստանում այլ զարգացում կունենային: Այդ առումով էլ Օրջոնիկիձեն Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Մ. Հարությունյանին ճիշտ էր ասում, որ «սովետական իշխանությունը մտադրություն չուներ իր զորքերով գրավել Հայաստանը... մի փոքրիկ հեծելագունդ գնացել է Քարվանսարայ և անմիջապես վերադարձել, որից հետո, ինչպես մեր ընկերներն են ասում, Հայաստանի գյուղացիությունը դժգոհ է մնացել, որ ռուս զորքերը չէին օգնում իրենց և մենակ են թողել պայքարի մեջ»[33]: Օրջոնիկիձեն պարզ ասում է, որ եթե սովետական իշխանությունը մտադրություն ունենար, մայիսին Հայաստանում կհաստատվեին սովետական կարգեր, բայց կային «նկատառումներ», որոնք թույլ չտվեցին այդ անել: Դժվար է հակափաստարկներ բերել և ապացուցել հակառակը: Նոր Բայազետի գավառի խռովության օրինակով տեսանք, թե ինչպիսի անիշխանական ու խուճապային դրություն էր տիրում հայկական բանակում: Նույն պատկերն էր Ալեքսանդրապոլում, Կարսում, Քարվանսարայում: Կարսում խռովությունը ճնշելուց հետո Ն. Աղբալյանը կառավարության նախագահին հղած հեռագրում նշում է, որ զինվորականությունը կապիտան Մելիքյանի գլխավորությամբ ներքաշված էր հակապետական խռովության մեջ[34]: 1920թ. մայիսի 23-ին Հ. Օհանջանյանը հեռագրում է Թիֆլիս Տ. Բեկզադյանին. «Գնդապետ Մելիք-Շահնազարովը մասնակցել է բոլշևիկյան ելույթներին և իր ընկերների հետ փախել ու ապաստան է գտել Վրաստանում: Խնդրում եմ այդ մասին հայտնեք Վրաստանի կառավարությանը[35]: Այս փաստերը հերքում են տարածում գտած այն մտայնությունը, որ իբր մայիսյան խռովությունը մի խումբ վարժապետների ձեռքի գործն էր: Անշուշտ, խռովության կազմակերպիչները հայ բոլշևիկներն էին, բայց փաստ է նաև, որ հանրապետության տարբեր վայրերում բանակի զորամիավորումներն ակտիվ մասնակցություն են ունեցել խռովությանը:

Ժամանակակիցներից մայիսյան իրադարձությունների գնահատականն իր տարողությամբ տվել է միայն Ս. Վրացյանը: Նա ընդգծում է. «Ամեն տեղ ապստամբությունը կրում էր զինվորական բնավորություն»[36]: Այսինքն՝ խռովությանը տոն տվողը զինվորականությունն էր: Ու թե նրանք ժամանակին դրսից օգնություն ստանային, կառավարությունը կանգնելու

[33] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 85, թ. 5:
[34] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 217, թ. 108:
[35] Նույն տեղում, գ. 211, թ. 143:
[36] *Ս. Վրացյան,* Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 400:

էր կատարված փաստի առաջ: Հայաստանի խուճապային դրությունը լավ ցույց է տալիս այն հանգամանքը, որ բոլշևիկյան երկու գունդը մայիսի 20-ին մտնում են Իջևան, իսկ երկու օր հետո արդեն գրավել էին Դիլիջանը: Այդ մասին մենք իմացանք Տ. Բեկզադյանին հղած Հ. Օհանջանյանի մայիսի 22-ի հեռագրից: Դա էլ այն դեպքում, երբ այդ ժամանակ խռովության հիմնական օջախները ճնշված էին: Վերջինը Նոր Բայազետն էր, որտեղ խռովությունը ճնշվել էր մայիսի 19-ին: Պատկերը ավելի քան պարզ է դառնում, եթե այս ամենին գումարում ենք այն, որ կարմիր գնդերը Դիլիջանից նահանջելիս իրենց հետ գերի են տանում Հայաստանի ներքին գործերի նախարարի տեղակալ Ս. Մանասյանին, ևս հինգ պետական պաշտոնյաների, այլ նաև 180 հայ զինվորների[37]: Սա նշանակում է, որ Հայաստանը մայիսին գտնվում էր բացարձակապես անպաշտպան վիճակում: Այս ամենն հերքում է այն մոտեցումը, որ եթե դաշնակցությունը հետևեր Ադրբեջանի օրինակին և չճնշեր մայիսյան խռովությունը՝ Հայաստանը տարածքային կորուստներ չէր ունենա: Միակողմանի և քաղաքական իրադարձությունների խորքին ոչ հաղորդ մոտեցում է, որովհետև բոլշևիկյան Ռուսաստանն ինքը չուզեց, որ մայիսին Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվեն: Այդ մասին ևս պարզ ասում է նույն Օրջոնիկիձեն Բաքվում Մ. Հարությունյանի հետ ունեցած, արդեն հիշատակած, հունիսի 12-ի զրույցում: Անդրադառնալով Հայաստանում մայիսյան խռովության ճնշմանը՝ նա ասում է. «Ես, իհարկե, այնքան միամիտ չեմ, որ մտածեմ, թե կառավարությունը չպետք է պատժի, երբ յուր դեմ ապստամբում են: Իհարկե, Հայաստանի կառավարությունը չպետք է շոյեր ապստամբների գլուխները»: Տեսնում ենք, թե Օրջոնիկիձեն ինչպիսի բավարարվածությամբ է խոսում ապստամբությունը ճնշելու մասին, որը հավելյալ ապացույց է այն բանի, որ ստրատեգիական նկատառումներով նրանք չէին ցանկանում, որ մայիսյան խռովությունը հաղթական ավարտ ունենար: Խնդիրն այն է, որ հարցի այս կողմի վրա բացարձակապես ուշադրություն չէր դարձնում Հայաստանի կառավարությունը: Կառավարության անդամներին և քաղաքական գործիչներին թվում էր, որ մայիսին բոլշևիկյան Ռուսաստանը ջանում էր «տապալել դաշնակցական կառավարությունը», բայց դա նրանց չհաջողվեց: Երևույթն այս կապված էր կատարվածից հետևություն անելու ու նաև ապագան կանխատեսելու նրանց անկարողության հետ: Իսկ կատարվածը ցույց էր տալիս, որ հայկական բանակը, որը կառավարության հոգածության առարկան էր, փորձությանը չդիմացավ: Դրանից պետք է այն հետևությունը արվեր, որ հետագայում ևս բոլշևիկները հեշտությամբ կարող էին խարխլել բանակը: Ճիշտ է, մայիսի 5-ին կազմավորված Հ. Օհանջանյանի նոր կառավարությունը ջանքեր գործադրեց բանակում կարգ ու կանոն հաստատելու և այն ազգայնացնելու ուղղությամբ, բայց այդ քայլերով դրությունը փրկել հնարավոր չէր, որովհետև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումն ընդամենը հետաձգվել էր և ոչ թե հանվել օրակարգից: Հայաստանի կառավարությունը տեսնելով, որ հայկական զորքերը և հայ ժողովուրդը չի կռվում բոլշևիկների դեմ, փորձում է սեպ խրել բոլշևիկների և քեմալականների միջև: 1920թ. հունիսի 4-ին Հ. Օհանջանյանը հեռագրում է Մոսկվա՝ հայկական պատվիրակության ղեկավար Լ. Շանթին. «Բոլշևիկյան զորքերի առաջխաղացումը Ղարաբաղում շարունակվում և ընդարձակվում է: Մեր գյուղացին տրամադիր չէ նրանց հետ կռվելու: Խաչենում, Ջիվանշիրում և Գյուլիստանում հայտարարված են Սովետական կարգեր: Զանգեզուրում բոլշևիկների շարժումը կանգնեցված է Դրոյի կողմից: Մենք որոշել ենք կռվել բոլոր ուժերով: Եռանդուն բողոքեցեք Ղարաբաղի վրա սովետական զորքերի հարձակման դեմ»[38]: Հայաստանի կառավարությունը ձգտում էր Մոսկվայի միջոցով կասեցնել բոլշևիկյան զորքերի առաջխաղացումը Ղարաբաղ – Զանգեզուր – Նախիջևան ուղղությամբ, որպեսզի չկայանա բոլշևիկների ու քեմալականների միացումը: Այդ շրջանում Հայաստանի կառավարությանը միամտորեն թվում էր, թե դեռևս հնարավոր էր կանխել քեմալականների և բոլշևիկների մերձեցումը: Ահա թե այդ մասին Թիֆլիս, Տ. Բեկզադյանին 1920թ. հունիսի 10-ին հղած հեռագրում ինչ է հաղորդում Հայաստանի մոսկովյան պատվիրակության անդամ Լ. Զարաֆյանը. «Քեմալի ներկայացուցիչները գտնվում են այստեղ ռազմական օգնություն ստանալու նպատակով, բայց կարծում ենք, որ դրանից ոչինչ չի ստացվի»: Եվ ինչպես ասվածի հավաստում՝ Լ. Զարաֆյանը նշում է. «Մեզ հետ բանակցություններ է վարում Կարախանը: Տեսնվել ենք Չիչերինի հետ... Սովետական կառավարությունը ճանաչում է և հետայսու Հայաստանի անկախությունը և հետագա որևէ ցանկություն չունի խառնվելու նրա ներքին գործերին և սովետական կարգեր հաստատելու Հայաստանում: Կովկասի կոմունիստների վարքագիծը չի համապատասխանում այստեղի տրամադրվածությանը: Շարունակեք Ձեր հմուտ և վճռական դիրքորոշումը կոմունիստների դեմ: Ձեր վճռականության դեմ այստեղից ուղարկված նոտաներին առանձնապես ուշադրություն մի դարձրեք, դա ձևականություն է»[39]: Կարդում ես այս տողերը ու զարմանում: Ըստ Լ. Զարաֆյանի՝ Կովկասի կոմունիստները գործում էին ինքնագլուխ և կապ չունեին Մոսկվայի ղեկավարության հետ: Նա նաև իր կառավարությանը հավաստում է, որ քեմալականների՝ բոլշևիկներից ռազմական օգնություն խնդրելուց ոչինչ դուրս չի գա: Զարմանում ես, որովհետև Լ. Զարաֆյանը

[37] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 219, թ. 306:

[38] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 211, թ. 154:

[39] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, թ. 157:

լավ գիտեր, որ քեմալա-բոլշևիկյան դաշինքը վաղուց արձանագրված փաստ էր, և ինքը, որպես Հայաստանի խորհրդարանի անդամ, դրան տեղյակ էր: Դեռևս 1920թ. փետրվարին, երբ Հայաստանի խորհրդարանում լսվում էր էսէռ Խոնդկարյանի հարցապնդումը կառավարության կողմից բոլշևիկների հալածանքի մասին, այդ հարցերը մանրամասն քննարկվում են: Այդ պատճառով էլ մեջ բերենք այդ նիստում պատգամավոր Ա. Ջամալյանի ելույթը: Նաև այն պատճառով, որ ելույթը ցույց է տալիս, թե որոնք էին դաշնակցության և բոլշևիզմի թշնամանքի բուն պատճառները:

Ա. Ջամալյանն իր ելույթը սկսում է հենց այդ թշնամանքի ակունքներից. «Բոլշևիկներն ամեն տեղ հալածում են դենիկինցիներին, մենք էլ հալածում ենք նրանց և ահա թե ինչն է դրա (թշնամանքի- Կ.Ս..) հիմքը: Այն օրից, երբ փաստ դարձավ բոլշևիկների և միլիների (քեմալականների) դաշինքը այդ չալմայավոր սոցիալիստների հետ, այդ օրվանից փոխվել է մեր վերաբերմունքը դեպի բոլշևիկները:

...Բոլշևիկներն ասում են, որ մենք ամեն բան կանենք, որ թուրք զորքերը Հայաստանից անցնելիս չկոտորեն հայերին, բայց չեն երաշխավորում... ուրեմն Հայաստանի կոմունիստական կոմիտեն պատրաստ է օգնել այդ շարժմանը և կատարել նրա հրահանգները: Թեկուզ մի Մռավյան՝ մի Կասյան հակառակ լինեն այդ շարժմանը, բայց ինչ արժեք ունեն այդ բոլորը մեզ համար: Կարևորը կազմակերպական տեսակետն է, որ մեզ ստիպում է հաշվի առնել և միջոցներ ձեռք առնել այդ արտառոց դաշնակցության առաջն առնելու համար, որպեսզի մեր կյանքը չստեղծվի (չվերածվի դժոխքի – Կ.Ս.)»[40]: Սա պատասխանն է այն հարցի, որ Մոսկվայում գործող Լ. Զարաֆյանը դեռևս 1920թ. փետրվարից գիտեր, որ քեմալա-բոլշևիկյան դաշինքը կատարված փաստ է և իրավունք չուներ իր կառավարությանն հայտնելու, որ այդ առումով իբր իրադրությունը փոխվել է և ինքը կարծում է, որ «քեմալականների մոսկովյան ձեռնարկից դժվար թե բան դուրս գա»: Երկրորդ և կարևոր հարցն այն է, որ Լ. Զարաֆյանն իր հունիսի 10-ի հաղորդումով ապակողմնորոշում է կառավարությանը՝ հայտնելով, որ բոլշևիկների մոսկովյան և կովկասյան տեսակետները Հայաստանի հանդեպ չեն համապատասխանում իրար: 1920թ. մայիսից մինչև օգոստոս ամիսը Մոսկվայում ՌՍՖՍՀ կառավարության հետ բանակցություններ վարող Լ. Շանթի գլխավորած պատվիրակության գործունեությանը անդրադառնալիս նշենք, որ այն բաժանվում է երկու փուլի: Առաջին շրջանը նախնական զրույցներն էին, որոնք տևեցին երկու ամիս, դրանից հետո ընկած շրջանը: Առաջինը հաջող կամ թվացյալ հաջող ընթացք ունեցող շրջանն էր, երբ պատվիրակությունը կառավարությանը հավաստում էր, որ Ռուսաստանը ճանաչելու է

[40] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, g. 1, գ. 78, թ. 2:

Հայաստանի անկախությունը և նպատակ չունի այն խորհրդայնացնելու: Այդ ամենը ունեցավ այն հետևանքը, որ կառավարությունը փորձեց որդեգրել ռուսամետ, բայց հակաբոլշևիկյան քաղաքականություն: Ավելի ստույգ, կառավարությունը նման գործելակերպ սկսել էր այն բանից հետո, երբ 1920թ. հունվարին բոլշևիկների հետ հարաբերություններ հաստատելիս դաշնակցության ղեկավարության փորձն արդյունք չունեցավ: 1920թ. փետրվարին խորհրդարանում Ա. Ջամալյանի՝ հակաբոլշևիկյան կամ քեմալա-բոլշևիկյան դաշինքի դեմ ուղղված ելույթին նախորդել էր հունվարին դաշնակցության բյուրոյի երեք անդամների հանդիպումը բոլշևիկյան կուսակցության կովկասյան բյուրոյի քարտուղար Հ. Նազարեթյանի հետ: Այդ հանդիպման անհրաժեշտության ու արդյունքների մասին Ս. Վրացյանն անում է հետևյալ հիշատակումը. «Հայաստանի կառավարությունը, ինչպես և դաշնակցության բարձրագույն մարմինը, մեկից ավելի անգամ քննության առին բոլշևիկ-քեմալական համաձայնության փաստը, ինչպես և այդ փաստից բխելիք հետևանքները: Պարզ էր, որ համաձայնության մեջ, ուղղակի կամ անուղղակի ձևով որոշ տեղ պետք է ունենար նաև Հայաստանը հենց, թեկուզ, իր աշխարհագրական դիրքի պատճառով: Իրերի առարկայական ընթացքը թելադրում էր միջոցներ ձեռք առնել, որպեսզի ապագա իրադարձությունների պարագային հայ ժողովուրդը ոտքի տակ չգնա: Այս մտահոգությամբ դաշնակցական բյուրոն հունվարի (1920) սկզբներին Թիֆլիս ուղարկեց իր անդամներից երեքին- Ա. Ջամալյանին, Ռ. Տեր- Մինասյանին և Ս. Վրացյանին, որպեսզի հարաբերության մեջ մտնեն Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կովկասյան բյուրոյի հետ և պարզեն վերոհիշյալ հարցի մանրամասնությունները, ինչպես նաև այդ հարցից բխելիք գործնական հնարավորությունները: Հ. Յ. Դ. բյուրոյի անդամները մեկնեցին Թիֆլիս՝ ունենալով իրենց հետ բոլշևիկ – քեմալական համաձայնագրի պատճենը»: Այնուհետև Ս. Վրացյանը պատմում է Կովկասյան բյուրոյի քարտուղար Հ. Նազարեթյանի հետ իրենց հանդիպման մասին: Նշում է, որ վերջինս չի հերքել բոլշևիկ- քեմալական համաձայնության փաստը: Հ. Հ. Դ. բյուրոյի անդամները նաև փորձել են բոլշևիկյան և դաշնակցություն կուսակցությունների միջև համագործակցության մասին խոսք տանել, որին Հ. Նազարեթյանը հեգնանքով պատասխանել է. «Ինչ հասկացողություն, հարկավոր է արագացնել խորհրդային իշխանության տարածումը նաև Կովկասի վրա»: Ս. Վրացյանն այդ հանդիպման մասին իրենց վերաբերմունքն ամփոփում է այսպես. «Հ. Յ. Դ. բյուրոյի ներկայացուցիչները հեռացան այն համոզումով, որ եթե բոլշևիկ- քեմալական բարեկամության շահերը պահանջեն, Հայաստանը կը զոհաբերվի յանուն բոլշևիկների արևելյան քաղա-

քականության»[41]: Ահա այս հանդիպումից հետո, երբ պարզվում է, որ բոլշևիկների հետ հասկացողության եզրեր գտնելու հնարավորություն չկա, Հայաստանի կառավարությունը չի փորձում բանակցություններ սկսել քեմալականների հետ: Այստեղ հարկ է նշել, որ քեմալականները 1919թ. վերջերին Հայաստանի կառավարությանը առաջարկում են անմիջական բանակցություններ սկսել: 1919թ. դեկտեմբերի 14-ին Գևորգ Ե կաթողիկոսին հղած նամակում Խորեն եպիսկոպոսը, անդրադառնալով այդ հարցին, գրում է. «Վերջերս եղել են պաշտոնական առաջարկներ տաճիկներից, որոնք խոստանում են որոշ զիջումներ անել, եթե անմիջապես սկսվեն բանակցությունները մեզ հետ: Կառավարությունը գտնում է, որ հնարավոր է բանակցել, խոսել և իմանալ, թե ինչ զիջումներ են անում տաճիկները»[42]: Փաստորեն բոլշևիկների հետ հարաբերություններ հաստատելուց առաջ քեմալականները փորձել են ուղիղ բանակցություններ սկսել Հայաստանի հետ: Ժամանակագրական առումով հիմնավոր է այս թեզը, որովհետև քեմալականները բոլշևիկների հետ հարաբերվել սկսել են 1920թ. հունվարին: Խորեն եպիսկոպոսի հավաստմամբ քեմալականները Հայաստանին բանակցություններ սկսելու «պաշտոնական առաջարկներ» են արել 1919թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Հետաքրքիր է, որ կառավարությունը գտել է, որ հնարավոր է բանակցել, բայց և այնպես նման բան տեղի չի ունեցել: Ժամանակի քաղաքական գործիչներն իրենց գրություններում շրջանցել են այս փաստը: Հանգամանքն այս ինքնին հուշում է, որ նրանք հետին թվով, թերևս, հասկացել են, որ եթե 1919թ. դեկտեմբերին Հայաստանը ընդառաջ գնար քեմալականների «պաշտոնական առաջարկներին» ու բանակցություններ սկսեր նրանց հետ, հնարավոր էր այդ քայլով բացառել բոլշևիկների հետ քեմալականների հետագա մերձեցումը: Այս թեզն, անշուշտ, վիճահարույց է, բայց մի բան փաստ է, որ քեմալականների ծանր պահին, իսկ դա հենց 1919 թվականն էր, Հայաստանի կառավարությունը, հույսը դրած Փարիզի վեհաժողովի վրա, փորձ անգամ չարեց լսելու, թե նրանք ինչ են առաջարկում: Նաև հավելյալ փաստերի ու բացատրությունների անհրաժեշտության կարոտ չէ այն հանգամանքը, որ Հայաստանի նման դիրքորոշումը զգալի, եթե չասենք վճռորոշ դեր խաղաց քեմալա-բոլշևիկյան դաշինքի ստեղծման գործում: Ինչպես միշտ, հայ քաղաքական գործիչները չէին կարողանում թվացյալ կամ անցողիկ բարենպաստության հակառակ երեսը տեսնել և արդյունքում հանդես էին գալիս անբարենպաստ փաստն արձանագրողի դերում: Ահա հերթականը: 1920թ. հունվարին Հ. Նազարեթյանի հետ Թիֆլիսում կայացած հանդիպումից հետո նրանք արձանագրեցին, որ

[41] *Ս. Վրացյան,* Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 382:
[42] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 205, թ. 7:

բոլշևիկ-քեմալական դաշինքը արդեն կատարված փաստ է: Ու նաև այդ փաստից հետևեցին, որ եթե «բոլշևիկ- քեմալական բարեկամության շահերը պահանջեն, ապա նրանք Հայաստանը կզոհաբերեն»: Ու ելնելով այս իրողությունից՝ Հայաստանի կառավարությունը որոշեց պայքարել այդ դաշինքի դեմ: Գիտեին, որ դա Հայաստանի ուժից վեր գործ է, բայց մտան այդ բեռի տակ, որովհետև կար մեծ դաշնակցի խաբկանքը, որն իրենք հորինել ու քաղաքական առումով գերի էին դարձել իրենց գայթակղությանը կամ հարմարեցմանը: Այսպիսին էր պատկերը, որովհետև Հայաստանի կառավարությունը ոչ թե կառավարում ու թելադրում էր, այլ ակամայից դարձել էր մեծ իրադարձությունների գերին: Կառավարության և «Դաշնակցություն» կուսակցության առանձին անդամներ գիտակցում էին, որ դա սխալ ճանապարհ է, բայց ոչինչ չէին կարողանում անել մեծ հայրենիքը վերագտնելու համընդհանուր հայրենասիրական սպասումի մթնոլորտում:

Այդ մթնոլորտի ստեղծման հեղինակն ու տոն տվողը Փարիզում գործող ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուպար փաշան էր՝ իր գաղութահայ լեզվամտածողությամբ ու գործելակերպով: Երկրի ներսում այդ ուժը արևմտահայությունն էր, որն իր 1919թ. փետրվարյան համագումարում Հայաստանը հռչակեց միացյալ, իսկ կառավարությունը 1919թ. մայիսի 28-ին այն դրեց պետական քաղաքականության հիմքում: Վստահաբար կարելի է ասել, որ կառավարությունը Հայաստանում ձևական մարմին էր: Այն պատճառով, որ նրա կոչումն էր ազգային իղձերի ու ձգտումների հարմարեցումը պետական քաղաքականությանը: Այսինքն՝ պետությունը զանց առնելով աշխարհաքաղաքական իրողությունները, քաղաքականությունն իջեցրել էր ազգային չափումների մակարդակին: Այս հարցում վճռորոշ դեր խաղաց նաև միջպետական շրջանի քաղաքական ավանդույթն ու գործելակերպը: Սրանք էին այն հիմնական պատճառները, որոնք կառավարությանը թույլ չտվեցին 1919-1920թթ. քեմալականների հետ բանակցությունների մեջ մտնել կամ գոնե նման փորձ կատարել: Ահա թե այդ մասին ինչ է գրում ժամանակի երևելի քաղաքական դեմքերից մեկը՝ Ա. Ջամալյանը. «Ես գտնում եմ, որ այն ժամանակվա պայմաններում մեծ հանցանք կլիներ Թուրքիայի հետ համաձայնության փորձ կատարելը, որովհետև բոլոր քաղաքական կուսակցություններն ու խմբակցությունները, ազգային բոլոր դիվանագետները, կոչված ու անկոչ հայրենիք փրկողները – թե երկրի ներսը և թե մանավանդ երկրից դուրս – բոլորն իբրև մի մարդ կընդունանային, կը քարկոծեին՝ միաբերան դավաճան կահայտարարեին այդպիսի կառավարության»[43]: Ա. Ջամալյանը տիրող իրականությանը համարժեք է ներկա-

[43] *Ա. Ջամալյան,* Հ. Քաջազնունին և Հ. Հ. դաշնակցությունը, Հայրենիք, 1924, թ. 5, էջ 42:

յացնում իրերի վիճակը: Բայց նա մոռանում է, որ իրենք էին ժողովրդին տրամադրել, որ շուտով «դաշնակից մեծ տերությունները լուծելու են հայկական հարցը»: «Միացյալն ու անկախը» Հայաստանի կառավարությունն էր հռչակել ու դրել քաղաքական շրջանառության մեջ: Այսինքն՝ ինչպես կառավարությունը տրամադրել էր, այնպես էլ ժողովուրդը տրամադրվել էր: Իսկ ինչ վերաբերում է ինքնարդարացման այն փաստարկին, որ «ժողովուրդը մեկ մարդու պես կքարկոծեր նման կառավարությունը», ապա այն հիմնավորապես սնանկ է ու իրականությանը չհամապատասխանող: Հայ ժողովուրդը երբեք չի քարկոծել սեփական կառավարությանը: Սեփական թերացումներն ու բացթողումները ժողովրդի հոգեբանությամբ բացատրելը նոր երևույթ չէ հայ քաղաքական գործիչների համար: Այդ խաղաքարտը հատկապես վարպետորեն է օգտագործվում հայ-թուրքական հարաբերությունների հարցում: Այդ պատճառով էլ այս խնդրում հերթական ձախողումը, քաղաքական առումով, մնում է անբացատրելի: Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարներն ինչպես քաղաքականություն իրականացնելիս, այնպես էլ հետագայում, իրենց կատարածն արդարացնող գրություններում բացարձակապես ուշադրության չեն արժանացրել այն հարցը, թե ինչ նկատառումներով բոլշևիկյան կենտրոնը 1920թ. մայիսին չցանկացավ խորհրդայնացնել Հայաստանը: Առավել ևս, որևէ ակնարկ անգամ չկա այս հարցում քեմալականների խաղացած դերի մասին: Այսինքն՝ եթե մայիսյան իրադարձությունները դիտարկեին քաղաքական եզրով, ապա կտեսնեին, որ Հայաստանի խորհրդայնացումն հետաձգվեց այն նկատառումով, որ դեռևս արձանագրված չէր նրա՝ Անտանտի դաշնակիցը լինելու հանգամանքը: Այստեղ նկատի պետք է ունենալ այն հանգամանքը, որ բոլշևիկները ազատագրում էին իմպերիալիզմի դեմ պայքարող ժողովուրդներին, իսկ Հայաստանը չէր պայքարում «իմպերիալիզմի լծից ազատագրվելու»: Այդպիսին էր բոլշևիկյան շարժման տրամաբանությունը, որի հետ հաշվի չէր նստում կամ չէր հաշտվում Հայաստանի կառավարությունը: Հայաստանի քաղաքական առաջնորդները չէին ցանկանում տեսնել, որ հաղթող պետությունների դաշնակիցը լինելու իրենց ինքնակոչ ու իրականության հետ կապ չունեցող պնդումները Հայաստանը դրել են դժվարին կացության մեջ: Այդ մասին 1920թ. հունիսին Մոսկվայում հայկական պատվիրակությանն ավելի քան պարզ ասում է ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինը: Հայկական պատվիրակության հարցին, թե «ինչն է խանգարում Հայաստանը ևս խորհրդային դարձնելու, եթե իրենք մտադրություն ունեն Տաճկաստանը խորհրդայնացնելու», Չիչերինը պատասխանում է. «Մենք շարժվում ենք դեպի արևելք ու հարավ՝ փոքր ազգությունները աշխարհակալների լծից ազատագրելու նշանաբանով: Եվ եթե այսօր մենք Հայաստանը խորհրդայնացնենք, այդ դեպքում խորհրդային կառավարությունը փոքր ազգությունների աչքում կվարկաբեկվի և չի կարողանա իր ծրագրած նպատակներին հասնել: Նորից պնդում եմ, որ մենք բարեկամ ենք հայ ժողովրդին և այժմ էլ պատրաստ ենք ձեր և տաճիկների միջև իրավարարի դեր կատարել, եթե Հայաստանի կառավարությունը պաշտոնապես դիմի մեր միջնորդությանը»[44]: Չիչերինը կրկնում է Օրջոնիկիձեի այն միտքը, որ առայժմ իրենց ձեռնտու չէ Հայաստանի խորհրդայնացումը: Բայց ի տարբերություն վերջինի, Չիչերինը բացում է խաղաքարտերը և ասում է այն նկատառումները, որոնցից ելնելով բոլշևիկները կառուցում էին իրենց դասակարգային հաշիվները համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում: Արդյո՞ք հայկական պատվիրակությունը խորացել էր Չիչերինի ասածների մեջ և հասկացել խնդրի ողջ բարդությունը: Պատվիրակության անդամ Լ. Զարաֆյանի՝ հունիսի 10-ին կառավարությանը հղած հեռագրից տեղեկացանք, որ Չիչերինի ասածներից պատվիրակությունը հանգել էր այն եզրակացության, թե Ռուսաստանն ընդհանրապես նպատակ չունի Հայաստանը խորհրդայնացնելու: Այլապես պատվիրակության անդամ Լ. Զարաֆյանը պատվիրակության անունից կառավարությանը չէր հորդորի ավելի վճռական լինելու բոլշևիկների դեմ պայքարում և ուշադրություն չդարձնելու Մոսկվայից ստացվող դիմում-բողոքներին: Մայիս-հունիս ամիսներին տարբեր կողմերից Հայաստանի կառավարությանն էին հասցնում, որ բոլշևիկները բարեկամաբար են տրամադրված Հայաստանի հանդեպ:

1920թ. մայիսի 28-ի համարում Վրաստանի ազգային դեմոկրատների օրգան "Грузия" թերթը «Հայաստանը և բոլշևիկները» վերտառությամբ հետևյալ հաղորդագրությունն է տպագրում. «Թայմս» թերթը հաղորդում է, որ Սովետական կառավարությունը ջանում է իր կողմը գրավել «Դաշնակցություն» կուսակցությունը՝ նրան առաջարկելով հետևյալ պայմանները. 1) Հայաստանը ստանում է ինչպես այժմ գոյություն ունեցող կովկասյան Հայաստանն, այնպես էլ Թուրքիայի այն նահանգները, որոնք դաշնակիցները խոստանում են Հայաստանին ծովային ելքով: 2) Սովետական կառավարությունը խոստանում է Հայաստանին ամենայն օգնություն իր իշխանությունը հայկական նահանգներում ամրապնդելու համար և 3) Այդ ամենի դիմաց Սովետական կառավարությունը Հայաստանից պահանջում է, որ նա չունենա ինքնուրույն արտաքին քաղաքականություն և այն հանձնի Սովետական կառավարությանը»[45]: Իրականության հետ որևէ կապ չունեցող նման հոդվածները ևս թողնում էին իրենց հոգեբանական ազդեցությունը Հայաստանի կառավարության և հասարակական կարծիքի վրա: Թերթերը

[44] «Հայրենիք», 1954, թ. 1, էջ 9:
[45] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 217, թ. 126:

տպագրում են հոդվածներ, որոնցում ապացուցում են բոլշևիկ-քեմալական դաշինքի հակաբնական լինելը: «Մշակ» թերթը գրում է. «...թաթարների համար կռվել Անտանտի դեմ նշանակում է կոտորել հայերին: Մուստաֆա փաշան Օտոմանյան Պուրիշկևիչն է, եթե դա հասկանա Մոսկվան, ապա Մուստաֆա փաշան կմնա միայնակ»[46]: Կառավարական շրջանակներում տարածում գտավ այն տեսակետը, որ բոլշևիկյան կենտրոնը բարյացակամ է տրամադրված Հայաստանի հանդեպ: Ինչպես վերը նշվեց՝ նման մտայնության տարածման համար զգալի դեր ունեցավ Մոսկվայում գործող հայկական պատվիրակության անդամ Լ. Զարաֆյանի 1920թ. հունիսի 10-ի հեռագիրը: Նման մթնոլորտի ստեղծմանը նպաստում էր նաև այն հանգամանքը, որ մայիս-հունիս ամիսներին որոշակի սառնություն էր նկատվում բոլշևիկ-քեմալական հարաբերություններում: Դրա հիմնական պատճառը մայիսի կեսերին Գյանջայում սկսված հակասովետական խռովությունն էր, որի իրական հեղինակը Քեմալ փաշան էր: Խռովությունը ղեկավարում էր Էնվերի եղբայր Նուրի փաշան: Կազմակերպելով այս խռովությունը՝ քեմալականները ստիպեցին բոլշևիկյան ղեկավարությանը Հայաստանի և Վրաստանի սահմաններից զորքերը տեղափոխել Գյանջա: Դրանով քեմալականները ստիպեցին բոլշևիկներին ձեռք քաշել մայիսին Հայաստանը խորհրդայնացնելու նախնական պլանից: Այդ մասին Ազգային մեծ ժողովի 1920թ. օգոստոսի 14-ի նիստում Մ. Քեմալը, պատգամավորների հարցապնդմանը պատասխանելիս, ասում է. «Դրա հետ կապված (Գյանջայի խռովության – Կ.Ս.) 11-րդ բանակի հրամանատարությունը դադարեցրեց գործողությունները Հայաստանի և Վրաստանի սահմաններում և բոլոր ուժերը մայիսի 22-ին ուղարկեց հակահեղափոխականների դեմ: Գյանջայի ապստամբությունը ճնշվեց ամբողջապես»: Այնուհետև Մ. Քեմալը յուրօրինակ բացատրություն է տալիս Գյանջայի խռովությանը Նուրի փաշայի մասնակցությանը. «Դուք բոլորդ լավ եք ճանաչում Նուրի փաշային: Նրա հրամանատարության տակ էր գտնվում 2-3 հազարանոց աղրբեջանական զորամիավորումը: Անգլիացիներին ինչ-որ ձևով հաջողվում է խաբել նրան և իր զորքերի հետ միասին օգտագործել սեփական նպատակներով: Նուրի փաշան իր զորքերով միանում է մյուս հակահեղափոխականներին և հանդես է գալիս կարմիր բանակի դեմ»[47]: Քեմալը կեղծում է, որովհետև անգլիացիները Անդրկովկասից հեռացել էին Գյանջայի խռովությունից շատ առաջ: Եվ երկրորդ, հնարավոր չէր, որ Էնվերի եղբայրը ընկներ անգլիացիների ազդեցության տակ, որովհետև նրանք անգլիացիների երդվյալ թշնամիներն էին: Պարզապես Քեմալ փաշան հարկ է համարում անդրադառնալ այդ հարցին և ինչ-որ բացատրություն տալ Գյանջայի խռովությանը, որովհետև բոլշևիկների համար պարզ էր, թե ովքեր և ինչ նպատակով էին կազմակերպել խռովությունը: Այդ քայլով քեմալականները կարմիր բանակն ուղղորդեցին դեպի Ղարաբաղ և Զանգեզուր: Այդ մասին իր ելույթում ասում է Քեմալը՝ նշելով, որ Նուրի փաշան Գյանջան թողնելուց հետո նահանջեց Աղդամ: Աղդամի ճակատամարտում հունիսի 9-ին բոլշևիկյան զորքերը պարտության մատնեցին Նուրի փաշային և շարժվեցին դեպի Ղարաբաղ: 1920թ. հունիսին բոլշևիկների վերաբերմունքը հայերի հանդեպ «դրական» փոփոխություն էր կրել նաև այն պատճառով, որ Գյանջայի խռովության ժամանակ տեղի հայությունն ակտիվորեն պաշտպանում և նպաստում էր բոլշևիկյան զորքերի հաջողությանը: 1920թ. հունիսի 6-ին վրացական «Грузия» թերթը, անդրադառնալով Գյանջայի ապստամբությանը, գրում է. «Սովետական իշխանության դեմ Գյանջայի ապստամբությունը ճնշված է... Քաղաքի թաթարական մասն ամբողջապես ավերված է երեք օր տևած հրետանային կրակով: Բոլշևիկների հաջողությանը նպաստել է հայության դիրքորոշումը, որոնք ակտիվորեն պաշտպանում էին բոլշևիկներին: Սովետական զորքերը տվել են 1500 սպանված: Թաթարներից սպանված են տաս հազար մարդ... Քաղաքի մուսուլման ազգաբնակչությունը անկախ կուսակցական պատկանելիությունից, խոր սգի մեջ է»[48]: Ահա ինչպիսի գնով քեմալականներին հաջողվեց բոլշևիկյան զորքերը քաշել Հայաստանի և Վրաստանի սահմաններից և դրանք ուղղորդել դեպի Գյանջա, այնտեղից էլ դեպի Աղդամ ու Շուշի: Այդ մասին ևս մեծ հպարտությամբ Ազգային մեծ ժողովի պատգամավորներին զեկուցում է Մ. Քեմալը. «Աղդամի իրադարձություններից հետո Շուշիով մտան Գորիս և գրավեցին այդ քաղաքը: Գորիս մտավ կարմիր բանակի 32-րդ դիվիզիան: Դա տեղի ունեցավ հուլիսի 4-ին»[49]: Քեմալն այս փաստը նշում է մեծ գոհունակությամբ: Աղդամի ճակատամարտում պարտություն կրելուց հետո Նուրի փաշան իր զորքերով նահանջում է Պարսկաստան, իսկ այնտեղից հայտնվում է Նախիջևանում: Նախիջևանից նա օգնում է Զանգիբասարի մուսուլմաններին, որոնք երկու տարի չէին ենթարկվում Հայաստանի կառավարությանը: Մայիսյան ապստամբությունը ճնշելուց հետո Հայաստանի կառավարությունը նախաձեռնում է ռազմական գործողություններ Զանգիբասարի ուղղությամբ: Հունիսի 11-ին Զանգիբասարի շրջանի հայկական զորաջոկատի հրամանատար կապիտան Հարությու-

[46] «Մշակ», 1920, 16 մայիսի, N 17:
[47] *Кемаль Ататюрк,* Избранные речи и выступления, Москва 1966, ст. 102.

[48] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 217, թ. 149:
[49] *Кемаль Ататюрк,* նշ. աշխատություն, էջ 103:

նյանցը բանակի հետախուզական բաժնին մանրամասն տեղեկություններ է հայտնում Զանգիբասարի մուսուլմանական խորհրդի զորքերի դասավորության մասին: Հունիսի 18-ին Հայաստանի կառավարությունը վերջնագիր է ներկայացնում Զանգիբասարի մուսուլմանական խորհրդին: Այդ վերջնագրով վեց ժամ է տրվում Հայաստանի իշխանությունն ընդունելու համար: Դրական պատասխան չստանալով՝ հունիսի 19-ին հայկական զորքերը սկսում են ռազմական գործողությունները: Երկու օր տևած կռիվներում հայկական զորքերը գրավում են Զանգիբասարը: Զանգիբասարում տիրող դրության և այն ազատագրելու մասին «Ռազմիկ» թերթը 1920թ. հունիսի 23-ի համարում գրում է. «Հայաստանի Հանրապետության գոյության հենց առաջին օրերից Զանգիբասարի շրջանի մահմեդական ազգաբնակչությունը դիրք բռնեց դեպի մեր անկախությունը: Ենթարկվելով տաճիկ և ադրբեջանցի գործակալների պրովոկացիաներին, նա ամեն անգամ, երբ Հայաստանը դժվար օրեր էր ապրում, առաջ էր բերում խռովություններ՝ հարձակվելով երկաթուղու, զորքի և հարևան հայ գյուղերի վրա: (Հայաստանում – Կ.Ս.) Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչները սերտ կապ էին պահպանում զանգիբասարցիների հետ, դրամ և զենք էին ուղարկում նրանց և միշտ գրգռված էին պահում հայերի դեմ: Այսպիսով, Հայաստանի մայրաքաղաքի քթի տակ 15-ից ավելի թուրք գյուղեր գտնվում էին «անկախ» վիճակի մեջ, չէին ընդունում Հայաստանի իշխանությունը և ձգտում էին Զանգիբասարը միացնել Ադրբեջանին... Նրանց ամբարտավանությունն ու թշնամական վերաբերմունքը դեպի հայերը ուժեղացավ Հայաստանում տեղի ունեցած մայիսյան շարժումների ժամանակ, երբ զանգիբասարցիք հայտնապես օգնում էին խռովարարներին և արգելք էին հանդիսանում Ալեքսանդրապոլ գնացող հանրապետական զորքերին, փչացնելով երկաթգիծն ու կամուրջները:

...Հայաստանի կառավարությունը, սպառելով բոլոր խաղաղ միջոցները, հունիսի 18-ին զանգիբասարցիներին ներկայացրեց վերջնագիր՝ պահանջելով վեց ժամվա ընթացքում ընդունել Հայաստանի իշխանությունը, հանձնել զենքերը, ռազմամթերքը, պարագլուխներին ու տաճիկ սպաներին և տալ պատանդներ: Չստանալով բավարարություն՝ հունիսի 19-ին հանրապետության զորքերը սկսեցին զինվորական գործողությունները ընդդեմ զանգիբասարցիների դեմ, որոնք ցույց տվեցին ուժեղ դիմադրություն: Զանգիբասարցիք ունեին լավ պատրաստված դիրքեր, թնդանոթներ, գնդացիրներ և առատ ռազմամթերք ու կռվում էին տաճիկ սպաների ղեկավարության տակ: Մեր զորքերի հարվածների տակ թշնամին չդիմացավ և դիմեց փախուստի: Հունիսի 20-ին Հայաստանի զորքերը գրավեցին ամբողջ Զանգիբասարը, վերցրին երկու թնդանոթ, չորս գնդացիր, 40.000 փամփուշտ և

բազմաթիվ հրացան: Զանգիբասարցիք փախան դեպի Արալխ, այսպիսով վերջ ունեցավ տաճիկ ադրբեջանական զզվելի պրովոկացիան, որ երկու տարի շարունակվում էր Հայաստանի սրտում»[50]: Զանգիբասարից հետո, զարգացնելով հաջողությունը, հայկական զորքերը հուլիսի 12-ին գրավում են Բեյուք-Վեդին (Վեդիբասար – Կ.Ս.): Հասնելով Նախիջևանի սահմանը, հայկական զորքերը կանգ են առնում: Հուլիսի 16-22-ը ռազմական գործողությունները դադարեցվում են, որովհետև Նախիջևանի մուսուլմանական ազգային խորհուրդը պատգամավորություն էր ուղարկել Երևան՝ հաշտության խնդրանքով[51]: Բանակցությունները նախիջևանցիների հետ վարում է ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանը: Նա բավականին ծանր պայմաններ է առաջ քաշում, որից հետո Նախիջևանի բանագնացները գնում են ազգային խորհրդին զեկուցելու բանակցությունների մասին և այլևս չեն վերադառնում Երևան: Հուլիսի 22-ին հայկական զորամիավորումները վերսկսում են ռազմական գործողությունները և հուլիսի 25-ին գրավում են Շահթախթը: Հայկական զորքերին հաջողվեց մեկ ամսվա ընթացքում ազատագրել Զանգիբասարից մինչև Նախիջևան, ինչը չէր հաջողվում նախորդ երկու տարիներին: Նույն շրջանում հայկական զորքերը հարձակման անցան նաև Սարիղամիշից դեպի Օլթիի ածխահանքերը: Հունիսի 13-ին սկսված հարձակումը նույնպես հաջողությամբ է ավարտվում: Հունիսի 21-ին Կարսի զորքերի ընդհանուր հրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանը ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանին և բանակի հրամանատար գեներալ Ֆ. Նազարբեկյանին հեռագրով հայտնում է, որ երեք ուղղությամբ ձեռնարկված հարձակումն ավարտվել է Կոսորի և Փենյակի գրավմամբ[52]: Այս հաղթանակը ևս ձեռք է բերվում հեշտությամբ: Հայկական կողմը տալիս է հինգ սպանված և շուրջ քսան վիրավոր: Թշնամին, մարտի դաշտում թողնելով երկու թնդանոթ, զգալի քանակությամբ գնդացիրներ, զինամթերք և սննդամթերքի ողջ պաշարները, փախչում է: Հայկական զորքերի կողմից Զանգիբասար-Շարուրի և Օլթիի ուղղությամբ ձեռնարկած հարձակմանը և ունեցած հաջողությանը հետաքրքիր բացատրություն է տվել Մ. Քեմալը. «Օգտվելով կարմիր բանակի հիմնական մասի հեռանալուց, Ադրբեջանում կարմիր ուժերի դեմ սկսված ապստամբությունից և այն բանից, որ մեր գործողությունները, քաղաքական նկատառումներով, դադարեցվել էին, հայկական բանակը հունիսի 19-ին անցավ հարձակման: Մեկ-երկու կալոնա ուղարկվում է Օլթիի սովետի դեմ, իսկ զորքերի մնացած մասը՝ Զանգեզուրի

[50] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 290, ց. 1, գ. 32, թ. 4-5:
[51] *Ս. Վրացյան,* Հայաստանի Հանրապետություն, էջ 418:
[52] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, մ. II, թ. 210:

(պետք է լինի Զանգիբասարի – Կ.Ս.) դեմ»: Այնուհետև Մ. Քեմալի խոսքից տպավորություն է ստացվում, որ նա մեծ բավարարվածությամբ է արձագանքում Հայաստանի կառավարության նախաձեռնած այդ հարձակումներին: Անդրադառնալով այդ հարձակումներին՝ նա կարծեք արդարացնում է դրանք՝ տալով հետևյալ հիմնավորումը. «Բանն այն է, որ ինչպես Օլթին, այնպես էլ Զանգեզուրը, գտնվում են մեր հին սահմանագծերի վրա, որոնք անմիջականորեն սպառնում են Հայաստանի Հանրապետության դիրքերին: Որպեսզի չեզոքացներ այդ վտանգը, նա նախաձեռնում է իր այդ գործողությունները»[53]: Ասում են խոշոր քաղաքական գործիչները օբյեկտիվ են լինում: Արդյոք ա՞յդ պատճառով է, որ Քեմալը նման հիմնավոր ու արդարացնող գնահատական է տալիս Հայաստանի Հանրապետության Օլթիի ու Զանգիբասարի ուղղությամբ ձեռնարկած հարձակումներին: Առաջին հայացքից թվում է, թե այդպես է: Բայց դա միայն թվացյալ է: Պարզապես Մ. Քեմալը չի թաքցնում իր ուրախությունը դեպքերի զարգացման նման ընթացքի համար, որովհետև այն ձեռնտու էր Թուրքիային: Քեմալը պարզ ասում է, որ «քաղաքական նկատառումներով իրենց գործողությունները դադարեցվել էին»: Խոսքն, անշուշտ, վերաբերում էր Հայաստանի վրա Թուրքիայի հարձակմանը, ուստի և խորհրդայնացման հետաձգմանը, որը Քեմալը կրկին կապում է Ադրբեջանում հակախորհրդային խռովության հետ: Նա նշում է, որ դրանից էլ օգտվելով՝ Հայաստանը շունչ քաշեց և նախաձեռնեց հարձակումները Օլթիի և Զանգիբասարի ուղղությամբ: Ստացվում էր, որ Մ. Քեմալը, Անկարայում նստած, ղեկավարում էր Անդրկովկասյան քաղաքական շարժը: Նա կարողանում էր ուղղորդել ինչպես բարեկամների, այնպես էլ թշնամիների գործողությունները: Դա այդպես էր, որովհետև հակառակ պարագայում դժվար թե հայկական զորքերն այդքան հեշտությամբ գրավեին Օլթիի շրջանը: Հատկապես Օլթիի շրջանի հայկական զորքերի դյուրին հաղթանակը խոսում է այն մասին, որ քեմալականները «քաղաքական նկատառումներով» նահանջեցին՝ հայկական կողմի վրա թողնելով հաղթանակի տպավորություն: Դա այդպես է, որովհետև հենց Մ. Քեմալը իր հիշատակված ելույթում ասում է, որ «հայկական զորքերի առաջխաղացման դեմ մենք չնախաձեռնեցինք ուժեղ հարված ու առայժմ չենք նախաձեռնելու»: Սա նշանակում է, որ քեմալականները Օլթիի ուղղությամբ ոչ միայն կարող էին դիմադրել հայկական զորքերին, այլև «ուժեղ հարված» հասցնել: Բայց չարեցին նույնպես քաղաքական նկատառումներով: Այստեղ պետք է նաև նկատի ունենալ, որ 1920թ. հունիսի 6-ին քեմալական կառավարությունը հրաման էր տվել իր Արևելյան բանակին նախապատրաստել ռազմական գործողություններ[54]: Ուստի, Արևելյան բանակը կարող էր կանխել Օլթիի գրավումը: Այդ էր հաստատում նաև գեներալ Դ. Բեկ-Փիրումյանը: Հունիսի 21-ին զինվորական նախարարին հղած զեկուցագրում նա նշում է, որ «համաձայն գերիների հավաստումների՝ տեղական ազգաբնակչության համար երեք ամսից ավելի կազմակերպված էր զինվորական գործի ուսուցում»[55]: Այս ամենը խոսում է այն մասին, որ քեմալականները չդիմադրեցին և թույլ տվեցին, որպեսզի հայկական զորքերը գրավեն Օլթին: Այս հարցում, անշուշտ, որոշակի դեր է ունեցել նաև 1920թ. հունիսի 3-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովին հղած Գ. Չիչերինի նամակը, որով նա նպատակահարմար չէր գտնում Հայաստանի վրա հարձակումը: Նման դիմումներով քեմալականներին դիմում են նաև սովետական այլ ղեկավարներ: 1920թ. օգոստոսի 14-ին Ազգային մեծ ժողովի նիստում անդրադառնալով սովետական կողմից ստացված այդ դիմումներին՝ Մ. Քեմալն ասում է. «Այդ ուղերձներից ամեն դեպքում պարզ էր դառնում, որ սովետական կառավարությունը գտնում է մեր հետագա հարձակումը հայերի դեմ աննպատակահարմար և ոչ ցանկալի: Դրա համար էլ մենք Արևելյան բանակի հրամանատարին ցուցում տվեցինք ձգձգել ռազմական գործողությունները: Սակայն մի քանի օր հետո նոր պաշտոնական հաղորդագրությունից հայտնի դարձավ, որ Կարսով մեզ մոտ է գալիս ռուսական կառավարության պատվիրակությունը: Կապված դրա հետ՝ մենք հրամայեցինք մեր Արևելյան բանակին կանգնեցնել մեր ռազմական գործողությունները, այն նկատառումով, որ վերսկսենք այն ռուսական պատվիրակների հետ անմիջական կապի մեջ մտնելուց հետո: Դա եղել է հունիսի 20-ին: Սրանք են այն պատճառները, որոնցով պայմանավորված մենք դադարեցրինք Արևելյան բանակի հարձակողական գործողությունները»[56]: Կարծում ենք, որ հավելյալ փաստարկների անհրաժեշտություն չկա, որպեսզի ապացուցվի, որ 1920թ. հունիսին Թուրքիայի Արևելյան բանակը պատրաստ էր Հայաստանի վրա հարձակվելու: Ճիշտ է, Մ. Քեմալը Հայաստանի վրա հարձակման հետաձգումը պայմանավորում է սովետական կողմի միջնորդությամբ, բայց նրա ասածներից երևում է, որ այդ ամենը մտնում էր իր պլանների մեջ: Այդ առումով էլ Օլթիի վրա Հայաստանի հարձակումը պատահական զուգադիպություն չէ: Թուրքիային ինչ-որ տեղ անհրաժեշտ էր այդ հարձակումը, որպեսզի հետագայում աղմկեր, որ պատերազմում նախահարձակ կողմը Հայաստանն է: Այդ երկու օրվա ընթացքում ձեռք բերված դյուրին հաղթանակը

[53] *Кемаль Ататюрк*, նշ. աշխ., էջ 103:

[54] *Кемаль Ататюрк*, նշ. աշխ., էջ 99:
[55] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 210:
[56] *Кемаль Ататюрк*, նշ. աշխ., էջ 100:

հայկական կողմին տրամադրում էր այն թյուրատեսությանը, որ պարտված Թուրքիան չի կարող դիմակայել տարածաշրջանի ամենաուժեղ բանակին: Սեփական բանակի մասին այս կարծիքն ամրապնդվեց հատկապես Օլթիի և Զանգիբասարի ռազմական հաջողություններից հետո: Շարունակելով մեր միտքը, թե քեմալականներին ձեռնտու էր Օլթիի գրավումը, նշենք, որ Թուրքիայի կողմից Հայաստանի վրա հարձակման հետաձգումը և հայկական զորքերի կողմից Օլթիի գրավումը ժամանակի առումով համընկնում են: Ավելին, փաստաթուղթ կա, որն ապացուցում է, որ հունիսի 18-ին նախահարձակ են եղել թուրքական զորքերը: Հունիսի 22-ին Օլթին գրաված զորքերի հրամանատար գեներալ Հովսեփյանի՝ կառավարությանը հղած զեկուցագրում կարդում ենք. «Վերջին շրջանում միանգամայն ակնհայտ է դարձել, որ թուրք-քրդական հրոսակախմբերը նպատակ են դրել հարձակվել հանրապետական զորքերի վրա և շարժվել դեպի Հայաստանի խորքերը: Այս ծրագիրն իրագործելու համար Կարաբեքիրի զորքերը հունիսի 18-ին դիմում են նախահարձակման»: Այս փաստը համընկնում է Քեմալի՝ արդեն հիշատակված այն դիտարկմանը, թե ինքը հունիսի 20-ին ցուցում է տվել Արևելյան բանակի հրամանատարությանը՝ ձգձգել ռազմական գործողությունները: Սա նշանակում է, որ ամեն դեպքում Հայաստանի դեմ հարձակման հրամանն Արևելյան բանակի հրամանատարությանը եղել է, իսկ հունիսի 20-ին «հետագա հարձակումն» (Քեմալի խոսքերն են) աննպատակահարմար համարելով՝ հրաման է տրվել դադարեցնել հարձակումը: Ահա թե այդ մասին ինչ է գրում գեներալ Հովսեփյանը. «Հունիսի 20-ի կռիվները վճռական նշանակություն ունեցան: Հակառակորդն սկսեց անվերջ նահանջել և հայկական զորասյուները միայն աննշան ընդհարումներ ունենալով, հունիսի 21-ին միացան իրար ածխահանքերի արևմտյան մասում»[57]: Փաստերի այս համադրությունը ցույց է տալիս, որ թուրքերն առանց կռվի հանձնել են Օլթիի շրջանը: Դրա վկայությունն է նաև, որ հայկական կողմն ունեցել է հինգ սպանված և քսաներկու վիրավոր: Իհարկե, գեներալ Հովսեփյանն իր կողմից հավելում է հետևյալը. «Երջանիկ եմ վկայելու մեր զորքերի սխրագործությունը ընդդեմ թվով գերազանց, լավ մարզված, կարգապահ զորամասերի, որոնց հրամանատարն էր Խալիլ բեյը: Հակառակորդն օժտված էր պատերազմ վարելու բոլոր տեխնիկական միջոցներով: Նրա բոլոր դիրքերը կապված էին միմյանց և թիկունքի հետ հեռախոսով, ունեին բազմաթիվ գնդացիրներ, արագաձիգ թնդանոթներ... Հակառակորդը ստիպված եղավ մեզ թողնել երկու արագաձիգ լեռնային թնդանոթ, չորս մաքսիմ գնդացիր և համբարակային պահեստները (1200 փութ հացահատիկ, 2000 բաժին

[57] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 86, թ. 3:

մսի պահածոներ, 50 փութ պաքսիմատ, 50 փութ թխած հաց, 50 փութ շաքար և բազմաթիվ անասուններ... Նահանջի ճամփին հակառակորդը թողեց բազմաթիվ սպանվածներ և վիրավորներ»[58]: Այդ շրջանում հայկական թերթերը զբաղված էին բանակի անպարտունակության փառքը գովաբանելով: Մայիսյան խռովության ճնշումը, դրանից հետո Զանգիբասարի, Վեղիբասարի, Շարուրի և Օլթիի գրավումը պարարտ հող էր ստեղծել նման մտայնության համար: Եթե այս ամենին գումարենք նաև այն հանգամանքը, որ մոտենում էր Սևրի պայմանագրի ստորագրումը, ապա համազգային խանդավառության պատկերն ամբողջական կդառնա:

Համադրելով բոլոր փաստերը և տարածաշրջանի քաղաքական զարգացումների տրամաբանությունը՝ կարող ենք ասել, որ Սևրի պայմանագիրը ստորագրելուց առաջ այս թվացյալ հաջողությունները և համազգային ոգևորությունը ևս պարտադրված էին Հայաստանին ու մտնում էին նրա թշնամիների հաշիվների մեջ: Նման կարծիքի համար նաև հիմք է տալիս ինչպես հունիսի 21-ի թուրքական Արևելյան բանակի հրամանատար Ք. Կարաբեքիրի՝ հայկական զինված ուժերի հրամանատարությանը հղած գրությունը, այնպես էլ Թուրքիայի արտաքին գործերի կոմիսար Բեքիր Սամի բեյի հունիսի 24-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարին հղած գրությունների տոնայնությունը: Այդ գրություններով նրանք ջանում են ցույց տալ Թուրքիայի խաղաղարար բնույթը և հայկական կողմի ագրեսիվ բովանդակությունը: Ահա թե ինչու էր Մ. Քեմալն արդարացնում Հայաստանի կողմից Օլթիի գրավումը:

Բերված փաստերը ակնհայտորեն ապացուցում են այն, որ Հայաստանի կառավարության քայլերը համընկնում էին թշնամու ծրագրերին: Արդո՞ք պատահական զուգադիպություն էր, որ Թուրքիան հետաձգում է հարձակումը Հայաստանի վրա և ճիշտ նույն օրերին Հայաստանը հարձակվում և առանց դիմադրության գրավում է Օլթիի շրջանը: Քաղաքական այս շղթայի մեջ կարևոր է նաև այն հանգամանքը, որ Հայաստանի կառավարությունը, իմանալով հանդերձ, որ թուրքերն ու բոլշևիկները դաշնակիցներ են, նրանց գործունեությունը չէր դիտում փոխկապակցված: Այդ էլ այն դեպքում, երբ Մոսկվայում Հայաստանի պատվիրակության և Չիչերինի միջև կայացած առաջին հանդիպման ժամանակ վերջինս, առանց դիվանագիտական բառապաշար օգտագործելու, ասում էր, որ «Ձեզ կանչել ենք Թուրքիայի հետ հաշտեցնելու»: Պատվիրակության անդամ Հ. Տերտերյանն այդ մասին իր հուշերում գրում է. «Ձեզ հրավիրել ենք, որպեսզի հաշտեցնենք տաճիկների հետ և որոշ երաշխիքներ ստանանք, որ Հայաստանի կառավարությունը

[58] Նույն տեղում, թ. 4:

մեզ դաշնակից տաճիկների թիկունքից չի հարվածի: Քանի որ ռուս-տաճկական համագործակցությունն այս րոպեիս խորհրդային Ռուսաստանի համար մահու և կենաց խնդիր է, ուստի անհրաժեշտ է այդ խնդիրների վերաբերմամբ ճշտել Հայաստանի կառավարության դիրքը և վերաբերմունքը»[59]: Չիչերինի հետ այս հանդիպումից հետո հայկական պատվիրակությունը կառավարությանը տեղյակ չի պահում այս ամենի մասին: Ավելին, ինչպես նշվել է հունիսի 10-ին՝ պատվիրակությունը կառավարությանը տվել էր ինֆորմացիա, որ տաճիկների մոսկովյան առաքելությունից դժվար թե արդյունք ստացվի: Սրանում է Շանթի պատվիրակության դիվանագիտական անճարակությունը: Բնական է, որ նման ինֆորմացիան, որը որևէ իրական կապ չուներ այդ օրերին Մոսկվայում վարվող ռուս-թուրքական և հայ-ռուսական բանակցությունների հետ, ունեցավ այն արդյունքը, որ Հայաստանի կառավարությունը ձեռնարկեց Օլթիի վրա հարձակումը: Արդյունքում ստացվեց այնպես, որ Հայաստանի կառավարությունն այդ քայլով ոչ միայն նախահարձակի տպավորություն թողեց, այլև հակադրվեց բոլշևիկներին: Քեմալականները Հայաստանի այդ քայլը վարպետորեն օգտագործում էին: 1920թ. հունիսի 23-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը հղած գրությունում Թուրքիայի արտաքին գործերի կոմիսար Բեքիր Սամի բեյը գրում է. «Մի քանի օրից ի վեր Օլթիի իսլամ ժողովրդի հանդեպ ձեր կանոնավոր զորամասերի կողմից շարունակվող պատերազմական գործողությունների մասին մեր արևելյան ճակատի հրամանատար փաշայի կողմից երեք օր առաջ ձեր զինվորական ուժերի հրամանատարությանը ուղարկած բարեկամական ծանուցագիրը պատերազմական գործողություններն անմիջապես դադարեցնելու մասին, մինչև այժմ առանց պատասխանի է մնացել: Եվ ընդհակառակը, երեկվանից Օլթիի վրա հարձակումներն ավելի սաստկացած են: Մեր ազգը ամբողջ ուժով փափագում է բարեկամական հարաբերություններ պահել հայ ցեղի հետ, հայկական շահերը թուրքականի հետ անհամապատասխան չեն: Ընդհակառակը, կարելի է համաձայնեցնել և սերտ դարձնել: Եթե դուք անկողմնակալորեն դատեք, կհուսամ, թե դուք ևս կհաստատեք, որ ձեր բռնած ընթացքը չի համապատասխանում ձեր ազգային իսկական շահերին: Համոզված ենք, որ անգլիացիները մշտապես զբաղված են իրար հետ ապրելու՝ ստիպված երկու հարևան ցեղերը արյունահեղության մղելով: Մենք ձեր կառավարության և ազգի համար բոլորովին վնասակար կգտնենք, որ ձեր ազգը անգլիացիների ձեռքը խաղալիք դառնալով՝ մեր կառավարության դեմ թշնամություն ձեռնարկի: Ձեր պատգամավորությունը Մոսկվայում ռուս սովետական կառավարության հետ բանակցություններ է վարում, մենք էլ սովետական իշխանության հետ քաղաքական հարաբերություններ ձեռնարկած լինելով խաղաղորեն պատերազմին վերջ տալ կաշխատենք միասնաբար, ուստի ձեր հարձակումը բացարձակապես զարմանալի և ցավալի մի երևույթ է»[60]: Տեսնում ենք, թե ինչպես է կատարվածը ներկայացնում Բեքիր Սամի բեյը: Նրա ասածներից ստացվում է, որ Հայաստանը պատերազմ է սկսել Թուրքիայի դեմ, իսկ վերջինս միայն խաղաղության է ձգտում: Բայց զարմանալին այն է, որ Թուրքիայի արտաքին գործերի կոմիսարը Հայաստանից չի պահանջում զորքերը ետ քաշել գրաված տարածքներից: Նա միայն պահանջում է դադարեցնել ռազմական գործողությունները: Այս նոտայից ևս զգացվում է, որ Թուրքիային ձեռնտու էր կամ նա դեմ չէր Հայաստանի հարձակմանը: Այս նոտայի հիմնական նպատակն այն է, որ հիմնավորվի պատերազմում Հայաստանի նախահարձակ կողմ լինելու հանգամանքը: Բեքիր Սամի բեյը մոռանում է, որ դեռևս հունիսի 6-ին իր կառավարությունը ցուցում էր տվել Արևելյան բանակի հրամանատար Ք. Կարաբեքիրին հարձակվելու Հայաստանի վրա: Նաև մոռացել էր, որ դրանից առաջ էլ թուրքական ջոկատներն անընդհատ խախտում էին Հայաստանի սահմանները՝ հարձակվելով նրա այս կամ այն տարածքի վրա: Այդ բանը հաստատող բազում փաստեր կան: 1920թ. մայիսի 26-ին Կարսի նահանգապետի տեղակալ Չալխուշյանը Հայաստանի ներքին գործերի նախարարին հայտնում է. «Երեկ Փենյակից եկել են 60 ձիավորներ, բռնել են Բեկիր բեկին քսան պահակների հետ և տարել են Օլթի:

...Ըստ տեղեկությունների, թուրքերն ուզում են առաջ խաղալ Սարիղամիշի և Սելիմի վրա»[61]: Այդ մասին ասվում է Հայաստանի արտաքին գործերի նախարարության Բեքիր Սամի բեյի հունիսի 24-ի գրության պատասխանում: Պատասխան գրությունը Թուրքիա է ուղարկվում 1920թ. հունիսի 30-ին: Ուշացման պատճառը նաև այն էր, որ կառավարությունը չէր կարողանում ,որոշել, թե ով պետք է ստորագրի այդ գրությունը: Արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանը հրաժարվում էր իր ստորագրությունը դնել միջազգային հանրության կողմից չճանաչված Անգորայի կառավարության արտաքին գործերի կոմիսարին ուղարկվող գրության տակ: Վերջապես որոշվում է, որ Բեքիր Սամիին ուղարկվող պատասխան գրությունն ստորագրի Արտաքին գործերի նախարարության քարտուղար Տեր-Հակոբյանը: Տեսնում ենք, թե քաղաքական ու դիվանագիտական ինչպիսի «նրբանկատություն» է ցուցաբերում Հայաստանի կառավարությունը, որը վկայությունն է այն բանի, որ նրանք չէին գիտակցում, թե ինչպիսի ծանր վիճակում

[59] «Հայրենիք», 1954, N 1, էջ 8:

[60] *Ալ. Խատիսյան,* Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 221-222:

[61] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 204:

է գտնվում իրենց կողմից ղեկավարվող երկիրը և որ քեմալականները լուրջ պետություն էին ստեղծել: Դրա վկայությունը հենց հունիսի 30-ին Թուրքիայի արտաքին գործերի կոմիսարին հղած պատասխանն է: Դրանում ասվում է. «Հայ զորքերի վերջին ռազմական գործողությունները Օլթիի շրջանում նպատակ ունեին ազատելու հայկական հողամասը անիշխանական տարրերից և երբեք ուղղված չէին մահմեդական խաղաղ ազգաբնակչության դեմ: Օլթիի շրջանի վարչությունը այժմ նշանակված է մահմեդականներից: Հայ ազգը ի վաղուց անտի ճիգ է թափում անկեղծորեն մեկդի թողնել մռայլ անցյալը և ստեղծել բարի դրացիական հարաբերություններ Թուրքիայի հետ: Հայաստանի և Թուրքիայի միջև բարի դրացիական փոխհարաբերությունների վերհաստատումը ամբողջովին կախված է թուրք ղեկավարների ընթացքից, որոնք պետք է մի անգամ ընդմիշտ ճանաչեն հայ ազգի իրավունքները ամբողջական Հայաստանի սահմանների վերաբերմամբ և վերջ դնեն Հայաստանի Հանրապետության սահմաններում գործակալների գործունեություններին: Երբ ձեր Մեծ Ազգային համաժողովը Անգորայում հաստատե Տաճկաստանի հայկական վիլայեթներում Հայաստանի անկախության իրավունքը հիշյալ սահմաններում, այն ատեն հայ ազգը կունենա հիմք Թուրքիո և Հայաստանի միջև կանոնավոր փոխհարաբերություններ հաստատելու»[62]: Ընթերցելով այս տողերը՝ կրկին համոզվում ենք, որ մեր քաղաքական թերությունները մեր ազգային շնորհների անմիջական շարունակությունն են: Բացատրենք, թե ինչու է այդպես: Հայաստանի զինված ուժերը խախտել են Թուրքիայի հետ 1919թ. գարնանից հաստատված սահմանը և գրավել են Օլթիի շրջանը: Թուրքիայի կառավարությունը բողոքում է իր պետական սահմանն անցնելու կապակցությամբ և նշում, որ դա պատերազմ է նշանակում ու պահանջում է դադարեցնել ռազմական գործողությունները: Այսինքն՝ հստակ հասկացվում է, թե Թուրքիան ինչ է պահանջում: Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատասխանից ոչինչ չի հասկացվում: Հայաստանը ոչ ընդունում և ոչ էլ հերքում է, որ ինքը պատերազմ է սկսել Թուրքիայի դեմ: Դրա փոխարեն անորոշ պատասխան է տալիս Օլթիի գրավման փաստին. «Ռազմական գործողությունները Օլթիի շրջանում նպատակ ունեին ազատելու հայկական հողամասը անիշխանական տարրերից»: Չի հասկացվում՝ հայկական հողամաս ասելով նկատի ունեին ա՞յն հանգամանքը, որ Օլթիից բանդաներն անընդհատ հարձակվում էին Հայաստանի տարածքների վրա, թե՞ հայկական հողամաս ասելով՝ նկատի ունեին Օլթին, որովհետև գրությունում Հայաստանի և Թուրքիայի միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատումը կապվում էր «Տաճկաստանի հայկական վիլայեթներում Հայաստանի անկախության իրավունքի» ճանաչման հետ: Այսինքն՝ Հայաստանի կառավարության համար պետական սահման գոյություն չուներ, քանի որ Օլթին մտնում էր հայկական վիլայեթների մեջ: Կար կորցրած հայրենիքը վերագտնելու ձգտումը և դրա հիման վրա կառուցվում էր քաղաքականությունը: Այլապես Թուրքիայի արտաքին գործերի կոմիսարին հղած գրությունում նման բաներ չէին գրի: Հայրենիքը վերագտնելու ազգային առավելությունը դառնում էր քաղաքական անհիրատեսություն: Հայրենիքը պետության հետ շփոթելը քաղաքական շփոթ էր առաջացրել պետական գործիչների մոտ: Գլխավորապես այդ պատճառով էլ Հայաստանի կառավարության քաղաքական քայլերը վերջին հաշվով համընկնում էին թշնամու հաշվարկների հետ: Ինչու՞ Օլթին գրավեցին ու կանգնեցին, առավել ևս, որ թուրքերը լուրջ դիմադրություն ցույց չտվեցին: Կանգնեցին ու առաջ չգնացին, որովհետև սպասում էին Սևրի պայմանագրի լույս աշխարհ գալուն: Նույն նպատակով էլ հունիսին Թուրքիան հետաձգեց Հայաստանի վրա հարձակումը: Թուրքիան նույնիսկ հնարավորություն տվեց, որ Հայաստանի զորքերը գրավեն Օլթին: Մենք արդեն տեսանք, թե Օլթիի գրավման մասին Ազգային մեծ ժողովում ինչպիսի գոհունակությամբ էր խոսում Քեմալ փաշան: Հայաստանի կառավարությունը գործում էր շատ դժվարին պայմաններում: Սա փաստ է, բայց փաստ է նաև, որ նա, սպասելով Փարիզի վեհաժողովի աշխատանքների արդյունքին, 1919թ. որդեգրել էր ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն գործելակերպը, որն ավելի էր դժվարացնում վիճակը: Պետական քաղաքականության առումով տրամաբանական կլիներ, որ Օլթիի գրավումից հետո Հայաստանի կառավարությունը կամ շարունակեր ռազմական գործողությունները, կամ էլ քեմալականներին առաջարկեր սկսել բանակցություններ վարել: Առավել ևս, որ Ռուսաստանը նույնպես առաջարկել էր իր միջնորդությունը: Սակայն Հայաստանի կառավարությունը չգնաց ոչ պատերազմի և ոչ էլ խաղաղության ճանապարհով: Նրանք գրավեցին Օլթիի շրջանն ու դադարեցրին առաջխաղացումը:

Օլթիի գրավման մասին խոսելիս պատկերն ամբողջական չի լինի, եթե չնշենք, որ այդ շրջանում Օլթիի հանդեպ հետաքրքրություն էր հանդես բերում նաև Վրաստանը: Բանն այն է, որ հունիսին անգլիացիները Բաքումից հեռանալուց առաջ նախատեսում էին քաղաքը և շրջանը հանձնել Վրաստանին: Ահա վրացական կառավարությունն էլ զորքերի տեղաշարժ էր կատարում Բաքումի մարզի տարածքում, որը Հայաստանի վրա թողել էր այն տպավորությունը, թե Վրաստանը ձգտում է գրավել նաև Օլթին:

Օլթիի վրա հայկական զորքերի հարձակումից երկու օր առաջ՝ 1920թ. հունիսի 17-ին, վարչապետ Հ. Օհանջանյանը հեռագրում է Թիֆլիս՝ Տ. Բեկզադյանին. «Ղարսի նահանգապետ Ղորղանյանը հայտնում է, որ մեր տա-

[62] *Ալ. Խատիսյան,* նշ. աշխ., էջ 222-223:

ռածքով Օլթի են անցնում 100 վրացական զինվորներ 4 գնդացիրով, Օլթիի շրջանը գրավելու համար: Մեր սահմանները խախտելու համար բողոքեցեք Վրաստանի կառավարությանը և պահանջեք, որ անհապաղ զորքերը դուրս բերեն Օլթիի շրջանից»[63]: Հայաստանի զորքերի կողմից Օլթին գրավելուց հետո պարզ է դառնում, որ այդ տեղեկությունները չէին համապատասխանում իրականությանը: Վրացական զորքերը Արդվինից այն կողմ չէին անցել: Դժվար է ասել, թե այդ ինֆորմացիան, որ վրացական զորքերն անցնում են Օլթի, որտեղից էր ստացել Կարսի նահանգապետ Ղորղանյանը: Չի բացառվում, որ այն հենց թուրքերի կողմից տարածված լիներ: 1920թ. օգոստոսի 14-ի Ազգային մեծ ժողովի նիստում Մ. Քեմալն այդ հարցին էլ է անդրադառնում: Խոսելով դաշնակիցների կողմից Բաքումը վրացիներին հանձնելու և այդ կապակցությամբ վրացական զորքերի տեղաշարժերի մասին՝ նա նշում է. «Կա նաև հարցապնդում այն մասին, որ իբր թե վրացիները հյուսիսից մոտեցել են Էրզրումին և հարձակվել նրա վրա: Սակայն վերջին կետը, որ հասել են վրացիները, դա Արդվինն է: Նրանց գործողությունները սահմանափակվել են այն բանով, որ մեր սահմանի այն կողմից դրել են սահմանային ուղեկալներ»: Տեսանելի է, որ թուրքական կողմն է աղմուկ բարձրացրել կամ լուրեր տարածել, թե վրացիները պատրաստվում են գրավել Օլթին ու հարձակվել Էրզրումի վրա: Հայկական կողմն էլ այդ ինֆորմացիան ստանալուց մեկ օր հետո սկսում է հարձակումը, որպեսզի վրացիներից առաջ անցնի: Այս թեզը հավանական է և քաղաքացիություն ստանալու իրավունք ունի, որովհետև դրանով բացատրվում է այն հանգամանքը, թե ինչու հայկական զորքերը բավարարվեցին Օլթիի գրավումով: Այլ պատճառաբանությամբ պատերազմն սկսելն ու Օլթիի շրջանը գրավելուց հետո դադար տալը չի բացատրվում: Առավել ևս, որ Հայաստանի կառավարությունը տեղեկություն ուներ, որ թուրքական զորքերը նախապատրաստում են հարձակվելու Հայաստանի վրա: Նման պայմաններում նախահարձակ լինելն ավելի ձեռնտու էր ռազմական և քաղաքական առումներով, քան սկսելն ու դադար տալը: Հատկապես, եթե նկատի ունենանք, որ ճիշտ է, հունիսի 6-ին Արևելյան բանակի հրամանատարը ցուցում էր ստացել հարձակվել Հայաստանի վրա, բայց նրանց ուժերը դեռևս համախմբված չէին: 1920թ. մայիսի վերջին թուրքական արևելյան ուժերի դասավորությունն ունեցել է ոչ համախմբված պատկեր:

Մայիսի վերջին գեներալ Քիշմիշյանը Թիֆլիսից հայկական բանակի շտաբին հայտնում է հետևյալ տվյալները Թուրքիայի արևելյան մասում գտնվող զորախմբերի մասին. «Տրապիզոնի շրջանում կենտրոնացված է կանոնավոր զորքերի 800 զինվոր... Էրզրումի շրջանում ընթանում է կարևոր

[63] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 211, թ. 169:

նախապատրաստություն և նկատվում է ուժերի կենտրոնացում Բայբուրդի և Մամախաթունի միջև: Հասան կալայում տեղադրված է հետևակ զորքերի երեք բատալիոն Ռեշիտ բեյի հրամանատարությամբ: Օյուզ փաշայի 600 ձիավոր բանդան Հասան կալայում է, այնտեղ են գտնվում նաև 700 չեթեններ:

Ընդհանուր առմամբ ունեն վեց լեռնային և ութ դաշտային թնդանոթներ: Նշված ուժերի նպատակն է «թուրքական հարցի» անբարենպաստ լուծման պարագայում նախաձեռնել ընդհանուր հարձակում Հայաստանի վրա»[64]: Այս և նմանատիպ այլ փաստեր հավաստում են, որ Հայաստանի կառավարությունը քաջատեղյակ էր քեմալականների մտադրություններին: Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ այն խնդրին, որ մի կողմից Հայաստանի կառավարությունը կարծեք թե քաղաքական տեղաշարժերի մեջ նշմարում է, որ քեմալականների դաշինքը բոլշևիկների հետ ուղղված է գոյություն ունեցող Հայաստանի դեմ: Այսինքն՝ նրանք ձգտում էին գրավել Կարսի մարզը, մյուս կողմից էլ Բեքիր Սամի բեյին հունիսի 30-ին հղած պատասխան գրությունում պահանջում էին, որ Անգորայի կառավարությունը ճանաչի Հայաստանի իրավունքները Տաճկահայաստանի վիլայեթների վրա: Քաղաքական առումով սա անբացատրելի գիծ էր, որը Հայաստանի կառավարությունն առաջ էր տանում նաև մոսկովյան բանակցությունների ժամանակ: Արդեն անդրադարձանք, որ Չիչերինի հետ առաջին հանդիպման ժամանակ Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարը Հայաստանի պատվիրակներին հայտնում է, որ իրենք հրավիրվել են տաճիկների հետ հաշտեցնելու նպատակով: Այսինքն՝ կար վերջին հնարավորությունը Ռուսաստանի միջնորդությամբ բանակցություններ սկսելու քեմալականների հետ: Այդ հնարավորությունն օգտագործելու փոխարեն հայկական պատվիրակությունն անտեղի ջանքեր էր թափում Չիչերինին ապացուցելու, որ քեմալականները թյուրիմացության մեջ են գցել բոլշևիկներին և ջանում էին «Մոսկվային ընդունելի դարձնելու տաճկահայ հողամասերի կցումը Հայաստանին»: Չիչերինը տեսնելով, որ կորցրած հայրենիքը վերագտնելու հայկական պատվիրակության հակվածությունն ու մտասևեռումը թույլ չեն տալիս տեսնելու քաղաքական այն դժվարությունը, որի մեջ հայտնվել է Հայաստանը, նշում է հետևյալը. «Դուք՝ հայերդ խոշոր թյուրիմացության մեջ եք, երբ ձեր բոլոր հույսերը դրել եք եվրոպական դրամատիրական պետությունների վրա: Հիշեցեք Ձեր դատի անցյալը: Քանի-քանի անգամներ ձեզ խաբել են այսպես կոչված մեծ պետությունները: Վստահ ենք, որ այս անգամ ևս ձեր դատը պիտի զոհեն իրենց ազգային նեղ շահերի համար»: Նույնիսկ այս սթափեցնող դառը ճշմարտությունը իրատես չի դարձնում Հայաստանի պատվիրակությանը: Նրանք չեն հասկանում, որ

[64] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 184, թ. 44:

մեծ պետություն էր նաև Ռուսաստանը և սկսում են Չիչերինից պահանջել, որ բանվորագյուղացիական Ռուսաստանը պաշտպանի վեց վիլայեթների նկատմամբ հայության պահանջը, որին Չիչերինը ստիպված պատասխանում է. «Ձեր հիշատակարանները վերաբերում են Մեծն Տիգրանի ժամանակաշրջանին, որովհետև կարևորն այն է, որ ներկայիս վերոհիշյալ վիլայեթներում հայություն չկա»[65]: Այս համեմատությունն անում ենք ցույց տալու համար, որ Հայաստանի կառավարությունը արտաքին քաղաքականության մեջ նույն մոտեցումներն էր հանդես բերում բոլոր պետությունների հետ ունեցած հարաբերություններում: Նրանք մոռանում էին, որ Թուրքիայի հետ 1918թ. հունիսին ստորագրված Բաքումի պայմանագրից բացի մինչպետական որևէ այլ պայմանագիր չունեին, իսկ մնացածն ընդամենը սպասումներ էին, որը քաղաքականությանը վիրտուալ բնույթ էր տալիս: Ամբողջապես մոռացվում էր, որ Հայկական հարցի միջազգայնացումից սկսած պատմությունը դարձել էր սպասումների, հուսադրման ու հուսախաբության շարունակական ընթացք: Ցավալիորեն այդ ընթացքը շարունակվում էր 1919-1920 թթ., այս անգամ արդեն պետության միջոցով: Պետությունը դարձել էր մինչպետական շրջանի քաղաքական ավանդույթների գերին և ոչ մի կերպ չէր կարողանում դուրս գալ այդ կապանքներից: ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի պարտականությունների մեջ չէր մտնում այդ դառը պատմական ճշմարտությունը հայկական պատվիրակությանը հիշեցնելը, բայց նա այդ բանն անում էր, որովհետև տեսնում էր, որ հայ դիվանագետներն առասպելն ու իրականությունն իրարից չեն կարողանում տարբերել: Չիչերինից առաջ, դեռևս 1919 թվականին այդ նույն բանը ուրիշներն էլ էին ասել ու միջնորդել, որպեսզի Հայաստանի կառավարությունը բանակցություններ սկսի ու միջպետական հարաբերությունները վերականգնի Թուրքիայի հետ: Արդեն նշեցինք, որ 1919թ. Թուրքիան ինքն է միջնորդավորված և անմիջականորեն դիմել Հայաստանի կառավարությանը բանակցություններ սկսելու առաջարկներով: 1919թ. բարենպաստ էր բոլոր առումներով՝ հայ-թուրքական բանակցությունների և հարաբերություններ հաստատելու համար: 1919 թվականին պարտված Թուրքիան էր պատրաստ ճանաչելու 60 հազար քառակուսի կիլոմետր տարածքով Հայաստանը, բայց Հայաստանի կառավարությունը լսել չէր ուզում այդ մասին: 1920թ. Թուրքիան, դուրս գալով ծանր վիճակից, ընդունեց «Ազգային ուխտը» և հավակնում էր Կարսի մարզին: Չնայած փոփոխված իրավիճակին՝ Հայաստանի կառավարությունը կառչած էր մնացել իր որդեգրած քաղաքականությանը: Դա էր պատճառը, որ նա 1920թ. հունիսին նախաձեռնեց Օլթիի վրա հարձակումը՝ առանց մտածելու, որ դա առիթ է տալու Թուրքիային Բրեստ-Լիտովսկի և Բաքումի պայմանագրերով գծված հայ-թուրքական տարածքային բաժանման մասին խոսելու: Ինչպես հիշում եք, Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը հղած 1920թ. հունիսի 24-ի գրության մեջ Բեքիր Սամի բեյը չէր հիշատակում հայ-թուրքական գոյություն ունեցող պայմանագիրը: Ստանալով հունիսի 30-ի Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատասխան գրությունը և տեսնելով, որ Հայաստանը տրամադրված չէ պատերազմը շարունակելու և Օլթիից առաջ անցնելու՝ արդեն հուլիսի 8-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը հղած գրությունում Բեքիր Սամին հիշեցնում է, որ Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները կառուցված են համաձայն Բաքումի պայմանագրի: Ի տարբերություն հունիսի 24-ի գրության՝ Բեքիր Սամիի հուլիսի 8-ի գրությունը շատ կոշտ և վերջնագրի տոնայնություն էր պարունակում: Պատճառն այն էր, որ թուրքական կառավարությունը տեղեկացավ, որ Հայաստանը ոչ թե պատերազմ է սկսել, այլ Օլթիի մուսուլման ազգաբնակչության խնդրանքով է գրավել այն և նպատակ չունի ռազմական գործողությունները շարունակել: Այդ պատճառով էլ քեմալականների արտաքին գործերի կոմիսարը սկսում է խոսել բոլորովին այլ տոնով: Նա գրում է. «Թե ձեր և թե ձեր զորքերի հրամանատարի պատասխանների մեջ ասված է, որ շարժումները տեղի են ունեցել մուսուլման ազգաբնակչության խնդրանքով և որ այդ ազգաբնակչության դեմ ոչ մի բռնություն և հալածանք գործ չի դրվել, որ Օսմանյան սահմանների դեմ ոչ մի հարձակում չի եղել, որով գոյություն ունեցող հարաբերությունների հիմք են ծառայում Հայկական Հանրապետության պաշտոնապես ճանաչված Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և նրա լրացուցիչը՝ Բաքումի դաշնագիրը, որը լիազորություն ունեցող պատվիրակների կողմից ստորագրված և երկու կառավարությանց կողմից ընդունված և հաստատված է»: Այնուհետև Բեքիր Սամին գրում է բաներ, որոնցից պարզ է դառնում, թե ինչի համար էր քեմալականներին անհրաժեշտ, որ հայկական զորքերը հարձակվեն Օլթիի վրա ու գրավեն այն: Բերում ենք գրության այդ հատվածը. «Այն ժամանակ, երբ սպասվում էր, որ իրավունքի և արդարության սկզբունքների համաձայն և խաղաղ կերպով պիտի լուծվեն Բաքումի դաշնագրի ամբողջական տրամադրություններից ծագող վեճերը, եթե այդպիսիներ կան, հայկական զորամասերի կողմից Օլթիի շրջանի վրա կատարված հարձակումները բացեիբաց խանգարում են բաղձալի բարեկամական և հարևանական հարաբերությունների շարունակմանը և դառնում են միաժամանակ մեր բացարձակ իրավունքի դեմ ոտնձգություն»[66]: Հետաքրքիր է, այդ ե՞րբ և որտե՞ղ էր սպասվում հայ-թուրքական վեճերի լուծումը՝ այն էլ Բաքումի պայմանագրի տրամաբանությամբ: Բեքիր Սամին

[65] «Հայրենիք», 1954, թիվ 1, էջ 10-11:

[66] *Ալ. Խատիսյան*, նշ. աշխ., էջ 223-224:

չի բացում փակագծերը: Բնական է, որ նա սպասվող Սևրի պայմանագիրը նկատի չի ունեցել: Մնում է կռահել, որ նա նկատի ուներ Մոսկվայում վարվող բանակցությունները: Այսինքն՝ նա հասկացնում էր, որ Օլթիի վրա հարձակումը անհնարին է դարձնում Մոսկվայում վարվող հայ-ռուսական բանակցությունները: Վերստին կարդացեք Բեքիր Սամիի վերը նշված մտքերը և ինքներդ կհամոզվեք, որ հայկական զորքերի՝ Օլթիի վրա հարձակումը հարմար զենք էր քեմալականների ձեռքին, որպեսզի Մոսկվային համոզեին, թե այն պահին, երբ դուք ցանկանում եք միջնորդի դեր կատարել և հաշտեցնել Թուրքիային Հայաստանի հետ, վերջինս թիկունքից հարվածում է ձեր դաշնակցին: Առավել ևս, որ այդ մասին հայկական պատվիրակությանն առաջին հանդիպման ժամանակ զգուշացրել էր Գ. Չիչերինը: Նա ասել է, որ քեմալականները «մտահոգված են, որ Հայաստանի կառավարությունը, որպես դաշնակիցների կողմնակից, կարող է հարվածել իր թիկունքից»: Առավել ևս, որ Հայաստանի պատվիրակությունն իր կառավարությանը ոչ միայն տեղյակ չէր պահել այս ամենի մասին, այլև հունիսի 10-ի նամակում ասել էր. «Վճռական եղեք մեր թշնամիների հանդեպ»: Այս հարցում մի ուրիշ փաստ էլ կա, որ հիմնավորում է վերը նշվածը: 1920թ. հունիսի 18-ին՝ այսինքն՝ Օլթիի վրա հարձակվելուց մեկ օր առաջ, Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Մ. Հարությունյանը արտաքին գործերի նախարարությանը հայտնում է իր և Օրջոնիկիձեի միջև տեղի ունեցած հետևյալ զրույցը. «Հայաստանի կառավարությունն իզուր է վախենում տաճիկներից,– ասում է Օրջոնիկիձեն,– նոքա անկարող են հարձակվելու Հայաստանի վրա, ընդհակառակը, տաճիկներն իրենք են վախենում Հայաստանից: Նրանք ընդամենը մեկ շտաբ ունեն Բայազետում, որը հավանորեն հնուց է մնացել: Ասաց, որ ինքը նոր է նամակ ստացել Տաճկաստանից և ճիշտ տեղեկություններ ունի Տաճկաստանի մասին»[67]: Ակնհայտ է, որ Օրջոնիկիձեն սխալ ինֆորմացիա էր տվել թուրքական արևելյան ուժերի մասին: Եվ դա արել էր միտումնավոր, որպեսզի ապակողմնորոշի Հայաստանի կառավարությանը: Բերված փաստերն ապացուցում են, որ Օլթիի վրա հարձակումով Հայաստանի կառավարությունը կատարեց քայլ, որը վարպետորեն օգտագործվեց Հայաստանի դեմ: Խոսքը վերաբերում է Մոսկվայի բանակցությունների ձախողմանը: Այդ մասին Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը հղած հունիսի 24-ի գրության մեջ Բեքիր Սամին ասել էր հետևյալը. «Ձեր պատգամավորությունը Մոսկվայում ռուս-սովետական կառավարության հետ բանակցություններ է վարում: Մենք էլ սովետական իշխանության հետ քաղաքական հարաբերություններ ձեռնարկած լինելով՝ խաղաղորեն պատերազմին վերջ տալու կաշխատենք միասնաբար, ուստի ձեր հարձակումը

[67] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 57, թ. 47:

բացարձակապես զարմանալի և ցավալի երևույթ է»: Օլթիի վրա հայկական զորքերի հարձակումից հետո էր, որ Մ. Քեմալը և Բեքիր Սամին նամակներ հղեցին Մոսկվա՝ Չիչերինին, որոնցում տարբեր տերմինաբանությամբ հասկացնում էին, որ Հայաստանը հարձակվել է Թուրքիայի վրա: Նաև պնդելով, որ հայերի հետ իրենց հարաբերությունները պետք է հաստատվեն Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերի սկզբունքների համաձայն: Նույն շրջանում Մոսկվայում Հայաստանի պատվիրակության դեմ ակտիվ գործողություններ են գործադրում և Չիչերինի դեմ գրոհում են Ադրբեջանի ղեկավարները: Այդ ամենի նպատակն էր մեկուսացնել Հայաստանը, ձախողել Մոսկվայում ընթացող հայ-ռուսական բանակցությունները: Չնայած դժվար է դրանք բանակցություններ համարել, այնուամենայնիվ, Չիչերինն անհույս ջանքեր էր գործադրում չափավորելու քեմալականների և խորհրդային Ադրբեջանի տարածքային պահանջները Հայաստանի դեմ: Դժվար է ասել՝ Չիչերինը ժամանա՞կ էր ձգում, թե՞ իսկապես ջանում էր անպատերազմ մի ելք գտնել Հայաստանի համար: Եթե համեմատության եզրեր անցկացնենք Վրաստանի հետ վարվող ՌՍՖՍՀ-ի բանակցությունների հետ, ապա կտեսնենք, որ այդ պարագայում ապրիլի վերջին սկսվեցին բանակցությունները և մեկ շաբաթ հետո՝ 1920թ. մայիսի 7-ին, ստորագրվեց պայմանագիրը, որով Ռուսաստանը ճանաչում էր Վրաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը: Հայաստանի պատվիրակությունը Երևանից դուրս է գալիս ապրիլի վերջին և մայիսի վերջին հազիվ հասնում է Մոսկվա: Հունիսի սկզբին նոր միայն սկսվում են հանդիպումները Չիչերինի և Կարախանի հետ: Այդ հանդիպումները պարբերական բնույթ չեն ունեցել, և դժվար է դրանք բանակցություններ համարել: Պատվիրակության անդամ Հ. Տերտերյանն է վկայում, որ «բանակցությունները զրույցի բնույթ էին կրում և մեր խոսակցությունների արձանագրությունները չէին կազմվում»: Իրավ է, որ Չիչերինի 1920թ. հունիսի 3-ին քեմալականներին հղած նամակով կանխվեց Թուրքիայի հարձակումը Հայաստանի վրա և Հ. Տերտերյանի վկայությամբ հունիսի վերջին ՌՍՖՍՀ կառավարությունը նախապատրաստում էր Հայաստանի հետ ստորագրվելիք պայմանագրի տեքստը, բայց այդ ամենից Հայաստանը որևէ օգուտ չունեցավ: Հայաստանի համար 1920թ. հունիսյան շրջանը միայն թվացյալ էր հաջող, որովհետև արդյունքում ձախողվեցին մոսկովյան հանդիպումները, և Հայաստանի կառավարությունը ստիպված համաձայնում է Չիչերինի առաջարկությանը՝ բանակցությունները Մոսկվայից Երևան տեղափոխելու:

Արդեն հունիսի 29-ին Չիչերինը հեռագրով հայտնում է Հայաստանի կառավարությանը, որ Հայաստանի Հանրապետությունում լիազոր ներկայացուցիչ է նշանակվել Բ. Լեգրանը, որի խնդիրն է բարիդրացիական հարաբե-

ռություններ հաստատել երկու երկրների միջև: Հեռագրի վերջում Չիչերինը նշում է. «Մենք վստահ ենք մեր ներկայացուցչության բարեհաջող աշխատանքի արդյունքներին, որը բխելու է երկու հանրապետությունների փոխադարձ շահերից: Մենք կարծում ենք բոլորովին նպատակահարմար, որպեսզի Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվող պայմանագրի վերջնական աշխատանքները կայանան Երևանում մեր ներկայացուցչության և Հայաստանի Հանրապետության միջև»[68]: Այս հեռագիրը Երևանում ստանալուց հետո 1920թ. հուլիսի 1-ին Տ. Բեկզադյանը հեռագրում է Շանթին և կառավարության նախագահի անունից պահանջում, որ պատվիրակությունը վերադառնա Հայաստան՝ «կառավարությանը հաշվետվություն տալու և բանակցությունները Երևանում շարունակելու»[69]: Խոսել մոսկովյան բանակցությունների մասին և անտեսել այս գլխավոր փաստերը՝ անկարելի է: Դրանք ցույց են տալիս, որ հունիսի 29-ին բանակցությունները ձախողվել էին, և դա եղել էր ոչ թե «Շանթի անզիջում դիրքորոշման» պատճառով, այլ, ինչպես տեսանք, քեմալականների և Ադրբեջանի ճնշման տակ: Թերևս կարելի է ընդգծել, որ Չիչերինը, չդիմանալով այդ ճնշումներին, ցանկանում էր բանակցությունները և պայմանագրի ստորագրումը տեղափոխել Երևան: Բայց քանի որ անհասկանալի է մնում, թե ինչու պատվիրակությունը չկատարեց կառավարության հրահանգը և չվերադարձավ Հայաստան, պետք է անդրադառնանք այդ պատմությանը: Ինչպես միշտ, այս հարցում ևս Հայաստանի կառավարությունը հանդես է բերում այնպիսի վերաբերմունք, որը հարաբերություններում հստակություն մտցնելու փոխարեն ավելի է բարդացնում այն: Հուլիսի 1-ին կառավարությունը Տ. Բեկզադյանի միջոցով ցուցում է տալիս պատվիրակությանն անմիջապես վերադառնալ Հայաստան: Մեկ օր հետո նա փոխում է մոտեցումը՝ հավանաբար մտածելով, որ սխալ կլինի պատվիրակությանը Մոսկվայից կանչելը: Այդ մասին տեղեկանում ենք Հ. Օհանջանյանի հուլիսի 2-ին Չիչերինին հղած հեռագրից: Այս փաստաթուղթը կարևոր է, որովհետև Հ. Օհանջանյանն անգիտանում է, թե ինչ էր ասել Չիչերինն իր հունիսի 29-ի հեռագրում: «Հայաստանի կառավարությանը Ձեր հունիսի 29-ի հեռագրով տեղյակ է պահվել, որ ընկեր Լեգրանը Ձեր կառավարության կողմից նշանակվել է Հայաստանի Հանրապետությունում լիազոր ներկայացուցիչ: Իմ կառավարությունը սկզբունքորեն միայն կարող է ողջունել երկու երկրների միջև դիվանագիտական ներկայացուցչությունների հաստատումը և փոխանակումը»: Այսպես է պատասխանում Չիչերինի հարցադրմանը Հայաստանի վարչապետը: Նա փաստորեն անտեսում է Չիչերինի հեռագրի գլխավոր այն միտքը, որ Լեգրանը Հայաստան է գործուղվում պայմանագիր ստորագրելու նպատակով: Այս թերըմբռնումից էլ առաջանում է հետագա խառնաշփոթը: Ըստ Չիչերինի հեռագրի հայկական պատվիրակությունը հունիսի 29-ից հետո Մոսկվայում այլևս անելիք չուներ: Չնայած դրան՝ Հայաստանի կառավարությունը հետ կանգնեց պատվիրակության աշխատանքները Մոսկվայում ավարտված համարվելու մտքից և որոշեց խաղալ ժամանակի վրա: Չիչերինին հղած հուլիսի 2-ի հեռագրում Օհանջանյանը խնդրում է ուղիղ հեռախոսակապի հնարավորություն ստեղծել՝ պատվիրակության Մոսկվայում կատարած աշխատանքների զեկույցն ստանալու համար: Պատվիրակությանը Մոսկվայից ետ կանչելու մտքից հրաժարվելուն ամենայն հավանականությամբ նպաստում է հուլիսի 1-ին Երևան ուղարկած հեռագիրը, որում ասված էր, որ «Խորհրդային կառավարությունն ընդունում է մեր պահանջները իրավացի, չի փափագում գոհացում տալ խորհրդային Ադրբեջանի և հայ բոլշևիկների բաղձանքներին, այնուամենայնիվ, վերջիններիս համառ պնդումների ազդեցության տակ պայմանագրի կնքումը դանդաղում է»[70]: Շանթը դեռ միամտություն ուներ կարծելու, որ հնարավոր է Մոսկվայում պայմանագիր ստորագրել: Նա պարզապես չէր ցանկանում ընդունել, որ Մոսկվայում «բանակցություններն» ավարտված են: Ահա Հ. Օհանջանյանն էլ, հենվելով Շանթի հուլիսի 1-ի հեռագրի վրա, անտեսում է հունիսի 29-ի Չիչերինի հեռագրում հայտնված հիմնական միտքը: Չիչերինը պարզ ասել էր. «Նպատակահարմար ենք գտնում, որ Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվելիք դաշնագրի մշակումը կայանա Երևանում»: Այսքանից հետո հույս ունենալ, որ Մոսկվայում հնարավոր է պայմանագիր ստորագրել, մեղմ ասած, անհասկանալի է: Եվ ընդհանրապես, անհասկանալի է հայկական պատվիրակության հետագա գտնվելը Մոսկվայում: Պատվիրակության անդամ Հ. Տերտերյանը, անտեսելով այս փաստերը, 1954թ. «Հայրենիք» ամսագրի մի քանի համարներում տպագրված հուշերում պատմում է հուլիս-օգոստոս ամիսներին Մոսկվայում իրենց հանդիպումների մասին՝ դրանք անվանելով բանակցություններ: Ժամանակ շահելու նպատակով Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ Լ. Կարախանի արած առաջարկությունները նա ներկայացնում է ինչպես Ռուսաստանի կողմից ներկայացված առաջարկություններ: Դեպքերից 34 տարի անց Հ. Տերտերյանը պատմում է բաներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը: Նա բանակցությունների ոչ հաջող ընթացքի համար մեղադրում է պատվիրակության ղեկավար Լ. Շանթին: Պարզվում է, որ ինքն ու պատվիրակության անդամ Լ. Զարաֆյանը համաձայնել են քեմալականների հետ բանակցություններ սկսելու Չիչերինի առաջարկությանը, իսկ քանի որ Շանթը

[68] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 117:
[69] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 219, թ. 303:

[70] *Ս. Վրացյան,* նշ. աշխատություն, էջ 456:

չի համաձայնել՝ ասելով, որ «ինքը կողք կողքի չի նստի մեր ազգի ջարդարարների հետ», ուստի այդ բանակցությունները չեն կայացել: Հ. Տերտերյանը մոռանում է, որ դա ոչ թե Շանթի, այլ կառավարության որդեգրած քաղաքականությունն էր: Կառավարությունը եթե ցանկանար, ապա առանց Ռուսաստանի միջնորդության էլ բանակցություններ կսկսեր Թուրքիայի հետ: Առավել ևս, որ նման առաջարկություն մինչև բոլշևիկների հետ մերձենալն արել էին քեմալականները՝ դեռևս 1919թ. վերջերին: Այնպես որ, կառավարության որդեգրած քաղաքականության համար մեղադրել Շանթին կոռեկտ չէ: Հ. Տերտերյանը երևույթի խորքը չի կարողացել տեսնել: Եթե ունենար այդ կարողությունը, ապա կտեսներ, որ բոլշևիկները պարզապես ժամանակ էին վատնում հայկական պատվիրակության հետ և «Հայաստանի Հանրապետությունը և խորհրդային Ռուսաստանի բանակցությունները» վերնագրված իր հուշերը շատ հավակնոտ են, որովհետև բանակցություններ որպես այդպիսիք չեն եղել: Եղել են հանդիպումներ, զրույցներ ու մտքերի փոխանակություն: Գործից դուրս, կեսգիշերային ժամերին հրավիրել են հայկական պատվիրակությանը կամ նրա այս կամ այն անդամին ու զրույց են ունեցել: Իհարկե, կառավարությանը հղած Շանթի հեռագրերում հանդիպում ենք «արդար դատ», «բաղձանք», «ազգային իղձեր» և այլ բառեր ու բառակապակցություններ, որոնք գեղարվեստի և ոչ դիվանագիտական բնագավառի բառապաշարից են: Բայց չպետք է մոռանանք, որ գեղարվեստական հենքի վրա էր կառուցված կառավարության քաղաքականությունը սկսած 1919 թվականից: Հ. Քաջազնունուն կառավարության նախագահի պաշտոնից ազատելուց, Խ. Կարճիկյանի սպանությունից և Արամ Մանուկյանի մահվանից հետո կառավարությունը որդեգրել էր մինչպետական շրջանի ավանդական քաղաքական մոտեցումները և գործելակերպը: Շանթը գրող էր և քաղաքականության հետ քիչ կապ ուներ: Նրան, նույն Հ. Տերտերյանի առաջարկով, հրավիրել և հանձնարարել էին այդ պատասխանատու գործը, և պետք է նշել, որ նա իր լիազորությունների սահմաններում կատարել է այն: Պատվիրակության ղեկավար չլիներ Լ. Շանթը, լիներ Հ. Տերտերյանը՝ «բանակցությունները» նույն արդյունքն էին ունենալու: Նույն Հ. Տերտերյանի թեթև ձեռքով շրջանառու էր դարձել և հետագայում գրքեր գրվել ու «հիմնավորվել», որ Շանթի գրող լինելու հանգամանքն է ձախողել մոսկովյան բանակցությունները: Հ. Տերտերյանի հուշերի հիման վրա պատմություն հարմարեցրած հեղինակները գտնում են, որ Հայաստանը չէր կորցնի Կարսն ու Արդահանը: Եվ այսպիսի թերատ մտայնության համար հիմք են ծառայել Հ. Տերտերյանի դիտարկումներն ու Շանթի հասցեին ետին թվով արված մեղադրանքները: Պարզվում է, որ Հ. Տերտերյանն ու Լ. Զարաֆյանը Մոսկվայում լուրջ վեճ են ունեցել Շանթի հետ և նրան բացատրել են, որ «դիվանագիտական հարաբերությունների մարզում զգացմունքն անելիք չունի, այլ միայն սառը դատողությունը»: Հետաքրքիր է գիտենալ, որ եթե նման տարաձայնություններ են եղել պատվիրակության անդամների միջև, ապա ինչու ժամանակի գրագրություններում ոչ մի խոսք չկա այդ մասին: Կամ թե ինչու 1920թ. սեպտեմբերին Երևան վերադառնալուց հետո Շանթը մնաց պատվիրակության նախագահ և հոկտեմբերին բանակցություններ էր վարում Լեգրանի հետ: Արխիվային նյութերը մանրակրկիտ ուսումնասիրելու արդյունքում չգտնվեց նաև որևէ զեկուցագիր՝ հղված կառավարությանը կամ խորհրդարանին, որում մեղադրված լինի Լ. Շանթը: Այս ամենը ցույց է տալիս, որ քաղաքական գործիչների համար հին ավանդույթ է թույլ տված սխալները առանձին անհատների վրա բարդելը, որպեսզի ընդհանուր քաղաքականության մասին լուրջ ու հիմնավոր խոսակցություն չծավալվի: Ինչ վերաբերում է Համբարձում Տերտերյանի այն փաստարկին, թե «դիվանագիտությունը զգացմունքի հետ գործ չունի», ապա նման հայտագիրը 1919-20 թվականների համար զարմանք է հարուցում, որովհետև եթե մեր այդ շրջանի դիվանագիտությունից ազգային զգացմունքն էլ հանվի, ապա տակը ընդհանրապես բան չի մնա: Ճշգրտելու համար, թե արդյո՞ք Հ. Տերտերյանը և Լ. Զարաֆյանը նման իրատեսական մոտեցում ունեցել են վարվող քաղաքականության վերաբերյալ, մենք թերթեցինք խորհրդարանի 1919-1920թթ. նիստերի արձանագրությունները, որովհետև երկուսն էլ եղել են խորհրդարանի անդամներ: Նման ելույթներ խորհրդարանում այդ պատգամավորները չեն ունեցել: Այս խնդրի վրա ծանրացանք, որովհետև Հ. Տերտերյանի հարմարեցումները հիմք են դրել իրականության հետ կապ չունեցող այն մտայնությանը, որ եթե Հայաստանը ձեռք բաշեր Եվրոպայից և ապավիներ Ռուսաստանին, ապա պատմությունն այլ ընթացք կունենար: Սա մեր քաղաքական մտքի ու պատմագիտության հին, բայց չհնացած ու մշտական վեճն է՝ որտեղի՞ց կլիներ փրկությունը: Առավելագույնը, որին հայկական պատվիրակությունը կարող էր հասնել Մոսկվայում և ինչ-որ տեղ փրկել դրությունը, դա կարող էր վերաբերել միայն Հայաստանի խորհրդայնացմանը: Ու քանի որ արդեն փաստերով ցույց ենք տվել, որ մայիսին Հայաստանը չխորհրդայնացվեց քեմալականների ցանկությամբ, ապա միայն ցանկանում ենք ավելացնել, որ քեմալականները Հայաստանի այդ քայլից զգուշանում էին նաև 1920թ. հունիսին: Այդ պատճառով էլ նրանք աշխատեցին ու հնարավոր բոլոր ջանքերը գործադրեցին, որպեսզի Սովետական Ռուսաստանը պայմանագիր չկնքի Հայաստանի հետ, որը կարող էր հանգեցնել իրենց համար ոչ ցանկալի արդյունքի: Հայկական պատվիրակության հետ գրեթե բոլոր հանդիպումներում Չիչերինը տեղի-անտեղի նշում էր, որ Ռուսաստանը Հայաստանը

խորհրդայնացնելու նպատակ չունի: Ասել կուզենք, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման խնդիր չէր կարող լինել, որովհետև այդ փուլում քեմալականների ճնշման տակ դրանից ձեռնպահ էր մնում Ռուսաստանը: Այլ հարց է, որ հայ կոմունիստները բանակցությունների մեջ մտնեին դաշնակցության հետ և գային Հայաստանի ընդհանուր շահերից բխող մի եզրակացության: Բայց դա էլ անհնարին էր, որովհետև այդ երկու կուսակցությունների միջև երկխոսություն չէր կարող լինել խորը թշնամանքի պատճառով: Սա, անշուշտ, քննարկման նյութ է, որին մենք կանդրադառնանք հետագայում:

Ելնելով ժամանակաշրջանի քաղաքական տեղաշարժերի ամբողջական տրամաբանությունից՝ կարելի է ասել, որ մայիս-հունիս ամիսներին Հայաստանում խորհրդային իշխանություն չէր կարող հաստատվել, եթե նույնիսկ Հայաստանի կառավարությունը դա ցանկանար: Դրա ապացույցն այն է, որ հունիս ամսին ստեղծվեցին նախապայմաններ, որ Հայաստանի կառավարությունն ստիպված չլինի համաձայնելու խորհրդայնացմանը և գործի ինքնավստահ: Այն պարզ պատճառով, որ հիմքեր ունենային հետագայում նրան մեղադրելու: Այլ հարց է, որ Հ. Օհանջանյանի կառավարությունը չէր տեսնում այդ դավերը և խայծը կուլ էր տալիս: Այդ առումով սխալ էր Չիչերինի հունիսի 29-ի հեռագրից հետո պատվիրակությունը Մոսկվայում թողնելը և որպես դրա տրամաբանական շարունակություն՝ Լեգրանին Հայաստանում ընդունման ձգձգումը: Հանգամանք, որ անտեղի քաշքշուկի և ժամանակի վատնում էր նշանակում: Պարզվում է, որ այս հարցում որոշակի դեր է խաղացել Լ. Կարախանը, որն անտեղի հոգեհարազատության և սպասումի հույսեր է հաղորդում քաղաքական այս բարդ խնդրին: Այդ մասին տեղեկանում ենք 1920թ. հուլիսի 8-ին կառավարությանը հղած Լ. Շանթի հետևյալ հեռագրից. «Ձեր հեռագրից հետո (խոսքը հուլիսի 2-ին Չիչերինին հղած Օհանջանյանի հեռագրի մասին է – Կ.Ս.), մենք եղել ենք Կարախանի մոտ: Նա հաստատում է, որ Լեգրանի ժամանումը հիմք չի ծառայում այստեղ մեր բանակցությունները շարունակելու համար: Եթե մենք այստեղ չգանք համաձայնության, Լեգրանը լիազորություն կստանա անմիջական բանակցություններ վարելու ձեզ հետ: Մենք կրկնում ենք, որ բանակցությունների տեղափոխումը Երևան բարդացնելու է հարցը և անընդհատ ձգձգվելու է պայմանագրի ստորագրումը»: Տեսնում ենք, որ Չիչերինը պնդում է, որ բանակցությունները և պայմանագրի ստորագրումը տեղափոխվեն Երևան, իսկ Կարախանը պատվիրակությանն ասել է հակառակը: Հայաստանի կառավարությունը, տեսնելով հանդերձ, որ մոսկովյան հանդիպումները ձախողվել են և պայմանագրի ստորագրումը հավանականություն չունի պատվիրակությունը թողնում է Մոսկվայում՝ ելնելով Կարախանի մոտեցումներից: Պատվիրակության անդամները չէին կռահել, որ իրենց նման

դիրքորոշումը ևս ժամանակի վատնում է: Առավել ևս, որ Երևան ուղարկած հուլիսի 3-ի հեռագրում Շանթը հավաստել էր, որ Ռուսաստանն Ադրբեջանի ճնշմամբ անընդունելի պահանջներ է դնում Հայաստանի առաջ: Ահա թե դրա հետ կապված ինչ է գրում Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը Հ. Օհանջանյանին հուլիսի 6-ին հղած նամակում. «Տեղեկանալով Մոսկվայից ստացված Շանթի հեռագրին՝ ես հարկ եմ համարում իմ կարծիքը հայտնել այդ մասին: Իմ կարծիքով սովետական իշխանության և ոչ մի առաջարկ ընդունելի չէ: Միակ տեսակետը, որի վրա մենք պետք է կանգնած մնանք, այն է, որ տերիտորիայի խնդրում ոչ մի զիջում չենք կարող անել հօգուտ Ադրբեջանի: Սովետական իշխանությունը, որն Ադրբեջանի շահերն է պաշտպանում, այն էլ այն ծավալով, որը վտանգում է մեր անկախությունը, այլևս մեզ համար վտանգավոր չի կարող լինել ժողովրդի հոգեբանության տեսակետից: Որ Մոսկվան Ադրբեջանի փաստաբանն է, ուրեմն և Թուրքիայի, և գործում է ի վնաս Հայաստանի անկախության՝ հերիք է մեր ժողովրդին զգաստացնելու և նրա մեջ եղած բոլշևիկյան տրամադրությունները հօդս ցնդեցնելու»[71]: Եթե նկատի ունենանք, որ Տ. Բեկզադյանը դիվանագիտության մեջ կենտրոնական դեմքերից էր, և նրա կարծիքը կառավարության համար վճռորոշ նշանակություն ուներ, առավել ևս չի հասկացվում այդքանից հետո պատվիրակությունը Մոսկվայում թողնելու հանգամանքը: Հայ-ռուսական ոչ պաշտոնական հարաբերություններն ավելի լարված բնույթ են ստանում, երբ հուլիսի 5-ին կարմիր զորամիավորումները գրավում են Գորիսը: Փաստորեն, այս իրադարձությունները համընկնում էին ժամանակագրական առումով և ավելի էին բարդացնում գործը: Չիչերինը, տեսնելով, որ Հայաստանի կառավարությունը դժվարանում է կողմնորոշվել, հուլիսի 19-ին մի հեռագիր էլ հղում է Օհանջանյանին և Թիֆլիսում ՌՍՖՍՀ ներկայացուցիչ Կիրովին: Հեռագրում ասվում է հետևյալը. «...Սովետական Ռուսաստանը հանդես է գալիս որպես անշահախնդիր բարեկամ բոլոր ազգությունների աշխատավորությանը: Ռուսական զորքերի կողմից այն տարածքների գրավումը, որոնք պայքարի արդյունքում ստացել են վիճելի տարածքների բնույթ Հայաստանի և Ադրբեջանի միջև, նպատակ է հետապնդում կանխելու արյունալի կոնֆլիկտները: Այն հնարավորություն է տալիս այդ վիճելի տարածքների հարցը հետագայում հանգիստ և անկողմնակալ քննարկելու»: Այնուհետև հեռագրում ասվում է, որ Թուրքիայի հետ հարաբերություններում ևս Ռուսաստանը ջանում է ելք գտնել հայ-թուրքական ճակատագրական թշնամանքից: Հիշեցնում է, որ սովետական կառավարության ջանքերով կանխվեց Թուրքիայի նախատեսվող հարձակումը Հայաստանի

[71] Քաղվածքների ֆոնդ, գ. 89, թ. 5:

վրա: Անդրադառնալով Լեգրանի առաքելությանը՝ Չիչերինը գրում է. «Սովետական Ռուսաստանի լիազոր-ներկայացուցիչ Լեգրանի ժամանումը Երևան կնպաստի պարզելու կուտակված բոլոր թյուրիմացությունները: Սովետական իշխանությունը հուսով է, որ Լեգրանի հետ կարծիքների փոխանակման ընթացքում Հայաստանի կառավարությունը կհամոզվի սովետական կառավարության ընտրած ուղու ճշմարտացիությանը և հնարավոր կհամարի նրա հետ կնքելու խաղաղության ու բարեկամական հարաբերությունների պայմանագիր»[72]: Այս հեռագրով Չիչերինը վերհաստատում է հունիսի 29-ին Հայաստանի կառավարությանը հղած հեռագրի մոտեցումները: Ընթերցողը, բնականաբար, կհարցնի, թե Կիրովն ի՞նչ կապ ուներ Լեգրանի Հայաստան գալու հետ: Չիչերինը պարզապես Հայաստանի կառավարությանը հասկացնում է, որ Կիրովին ընդգրկեք հարաբերությունների կարգավորման գործում: Կիրովը հայամետ գործչի համարում ուներ, և Տ. Բեկզադյանը երբեմն դիմում էր նրա օգնությանը: Այս հարաբերությունները այնքան էին խորացել, որ չգիտես ինչու կառավարությունն զգուշանում էր դրանից: 1920թ. հունիսի 25-ին Օհանջանյանը Բեկզադյանին հեռագրում է. «Կիրովի հետ կապված ընդունեք այնպիսի վարքագիծ, որպեսզի չստացվի տպավորություն, որ նա միաժամանակ համարվում է նաև Հայաստանի ներկայացուցիչը: Կիրովի հետ ձեր հանդիպումներին ու բանակցություններին մի տվեք պաշտոնական բնույթ: Կառավարությունը տեղեկատվություն ունի, որ Կիրովը մտադիր է գործելու նաև որպես ներկայացուցիչ Հայաստանում: Դա անթույլատրելի է»[73]: Ահա թե ինչու է Չիչերինը հեռագիրը հասցեագրել նաև Կիրովին: Ստանալով Չիչերինի հեռագիրը և տեսնելով, որ համառելն անիմաստ է՝ նույն օրը երեկոյան Օհանջանյանը հեռագրով Շանթին հայտնում է հետևյալը. «Ձեր բոլոր հեռագրերը ստացել ենք: Կառավարությունը համաձայն է Ձեր բոլոր առաջարկություններին և կարծիքներին: Հաղորդեք Կարախանին, որ Լեգրանին կընդունենք ոչ որպես դեսպանի, այլ որպես պատվիրակության, որը գալիս է Հայաստանի հետ բանակցություններ վարելու և պայմանագիր կնքելու: Պատգամավորությունը պետք է լինի փոքրաթիվ և այդ կազմով այն կընդունվի այն դեպքում միայն, եթե Ձեր առաքելությունը հաջողություն չունենա և դուք վերադառնաք Երևան: Վերջին շաբաթվա ընթացքում մենք գրավել ենք Զանգիբասարը, Բեյուք-Վեդին, Շարուրը: Նախիջևանը հայտարարել է իր հպատակությունը: Օրերս բացվելու է Ջուլֆայի երկաթուղին: Այժմ մենք մտադրվում ենք ուժերը կենտրոնացնել Զանգեզուրում, որտեղ բոլշևիկները շարունակում են առաջխաղացումը: Ղազախում մենք ետ գրավեցինք հին տարածքը, բայց

[72] Բանբեր Հայաստանի արխիվների, 1967, թիվ 3, էջ 40:
[73] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 211, թ. 176:

ռուսական զորքերի հարձակումները շարունակվում են»[74]: Փաստորեն, Հայաստանի կառավարությունը գտնում է, որ հայկական պատվիրակությունը պետք է շարունակի գործել Մոսկվայում, և միայն նրա ձախողումից հետո բանակցությունները կարող են տեղափոխվել Երևան: Արդեն հուլիսի 21-ին Կիրովը Թիֆլիսում Բեկզադյանին հայտնում է, որ Լեգրանի գլխավորած պատվիրակությունը գտնվում է Աղսթաֆայում: Կիրովը խնդրում է Բեկզադյանին, որ նա ստանա իր կառավարության թույլտվությունը, որպեսզի պատվիրակությունը Վրաստանի տարածքով անցնի Հայաստան: Կիրովը հայտնում է, որ պատվիրակությունը բաղկացած է 14 հոգուց: Չիչերինն ու Կարախանը հաշվի էին առել Հայաստանի կառավարության կարծիքը և նախապես որոշած 45 հոգու փոխարեն Հայաստան էին ուղարկել 14 հոգուց բաղկացած պատվիրակություն: Այսինքն՝ կատարվում էին նաև Հայաստանի կառավարության առաջարկությունները, բայց, միևնույն է, վերջինս չէր շտապում Լեգրանին Հայաստանում ընդունելու: Թիֆլիսից Երևանի հետ հեռախոսակապի խափանման պատճառով Բեկզադյանը Կիրովի միջնորդությունը Օհանջանյանին հայտնում է երեք օր հետո: Բեկզադյանը հայտնում է. «Լեգրանի առաքելությունը երկուշաբթի օրվանից (21 հուլիսի – Կ.Ս.) բաղկացած 14 մարդուց, սպասում են Հայաստան գալու Ձեր թույլտվությանը: Վրաստանն առանց մեր համաձայնության չի թույլ տալիս նրանց մուտքը Թիֆլիս: Երեքշաբթի խոսել եմ Կիրովի հետ: Ասել եմ Ձեր մոտեցումը, որ Լեգրանն իր ուղեկիցներով կարող է գալ Հայաստան միայն որպես պատվիրակություն բանակցություններ վարելու համար, այլ ոչ ներկայացուցչություն (դիվանագիտական – Կ.Ս.), որպիսին նրանք կարող են դառնալ միայն բարեկամական պայմանագիր ստորագրելուց հետո: Կիրովն այստեղ, Լեգրանն Աղսթաֆայից, համաձայնվել են դրա հետ... Կարծում եմ, որ այդ պայմաններով ոչ միայն ընդունելի է, այլև անհրաժեշտ: Խնդրում եմ Ձեր թույլտվությունը նրանց Երևան գալու: Սահակ Գաբրիելյանի հետ զրույցից ինձ պարզ դարձավ, որ դա անհրաժեշտություն է և նրանց հետ Ձեր անձնական բանակցությունները կարող են շատ բան պարզել... Սպասում եմ Ձեր կարգադրությանը»: Կարծեք թե Բեկզադյանը ստեղծված իրադրության պայմանները բացատրում է՝ հասկացնելով նաև, որ անթույլատրելի է ռուսական պատվիրակությանը սպասեցնել տալը Աղսթաֆայում: Չնայած դրան՝ Օհանջանյանը նրան պատասխանում է . «Միաժամանակյա բանակցությունները Մոսկվայում և Երևանում գտնում եմ անհնարին: Եթե սովետական կառավարությունը պնդում է բանակցությունների տեղափոխումը Երևան, ուստի ես պետք է դադարեցնեմ բանակցությունները Մոսկվայում, ետ կանչեմ պատվիրակությունը, լսեմ նրանց զեկույցը, հետո

[74] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, թ. 233:

վերսկսեմ բանակցություններն այստեղ: Եթե նրանք մեզ ինչ-որ արտակարգ բան ունեն հայտնելու կամ դուք կարող եք գնալ Աղսթաֆա կամ նրանցից մեկը կարող է գալ Երևան»: Փաստորեն ,Հ. Օհանջանյանը մնում է նույն կարծիքին: Չնայած Բեկզադյանի միջնորդությանը և խնդրանքին՝ նա չի համաձայնվում, որ Լեգրանի առաքելությունը ժամանի Հայաստան: Ստեղծվել էր բարդ կացություն: Ռուսաստանը պատվիրակությունն ուղարկել էր, իսկ Հայաստանը չէր ընդունում նրան: Ո՞րն էր պատճառը, ինչու՞ Ռուսաստանը պայմանագիր չէր ստորագրում Մոսկվայում և ձգտում էր բանակցությունները տեղափոխել Երևան: Ինչու՞ էր Մոսկվան առանց Երևանի համաձայնության պատվիրակություն ուղարկել: Պարզ երևում է, որ Մոսկվան ցանկանում էր ցույց տալ, որ ինքը ջանում է պայմանագիր ստորագրել Հայաստանի կառավարության հետ, իսկ վերջինս չի համաձայնում: Այլապես Կարախանը հայկական պատվիրակությանը չէր համոզի, որ իրենց մեկնումը Մոսկվայից անհրաժեշտություն չէ: Այդ էլ այն դեպքում, երբ Հայաստանի արտաքին գործերի նախարարը հենց սկզբից ասել է, որ եթե բանակցությունները տեղափոխվում են Երևան, ուստի պետք է հայկական պատվիրակությունը Մոսկվայից վերադառնա: Ստացվում է, որ երկու կողմն էլ աշխատում էին ժամանակ վատնել: Երկուսն էլ սպասում էին Սևրի պայմանագրի ստորագրմանը: Արդյո՞ք ճիշտ էր վարվում Հ. Օհանջանյանը՝ թույլ չտալով ռուսական պատվիրակության մուտքը Հայաստան: Դժվար է այս հարցին պատասխանել, բայց ելնելով Հայաստանի համար ստեղծված բարդ կացությունից, Օհանջանյանը ձևականությունը մեկ կողմ պետք է թողներ և ընդուներ Լեգրանին ու լսեր նրա փաստարկները: Թեկուզ և այն բանի համար, որ Լեգրանը հետագայում հիմք չունենար Հայաստանի կառավարությանը մեղադրելու: Հայաստանի կառավարության նման դիրքորոշումը հասկանալու համար մեջբերենք հուլիսի 26-ին Տ. Բեկզադյանի և Հ. Օհանջանյանի հետևյալ հեռախոսային զրույցի վերջինիս փաստարկները. «Չնայած Կիրովի խոստումներին և Չիչերինի հավաստիացումներին սովետական զորքերի գործողությունները Ղարաբաղում և Զանգեզուրում շարունակվում են: Նաև շարունակվում են հայերի հանդեպ հալածանքներն ինչպես Աղրբեջանում, այնպես էլ Սովետական Ռուսաստանում: Մեր սահմանների վրա սովետական զորքերի, ինչպես նաև հայերի հանդեպ հալածանքների դադարեցումը կարող էին ստեղծել բարենպաստ պայմաններ բանակցություններ վարելու համար»[75]: Տեսանելի է, որ Հայաստանի կառավարությունը Ռուսաստանի հետ երկխոսությանն այլևս չէր հավատում և ինչ-որ տեղ հասկանալի հիասթափություն էր ապրում, որովհետև բոլշևիկները խոսքով ասում էին մի բան, իսկ գործով անում ճիշտ հակառակը: Հիասթափությունը հասկանալի է, որովհետև Ռուսաստանի կողմից Վրաստանի անկախության ճանաչումը և Չիչերինի հավաստիացումները, որ Հայաստանը խորհրդայնացնելու մտայնություն չունեն, Հայաստանում հույսեր է արթնացրել: Պատվիրակություն ուղարկելով Մոսկվա՝ Հայաստանի կառավարությունն ուզում էր հավատալ, որ իրենց տված ինֆորմացիան կշտկի բոլշևիկների նախնական վերաբերմունքը: Արդեն նշել ենք, որ նման լավատեսության տրամադրում էր նաև Մոսկվան: Դա հունիս ամիսն էր, երբ բոլշևիկների և քեմալականների միջև որոշ սառնություն էր մտցրել Գյանջայի խռովությունը: Հունիսի 2-ին Հ. Օհանջանյանին հղած զեկուցագրում Տ. Բեկզադյանը գրում է. «Ամսույս 2-ին միսիայիս շինության մեջ զեկուցում տվեց Վրաստանի հիմնադիր ժողովի անդամ Պ. Ուրուտաձեն, որը Վրաստանի կողմից դաշն էր կապել Սովետական Ռուսաստանի հետ... Սրանով ես կուզեի Ձեր առանձին ուշադրությունը գրավել այն բանի վրա, որ Սովետական Ռուսաստանում գրեթե իսպառ տեղեկություններ չունեն մեր իրականության հոգսերի ու դրության մասին: Նրանք, և մասնավորապես Չիչերինը, շատ տպավորվել են, երբ, ըստ Ուրուտաձեի, իմացել են մեր երկրի և նրա ժողովրդի ծանր վիճակը: Ուրուտաձեի ասելով, նույնիսկ Չիչերինը համաձայնել է, որ խոսք չի կարող լինել Սովետական իշխանության մտցնելու մասին մի երկրի մեջ, ուր այդ իշխանության շնորհիվ ժողովուրդը, մանավանդ կին ու երեխաներ, սովամահ պիտի լինեն: Դրանից պիտի եզրակացնել, որ մեծամասնականները անվերապահ կերպով չեն պնդում ամենուրեք իրենց իշխանությունը մտցնելու, որ նրանք էլ ընդունակ և պատրաստ են տեղական պայմանները հաշվի առնել և հարմարվել նրանց: Հարկավոր է ուրեմն, որ նրանք այդ պայմաններին ծանոթ լինեն, իսկ դրա համար հարկավոր է, որ մենք օրինավոր կերպով կազմակերպված ինֆորմացիա ունենանք թե Մոսկվայում և թե Ռոստովում, որի միջոցով միայն կարող ենք հայտնել մեր տեղեկությունները Մոսկվային... Ուրուտաձեի կարծիքով, շատ բան Մոսկվայում այնպես չի կարգավորվում, ինչպես հարկն է, շնորհիվ անտեղյակ լինելուն, և երբ նրանց բացատրում ես, հասկանում են և փոխում իրենց գործելակերպը»[76]: Դժվար թե Ուրուտաձեն մտածված ապատեղեկատվություն տար՝ մոլորեցնելու և թյուրիմացության մեջ գցելու Հայաստանի կառավարությանը: Նա պատմել է, թե Մոսկվայում Վրաստանի պատվիրակությանն ինչպես են ընդունել և մեկ շաբաթվա բանակցություններից հետո պայմանագիր ստորագրել: Բեկզադյանն էլ փորձել է այն տարածել նաև Հայաստանի վրա՝ մտածելով, որ Մոսկվան ճիշտ տեղեկություններ չունի Հայաստանի մասին: Այս ամենի մեջ միայն կասկած է հարուցում Ուրուտաձեի այն նկատումը, որ իբր Չիչերինը, տեղեկանալով Հայաստանի ծանր

[75] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 270, ց. 1, գ. 219, թ. 253-254:

[76] Բանբեր Հայաստանի արխիվների, 1967, թ. 3, էջ 35-36:

դրության մասին, ասել է, որ այնտեղ «սովետական իշխանություն մտցնելու մասին խոսք չի կարող լինել»: Կամ էլ Ուրուտաձեն այդ բանն ասել է բոլշևիկների խնդրանքով: Քանիցս նշվեց, որ հունիս-հուլիս ամիսներին տարբեր աղբյուրներով նրանք Հայաստանի կառավարությանը հասկացնում էին, որ նպատակ չունեն Հայաստանը խորհրդայնացնելու: Հայաստանի կառավարությունն էլ հունիս-հուլիս ամսին իր գործողությունները կառուցում էր այս ինֆորմացիայից ելնելով: Ու նաև փորձում էին սեպել քեմալա-բոլշևիկյան դաշինքը՝ վերջիններիս համոզելով, որ քեմալականներն ազգայնական իմպերիալիստներ են, և սոցիալիստական ոչինչ չկա նրանց մեջ: Մոսկվայում «Հայաստանի մասին ինֆորմացիայի պակասն» այդպես էր հասկացել Հայաստանի կառավարությունը և գործում էր այդ մտայնությանը համապատասխան: Այսինքն՝ բոլշևիկներին բացատրել, թե ովքեր են քեմալականները և որն է նրանց իրական նպատակը: Այդ գործով էր զբաղված Մոսկվայում գտնվող Հայաստանի պատվիրակությունը: Համենայնդեպս նման տպավորություն են թողնում պատվիրակության անդամ Հ. Տերտերյանի՝ 1954 թվականին «Հայրենիք» ամսագրում տպագրված հուշերը: Ըստ Հ. Տերտերյանի՝ քեմալականների էությունը իրենք Չիչերինին և Կարախանին բացատրել են նրանց հետ առաջին հանդիպումից սկսած: Երբ Չիչերինը հայկական պատվիրակությանը հավաստում է, որ տաճիկների հետ բոլշևիկների համագործակցությունը «հեռափոխական անհրաժեշտություն է», Հայաստանի պատվիրակները նրան պատասխանում են. «Ցավում ենք, որ դուք տաճիկներին այնպես չեք ճանաչում, ինչպես մենք՝ հայերս: Տաճիկները վարպետորեն ստում են և երբեք էլ լուրջ չեն մտածում անգլիացիների և ֆրանսիացիների դեմ ռազմական գործողություններ սկսելու մասին: Այդ պատրվակով տաճիկները խորհրդային Ռուսաստանից կստանան անհրաժեշտ օժանդակությունը և հետո կընթանան ընդդիմության ամենաթույլ գծով: Առաջին հերթին բոլշևիկյան ռազմամթերքով կհարվածեն մեզ՝ հայերիս, հետո կհարձակվեն հույների վրա... Տաճիկները բոլշևիկների օգնությամբ իրենց անմիջական նպատակներին հասնելուց հետո պիտի լքեն Ռուսաստանը և լեզու գտնեն համաձայնական պետությունների հետ»[77]: Գրեթե երեք ամիս շարունակ այս նույն բաներն էին կրկնում հայկական պատվիրակները: Բայց այդ բացատրական աշխատանքները և «ինֆորմացիայի պակասի» լրացումը չխանգարեցին բոլշևիկների և քեմալականների հարաբերությունների հետագա սերտացմանը: Ահա Հայաստանի կառավարությունն էլ զայրացել ու հիասթափվել էր բոլշևիկներից և չէր ցանկանում Լեգրանին ընդունել Երևանում: Նա գտնում էր, որ անիմաստ են բանակցությունները, որովհետև չնայած Հայաստանի կառավարության բազմաթիվ

[77] «Հայրենիք» ամսագիր, 1954, թ. 1, էջ 9:

բողոքներին՝ կարմիր զորքերը շարունակում էին ռազմական գործողությունները Ղարաբաղ – Զանգեզուր գծով: Հունիս-հուլիս ամիսներին Հայաստանի կառավարությանը հղած Չիչերինի բացատրականներն այդ առումով չէին գոհացնում Երևանին: Հայաստանի կառավարությունը գտնում էր, որ չի կարելի ռազմական գործողությունները համատեղել բանակցությունների հետ: Հայաստանի կառավարությունը թերևս դրա իրավունքն ուներ, որովհետև, եթե Ռուսաստանը ցանկանար, ապա երկու ամիսը լրիվ բավարար էր Մոսկվայում պայմանագիր ստորագրելու համար: Այս մասին է հուլիսի 26-ին Տ. Բեկզադյանին հղած Հ. Օհանջանյանի հեռագիրը: Վերջինս կրկնում է, որ Հայաստանի կառավարությունը դեմ չէ բանակցությունները Երևան տեղափոխելուն: Բայց պնդում է, որ Լեգրանին Հայաստանում ընդունելու համար նախ պետք է Շանթի գլխավորած պատվիրակությունը վերադառնա Երևան: Հաջորդ օրը՝ հուլիսի 27-ին, Հ. Օհանջանյանը հետևյալ հեռագիրն է հղում Մոսկվա՝ հայկական պատվիրակության ղեկավար Լ. Շանթին. «Ընդառաջելով Սովետական Ռուսաստանի կառավարության ցանկությանը՝ կառավարությունը (Հայաստանի – Կ.Ս.) համաձայնվել է բանակցությունները Մոսկվայից Հայաստան տեղափոխելուն: Հայաստանում այդ բանակցությունների շարունակությունը Լեգրանի առաքելության հետ կառավարությունը դնում է Ձեր և Ձեր ղեկավարած պատվիրակության մյուս անդամների վրա: Ելնելով դրանից, խնդրում եմ Ձեզ և պատվիրակության մյուս անդամներին շտապ մեկնել Երևան»: Տեսանելի է, որ այժմ էլ Հայաստանի կառավարությունն էր ձգձգում բանակցությունները: Այլապես Երևանում վարվելիք բանակցությունները չէին դրվի Մոսկվայում գտնվող պատվիրակության վրա: Նեղացածությունը Ռուսաստանից և զգացմունքներն ակնհայտ են Հ. Օհանջանյանի գործունեության մեջ: Ակնհայտ է նաև, որ նրա նման վերաբերմունքը Ռուսաստանի հանդեպ պայմանավորված էր «բոլշևիզմ» երևույթով: Հայ քաղաքական ուժերը Ռուսաստանն այնքան էին իրենցը համարում, որ չէին հաշտվում նրա գունափոխման հետ: Այս անհաշտ վերաբերմունքը սկսվել էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ժամանակներից և իր այլազան դրսևորումներով շարունակվում էր: 1920թ. Հայաստանը Ռուսաստանին հասկացնում էր, որ ինքը դեմ չի սոցիալիզմին, միայն թե վերջինս ձեռք քաշի քեմալականների հետ դաշինքից: Ահա այսպիսի ուժից վեր քաղաքական բեռի տակ էր մտել Հ. Օհանջանյանի գլխավորած կառավարությունը: Դաշնակցության պարագլուխները, տասնամյակներ շփվելով ռուս իրականության հետ, այդպես էլ անհաղորդ մնացին այն ճշմարտությանը, որ որոշում կայացնողը Ռուսաստանն էր, և որ իրենք նրանից հուսախաբվելու, նեղանալու կամ ավելին՝ պահանջելու իրավունք չունեին: Փաստորեն, կրկնվում էր 1918թ. պատմությունը, երբ հայ քաղաքական ուժերը, մերժողական վերաբերմունք հանդես բերելով Ռուսաստանի

կողմից ստորագրված Բրեստի պայմանագրի հանդեպ, արդյունքում ստիպված եղան ստորագրելու ավելի ծանր՝ Բաթումի պայմանագիրը: Պատմությունը կրկնվում էր այն առումով, որ ռուս-թուրքական դաշինքի հիմքն իրականում դրված էր 1918թ. մարտին ստորագրված Բրեստ-Լիտովսկի պայմանագրով: Իրավ է, որ առաջին աշխարհամարտում գերմանա-թուրքական խմբավորման պարտությունից հետո Ռուսաստանը հայտարարել էր, որ ինքը չի ճանաչում Բրեստի պայմանագիրը, բայց դա Թուրքիային չէր վերաբերում, որովհետև Թուրքիայի հետ նա տարածքային խնդիրներ չուներ: Չի՞ հայկական պատվիրակության հետ հանդիպումների ժամանակ նշում էր, որ Ռուսաստանը չի ճանաչում Բրեստի պայմանագիրը: Անշուշտ, այդպես էր, բայց դա վերաբերում էր Գերմանիային, որի պարտությունից հետո Ռուսաստանը տեր դարձավ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Գերմանիային անցած տարածքներին: Թուրքիան այդ ամենը լավ հասկանում էր: Դրա վկայությունն է, որ Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը հղած 1920թ. հուլիսի 8-ի գրությունում Բեքիր Սամի բեյը գտնում էր, որ երկու երկրների միջև հարաբերությունները պետք է կարգավորվեն Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերով: Ինչպես տեսանք, Հայաստանի կառավարությունը ձևի ու բովանդակության առումով անլուրջ վերաբերմունք ցուցաբերեց քեմալականների այս լուրջ և իրականանալի հայտին: Դրա փոխարեն Հայաստանի կառավարությունը շատ լուրջ էր ընդունում, որ Արևմուտքը հաղթելու է բոլշևիզմին, և որ վերջինս ժամանակավոր երևույթ է: Հակաբնական էին համարում քեմալականների և բոլշևիկների դաշինքը և անտեղի ժամանակ վատնում վերջիններիս բացատրելով, թե Ռուսաստանի շահը որն է և ինչ է այն պահանջում: Սա հայ քաղաքական մտքի հին, բայց ոչ հնացած սովորությունն է: Հ. Օհանջանյանից, իր ղեկավարած կառավարությունից ղեկարտյան ռացիոնալ մտածելակերպ չէր պահանջվում, որպեսզի հասկանային այն պարզ հանգամանքը, որ Ռուսաստանի բանագնացների հետ այդպես չի կարելի վարվել: Հայաստանի շահը պահանջում էր օր առաջ նրանց ընդունել Երևանում և սկսել բանակցությունները: Գոնե լսելու համար, թե նրանք ինչ են ցանկանում ասել: Ռուս բանագնացներին շաբաթներով վրաց-աղրբեջանական սահմանագլխին տարբեր պատճառաբանություններով պահելը քաղաքական անհեռատեսություն էր: Այդ մասին հուլիսի 20-ին Աղսաֆայից հեռախոսով Տ. Բեկզադյանին հայտնել էր Լեգրանի առաքելության անդամ Սահակ Տեր-Գաբրիելյանը: Տ. Բեկզադյանն այդ հեռախոսազրույցից հետո, ինչպես տեսանք, միջնորդեց և խնդրեց Հ. Օհանջանյանին, որպեսզի վերջինս մի կողմ թողնի ձևականությունը և շտապ ընդունի Լեգրանին: Բայց Հ. Օհանջանյանը համառեց կառավարության որոշման վրա և խնդրի կարգավորումը պայմանավորեց Մոսկվայի

հայկական պատվիրակության վերադարձով: Հարկ է նկատել, որ այս հարցում հայտնի չափով իր մեղքի բաժինն ուներ նաև Մոսկվայի հայկական պատվիրակությունը: Այն առումով, որ նրանք կառավարությանը ժամանակին չհայտնեցին, որ Մոսկվայում բանակցություններ չեն վարվում, այլ տեղի են ունենում հանդիպումներ ու մտքերի փոխանակություն: Հ. Տերտերյանն է վկայում, որ այդ զրույցները նույնիսկ չէին էլ արձանագրվում: Առանց արձանագրություններ կազմելու ինչ լուրջ բանակցությունների մասին կարող էր խոսք լինել: Կառավարությանը հղած հեռագրերում պատվիրակության անդամներն այդ մասին ոչինչ չէին ասում, որը և ստեղծել էր թյուր տպավորություն, թե Մոսկվայում բանակցություններ են ընթանում երկու պետությունների միջև, որոնք կարող են նույնիսկ պայմանագրային ավարտ ունենալ: Ճշմարտությունը կառավարությանը հայտնելու փոխարեն պատվիրակության անդամները գրում էին, թե ձգձգումները կապված են այն բանի հետ, որ իբր սովետական ղեկավարության կարծիքները բաժանվում են Հայաստանի հարցում: Կառավարությունն էլ այս ցանկալի, բայց ոչ իրական տեղեկատվությունը հիմք ընդունելով նման վերաբերմունք է ցույց տալիս Լեգրանի գլխավորած պատվիրակությանը: Պարզ է նաև, որ նման վերաբերմունքը հիմնականում կապված էր «Փարիզից սպասվող լուրերի» հետ: Հուլիսի 24-ի հեռախոսազրույցի ժամանակ, երբ Տ. Բեկզադյանը Հ. Օհանջանյանին միջնորդում և խնդրում էր շտապ համաձայնություն տալ և միջնորդել, որպեսզի Վրաստանի կառավարությունը Լեգրանի պատվիրակությանը թույլ տա Աղսթավայից Վրաստանով անցնելու Հայաստան, Օհանջանյանը նրան մերժելուց հետո հարցնում է. «Ի՞նչ նորություններ կան Փարիզից և Խատիսովից»: Մեզանում կան ուսումնասիրողներ, որոնք ձայնակցում են ժամանակի քաղաքական գործիչների այն պնդումներին, թե չի կարելի կառավարությանը մեղադրել, որովհետև այն ժամանակ ոչ ոք չէր կարող գուշակել, որ «Փարիզյան սպասումը հուսախաբությամբ էր ավարտվելու»: Հատկապես նման մոտեցում ունեցողների համար նշենք, որ 1919թ. Փարիզից Հայաստան վերադառնալիս Հայաստանի պատվիրակության անդամ, ապագա վարչապետ Հ. Օհանջանյանը Վիեննայում հանդիպում է բանաստեղծ Ավ. Իսահակյանին: Զրույցի ժամանակ Օհանջանյանն Իսահակյանին ասում է, որ «Եվրոպայից սպասելիք չպետք է ունենանք»: Դառնալով կառավարության նախագահ՝ Հ. Օհանջանյանը մոռացության էր տվել իր այս իրատես դիտարկումը: Սա հայ կյանքը տնօրինող քաղաքական գործիչներին բնութագրող փաստ է: Հ. Օհանջանյանը չնայած տեսել ու հասկացել էր, որ եվրոպական տերությունները ոչինչ չեն անելու Հայաստանի համար, բայց և այնպես, «չափավոր պահանջների» կողմնակից Ռ. Տեր-Մինասյանի հետ, կառչած էր մնացել որդեգրած քաղաքականությանը: Այս ամենում մեղքի իր բաժինն ուներ նաև հայ քաղաքական կյանքի այն արա-

տավոր երևույթը, որը կոչվում է *վախ ճշմարտության հանդեպ:* Հ. Օհանջանյանն Ավ. Իսահակյանին ընկերական զրույցի ժամանակ կարող էր ասել ճշմարտությունը: Բայց նույնը չէր կարող անել հրապարակավ կամ վարչապետ դառնալուց հետո գործել դրան համապատասխան: Այս անթույլատրելի ու կործանարար երևույթը մեր ողբերգությունների գլխավոր պատճառներից է ու նաև մեր ներքին թշնամին: Անպատասխանատու հայրենասիրական այս դրսևորումը խորը արմատներ ուներ և անպետական շրջանից անցել էր պետական քաղաքականության մեջ և ներսից ախտահարում էր պետական օրինաչափությունները: Դրա տեսանելի դրսևորումն էր Հ. Օհանջանյանի վերաբերմունքը Լեգրանի առաքելության հանդեպ: Ստացվում է, որ Հ. Օհանջանյանը հասկանալով հանդերձ, որ «Եվրոպայից սպասելիք չկա», այնուամենայնիվ սպասում էր նույն Եվրոպայի կողմից Թուրքիայի հետ ստորագրվելիք պայմանագրին: Ես այն կարծիքին չեմ, որ Լեգրանի պատվիրակությանը ժամանակին Երևանում ընդունելու պարագային դրությունը կփոխվեր, բայց, այնուամենայնիվ, Հայաստանի կառավարության դիրքորոշումն անհասկանալի էր: Խնդիրն այն է, որ եթե նույնիսկ բանակցությունները Երևանում որևէ դրական արդյունք չունենային, գոնե չէին խորացնի Սովետական Ռուսաստանի բացասական վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության հանդեպ: Հայաստանի կառավարության բռնած դիրքորոշումը, որը Տ.Բեկզադյանը հայտնել էր Կիրովին, Ռուսաստանին նման հնարավորություն տալիս էր: Հենց դրան էլ ձգտում էին քեմալականները: Այդ մասին Լեգրանն ասում է 1920թ. հուլիսի 29-ին Հ. Օհանջանյանին հղած հեռագրում: «Սովետական Ռուսաստանի կառավարությունը,– ասվում է հեռագրում,– ինձ լիազորել է բանակցություններ վարելու Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ հույս ունենալով, որ իմ ժամանումը Երևան կհանգեցնի բարեկամական հարաբերությունների հաստատմանը երկու հանրապետությունների միջև: Սովետական Ռուսաստանի բարեկամական մտադրությունները հայ ժողովրդի խաղաղ զարգացման և հարևան ժողովուրդների հետ համագործակցության անկեղծ ձգտումն արտահայտված է հուլիսի 20-ի Չիչերինի նոտայում: Վրաստանում Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի կողմից Վրաստանում Հայաստանի ներկայացուցչից ստացած հաղորդագրությունը ցույց է տալիս, որ Սովետական Ռուսաստանի բարեկամական և խաղաղ մտադրությունները չեն ունենում նույն արձագանքը Հայաստանի կառավարության կողմից... Սովետական կառավարությունը գտնում է, որ չպետք է հետաձգել խաղաղ բանակցությունների վերսկսումը Երևանում մինչև Շանթի պատվիրակության վերադարձը Մոսկվայից:

Հայաստանի սահմաններում ստեղծված իրադրության պայմաններում Սովետական Ռուսաստանի հետ բանակցությունների ցանկացած խզում

կարող է հանգեցնել անցանկալի հետևանքների, որի համար պատասխանատվությունն ընկնելու է Հայաստանի կառավարության վրա»[78]: Հայաստանին սպասող վտանգի մասին ավելին ասել, քան ասված էր Լեգրանի այս հեռագրում, հնարավոր չէր: Բայց այն ևս որևէ ազդեցություն չի գործում Հայաստանի կառավարության վրա: Խնդրին անդրադարձած ժամանակի քաղաքական գործիչներից ոչ մեկը հիմնավոր ու փաստարկված պատասխան չի տալիս այն հարցին, թե ինչու՞ Հայաստանի կառավարությունը չհամաձայնվեց 1920թ. հուլիսին Երևանում ընդունել Բ. Լեգրանի ներկայացուցչությանը: Ընդունված միակ տեսակետն այն է, որ Ռուսաստանը պահանջում էր ձեռք քաշել Սևրի պայմանագրից, իսկ Հայաստանի կառավարությունը չէր կարող համաձայնվել նման առաջարկության հետ: Որ Հայաստանի կառավարությունը չէր կարողանում բազմապլան արտաքին քաղաքականություն վարել և մտասևեռված էր Փարիզի վեհաժողովի պայմանագրային ավարտի վրա, փաստ է: Ինչպես տեսանք, նույնիսկ Ալ. Խատիսյանը վկայում է, որ իր գլխավորած կառավարությունը կորցրեց 1919թ. քեմալականների հետ համաձայնության գալու նպաստավոր շրջանը: Փարիզի վեհաժողովի աշխատանքներին մասնակցած հայկական պատվիրակության անդամ Հ. Օհանջանյանն էլ է ընդունել, որ «եվրոպայից սպասելիք չունենք»: Վերջապես, աչքի առաջ էր 1920թ. գարնանը Կիլիկիայում տեղի ունեցած աղետը, երբ ֆրանսիացիները լուռ վկաները դարձան հայության կոտորածին և տեղահանությանը: Կիլիկիայի անցքերն այլևս որևէ պատրանք չպետք է թողնեին: Անգլիական «Մանչեստր գարդիան» թերթը 1920թ. հունիսի 15-ի համարում «Հայաստանի ճակատագիրը» վերտառությամբ հոդվածում անդրադառնում է Կիլիկիայի աղետին՝ նշելով, որ արևմտյան դաշնակիցները հայությանը թողել են բախտի քմահաճույքին: Թերթը փաստերի համադրությամբ ցույց է տալիս, որ Անգլիան ու Ֆրանսիան վարում են թրքամետ քաղաքականություն և որ հայությունը հույս չպետք է դնի նրանց օգնության վրա: Հոդվածում արվում է հետևյալ եզրակացությունը. «Մենք չգիտենք ինչպես է դուր գալիս Հայաստանի ներկա քաղաքականությունը մեր պետական գործիչներին, բայց նրանք պետք է որ մտածեին այն մասին, որ Հայաստանը գտնվում է Մուստաֆա Քեմալի և բոլշևիկների արանքում: Դաշնակիցները, որոնք կարող էին ժամանակին իրենց մոտեցնել այդ ժողովրդին, այժմ թողել են բախտի քմահաճույքին Կիլիկիայում: Ի՞նչ է մնում անել Երևանի հայությանը: Խոսքը չի վերաբերում բոլշևիզմին կամ հակաբոլշևիզմին: Դաշնակիցները նրանց ընտրություն չեն թողել: Նրանք փնտրում են իրենց պաշտպանությունը, որտեղ որ կարող են (խոսքը վերաբերում է Մոսկվայի հայ-ռուսական բանակցություններին – Կ.Ս.): Մենք չգի-

[78] Բանբեր Հայաստանի արխիվների, 1967, թիվ 3, էջ 44-45:

տենք՝ ի՞նչ է մատուցելու Արևելքը մեզ և ռուսներին մոտակա ժամանակներում: Այդ մասին թող մտածեն նրանք, ովքեր ղեկավարում են մեր քաղաքականությունը Պարսկաստանում և Թուրքիայում»[79]: Այնուհետև հոդվածագիրն առաջարկում է պայմանագիր ստորագրել Ռուսաստանի հետ, որը կարող է չափավորել և Թուրքիայից պաշտպանել հին կայսրության փլատակների վրա առաջացած փոքր հանրապետությունների քաղաքացիների կյանքն ու արժանապատվությունը: Այս հոդվածում բացահայտ ասվում է, որ ստեղծված կացությունից դուրս գալու ելքը անդրկովկասյան փոքր հանրապետությունների՝ Խորհրդային Ռուսաստանի հովանու տակ մտնելն է: Այն թարգմանվել է ռուսերեն և տեղ է գտել Հայաստանի արտաքին գործերի նախարարության 1920թ. հուլիսի 20-ի բյուլետենում «Սովետական Ռուսաստանը Հայաստանի պաշտպան» վերնագրով: Սա նշանակում է, որ հոդվածում բերված փաստերը և եզրակացությունն արժանացել են կառավարության ուշադրությանը: Կարելի է ևս փաստեր բերել ապացուցելու, որ Հայաստանի կառավարության համար դեռևս 1919 թվականից տեսանելի էր, որ արևմտյան դաշնակիցները Անդրկովկասում վարում են պրոմուսուլմանական քաղաքականություն: Այդ մասին նշվում էր կառավարության կողմից Փարիզի վեհաժողովին մասնակցող հայկական պատվիրակությանը հղած բազում գրություններում: Այս ամենն ապացուցում է, որ այնքան էլ ճիշտ չէ տարածում գտած այն մտայնությունը, համաձայն որի Հայաստանի կառավարությունն հիմնական հույսը կապում էր Արևմուտքի հետ: Նրանք տեսնում էին, որ արևմտյան պետությունները Հայաստանին չեն օգնելու, բայց նաև այլ ելք չէին տեսնում ստեղծված բարդ իրադրությունից դուրս գալու: Այս հարցում իր հիմնավոր դերակատարությունն ուներ միջազգային ատյանների միջոցով հարցեր լուծելու ավանդական քաղաքականությունը: Նախաձեռնող ջրբաժանը չկայացավ միջպետական ավանդական ու պետական քաղաքականությունների միջև: Հայ քաղաքական կյանքի համար այս մշտահոլով կրկնվող երևույթի վերհանումն է կարևոր: Մնացյալ գործողությունները պտտվում էին այս առանցքի շուրջ և թույլ չէին տալիս, որպեսզի հայ քաղաքական կյանքը պետական օրինաչափություններին համապատասխան կերպարանք ստանա: Տեսանելի էր, որ կարմիր զորքերը շարժվում են Ղարաբաղ – Զանգեզուր – Նախիջևան գծով: Այն կանխելու երկու միջոց կար. կամ դիմադրել ու թույլ չտալ, որ կարմիր զորաջոկատները միանան քեմալականների հետ, կամ էլ օր առաջ Լեգրանին ընդունել և բանակցությունների միջոցով ջանալ կանխել Հայաստանի շրջափակումը: Հայաստանի կառավարությունը ոչ մեկն արեց և ոչ էլ մյուսը: Գարնանը Ղարաբաղ մեկնած էքսպեդիցիոն կորպուսը, որը ինչ-որ չափով կարգավորել էր գործերը և դարձել դրության տերը, բոլշևիկյան զորաջոկատների՝ Ղարաբաղ մտնելուց հետո թողնում է Ղարաբաղը և առանց մարտերի նահանջում է Զանգեզուր: Այս տխուր պատկերի հետևանքները տեսնելով՝ հունիս ամսին Գ. Նժդեհը հետևյալ նամակն է հղում դաշնակցության բյուրոյին. «Տաճկա – ադրբեջանական հրամանատարությունը որոշել է անպայման գրավել Գողթանը, որի համար նա նոր ուժեր է տեղափոխում Օրդուբադ: Ձեզ համար պարզ է, որ Գողթանի տեղահանությամբ թշնամին տեր է դառնում Արաքսի ափից (Կարճևան) մինչև Ջուլ ձգվող լեռնաշղթաների բոլոր կարևոր ռազմական բարձունքներին և կետերին և մշտական կրակի ու տեռորի տակ է պահելու Զանգեզուրի հարավ-արևմուտքը: Ընկերներ, մեկ տարվա տաժանակիր գործունեության արգասիքի ապահովման մտահոգությունը չէ, որ մեզ թելադրում է օգնություն խնդրել: Ոչ, հազար անգամ ոչ: Ընդունեք որպես աքսեոմա, որ առանց Գողթանի Զանգեզուր – Ղարաբաղ լինել չի կարող և որ Գողթանի անկման հետ գերեզման կդրվի և Նախիջևան – Շարուրի վերագրավման հույսը և մեր ջահել հանրապետության համար կստեղծվի մի աննախընթաց սպառնական դրություն... Արագացրեք օգնությունը, վայրկյանը ճակատագրական նշանակություն ունի»[80]: Այս նամակում Նժդեհը Դրոյի անունը չի տալիս, բայց հասկացնում է, որ ինքը չի ընդունում նրա նահանջն այն պատճառաբանությամբ, որ «ժողովուրդը և զորքը չի ցանկանում կռվել ռուս բոլշևիկների հետ»: Նժդեհը նաև հասկացնում է, որ Զանգեզուր-Նախիջևան ստրատեգիական գիծը ռազմական առումով տարանջատել չի կարելի և որ Զանգեզուրը թշնամուն հանձնելուց հետո անհնարին է լինելու Նախիջևանի գրավումը: Հեռանկարի առումով իսկապես անհասկանալի էր, թե ինչու Հայաստանի կառավարությունը ռազմական ուժերն այդ ուղղությամբ կենտրոնացնելու և թույլ չտալու փոխարեն, որ բոլշևիկյան և քեմալական զորքերը միանան, հարձակվեց Օլթիի վրա և Թուրքիայի դեմ տարած հաղթանակի թյուր տպավորություն ստեղծեց: Արդեն նշվեց, որ հունիս-հուլիս ամիսներին ունեցած ռազմական հաջողությունները չափազանցված էին ներկայացվում ու գերագնահատվում էին: Հանգամանք, որը հոգեբանական առումով հետագայում ծանր հետևանքներ ունեցավ: Հայաստանը հաղթանակների բերկրանք էր ապրում այն պահին, երբ բոլշևիկյան զորքերը գրավել էին Զանգեզուրը և շարժվում էին Նախիջևան: Միայն Նժդեհն ընդվզեց Զանգեզուրը թողնելու որոշման դեմ և, չկատարելով Դրոյի հրամանը, ամրացավ Ղափանի հանքերում: Կատարվող իրադարձությունների մեջ զարմանալին այն էր, որ կառավարությունը մի կողմից հրահանգում էր թողնել Զանգեզուրը, մյուս կողմից էլ մերժում էր նույն հարցի շուրջ Լեգրանի հետ բանակցելու պահանջը: Այնպիսի տպա-

[79] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 8, թ. 13-14:

[80] *Կ. Սարդարյան,* Պատմություն և իրականություն, Եր. 1991թ., էջ 37:

վորություն է ստացվում, որ կառավարությունը կողմ էր, որ կարմիր զորքերը գրավեն Զանգեզուր – Նախիջևան տարածքը: Նրանք չէին կռահում, որ դա վերջի սկիզբն էր: Այլապես Օհանջանյանը Չիչերինին հղած հեռագրերում չէր հասկացնի, որ ռուսական զորքերը հարձակվում են Հայաստանի տարածքների վրա, ինչի պատճառով էլ ինքը չի համաձայնում Երևանում ընդունել և բանակցել ռուսական պատվիրակության հետ: Ահա, երբ գրավեցին Ղարաբաղ – Զանգեզուր – Նախիջևան տարածքը և փաստն արձանագրվեց, նույն Օհանջանյանը խորհրդարանի պատգամավորներ Ա. Ջամալյանին և Ա. Բաբալյանին գործուղեց Թիֆլիս՝ Լեգրանի հետ բանակցելու և զինադադարի համաձայնագիր ստորագրելու նպատակով: Այսինքն՝ Հայաստանի կառավարությունը տեղից շարժվեց միայն այն ժամանակ, երբ կանգնեց կատարված փաստի առաջ: Այդ ամենը կատարվում էր մի շրջանում, երբ հայկական զորքերը հուլիսի 16-ին Շարուրը գրավելուց հետո նախապատրաստվում էին գրավել ամբողջ Նախիջևանը: Հուլիսի 19-ին Տ. Բեկզադյանին հղած հեռագրում Հ. Օհանջանյանը նշում է, որ «Նուրի փաշան կռվում էր մեր դեմ Նախիջևանի մարզում, ջարդվեց և փախավ Թուրքիա»[81]: Նշել ենք, որ հուլիսի 25-ին հայկական զորքերը գրավել էին Շահթահթը, և Նախիջևանի գրավումն այլևս կասկած չէր հարուցում: Իրադարձությունները արմատապես փոխվեցին, երբ հուլիսի վերջին Նախիջևանի մատույցներում հայտնվեցին կարմիր զորաջոկատները: Հայաստանի կառավարությունն անմիջապես հրաման տվեց, որ զորքերը ետ քաշվեն Նախիջևանից: Կառավարության այս քայլերի մեջ կարևորը ոչ այնքան անբացատրելի պարտվողականությունն էր, որի դեմ ընդվզում էր միայն Գարեգին Նժդեհը, որքան այն, որ բոլշևիկյան ուժերի առաջ Ղարաբաղից մինչև Նախիջևան նահանջելով, կառավարությունը սեփական բանակին ու նրա ռուսական կողմնորոշում ունեցող հրամանատարությանը ցույց տվեց, որ չի կարելի կամ անկարելի է կռվել կարմիրների դեմ: Հանգամանք, որը բարոյահոգեբանական առումով հետագայում կործանարար ազդեցություն ունեցավ հայկական բանակի վրա: Այս մասին ևս ժամանակին զգուշացնում էր Գ. Նժդեհը: Զանգեզուրը բոլշևիկներին զիջելու համազանգեզուրյան ժողովում (հուլիսի սկիզբ) բանավիճելով Դրոյի հետ, նա զայրացած ասում է. «Հայրենիքը ոչ ոք իրավունք չունի առանց կռվի զիջելու սովետներին, որոնց միացած է Ադրբեջանը: Սուտ են նրանց շռայլած բոլոր խոստումները, սուտ են նրանց ուժի մասին չափազանցված լուրերը: Նրանք մեզ կպարտադրեն ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը, նրանք Զանգեզուրը կմատնեն սովի ու տեռորի, մասսայական կոտորածի:

[81] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, թ. 232:

...Զանգեզուրը, որ ամենեն աննպաստ պայմաններում անգամ միշտ հաղթել է, այսօր երկընտրանքի մեջ է և հուսալքված, շնորհիվ ղեկավարների երերուն ընթացքի... Եթե տատանվենք, նրանք մեզ ու հայ ժողովրդի լավագույն զավակներին կկոտորեն, և մեր արյուն-արցունքով ձեռք բերած հայրենիքը կընկնի ազգուրացների ձեռքը: Այն ժամանակ վայ մեր ժողովրդին»: Տեսնելով, որ ժողովուրդը հակված չէ իրեն պաշտպանելու, Նժդեհն ընդվզում ու հայտարարում է. «Ես վերադառնում եմ իմ հրամանատարական շրջանը և պատրաստ սպասելու եմ նոր եկող ջարդարար թուրքին միացած կարմիր թշնամուն: Զանգեզուրը կսթափվի, բայց այլևս ուշ կլինի»: Նժդեհի դիտարկումներն օրեր հետո իրականություն դարձան: Այդ ժողովից հետո Դրոն իր զորքերով նահանջեց Դարալագյազ, և հուլիսի 5-ին կարմիր զորաջոկատներն առանց որևէ դիմադրության մտան Գորիս և Զանգեզուրի վրայով շարժվեցին դեպի Նախիջևան: Հայաստանի կառավարությունը դեմ չէր Նժդեհի հարցադրումներին: Տարբերությունն այն էր, որ կառավարությունը, ընդունելով հանդերձ այդ փաստարկների իրավացի լինելը, գտնում էր, որ պետք չէ կռվել կարմիր զորքերի դեմ: Դրա վկայությունն այն է, որ Չիչերինին հղած բողոքի հեռագրերում վարչապետ Հ. Օհանջանյանի բերած փաստարկները չէին տարբերվում Գորիսում կայացած ժողովում Նժդեհի՝ վերը նշած մոտեցումներից: 1920թ. հուլիսի 12-ին Չիչերինին հղած բողոքի հեռագրում Օհանջանյանը նշում է. «Երկու տարի շարունակ Ադրբեջանի կառավարությունը ամեն միջոցի դիմեց Զանգեզուրը և Ղարաբաղն իրեն ենթարկելու համար, բայց չկարողացավ, հանդիպելով ազգաբնակչության համառ դիմադրությանը: Այժմ օգտագործելով ռուսական սովետական իշխանության հեղինակությունը, Ադրբեջանը ձգտում է իրագործել իր վաղուց մտածված պլանները: Խլելով Հայաստանի պատմական հողերը՝ Զանգեզուրը և Ղարաբաղը, նա ձգտում է միանալ իմպերիալիստական Թուրքիային: Հայաստանի կառավարության կողմից երկու անգամ առաջարկվել է գումարել հայ-ադրբեջանական կոնֆերանս, հարցը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Երկրորդ առաջարկից հետո (հուլիսի 2 – Կ.Ս.) Ադրբեջանը համաձայնել է: Այդ պահին Ձեր զորքերի կողմից Հայաստանի տարածքների գրավումը Հայաստանի և հայ ժողովրդի սուվերենության խախտում է»[82]: Վերջում Օհանջանյանը խնդրում է զորքերը դուրս բերել Ղարաբաղից և Զանգեզուրից: Ակնհայտ է, որ կառավարության և Նժդեհի հարցադրումների մեջ գրեթե տարբերություն չկար: Տարբերությունը քաղաքական մոտեցումների մեջ էր: Նժդեհը գտնում էր, որ թշնամուց պետք է պաշտպանվել ինչ գնայնի էլ այն լինի: Կառավարությունը, տեսնելով հանդերձ, որ Ղարաբաղ – Զանգեզուր – Նախիջևանի գրավումը

[82] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, թ. 197:

ծանր կացություն է ստեղծելու Հայաստանի համար, գտնում էր, որ վտանգավոր է բոլշևիկյան զորքերի հետ առճակատումը և որ պետք է բողոքելով նահանջել: Որդեգրելով նման տակտիկա՝ ամենայն հավանականությամբ կառավարությունը ելնում էր այն մտայնությունից, որ դեռևս հնարավոր էր խափանել Հայաստանի դեմ միասնական հանդես գալու թուրք-բոլշևիկյան դաշինքը: Այս հարցում իր դերն էր խաղում Մոսկվայի հայկական պատվիրակությունը, որը կառավարությանը հղած հեռագրերում նշում էր, թե Սովետական Ռուսաստանը չի ցանկանում գոհացում տալ Թուրքիայի և Ադրբեջանի պահանջներին: Այդ պատճառով էլ կառավարությունը ջանում էր ցույց տալ, որ իր պայքարը քեմալական Թուրքիայի և Ադրբեջանի դեմ է: Հուլիսի 20-ին, երբ ավարտին էր մոտենում Ղարաբաղ – Զանգեզուր – Նախիջևան ռազմավարական գծի գրավումը, Հայաստանի ներքին գործերի և ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանը զորքերին է դիմում հատուկ կոչով: Տիրող մթնոլորտին ծանոթանալու համար ցանկանում ենք ռազմական նախարարի այդ դիմում-կոչը տալ ամբողջությամբ: Տեր-Մինասյանը այդ դիմումում ասում է հետևյալը. «Մանուկ Հայաստանի պանծալի զորքն արդեն հաղթության դափնիներ ունի՝ հյուսված մեր բազմատանջ հայրենիքի տարբեր ռազմադաշտերում: Հայաստանի թշնամիները մեկից ավելի անգամ շեշտակի հարվածներ կրեցին ձեր սեղմած բռունցքներից: Նրանք գիտեն, որ հեշտ չէ անպատիժ ոտք դնել ձեր խնկելի նախնյաց հայրենի հողի վրա, նրանք բազմիցս առիթներ են ունեցել տեսնելու, թե դարանած և ոխակալ թշնամու հանդեպ որքան սպառնական է հանրապետության մանուկ բանակը: Բայց այն, ինչ զենքն արեց այս մեկ-երկու ամսվա ընթացքում, այն դյուցազներգություններ, որ գլխապտույտ արագությամբ մեկը մյուսի ետևից կերտեցիք դուք Հայաստանի մեկ ծայրից դեպի մյուսը ծավալվող ռազմաճակատների տարբեր մասերում, պատիվ կարող է բերել ոչ միայն Ձեզ, Ձեր հայրենիքին ու Ձեզ ծնող ժողովրդին, այլև ամենաառաջնակարգ պետության և ամենաազատասեր ժողովրդի պանծալի ու անմրցունակ բանակի քաջագործության փայլուն էջերից մեկը կարող է կազմել: Հայաստանի արծիվներ, խորտակվում են Վեղիները մեկը մյուսի ետևից, և Վեղիների վրայով հարթվում է դեպի մեր պաշտած ու երազած հայրենիքի ազատության, անկախության և ամբողջացման հոյակապ ու սքանչելի շենքը տանող հեղափոխական կարմիր ճանապարհը»[83]: Ուշադրություն դարձրեք, «կարմիր» բառը Ռ. Տեր-Մինասյանը օգտագործել է ընդգծելու և բոլշևիկներին ցույց տալու, որ ճշմարիտ հեղափոխականներն իրենք են և ոչ թե քեմալականները: Պատահական չէ նաև, որ այս ընդարձակ փաստաթղթում որևէ հիշատակություն չկա Հայաստանի տարածքների վրա կարմիր զորքերի

[83] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 290, ց. 1, գ. 3-2, թ. 6:

հարձակման մասին: Հանգամանք, որն ապացուցում է Հայաստանի կառավարության լոյալ վերաբերմունքը կարմիր զորքերի շարժի հանդեպ: Այս փաստաթղթի լեզվամտածողությունը ցույց է տալիս, որ կառավարությունը չէր ընկալում, թե ինչ է կատարվում Հայաստանի շուրջը: Այլապես այդպես չէր գերագնահատվի կատարվածն այն պահին, երբ դրանից ընդամենը մի քանի օր հետո բոլշևիկյան և քեմալական զորքերը միանալով Նախիջևանում՝ ամբողջական պետք է դարձնեին Հայաստանի շրջափակումը: Այդ պատճառով էլ բերենք Ռ. Տեր-Մինասյանի դիմումի երկրորդ մասը, որում ասվում է. «...Ես հպարտությամբ եմ հիշում այն մեծ հաղթանակը, որ դեպի Սև ծովը տանող Օլթիի ռազմադաշտում մեր զորագունդը տարավ տաճկական կանոնավոր զորաշարքերի դեմ, խլելով խուճապի մատնված թշնամուց մեծաքանակ զոհեր, ռազմամթերք ու պարեն: Իմ անվերջ գոհունակությունն եմ հայտնում Դարալագյազի լեռնալանջերից իջնող զորասյուներին, որ շեշտակի հարվածներով արժանի պատիժ տվեցին երես առած թշնամուն: Շնորհակալության խոսքս եմ ուղղում Զանգիբասարի զորաբաժնին, որ ընդամենը մի քանի ժամում կարողացավ վերացնել մանուկ Հայաստանի պետական մարմնից ժահրոտ ու քայքայիչ պալարը, սարսափի մատնելով անպատկառացած հակառակորդին: Խորին երախտիքով եմ արձանագրում այն վեհ գործը, որ դեպի Շարուր ու Նախիջևան սլացող զորաբանակը կայծակի արագությամբ կերտեց անառիկ Վեղիի ամրությունների տակ, հարգանքի ու հիացմունքի խոսք վաստակելով անգամ թշնամուց: Վերջապես շնորհակալություն եմ հայտնում հայ կամավորական գնդերին, որոնք ինքնահոժար իրենց մասնակցությունն ունեցան գրեթե բոլոր կռիվներին, նրանց տալով լայն ժողովրդական բնույթ և ցուցադրելով հերոսության փայլուն օրինակներ: Այս բոլոր կռիվների ընթացքում Հայաստանի պանծալի հրետանին ցույց տվեց, որ իր կաթվածող հարվածներից շշմած թշնամին այլևս հույս չունի մի օր մրցակցության դուրս գալ իրեն հետ... Հայ քաջարի բանակի հերոս զավակներ – հանուն ավետյաց երկրի փրկության, հանուն մայր հայրենիքի ամբողջացման, անկախության և ազատության հառաջ նոր հաղթանակներ: Կեցցե միացյալ ազատ և անկախ Հայաստանը»[84]: Ներքին գործերի և ռազմական նախարարի՝ բանակի մարտիկներին հղված այս դիմումը կարդացվում է բոլոր ռազմական միավորումներում: Այս փաստաթուղթը պատասխան է տալիս մի շարք քաղաքական հարցերի: Առաջին հերթին այն տեսանելի է դարձնում տիրող մտայնությունը: Թշնամին պարտված է և «այլևս հույս չունի մի օր մրցակցության դուրս գալ»: Օլթիի գրավումը Թուրքիայի դեմ տարած հաղթանակի թյուրատեսություն էր առաջացրել: Կատարվածն իշխանության մեջ ամրապնդել էր այն կարծիքը, որ

[84] Նույն տեղում, թ. 8:

աշխարհամարտում պարտված Թուրքիան դեռևս ոտքի չի կանգնել, և հնարավոր է, Սևրի պայմանագրի լույս աշխարհ գալուց հետո, զենքով գրավել ու «փրկել ավետյաց երկիրը»: Սա նշանակում էր, որ 1919թ. որդեգրած քաղաքականությունը շարունակվում էր, և նոր իրողությունները հաշվի չէին առնվում կառավարության կողմից: Այդ պատճառով էլ Հայաստանի ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանը բանակից թաքցնում էր այն իրողությունը, որ կարմիր զորքերը գրավել էին Զանգեզուրը և շարժվում էին Նախիջևան: Ճշմարտությունը բանակից թաքցնելու կառավարության այս մոտեցումը պայմանավորված էր այն բանով, որ «հայկական բանակը չէր ցանկանում կռվել բոլշևիկների դեմ»: Այս ձևակերպումով Դրոյի էքսպեդիցիոն կորպուսը Ղարաբաղից նահանջեց Զանգեզուր, այնտեղից էլ հուլիսի սկզբին նահանջեց Դարալագյազ: Իրականում կառավարությունը չէր ցանկանում երկու ճակատ ունենալ, ինչի պատճառով էլ Զանգեզուր – Նախիջևան տարածքն առանց դիմադրության հանձնվեց բոլշևիկներին: Ինչպես վերը տեսանք, կառավարության վարած այս քաղաքականությանն ընդդիմացավ Նժդեհը: Նա չենթարկվեց Զանգեզուրը թողնելու Դրոյի հրամանին և իր զինակիցների հետ մնաց Ղափանի հանքերում և շարունակեց պայքարը կարմիր զորքերի դեմ: Նժդեհը գտնում էր, որ Զանգեզուր – Նախիջևան գիծը հանձնելով կարմիրներին՝ կառավարությունը վտանգում է Հայաստանի ապագան: Ժամանակահատվածի հանգուցային ու պատասխան պահանջող հարցերից է, թե ինչու՞ կառավարությունը մի կողմից չընդունեց Լեգրանի պատվիրակությանը, իսկ մյուս կողմից էլ, առանց լուրջ դիմադրության, թույլ տվեց բոլշևիկյան զորքերին գրավելու Ղարաբաղ – Զանգեզուր – Նախիջևան տարածքը: Այս հարցերը փոխկապակցված են: Լեգրանի պատվիրակությանը Երևանում չընդունելու պատճառների մասին բավարար խոսեցինք: Վերը ասածին անհրաժեշտ է հավելել նաև, որ Լեգրանի առաքելության հետ կապված քաշքշուկը պայմանավորված էր նաև այն բանով, որ Հայաստանի կառավարությունը չէր ցանկանում արևմտյան դաշնակիցների զայրույթը հարուցել Սևրի պայմանագիրն ստորագրելուց առաջ: Մյուս կողմից էլ տեսանելի է, որ Հայաստանի կառավարությունը չէր ցանկանում առճակատվել կարմիր զորքերի հետ՝ չհարուցելու համար բոլշևիկյան Ռուսաստանի թշնամանքը: Այլ կերպ դժվար է բացատրել այն հանգամանքը, թե ինչու՞ Հայաստանը դիմադրություն ցույց չտվեց կարմիր զորքերին, որոնք 1920թ. օգոստոսի 1-ին Զանգեզուրից մտան Նախիջևան և միացան Նախիջևանում գտնվող թուրքական ջոկատին: Երբ արձանագրվեց բոլշևիկյան և քեմալական զորամիավորումների միացումը՝ Հայաստանի կառավարությունն իրար անցավ և շտապեց օգոստոսի 10-ին Թիֆլիսում Լեգրանի հետ ստորագրելու զինադադարի համաձայնագիր: 1920թ. օ-

գոստոսի 7-ին Հ. Օհանջանյանը հեռագրում է Տ. Բեկզադյանին, որով հրահանգում է. «Կարմիրների ուժերը շրջապատում են, աշխատեք զինադադար կնքել՝ չբացահայտելով պատճառները: Հայտնեք Շանթին, որպեսզի նա ազդի կենտրոնի վրա հարձակումները դադարեցնելու և զինադադար կնքելու»[85]: Պատճառն այն էր, որ արևմտյան պետությունների օգնությամբ Մեծ Հայաստան ստեղծելու ծրագրերի խափանման դեպքում փորձում էին Ռուսաստանի միջոցով պահպանել գոյություն ունեցող տարածքները: Փաստն այն է, որ բոլշևիկները արևելքից և հարավից շրջափակեցին Հայաստանը: Սա էր մոսկովյան բանակցությունների ձգձգման հետևանքը:

Ամփոփելով 1920թ. մայիս-օգոստոս ամիսներին Հայաստանում և նրա շուրջ կատարված իրադարձությունների զարգացումը՝ կարող ենք արձանագրել.

1. Մայիսին Հայաստանում խորհրդային կարգեր չհաստատվեցին, որովհետև այդ պարագայում քեմալականները կկանգնեին կատարված փաստի առաջ, և դժվար կլիներ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Հայաստանի տարածքների հարցը կարգավորել, որով Կարսի մարզը տրվելու էր Թուրքիային: Քեմալա-բոլշևիկյան «հեղափոխական» դաշինքի հիմքում ընկած էր 1918թ. կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Ուստի ամեն ինչ կատարվում էր այդ տրամադրությամբ: Դրա վկայությունն էր, որ մայիսին բոլշևիկները զորք մտցրեցին Իջևան, բայց երկու օր հետո, քեմալականների ջանքերով, այդ զորքերը ետ կանչեցին և ուղարկեցին Գյանջայի հակաբոլշևիկյան խռովությունը ճնշելու: Քեմալականները Նուրի փաշայի ղեկավարությամբ կազմակերպելով Գյանջայի հակաբոլշևիկյան խռովությունը՝ բացառեցին մայիսին Հայաստանի խորհրդայնացումն ու նաև ուղղորդեցին բոլշևիկյան զորքերի շարժը Ղարաբաղ – Զանգեզուր – Նախիջևան ուղղությամբ: Բոլշևիկները հասկացան ու հարմարվեցին Հայաստանը քեմալականների ծրագրի համաձայն խորհրդայնացնելու մտքի հետ:

2. Ձախողվեցին հայ-ռուսական մոսկովյան բանակցությունները, Մոսկվան չճանաչեց Հայաստան պետությունը գոյություն ունեցող տարածքներով: Հայաստանի պատվիրակությունն իր հերթին չընդունեց Ռուսաստանի միջնորդությամբ հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու առաջարկը: Այս հարցում ևս վճռորոշ դեր ունեցան քեմալականները: Մոսկվան ուզում էր բավարարել Թուրքիայի և Ադրբեջանի՝ որպես «համաշխարհային հեղափոխության արևելյան պարտնյորների» տարածքային պահանջները և հաշտեցնել Հայաստանին նրանց հետ, որն անլուծելի խնդիր էր: Հայաստանի պատվիրակությունը երեք ամիս շարունակ անտեղի ժամանակ վատնեց բոլշևիկյան Ռուսաստանին բացատրելով, որ իրենց շահե-

[85] «Գարուն» ամսագիր, 1990, N 4, էջ 18:

րին դեմ է քեմալականների հետ հեղափոխական դաշինքը: Այդ ընթացքում բոլշևիկյան զորքերը գրավեցին Ղարաբաղ – Զանգեզուր – Նախիջևան գիծը և շրջափակեցին Հայաստանը: Սևրի պայմանագրի ստորագրման օրը՝ օգոստոսի 10-ին, բոլշևիկներն օրինականացրին իրենց գործողությունները՝ Հայաստանի կառավարության հետ Թիֆլիսում ստորագրելով զինադադարի համաձայնություն, որով այդ տարածքներն համարվում էին վիճելի Հայաստանի ու Ադրբեջանի միջև: Այս ակտով Հայաստանի կառավարությունը տանուլ տվեց ռազմաստրատեգիական և հոգեբանական առումներով:

3. 1920թ. հունիսին Հայաստանի կառավարությունը ձեռնարկեց ռազմական գործողություններ Զանգիբասար – Վեդիբասար – Շարուր և Օլթիի ուղղություններով: Այս գործողությունները հաջող ընթացք ունեցան և Հայաստանին դրեցին հաղթանակի պատրանքի գայթակղության մեջ: Եթե Զանգիբասարի ու Վեդիբասարի ուղղությամբ ռազմական գործողությունները հասունացած անհրաժեշտություն էին, ապա անհասկանալի էր «ածխահանքերը գրավելու» անվան տակ Օլթիի վրա հարձակումը: Այն քեմալականներն առանց դիմադրության հանձնեցին հայկական զորքերին: Օլթիի գրավումը քեմալականները վարպետորեն օգտագործեցին՝ բոլշևիկյան Ռուսաստանին ցույց տալով, որ Հայաստանը թիկունքից հարվածում է իր դաշնակցին:

4. Հայաստանի վրա քեմալականների 1920թ. հունիսին նախատեսված հարձակման հետաձգումը կապված էր ոչ այնքան Չիչերինի պահանջի հետ, որքան Հայաստանում կատարվող իրադարձություններով: Այսինքն՝ եթե մայիսին Հայաստանում հեղաշրջում կատարվեր, հունիսին քեմալականները կհարձակվեին Հայաստանի վրա:

5. Հարկ է նաև նկատել, որ Հայաստանի կառավարությունը, կորցնելով 1919թ. Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու նպաստավոր շրջանը, 1920թ. հայտնվեց նույնքան աննպաստ կացության մեջ: Բոլոր կողմերից շրջափակվելով թշնամիներով՝ 1920թ. մայիս-օգոստոս ամիսներին Հայաստանի կառավարությունը հայտնվել էր մի վիճակում, երբ նրա արած գրեթե բոլոր քայլերը համընկնում էին թշնամու հաշվարկների հետ:

Այս էր մեծ տերությունների հակասությունների վրա խաղացող ու միջազգային ատյաններում սեփական դատը փնտրող քաղաքականության տրամաբանական ավարտը: Ճիշտ է, 1920թ. օգոստոսի 10-ին ստորագրվեց Մեծ Հայաստան ստեղծելու Սևրի պայմանագիրը, բայց քեմալականներն ու բոլշևիկները սպասում էին հենց այդ պայմանագրի լույս աշխարհ գալուն, որպեսզի Հայաստանը որակեն միջազգային իմպերիալիզմի գործակալ:

ԳԼՈՒԽ II

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՆԵԼՈՒ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Եվ այսպես՝ 1920թ. մայիսից Հայաստանը հայտնվեց համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում: Նշեցինք, թե ինչու՞ մայիսին Հայաստանը չխորհրդայնացվեց և ի՞նչ էր կատարվում նրա շուրջ: Խնդիրն այն է, որ համաշխարհային հեղափոխությունը, պարտություն կրելով Արևմուտքում, համաշխարհային իմպերիալիզմին ուզում էր հարվածել Արևելքում: Արևելքում նման «գործակալների» թվին էին դասվում Պարսկաստանն ու Հայաստանը:

Պարսկաստանը հասկանալի էր, որովհետև այնտեղ կային անգլիական զորքեր, և ապստամբ Քյուչուկ խանը բոլշևիկներին խոստացել էր իր օգնությունը: Հայաստանի պարագայում անհասկանալի էր, որովհետև եթե բոլշևիկները ցանկանային այն խորհրդայնացնել, ապա դա կանեին մայիսին և առանց դժվարության: Բանն այն է, որ Հայաստանի խորհրդայնացումը նպատակ չէր բոլշևիկների համար: Հայաստանը միջոց էր միջազգային իմպերիալիզմին հարվածելու համար: Այսինքն՝ Հայաստանին հարվածել այն բանից հետո, երբ միջազգային իմպերիալիզմի «հին գայլերը» լույս աշխարհ կբերեին «հեղափոխական Թուրքիային» ու կպարտադրեին «Մեծ Հայաստանի իմպերիալիստական ծրագիրը»: Ահա այս առանցքի շուրջ էր պտտվում հեղափոխականների ողջ տրամաբանությունը: Հայաստանը որպես «միջազգային իմպերիալիզմի գործակալ» հասկացությունը առաջին անգամ փաստաթղթային ձևակերպում ստացավ 1920թ. հուլիսին Կոմինտերնի 2-րդ կոնգրեսում: Այս կոնգրեսում հայ բոլշևիկներ Հ. Նազարեթյանը և Ա. Նուրիջանյանը ներկայացնում են «Կոմունիզմը Հայաստանում» վերտառությամբ զեկույցը, որում մասնավորապես ասված է. «Ռուսաստանի կոմունիստական պարտիան պետք է պատրաստ լինի, որպեսզի Արևելքում ծագած ընդհանուր ապստամբության մոմենտին տապալի դաշնակցության իշխանությունը, նրա ճակատը վերջնական հավասարեցնի արտաքին իմպերիալիստական ճակատին և Արևելքի ապստամբած ժողովուրդների օգնությամբ ընդհանուր ճակատ կազմի Սովետական Ռուսաստանի հետ ընդդեմ միջազգային իմպերիալիզմի»: Այստեղ պարզ ու հստակ ասված է, որ Հայաստանում պետք է հարվածել միջազգային իմպերիալիզմին: Այսինքն, եթե միայն Հայաստանի խնդիրը լիներ, ապա նրան կհարվածեին մայիսին, բայց այդ պարագայում նրանք չէին կարող բավարարել

«համաշխարհային հեղափոխության արևելյան պարտնյորներ» Թուրքիայի ու Ադրբեջանի՝ Հայաստանից ունեցած տարածքային պահանջները: Անկողմնակալ լինելու համար հարկ է նշել, որ մոսկովյան բանակցություններում Չիչերինն ու Կարախանը Հայաստանի պատվիրակությանը հասկացնում էին, որ համաշխարհային մասշտաբի պայքարում Հայաստանը պետք է որոշի իր տեղը: Հայաստանի կառավարությունը կարծում էր, որ այդ համաշխարհային պայքարում ժամանակն աշխատում է հօգուտ հաղթանակած Եվրոպայի, և իրենց գործողությունը կապում էին այդ գաղափարի հետ: Պետությունը չուներ այն կառույցները, որոնք կվերլուծեին կատարվող իրադարձությունները քաղաքական ողջ տարողությամբ: Պարզապես նրանք քեմալա-բոլշևիկյան դաշինքը համարում էին ոչ բնական և չէին կռահում, որ նրանք սպասում են Սևրի պայմանագրի լույս աշխարհ գալուն, որպեսզի դրանից հետո իմպերիալիզմի դաշնակից Հայաստանին դնեն համաշխարհային հեղափոխության զոհասեղանին: Հայաստանի դեմ գրոհի և նրա «ճակատը իմպերիալիստական ճակատին հավասարեցնելու» պահը եկավ, երբ 1920թ. օգոստոսի 10-ին ստորագրվեց Սևրի պայմանագիրը: Սևրի պայմանագիրը ստորագրելուց հետո Կոմինտերնի գործադիր կոմիտեն որոշում է 1920թ. սեպտեմբերի 1-ին Բաքվում գումարել Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարը: Դրանից առաջ՝ օգոստոսի 18-ին, նորաստեղծ ՀԿԿ արտասահմանյան բյուրոյի անդամներ Ա. Նուրիջանյանը (24 տարեկան), Հ. Կոստանյանը (23 տարեկան) և Ի. Դովլաթյանը (23 տարեկան) այդ առիթով դիմում են հղում Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին: Դիմումում ասված է. «Կոմունիստական ինտերնացիոնալի գործադիր կոմիտեն, որպես բոլոր երկրների հեղափոխական աշխատավորական մասսաների կամքի անկաշառ արտահայտություն, իր սրբազան պարտքն է համարում խորհրդակցել արևելքի ժողովուրդների պատգամավորների հետ բանվորագյուղացիական խավերի ընդհանուր թշնամու՝ համաշխարհային իմպերիալիզմի դեմ կռվելու վեհ գործի համար»: Այնուհետև նրանք ծանրանում են «միջազգային իմպերիալիզմի դաշնակից դաշնակցական Հայաստանը» պարտության մատնելու գլխավոր խնդրին՝ հայ բանվորներին ու գյուղացիներին համոզելով, որ «դաշնակցականները ժողովրդի դահիճներն են», «դաշնակիցները ազգամիջյան թշնամանք սերմանողներն են» և այսպես շարունակ: Այս դիմումից պարզ երևում է, որ Բաքվում գումարվելիք Արևելքի ժողովուրդների համագումարի հիմնական խնդիրն էր լինելու «Արևելքի ճնշված ու հարստահարված» ժողովուրդներին (հատկապես մուսուլմաններին) համոզել, որ տարածաշրջանում իր երջանկության խաթարողը «իմպերիալիզմի դաշնակից Հայաստանն է»: 1920թ. սեպտեմբերի 1-ին Բաքվում իր աշխատանքն է սկսում Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարը, որին մասնակցում էին 1891 պատգամավորներ՝ հիմնա-

կանում մուսուլմանական երկրներից (Թուրքիա, Պարսկաստան, Եգիպտոս, Հնդկաստան, Աֆղանստան և այլն): Համագումարի աշխատանքը ղեկավարում էր Կոմինտերնի գործադիր կոմիտեի նախագահ Գ. Զինովևը: Համագումարի սեպտեմբերի 4-ի նիստն ամբողջությամբ նվիրվում է Հայաստանին: ՀԿԿ պատվիրակության զեկույցը համագումարում կոչվում է «Հայաստանում տիրող դրության մասին»: Այս զեկույցը, փաստորեն, Կոմինտերնի 2-րդ կոնգրեսում հայ բոլշևիկների արդեն հիշատակված զեկուցման կրկնությունն էր: Վերջինը թերևս տարբերվում էր այն բանով, որ արդեն «պահը հասունացել էր» դաշնակցական կառավարությունը տապալելու համար: Նույն օրը երեկոյան նիստում ՀԿԿ պատվիրակությունը համագումարին է դիմում հետևյալ կոչով. «Մենք չենք կարող թույլ տալ, որ Հայաստանը դառնա Սովետական Ադրբեջանի, ռեոյուցիոն Արևելքի վրա իմպերիալիստական Արևմուտքի հարձակման բազա և դրանով դարեդար խայտառակենք մեզ ամբողջ աշխարհի հեղափոխության առջև: Մենք չենք կարող թույլ տալ, որ մեր ընդհանուր թշնամին՝ Անտանտի իմպերիալիզմը մեր միջոցով և մեր մեջքով հաղթական երթ կատարի Արևելքի հեղափոխական մասսաների դեմ»: Մենք չենք ցանկանում ցույց տալ, որ այս և նմանատիպ ձևակերպումներն ազգային ամոթ ու խայտառակություն էին, ոչ էլ անդրադառնում ենք փաստաթղթի անգրագետ ձևակերպումներին ու շարադրանքին: Մեր խնդիրը չէ նաև ընթերցողին ցույց տալ, թե անկախ պետությանն ինչպես էին վերաբերվում աղանդավոր ստահակները կուսակցականների անվան տակ: Չնայած որ փաստն ուսանելի է ոչ միայն պատմության, այլև ներկայի համար: Պարզ տեսանելի է, որ Հայաստանի կամ նրանց ձևակերպմամբ, դաշնակցության «արևելյան հաղթական երթը» կապված էր Սևրի պայմանագրի հետ: Խնամքով թաքցվում է Թուրքիայի անունը և դրա փոխարեն ասվում է, որ Հայաստանն ուզում է պարտության մատնել Սովետական Ադրբեջանին: Դա էլ երևի արվում էր համագումարը Բաքվում հրավիրելու պատվին: Համագումարն արձանագրում է, որ Հայաստանի իմպերիալիստական հնարավոր ոտնձգությունները կանխելու միակ միջոցը նրան պարտության մատնելն ու Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելն է: Սեպտեմբերի 5-ին նույն խնդրանքով համագումարին են դիմում նաև Կարսի մարզի մուսուլման և ռուս ազգաբնակչության ներկայացուցիչները: Համագումարի բոլոր փաստաթղթերում հստակ ձևակերպվում է, որ Հայաստանը միջազգային իմպերիալիզմի դաշնակիցն է և անհրաժեշտ է նրան պարտության մատնել: Այդ ամենը կյանքում իրագործելու ծրագրի մշակումը համագումարը հանձնարարում է իր կողմից ընտրված Արևելքի ժողովուրդների քարոզչության ու գործունեության խորհրդին:

Խորհրդի անդամներ էին ընտրվել Օրջոնիկիձեն, Ստասովան, Նարիմանովը, Նուրիջանյանը և ուրիշներ: Այս խորհուրդն էլ մշակում և 1920թ.

սեպտեմբերի 17-ին Կոմինտերնի գործադիր կոմիտեի նախագահությանը, ՌԿ (բ)Կ կենտկոմին և ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատին է ուղարկում «Մերձավոր Արևելքի քաղաքական ներկա պահի մասին» եզրակացությունը: «Խիստ գաղտնի» այս փաստաթուղթը բաղկացած է վեց պարբերությունից: Առաջին երկու պարբերությունում վերլուծվում է իրադրությունը հակահեղափոխական Պարսկաստանում և Հայաստանում: 3-րդ և 4-րդ պարբերությունները նվիրված են հեղափոխական Ադրբեջանին և Թուրքիային: 5-րդ պարբերությունում տրված է, որ դրությունը Մերձավոր Արևելքում կրիտիկական է՝ համաշխարհային հեղափոխության և հակահեղափոխության հնարավոր բախման տրամաբանությամբ: 6-րդ պարբերությունում տրված է հեղափոխական ուժերի գործողությունների ծրագիրը[1]: Քանի որ այս ծրագրային փաստաթուղթն ամբողջապես կիրառվեց կյանքում՝ հարկ եմ համարում այն քննարկել հանգամանորեն: Պարսկաստանին վերաբերվող մասում նշվում է, որ այնտեղ սոցիալիզմի հռչակումը ձախողվել է բոլշևիկների կազմակերպած հարկահանության և թալանի հետևանքով: Տեղի «Ադալյաթ» հեղափոխական կազմակերպությունը ոչնչով չի օգնել բոլշևիկներին, որովհետև ժողովրդի մեջ հեղինակություն չի ունեցել: Նշվում է, որ այդ ամենից օգտվել են անգլիացիները՝ ուժեղացնելով իրենց դիրքերը որպես հարկահանների ու զավթիչների դեմ պայքարողներ: Փաստաթուղթը արձանագրում է, որ «հեղափոխական գործը» Պարսկաստանում տապալվել է: Բոլշևիկյան զորքերի կողմից կազմակերպված կողոպուտը շահի շուրջ է համախմբել բոլոր ուժերին, որոնք ոչ միայն ձգտում են բոլշևիկյան զորքերը դուրս քշել Իրանից, այլև հարձակվել ու ազատագրել Ադրբեջանը: Անշուշտ, փաստաթղթում նշված չէ, թե իրականում ի՞նչ է կատարվել Պարսկաստանում: Բանն այն է, որ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո բոլշևիկյան զորքերը մտան Պարսկաստան և գրավեցին Էնզելի և Ռաշտ քաղաքները: Նրանց օգնում էր ապստամբ Քյուչուկ խանը: Մի քանի ամսում տեսնելով բոլշևիկյան զորքերի կատարած բռնագրավումները և հեղափոխական մեթոդներով գործելաձևը՝ Քյուչուկ խանը զենքը շուռ տվեց նրանց դեմ: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ պարսիկները հրդեհում են Ռաշտում գտնվող պարենամթերքի պահեստները: Այդ պարենը բռնագրավված էր պարսիկներից և նախատեսվում էր ուղարկվել Ռուսաստան: Զայրացած կարմիրբանակայինները հրդեհում են Ռաշտի թաղամասերը: Այս միջադեպը վերածվում է պարսիկների և բոլշևիկների միջև առճակատման: Այն ավարտվում է նրանով, որ 1920թ. օգոստոսի կեսերին պարսկական զորքերը Մանջիլի կիրճում շրջափակում և գլխովին կոտորում են բոլշևիկյան 12-հազարանոց զորագունդը: Փրկվում է չորս հարյուր զինվոր[2]: Անձնատուր են լինում նաև ադրբեջանական չորս գնդերը: Սեպտեմբերի կեսերին վերջնականապես ազատագրվում են Ռաշտ և Էնզելի քաղաքները: Այս մարտերում բոլշևիկյան զորքերը ունեցել են ևս հինգ հազար զինվորի կորուստ: Դրանից հետո բոլշևիկները ձեռք քաշեցին Իրանից և այն որակեցին Անգլիայի դաշնակից ու հակահեղափոխական երկիր, որը կարող է օգնել Հայաստանին: Իհարկե, 15 հազար զինվոր կորցնելը համաշխարհային հեղափոխության ղեկավարների համար առանձնապես մեծ բան չէր, բայց Քյուչուկ խանի արածը ծայրաստիճան կատաղեցրել էր նրանց:

Բաքվի սովետի նիստում Օրջոնիկիձեն Քյուչուկ խանի արածը ստորություն է որակում: Հավելելով նաև, որ իբր «իրեն հարգող ոչ մի քաղաքական գործիչ չէր կարող այդպես վարվել»[3]: Նիստի մասնակիցներից մեկը նրան հարցնում է, թե որևէ երաշխիք կա, որ Քեմալն էլ այդպես չի վարվի: Օրջոնիկիձեն պատասխանում է, որ Քեմալը մեծ քաղաքական գործիչ է և նման բան հնարավոր չէ:

Փաստորեն, Իրանում բոլշևիզմի կրախը ավելի է բարձրացնում քեմալական շարժման արժեքը «Արևելքը հեղափոխականացնելու գործում»: Քիչ հետո կտեսնենք, որ այդ դիտարկումները ամբողջապես տեղ են գտել այս փաստաթղթում: Մինչ դրան անցնելը տեսնենք, թե նրանք ինչպես են վերլուծում ու գնահատում Հայաստանի վիճակը: Նշվում է, որ Հայաստանի հետ ստորագրված զինադադարի պայմանագիրը (խոսքը 1920թ. օգոստոսի 10-ին ստորագրված համաձայնության մասին է, որով Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը անցան բոլշևիկյան զորքերի հսկողության տակ) դաշնակցական կառավարության կողմից ընդունվեց որպես մեր «թուլության ապացույց»: Փաստորեն, այս փաստաթղթի հեղինակներն ընդունում են, որ իրենց և Հայաստանի միջև պատերազմ է եղել, որովհետև զինադադար կնքվում է պատերազմից հետո: Ինչքան էլ որ Հայաստանի կառավարությունը խուսափեց բոլշևիկյան զորքերի հետ առճակատումից և առանց կռվի Դրոյի էքսպեդիցիոն կորպուսը թողեց Ղարաբաղը և Զանգեզուրը, միևնույն է, բոլշևիկները փաստում են, որ պատերազմ եղել է: Միևնույն ժամանակ, կեղծելով կատարվածը, նրանք փաստում են, որ օգոստոսի 10-ի զինադադարը Հայաստանի կառավարության կողմից ընդունվել է որպես բոլշևիկների թուլության նշան: Նաև պարզվում է, որ այդ զինադադարը «հնարավորություն ընձեռեց դաշնակցությանը ամրապնդելու իրենց դիրքերը և պաշտպանողական գործողություններից անցնելու հարձակողականի: Ներկա պահին դաշնակցությունը գործնականորեն նախապատրաստվում է մեր

[1] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 1-3:

[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 621, թ. 1-3:

[3] ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 40085, ց. 1, գ. 26, թ. 6:

դեմ պատերազմի: Անգլիացիներից ստանալով ռազմական մատակարարում՝ նրանք ձգտում են գրավել պայմանագրով իրենց տրված Ջուլֆայի երկաթգիծը»[4]: Ընթերցողը պարզ տեսնում է, այդ փաստաթղթից մեջ բերված մտքերը հակասական են ու ոչ մի քննադատության չեն դիմանում, որովհետև, ինչպես տեսանք, Հայաստանի կառավարությունը օգոստոսի 10-ի զինադադարի պայմանագիրն ստորագրեց, որպեսզի չառճակատվի բոլշևիկների հետ: Ու նաև տրամաբանության այդ ո՞ր օրենքով է, որ ուժեղ և ագրեսիայի նախապատրաստվող պետությունը հակառակորդին զիջում է իր տարածքների մի մասը: Կամ տրամաբանական է այն անմիտ պնդումը, որ Հայաստանի կառավարությունը ձգտում է գրավել Ջուլֆայի երկաթգիծը: Ումի՞ց էր գրավելու, եթե օգոստոսի 10-ի զինադադարով այդ երկաթուղու օգտագործման իրավունքը մնում էր Հայաստանին: Պարզապես այս ամբողջ կեղծիքը հյուսվում է, որպեսզի «ապացուցվի», որ «Հայաստանի զինված ուժերը ձգտում են միանալ իրենց դաշնակիցների՝ անգլո-շահական ուժերի հետ»: Պարզվում է, որ նախապատրաստվող այդ հարձակմանը նպաստում են նաև «դաշնակցական կառավարության գործակալ հայ բոլշևիկները, որոնք կոմունիստների դիմակով Ադրբեջանում և հատկապես Ղարաբաղում, Զանգեզուրում ու Ղազախում գործնական հող են նախապատրաստում այդ հարձակման համար»: Ահա, այսպես, ոչ ավել, ոչ պակաս, հայ բոլշևիկները, որոնք ձգտում էին օր առաջ տապալել Հայաստանի անկախությունը, դիտվում էին որպես նույն այդ կառավարության գործակալներ: Չիչերինի և Կարախանի՝ Հայաստանի ու հայ ժողովրդի մասին արած զեղումների վրա հեքիաթներ հորինած հեղինակները թող ուշադիր հետևեն Հայաստանի հանդեպ բոլշևիկների ունեցած ատելության չափին, որը տեղ է գտել Հայաստանը համաշխարհային հեղափոխության զոհասեղանին բարձրացնող այս ծրագրային փաստաթղթում[5]: Երիցս իրավացի էր Գ. Նժդեհը Դրոյի հետ Գորիսի ժողովում ունեցած բանավեճում: Չէր կարելի ու անթույլատրելի էր առանց կռվի Ղարաբաղ – Զանգեզուր – Նախիջևան ստրատեգիական գիծը հանձնել բոլշևիկներին: Ու այն օրերին, երբ Բաքվում բոլշևիկ գործիչները Օրջոնիկիձեի ղեկավարությամբ կազմում էին այս փաստաթուղթը, Նժդեհը Ղափանի ժողովրդական վաշտերի գլուխն անցած բեկում էր կռվի ընթացքն ի վնաս բոլշևիկյան զորքերի: Երևի այս հանգամանքը նկատի ունեին փաստաթղթի հեղինակները՝ նշելով, որ հայկական զորքերը ձգտում են միանալ անգլո-շահական ուժերին: Բոլշևիկ ղեկավարներին կատաղեցրել էր այն հանգամանքը, որ հայերը Զանգեզուրում ոչ միայն կռվում են բոլշևիկների դեմ, այլև հաղթում են: Այս փաստաթղթից

[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 621, թ. 1:
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 1-3:

նաև պարզ երևում է, որ ՌՍՖՍՀ-ը Հայաստանի հետ բանակցություններ էր վարում, որպեսզի Թուրքիայի և բոլշևիզմի արանքում վերջինս առավելություն տա բոլշևիզմին և չկռվի նրա դեմ: 1920թ. օգոստոսի 30-ին Հայաստանի ռազմական նախարարին հղած գրությունում Նժդեհը նշում է. «Ես չգիտեմ, թե ինչով կվերջանան մեր հանրապետության և խորհրդային Ռուսաստանի միջև սկսված բանակցությունները, սակայն քաջ գիտեմ, որ Ադրբեջանին զիջել ապստամբ Կապարգողթը, նշանակում է մեծապես դժվարացնել մեր ժողովրդի ինքնապաշտպանական գործը»[6]: Կապանի լեռներում գտնվող Նժդեհը տեսնում է, որ բանակցությունների անվան տակ բոլշևիկները սիրախաղ են տանում Հայաստանի հետ, որի հիմնական նպատակն էր բարոյալքել և դժվարացնել «ժողովրդի ինքնապաշտպանությունը»: Այլ գրություններում նա նաև նշում է, որ Զանգեզուրը ևս Ղարաբաղի ու Նախիջևանի հետ տրվելու է Ադրբեջանին: Դեռևս 1920թ. հուլիսի 6-ին վարչապետ Հ. Օհանջանյանին հղած նամակում գրեթե նույն բանն է ասում Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը: Նա, անդրադառնալով Ադրբեջանի օգտին Հայաստանի տարածքներ զիջելու բոլշևիկների առաջարկին, գրում է. «Տեղեկանալով Մոսկվայից ստացված Շանթի հեռագրին, ես հարկ եմ համարում իմ կարծիքը հայտնել այդ մասին: Իմ կարծիքով Սովետական իշխանության և ոչ մի առաջարկ ընդունելի չէ: Միակ տեսակետը, որի վրա մենք պետք է կանգնած մնանք, այն է, որ տերիտորիայի խնդրում ոչ մի զիջում չենք կարող անել հօգուտ Ադրբեջանի: Սովետական իշխանությունը, որ Ադրբեջանի շահերն է պաշտպանում, այն էլ այն ծավալով, որ վտանգում է մեր անկախությունը, այլևս մեզ համար վտանգավոր չի կարող լինել ժողովրդի հոգեբանության տեսակետից: Որ Մոսկվան Ադրբեջանի փաստաբանն է, ուրեմն և Թուրքիայի և գործում է ի վնաս Հայաստանի անկախության՝ հերիք է մեր ժողովրդին զգաստացնելու և նրա մեջ եղած բոլշևիկյան տրամադրությունը հօդս ցնդեցնելու»: Տեսնում ենք, որ Նժդեհի ու Տ. Բեկզադյանի կարծիքները բոլշևիկների հարցում համընկնում են: Սակայն այդ կարծիքները դրությունը փոխել չէին կարող, որովհետև կառավարությունը որդեգրել էր բոլշևիկների հետ առճակատվելուց խուսափելու քաղաքականությունը: Նրանք չգիտեին, թե բոլշևիկներն ինչ դավեր են նյութում Հայաստանի դեմ հօգուտ Թուրքիայի ու Ադրբեջանի: Այդ պատճառով փաստաթղթի՝ Ադրբեջանին վերաբերող մասում նշվում է, որ վերջինի ժողովուրդը դժգոհ է Սովետական Ռուսաստանից: Որպես ապացույց բերվում են բռնագրավումների քաղաքականության դեմ գյուղացիական ապստամբությունները: Նման ինքնաքննադատու-

[6] *Կ. Սարդարյան,* «Զանգեզուրը բոցերի մեջ» Պատմություն և իրականություն, 1991թ. էջ 36:

թյունն արվում է, որպեսզի ցույց տրվի, որ Ադրբեջանի ժողովուրդը և դեկավարությունը դժգոհ են «բացառապես ռուսական սվիններով օգնությամբ» պահվող սովետական իշխանությունից: Սա նշանակում է, որ սոցիալական դժգոհությունը մարելու համար անհրաժեշտ է բավարարել Ադրբեջանի տարածքային պահանջները: Հետաքրքիր է, որ հաջորդ՝ 4-րդ գլխում նույն տրամաբանությամբ է ներկայացվում Թուրքիայում քեմալական շարժման վիճակը: Պարզվում է, որ քեմալականները նույնպես դժգոհ են խորհրդային Ռուսաստանից, որովհետև վերջինը հարկ եղած ձևով չի օգնում քեմալական շարժմանը միջազգային իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում: Հիմնավորվում է, որ իրավիճակը չշտկելու և քեմալականներին շուտափույթ օգնություն չհասցնելու դեպքում այդ շարժումը կպարտվի: Ասվում է, որ հունական զորքերը մոտենում են Աֆին-Գարահիսարին, Թուրքական «ազատագրական բանակը» զենք ու զինամթերք չունի, դրամ չունի պայքարը շարունակելու համար: Թուրքիային վերաբերող վերլուծական մասը վերջանում է այսպես. «Մուստաֆա Քեմալը Խալիլ փաշայի միջոցով հայտարարել է (այսինքն՝ հայտնել է բոլշևիկներին – Կ.Ս.), որ նման պայմաններում ազգայնականները կարող են պայքարել ևս մեկ ամիս, ու եթե այդ մեկ ամսվա ընթացքում կապ չհաստատվի Սովետական Ռուսաստանի հետ և վերջինից չստացվի նյութական և բարոյական օգնություն, ապա ազգային շարժումը կճնշվի, և Ազգային մեծ ժողովի կառավարությունը տապալվելով ապաստան կփնտրի Սովետական Ռուսաստանում»[7]: Մենք հակափաստարկներով չենք ջանա հերքել այս անհեթեթությունն այն պարզ պատճառով, որ այն իրականության հետ որևէ կապ չուներ: Մի կողմ թողնելով Ադրբեջանի ու քեմալական շարժման ծանր վիճակի մասին փաստարկները՝ հարկ է ուշադրության կենտրոնում պահել նշված մեկ ամիսը, որը պետք է ճակատագրական լիներ Մերձավոր Արևելքի համար: Ինչու՞ առանձնացնել և ուշադրության կենտրոնում պահել նշված մեկ ամիսը, որովհետև հենց այդ մեկ ամսում վճռվեց Հայաստանի անկախության ոչնչացման հարցը: Այս փաստաթուղթը կազմվել է սեպտեմբերի կեսերին: Դրանից հետո մեկ ամիսը նշանակում է մինչև հոկտեմբերի կեսը, որի ընթացքում էլ լուծվեց Հայաստանի խնդիրը: Այսինքն՝ եթե մեկ ամսվա ընթացքում հակահեղափոխության հարցերը չլուծվեն, ապա «հեղափոխությունը Մերձավոր Արևելքում կպարտվի»: Փաստաթղթի հեղինակների նկատմամբ դրությունը Մերձավոր Արևելքում կրիտիկական է, որովհետև Անգլիայի կառավարությունը նախապատրաստում է հարվածել Սովետական Ադրբեջանին անգլո-պարսկական, հայկական, հնարավոր է և վրացական միացյալ ուժերով: Այդ հարվածը կատարվելու է, երբ անգլո-շահական ուժերը մոտենան նախկին ռուսա-

[7] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 2:

կան սահմանին և կապ հաստատեն Հայաստանի հետ: Ադրբեջանի վրա հարձակվելու և Բաքուն գրավելու նպատակով Անգլիան Բաղդադում կենտրոնացրել էր 300 ռազմական ինքնաթիռ: Փաստաթղթի հեղինակների տրամաբանությամբ պարզվում է, որ Անգլիան ցանկանում է Ադրբեջանը գրավել ու Թուրքմենստանի հետ հանձնել Թուրքիային: Իհարկե, ոչ քեմալականներին, այլ սուլթանական Թուրքիային: Պանիսլամական շարժում սկսելու և այն Սովետական Ռուսաստանի դեմ ուղղորդելու նպատակով էլ Անգլիան և միջազգային իմպերիալիզմը ցանկանում էին ոչնչացնել քեմալական շարժումը: Արևելքում հեղափոխության դեմ Անգլիայի ղեկավարությամբ սկսվելիք «սրբազան պատերազմը» կանխելիս միջոց է նկատվում Անգլիայի ու նրա դաշնակիցների դեմ «հեղափոխական սրբազան պատերազմ» հայտարարելը: Ահա թե համաշխարհային հեղափոխության ու հակահեղափոխության ինչ կիզակետում կամ խաչմերուկում էր հայտնվել Անգլիայի «դաշնակից» Հայաստանը: Պարզ է, որ Անգլիային ոչինչ անել չէին կարող: Ինչ վերաբերում է շահական Պարսկաստանի զորքերին, ապա նշեցինք, որ 1920թ. սեպտեմբերի կեսերին նրանք Ռաշտում և Էնզելիում գլխովին ջարդել ու երկրից դուրս էին քշել բոլշևիկյան զորքերին, ուստի մնում էր միայն նրանց «դաշնակից» Հայաստանը: Այդ պատճառով էլ փաստաթղթի 6-րդ և վերջին մասն ամբողջությամբ նվիրված է Հայաստանի դեմ հեղափոխական ուժերի գործողություններին: Հայաստանի դեմ ապագա ռազմական գործողությունների ծրագիրը հիմնավորվում է հետևյալ կերպ. «Սովետական Ռուսաստանի և համաշխարհային հեղափոխության համար նման մահացու հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է. 1. Ինչ էլ որ արժենա՝ ամենաարտակարգ միջոցներով պաշտպանել հանգչող ազգային շարժումը Թուրքիայում: 2. Կանխել անգլո-շահական զորքերի միացումը Հայաստանին և Վրաստանին: Ինչպես մեկին, այնպես էլ մյուսին կարելի է հասնել միայն Թուրքիայի ազգայնական զորքերի հետ դաշնակցած Հայաստանի վրա հարձակման միջոցով: Այն պետք է կատարվի իր ժողովրդին ճնշող ու հարստահարող դաշնակցության լուծը տապալելու դրոշի ներքո և հեղափոխական Թուրքիային միանալու նպատակով»: Ասված է պարզ ու հասկանալի՝ «Թուրքիայի զորքերի հետ միասին պետք է հարձակվենք Հայաստանի վրա»: Նաև նշվում է նախահարձակ լինելու անհրաժեշտությունը. «Հայաստանի վրա հարձակումը, բացի թուրքական ազգայնական շարժումը փրկելուց, մեզ հնարավորություն կտա առանձին-առանձին ջարդելու թշնամիներին, որոնք պատրաստվում են մեզ վրա հարձակվելու միասին: Հայաստանը շարքից դուրս կգա ավելի շուտ, քան կհասնեն անգլո-շահական զորքերը, իսկ Վրաստանը, որին մենք չենք դիպչի այդ հարձակման ժամանակ, կվախենա խառնվելու այդ պայքարին: Բացի դրանից, Հայաստանի վրա

հարձակումը կլինի շատ ավելի դյուրին, քան թե նրանից պաշտպանվելը»: Այս վերջին մասով փաստաթղթի հեղինակներն իրավացի են, որովհետև աչքի առաջ ունեին զանգեզուրյան հերոսական ինքնապաշտպանությունը: Եթե Զանգեզուրի ժողովրդական վաշտերը կարող էին դիմակայել բոլշևիկյան կանոնավոր զորքերին, ապա Հայաստանի 30-հազարանոց բանակը կարող էր կռվել և հաղթել: Եթե սրան էլ գումարենք հայ-վրացական հնարավոր ռազմական դաշինքը, ապա պարզ կդառնա, թե ինչու էին հեղափոխականները 1920թ. մայիս ամսից սկսած այդքան խնամքով նախապատրաստում Հայաստանի դեմ իրագործվելիք քաղաքական խարդավանքները: Դրա վկայությունն է նաև ռազմական գործողությունների բուն ծրագիրը, որը մեջ ենք բերում ամբողջությամբ. «Ռազմական գործողությունները մեր կողմից ոչ մի լրացուցիչ ուժ չեն պահանջի: Ըստ էության դրանք կիրագործվեն թուրքական էրզրումյան կորպուսի միջոցով: Մեր կողմից հարձակումը կլինի մոտավորապես ցուցադրական, որի համար մեր ուժերը բավական են:

...Դիվանագիտական առումով Արևմտյան Եվրոպայի հասարակության դժգոհության փոթորիկը դիմակայելու նպատակով Հայաստանի վրա հարձակումը պետք է իրագործվի հետևյալ ձևով. թուրքական զորքերը սկսում են հարձակումը Հայաստանի վրա, իսկ մենք մեր մամուլի և հրապարակայնության մյուս օրգանների միջոցներով ահավոր աղմուկ ենք բարձրացնում Եվրոպայում նոր հայ-թուրքական կոտորածների և դրանք մեկընդմիշտ կանխելու անհրաժեշտության մասին: Եվ այդ կոտորածներին վերջ տալու նպատակով մեր զորքերը Հայաստան են մտնում նրա զորքերի կողմից անպաշտպան մնացած արևելյան սահմանից: Ազգայնական պատերազմը կանխվում է, և դրա փոխարեն հաստատվում է խորհրդային իշխանություն: Այնուհետև, մենք թուրքական զորքերը դուրս կբերենք Հայաստանի սահմաններից (ինչին թուրքերը կենթարկվեն անվերապահորեն) և հայերի ու թուրքերի հետագա բախումը կանխելու համար մեր զորքերով գրավում ենք հայ-թուրքական սահմանը: Այսպիսով մենք արևմտաեվրոպական պրոլետարիատի աչքում կհառնենք խաղաղարարի արտակարգ ազնիվ դերում, որը դեպի Հայաստան է շարժվել միայն նրա համար, որպեսզի վերջ դնի կոտորածներին և հայ ժողովրդի մնացած մասին փրկի վերջնական ոչնչացումից»[8]: Որքան էլ մեզ զայրացնի այս ծրագրի հեղինակների քաղաքական անբարոյականությունը, այնուամենայնիվ, պետք է զսպենք զգացմունքները և սթափ գնահատական տանք Հայաստանը պարտության մատնելու բոլշևիկյան այս ծրագրին: Սկսենք այն բանից, թե ինչ անհրաժեշտությամբ էր պայմանավորված Բաքվում այդ խառնաժողովի հրավիրումը և նրա թելադրանքով կազմելու, իրականության հետ որևէ կապ չունեցող, քաղաքական

[8] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7 թ. 2-3:

այս եզրակացությունը: Բանն այն էր, որ այդ համագումարով բոլշևիկները ձգտում էին ազդել եվրոպական պետությունների վրա, որպեսզի կանխեն նրանց կողմից ստորագրված Սևրի պայմանագրի իրականացումը: Հարկավոր էր նրանց և հատկապես Անգլիային ցույց տալ, որ կենսունակ Հայաստան ստեղծելու դեպքում նրանց դեմ է կանգնելու ողջ մուսուլմանական Արևելքը: Համոզված լինելով, որ Անգլիայի շահերը թույլ չեն տա դեմ գնալու մուսուլմանական աշխարհի կամքին և ագրեսիայի ժամանակ նրանք ձեռնպահ կմնան Հայաստանին օգնելուց:

Բացի դա, Հայաստանն ուներ լավ զինված բանակ, որը կարող էր պաշտպանել հայրենիքը և նույնիսկ պարտության մատնել քեմալա-բոլշևիկյան ցնցոտիավոր զորքերին: Բայց բոլշևիկները գիտեին, որ հայկական բանակը ունի խոցելի տեղ՝ դա նրա ռուսական կողմնորոշումն էր: Պատահական չէ, որ գեներալ Դենիկինն ասում էր, թե դա իր բանակն է: 1919թ. հայոց բանակի գլխավոր շտաբում մշտապես դրված էր Դենիկինի տեղաշարժերի քարտեզը: Այդ պատճառով էլ անհրաժեշտ էր հայկական բանակին ցույց տալ, որ քեմալական ու բոլշևիկյան զորքերը միասին են հարձակվում Հայաստանի վրա: Բոլշևիկները լավ գիտեն, որ նման գործողությունները և քարոզչությունը մեծապես ազդելու է հայոց բանակի մարտունակության վրա: Այնպես որ, հաշվի էին առնված Հայաստանը մեկուսացնելու, բարոյալքելու, պարտության մատնելու բոլոր գործոնները: Դրա վկայությունն է նաև, որ այս փաստաթուղթը Մոսկվա ուղարկելուց երեք օր հետո՝ 1920թ. սեպտեմբերի 20-ին Բաքվում գտնվող ՀԿ (բ)Կ Կենտկոմի անդամների ստորագրությամբ «հույժ գաղտնի» հետևյալ հրահանգն է տրվում Հայաստանի կոմունիստական կուսակցության բոլոր կազմակերպություններին. «Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցության բոլոր կազմակերպություններին թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոտիներում և հատկապես Կարսի գարնիզոն մեկնող բոլշևիկներին, անհատ զինվորների շրջանում և առանձին հավաքույթներում, եթե հնարավոր է նաև թռուցիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պատերազմի՝ հիմնական խնդիր դարձնելով. 1. Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի: 2. Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է և պայքարում է իր ազգային ազատության համար՝ ընդդեմ իմպերիալիզմի (Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի): 3. Հանրապետական Հայաստանի ուժեղացումը և հաղթանակը Թուրքիայի նկատմամբ կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվտանգվի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում, ապա նաև Արևելքի խորհրդայնացումը: 4. Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը

պետք է լինի արագացնել Հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը: Այս նպատակի համար պետք է. 1. Կազմալուծել հայկական կռվող բանակը բոլոր միջոցներով, այն է՝ ա) կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին, բ) ռազմաճակատում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը, հեռանան թիկունք, գ) չենթարկվեն սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնեն նրանց: 2. Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել Հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասկյարը հեղափոխական ասկյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որևէ գործողություն պարտված երկրի վերաբերյալ, այլ կոժանդակի աշխատավոր հայ ժողովրդին ազատվելու իմպերիալիզմի գործակալ դաշնակցականների տիրապետությունից: 3. Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցականների տիրապետությունից ազատվելով Հայաստանն ընդմիշտ կկապվի Խորհրդային Ռուսաստանի հետ, վերջ կտրվի պատերազմին ու սովին, ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլիանա Ռուսաստանի հացով և մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործին»: Որ ՀԿ(բ)Կ Կենտկոմի հայ բոլշևիկներին հղած այս ազգադավ հրահանգը բխում էր Արևելքի ժողովուրդների պրոպագանդայի և գործողության խորհուրդի նախագահության կողմից 1920թ. սեպտեմբերի 17-ին Բաքվում կազմված եզրակացությունից՝ կարծում ենք որևէ կասկած չի հարուցում: Սա նշանակում է, որ այդ փաստաթուղթը կազմելուց և Մոսկվայի հաստատմանն ուղարկելուց հետո այլևս անմիջապես դրվել էր գործողության մեջ: Հայաստանը պարտության մատնելու այս ծրագիրը դարձավ բոլշևիկների ու քեմալականների համար հետագա գործողությունների ուղեցույց: Ովքեր կասկածում են բանակը դասալքելու բոլշևիկների կարողությանը, թող հիշեն, թե 1917թ. նրանք ինչպես դասալքեցին ռուսական բանակը: Սկզբից կայացավ Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարը, որը որոշեց, որ Հայաստանը միջազգային իմպերիալիզմի դաշնակիցն է և պետք է պարտության մատնվի: Այնուհետև այդ ոգով կազմվեց և Մոսկվա ուղարկվեց համաշխարհային հեղափոխական ուժերով Հայաստանի Հանրապետությունը պարտության մատնելու ծրագիրը: Այս ծրագրի իրականացումը, շարունակությունը և ավարտական փուլն էր հանդիսանալու 1920թ. մայիսից Հայաստանի նկատմամբ բոլշևիկների վարած քաղաքականության: Հայաստանը պարտության մատնելու այս ծրագիրը Մոսկվա ուղարկելուց և հավանության արժանանալուց մի քանի օր հետո քեմալական զորքերը Ք. Կարաբեքիրի հրամանատարությամբ հարձակվեցին Հայաստանի վրա: Քեմալական զորքերի արշավանքը Հայաստանի վրա ուղեկցվում էր կարմիր դրոշ-

ներով և հեղափոխական լոզունգներով: Այդ ամենին կանդրադառնանք հաջորդ գլխում: Այժմ տեսնենք, թե Հայաստանի կառավարությունը արդյոք տեղյա՞կ էր իր դեմ նյութվող այս դավերին: Հարկ է նկատել, որ Բաքվում կազմված այս ծրագրի մասին Հայաստանի կառավարությունը տեղյակ չի եղել, այլապես այն տեղ կգտներ ժամանակի քաղաքական գործիչների գրքերում կամ հուշերում: Բայց այս հանգամանքը չի նշանակում, որ 1920թ. մայիսից բոլշևիկների դիվանագիտական սիրախաղին բոլորն էին հավատում: Հայաստանի կառավարությունը գիտեր, որ բոլշևիկները չեն ճանաչում Հայաստանի անկախ գոյությունը, բայց չգիտեին, որ նման ծրագիր է կազմվել Բաքվում: Չնայած կան փաստեր, որոնք ցույց են տալիս, որ առանձին գործիչներ կռահել են բոլշևիկների մտադրությունները: 1920թ. սեպտեմբերի 25-ին Մոսկվայում Հայաստանի Հանրապետության ժամանակավոր դիվանագիտական ներկայացուցիչ Եղ. Եղիազարյանին հղած նամակում Տ. Բեկզադյանը նշում է. «Սովետական զորքերը Դիլիջանի և Քարվանսարայի շրջանում, իսկ տաճկական զորքերը Օլթիի, Սարիղամիշի և Շահթահթի շրջանում շարունակում են իրենց անընդհատ հարձակումները մեր տարածքների վրա: Մեր բողոքներին Լեգրանից միշտ ստանում ենք մի պատասխան, որ կամ դրանք պատահական միջադեպեր են, կամ թե չէ նախահարձակը մենք ենք եղել և ոչ իրենք: Քարվանսարայի շրջանում դրանք ունեն մի ինչ-որ Վելիկանով հրամանատար, որը հասել է այնպիսի խելառության, որ մոռանալով բոլոր օրենքները՝ հայտարարում է մեր զորամասերի պետին, որ նա թողնի Հայաստանին պատկանող գյուղերը և հեռանա, հակառակ դեպքում խոստանալով բոլոր հայ գերիներին գնդակահարել: Մեր ընդհանուր կարծիքն է, որ այժմ արդեն Լեգրանն է ձգձգում իր Հայաստան գալը և միաժամանակ ինչ-որ դավադիր ծրագիր է իրագործում, օգակելով Հայաստանը ռուսական և տաճկական զորքերով, և երբ նա (Հայաստանը) ստիպված կլինի շնորհիվ իր նեղ կացության իր դեմ կռվողներից ողորմություն հայցել, ահա այդ պահին գնալ Հայաստան և առաջարկել իր բարեկամության պայմանները»: Այնպիսի տպավորություն է ստացվում, որ կարծեք Տ. Բեկզադյանը ծանոթ է եղել սեպտեմբերի 17-ի փաստաթղթի բովանդակությանը, սակայն այս նամակի հետագա ընթերցումը ցույց է տալիս, թե նրան թվում է, որ Մոսկվան այդ դավադիր ծրագրից տեղյակ չէ, և որ այդ ճանապարհով Հայաստանի պարտությանն են ձգտում Անդրկովկասի բոլշևիկները և Լեգրանը: «Մենք ենթադրում ենք,– իր միտքն է շարունակում Տ. Բեկզադյանը,– որ կենտրոնը տեղյակ չէ այդ դավադիր ծրագրերին և հազիվ թե նրան ստույգ տեղեկություններ են տրվում: Ինչքան Չիչերինի տոնը մեղմ է, թեկուզ և թվում է, որ այդ մեղմությունն էլ արհեստական է, այնքան նրա այստեղի ներկայացուցիչների տոնը, մեծի թե փոքրի, ռուսի թե հայի,

շատ է խրոխտ, պահանջկոտ, կտրուկ և ագրեսիվ»[9]: Հայաստանի վերաբերյալ Մոսկվայի և Բաքվի բոլշևիկների միջև եղած տարակարծության խաբկանքը չորս ամիս շարունակ մոլորության մեջ է պահում Հայաստանի կառավարությանը: Այդ էր գլխավոր պատճառը, որ նրանք առանց կռվի բոլշևիկներին հանձնեցին Ղարաբաղ – Զանգեզուր – Նախիջևան ստրատեգիական գիծը: Այդ խաբկանքը վերջնականապես ցրում է Եղ. Եղիազարյանը: 1920թ. հոկտեմբերի 20-ին Մոսկվայից վարչապետ Օհանջանյանին հղած նամակում նա նշում է. «Ինչպես երևում է, Ձեզ մոտ այդտեղ մտածում են, որ Հայաստանի սահմանների վրա սովետական զորքերի կողմից կատարվող հարձակումները տեղական իշխանությունների կամ թե զինվորական հրամանատարության ձեռքի գործն է: Դա ամբողջապես սխալմունք է: Ամեն ինչ արվում է կենտրոնի ցուցումով»: Լ. Շանթի պատվիրակությունը Մոսկվայից դուրս էր եկել 1920թ. օգոստոսի 11-ին: Օգոստոսի 17-ին Եղ. Եղիազարյանը Հայաստանի կառավարության կողմից նշանակվել է ՌՍՖՍՀ-ում Հայաստանի ժամանակավոր դիվանագիտական ներկայացուցիչ: Եղիազարյանը գործի անցնելով՝ մի քանի գրություններով կառավարությանը տեղյակ է պահում, որ Մոսկվայի ու Անդրկովկասի բոլշևիկ ղեկավարների գործողություններում տարակարծություն չկա: Բայց դրանից հետո էլ տարածում գտավ չհիմնավորված այն կարծիքը, թե իբր Հայաստանի հարցում տարակարծություն կա մոսկովյան ղեկավարների շրջանում: Այս վարկածի հեղինակը կրկին Շանթի պատվիրակության անդամներն էին: Ահա թե այդ մասին 1920թ. հոկտեմբերի 25-ին Տ. Բեկզադյանը ինչ է հայտնում Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Հարությունյանին. «Շանթի պատվիրակության տպավորություններից և նրա ունեցած բանակցություններից պարզվեց, որ այնքան էլ ճիշտ չէր մեր այն ընդունված տեսակետը, որ իբր սովետական կենտրոնը բարյացակամ վերաբերմունք ունի դեպի Հայաստանի Հանրապետությունը (երեք ամիս շարունակ Շանթի պատվիրակության անդամները կառավարությանը հղած գրություններում հակառակն էին պնդում): Երևում է, որ այս հարցում սովետական կենտրոնը միակարծիք չէ: Լենինը, Չիչերինը, Կարախանը բարյացակամ վերաբերմունք ունեն դեպի մեր դատը և Հայաստանի անկախությունը: Տրոցկին գլուխ անցած զինվորական ուժերի դեմ է, թե անկախ Հայաստանի և թե անկախ Վրաստանի գոյությանը... Թե այս տեսակետներից որին է կողմնակից Լեգրանը, այժմ մի քիչ դժվար է որոշել: Սակայն ուշագրավ է հետևյալ հանգամանքը: Շանթի Հայաստան վերադառնալուց հետո պետք էր ենթադրել, որ Լեգրանն էլ անմիջապես կտեղափոխվի Հայաստան, մեր կառավարության հետ վերջնական համաձայնության գալու նպատակով:

[9] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 191, թ. 38:

Բայց դա տեղի չունեցավ: Լեգրանի Հայաստան գալը հետաձգվեց Բաքվում Արևելքի ժողովուրդների համագումարին մասնակցելու պատրվակով, ի դեպ, այդ համագումարի արդյունքն այն եղավ, որ մինչ այդ ենթադրական և ոչ այնքան պարզ հարաբերությունները բոլշևիկների և Քեմալի միջև կոնկրետ ձև ստացան:

Այսօր արդեն մենք կանգնած ենք տաճկա-բոլշևիկյան այդ ռեակցիոն բլոկի վտանգի առաջ... Տաճկական առաջխաղացման հետ պետք է կապել Լեգրանի հետագա ձգձգումները: Մեր դրությունը շատ վտանգավոր կլինի, եթե տաճիկների հետ միասին քաղաքական բարդություններ առաջանան մեր և Սովետական Ռուսաստանի միջև... Պետք է նկատի ունենալ, որ մեր ժողովրդի և բանակի դիմադրության թափը կկոտրվի, եթե Սովետական Ռուսաստանը հայտարարի, որ մեզ հետ գտնվում է պատերազմական դրության մեջ»[10]: Հետաքրքիր է, թե շարադրության նմանվող այս գրությունն ինչ նպատակով է գրել Տ. Բեկզադյանը հոկտեմբերի 25-ին, երբ արդեն Հայաստանը կանգնել էր կատարված փաստի առաջ: Նույնիսկ Մոսկվայում Հայաստանի ներկայացուցչի զգուշացումից հետո, որ «ամեն ինչ արվում է կենտրոնի ցուցումով», Տ. Բեկզադյանը (և ոչ միայն նա) կարծում է, որ. «Լենինը, Չիչերինն ու Կարախանը բարյացակամ վերաբերմունք ունեն դեպի մեր դատը և Հայաստանի անկախությունը»: Նման գեղարվեստական մոտեցումը զարմանալի է ոչ միայն պետական գործի ընկալման առումով, այլ նաև այն պատճառով, որ Բեկզադյանը, գործելով Թիֆլիսում, տեսնում է, որ 1920թ. օգոստոսից վրաց իրականությունը փոթորկվում էր տաճկա-բոլշևիկյան մոտեցող վտանգի դեմ և կոչում էին հայ-վրացական դաշինքի ստեղծման՝ ընդդեմ մոտեցող ընդհանուր վտանգի: Ճիշտ է, վրաց մամուլը հայ-վրացական դաշինքի մասին աղմկեց այնքան ժամանակ, մինչև պարզ դարձավ, որ Հայաստանի դեմ հարձակման ժամանակ Վրաստանին չեն դիպչի: Այդ մասին հստակ նշված էր քննարկված փաստաթղթում: Այստեղ հայ-վրացական հնարավոր դաշինքի պատմությանը չենք անդրադառնա, որովհետև եթե բոլշևիկները ծրագրել էին հայկական բանակը դասալքել, որը և կյանքում իրագործվեց, ապա հայ-վրացական դաշինքը ոչինչ անել չէր կարող, որովհետև մարտունակը հայկական բանակն էր: Ուստի խոսքը Վրաստանին չի վերաբերում, որը իր տարածքներին չդիպչելու երաշխիքներն ստանալուց հետո մերժեց քեմալականների կամ բոլշևիկների դեմ դաշինք ստեղծելու Հայաստանի առաջարկությունները[11]: Բոլորովին այլ բան է, որ Հայաստանի կառավարությունը մինչև վերջին պահը հավատում էր, որ

[10] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 191, թ. 94-95:

[11] Տե՛ս *Կ. Սարդարյան,* Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921թթ., Եր. 2002:

Անդրկովկասի համար կենաց ու մահի այդ պայքարում Վրաստանն իրավունք չունի Հայաստանին մենակ թողնելու: Ճիշտ այնպես, ինչպես հավատում էին, որ «Եվրոպան մենակ չպիտի ձգե Հայաստանը»: Այս տրամաբանությամբ էլ հավատում էին, որ նույնիսկ անհաջողությունից հետո հնարավոր է Ռուսաստանի օգնությամբ վերականգնել 1914թ. սահմանները: Քաղաքականություն կոչվող արվեստի հետ ոչ մի կապ չունեցող հոգեբանությունն ու դրանից բխող գործելակերպն էին պատճառը, որ հայկական բանակը խուսափեց բոլշևիկյան զորքերի հետ առճակատումից և օգոստոսի 10-ին Թիֆլիսում ստորագրված զինադադարով նրանց հանձնեց Ղարաբաղ – Զանգեզուր – Նախիջևան գիծը: Նախորդ գլխում արդեն նշեցինք, որ 1920թ. օգոստոսի 7-ին Հ. Օհանջանյանը հեռագրում է Թիֆլիս Տ. Բեկզադյանին. «Կարմիրների ուժերը շրջապատում են, աշխատեք զինադադար կնքել՝ չբացահայտելով պատճառները»: Հայաստանի կառավարության ղեկավարին թվում էր, թե դա այնպիսի մի քաղաքական հեռատես քայլ է, որի պատճառները բացահայտելու կարիք չկա: Այսինքն՝ բոլշևիկներին պետք չէր բացահայտել, թե իրենք ինչ պատճառով են խուսափում նրանց հետ կռվելուց: Օհանջանյանը չէր տեսնում, որ դրա պատճառները բոլշևիկներն իրենից լավ գիտեին ու, ինչպես տեսանք, այդ հոգեբանական գործոնի վրա կառուցեցին Հայաստանը պարտության մատնելու իրենց 1920թ. սեպտեմբերի 17-ի ծրագիրը: Իրադարձությունների վրա վճռական ազդեցություն ունեցած այս բարոյահոգեբանական գործոնին չեն անդրադարձել ո՛չ ժամանակի քաղաքական գործիչները և ո՛չ էլ ժամանակաշրջանը ուսումնասիրողները: Այսինքն՝ խորքային պատճառները մնացել են խորհրդավորության քողի տակ: Չվերլուծված և չշտկված պատճառները շարունակաբար ծնում են նույն հետևանքները: Չարիքը, որը ժամանակին վեր չի հանվում, կրկնվում ու կրկնակի չարիք է դառնում ժողովրդի գլխին: 1878թ. մինչև 1915թ. հայ հասարակական միտքն իր բոլոր գործոններով չհանրագումարեց ու չցուցանեց սեփական քաղաքական մոլորությունները ու սխալները: Այդ պատճառով էլ միջազգային ատյանների ու մեծ պետությունների օգնությամբ սեփական հարցերը լուծելու քաղաքականությունը նույնությամբ դրվեց գործողության մեջ Հայաստանի առաջին հանրապետության կառավարության կողմից և այն պետք է ունենար նույն ողբերգական հետևանքը: Երբեմն միտումնավոր ընդարձակ մեջբերումներ ենք անում պետական գործիչների ու դիվանագետների գրություններից, որպեսզի ընթերցողը տեսնի ու համոզվի, որ նրանց իրարամերժ ու հակասական մտքերից քաղաքական քառսից զատ այլ բան դժվար էր ակնկալել: Այդ գրություններից յուրաքանչյուր երկրորդը հակասում է առաջինին և այդպես շարունակ, բնական է, որ նման հակառակորդի հետ գործ ունենալը թուրքական դիվանագիտության և քաղաքական խարդավանքների վարպետ բոլշևիկների համար դժվար չէր: Մտքի ու գործելակերպի հակասության օրինակներով լեցուն է 1919-1920թթ. Հայաստանի Հանրապետության կառավարության վարած քաղաքականությունը: Որդեգրելով «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» կարգախոսը՝ նրանք բանակը և ժողովրդին դրել էին եվրոպական հրաշքին սպասող հայրենասիրական թմբիրի մեջ: Նույնիսկ մայիսյան իրադարձությունները նրանց չսթափեցրին ու չցուցանեցին, որ ազատությունն ու ժողովրդավարությունը ենթադրում են ուժեղ ու կենտրոնաձիգ պետություն: Խորհրդարանում տեղի, անտեղի խոսում էին անգլիական տիպի ժողովրդավարական պետություն ունենալու մասին՝ առանց հասկանալու դրա իմաստն ու բովանդակությունը: Այս ամենը ապակենտրոն ժողովրդավարության հայկական մոդելի արտացոլումն էր: Չկար ծանր մարտահրավերները դիմակայելու ուժեղ, կենտրոնաձիգ պետությունը: Ժամանակակիցներն ասում են, որ իբր մայիսյան բոլշևիկյան խռովությունը իրենց ուշքի բերեց և որպես հիմնական փաստարկ են բերում կառավարության նախագահի փոփոխությունը և մի քանի բոլշևիկների ձերբակալությունը: Իրականում Խատիսյանին Օհանջանյանով փոխարինելով չփոխվեցին կառավարման ձևերն ու մեթոդները: Օհանջանյանի կաբինետը կատարվածը չվերլուծեց իր բոլոր գործոններով և ամենակարևորը՝ չարվեց այն հետևությունը, որ բոլշևիկները բանակում էին աշխատում, ու իրականում դա բանակային խռովություն էր: Այդ ամենը մենք փաստերով ապացուցեցինք առաջին գլխում: Այստեղ այդ հարցին կրկին անդրադառնում ենք՝ ցույց տալու համար, որ մայիսից հետո բանակում փոփոխություններ չկատարելով, կառավարությունը արմատախիլ չարեց նրանում տիրող բոլշևիկյան տրամադրությունները: Բնականաբար, այդ տրամադրություններն ավելի խորացան այն բանից հետո, երբ Հայաստանի կառավարությունը խուսափեց բոլշևիկյան զորքերի հետ բախումից: Ժողովրդի մեջ եղած բոլշևիկյան տրամադրության մասին: Ակնհայտ է, որ ժողովրդի մեջ եղած բոլշևիկյան տրամադրության պատճառով էր, որ 1920թ. օգոստոսի 7-ին Օհանջանյանը հրահանգում էր Բեկզադյանին ռուսների հետ ստորագրել զինադադար՝ «չբացահայտելով պատճառները»: Մինչ այդ էլ մենք հանդիպել ենք նման փաստերի, բայց դժվար է ասել՝ նման տրամադրությունները կառավարությունի՞ց էին անցնում ժողովրդի մեջ, թե՞ հակառակը: 1920թ. հուլիսի 6-ին Բեկզադյանը Օհանջանյանին հղած վերոհիշյալ նամակը եզրափակում է այսպես. «Որ Մոսկվան Ադրբեջանի փաստաբանն է, ուրեմն և Թուրքիայի և գործում է ի վնաս Հայաստանի անկախության՝ հերիք է մեր ժողովրդին զգաստացնելու և նրա մեջ եղած բոլշևիկյան տրամադրությունը հոդս ցնդեցնելու»: Այսպես թե այնպես, տեսնում ենք, որ այդ տրամադրությունները գոյություն ունեին, իսկ կառավարությունը ոչ

միայն դրանք հօդս չցնդեցրեց, այլև հետագա գործունեությամբ նպաստեց դրանց խորացմանն ու ամրապնդմանը: Ու այս վիճակի բուն պատճառը ոչ այնքան հայ ժողովրդի մեջ եղած ռուսական կողմնորոշումն էր, որքան կառավարության վարած խուսանավող քաղաքականությունը: Այս առումով Օհանջանյանի կաբինետը ոչնչով չէր տարբերվում Խատիսյանի կառավարությունից: Երկուսի մոտ էլ բացակայում էին պետական քաղաքականության չափանիշները: Իհարկե, քեմալականներին և բոլշևիկներին քննադատելը տեղին է, բայց չէ՞ որ կարևորն այն է, թե ինչո՞վ էր զբաղված ու ի՞նչ էր անում Հայաստանի կառավարությունը: Լեգրանի հետ կապված պատմությունից մենք տեսանք, որ հուլիս-օգոստոսին Հայաստանի կառավարությունը տարբեր պատճառաբանություններով նրան չընդունեց: Իհարկե, իրերի նման դասավորության համար «մեղքի» իրենց բաժինն ունեին քեմալականները և Ադրբեջանը: Վերջինը 1920թ. օգոստոսին երկու պատվիրակություն ուղարկեց Մոսկվա՝ հայ-ռուսական հնարավոր պայմանագրի կնքումը խափանելու նպատակով: Արտաքին գործերի ժողկոմ Հ. Հուսեյնովի պատվիրակությունը Ադրբեջանի Հեղկոմի ու բոլշևիկների անունից էր պահանջներ ներկայացնում, իսկ Հ. Հաջինսկու գլխավորած անկուսակցական պատվիրակությունը պնդում էր, որ «Ադրբեջանի մուսուլմանների համակրանքը գրավելու միակ միջոցն այն է, թե Ադրբեջանին միացվեն ոչ միայն Ղարաբաղը և Զանգեզուրը, այլև Նախիջևանը, Շարուրը և Սուրմալուն»[12]: Մոսկվայից վերադառնալուց հետո Հուսեյնովը Բեկզադյանի հետ հեռախոսով պայմանավորվում է վիճելի տարածքային հարցերը քննարկելու համար օգոստոսի 20-ին Ղազախում գումարել հայ-ադրբեջանական կոնֆերանս. Բեկզադյանի այս հաղորդագրությանը Օհանջանյանը պատասխանում է, որ «այդ կոնֆերանսը գտնում է վաղաժամ, քանի դեռ չի կնքվել դաշնագիր Ռուսաստանի և Հայաստանի միջև»[13]:

Օգոստոսին Ադրբեջանը դադարեցնում է Հայաստանին նավթի և մազութի մատակարարումը, ինչի պատճառով գրեթե դադարում է երկաթուղային երթևեկությունը: Նույն օգոստոսի 20-ին Բաքվից Երևան է գալիս բոլշևիկ Հ. Դովլաթյանը՝ Հայաստանի կառավարության հետ բանակցելու Ադրբեջանի ներկայացուցչության գործունեությունը վերսկսելու նպատակով: Նա, մերժում ստանալով, մեկնում է Բաքու: Փաստորեն, գլխավոր իրադարձությունները տեղի էին ունենում օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, այսինքն՝ Սևրի պայմանագիրը ստորագրելուց հետո, որը տոնական տրամադրություն էր հաղորդել Հայաստանին: Օգոստոսի 10-ի զինադադարից հետո էլ չեն դադարում կանոնավոր և անկանոն խմբերի անընդհատ հարձակումները Հայաստանի վրա Թուրքիայի և Ադրբեջանի կողմից: Օգոստոսին Օհանջանյանը մի քանի բողոքի հեռագիր է ուղարկում Չիչերինին: Նա հատկապես նշում է Ղարաբաղի և Զանգեզուրի գյուղացիների դեմ գործվող վայրագությունները և խնդրում է կանխել դրանք: Օգոստոսի 17-ի բողոքի նոտայում նշվում է Հայաստանի սահմանների դեմ մշտապես կատարվող հարձակումների մասին, որոնցով խախտվում էր օգոստոսի 10-ի զինադադարի համաձայնագիրը: «Հայ ժողովուրդը,– նշված է օգոստոսի 17-ի բողոքի նոտայում,– միշտ անկեղծ զգացմունքներ է ունեցել դեպի ռուս ժողովուրդը և այժմ չի կարող թաքցնել իր բուռն զայրույթը բոլշևիկների արարքների հանդեպ»[14]: Օգոստոսից մինչև սեպտեմբերի 13-ը, երբ թուրքական զորքերը հարձակվեցին Օլթիի վրա, անընդհատ հարձակումները Հայաստանի տարածքների վրա չէին դադարեցվում: Հենց որ Բաքվում ավարտվեց Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարը և Խալիլ փաշան Քեմալին հայտնեց Հայաստանի վերաբերյալ համագումարի որոշումները, էրզրումյան կորպուսի հրամանատար Ք. Կարաբեքիրը Հայաստանի վրա հարձակման հրաման ստացավ: Ընթերցողի մոտ բնական հարց կառաջանա այն առումով, թե ինչպես Հայաստանի Հանրապետությունը պարտության մատնելու ծրագիրը Բաքվում կազմվեց և Մոսկվա ուղարկվեց սեպտեմբերի 17-ին, իսկ քեմալական զորքերը Հայաստանի վրա հարձակվեցին դրանից չորս օր առաջ: Առաջին հայացքից հակասություն կա այս ամենի մեջ, բայց դա միայն առաջին հայացքից, որովհետև քեմալականները Օլթիի շրջանը Հայաստանի կողմից գրավված թուրքական տարածք էին համարում: Բնավ պատահական չէ, որ Օլթիի շրջանը առանց որևէ դժվարության գրավելուց հետո քեմալական զորքերը չշարունակեցին հարձակումը և դադար տվեցին: Այդ մասին կխոսենք հաջորդ գլխում, այստեղ միայն ասենք, որ այս քայլով քեմալականները նաև ստուգում էին, թե բոլշևիկները արդյոք հավատարի՞մ են Բաքվի համագումարի՝ Հայաստանին վերաբերող որոշումներին: Քեմալականներին նաև անհրաժեշտ էր ստուգելու Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունների վերաբերմունքը: Այսինքն՝ քեմալականները Հայաստանի դեմ ծավալելիք վճռական գործողություններից առաջ ստուգում էին ինչպես դաշնակիցներին, այնպես էլ «թշնամիներին»: Այնպես, որ սեպտեմբերի 13-ին Օլթիի դեմ սկսած գործողությունները բնավ չէին հակասում սեպտեմբերի 17-ին Բաքվում կազմված փաստաթղթի ոգուն: Ավելին, ինչպես հիշում եք, փաստաթղթում նշված էր, որ թուրքական էրզրումյան կորպուսի՝ Հայաստանի վրա հարձակումից հետո իրենք պետք է հանդես գան հաշտարարի դերում: Այդ պատճառով էլ սեպտեմբերի 17-ի ծրագիրը պետք է Մոսկվայի կողմից հաստատվեր միայն այն ժամանակ, երբ թուրքական

[12] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 31-32:
[13] Նույն տեղում:
[14] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 608, թ. 29:

վտանգը կախված կլիներ Հայաստանի և հայ ժողովրդի գլխին: Ահա, երբ սեպտեմբերի 27-ին թուրքական զորքերը հարձակվում և ընդամենը երեք օրում գրավում են Սարիղամիշը, Կաղզվանը և Արդահանը, իսկ հայկական զորքերն առանց մարտի դասալքվում ու խուճապահար փախչելով լցվում են Կարսի ամրոցը, գալիս է Հայաստանը և հայ ժողովրդին թուրքական վտանգից «պաշտպանելու» պահը:

1920թ. հոկտեմբերի 14-ին Մոսկվայում ՌԿ (բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն քննարկում է Հայաստանում ստեղծված կացության հարցը և հաստատում է Հայաստանի վերաբերյալ Չիչերինի արած հետևյալ երեք առաջարկությունները. «1.Համաձայնել Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու անհրաժեշտության մասին ՀԿԿ Կենտկոմի և ՌԿ (բ) Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի կարծիքի հետ: 2. Նրան (Հայաստանին) քաղաքական օգնություն ցույց տալ թուրքերի հետագա առաջխաղացումը կասեցնելու համար: 3. Պաշտպանել նոր սովետական կառավարությունը»: Եթե նկատի ունենանք, որ այս որոշումը կայացնելու նախորդ օրը Մոսկվայում կայացել էր խորհրդակցություն քաղբյուրոյի անդամների և Բաքվի Արևելքի ժողովուրդների համագումարի 27 պատգամավորների մասնակցությամբ, ապա պարզ կդառնա, որ 1920թ. հոկտեմբերի 14-ի քաղբյուրոյի որոշումը հաստատումն էր սեպտեմբերի 17-ին Բաքվում կազմած փաստաթղթի: Ու քանի որ վերջինը կազմվել էր խիստ գաղտնի ու հրապարակման ենթակա չէր, ուստի միանգամայն հասկանալի է, թե ինչու՞ քաղբյուրոյի որոշման մեջ ոչ մի խոսք չկար այդ փաստաթղթի մասին: Պատահական չէ, որ քեմալական զորքերը հոկտեմբերի 1-ին դադարեցրին հետագա հարձակումը: Ինչի՞ էին սպասում նրանք: Իրադարձությունների համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քեմալականները սպասում էին Հայաստանի մասին Մոսկվայի որոշմանը: Այդ մասին փաստարկված կխոսենք համապատասխան տեղում: Իրադարձություններից առաջ անցանք ու փաստերի հերթականությունը խախտեցինք, որպեսզի ընթերցողն ամբողջական պատկերացում կազմի «համաշխարհային իմպերիալիզմի դաշնակից, դաշնակցական Հայաստանը» պարտության մատնելու, իսկ հետո Հայաստանի մնացած մասը խորհրդայնացնելով փրկելու ծրագրի մասին: Մենք դեռ կանդրադառնանք 1920-1921թթ. Հայաստանում բոլշևիկների կատարած հանցանքներին, որոնք բխում էին այս ծրագրից: Բայց միայն բոլշևիկներին ու քեմալականներին քննադատելը զգացմունքային զեղում կլինի, ինչն արել են ժամանակի հայ քաղաքական գործիչներն իրենց գրքերում: Նրանք մոռանում են, որ կատարվածը 1919-1920թթ. իրենց վարած անհեռատես քաղաքականության հետևանքներն էին: 1919թ. քանի անգամ են Անդրկովկասում Անգլիայի ներկայացուցիչ գեներալները Հայաստանի ղեկավարներին հորդորել, թե

«մի ասեք՝ իբր մենք ձեր դաշնակիցներն ենք»: Զգուշացնելով, որ նախնման մոտեցումն իրականությանը չի համապատասխանում և բացի դա այն հղի է ծանր հետևանքներով Հայաստանի համար: Նույնիսկ Թալեաթը 1918թ. հոկտեմբերին Պոլսում գտնվող Խատիսյանին ասում է. «Շատ մի ոգևորվեք: Ճիշտ է, մենք պարտվել ենք, բայց դա ձեր հաղթանակը չէ»: Չնայած բազում զգուշացումներին՝ հայ քաղաքական գործիչները ոչ միայն չէին հասկանում, թե դրանով նրանք ինչ էին ուզում ասել, այլ արհամարհում էին այդպիսի կարծիք հայտնողներին: Երկու տարի շարունակ Հայաստանի կառավարությունը պնդեց ու տարածեց, թե հաղթանակած պետությունները իր մեծ դաշնակիցներն են ու ելնելով դրանից՝ արհամարհեց տարածաշրջանում ուժերի ռեալ դասավորությունը: Ոչ քաղաքական այդ մոտեցումներն ունեցան քաղաքական լուրջ ու ողբերգական հետևանքներ: Բոլշևիկները Հայաստանի նման դիրքորոշումը որակեցին որպես իմպերիալիզմի դաշնակից, իսկ 1920թ. սեպտեմբերի 17-ին կազմեցին հեղափոխական ուժերի միջոցով «իմպերիալիզմի դաշնակից» Հայաստանին պարտության մատնելու ծրագիրը, «որպեսզի Հայաստանը Արևելքում չխաղա այն դերը, ինչը Արևմուտքում խաղաց Լեհաստանը»: Ահա թե ինչպիսի համաշխարհային ուժ էր Հայաստանը: Բոլշևիկյան մեթոդներից բխող այս ամբողջ քաղաքական անբարոյականությունը կատարվում էր, որպեսզի կոտրվի հայոց բանակի և հայ ժողովրդի դիմադրողականությունը: Շրջափակելով Հայաստանը՝ ստեղծել դրությունից դուրս գալու անբարեհույս ու սեփական ուժերի հանդեպ թերահավատության մթնոլորտ: Նրանք լավատեղյակ էին, որ հայկական բանակի շտաբում դրված էր սկզբից Դենիկինի, իսկ հետո Վրանգելի բանակի շարժի քարտեզը և որ Վրանգելի պարտությունց հետո նրանք քեմալականների ու բոլշևիզմի աքցանում նախապատվությունը պետք է տային բոլշևիկներին: Այսինքն՝ եթե բոլշևիկներն ասեին «մի կռվեք», ապա նրանք ատելով հանդերձ բոլշևիզմը, պետք է ենթարկվեին նրանց: Ամերիկահայ գրող Լևոն-Զավեն Սյուրմելյանը 1920թ. աշխատել է հայկական բանակի շտաբում որպես ցրիչ: Նա վկայում է, որ «օսլայած օձիքներով ռուսահայ սպաներին ավելի շատ հետաքրքրում էր Վրանգելի բանակի ռազմական գործողությունները, քան սեփական հայրենիքի պաշտպանության հոգսը[15]»: Ռուս պատմաբան Կաղիշևը պատերազմում Հայաստանի անփառունակ պարտության պատճառներից է համարում երկրում տիրած անբարեհույս քաղաքական մթնոլորտը[16]:

---

[15] Տե՛ս *Լևոն-Զավեն Սյուրմելյան,* Ձեզ եմ դիմում, տիկիններ և պարոններ, Երևան, 1980, էջ 200:

[16] *А. Б. Кадышев,* Интервенция и гражданская война в Закавказье, М. 1960, с 166.

Հայկական բանակը դասալքելու հոգեբանական գործոնը, որի վրա աշխատում էին բոլշևիկները, անքերի հաշվարկված ծրագիր էր: Ամփոփելով այս գլխի շարադրանքը՝ պետք է նշել, որ.

1. Քեմալականները և բոլշևիկները որպեսզի կարողանային Հայաստանը որակել «միջազգային իմպերիալիզմի գործակալ», սպասում էին Սևրի պայմանագրի ստորագրմանը և լույս աշխարհ գալուն, որով ստեղծվում էր Մեծ Հայաստանը:
2. Այդ պատճառով հետաձգվեցին, ինչպես մայիսին Հայաստանի խորհրդայնացումը, այնպես էլ հունիսին քեմալականների հարձակումը:
3. Օգոստոսի 10-ին կնքվեց երկար սպասված Սևրի պայմանագիրը, որից հետո բոլշևիկները «հիմք ունեցան» Հայաստանը որակելու որպես «միջազգային իմպերիալիզմի դաշնակից» և կազմելու նրան հարվածելու և պարտության մատնելու «համաշխարհային հեղափոխության» ծրագիրը:
4. Այդ ծրագիրը կյանքի կոչվեց սեպտեմբերին Բաքվում գումարված Արևելքի ժողովուրդների բոլշևիկյան համաժողովի ստեղծած հանձնաժողովի կողմից, որն իր տեսակի մեջ եզակի քաղաքական անբարոյականություն էր:
5. Հայաստանը պարտության մատնելու և նրա մնացած մասում խորհրդային կարգեր հաստատելու գործընթացը իրականացվեց համաձայն այդ ծրագրի, որը ողբերգական հետևանքներ ունեցավ Հայաստանի և հայ ժողովրդի համար:
6. Բաքվի մուսուլմանների համագումարը հայտնի ազդեցություն ունեցավ Անգլիայի վրա այն առումով, որ համագումարին մասնակցում էին Անգլիայի գաղութների ներկայացուցիչները: Բոլշևիկները Անգլիային հասկացնում էին, որ նա չի կարող հանուն Հայաստանի դեմ գնալ իսլամական Արևելքին:
7. Հայաստանը «միջազգային իմպերիալիզմի գործակալ» որակելու և այդ տրամաբանությամբ նրան պարտության մատնելու բոլշևիկյան այս ծրագիրը հիմնավորապես հերքում է քաղաքական և գիտական այն մոլորությունը, համաձայն որի, եթե Հայաստանի կառավարությունը ձեռք քաշեր եվրոպական պետություններից և կողմնորոշվեր դեպի բոլշևիկյան Ռուսաստանը, ապա կարելի էր դրությունը փրկել և տարածքային կորուստներ չունենալ:

Ադրբեջանի փորձը փաստելը սխալ է ու համեմատության եզրեր չունի, որովհետև Ադրբեջանը կամովի խորհրդայնացվեց՝ կանխավ պայմանով, որ

դրա դիմաց նա կստանա Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը: Վերջապես պետք է հասկանալ, որ բոլշևիկները չէին կարող մի կողմից բավարարել իրենց դաշնակիցներ Ադրբեջանի ու Թուրքիայի տարածքային պահանջները, իսկ մյուս կողմից էլ՝ Հայաստանի: Վրաստանի տարածքային անկորուստ հեղափոխական հորձանուտից դուրս գալը ևս փաստարկ չէ Հայաստանի կառավարությանը մեղադրելու, որովհետև Վրաստանը չէր որակվում «համաշխարհային իմպերիալիզմի արևելյան գործակալ»: Բացի այդ, 1920թ. մայիսին մեկշաբաթյա բանակցությունների արդյունքում բոլշևիկներն, ի տարբերություն Հայաստանի, ճանաչել էին Վրաստան պետությունն իր տարածքներով: Ովքեր փաստում են Չիչերինին ու Կարախանին, ուրեմն չգիտեն՝ ի՞նչ ասել է դիվանագիտական խաբկանք: Իհարկե, Չիչերինը, որպես ցարական դիվանագիտության ներկայացուցիչ, չէր հավատում Լենինի, Տրոցկու և Ստալինի՝ համաշխարհային հեղափոխական մարմաջներին, բայց նա ոչինչ անել չէր կարող, եթե նույնիսկ ցանկանար: Համաշխարհային հեղափոխական գործընթացը ղեկավարում էր բոլշևիկների առաջնորդը, որը 1920թ. դեկտեմբերի 13-ին Հայհեղկոմի անդամներ Ս. Տեր-Գաբրիելյանին և Ա. Մռավյանին պարզ ու հստակ ասում է. «Ձեր դժվարությունն այն է, որ համաշխարհային հեղափոխության ֆրոնտներից մեկը անցնում է Հայաստանի վրայով»[17]:

[17] *Ա. Մռավյան,* Հոդվածներ և ճառեր, Եր. 1961, էջ 222:

ԳԼՈՒԽ III

ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱ

Օգոստոսին Հայաստանի Հանրապետությունը բոլոր կողմերից շրջափակվում է համաշխարհային հեղափոխական ուժերի կողմից: Սահմանային հարձակումները դառնում են սովորական երևույթ: Ղազախի կողմից Քարվանսարայի գյուղերի վրա անընդհատ հարձակումներ են գործում ռուսական 11-րդ բանակի 20-րդ դիվիզիայի զորամասերը՝ խախտելով օգոստոսի 10-ի զինադադարի պայմանները: Օգոստոսի վերջերից թուրքական սահմանապահ զորքերը պարբերաբար հարձակումներ են գործում Օլթիի և Բարդուսի ուղղություններով: Սովորական դարձած սահմանային այս հարձակումներով թուրքական կողմը քողարկում է իր կանոնավոր և անկանոն զորքերի կուտակումն Օլթիի ուղղությամբ: Օլթիում կանգնած էր հայկական երկու գումարտակ՝ շուրջ հազար հինգ հարյուր զինվորով և չորս թնդանոթով՝ գեներալ Հովսեփյանի հրամանատարությամբ: Քանի որ չկար կանոնավոր հետախուզական ծառայություն, ուստի հայկական զորքերի հրամանատարությունը տեղեկություն չուներ, թե ինչ է կատարվում սահմանից այն կողմ: Ստացվող կողմնակի լուրերին, թե թուրքերը զորքեր են կուտակում Օլթիի ու Բարդուսի շրջաններում, հրամանատարությունը վերաբերվում էր թերահավատությամբ: Նման բարենպաստ պայմաններում թուրքական էրզրումյան կորպուսի հրամանատար Ք. Կարաբեքիր փաշան Օլթիի և Բարդուսի շրջաններում կենտրոնացրել էր երեք գունդ և նույնքան էլ անկանոն զորք՝ հավաքած և վարժեցրած Թորթոմի և Նարիմանի շրջանների ազգաբնակչությունից: Էրզրումից Բարդուս էր ուղարկվել նաև 400 հոգուց բաղկացած ոստիկանական գումարտակ: Այսպիսով, Օլթին և Բարդուսը գրավելու նպատակով կենտրոնացվում է շուրջ 6-7 հազար կանոնավոր և անկանոն զորք: Սեպտեմբերի 9-ին թուրքական զորքերը թնդանոթային կրակ են բացում Վասկուտ սարի հայկական դիրքերի վրա: Սեպտեմբերի 10-ին նույնը կրկնվում է Բարդուսի հայկական դիրքերի վրա: Նույն օրը թուրքական երկու ռազմական ինքնաթիռներ պտույտ են գործում Սարիղամիշի վրա և վերադառնում իրենց դիրքերը: Ի տարբերություն հայկական կողմի՝ թուրքերը լավատեղյակ էին հայկական ուժերի քանակին և դասավորությանը: Բացի այդ, նրանք նախապատրաստել էին նաև տեղի մուսուլմանների ապստամբությունը՝ հարձակման պահին: Սեպտեմբերի 13-ի լուսաբացին թուրքական զորքերը սկսում են հարձակումը: Սահմանապահները հանկարծակիի եկած՝ չեն կարողանում տեղեկացնել զորամասերին: Հայկական գումարտակները սկսում են խուճապահար նահանջել: Կռիվները տևում են երկու օր: Նահանջող հայկական զորամասերը Փանջուրեթի կիրճում մեծ կորուստներ են ունենում և, թշնամուն թողնելով չորս թնդանոթները, նահանջում են Մերդենեկի ուղղությամբ: Երկօրյա մարտերից հետո թուրքական զորքերը գրավում են Փենյակի ամբողջ շրջանը (Օլթի, Բարդուս): Փաստորեն, սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերը գրավեցին այն տարածքները, որոնք գրավել էին հայկական զորքերը 1920թ. հունիսին: Բանակի հրամանատարությանը հղած զեկուցագրերում գեներալ Հովսեփյանը, որն առաջին պատասխանատուն էր կատարվածի համար, հայկական զորքերի անփառունակ պարտությունը բացատրում էր հարձակման հանկարծակիությամբ: Արդեն վերը նշվեց, որ սեպտեմբերի առաջին օրերից սկսած անընդհատ հարձակումներ էին կատարվում հայկական դիրքերի վրա, ինչը և հերքում է հրամանատարության նման անհիմն փաստարկները: Այդ ամենն արվում էր սեփական անկարողությունը ծածկելու համար, որովհետև Հովսեփյանը չէր կարողացել կոորդինացնել զորամասերի գործողությունները: Օլթիի զորամասի վրա թուրքական զորքերի հարձակման ժամանակ նրան պետք է օգնության հասներ Սարիղամիշի զորամասը, որն իր շարքերում ուներ 2500 զինվոր և զգալի քանակությամբ ռազմական տեխնիկա: Պարզ է, որ 4-հազարանոց զորքով կարելի էր կանգնեցնել թշնամու հարձակումը: Ահա թե ինչու էր հյուսվում հարձակման հանկարծակիության և լավ դիրքեր չունենալու առասպելը: Բանակի հրամանատարությանը հղած զեկուցագրերից մեկում ասված է. «Թուրքերի հաջողությունը հիմնականում հարձակման հանկարծակիությունը և մեր դիրքերի անհարմարությունն էր»: Հաջորդ պարբերությունում հաղորդագրության հեղինակը հակասում է իրեն՝ նշելով, որ «հարձակումից շատ առաջ ստացվում էին տեղեկություններ Բարդուսում և Օլթիում զորքերի կենտրոնացման մասին, սակայն մենք թերահավատ էինք: Այդ լուրերին չհավատալուն նպաստեց այն, որ քրդերը մշտապես հարձակումներ էին կատարում Վասկուտ լեռան ուղղությամբ և մեր կողմից ցարդ ետ էին շպրտվում»[1]: Այս և մյուս զեկուցագրերից պարզ երևում է, որ բանակի հրամանատարությունն իր կոչման բարձրության վրա չի գտնվել: Դա էր պատճառը, որ թուրքերը հարձակվեցին ու կոտորեցին քնած «սահմանապահ զինվորներին» և խուճապի ու փախուստի մատնեցին Փենյակում գտնվող երկու գումարտակները: Վերագրավելով Օլթիի շրջանը, թուրքական զորքերը դադարեցրին հարձակումը: Հետագայում ռազմական գործողությունները դիրքային բնույթ էին կրում: Պարտված երկու հայկական գումարտակները նահանջում և դիրքեր են գրավում Մեր-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 19:

դեմեկից հյուսիս և հյուսիս-արևմուտք ընկած տարածքում: Չնայած իրադարձությունների զարգացման նման ընթացքին, որը բանակի հրամանատարությանը խորհելու և իրավիճակը փոխելու, կտրուկ միջոցառումներ կատարելու պետք է մղեր, ոչինչ չի արվում: Օլթիի ողբերգությունը քննելու և մեղավորներին պատժելու պահանջով կառավարությանն է դիմում Կարսի նահանգապետ Ս. Ղորղանյանը: Նա գտնում է, որ Օլթիում հայկական գումարտակների պարտության պատճառը բանակում տիրող անբարեհույս վիճակն է, որ Օլթին գրավելուց հետո հայկական զորաջոկատները և հատկապես սպաները զբաղված են եղել թալանով ու առևտրով: Սեպտեմբերի 14-ին Ալեքսանդրապոլի խմբավորման հրամանատար և Կարսի պարետ գեներալ Դ. Բեկ-Փիրումյանը բանակի հրամանատար գեներալ Ֆ. Նազարբեկյանին հեռագրով հայտնում է. «Օլթիի ջոկատի մնացորդները՝ շուրջ 200 հոգի, կորցնելով բոլոր թնդանոթներն ու գնդացիրները նահանջում էին Կեշիրյան (գյուղ, որը գտնվում է Մերդենեկից 10կմ հյուսիս-արևմուտք – Կ.Ս.): Մերոնք պահում են Աղունդիրի դիրքերը... Օլթիի ջոկատը արիաբար մարտնչելով նահանջել է, բայց տեղական բնակչության կողմից բոլոր ճանապարհները փակած լինելու պատճառով անկարող է եղել նյութական մասը փոխադրելու»[2]: Եթե գլխովին ջախջախվելը, 1300 զինվոր և ամբողջ տեխնիկան թշնամուն թողնելն ու նահանջելը հրամանատարը համարում է «հերոսաբար մարտնչել», ուրեմն պարզ է, որ նման հաղորդագրությունը տրվում էր հատուկ նպատակով: Նա չէր կարող մոռանալ, որ սեպտեմբերի 13-ին նույն հասցեով ուղարկած հեռագրում նշում էր. «Փամփուշտները վերջանում են, դրությունը կրիտիկական է, ռեզերվ չկա, փամփուշտ չկա... Հրամայեցեք շտապ հասցնեն զենք և փամփուշտ: Թուրքերի ակտիվությունը կարող է հղի լինել ծանր հետևանքներով»[3]: Մեկ օր առաջ այսպիսի խուճապալի հեռագիր էր տվել, իսկ հաջորդ օրը, երբ արդեն պարզ էր, որ պարտությունը հրամանատարության մեղքով է, փոխում է տոնը և հայտնում, թե «Օլթիի ջոկատն արիաբար մարտնչել է»: Ռազմական նախարարությունը և բանակի հրամանատարությունը փոխանակ կատարվածից եզրակացություն անելու և շտկելու դրությունը, դիմում են վարչապետ Հ. Օհանջանյանին՝ խնդրելով թուրքերի գործողությունների դեմ բողոքարկել Անգլիայի ու Ֆրանսիայի թիֆլիսյան ներկայացուցիչներին[4]: Նույն օրը արտաքին գործերի նախարարի տեղակալը հեռագրում է Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին. «Սեպտեմբերի 13-ի լուսաբացին թուրքերը հարձակում գործեցին Օլթիի ուղ-

[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 231:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 229:
[4] Տե՛ս նույն տեղում:

ղությամբ, ինչպես նաև Սարիղամիշի ջոկատի աջ թևի վրա և գրավեցին Վասկուտ սարը և Բերդիկ գյուղը: Թուրքերի հարձակումը շարունակվում է: Խնդրում եմ այդ մասին անմիջապես հայտնեք բոլոր դաշնակիցների ներկայացուցիչներին Թիֆլիսում և բողոքեցեք թուրքերի հարձակման դեմ»[5]: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 14-ին, Նախարարների խորհուրդը լսեց Կարսի մարզում տիրող վիճակի մասին հարցը և որոշեց. «Վանանդի նահանգում զինվորական դրություն հայտարարել և զինվորական ու քաղաքացիական իշխանությունը կենտրոնացնել Ալեքսանդրապոլի զորախմբի պետ զորավար Փիրումյանի ձեռքում»[6]:

Դժվար թե կառավարությունը չհասկանար, որ կատարվածի մեղավորությունը հիմնականում ընկնում էր Ալեքսանդրապոլի խմբի հրամանատար գեներալ Փիրումյանի և գեներալ Հովսեփյանի վրա: Դժվար թե, որովհետև և՛ Փիրումյանի հակասական զեկուցագրերից, և՛ իրադարձությունների ընթացքից պարզ երևում էր, թե իրականում ինչ է տեղի ունեցել Օլթիում: Սեպտեմբերի 13-ին գնդապետ Պրիտոմոնովը Երևանից հեռագրով Փիրումյանին հայտնում է, որ գեներալ Նազարբեկյանը կատարվածը գնահատել է «խուճապի հետևանք»: Նազարբեկյանը հեռվից հեռու հենվելով հենց Փիրումյանի իրարամերժ զեկուցագրերի վրա արել էր ճիշտ եզրակացություն: Եվ զարմանալի է, որ կառավարությունը փոխանակ պատասխանատվության ենթարկեր իր պարտականությունները չկատարած հրամանատարներին, որոշում է նահանգի քաղաքացիական իշխանությունն էլ նրանց հանձնել: Նահանգապետ Ս. Ղորղանյանի զեկուցագիրը և ահազանգերը մնում են անհետևանք: Ավելին, կառավարության սեպտեմբերի 14-ի որոշումից հետո, չնայած Ղորղանյանը չի ազատվում նահանգապետի պարտականություններից, բայց և այնպես նրան արգելվում է Փիրումյանի կարծիքին չհամընկնող *զեկուցագրեր ուղարկել կառավարությանը:* Այս քայլով, ըստ երևույթին, կառավարությունը ձգտում է ուժեղացնել զինվորական իշխանությունը և վերացնել նրանց ու նահանգապետի միջև եղած վաղեմի տարաձայնությունը: Նազարբեկյանը Փիրումյանին դեռևս սեպտեմբերի 15-ին հրամայել էր վերականգնել նախկին դրությունը Օլթիի ուղղությամբ: Փիրումյանը խոստանում է ամրապնդվել նոր դիրքերում և վերագրավել կորցրած տարածքը: Այս ձեռնարկումներից այն կողմ կառավարությունը չգնաց և սպասում էր, որ զորավար Փիրումյանը կկատարի իր հրահանգները: Սեպտեմբերի 15-ից մինչև 27-ը ընկած ժամանակահատվածում Կարսի ճակատի հրամանատարությունը չկարողացավ շոշափելի տեղաշարժ կատարել: Երկշաբաթյա մանր ընդհարումները դիրքային փոփոխություններ չտվեցին, և չստեղծվեց

[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 226:
[6] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 204:

կայուն վիճակ հայկական զորամասերում: Օլթիի կռիվներից հետո սկսված խուճապը տարածվել էր այդ ուղղության վրա գործող բոլոր զորամասերում: Չնայած նման վիճակին՝ ռազմական տեղեկություններում հրամանատարությունը նշում էր, թե նոր դիրքերը ամուր են և իրենք պատրաստ են կռվելու: Որպես ապացույց՝ հայտնում նաև, որ մեր հերոսական զորքերը մարտերով գրավեցին այս լեռը կամ սպանեցին թշնամու չորս հետախույզների: Հայկական հրամանատարությունը պատերազմը շփոթում էր 1920թ. ամռանը բոլշևիկյան և մուսուլմանական խռովությունները ճնշելու հետ, որի ընթացքում բանակի հասցեին մեծարման շատ խոսքեր էին շռայլվել: Այս խաբկանքը հոգեբանորեն չկարողացավ հաղթահարել հրամանատարությունը, և այն նույնությամբ տարածվեց բանակի վրա: Նման հոգեվիճակը սնում և խորացնում էր նաև այն հանգամանքը, որ դաշնակիցների օգնությամբ իրականանալու է Սևրի պայմանագրով խոստացված Հայաստանը: Այդ էր պատճառը, որ Կարսի բերդապետ նշանակված Փիրումյանը փոխանակ օր ու գիշեր տանջվելու և կարգի բերելու բերդի ամրոցները, մարտական վիճակի բերելու պարապությունից ժանգոտված շուրջ 100 թնդանոթներն ու մյուս մարտական տեխնիկան, գիշեր ու զոր մտածում էր, թե երբ է մտնելու Էրզրում: Եվ ոչ միայն նա, ողջ հայ կյանքը ևս փոթորկվում էր այդ առանցքի շուրջ: Այս կործանարար հոգեվիճակը չփոխվեց նաև այն ժամանակ, երբ արդեն սկսվել էր պատերազմը: Դրա լավագույն վկայությունն է, որ կառավարությունը, կարծես թե, բավարարվեց թուրքական հարձակման մասին դաշնակիցներին տեղյակ պահելով և սպասելով, որ նրանք օգնության կհասնեն: Զարմանալի և հակասական էր նման վերաբերմունքը: Մի՞թե պատերազմը սկսելուց հետո էլ վարչապետ Հ. Օհանջանյանը հավատում էր, որ եվրոպական պետությունները կօգնեն Հայաստանին: Սպասելիք չունեին, սակայն սպասում էին: Սպասում էին նաև թուրք քաղաքական գործիչները: Նրանք էլ էին սպասում եվրոպական պետությունների վերաբերմունքին և համոզվեցին, որ Անտանտի տերությունները Հայաստանին չեն օգնելու: Նրանք սպասում էին հրահանգի Մոսկվայից և Բաքվից: Բաքվի Արևելքի ժողովուրդների համագումարն ավարտվեց սեպտեմբերի 8-ին: Սեպտեմբերի 13-ին թուրքական զորքերն անցան հարձակման և վերագրավեցին Օլթին: Սեպտեմբերի 17-ին համագումարի կողմից ստեղծված Արևելքի ժողովուրդների պրոպագանդայի և գործողության խորհրդի նախագահությունը կազմեց Հայաստանի վրա հարձակման ծրագիրը և ուղարկեց Մոսկվա: Այդ մասին Անկարա է հայտնվում Բաքվից (Նախիջևանի վրայով ուղիղ կապ կար Բաքվի ու Անկարայի միջև): Խալիլ փաշան, որը մասնակցում էր Բաքվում պատրաստվող քաղաքական անցքերին, անմիջապես այդ մասին տեղյակ էր պահում իր կառավարությանը: Դաղարի պատճառներից

էր նաև Վրաստանի չեզոքությունն ապահովելու հարցը: Այս մասին ևս, ինչպես վերը նշվեց, պարզ ասված էր սեպտեմբերի 17-ի փաստաթղթում: Վրաստանի կառավարությունը, հավատալով Վրաստանի անկախությանը ձեռք չտալու Մոսկվայի և Անկարայի խոստումներին, համաձայնվեց չեզոքություն պահպանել: Թիֆլիսում գաղտնի պամանագիր կնքվեց Քյազրմ բեյի և Վրաստանի կառավարության միջև: Հայաստանի կառավարությունը միայն հոկտեմբերի 2-ին տեղեկացավ, որ վրացիները գաղտնի պայմանագիր են ստորագրել քեմալականների հետ[7]: Ահա թե ինչու քեմալական զորքերը Օլթին գրավելուց հետո երկու շաբաթ դադարեցրին հարձակումը: Այդ ընթացքում նրանք նոր ուժեր կենտրոնացրին հայ-թուրքական սահմանի ամբողջ երկարությամբ: Էրզրումի կորպուսից, որի մեջ մտնում էին ինը գունդ (յուրաքանչյուր գնդում՝ 1000-1100 սվին), կազմվեց չորս դիվիզիա, որոնցից երեքը՝ 9-րդը, 11-ը և 12-ը տեղակայվեցին Հայաստանի սահմաններին: 3-րդ դիվիզիան, որը կոչվում էր Կովկասյան, մնաց Տրապիզոնի և Բայբուրթի տարածքում և մինչև նոյեմբերի 15-ը գտնվում էր այնտեղ: Այնպես որ սխալ է այն տեսակետը, թե Հայաստանի վրա հարձակվել է չորս դիվիզիա: Հայաստանի դեմ սեպտեմբերի 13-15-ի մարտերին մասնակցել է մեկ դիվիզիա, որը հետագայում համալրվեց, և մինչև Կարսի գրավումը այդ ուղղությամբ գործում էր երկու դիվիզիա: 11-րդ դիվիզիան գործել է Իգդիրի ուղղությամբ: Այսպիսով, Հայաստանի դեմ գործել են շուրջ 12-հազարանոց կանոնավոր թուրքական բանակը և մոտ հինգ հազար անկանոն խմբեր: Երեք դիվիզիաներից երկուսը՝ 9-րդը և 12-րդը գործում էին հիմնական՝ Կարսի ուղղությամբ: Թուրքական հրամանատարության նպատակն էր գրավել Սարիղամիշը: Լավ նախապատրաստվելուց հետո սեպտեմբերի 27-ի գիշերը ուժեղ հարձակման են անցնում Օլթիից և Բարդուսից: Սեպտեմբերի 28-ի լուսաբացին նրանք գրավում են հայկական դիրքերը: Հայկական զորքերը նահանջում և դիրքեր են գրավում Սարիղամիշից հինգ կիլոմետր արևմուտք ընկած տարածքում: Սեպտեմբերի 28-ի ցերեկվա մարտերից հետո թուրքերը երեկոյան գրավում են Սարիղամիշը: Ավելի ճիշտ, Սարիղամիշի ջոկատը առանց վճռական կռվի գեներալ Հովսեփյանի հրամանով թողնում է քաղաքը և «հարմար դիրք» գրավում Նոր-Սելիմում, որտեղից գիշերը ետ են քաշվում դեպի Բեգլի-Ահմեդ՝ «դիրքերը հարմար չլինելու պատճառով»: Դեպքերի նման զարգացումը պարզապես զավեշտի է նման: Կռվում, իհարկե, կարելի է պարտվել, սակայն հայկական զորքերը գեներալ Հովսեփյանի հրամանատարությամբ ցուցադրեցին, թե ինչպես կարելի է չպաշտպանել հայրենիքը: Ռազմական բոլոր տեղեկագրերը և ամփոփագրերը ցույց են տալիս, որ հայկական բանակը պատերազմի այս փուլում էլ չի կռվել և ա-

[7] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 284:

ընդհատ «ավելի հարմար դիրքեր գրավելու» պատճառաբանությամբ նահանջել է խուճապահար: Զորքը փախչում էր ու խուճապ տարածում ամբողջ նահանգում: Սեպտեմբերի 30-ին, առանց կրակոցի, Կաղզվանը ևս հանձնվում է թշնամուն: Սեպտեմբերի 27-30-ը տևած կռիվների ընթացքում թուրքական զորքերը գրավում են նաև Արդահանի հայկական մասը (հյուսիսային մասը գտնվում էր վրացիների իշխանության տակ) և Մերդենեկը: Կարսի նահանգի հայ ազգաբնակչությունը զորքերի հետ փախչում է դեպի Կարսի ամրոցը: Բերդաքաղաքի ազգաբնակչության շրջանում տարածվում է խուճապը: Եթե այդ ժամանակ թշնամին առաջ շարժվեր, շատ հեշտությամբ կգրավեր Կարսը: Քաղաքը թողնելու մտքի հետ հաշտվել էր նաև գեներալ Փիրումյանը: Սակայն հոկտեմբերի 1-ին թշնամին դադարեցնում է առաջխաղացումը: Սա պատերազմի երկրորդ փուլն էր, որից հետո ռազմական գործողությունները կողմերի միջև ստանում են դիրքային բնույթ: Սեպտեմբերի 28-ին, երբ թուրքերը սկսեցին զանգվածային հարձակումը, Երևանում գումարվեց նախարարների խորհուրդ, որը լսեց Կարսի ռազմաճակատի հետ կապված մի քանի հարցեր: Զեկուցումով հանդես է գալիս ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը: Ռազմաճակատում տիրող դրությունը քննարկելուց հետո կառավարությունը որոշում է. 1. «Զորավար Սիլիկյանին նշանակել Կարսի ճակատի հրամանատար սպարապետի իրավունքներով: 2. Կարսի զինվորական ծախսերի համար հատկացնել 20 միլիոն ռուբլի: 3. Կարսի զինվորական գործողության ամբողջ ընթացքում կառավարումը ժամանակավորապես իր ամբողջ կազմով հանձնել զինվորական նախարարությանը: Ալեքսանդրապոլ քաղաքում և Շիրակի նահանգում զինվորական դրություն հայտարարել»[8]:

Այս որոշումով, փաստորեն, Ռ. Տեր-Մինասյանը դառնում է դիկտատոր, իսկ գեներալ Սիլիկյանը նշանակվում է Կարսի ճակատի հրամանատար: Գեներալներ Փիրումյանին և Հովսեփյանին ազատելու մասին չնայած խոսակցություն լինում է կառավարության նիստում, բայց Ռ. Տեր-Մինասյանն աննպատակահարմար է գտնում ռազմական գործողությունների ժամանակ հրամանատարների փոփոխությունը: Հարկ է նկատել, որ այդ գեներալների փոփոխության հարցը կառավարության առաջ մի քանի անգամ բարձրացվել է: Նման առաջարկություն եղել էր դեռևս 1919թ. աշնանը, երբ Կարսի պահեստներից հափշտակումներ էին կատարվել, և հանձնաժողովը գտել էր, որ Փիրումյանին պետք է Կարսից տեղափոխել: Նույն հարցի առթիվ բանակի հրամանատար Նազարբեկյանի հետ մեծ վեճ է ունեցել գեներալ Սիլիկյանը, որը դեմ է եղել Փիրումյանին Կարսի պարետ նշանակելուն: Կարսում զինվորական գործը ձախողելու և բանակում տիրող անկարգությունների ու նյութական շորթումների փաստարկումներով կառավարությանը բազմաթիվ զեկուցագրեր է ուղարկում Կարսի նահանգապետ Ղորդանյանը, որոնց մենք հետագայում կանդրադառնանք: Այստեղ միայն նկատենք, որ թե՛ կառավարության և թե՛ բանակի հրամանատարության համար պարզ էր, որ Կարսի ճակատում գտնվող զորամասերի անմարտունակության, դասալքության ու խուճապային վիճակի համար մեղավոր է հրամանատարությունը: Գիտեր և անտեղյակ էր ձևանում, որովհետև Փիրումյանը հովանավորվում էր ամենակարող Ռ. Տեր-Մինասյանի կողմից: Փիրումյանն էլ իր հերթին հովանավորում էր գեներալ Հովսեփյանին: Պարզ է, որ Ռ. Տեր-Մինասյանի դիկտատոր դառնալուց հետո այդ գեներալներին այլևս ոչ ոք չէր կարող դիպչել: Իրերի նման վիճակը չէր կարողացել փոխել նույնիսկ պառլամենտի նախագահ Ավ. Սահակյանը, որը 1920թ. ամռանը շրջագայել էր նահանգում և անմիջապես ազգաբնակչությունից լսել, որ զինվորականները զբաղված են թալանով: Ահա թե ինչպիսի վիճակ էր տիրում այն զորամասերում, որոնք առաջինը պետք է պատրաստ լինեին հայրենիքը պաշտպանելուն: Զորքը չէր կռվում, որովհետև չուներ արժանի հրամանատարություն, իսկ ռազմական նախարարը գտնում էր, որ պատերազմի ժամանակ հրամանատարության փոփոխությունը լավ չի ազդի զորքի մարտունակության վրա: Ճիշտ է, նա ստիպված Սիլիկյանին նշանակեց Կարսի ճակատի հրամանատար, բայց քանի որ Սիլիկյանի ու Փիրումյանի հարաբերությունները լարված էին՝ Սիլիկյանը իր շտաբով հաստատվեց Ալեքսանդրապոլում: Նա իր շտաբի պետ գնդապետ Վեքիլյանին էր ուղարկում Կարս՝ Փիրումյանի մոտ ռազմական գործողությունները կոորդինացնելու, ինչն այդպես էլ չհաջողվեց, մինչև Կարսի անկումը, երբ Վեքիլյանը և Փիրումյանը միասին գերի ընկան: Եթե նույնիսկ չլինեին վերոհիշյալ փաստարկները, միևնույն է Փիրումյանին Կարսում թողնելը սխալ էր և ողբերգական հետևանքներ ունեցավ, որովհետև նա կոտրել էր ոտքը և գամված էր անկողնուն: Երբ հոկտեմբերի սկզբին Կարս է գալիս բանակի հրամանատար Նազարբեկյանը և հանդիմանում Սարիղամիշի զորամասի հրամանատար գնդապետ Միրիմանյանին, Փիրումյանը և Հովսեփյանը միջնորդում են, որպեսզի նրան տրվի գեներալի աստիճան: Սարիղամիշը, Կաղզվանը, Կարաուրգանը և Մերդենեկը թշնամուն հանձնելու մասին սեպտեմբերի վերջին կառավարության նախագահին գրած նամակում իր տեսակետն է հայտնում Կարսի նահանգապետը: Նա նշում է, որ Կարաուրգանը և Սարիղամիշը առանց կռվի թշնամուն է հանձնվել գեներալ Հովսեփյանի և այդ գավառամասերի զորախմբերի հրամանատար գնդապետ Միրիմանյանի մեղքով: Երևանում կրկին ստացվում են իրարամերժ հաղորդագրություններ: Մի կողմից՝ գեներալների հաղորդագրությունները, որոնցում ուռճաց-

[8] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 215:

վում է թշնամու թվաքանակը և նահանջը պատճառաբանվում տակտիկական նկատառումներով, մյուս կողմից՝ նահանգապետի կարծիքը, որը կատարվածը պայմանավորում էր նրանով, որ հրամանատարությունը նվիրված չէ հայրենիքին և փախչում է թշնամուց և մտածում միայն իր թալանած հարստությունը փրկելու մասին: Հնարավոր է, որ Ղորղանյանը չափազանցնում է: Բայց մի բան փաստ է, որ բանակը չէր կռվում և չէր կռվում հրամանատարության մեղքով, որովհետև նա առաջինն էր փախչում: «Փախչում էր հրամանատարությունը,– գրում է Ս. Ղորղանյանը,– նրա հետևից զորքը, իսկ ժողովուրդը միայն հետևում էր նրանց: Գնում էր դանդաղ, շարունակ ետ նայելով ու արտասվելով»: Չնայած իրադարձությունները հիմնականում համընկնում էին նահանգապետի հայտնած տեղեկություններին, բայց և այնպես կառավարության նախագահի ցուցումով հոկտեմբերի սկզբին Նազարբեկյանը Ղորղանյանին գրում է. «*Նկատի առնելով, որ Ձեր հաղորդագրությունները միանգամայն տարբեր է զորահրամանատարության տվյալներից և շփոթում են թե կառավարության և թե հասարակության կարծիքը ու ջղայնություն առաջ բերում, կառավարությունը արգելում է Ձեզ որևէ տեղեկություններ ուղարկել Երևան: Դուք կարող եք Ձեր տեղեկությունները հանձնել գեներալ Փիրումովին*»[9]: Կառավարությունը մինչև Կարսի անկումը, փաստորեն, ոչինչ չարեց բանակի մարտունակությունը բարձրացնելու ուղղությամբ: Մի շարք որոշումներ ընդունվեցին դասալքության դեմ, սակայն այդ որոշումներն ուժ չէին կարող ստանալ, որովհետև նորակոչիկները համալրում էին այն բանակը, որն արդեն դասալքված էր: Սեպտեմբերի 30-ին Հայաստանի ողջ տարածքը հայտարարվեց ռազմական դրության մեջ: Նույն օրը ընդունվեց պարտադիր որոշում, որով զորակոչի էին ենթարկվում 1884, 1885, 1886, 1887 թվականներին ծնվածները: Մահացու վտանգը կախվել էր հայրենիքի գլխին, իսկ զինակոչվում էին 33-36 տարեկանները: Այս որոշման մեջ կրկին նշվում է. «Զինակոչի ենթակաները, որոնք ժամանակին չեն ներկայանա կամ ինքնակամ կթողնեն իրենց զորամասերը կհամարվեն դասալիքներ և 1919թ. հուլիսի 24-ին հաստատված օրենքի համաձայն կենթարկվեն մահապատժի»[10]: Դասալիքներին մահապատժի ենթարկելու մի որոշում էլ ընդունվում է հոկտեմբերի 4-ին և չգիտես ինչու, այդ որոշումով դասալիքների մահապատժի գործը հանձնարարվում է քաղաքացիական իշխանություններին[11]: Երևի թե պատճառը նրանում էր, որ զինվորական դատարանները, փաստորեն, անգործության էին մատնված և չէին կատարում կառավարության այդ կարևոր որոշումը: Այսինքն՝ ո՞ւմ մահապատժի ենթարկեին, երբ բանակում տիրող դասալքությունը մեծ չափերի էր հասնում հենց հրամանատարության մեղքով: Բանակում տիրող այս անմխիթար վիճակը բացարձակապես չէր արձարձվում հրապարակայնորեն: Դեռ ավելին, ինֆորմացիայի միջոցները ջանք չէին խնայում գովերգելու «հայկական քաջարի բանակը» նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք Կարսի գավառներն ու քաղաքները մեկը մյուսի հետևից թշնամուն հանձնելով՝ կուտակվեցին Կարսի բերդի շրջակայքում: Ահա թե ինչպես է մեկնաբանում այդ իրադարձությունները «Ռազմիկ» թերթը. «Կարսի ճակատում» խմբագրական հոդվածում.

«...Թուրքերի ուժեղ հարձակումը սկսվեց սեպտեմբերի 28-ից, Սարիղամիշի աջ թևից՝ Բարդուսից... Մերոնք անկորուստ նահանջեցին Սարիղամիշից և Կաղզվանից... Իգդիրի ճակատում թշնամին հասավ մինչև Խալֆալու և Սուլթանաբադ, որպեսզի երկու կողմից մտնի Իգդիր, սակայն երկժամյա կռվից հետո թշնամին թողեց այդ գյուղերը: Ամենամեծ վտանգը Սարիղամիշի ճակատից էր սպասվում: Թուրքերը մի քանի փորձ արին, որպեսզի Հարամ-Վարդանի ուղղությամբ անցնեն Կարսի թիկունքը... Սակայն այստեղ ևս թշնամին հաջողություն չունեցավ: Մեր զորքերը ետ շպրտեցին թշնամուն Հարամ-Վարդանի ուղղությամբ, այլև հարձակման անցնելով գրավեցին Զիարեթ բարձունքը: Այսպիսով, թուրքերի առաջխաղացման առաջը միանգամայն առնված է... Առաջին խնդիրը փառավոր կերպով կատարեց հայ զորքը... Դաժան պայմանների մեջ ձեռք բերած մեր երկու տարվա անկախությունը մեզ ոչ միայն ուժեղ կառավարություն տվեց, այլև կազմակերպված ուժեղ զորք, որը գիտե կուրծք տալ մեր թշնամուն և պաշտպանելու իր հանրապետությունն ու ազատությունը»[12]: Այս ամբողջից միակ ճշմարտությունն այն էր, որ Իգդիրի ուղղությամբ հայկական զորամասերը Դրոյի հրամանատարությամբ կանգնեցրել էին թշնամու հարձակումը: Թե ինչի համար էր այս կործանարար ինքնագովությունը՝ անհասկանալի է: Եթե ժողովրդի ոգին բարձրացնելու նպատակով էր դա արվում, ապա անտեղի էր, որովհետև ժողովրդին պետք է ասվեր ճշմարտությունը, որպեսզի նա հույսը չդներ բանակի վրա և ոտքի կանգներ ինքնապաշտպանության: Նման պրոպագանդայի հետևանքը եղավ այն, որ ժողովուրդը, հույսը դրած բանակի վրա, սպասեց մինչև եկավ կործանումը: Ավելի շուտ կառավարությանը այդ ինքնագոհ աղմուկը անհրաժեշտ էր, որպեսզի դաշնակիցներին ցույց տա, որ բանակը և ժողովուրդը ոտքի են կանգնել հայրենիքը պաշտպանելու անհավասար կռվում և դրանով արագացնի նրանց օգնությունը: Այլապես չկռվող բանակին գովերգելը ինքնախաբեություն էր ու հղի ծանր հետևանքով: Այդ բանը կառավարությունը լավ էր հասկանում, բայց քանի որ նա

[9] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, թ. 371:
[10] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 290, ց. 1, գ. 36, թ. 1:
[11] Տե՛ս նույն տեղում, թ. 4:

[12] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 157-158:

հիմնականում հույսը դրել էր դաշնակիցների վրա, այդ պատճառով էլ աղմկում էր ու հազարավոր դիմումներ հղելով՝ սպասում նրանց օգնությանը:

Սեպտեմբերի 30-ին վարչապետ Հ. Օհանջանյանը հեռագրում է Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին. «Թշնամու ճնշման տակ մենք թողեցինք Սարիղամիշն ու Կաղզվանը: Կարսը վտանգի մեջ է: Երեխաներին, կանանց և հիվանդներին դուրս են բերում Կարսից: Դրությունը լուրջ է:

...Կառավարությունն ու ժողովուրդը գործադրում է բոլոր ուժերը, որպեսզի կանգնեցնի թուրքերին: 700 վերստ ռազմաճակատը պաշտպանում ենք սեփական ուժերով: Այս ամենի մասին հայտնեք դաշնակիցներին, պահանջեք շուտափույթ և որոշակի օգնություն: Վրացիներից նավթ խնդրեք գոնե տրանսպորտի կարգավորման համար»[13]: Օհանջանյանի այս հեռագիրը կապված է սեպտեմբերի 29-ի Կարսում տիրող խուճապի հետ, երբ քիչ էր մնացել քաղաքը դատարկվեր: Սարիղամիշից և Կաղզվանից փախչող զորամասերը Կարսում տարածեցին նման խուճապ՝ հրեշավոր ստեր պատմելով թշնամու ուժերի մասին, ինչը և պատճառ դարձավ հիվանդների ու երեխաների տեղափոխմանը: Հաջորդ օրը դրությունը կայունանում է: Կարսից եկող նոր տեղեկությունները հանգստացնում և խուճապից հանում են վարչապետին: Արդեն հոկտեմբերի 1-ին նա Բեկզադյանին հեռագրում է. «Մեր ուժերը կենտրոնացված են Կարսի ու Բեգլի-Ահմեդի շրջանում: Ամբողջ ազգաբնակչությունը ոտքի է կանգնել: Հայաստանը հայտարարված է զինվորական դրության մեջ... Բոլոր մինիստրները մեկնել են ռազմաճակատ ու ժողովրդի մեջ: Դաշնակիցներից պահանջեցեք շտապ օգնություն: Պարզվում է թուրք-բոլշևիկյան համագործակցությունը»[14]: Բոլորին հայտնի այս վերջին միտքն էլ Օհանջանյանը ընդգծում է, որպեսզի ազդեցություն թողնի դաշնակիցների վրա: Դաշնակիցներին հղած օգնություն հայցող բազմաթիվ դիմումներն ունեցան այն հետևանքը, որ հոկտեմբերի 3-ին Թիֆլիսից Հայաստան եկավ բրիտանական բանակի գնդապետ Ստոքսը: Նա հոկտեմբերի 4-ին մեկնում է Կարս, հավուր պատշաճի հանդիպումներ, զրույցներ ունենալուց և բանակի մարտունակության մասին անտեղի գովեստներ անելուց հետո մեկնում է Թիֆլիս: Ստոքսի Երևան գալը հուսո աղբյուր է դառնում Հայաստանի քաղաքական գործիչների համար: Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը հոկտեմբերի 3-ին Կարսի բերդապետին հրահանգում է, թե Ստոքսի թույլ կողմը ռուսաֆոբությունն է՝ միամտորեն հավատալով, թե նրա այդ հատկանիշը կարող է դեր ունենալ քաղաքականության մեջ: Ստոքսի Երևան գալը ավելի է փոթորկում հայ ժողովրդի

[13] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 486, մ. II, թ. 270:
[14] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 275:

հոգին, որ ինքը մենակ չէ Թուրքիայի դեմ մղվող պայքարում: Շատ լավ կլիներ, եթե հակառակը լիներ: Որովհետև ժողովուրդն իրոք ոտքի էր կանգնել: Նա ցանկանում էր պաշտպանել հայրենիքը, ամեն ինչով օգնում էր բանակին, սակայն պատերազմական գործողություններում փոփոխություն չկար: Զգալով հայրենիքի և ժողովրդի գլխին կախված մահացու վտանգը՝ հոկտեմբերի 2-ին կոչով հայ ժողովրդին է դիմում Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը: Կոչում մասնավորապես ասված է. «... Երկու տարվա կյանքը մեզ սովորեցրեց, որ մենք պետք է պաշտպանենք մեր հայրենիքը, օտարը մեզ չօգնեց և չի օգնելու... Գնացեք կռվեցեք քաջաբար և Ձեր սրերով մաքրեցեք Ձեր ճանապարհը դեպի Ձեր մոխրացյալ վաթանը՝ Մուշն ու Սասունը, Ս. Կարապետն ու Աղթամարը: Իսկ Դուք, Արարատյան աշխարհի հայորդիներ, Վաղարշապատի, Օշականի, Աշտարակի, Սարդարապատի, Ապարանի, Շիրակի, Ծաղկաձորի ու Գեղարքունյաց զավակներ, թողեք ձեր տները և թոռեք դեպի սահմանները, ձեր ազատությանը վտանգ է սպառնում, հիշեցեք Զեյթունն ու Սարդարապատը: Հաղթեք թշնամուն, որպեսզի Մասիսի գլխին տնկված հայկական դրոշակը անսասան մնա...»[15]: «Օտարը մեզ չօգնեց և չի օգնելու»: Կաթողիկոսի հորդորով, ինչպես Սարդարապատի ճակատամարտի ժամանակ, այնպես էլ այժմ ռազմաճակատ մեկնեցին հոգևորականները: Կարս է մեկնում եպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը: Կարսում էին գտնվում նաև նախարարներ Ս. Վրացյանը և Ա. Բաբալյանը: Սեպտեմբերի 29-ի կառավարության նիստի ժամանակ, երբ քննարկվում էր ռազմաճակատի հարցը, բանակի հրամանատար Թ. Նազարբեկյանը և գեներալ Հովի. Հախվերդյանը գտնում են, որ պետք է Կարսը թողնել, ուժերը վերադասավորել նոր դիրքերում և պաշտպանվել: Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը պնդում է Կարսում պաշտպանվելու միտքը՝ գտնելով, որ Կարսի հանձնումից հետո բանակը կդասալքվի, և պարտությունը կդառնա անխուսափելի: Որոշվում է ինչ գնով էլ լինի պաշտպանել Կարսը: Անշուշտ, սպարապետի դիրքորոշումն ելնում էր բանակում տիրող իրական վիճակից: Նա լավ գիտեր, որ Կարսի շրջանում զորքերը մարտունակ չէին: Գիտեր նաև, որ գեներալներ Փիրումյանի ու Հովսեփյանի անհեռատես քաղաքականության հետևանքով անիշխանական վիճակի է հասցվել երկրամասը: 1920թ. հունիսին, երբ հայկական զորքերը գրավեցին Օլթին, գեներալ Հովսեփյանի նախաձեռնությամբ և հովանավորությամբ սկսվեցին ազգամիջյան խժդժությունները հույների ու քրդերի միջև: Արդահանի հույները ներխուժեցին Օլթիի շրջան, և սկսվեց թալանը: Այս անիմաստ քաղաքականությունը ունեցավ տխուր հետևանքներ: Հույների և մուսուլմանների շարունակվող բախումներն ունեցան այն հետևանքը, որ երկու համայնքն էլ

[15] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 626, թ. 3:

արդյունքում դժգոհեցին Հայաստանի կառավարությունից: Կառավարության բացթողումն այս հարցում պայմանավորված էր նրանով, որ գեներալներն իրենց շահադիտական նպատակները քողարկում էին հակամուսուլմանական քաղաքականությամբ: Ազգային զազրախոսությունը վարպետորեն քողարկում էր նյութապաշտությունն այն գործիչների, որոնք կոչված էին ոգի ու պետականության զգացում ներարկելու բանակին: Կամայականությունները հանգեցրին նրան, որ կառավարությունից դժգոհեցին ինչպես քրդերը, այնպես էլ հույները (որոնք նահանգապետի կողմից իրենց դեմ հարուցած քրեական գործերը դիտում էին որպես ճնշում համայնքի վրա): Դատի տրված մի խումբ ավազակների հաջողվեց գրգռել հունական 40-հազարանոց համայնքը և կազմակերպել արտագաղթ դեպի Հունաստան: Հեռացող հույների բնակավայրերը զբաղեցնում էին մուսուլմանները, որոնք էլ Թուրքիայի հարձակման ժամանակ ապստամբեցին հայկական կառավարության դեմ և թիկունքից խփեցին նահանջող հայկական բանակին: Սպաները հեղինակություն չունեին զինվորների շրջանում, որովհետև իրենց պարտականությունները թողած՝ զբաղված էին այլ գործերով: Կառավարության ու հատկապես դաշնակցության բյուրոյի լավ վերաբերմունքը դեպի բանակն ու նրա հրամանատարությունը վերջիններիս մոտ առաջացրել էր անպատժելիության գիտակցություն և դարձրել ավելի անպատասխանատու: Նման վիճակին քաջածանոթ էին և՛ բանակի հրամանատարությունը, և՛ կառավարությունը:

Նախարար Արտ. Բաբալյանը նշում է, որ երբ իրեն ու Վրացյանին ճանապարհում էին դեպի Կարս, զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանն ասել է. *«Առանց էրզրումի չվերադառնաք»*: Կարծեք թե Կարսի ճակատի հրամանատարությունը կատարվածից պետք է սթափվեր և փորձեր շտկել դրությունը, որովհետև ցուցում էր ստացել վերջ տալ նահանջին և անցնել պաշտպանության: Հոկտեմբերի 2-ին նման փորձ կատարվում է, սակայն հաջողություն չի ունենում: Այդ մասին գլխավոր շտաբի ամփոփագրում գրված է. «Մեր զորամասերը մարտերով թշնամուն դուրս քշեցին Նոր-Սելիմից, սակայն, երբ մթնեց, ստրատեգիական նկատառումներով ետ քաշվեցին Բեգլի-Ահմեդ»: Թուրքական զորաբանակների հետ զինաբախված ցանկացած հրամանատարի հայտնի էր, որ թուրքերը գիշերը չեն կարողանում կռվել: Այդ պատճառով էլ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական հրամանատարությունը հենց գիշերային հարձակումներով էր խուճապի ու պարտության մատնում թուրքական զորքերին: Իսկ հայկական զորքերը խուսափում էին կռվից «ստրատեգիական նկատառումներով»: Նման «պատճառաբանություններով» հայկական զորամիավորումները, փաստորեն առանց լուրջ զինաբախումների, նահանջելով Օլթիից՝ հասան

մինչև Կարս: Արդեն ասվեց, որ հայկական զորամասերի խուճապահար փախուստի հետևանքով սեպտեմբերի 29-ին կարող էր դատարկվել նաև Կարսը: Կարսի պարետ Դ. Բեկ-Փիրումյանը հրաման էր տվել ազգաբնակչությանը Կարսից տեղափոխելու մասին: Դրությունը փրկվեց նրանով, որ Սարիղամիշը և Մերդենեկը գրավելուց հետո թուրքական հրամանատարությունը դադարեցրեց հարձակումը և սկսեց ամրապնդել գրաված դիրքերը: Սեպտեմբերի 30-ին գեներալ Սիլիկյանը հաղորդում է Նազարբեկյանին. «Ներկայումս Կարսի ջոկատը հետևյալ դասավորությունն ունի. 5-րդ գունդը զբաղեցնում է Բեգլի-Ահմեդից ձախ մինչև Աղավա բարձունքը: 4-րդ գունդը՝ Բեգլի-Ահմեդից Օլուխլի- քարհանքեր, դրանից աջ՝ զբաղեցնում է 1-ին գունդը: Ավելի աջ՝Հարամ-Վարդանի բարձունքների վրա տեղադրված է գնդապետ Փերիվերդիևի ջոկատը: Ռոդիոնովկայում տեղադրված է գնդապետ Սարմիքեշևի ջոկատը: Բեգլի-Ահմեդից ձախ տեղադրված է նաև փոխգնդապետ Զատիկյանի ջոկատը: Տրամադրությունը զորքերում զգալիորեն փոխվել է դեպի լավը, և Կարսի ջոկատների հրամանատարը որոշել է անցնել ակտիվ գործողությունների:Նախատեսում ենք հարվածող խումբ կենտրոնացնել Մացրայում և հոկտեմբերի 2-ին ձախ թևը ճեղքելով հարվածել թշնամուն թիկունքից: Կարսի էվակուացիան առավոտյան ժամը 6-ից դադարեցվել է: Բնակիչներն օգնում են դասալիքներին բռնելու գործին»[16]: Այս, ինչպես նաև բազմաթիվ այլ զեկուցագրեր, ռազմական ամփոփագրեր ցույց են տալիս, որ հայկական բանակում միակամ հրամանատարություն չի եղել: Ի՞նչ է նշանակում Սիլիկյանի զեկուցագրի այն արտահայտությունը, թե «Կարսի ջոկատների հրամանատարը որոշել է»: Ինքը կառավարության կողմից նշանակվել է Կարս-Ալեքսանդրապոլ ուղղության զորքերի հրամանատար սպարապետի իրավունքներով, իսկ գործողությունների նախաձեռնությունը թողնում է Կարսի հրամանատար գեներալ Հովսեփյանին: Այն Հովսեփյանին, որը «ստրատեգիական նկատառումներով» ձախողել էր պաշտպանությունը: Այն պահին, երբ հայրենիքը վտանգի մեջ էր, երբ անհրաժեշտ էր բանակում վերից վար մտցնել միակամ հրամանատարություն, շարունակվում էր կիրառվել անջատ գործելու ընդունված կարգը: Այդպես էլ շարունակվեց մինչև պատերազմի վերջը: Եվ հրամանատարության նման բազմաշերտությունը ստեղծում էր մի վիճակ, երբ գործողությունների համար չկար պատասխանատու: Հայկական բանակի գեներալների համար անձնական հարաբերությունները վեր էին հայրենիքի շահերից: Գեներալ Սիլիկյանը, որը շատ լավ գիտեր գեներալներ Փիրումյանի ու Հովսեփյանի ռազմական ունակությունները, փոխանակ իր շտաբը հիմնադրելու Կարսում և իր ձեռքը վերցնելու ռազմաճակատի հրամանատարությունը, գնաց այլ

[16] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, մ. II, թ. 272:

ճանապարհով: Նա իր նստավայր դարձրեց Ալեքսանդրապոլը, որպեսզի չնեղացնի գեներալ Փիրումյանին, բավարարվելով իր շտաբի պետ գնդապետ Վեքիլովին Կարսում թողնելով, գործողությունները Փիրումյանի հետ կոորդինացնելու համար: Փաստորեն, ինչպես հանրապետության կառավարությունը, այնպես էլ բանակի հրամանատարությունը սեպտեմբերի 13-ից մինչև 30-ը կատարված իրադարձությունները չվերլուծեցին հիմնավորապես, իսկ ամենակարևորը, որ չտեսան սեփական հրամանատարության սխալները: Ավելի ճիշտ, տեսան, բայց չտեսնելու տվեցին, որովհետև այն ակունքվում էր պետական կառուցվածքի ողջ ապակենտրոն համակարգից: Նախարարներ Ս. Վրացյանը և Ա. Բաբալյանը հոկտեմբերի 2-ին հասնելով Կարս և ծանոթանալով իրադրությանը՝ անմիջապես հեռագրում են զինվորական նախարարին և պահանջում. «Կարսի ճակատից հեռացնել գեներալ Հովսեփյանին, որն իր խուճապային խառնվածքի պատճառով բարոյալքում էր առաջ բերում զորքի մեջ և վստահություն չէր ներշնչում զինվորներին ու սպայությանը»: Այնուհետև իր հուշերում Ա. Բաբալյանը նշում է, թե «սպարապետ Նազարբեկյանը մեր հեռագրին պատասխանեց, որ զինվորական նախարարի կարգադրության համաձայն, անկարելի է համարում գործողությունների ընթացքում բարձր հրամանատարության փոփոխություն կատարել: Մեր նպատակն էր բարեխիղճ զինվորականի ձեռքը կենտրոնացնել ճակատի բախտը և ազատվել այդ ցեցից, որ երկու տարվա ընթացքում բազմահազար բողոքների տեղիք էր տվել: Մենք պնդեցինք նաև, որ ընդհանուր հրամանատար զորավար Սիլիկյանը Ալեքսանդրապոլից տեղափոխվի Կարս... Զինվորական նախարարն անհարմար համարեց նաև մեր այդ առաջարկությունը: Սիլիկյանը մեզ պատասխանեց, որ իր տեղափոխությունը Կարս՝ անհարմար վիճակի մեջ կդնե զոր. Փիրումյանին... Չկար հրամանատարության միասնություն: Կարսի ճակատն ուներ երկու հրամանատար՝ գեներալ Հովսեփյան և Փիրումյան: Առաջինն իբր թե պիտի ենթարկվեր երկրորդին, բայց մենք բնավ այդ չնկատեցինք»[17]: Իրադարձությունների մասնակցի այս դիտարկումները ևս պարզ ցույց են տալիս, թե ինչպիսի անիշխանություն էր տիրում հայկական բանակում: Կառավարության ձեռք առած կիսատ-պռատ միջոցառումները ոչնչով չազդեցին իրավիճակի վրա: Ստեղծվեց հինգաստիճան հրամանատարական կարգավիճակ: Ռուբեն Տեր-Մինասյանը՝ դիկտատորի իրավունքներով: Բանակի հրամանատար գեներալ Նազարբեկյանը գլխավոր շտաբով գտնվում էր Երևանում: Կարս–Ալեքսանդրապոլ ուղղության հրամանատար գեներալ Սիլիկյանն իր շտաբով Ալեքսանդրապոլում: Գեներալ Փիրումյանն իր շտաբով՝՝ Կարսում և կոնկրետ Կարսի ճակատի գործող զորամիավորումները՝ գեներալ Հովսեփյանի հրամանատարությամբ: Իրականում երեք աստիճանները միջանկյալ էին և գործերի ընթացքի վրա ազդեցություն չունեցող: Իրերի նման վիճակի համար, թերևս, իր բաժինն ուներ բանակի հրամանատար գեներալ Նազարբեկյանի առաջացած տարիքն ու հարմարվող բնավորությունը: Մյուս կողմից բանակի անհարկի գովերգումը ժողովրդի մեջ տպավորություն էր թողնում, թե Անդրկովկասի ամենամարտունակ բանակը ի զորու է ոչ միայն պաշտպանվել թշնամուց, այլև պարտության մատնել նրան: Հոկտեմբերի 1-ի դրությամբ, երբ թշնամին գրավել էր Սարիղամիշի գիծը, և խուճապը տարածվել էր Կարսում, բանակի գովերգումը և թշնամու ուժերի թերագնահատումը շարունակվում էր: Զորաճակատին օժանդակող կոմիտեի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի քաղաքացիներին» դիմումում կարդում ենք հետևյալը. «Տաճիկ փաշաները վերջին փորձն են անում փրկելու կործանվող Տաճկաստանը: Նրանք հույներից պարտություն կրելուց հետո դեսից-դենից հավաքել են իրենց սոված և ուժասպառ զորքը... Հայաստանի քաղաքացիներ, մեծ վտանգներն անցել պրծել ենք, հայրենիք ու զորք ենք ստեղծել, հիմա ամոթ կլինի մեզ համար, եթե այս անգամ չջարդենք տաճիկ զորքի այս խղճալի մնացորդներին: Մենք չէինք, որ 1918թ. Սարդարապատի և Ղարաքիլիսայի կռիվներում հրաշքներ գործեցինք: Մենք չէինք, որ ցրիվ տվինք Զանգիբասարում, Շարուրում և Բոյուք-Վեդիում բուն դրած տաճկական հորդաներին: Մենք ուժ ունենք, տեղը եկած ժամանակ հրաշքեր ենք գործում, բայց դեռ մեր արյան մեջ հին ստրկական վախի մնացորդը կա: Դեն շպրտեք այդ վախը, մենք այլևս երբեք չպետք է հաղթվենք: Մենք հիմա կռվող ու հաղթող ժողովուրդ ենք: Մեր զորքը արդեն վախեցրել է թշնամուն, մեր զորքը անուն ունի»[18]: Նման մտայնությունը տիրապետող էր և սնվում էր տարածում գտած այն տեսակետից, թե Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիան չի կարող հայկական բանակին պարտության մատնել: Նույնիսկ այն դեպքում, երբ բերվում էին ռազմաճակատում տիրող իրավիճակին վերաբերող փաստերը, և այդ փաստերը ամբողջովին ցույց էին տալիս, որ հայկական զորքերը նահանջում են առանց թշնամու հետ զինաբախվելու, միևնույն է, եզրակացություններն արվում էին ցանկալի ձևով: Խոսելով ուժերի դասավորության մասին, հարկ է նկատել, որ թուրքերը Օլթիի վրա հարձակվեցին համեմատաբար փոքր ուժերով, իսկ հոկտեմբերին Կարսի անկումից առաջ կողմերն ունեին գրեթե հավասար ուժեր: Այդ մասին վկայում են Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանը[19] և կառավարության հանձնարարությամբ Կարսում գտնվող խնամատարության նախարար Արտ. Բաբալյանը: Վերջինս նշում է, որ «Մեր մեկ գնդում զինվորների

[17] *Արտ. Բաբալյան,* «Կարսի անկումը», Հայրենիք, Բոստոն, 1923, N12, էջ 55-56:

[18] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 296, ց. 1, գ. 39, թ. 1:

[19] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, թ. 5:

թիվը հասնում էր 1500-ի: Սարիղամիշի ճակատում ունեինք 1, 4, 5 և 7-րդ գնդերը, ուրեմն 6000 զինվոր, երկու գումարտակ 8-րդ գնդից (1000 հոգի), Կարսի և Ալեքսանդրապոլի պահակային գումարտակները (1000 զինվոր) և 600 ձիավորներ. ընդամենը 8. 600 զինվոր»[20]: Թուրքական զորքերի թիվը Կարսի գրավումից առաջ Կարսի ճակատում կազմում էր 9000-ից 10.000 զինվոր: 1920թ. հոկտեմբերի 25-ին՝ Կարսի անկումից հինգ օր առաջ Տ. Բեկզադյանը Թիֆլիսից կառավարությանը հայտնում է. «Վրաստանի գլխավոր շտաբի պետ գեներալ Զախարիաձեն ասաց, որ մեր դեմ կռվում է 18.000 զորք (երեք դիվիզիա), որից 3- ական հազար Օլթիի, Մերդենեկի և Իգդիրի շրջաններում, իսկ մնացածը՝ Ղարսի շրջանում: Այս թիվը ճշտվեց Ստոքսի տվյալներով, որն այսօր տեսակցության ժամանակ հայտնեց, որ մեր դրությունը շատ ծանր է և որ ինքը ահա երեք շաբաթ է, որ հեռագրել է իր կառավարությանը և մինչև հիմա ոչ մի պատասխան չունի»[21]: Արդեն նշել ենք, որ Ստոքսը հոկտեմբերի 4-ին եղել էր Կարսում, այցելել էր ռազմաճակատի գիծ, զրույցներ էր ունեցել հրամանատարական կազմի հետ և եկել էր այդ եզրակացության: Ստոքսին Կարսում պատմել էին, որ հայկական զորամիավորումներն առանց ճակատամարտի թողել են Օլթին, հետո Սարիղամիշն ու Կաղզվանը և «հարմար դիրքեր գրավելու նկատառումով» նահանջել են: Նման իրավիճակն էլ Ստոքսին բերել էր այն եզրակացության, որ հայկական բանակը բարոյալքված է և չի կարող կռվել տաճիկների դեմ: Բացի այդ, նա Հայաստանի կառավարությունից ստանում էր օգնություն հայցող բազում խնդրագրեր, որոնք նույնպես գալիս էին հաստատելու, որ Հայաստանի դրությունը շատ ծանր է: Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունները ոչինչ չարեցին Հայաստանին օգնելու համար: Դաշնակիցներին բազում դիմումներ էին հղում ինչպես Հայաստանի կառավարության նախագահ Հ. Օհանջանյանը, այնպես էլ Փարիզում գտնվող հայկական պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը: Մեր խնդիրը չէ այդ դիմումներին ու օգնություն հայցող խնդրագրերին անդրադառնալը, որովհետև Հայաստանի կառավարությունը քաջ գիտեր, որ Անգլիան պրոմուսուլմանական քաղաքականություն էր վարում, և այդ դիմումներն անօգուտ էին: Բացի այդ, Հայաստանի հանդեպ մեծ տերությունների վերաբերմունքը պատերազմի շրջանում լուսաբանված է[22]: Հարկ է նկատել, որ օգնության դիմումներն հղվում էին հենց պատերազմի սկզբից, ինչը բնականաբար այն տպավորությունն էր թողնում, որ Հայաստանը պատրաստ չէ դիմակայելու թշնամուն: Դեռևս սեպտեմբերի 28-ին Օհանջանյանը Բեկզադյանին հեռագրում է. «Թուրքական զորքերը մեծ ուժերով Ղարսի մեր ուժերի վրա հարձակում գործեցին, նպատակ ունենալով գրավելու ամբողջ Ղարսի մարզը: Կարող է պատահել, որ մենք ստիպված կլինենք երկու օրվա ընթացքում Սարիղամիշը թողնել: Դրությունը շատ լուրջ է»[23]: Ուրեմն, դեռ սեպտեմբերի 28-ին կառավարության ղեկավարին պարզ էր, որ «դրությունը շատ լուրջ է» և նա Բեկզադյանից պահանջում է հանդիպել Լեգրանի հետ և նրանից պահանջել, որ նրանք ազդեն իրենց դաշնակիցների վրա, որպեսզի պատերազմական գործողությունները դադարեցվեն: Այս փաստը խոսում է այն մասին, որ Հայաստանը բացարձակապես պատրաստ չէր դիմակայելու քեմալական զորքերին ու նաև տեղյակ չէր Հայաստանը պարտության մատնելու բոլշևիկյան ծրագրին: Որ Հայաստանը պատրաստ չէր պատերազմի՝ պարզ երևում է նաև 1920թ. սեպտեմբերի 30-ին «Ռազմիկ» թերթում հայ զինվորներին ուղղված հետևյալ կոչից. «Հայրենիքը նորից վտանգի մեջ է: Թուրքական զորքերը դահիճ փաշաների ղեկավարությամբ մտել են մեր երկրի ներսը և սպառնում են Հայաստանի Հանրապետությանը... Հայ մարտիկներ, որպես լուրջ է և ամենից առաջ դուք եք, որ պետք է գիտակցեք թուրքական ահավոր վտանգը, որովհետև դուք եք տեսել այն դաժանությունները, որ գործել են թուրք զինվորները հայ ժողովրդի նկատմամբ: Այս անգամ մեր թշնամին ուզում է վճռական հարված հասցնել հայ ժողովրդին, նա գազազած Արևմտյան ճակատում հույն զորքերի տարած հաղթություններից՝ Արևելյան ճակատում իր վրեժն է ուզում լուծել հայերից... Հոգեվարքի մեջ ապրող մեր թշնամին իր վերջին ուժերն է գործադրում հարվածելու Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարին: Նա գիտե, որ Փարիզի դաշնագրով Հայաստանին են կցված հայկական վիլայեթները և որ վաղը փաստորեն հայը տեր է դառնալու իր ամբողջական հայրենիքին: Միթե այդ բանը կարող է հանդուրժել թուրքը: Երբեք: Եվ ահա, նա վերջին անգամ լարել է իր ուժերը մեր ազատությունը փշրելու: Հայ զինվոր, ժողովիր ուժերդ և կուրծք տուր փշրելու թաթարի ստրկացնող լուծը: Այդ լուծը դարեր շարունակ անիծված ու մահաշունչ է եղել հայի համար, այսօր մեր բոլոր ուժերով պետք է ետ վանենք մեզանից... Տաճիկը պարտված է. մեր ազատությունը պահանջում է, որ այս անգամ էլ նա պարտվի հայ զինվորից... Դեպի կռիվ, դեպի հաղթանակ»[24]: Մենակ մնալու գիտակցությունը բարոյա-հոգեբանական ծանր կացության մեջ էր դրել Հայաստանը, որովհետև մեծ դաշնակիցներ ունենալու երկամյա քարոզչությունը հոդս էր ցնդել, և երկիրը հայտնվել էր

[20] *Արտ. Բաբայան,* «Կարսի անկումը», Հայրենիք, 1923, N 12, էջ 58:
[21] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 83, թ. 7:
[22] Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Եր. 1972: *Է. Ա. Զոհրաբյան,* 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր. 1997թ:
[23] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 81, թ. 5:
[24] Նույն տեղում, ֆ. 290, ց. 1, գ. 37, թ. 1:

քեմալա-բոլշևիկյան աքցանում: Ս. Վրացյանն անդրադառնալով պատերազմին, նշում է, որ «Հայաստանը բառիս բուն նշանակությամբ մնացել էր մենակ: Նա բոլորովին պատրաստ չէր այդ պատերազմին: Դեռ նոր էր դուրս եկել ներքին քաղաքացիական կռիվների շրջանից: Մայիսյան բոլշևիկյան շարժումները գրեթե կազմալուծել էին նրա բանակը, թուրքական շրջանների նվաճման գործողությունները ավելի ևս թուլացրել էին երկրի մարտական ուժերը: Ադրբեջանը նավթ չէր տալիս, և Հայաստանի երկաթուղին հազիվ շունչ էր քաշում: Բոլշևիկների հարձակումները Ղազախի, Բասարգեչարի, Դարալագյազի և Շարուրի շրջաններում անընդհատ ջղային վիճակի մեջ էին պահում Հայաստանը և ստիպում, որ հայկական զորքերը մնան ցրիվ վիճակի մեջ»[25]: Այս ամենին եթե գումարում ենք բոլշևիկյան քարոզչությունը, որ «քեմալականները նախկին թուրքերը չեն և գալիս են Հայաստանն ազատագրելու իմպերիալիզմի լծից», պատկերը պարզ է դառնում: Մեր գրասեղանին են դրված հարյուրավոր արխիվային փաստաթղթեր պատերազմի շրջանի վերաբերյալ, դրանցում ամեն ինչ կա, բացի ճակատամարտից: Միայն Դրոն է կռվել Սուրմալուի ճակատում: Օլթի-Սարիղամիշ-Կարս գծի վրա, որը պատերազմի հիմնական ուղղությունն էր, զորքերը գեներալ Հովսեփյանի հրամանատարությամբ, առանց ճակատամարտ տալու նահանջել են «ավելի հարմար դիրքեր գրավելու» պատճառաբանությամբ: Արդեն նշել ենք, որ Սարիղամիշի անկումից հետո Կարս ժամանած նախարարներ Ս. Վրացյանը և Արտ. Բաբալյանը, ծանոթանալով իրերի վիճակին, Երևանից պահանջում են գեներալ Հովսեփյանին անմիջապես ազատել զորքերի հրամանատարությունից և Սիլիկյանին իր շտաբով Ալեքսանդրապոլից տեղափոխել Կարս և նրան հանձնել զորքերի ընդհանուր հրամանատարությունը: Ռ. Տեր-Մինասյանը երկու առաջարկությունն էլ մերժում է: Հետաքրքիր է, որ եթե նախարարների առաջարկությունները չպետք է կատարեին այդ դեպքում ինչու էին նրանց ուղարկել ռազմաճակատներ, այն էլ՝ արտակարգ լիազորություններով:

Պատմականությանը հավատարիմ մնալու համար ասենք, որ հոկտեմբեր ամսին Կարսի ճակատում մարտեր եղել են, բայց այն բանից հետո, երբ թուրքական զորքերը Սարիղամիշն ու Մերդենեկը գրավելուց հետո, քաղաքական նկատառումներով դադարեցրել էին առաջխաղացումը: Հոկտեմբեր ամսի զինվորական ամփոփագրում ասված է. «Հոկտեմբերի 1-ին թշնամին հարձակման անցավ Օլուխլու գյուղի մեր դիրքերի վրա, սակայն ետ մղվեց: Հոկտեմբերի 2-ին թշնամու փորձերը Հարամ-Վարդան գյուղը շրջապատելու համար, մեր հակահարվածով վերջ գտան: Հոկտեմբերի 3 – Սարիղամիշի ուղղությամբ հանգիստ է: Մերդենեկի Լալա-Վարդան գյուղի մոտի բար-

[25] *Ս. Վրացյան,* Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ 1958, էջ 476:



Ա. ԽԱՏԻՍԵԱՆԻ ԴԱՀԼԻՃԸ

Ա. ԽԱՏԻՍԵԱՆ
Վարչապետ

Ս. ԱՐԱՐԱՏԵԱՆ
Նիւթական նախարար

Ա. ՉԻԼԻՆԳԻՐԵԱՆ
Արդարադատութեան նախարար

Դ. ԱՂԲԱԼԵԱՆ
Կրթական նախարար

Հ. ՕՀԱՆՋԱՆԵԱՆԻ ԴԱՀԼԻՃԸ

Հ. ՕՀԱՆՋԱՆԵԱՆ

Ա. ԳԻՒԼԱՆԴԱՆԵԱՆ

Գ. ՂԱՋԱՐԵԱՆ

Թ. ՏԷՐ — ՄԻՆԱՍԵԱՆ

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԶԳ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՒ
ԵՒ Հ. Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՋԵՒ

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Ա. ԵԱՏԻՍԵԱՆ

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ



ԱՐՇԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԿԱՐԹԱԼԻՍՈՅ ՊԷՏԸ Ե. ԷՋՄԻԱԾԻՆ ՄԻԱԲԱՆՆԵՐԻՆ ՀԵՏ

Ձախէն աջ՝ Զօր. Նազարբէգեան, Ալ. Խատիսեան, Զօր. Յովսէփեան եւ Զօր. Դանիէլ բէգ Փիրումեան, որոնք կը դիտեն հայ բանակի տողանցքը՝ Կարսի մէջ:

Դանիել-Բեկ Փիրումյան

ՄԻՔԱՅԷԼ ՊԱՊԱՃԱՆԵԱՆ

Պետական գործիչ, վեկավար Հայ Ժողովրդ. Կուսակցութեան

Լ.Ճանթ

Գևորգ Ե. Դեպյատրոսյան Պատրիարք Կաթուղիկոս ամենայն Հայոց

Գարեգին Հովսեփյան



Հարս.Միջերկրյան ծովափին գտնվող Հաճասարաց ավերակներից

Կարս. Կամուրջը, եկեղեցին - միջնադարեկան

Կարս. Կամուրջը ձերնադաշ՝ տարի վերջ կամաշտայ գիշերամարքի - գիշերամարքի մի մաս:

Սարիսամիշ. դեպարան բարաքից

Այս դարասկզբի ամբողջ վրա վերականգնվել է միայն Ս. Աստվածածին եկեղեցին

Հարավի սովետացման վրաստ. 1921թ.

Կարմիր բանակի զորքերը մտնում են Ադրբեջան, ազատագրելով վրաստանի սովետացումից հետո

ՀՐԱՄԱՆ № 1.

Հայաստանը յայտարարուած է Խորհրդային Անկախ Հանրապետութիւն։ Մինչև Խորհրդային Հայաստանի Յեղկոմի Երևան ժամանումը կառավարական իշխանութիւնը յանձնուած է Ռազմական Հրամանատարութեան ընկեր Դրո Կանայեանի գլխաւորութեամբ և Ռ. Ս. Ֆ. Ս. Ռ. Կոմիսսար Հայաստանի Ռազմական Իշխանութեան կից ընկեր Սիլինի։

Հայաստանի բոլոր պետական հիմնարկութիւնները, պաշտօնական անձինք և քաղաքացիները պարտաւոր են անյապաղօրէն կատարելու Ռազմական Հրամանատարութեան հրամանները։ Հրամանատարութեան կարգադրութիւնների դէմ գնացողները ենթարկուում են անմիջական պատասխանատուութեան յեղափոխական ժամանակի օրէնքներով։

Ռազմական ուժերի հրամանատար՝ ԴՐՕ
ՌՍՖՍՌ Կոմիսար՝ ՍԻԼԻՆ

Դեկտեմբ. 2 1920 թ.
Երևան

ПРИКАЗЪ № 1.

Армения провозглашена Независимой Совѣтской Республикой. До прибытія Ревкома Совѣтской Арменіи въ Эривань, правительственная власть передана военному командованію, во главѣ котораго поставленъ тов. Дро Канаянъ и Комиссаръ Р. С. Ф. С. Р. при военномъ командованіи Арменіи тов. Силынь. Всѣ правительственныя учрежденія, должностныя лица и граждане Арменіи обязаны безъ промедленія выполнять приказы военнаго командованія. Виновные въ противодѣйствіи распоряженіямъ командованія подлежатъ немедленно отвѣтственности по законамъ революціонаго времени.

Командующій вооруженными силами Д Р О

Комиссаръ Р. С. Ф. С. Р. С И Л Ы Н Ь

ծունքներում կուտակվող քրդերի խումբը ցրված է մեր հրետանու կրակով: Հոկտեմբերի 4-ին մեր սավառնակները ռումբեր նետեցին Սարիղամիշ քաղաքում գտնվող տաճկական պահեստների վրա: Կողքի մոտ ամբողջ օրը կռիվ էր զգալի ուժերով արշավող քրդերի և տաճիկների դեմ, որոնք ունեին թնդանոթներ: Հոկտեմբերի 8-ին մեր սավառնակները ռումբեր նետեցին Սուլուտաշ կայարանի մոտ գտնվող տաճկական դիրքերի վրա: Դեմուր-Ղափսի շրջանում մեր զորքերը գրավեցին Տիկոռ, Մուշուչ, Կարա-Թաուզ, Ալթուն-Բուլաղ, Ղոնդուղսու և Գյուլիստան գյուղերը: Կայենի սարի մոտ մեր զորքերը հանդիպեցին տաճիկների ուժեղ դիմադրությանը: Հոկտեմբերի 9-ին Սարիղամիշի ուղղությամբ փոքրաթիվ խուզարկու խմբերի գործողություններ: Հոկտեմբերի 13-ին Կարսի շրջանում մեր զորքերը մաքրեցին Նախիջևան, Զրչի և Ծպնի գյուղերը քրդական հրոսակախմբերից»[26]:

Հոկտեմբերին կայացած այս մանր-մունր զինաբախումներից հետո գեներալ Հովսեփյանը որոշում է հոկտեմբերի 14-ին անցնել հակահարձակման: Հարձակումն սկսվում է առավոտյան, որին մասնակցում էին 1-ին, 4-րդ, 5-րդ և 7-րդ գնդերը: Ահա թե այդ ճակատամարտի մասին ինչ է գրում Կարսում գտնվող նախարար Արտ. Բաբալյանը. «Հոկտեմբերի 14-ին մեր զորքերը դիմեցին հարձակման: Մեր աջ թևը՝ հենված Հարամ-Վարդանի անառիկ ամրություններին պիտի պատռեր թշնամու շղթան, իսկ կենտրոնը և ձախ թևը շարժումներով պետք է գրավեին թշնամու ուշադրությունը և աջ թևի հաջողության պարագայում հարձակվեին և թշնամուն քշեին Սարիղամիշի ձորը: 1-ին գունդը դիմեց հարձակման, բայց թշնամու ուժեղ դիմադրությանը չդիմանալով, փախուստի մատնվեց: Եվ մինչ 7-րդ գունդը, գնդապետ Իշխանյանի ղեկավարությամբ օգնության էր հասնում 1-ին գնդին, թշնամին նախահարձակ եղավ և շարժվեց դեպի Հարամ-Վարդան: Կենտրոնը ենթադրելով աջ թևի հաջողությունը առաջ է գնում Սարիղամիշի խճուղով և հասնում է Բերնոյի բարձունքները, իսկ ձախ թևը կատարում է իր վրա դրված պարտականությունը և զորական ցույցով գրավում թշնամու ուշադրությունը: Զորավար Հովսեփյանը կառչած երկաթգծին և անտեղյակ դրությանը, չկարողացավ ժամանակին հրամաններ տալ ու միայն երեկոյան հրամայեց կենտրոնին ետ նահանջել և բռնել Բեգլի-Ահմեդի բարձունքները: Մեր աջ թևը կորուստներ տալով հազիվ կարողացավ վերականգնել նախկին դրությունը և բռնել հին դիրքերը: Այսպիսով, հոկտեմբերի 14-ի կռիվը մատնվեց անհաջողության: Մի ճիգ ևս և թշնամին պիտի փախուստի դիմեր: Մեր օդանավը կեսօրին լուր էր բերել, որ տաճկական տրանսպորտը գլուխը դարձրել է դեպի Սարիղամիշ: Այդ օրը մենք ունեցանք 70 սպանված և 500 վիրավոր... Երեկոյան գեներալ Հովսեփյանը չկարողացավ ընդհանուր հրա-

[26] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 290, ց. 1, գ. 38, թ. 1-2:

մանատարին զեկուցել, թե իր զորամասի գնդերը որ դիրքերն էին բռնել: Անհրաժեշտ եղավ մի քանի ժամ ճշտելու համար 1-ին, 4-րդ, 7-րդ գնդերի տեղավորումը: Օրվա ընթացքում այս զորավարը չէր կարողացել նոր կարգադրությունների ծրագիրը հաջողացնել: Չէր էլ կարող, որովհետև անկարող էր ղեկավարելու այդքան մեծ թվով զորքեր»[27]: Հոկտեմբերի 14-ի հակահարձակմանն ու պարտությանն է անդրադարձել նաև Կարսի նահանգապետը: Նա սրտի ցավով գրում է. «Այդ հանդիպումը (ճակատամարտը- Կ. Ս) վերջացավ մեր պարտությամբ: Հրամանատարական կազմը փախավ առաջինը, զինվորները հետևեցին նրան: Ականատեսները պատմում են, որ Հովսեփյանն այնչափ վախեցած էր ու շփոթված, որ չէր կարողանում հեռախոսի ծողը ձեռքում պահել, իսկ 4-րդ գնդի հրամանատար գնդապետ Միրիմանյանը նստել էր կառքը ու փախել... Ականատեսները պատմում են, որ հաջողությունը մեր կողմն էր, եթե լիներ մի ուժգին գրոհ մեր կողմից, թշնամին կփախչեր, թողնելով ոչ միայն Սելիմը, այլև Սարիղամիշը: Պարզվեց, որ մեր զինվորները փամփուշտ չեն ունեցել և ընթացքում փամփուշտներ էին տեղափոխվում ճակատ: Ես իմ ավտոմոբիլը տրամադրեցի, որ փամփուշտ տեղափոխվի: Զինվորները ասում էին, որ հաղթությունը մեր կողմն էր, բայց փամփուշտ չունենալու պատճառով մենք ստիպված էինք փախչել... Հոկտեմբերյան մարտերում արտակարգ քաջություն ցույց տվեց առաջին հետևակ գնդի հրամանատար գնդապետ Մազմանյանը, բայց զորաց շարքերն արդեն լքված էին և զորքը կազմալուծված թողնում էր պատերազմի դաշտը և փախչում: Գարեգին եպիսկոպոսի եռանդը զորքի տրամադրությունը բարձրացնելու ուղղությամբ ևս իզուր անցան: Նա մեկնում էր ռազմաճակատ և ոգեկոչում էր կաթողիկոսի կոնդակով: «Մեր զորքի մեջքը կոտրեցին,– ասում էր ժողովուրդը,– նա մեղավոր չէ, նորան փախուստի մատնեցին»: Եվ այդ չարաբաստիկ օրվանից (հոկտեմբերի 14-ից) մեր շարքերը նոսրանում էին ժամ առ ժամ»[28]: Հոկտեմբերի 14-ի հակահարձակման ձախողման մասին նույն օրը երեկոյան բանակի հրամանատար գեներալ Նազարբեկյանին Ալեքսանդրապոլից հաղորդում է գեներալ Սիլիկյանը. «Կարսի խմբավորման զորքերի հարձակումը հանդիպեց թշնամու ուժեղ դիմադրությանը: Ժամը 12-ին ամբողջ ճակատով անցնելով հակահարձակման թշնամին ստիպեց նահանջել սկզբից 5-րդ գնդին, իսկ հետո էլ 4-րդ և 1-ին գնդերի զորամասերին»[29]: Ռազմական ամփոփագրերում և զեկուցագրերում ուրիշ հիշատակություն չկա հոկտեմբերի 14-ի հակահարձակման մասին: Ի՞նչ ծրագրեր կային, ռազմա-ստրատեգիական ի՞նչ խնդիր էր լուծելու այդ

[27] *Արտ. Բաբայան,* Կարսի անկումը, Հայրենիք, 1923, N12, էջ 57:
[28] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 374-375:
[29] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 344:

ճակատամարտը: Սրանք կարևոր հարցեր են, որովհետև հայկական զորքերն առանց կռվի նահանջել էին այդ դիրքերը և պետք է պատրաստվեին Կարսի պաշտպանությանը: Հանկարծ ինչու՞ որոշվեց հոկտեմբերի 14-ին հակահարձակման անցնել: Այս հարցերը պատասխան են պահանջում, որովհետև հոկտեմբերի 14-ը ոչ միայն կանխորոշեց Կարսի անկումը, այլև սկիզբ դարձավ բանակի զանգվածային դասալքման: Պատահական չէ, որ նահանգապետ Ստ. Ղորղանյանը հոկտեմբերի 14-ը համարում է չարաբաստիկ օր: Արդյոք կապ կա՞ հայկական զորքերի պարտության և 1920թ. հոկտեմբերի 14-ին ՌԿ (բ) Կ Կենտկոմի քաղբյուրոյի՝ Հայաստանի մասին ընդունած հայտնի որոշման միջև, որի մասին նախորդ գլխում խոսել ենք: Որ քեմալականները Մոսկվայի հետ նախնական պայմանավորվածության համաձայն Սարիղամիշը գրավելուց հետո հոկտեմբերի 1-ից դադարեցրել էին ռազմական գործողությունները՝ փաստ է: Նույնիսկ հոկտեմբերի 14-ի հաղթանակից հետո նրանք առաջ չշարժվեցին և չգրավեցին Կարսը: Ինչի՞ էին սպասում: Մեր կարծիքով, Անկարան սպասում էր իր դաշնակցի վերջնական որոշմանը, որը և կայացրեց Մոսկվան հոկտեմբերի 14-ին: Քանի որ Հայաստանը «միջազգային իմպերիալիզմի գործակալ» որակողները և նրան այդ հարթության վրա պարտության մատնելու ծրագրի իրական հեղինակները Ստալինն ու Օրջոնիկիձեն էին, ուստի քաղբյուրոն, հոկտեմբերի 14-ի իր ընդունած որոշումը տեղում իրագործելու համար, Բաքու գործուղեց Ստալինին: Բաքվի և Անկարայի միջև, Նախիջևանի վրայով, ուղիղ հեռախոսակապ կար: Քաղբյուրոյի՝ Հայաստանի մասին ընդունած որոշումից հետո Մոսկվայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Եղ. Եղիազարյանը հոկտեմբերի 20-ին վարչապետ Հ. Օհանջանյանին ահազանգում էր. «Հնարավոր է, որ մուսուլմանների ճնշման տակ հայերի դեմ ելույթներն ավելի ակտիվանան, դրան պետք է պատրաստ լինել: Հարձակումը Հայաստանի վրա թելադրվում է նաև Կովկասի նկատմամբ ընդհանուր քաղաքականությամբ... Իրենց կարծիքով Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը պետք է հանդիսանա մոտ ապագայի գործ: Մասնավորապես Հայաստանի նկատմամբ հնարավոր է շատ ակտիվ ռազմական ելույթ ամենամոտ ժամանակներում»[30]: Այս նամակով տեղեկացվում է նաև, որ Էնվեր փաշան գտնվում է Մոսկվայում, և թե բոլշևիկներն ինչպիսի փառահեղ ընդունելություններ ու ճաշկերույթներ են կազմակերպում թուրք գործիչների պատվին: Եվ թե ինչպես Մոսկվան թուրք և թաթար գործիչների համար դարձել է քաղաքական Մեքքա: Փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանի կառավարությունը բոլորովին անտեղյակ էր Հայաստանը պարտության մատնելու և հետո միայն այն խորհրդայնացնելու բոլշևիկյան ծրագրերին:

[30] *Կ. Սարդարյան,* Պատմություն և իրականություն, Եր. 1991, թ. 72:

Եթե նրանք տեղյակ լինեին սեպտեմբերի17-ի ծրագրին և գիտենային, որ հոկտեմբերի 14-ին ՌԿ (բ) Կ Կենտկոմի քաղբյուրոն հավանություն է տվել Հայաստանը քեմալական զորքերի կողմից պարտության մատնելու և հետո հայ ժողովրդին թուրքերից փրկելու լոզունգով այն խորհրդայնացնելու դիվային ծրագրին, ապա պատերազմի շրջանում չէին դիմի Չիչերինին ու Լեգրանին:

Հայաստանի կառավարությունը հավատում էր բոլշևիկյան դիվանագետների այն խոստումներին, թե Հայաստանի խորհրդայնացումը չի մտնում իրենց ծրագրերի մեջ և որ Հայաստանի անկախությանը ձեռք չեն տա: Հետաքրքիր է, որ նրանք այս ամենը կրկնում էին նույնիսկ քաղբյուրոյի հոկտեմբերի 14-ի որոշումից հետո՝ մոռանալով, որ այդ որոշման մեջ պարզ ու հստակ ասված էր. «Համաձայնել Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու անհրաժեշտության մասին ՀԿԿ Կենտկոմի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի կարծիքի հետ»: Չիչերինն էր Հայաստանի հարցը ներկայացրել քաղբյուրոյի հաստատմանը: Նույն Չիչերինն էլ Հայաստանի ղեկավարներին հավաստիացնում էր, թե նպատակ չունեն Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու: Բոլշևիկներին այս սին հավաստիացումներին նույնիսկ փաստաթղթային կերպարանք տվեցին: Երկարատև քաշքշուկից հետո, հոկտեմբերին Երևան եկավ Լեգրանը և հոկտեմբերի 28-ին Հայաստանի կառավարության հետ ստորագրեց մի պայմանագրի նախագիծ, որով բոլշևիկյան Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի անկախությունը: Բոլշևիկյան դիվանագիտության այս քայլը պարզապես ծաղր էր Հայաստանի անկախության հանդեպ: Նրանք վեց ամիս շարունակ ձգձգեցին բանակցությունները և պայմանագիր ստորագրեցին միայն այն ժամանակ, երբ պարզ էր, որ Հայաստանը պարտվում է, և իրենց ծրագրերը հաջողությամբ իրագործվելու են: Հենց դրա համար էլ պայմանագրի նախագիծ էին ստորագրում, այլ ոչ թե պայմանագիր: Հոկտեմբերի 28-ին Երևանում ստորագրած այդ փաստաթղթով բոլշևիկները ցույց էին տալիս, որ իրենք ոչինչ չունեն Հայաստանի անկախության դեմ: Այսինքն՝ բոլշևիկները ջանում էին ապացուցել, թե իրենք ոչ մի կապ չունեին քեմալականների հարձակման հետ: Նույնիսկ խոստանում էին, որ իրենք պատրաստ են միջնորդի դեր կատարել և ստիպել թուրքերին՝ իրենց զորքերը ետ քաշել 1914թ. ռուս-թուրքական սահմանագիծը: Եթե հիշում եք, սեպտեմբերի 17-ի Հայաստանը պարտության մատնելու ծրագրում նշված էր, որ Հայաստանի վրա քեմալական զորքերի հարձակման ընթացքում Ռուսաստանը պետք է հանդես գա խաղաղարարի դերով, և չպետք է երևա նրա մասնակցությունը պատերազմին: Բայց քանի որ Հայաստանի դեմ քեմալա-բոլշևիկյան ագրեսիայի մասին շատ էին գրում հատկապես վրացական թերթերը, իսկ հոկտեմբերի 6-ին Թիֆլիսում կայացած վրացահայության բազմահազարանոց միտինգում հնչած ճառերում ու ընդունած բանաձևում նշվում էր, որ դա «տաճկա-բոլշևիկյան բլոկի հարձակումն է Հայաստանի դեմ»: Բացի այդ, Չիչերինին հղած հեռագրերում ու նամակներում Օհանջանյանը պնդում էր, որ Սովետական Ռուսաստանը ռազմական օգնություն է տալիս քեմալականներին: Հոկտեմբերի 20-ին Չիչերինին հղած հեռագրում նա փաստում է, որ Տուապսեից Տրապիզոն է ուղարկվում զենք ու զինամթերք, որը օգտագործվում է Հայաստանի դեմ: Օհանջանյանը խնդրում է դադարեցնել քեմալականներին ցույց տրվող ռազմական օգնությունը. «Հակառակ դեպքում մենք հնարավորություն չենք ունենա բացատրելու պառլամենտին և հայ ժողովրդին մի կողմից՝ Ձեր կառավարության բարեկամական խոստումների, իսկ մյուս կողմից, թշնամուն ուժեղացնելու Ձեր գործողությունների միջև եղած հակասության վերաբերյալ»[31]: Անհրաժեշտ էր այդ ամենը հերքել: Ահա ռուսական կողմն էլ պնդում էր, որ իրենք կապ չունեն քեմալականների հարձակման հետ և պատրաստ են «հաշտարար միջնորդի» դեր կատարել: Բայց ճշմարտությունը հոկտեմբերի 6-ին Թիֆլիսում արտասանած ճառում ասել էր բոլշևիկ Ստարկը: Նա Հայաստանը համարել էր իմպերիալիզմի գործակից, որը Արևելքում խաղում է նույն դերը, ինչ որ Արևմուտքում՝ Լեհաստանը: Հոկտեմբերի 28-ին, երբ Լեգրանը պայմանագրի նախագիծ էր ստորագրում Հայաստանի կառավարության հետ, Կարսի ճակատում սկսվել էր թուրքական զորքերի լայնամասշտաբ հարձակումը: Արդյո՞ք պատահական զուգադիպություններ են այս ամենը: Դժվար է ասել: Միայն պետք է նշենք, որ հոկտեմբերի 26-ին «հաշտության կոնֆերանս» հրավիրելու մի առաջարկով էլ Օհանջանյանին դիմում է Ադրբեջանի արտաքին գործերի ժողկոմ Հուսեյնովը[32]: Այս ամենը եթե նույնիսկ պատահական զուգադիպություններ են, միևնույն է, դրանք քաղաքական նույն շղթայի տարբեր օղակներն են: Վերը մենք նույնիսկ կապ տեսանք հոկտեմբերի 14-ի հայկական զորքերի ձախողված հակահարձակման և նույն օրը բոլշևիկյան քաղբյուրոյի՝ Հայաստանի վերաբերյալ կայացրած որոշման միջև: Բանն այն է, որ սեպտեմբերի 29-ի կառավարության արտակարգ նիստը որոշել էր պաշտպանվել Կարսում և որևէ հակահարձակման մասին խոսք չի եղել և այն կատարվել է գեներալ Հովսեփյանի նախաձեռնությամբ, ուստի խնդիրը վերաբերում է գեներալ Հովսեփյանի անձին: Ամիսներ շարունակ այդ գեներալին Կարսի ճակատից հեռացնելու պահանջ էր դնում նահանգապետ Ղորղանյանը: Հոկտեմբերի 2-ին գալով Կարս և ուսումնասիրելով ռազմա-

[31] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 147:
[32] Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 191, թ. 97-98:

ճակատի դրությունը՝ Ղորղանյանի պահանջին միացան նաև նախարարներ Ս.Վրացյանն ու Արտ. Բաբալյանը... Իհարկե, որևէ փաստ չկա, որ նա համագործակցել է բոլշևիկների հետ, բայց որ նա իր վարքագծով քայքայեց, բարոյալքեց ու կոտրեց զորքերի դիմադրողական ունակությունը Օլթի-Սարիղամիշ-Կարս ռազմաճակատային գծում, դա փաստ է: Այս գեներալի մասին միայն հայտնի է, որ հոկտեմբերի 27-ին Ռ. Տեր-Մինասյանը նրան ազատեց Կարսի ճակատի զորքերի հրամանատարի պարտականությունից, իսկ պատերազմի ավարտից հետո նույն Ռ. Տեր-Մինասյանի հրամանով ձերբակալվեց և ուղարկվեց Երևանի բանտ[33]: Հոկտեմբերի 27-ին Կարս է գալիս գեներալ Ղազարյանը: Նա փոխարինելու էր եկել գեներալ Հովսեփյանին: Գեներալ Ղազարյանն ընդունելով հրամանատարությունը՝ շտաբում չի գտնում որևէ տեղեկություն, թե ինչ զորամասեր են իրեն ենթարկվելու, որքան է նրանց քանակը և որտեղ են գտնվում այդ զորամասերը: Կարսի նահանգապետը, նկարագրելով այս անբարեհույս իրավիճակը, անում է հետևյալ եզրակացությունը. «Գեներալ Կազարովը կարող էր Ռուբեն փաշային ասել. եկա Կարս, բայց բանակ չեմ տեսնում»[34]: Արդեն նշել ենք, որ հոկտեմբերի 14-ի ձախողված հակահարձակումից հետո դասալքությունն ստացել էր զանգվածային բնույթ: Հոկտեմբերի 28-ին Կարսի ոստիկանապետը նահանգապետին զեկուցում է, որ «բանակի դասալքությունը մեծ չափերի է հասել, և որ փախչող սպաներն իրենց հետևից տանում են ամբողջ գումարտակներ, և որ ճանապարհները պահող ոստիկանները չեն կարողանում կանգնեցնել այդ ընթացքը: Հոկտեմբերի 29-ին չդիմանալով իր զորախմբի դասալքմանը՝ ինքնասպան է լինում 1-ին գնդի հրամանատար գնդապետ Մազմանյանը: Նման մթնոլորտում հոկտեմբերի 30-ին թշնամին առանց որևէ լուրջ դիմադրության հանդիպելու գրավեց Կարսի դժվարամատչ ամրոցը: Ահա թե Կարսի անկման օրն ինչպես է նկարագրում նախարար Արտ. Բաբալյանը «Մի տարի գերության մեջ» հուշերում. «Հոկտեմբերի 30-ը մի անիծված ճակատագրական օր էր: Այդ օրն էր, որ զարմանալի պայմաններում ընկավ Կարսը: Մի ժամ չտևեց նրա դիմադրությունը: Առանց թշնամու ուժերի հանդիպելու, տաճիկների փոքրաթիվ զորքը քաղաք մտավ և առանց զոհերի այդ հուժկու ամրոցին տեր դարձավ: Մեր զորքերը փախչում էին, դեն ձգելով հրացանները, պարենի տոպրակները, նույնիսկ վերարկուներն ու կոշիկները: Ձիավորները սրարշավ անցնում էին Կարսի հռչակավոր ձորով, սպառազինված, առողջ, կոխկրտելով ծերունիներին ու կանանց, որոնք ահաբեկված՝ հազարներով թափվել էին ձորը և

[33] Հետագայում գեներալ Հովսեփյանը ծառայում է կարմիր բանակում և ար ժանանում «Կարմիր դրոշի» շքանշանի:

[34] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 34:

փրկություն էին փնտրում դեպի Ալեքսոլ: Ժամը 10-ին դեռ քաղաքը հանգիստ էր, իսկ ժամը 11-ին քաղաքը, համարյա, գրավված էր թշնամու կողմից... Ու՞ր էին մեր գնդերը, բոլորը փախուստի ճամփին... Ահա ձորի մեջտեղում է գտնվում թնդանոթների մի ամբողջ բատարեա: Հրամանատար սպան աջ ու ձախ է նայում ճամփա փնտրելու համար: Թշնամին արդեն իջնում է Կարադաղից դեպի ձոր, որպեսզի գրավե թնդանոթները: Անշարժ կանգնած են զինվորներն ու սպաները: Հանկարծ հրամանատար սպան, երիտասարդ ու քաջ կապիտան Բագրատունին ատրճանակը հանելով բղավում է. «Տղերք, փախեք փրկվեք» և ինքնասպան վայր է ընկնում ձիուց: Մի քանի րոպեից թնդանոթները թշնամու ձեռքին էին... Որոշեցինք պատգամավորություն ուղարկել թշնամուն բերդն ու քաղաքը հանձնելու համար»[35]: Կարսի անփառունակ անկումով վճռվեց պատերազմի ելքը: Բանակը չկռվեց, և առանց ճակատամարտի թշնամին մտավ ու գրավեց Կարսը: Ի՞նչն էր բանակի դասալքման պատճառը. բոլշևիկյան պրոպագանդա՞ն, հրամանատարության անբարեհուսությո՞ւնը, թե՞ բանակի տարբեր կողմնորոշումների հակված լինելը: Միգուցե օտար ուժերին ապավինելու կործանարար հոգեբանությունը, որը տիրում էր հանրապետությունում և նույնությամբ արտացոլվում բանակում: Այս հարցադրումները, որոնք փոխկապակցված են, քննարկենք հերթականությամբ: Կարսի դատական քննիչ կոմունիստ Արամ Եսայանը վկայում է, որ «մինչև թուրքերի մուտքը (Կարս – Կ. Ս.) հայկական զորամասերում մտցվել էր այն համոզմունքը, որ քաղաքի վրա են հարձակվում բոլշևիկյան-թուրքական զորամասերը, որի հետևանքը եղավ այն, որ նրանք քաղաք մտան առանց որևէ դիմադրության»: Դա անում էին ինչպես հայ կոմունիստները թիկունքում, այնպես էլ թուրքական բանակի շարքերում գործող հազար բոլշևիկ պրոպագանդիստները ճակատում: Թուրքական բանակում գործող այդ հազար բոլշևիկները զբաղվում էին Բաքվի Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարի որոշումները պրոպագանդելով[36]: Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանը իր հուշերում պնդում է, որ բանակի դասալքման համար ամբողջապես մեղավոր է հրամանատարական կազմը: Պատմելով Կարսի անկման մանրամասները և հրամանատարական կազմի սպային ոչ հարիր գործելաձևերը՝ նա նույնիսկ զայրացած գրում է. «Եվ իրերի այդ առանցքում մենք դեռ հավակնություն ունեինք մեր անկախության ու պետականության մասին խոսելու»[37]: Գ. Նժդեհն անդրադառնալով այս խնդիրներին՝ նկատում է, որ. «Մայիսյան ծանոթ դեպքերից հետո այլևս անկարելի էր ապահով համարել Հայաստանի անկախությունը:

[35] «Հայրենիք», 1924թ., N 6, էջ 54:

[36] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 40:

[37] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, թ. 311-463:

1920թ. տխուր մայիսը՝ սկիզբը մեր անկախության վախճանի, եկավ ապացուցելու, որ մեր հանրապետությունը զուրկ էր այն կարևոր ազդակից, առանց որի, այն էլ Արևելքում, որպես անկախ պետություն, դժվար էր հարատևել: Այդ ազդակը ազգային կարգապահ ու հավատարիմ զորքն է: Համազգեստը, սպառազինությունը, ինչպես և զորանոցային կյանքը դեռ բավական չեն, որպեսզի զինված զանգվածը արդիական իմաստով համարվի զորք: Այդ արտաքին կեղևից զատ կա հոգեբանական շաղախը, գիտակցական կարգապահությունը, մարտունակությունը, սեղմ ասած՝ ոգին, առանց որի զինված զանգվածը ամեն ինչ է, միայն ոչ զորք... Մենք ազգային զորք չունեինք, այլ զորքի նման մի բան: Ահա թե ինչու հայ ժողովուրդն ունեցավ իր տխուր մայիսը և թե ինչու տաճիկ զորքերն այնքան ազատորեն ու հոխորտանքով մտան մեր երկիրը: ...Շատ բաների հետ կարելի է հաշտվել, միայն ոչ տաճիկների՝ Հայաստանում ունեցած հաջողության հետ: Նա հաղթեց, որովհետև հայկական զորքը պարտված էր դեռ պատերազմը չսկսած»[38]: Այս ամենի համար, անշուշտ, մեծ դեր խաղաց նաև տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը: Քեմալականները հարձակումն սկսեցին այն շրջանում, երբ նոր էր ստորագրվել Սևրի պայմանագիրը, և բոլորը սպասում էին իրադարձությունների բոլորովին այլ ընթացքի: Ահա ոգևորության այդ պահին էլ վրա հասավ մեծ ողբերգությունը: Հայ իրականությունը հոգեբանորեն պատրաստ չէր նման կտրուկ փոփոխությանը: Այդպիսի մի ոգևորություն էլ հայ իրականությունն ապրել էր 1917 թվականին, երբ վրա հասավ բոլշևիկյան հեղափոխությունը, և 1918թ. ստորագրվեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որով Թուրքիային էին հանձնվում ոչ միայն ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքները, այլև Կարսի մարզը: 1919թ. գարնանը Անգլիան պատերազմում պարտված Թուրքիայից վերցրեց Կարսի մարզը և հանձնեց Հայաստանին ու նաև Կարսի բանալիները Խատիսյանին հանձնող գեներալ Բիչի բերանով ասվեց. «Բավարարվեք ձեռք բերածով, հաշտվեք Թուրքիայի հետ և ամրապնդեք Ձեր պետությունը և ապագան Ձերը կլինի»: Արդեն նշվեց, որ Խատիսյանը մերժեց, ինչպես այս, այնպես էլ Թուրքիայի հետ բանակցություններ սկսելու թուրքական կողմի 1919թ. արած այլ առաջարկությունները: Այստեղ են Հայաստանի կառավարության հիմնական սխալն ու անհեռատեսությունը: Հայաստանի կառավարությունը Խատիսյանի գլխավորությամբ չուզեց հասկանալ, որ մերժելով Թուրքիայի հետ բանակցությունների սեղանի շուրջ նստելը և նոր պայմանագրի ստորագրումը, իրենք ուժի մեջ են թողնում Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերը: Իհարկե, դժվար էր հաղթահարել ազգային-հոգեբանական բարդույթը, որովհետև տասնամյակներ շարունակ հայրենիք ասվածը հասկացվում էր հենց Արևմտյան Հայաստանը: Վերջապես Եղեռնից անցել էր ընդամենը չորս տարի, և բոլորը ականատեսներն էին թուրքերի կողմից կատարած վայրագությունների և չէին կարողանում ներել այդ ամենը ու հաշտվել 60 հազար քառակուսի կիլոմետր տարածքով պետություն ունենալու փաստի հետ: Բացի այդ, «դաշնակիցների» հաղթանակի ոգևորությունը կորցրել էր քաղաքական իրողությունների պետական զգացողությունը: Պարզ է ու բնական, որ բոլոր հայերն էին ուզում ու երազում, որ իրագործվի Սևրի պայմանագիրը, բայց նույնքան անբնական է, որ պետությունը ղեկավարելու կոչված քաղաքական գործիչներն անտեսում էին քաղաքական իրողությունները՝ պատճառաբանելով, թե «թուրքի հետ բանակցությունների չեն նստի»: Անշուշտ կեղծում էին: Նպաստավոր շրջանում էին այդպես ասում, իսկ աննպաստ շրջանում լավ էլ բանակցում էին, նույնիսկ պայմանագիր ստորագրում: Պատերազմը տանուլ տալուց հետո նույն գործիչների հակաթուրքիզմն անմիջապես փոխվեց խոհեմության ու իրատեսության, բայց արդեն ուշ էր: Հոկտեմբերի 31-ին Ալեքսանդրապոլում գտնվող Ռ. Տեր-Մինասյանը վարչապետ Հ. Օհանջանյանին և գեներալ Նազարբեկյանին հայտնում է հետևյալը. «Գեներալ Սիլիկյանի զեկույցով Կարսում թշնամու ձեռքում են մնացել 5-րդ գնդի մեծ մասը, ինչպես նաև գեներալներ Փիրումյանը, Արարատյանը և Ղազարյանը, գնդապետներ Վեքիլովը, Բաբաջանովը և ուրիշներ: Շատերը կարծում են, որ ցանկալի է դիվանագիտական ելույթ»[39]: Կարսում գերի ընկած խնամատարության նախարար Արտ. Բաբալյանը նոյեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանը հղած նամակում գրում է. «Ի նկատի ունենալով վերջին օրերի դեպքերը և բոլոր հանգամանքները, ես այն համոզմունքին եմ, որ օր առաջ պետք է վերջ տալ պատերազմական գործողություններին և շտապ կերպով սկսել հաշտության բանակցությունները և համաձայնության գալ տաճիկ Անատոլիայի կառավարության հետ և գտնել մի ընդհանուր լեզու հաշտ ապրելու միմյանց հետ: Ես կարծում եմ, որ այս է մեր պետության ու ժողովրդի անմիջական շահը: Տարիներ տևող արյունահեղությանը պետք է վերջապես դադար տալ, որ քայքայում է մեր ժողովրդին: Այս առաջարկի հետ համաձայն են գեներալներ Փիրումյանը, Արարատյանը, Ղազարյանը և գնդապետ Վեքիլովը»[40]: Բայց մինչ այդ նամակի բովանդակությունը հոկտեմբերի 5-ին Ալեքսանդրապոլից Երևան կհաղորդեր գեներալ Հախվերդյանը, Հ. Օհանջանյանը հոկտեմբերի 3-ին արդեն դիմել էր Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանը հաշ-

[38] *Գ. Նժդեհ,* «Ազատ Սյունիք», Հայրենիք, 1925, N 6, էջ 128-129:

[39] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 378:

[40] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 290, ց. 1, գ. 40, թ. 2:

տության խնդրանքով[41]: Սա նույն Օհանջանյանն էր, որ ամիսներ առաջ հրաժարվեց նույն հասցեով հղվելիք նամակը ստորագրելուց: Պարտությունը բացեց Օհանջանյանի աչքերը և դաշնակիցներից լքված՝ մենակ մնալու գիտակցությունը նրան ստիպեց տեսնել, որ Թուրքիան Հայաստանի անմիջական հարևանն է, և անհրաժեշտ է նրա հետ «անմիջապես խաղաղության բանակցություններ սկսել»: Ուշացած ու նաև հարկադրական ձեռնարկ էր սա, որը դրությունը չէր կարող փոխել: Բացի այդ, եթե Հայաստանի վարչապետը մի քիչ համբերեր, ապա կստանար նոյեմբերի 2-ին իրեն հղված Թուրքիայի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Մուհքարի տարողունակ նամակը՝ նույնպես խաղաղության բանակցություններ սկսելու առաջարկությամբ[42]: Այդ նամակը Երևան հասավ նոյեմբերի 5-ին: Կարսը թողնելուց հետո հայկական զորքերը մարտերով նահանջում էին Ալեքսանդրապոլ: Դրությունը ծանր էր: Կառավարությունը չհուսադրող հաղորդագրություններ էր ստանում ռազմաճակատից: Նոյեմբերի 5-ին գեներալ Սիլիկյանը Ալեքսանդրապոլից գեներալ Նազարբեկյանին հաղորդում է. «Դրությունը ռազմաճակատում այսպիսին է. զորամիավորումներն ինքնագլուխ թողնում են ռազմաճակատը: Զինվորները խմբերով դասալքվում են և չեն ենթարկվում հրամանատարներին: Ռազմաճակատի բարոյալքումն ու քայքայումն ընթանում է արագորեն»[43]: Նույն օրը Ռ. Տեր-Մինասյանը, ծածկագիր հեռագրով, վարչապետ Հ.Օհանջանյանին հայտնում է. «Մեր զորքերը կռվել չեն ցանկանում, ցանկանում են խաղաղություն: Առաջարկում եմ. 1-ին՝ սկսել բանակցությունները և կնքել հաշտություն: 2-րդ՝ անհապաղ զորացրել երեսունից վեր տարիք ունեցողներին, ցանկացողներից կազմակերպել կամավորական զորամասեր, խոստանալ մոտ ապագայում զորացրել մյուսներին: Կարծում եմ, որ եթե պատերազմը շարունակենք, ամեն ինչ կկորցնենք»[44]: Նոյեմբերի 6-ին Կարաբեքիրը զինադադարի պայմաններ է առաջարկում[45]: Ստեղծված ծանր պայմանների հարկադրանքով կառավարությունը որոշում է ընդունել թուրքական կողմի առաջարկած զինադադարի պայմանները: Նոյեմբերի 7-ին ժամը 5[20]-ին վարչապետ Օհանջանյանի զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի և գեներալ Նազարբեկյանի ստորագրությամբ հետևյալ հեռագիրն է հղվում Ալեքսանդրապոլում գտնվող գեներալներ Սիլիկյանին և Հախվերդյանին. «Լսելով տաճկական Արևելյան բանակի հրամանատար Քյազըմ Կարաբեքիրի առաջարկած զինադադարի

[41] Նույն տեղում, ֆ. 200, ց. 2, գ. 100, թ. 24:
[42] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 97, թ. 1-2:
[43] Նույն տեղում, ց. 1, գ. 602, թ. 88:
[44] Նույն տեղում, ց. 2, գ. 86, թ. 70:
[45] Նույն տեղում, թ. 72-75:

պայմանների կետերի, նաև ի նկատի ունենալով ռազմական դրությունը և Ալեքսանդրապոլից արտահայտած հրամանատարության կարծիքը, կառավարությունը միաձայն որոշեց ընդունել զինադադարի տաճկական առաջարկությունը և հանձնարարել հրամանատարությանը ի կատար ածել այն[46]»: Երբ հայկական կողմը կատարում է զինադադարի պայմանները, և Ալեքսանդրապոլի բերդն ու կայարանը հանձնվում է թուրքերին, վերջիններս նոյեմբերի 8-ին առաջ են քաշում նոր՝ ավելի ծանր զինադադարի պայմաններ: Կողմերի միջև մի քանի օրվա ինտենսիվ գրագրությունն արդյունք չի տալիս: Հայկական կողմը պնդում է նոյեմբերի 6-ի զինադադարի պայմանները: Կարաբեքիրը, չքմեղանալով, պատասխանում է, որ նոյեմբերի 6-ի պայմաններն առաջ են քաշվել իր կողմից, իսկ նոյեմբերի 8-ինը «իր կառավարության կողմից առաջարկված զինադադարի պայմաններն են և ինքն այն փոխելու իրավասություն չունի»[47]: Հայաստանի կառավարությունը մերժում է նոյեմբերի 8-ի զինադադարի առաջարկությունը: Այդ մասին կառավարությունը նոյեմբերի 9-ին հրապարակում է հետևյալ հաղորդագրությունը. «Նոյեմբերի 6-ին տաճկական հրամանատարության առաջարկած զինադադարի պայմանները Հայաստանի կառավարությունն ընդունեց: Այն ժամանակ, երբ նոյեմբերի 7-ի զինադադարի պայմաններն արդեն իրագործված էին և մենք պատրաստվում էինք հաշտության պատվիրակություն ուղարկել, նույն Անգորայի կառավարությունն իր նոյեմբերի 8-ի հեռագրով հայտնում է, թե ինքը փոխում է արդեն կնքված զինադադարը և առաջարկում է նոր պայմաններ.

1. 24 ժամվա ընթացքում Ալեքսանդրապոլում, բոլորովին գործածելի վիճակում, երկու հազար արագահարված հրացան, սարքով և կենդանիներով միասին, 20 հատ ծանր և 40 հատ թեթև գնդացիր, երեք մարտկոց թնդանոթ, չորս հազար ջորի, հազար սնդուկ հրացանային ռազմամթերք, 6 հազար թնդանոթի ռումբ, երկու շոգեմեքենա և հիսուն վագոն պիտի հանձնվեն մեզ:

Կանոնավոր և անկանոն հայկական զինվորական ուժերը Արփաչայի ընթացք–Ալագյոզ կայարան, Կիրմիզլի–Կոլիջան–Նալբանդ կայարան–Վորոնցովկա գծից արևելք պիտի քաշվեն, այս գծից արևմուտք գտնվող երկաթուղագիծը չքանդված և անվնաս պիտի թողնվի:

2. Երեք օրվա ընթացքում դարձյալ կանոնավոր և անկանոն հայկական զինված ուժերը Սուրմալու–Արաքս կայարան, Կիզիլզիրաբեթ–Ալագյոզ լեռան լանջը–Դանագիրմազ–Նովո Միխայլովկա–Լոռիքենդ–Շերմունդ–Յարվանդաղ գծից արևելք պիտի քաշվեն:

[46] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 86, թ. 71:
[47] Նույն տեղում, ց. 1, գ. 602, թ. 204:

3. Զինադադարի կնքումից անմիջապես հետո Սանահին կայարանի և Ալեքսանդրապոլի միջև գծի վրա ամեն տեսակի ռազմական պիտույքների փոխադրությունը պիտի կանգ առնի: Այս փոխադրությունները ստուգելու համար Սանահին կայարանը և Ղարաքիլիսե մեկ-մեկ հանձնախմբեր պիտի ուղարկվեն և հայկական կառավարությունը հանձնախմբերի անձեռնմխելիությունը և Ալեքսանդրապոլի միջոցով նրանց արևելյան ճակատի հրամանատարության հետ կանոնավոր և ապահով կապ ունենալը պիտի ապահովի:

4. Մինչև զինադադարի 3-րդ օրը երեկոյան, երկու կողմից պատվիրակները հաշտության բանակցությունները սկսելու համար Ալեքսանդրապոլ պիտի գտնվեն: Եվ այդ ժամանակի ընթացքում եթե առաջին և երկրորդ պայմանների բովանդակությունը իրագործված է, իսկույն պետք է սկսվեն հաշտության բանակցությունները:

5. Զինադադարի ժամանակի ընթացքում մեր զորամասերը Ալեքսանդրապոլի շրջանում առաջին պայմանում հիշված Արփաչայ – ընթացք – Նալբանդ կայարան – Վորոնցովկա գծից արևելյան կողմը և մյուս շրջաններում իրենց գտնված գծից առաջ չպիտի անցնեն:

6. Զինադադարի կնքումից անմիջապես հետո երկու կողմից թշնամական գործողություններին վերջ պիտի տրվի:

7. Սույն զինադադարի պայմանները Ալեքսանդրապոլի շրջանում գտնվող հայկական առաջավոր մասերին հանձնելու ժամին գործադրության մեջ են մտնում և պայմանաժամն ի վերջո, եթե կարիք զգացվի, երկարաձգելու պայմանը յոթ օր է:

Ընդունել այս պայմանները՝ նշանակում է զրկվել մեր երկրի պաշտպանության ամենակարևոր դիրքերից և բոլորովին զինաթափ լինել թշնամու առջև: Այսպիսի մահացու պայմանների առաջարկումն ապացուցում է, որ թշնամին ոչ միայն ցանկություն չունի հաշտվելու մեզ հետ, այլև ձգտում է հիմնահատակ կործանել Հայաստանը և բնաջնջել հայ ժողովրդին: Այսպիսի պայմաններում կառավարությունը մերժեց Անգորայի կառավարության զինադադարի նոր պայմանները՝ պնդելով նոյեմբերի 7-ի զինադադարի պայմանների վրա»[48]: Նոյեմբերի 10-ին Իգդիրի ուղղությամբ գործող զորքերի հրամանատար Դրոն Նազարբեկյանին հաղորդում է, որ թուրքական զորքերը ռազմական գործողությունները վերսկսել են: Նոյեմբերի 11-ին Օհանջանյանը Կարաբեքիրին գրում է. «Խորին ցավով իմ կառավարությունն իմացավ, որ իր անկեղծ ձգտումը Տաճկաստանի և Հայաստանի միջև հետագա արյունահեղությանը վերջ դնել, որի համար նա ընդունեց և կատարեց նոյեմբերի 6-ին առաջադրած զինադադարի Ձեր պայմանները, ըստ

[48] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, մ. II, թ. 406-407:

երևույթին, կարելվույն չափ չի գնահատված Ձերդ գերազանցության կողմից: Իմ կառավարությունը չի կարող չցավել նաև այն բանի համար, որ Ձեր կողմից վերսկսված են ռազմական գործողությունները»[49]:

Նույնիսկ այդ ծանր պահին, երբ պարզ էր, որ Հայաստանին ոչ ոք չի օգնելու, որովհետև քեմալական զորքերը հարձակվում էին բոլշևիկների ու Անտանտի համաձայնությամբ, հայկական դիվանագիտությունը շարունակում էր իր խաղը մեծ տերությունների հակասությունների վրա: Նոյեմբերի 4-ին Օհանջանյանը հանձնարարում է՝ Բեկզադյանից հարցնել. «Շեյնմանի հետ տեսակցել է, թե ոչ: Եթե ոչ, թող տեսնվի և պարզի, կարո՞ղ են նրանք կասեցնել թուրքերի շարժումը, որն ըստ երևույթին միաժամանակ և բոլշևիկների դեմ է ուղղված և գուցե նույնիսկ անգլիացիների բարոյական համաձայնությամբ»: Նոյեմբերի 6-ին Բեկզադյանը Օհանջանյանին հայտնում է. «Երկար քաղաքական խոսակցություն ունեցա Ստոքսի հետ: Ասացի, որ անգլիացիների համար ավելի նպաստավոր է, որ մենք իրենց միջոցով հաշտվենք թուրքերի հետ, քան ռուսների միջոցով»[50]: Նոյեմբերի 11-ին Բեկզադյանը հանդիպում է նաև Վրաստանում ՌՍՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Շեյնմանի հետ: Նա այդ հանդիպման մասին Օհանջանյանին հայտնում է հետևյալը. «Նոյեմբերի 11-ին տեսակցություն ունեցա Շեյնմանի հետ: Նրան տեղեկացրի Կարաբեքիրի նոր ուլտիմատումի մասին: Անցնելով տաճիկների առաջխաղացման բնույթին՝ ասացի, որ այն զերծ լինելով Սովետական Ռուսաստանի քաղաքական պրինցիպներից՝ պանիսլամական է և արդեն այսօր իրենց պետք է պարզ լինի, որ այն Բաքվի գրավումն է ձգտում: Հայտնեցի նաև, որ Անտանտը Լեհաստանի և Ռուսաստանի միջև կայացած հաշտությունից հետո կօգտագործի տաճիկների առաջխաղացումը Սովետական Ռուսաստանի դեմ: Շեյնմանն ինձ լսում էր ուշադիր և պահանջեց փաստեր: Ես պատասխանեցի, որ դոկումենտներ չունեմ և ելնում եմ անցքերի ու դեպքերի տրամաբանական ընթացքից: Ի վերջո Շեյնմանը համաձայնելով ինձ հետ՝ հայտնեց, որ իրենք էլ ունեն այդ կասկածները և որ այդ կասկածներով առաջնորդվում է կենտրոնը: Հայտնեց, որ Չիչերինը դիմել է Քեմալին կանգնեցնելու առաջխաղացումը դեպի Հայաստան»[51]: Կարսը գրավելուց հետո քեմալականների ինքնավստահ պահվածքը և դեպի Արևմուտք հակվածության ցուցադրումը զայրացրել էր բոլշևիկյան գործիչներին: Հանգամանքն այս հայտնի չափով սառնություն առաջացրեց բոլշևիկների մոտ հանդեպ իրենց հեղափոխական դաշնակիցների: Ու նաև տպավորություն թողեց, որ քեմալականները հեղափոխական ուժից փոխա-

[49] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 97, թ. 6:
[50] Նույն տեղում, գ. 86, թ. 68-69:
[51] Նույն տեղում, գ. 81, թ. 11:

կերպվում են իմպերիալիստականի: Այդ պատճառով էլ նոյեմբեր ամսին բոլշևիկները տարածեցին իրականության հետ կապ չունեցող այն վարկածը, թե իբր քեմալականները ցանկանում են գրավել Բաքուն: Նոյեմբերի 11-ին Չիչերինը նամակով դիմեց Քեմալին՝ պահանջելով կանգնեցնել Հայաստանի դեմ իր զորքերի առաջխաղացումը և կողմերից պահանջում է ընդունել իրենց միջնորդությունը, որը գործնականում որևէ նշանակություն չունեցավ: Քեմալականները տեսնում էին, որ բոլշևիկներին զայրացնում է իրենց ինքնուրույն գործունեությունը, բայց նրանք Կարսը գրավելուց հետո «համաշխարհային հեղափոխությանը մատուցելիք իրենց ծառայությունները» ավարտված էին համարում: Սա էլ նշանակում է, որ համաշխարհային հեղափոխությունը տանուլ է տրվում նաև Արևելքում: Այս գլխավոր հանգամանքն էր կատաղեցրել Լենինին և Ստալինին ու նաև Անդրկովկասում գործող բոլշևիկ գործիչներին, այլ ոչ թե Հայաստանի պարտությունն ու նրա ծանր վիճակը: Բայց թուրքերը, որպես իրատես քաղաքագետներ, տեսնում էին, որ Հայաստանի մնացած մասի խորհրդայնացմանն իրենք չեն կարող խոչընդոտել: Այդ պատճառով էլ Չիչերինի նամակը ստանալուց հետո ոչ թե դադարեցրին իրենց զորքերի առաջխաղացումը, այլ նոյեմբերի 13-ին Ալեքսանդրապոլում ստեղծեցին հեղկոմ և քաղաքում հայտարարեցին սովետական իշխանություն[52]: Այս քայլով նրանք սովետական կողմին հասկացրեցին, որ Ալեքսանդրապոլը ենթակա է վերադարձման և որ իրենք դեմ չեն, որ Հայաստանի մնացած տարածքում ևս հաստատվեն սովետական կարգեր:

Հայաստանի համար ողբերգական այդ օրերին էլ շրջանառու դարձավ իրականությունից առասպելի չափ հեռու այն հարցադրումը, որ Ռուսաստանի միջնորդությունը ոչ միայն նպատակ է հետապնդում կանգնեցնելու թուրքերի առաջխաղացումը, այլև ստիպել նրանց թողնելու Կարսը: Շատ հնարավոր է, որ Չիչերինն ու Լեգրանը հենց այդպես էլ ցանկանում էին, բայց իրականում նրանք լոկ կատարողներ էին: Հենց դրա համար էլ Ստալինը Բաքու էր գործուղվել, որպեսզի Լեգրանը և մյուսները չշեղվեն հիմնական քաղաքական գծից և կյանքում իրագործեն ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի հոկտեմբերի 14-ին ընդունած որոշումը: Վերջապես խոսելով Չիչերինի նոյեմբերի 11-ին կողմերին արած խաղաղարար միջնորդության և դրան հաջորդած՝ հայ ժողովրդին օգնելու դիվանագիտական հնարքների մասին, չպետք է մոռանալ սեպտեմբերի 17-ի ծրագրային փաստաթուղթը, որում ասված էր, որ Հայաստանի պարտությունից հետո պետք է հանդես գալ հայ ժողովրդին թուրքական ջարդերից փրկելու խաղաղարար դերով, ինչը որ անում էր բոլշևիկյան դիվանագիտությունը: Որպեսզի ընթերցողը համադրի ու, առանց դիվանագիտական խաբկանքների, պարզ տեսնի, որ

[52] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 144, ց. 3, գ. 45, թ. 6:

Հայաստանում իրադարձությունները զարգանում էին ըստ սեպտեմբերի 17-ի բոլշևիկյան ծրագրի՝ կրկին մեջ բերենք այդ ծրագրի՝ Հայաստանին վերաբերող մասը. «Ռազմական գործողությունները մեր կողմից լրացուցիչ ուժ չեն պահանջի: Ըստ էության դրանք կիրագործվեն թուրքական էրզրումյան կորպուսի միջոցով: Մեր կողմից հարձակումը կլինի մոտավորապես ցուցադրական, որի համար մեր ուժերը բավական են:

...Դիվանագիտական առումով Արևմտյան Եվրոպայի հասարակության փոթորիկը դիմակայելու նպատակով Հայաստանի վրա հարձակումը պետք է իրագործվի հետևյալ ձևով. թուրքական զորքերը սկսում են հարձակումը Հայաստանի վրա, իսկ մենք մեր մամուլի ու հրապարակայնության մյուս օրգանների միջոցով ահավոր աղմուկ ենք բարձրացնում Եվրոպայում նոր հայ-թուրքական կոտորածների և դրանք մեկընդմիշտ կանխելու անհրաժեշտության մասին: Եվ այդ կոտորածներին վերջ տալու նպատակով մեր զորքերը Հայաստան են մտնում նրա զորքերի կողմից անպաշտպան մնացած արևելյան սահմանից: Ազգայնական պատերազմը կանխվում է, և նրա փոխարեն հաստատվում է խորհրդային իշխանություն: Այնուհետև մենք թուրքական զորքերը դուրս կբերենք Հայաստանի սահմաններից (որին թուրքերը կենթարկվեն անվերապահորեն) և հայերի և թուրքերի հետագա բախումը կանխելու համար մեր զորքերով գրավում ենք հայ-թուրքական սահմանը: Այսպիսով, մենք արևմտաեվրոպական պրոլետարիատի աչքում կհառնենք խաղաղարարի արտակարգ ազնիվ դերում, որը դեպի Հայաստան էր շարժվել միայն նրա համար, որպեսզի վերջ դնի կոտորածներին և հայ ժողովրդի մնացած մասին փրկի վերջնական ոչնչացումից»: Ահա եկել էր «խաղաղարարի ազնիվ դերով» հանդես գալու ժամանակը: Նոյեմբերի 11-ին, կողմերին խաղաղատար միջնորդություն անելուն զուգահեռ, Չիչերինը դիմում է իր դիվանագետներին, որպեսզի նրանք տարածեն, որ բոլշևիկները գնում են հայերին թուրքերից փրկելու: Նույն նպատակով նոյեմբերի 11-ին Չիչերինը Լոնդոնում Սովետական Ռուսաստանի առևտրական ներկայացուցիչ Կրասինին հեռագրում է. «Սովետական Ռուսաստանը Թուրքիային և Հայաստանին առաջարկել է իր միջնորդությունը: Թուրքական ազգայնականների վերջին հաջողություններից հետո Հայաստանի վիճակն օրհասական է: Ռուսաստանը երբեք չի ցանկացել զավթել Նախիջևանը, Ջուլֆան, Զանգեզուրը և Ղարաբաղը: Ռուսական բանակը գրավել է այդ վիճելի տարածքները մինչև հարցի լուծումը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Այդ պետություններից յուրաքանչյուրը հայտարարում է իր իրավունքը այդ տարածքների վրա: Նախիջևանում ազգաբնակչությունը մուսուլմանական է, Զանգեզուրում խառը, ինչը որ բարդացնում է այդ հարցը»[53]: Տեսնում ենք,

[53] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 191, թ. 102:

թե Չիչերինն ինչպիսի անմեղ բացատրություններ է տալիս կարմիր բանակի կողմից Հայաստանի տարածքների գրավման փաստին: Չնայած նա նշում է, որ այդ տարածքները վիճելի են, բայց և այնպես հեռագրի վերջին տողերից երևում է, որ այդ տարածքները օկուպացվել են Ադրբեջանին հանձնելու համար: Այդ պատճառով էլ, երբ նա անդրադառնում է այդ տարածքների բնակչության էթնիկական կազմին, ամբողջապես կեղծում է իրականությունը: Նախ «մոռանում է» Լեռնային Ղարաբաղը, որովհետև նրա բնակչության 95 տոկոսը հայեր էին: Այնուհետև նշում է, որ Նախիջևանի ազգաբնակչությունը մուսուլմանական է, իսկ Զանգեզուրինը խառն է: Այս ամենը Չիչերինը հաղորդում է Կրասինին, որպեսզի նրա միջոցով այն տարածվի եվրոպական քաղաքական շրջաններում և ցույց տրվի, որ բոլշևիկները Հայաստանի դեմ քեմալականների ագրեսիայի հետ կապ չունեն և Հայաստան են գնում վերջինիս փրկելու: Կրասինը դեռ չէր հասցրել Չիչերինի հանձնարարությունը կատարել, երբ նոյեմբերի 13-ին Երևանում գտնվող Սովետական Ռուսաստանի ներկայացուցչության անդամ Սիլինը Լեգրանին հեռագրում է. «Նախիջևանից Շարուրի վրա են հարձակվել սովետական զորքերը գնդացիրներով և երեք թնդանոթով: Ջոկատը խախտել է օգոստոսի 10-ի համաձայնագիրը և վտանգում է մեր միջնորդությունը: Անհրաժեշտ է դադարեցնել այդ հարձակումը... Հայերը մեզ հարցնում են, թե դա չի՞ նշանակում թուրքերի հետ միասնական գործողություններ»[54]:

Հաջորդ օրը՝ նոյեմբերի 14-ին Թիֆլիսում Բեկզադյանի հետ հանդիպման ժամանակ Լեգրանը հերքում է Շարուրի վրա կարմիր զորքերի հարձակման փաստը: Այնուհետև անդրադառնալով միջնորդության հարցին, նա ասում է. «Եթե Հայաստանը հրաժարվի Սևրի պայմանագրից, այդ դեպքում Սովետական Ռուսաստանը կարող է միջամտել և հարկ եղած դեպքում, նույնիսկ, ստիպել տաճիկներին վերադառնալու 1914թ. սահմանները, եթե նրանք համաձայնությամբ դա չանեն: Այս պայմանն ընդունելուց հետո Ռուսաստանը Հայաստանի ներքին գործերին միջամտելու կարիքը չունի և որ Հայաստանի անկախությունն ընդունվում է»[55]:

Ահա, թե Հայաստանը փրկելու և հայ ժողովրդին օգնելու իր ցանկությունների մեջ որքան հեռու է գնում Բ. Լեգրանը: Ու եթե այս փաստերի նպատակայնությունը ցույց չի տրվում, և դրանք մեխանիկորեն շարում են իրար կողքի, ստացվում է թյուր ու ճշմարտանման այն տպավորությունը, թե բոլշևիկները ոչ միայն կապ չունեին քեմալականների՝ Հայաստանի վրա հարձակման հետ, այլև ջանում էին նրան օգնել ու ծանր կացությունից հանել: Բայց, երբ նրանց բերած փաստերը քննում ես համաշխարհային հեղափոխության ընդհանուր տարողությամբ, պարզվում է դրանց ճշմարտանմանությունն ու շինծու լինելը: Տրամաբանական այդ հարթության վրա քննելով փաստերը, դրանք համադրելով ու հակադրելով՝ մենք տեսնում ենք, որ Լեգրանը կեղծում էր: Բանն այն է, որ Հայաստանի վերաբերյալ Սովետական Ռուսաստանի տարվելիք քաղաքականության հիմնական փաստաթուղթը ՌԿ (բ) Կ Կենտկոմի քաղբյուրոյի 1920թ. հոկտեմբերի 14-ի որոշումն էր, որում պարզ ու հստակ շարադրված էր Հայաստանում սովետական իշխանության հաստատման համար վճռական գործողություններ ծավալելու մասին, իսկ Լեգրանը պնդում էր, թե «Հայաստանի անկախությանը ձեռք չենք տա»: Երկրորդ և հիմնականը՝ այդ ինչպես էր Լեգրանը ստիպելու տաճիկներին, որ նրանք «թողնեին Կարսը ու հեռանան մինչ 1914թ. ռուս-թուրքական սահմանը»: Տրամաբանության ո՞ր օրենքներով էր, որ բոլշևիկները մի կողմից ծրագրում էին տաճկական զորքերի միջոցով Հայաստանը պարտության մատնելը, իսկ երբ այդ ծրագիրը մոտենում էր ավարտին, որոշում են նրանց ստիպել ետ քաշվելու 1914թ. սահմանը: Բացի այդ, քեմալականները բանի տեղ չդրին իրենց զորքերի առաջխաղացումը կասեցնելու նոյեմբերի 11-ի Չիչերինի միջնորդությունը, էլ ուր մնաց, որ նրանք ենթարկվեին Սովետական Ռուսաստանի պահանջին և իրենց զորքերը ետ քաշեին 1914թ. սահմանը: Լեգրանը լավ գիտեր այս ամենը: Գիտեր նաև, որ հանուն Հայաստանի Սովետական Ռուսաստանը չի զինաթափվի իր դաշնակցի հետ: Ավելի շիտակ կլիներ, եթե Լեգրանը կատարեր ՌԿ (բ) Կ Կենտկոմի որոշումը և Հայաստանի առաջ դներ խորհրդայնացման հարցը, բայց նա այդպես չէր վարվում և հիմնական խնդիրը քողարկում էր անկախ Հայաստանին օգնելու բարեհաճ բառերով: Նոյեմբերի 15-ին Բեկզադյանը հեռախոսով Օհանջանյանին հայտնում է, թե Լեգրանն «առաջարկում է, որ մենք նրանց դիմենք ռազմական միջամտության խնդրանքով, պայմանով, սակայն, որ մենք հրաժարվենք Սևրի պայմանագրից և ընդունենք նրանց հովանավորությունը: Դրա փոխարեն խոստանում է պահանջել թուրքերից հետ քաշվելու Ռուսաստանի նախկին պետական սահմանից այն կողմ: Խոստանում է, որ մեր ինքնուրույնությանը ձեռք չեն տա և Հայաստանը չեն խորհրդայնացնի: Միայն պատասխանը պետք է անհապաղ տրվի»[56]: Չնայած այն բանին, որ Չիչերինը Լեգրանին ցուցում էր տվել անիրականալի խոստումներ չտալ, վերջինս խոստանում էր: Օհանջանյանը Բեկզադյանին ասում է. «Այսօր կրկին քննարկում ենք զինադադարի հարցը»: Լեգրանը պետք է գար Հայաստան՝ կառավարության հետ միջնորդության հարցերը քննարկելու: Այդ պատճառով էլ Օհանջանյանն ասում է, որ «Լեգրանին խնդրեք դուրս գալ այսօր, քանի որ վաղը կարող է Ղարաքիլիսան ընկնի և ճանա-

[54] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 101, թ. 2:
[55] Նույն տեղում, գ, 81,թ. 14:

[56] Բանբեր Հայաստանի արխիվների, 1967թ. N 3, էջ 81:

պարիզ փակվի: Խնդրեք Մդիվանուն, որ նա Ղարաքիլիսայից ուղիղ մեկնի ռազմաճակատ»: Մդիվանին Սովետական Ռուսաստանի կողմից նշանակված հաշտարար բանագնացն էր, որը համաձայն Չիչերինի նոյեմբերի 11-ին կողմերին արած միջնորդության անմիջապես պետք է մեկներ ռազմական գործողությունների վայր, բայց չգիտես ինչու նա Թիֆլիսից դուրս եկավ միայն նոյեմբերի 17-ին և Լեգրանի հետ հաջորդ օրը ժամանեց Երևան: Մինչև Լեգրանը Երևան կհասներ՝ Հայաստանի կառավարությունը քննարկել էր զինադադարի հարցը և որոշել էր ընդունել նոյեմբերի 8-ի Թուրքիայի առաջարկած զինադադարի ծանր պայմանները: Նոյեմբերի 18-ին Հայաստանի ներքին գործերի նախարար Ս. Արարատյանը և Կարաբեքիրը Ալեքսանդրապոլում ստորագրում են զինադադարի պայմանները: Այդ մասին նոյեմբերի 20-ին կառավարությունը հրապարակում է հետևյալ հաղորդագրությունը. «Նոյեմբերի 18-ին մեր և տաճիկների միջև կնքված է զինադադար և այդ օրվանից զինվորական գործողությունները կանգ են առել: Ըստ այդ զինադադարի պայմանների, թշնամու զորքերը բռնում են Ալագյազ-Կրմզլի, Նալբանդ-Վորոնցովկա գիծը, իսկ հայ զորքերը՝ Սուրմալու-Արաքս կայարան, Կզըլ-Չիարեք, Արագած-Տանիգիրմազ-Բուլիքենդ Շերմատ-Յալվանդուզ գյուղերը: Միջին տարածությունը պետք է մնա չեզոք, հայկական ադմինիստրացիայով: Իբրև զինադադարի պայման, տաճիկներին տրվում է որոշ քանակությամբ զենք, ռազմամթերք և երկաթուղային ստացվածք: Զինադադարի վերջին օրն է նոյեմբերի 25-ը: Նոյեմբերի 24-ի երեկոյան պիտի սկսվի հաշտության բանակցությունները: Տաճիկ պատգամավորությունն արդեն Ալեքսանդրապոլում է, իսկ հայկականը պատրաստ է մեկնելու[57]»: Այսպիսով, Հայաստանի կառավարությունն ընդունեց քեմալականների առաջարկած պայմանները և որոշեց բանակցություններ սկսել խաղաղության պայմանագիր ստորագրելու համար: Այդ ամենի մասին լուրջ խոսակցություն է տեղի ունենում Լեգրանի և Հայաստանի կառավարության անդամներ Հ. Օհանջանյանի և Ռ. Տեր-Մինասյանի միջև նոյեմբերի 19-ի Երևանում կայացած բանակցությունների ժամանակ: Ռուսական կողմից բանակցություններին մասնակցում էր նաև Մդիվանին: Ուղիղ երեք ժամ տևած բանակցությունները, փաստորեն, եղածի վրա նոր բան չավելացրին: Լեգրանը կրկնում է Հայաստան զորք մտցնելու իր արած առաջարկությունը, հայկական կողմը մերժում է այն և պնդում է միայն դիվանագիտական միջնորդության վրա: Լեգրանն ասում է, որ իբր Կարսի գրավումով քեմալական շարժումն ազատագրականից ձևափոխվում է իմպերիալիստականի: Նաև այն մասին, որ Կարսը Հայաստանի ձեռքում նրան չի վերածի իմպերիալիստական պետության: Ու համաշխարհային հեղափոխության բառապաշարից վերցրած նմանատիպ այլ արտահայտություններ: Քեմալականների ազատագրական շարժումից իմպերիալիստական դառնալու Լեգրանի հիմնական փաստարկը Բաքվի վրա նրա հնարավոր հարձակման վարկածն էր, որով և պայմանավորվում էր իրենց վերաբերմունքի փոփոխությունը քեմալականների հանդեպ: Այս առումով էլ Լեգրանին հատկապես հետաքրքրում է Ղարաքիլիսայի խնդիրը: Նա հարցնում է. «Ղարաքիլիսան մնո՞ւմ է Ձեր ձեռքում», Ռ. Տեր-Մինասյանը հարցին դրական պատասխան է տալիս: Մդիվանին, տեսնելով, որ Լեգրանը խոսում է ամեն ինչից, բացի Հայաստանի խորհրդայնացումից, իսկ Օհանջանյանը մոռացած իր երկրի ողբերգական վիճակը՝ գտնում է, որ թուրքերը կհամաձայնեն Հայաստանին տալ Վանի ու Էրզրումի վիլայեթների մի մասը, խոսք է վերցնում: Նա ասում է. «Զինվորական նախարարի ասածները, որ հայ ժողովուրդը և նրա բանակը իրենց մենակության գիտակցությունից հոգեբանորեն կոտրվեցին գոյատևման այս պայքարում, ամբողջապես հասկանալի է ու տեսանելի: Սակայն նախարարի եզրակացությունը ինձ թվում է ճիշտ չէ: Պատճառն այն չէ, որ ժողովրդի և բանակի մեջ ստեղծվել էր այն պատկերացումը, որ Սովետական Ռուսաստանը գործում է քեմալականների հետ միասին: Դրա պատճառն ավելի խորն է, բոլորի համար արդեն տեսանելի է, որ Անտանտան չի ցանկանում օգնել Հայաստանին: Ստեղծված սպառնալից վիճակից ժողովուրդը ելք է փնտրում: Նա հենարան է փնտրում դրսում և այդ հենարանը կարող է լինել միայն Սովետական Ռուսաստանը: Ժամանակն է գիտակցելու այդ և այժմ իսկ ընդունել խորհրդայնացումը, միակ ուժը, որ կարող է հայ ժողովրդին և Հայաստանը փրկել վերջնական կործանումից»: Լեգրանը, տեսնելով, որ Մդիվանին դիվանագիտական հարթությունից դուրս եկավ և բաց արեց փակագծերը, փորձում է մեղմել հարցադրումը՝ ասելով. «Մենք, իհարկե, կարող ենք միայն ողջունել Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում: Բայց տվյալ պարագայում, միջնորդության հարցում, ընկեր Մդիվանուն տրված հրահանգը կախված չէ Հայաստանի կառավարության ընդունելիք այս կամ այն որոշման հետ և բոլոր պարագաներում այն մնում է նույնը»[58]: Օհանջանյանի այն հարցին, թե կարելի՞ է իմանալ այդ հրահանգը, Մդիվանին պատասխանում է. «Պնդել թուրքերի նահանջը Ռուսաստանի նախկին պետական սահմանը, 1914թ. սահմանը»: Ոչ Լեգրանը և ոչ էլ Մդիվանին չեն ասում, թե այդ հրահանգն ում կողմից էր տրված: Բանն այն է, որ նման հրահանգ պարզապես գոյություն չուներ: Մի պահ ընդունենք, որ Կարսը թուրքերից վերցնելու խնդիրը քարոզչական հնարք չէր, և Լեգրանը ճիշտ էր, երբ Երևան մեկնելուց առաջ ասում էր, որ «հայերը միշտ ուշանում են ժամանակին ընդունելու նպաստավոր ա-

[57] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 97, թ. 6:

[58] Բանբեր Հայաստանի արխիվների, 1967թ., N 3, էջ 83-91:

ռաջարկները, իսկ հետո ստիպված ընդունում են ավելի աննպաստավորը»: Այս հարցադրման մեջ ընդհանրապես ճիշտ դիտարկում կա, բայց արդյո՞ք այն ճիշտ էր տվյալ պարագայում: Չէ՞ որ Լեգրանը մասնակցել էր Բաքվի Արևելքի ժողովուրդների համագումարին և լավ գիտեր, թե Հայաստանի վերաբերյալ ինչ ծրագրեր են մշակվել ու իրականացվում: Նա նաև գիտեր, որ հոկտեմբերի 28-ին Հայաստանի կառավարության հետ իր կնքած պայմանագրերի նախագիծը նույն Բաքվում չեղյալ էր համարվել: Նման քաղաքական ուղղվածության պայմաններում Կարսի մասին խոսակցությունները պարզապես անլուրջ էին: Բացի այդ, Երևանի նոյեմբերի 19-ի բանակցություններից ընդամենը 10 օր հետո կարմիր բանակի զորամասերը մտան Հայաստան: Թող պնդեին, որ թուրքերը թողնեն Կարսի մարզը: Ի՞նչն էր բոլշևիկներին խանգարում, մանավանդ եթե Լեգրանի պնդմամբ «Մդիվանուն տրված այդ հրահանգը կախված չէր Հայաստանի կառավարության ընդունելիք այս կամ այն որոշման հետ»: Այս ամենը պետք է բացատրվի, այլապես այդ փաստերը թողնում են այն թյուր տպավորությունը, որ բոլշևիկները ցանկանում էին Կարսի մարզը թուրքերից վերցնել ու հանձնել հայերին, բայց Օհանջանյանի կառավարության անհեռատեսության պատճառով այն իրականություն չդարձավ: Իհարկե, Օհանջանյանին կարելի է քննադատել, որ նա Կարսի անկումից հետո քեմալական ու բոլշևիկյան աքցանում նախապատվությունը չտվեց բոլշևիկներին: Մանավանդ, որ վերջիններիս պլանները կառուցված էին այդ բարոյահոգեբանական երկընտրանքային ազդակի վրա: Սակայն հանգամանքն այս ոչ մի կապ չունի Հայաստանի տարածքային կորստի հետ: Օհանջանյանի փոխարեն, եթե Հայաստանի կառավարության ղեկավար լիներ նույնիսկ քաղաքական բնատուր տաղանդով օժտված Ու. Չերչիլը, միևնույն է, ոչինչ անել չէր կարող: Հայաստանը խորհրդայնացվեր նոյեմբերի 7-ին, թե նոյեմբերի 29-ին դրանից ոչինչ չի փոխվելու: Ավելի ճիշտ կլինի ասել, որ եթե Հայաստանը խորհրդայնացվեր նոյեմբերի 7-ին կամ 15-ին, ապա այդքան օրով ավելին կլիներ քեմալականների ու բոլշևիկների 1920թ. դեկտեմբերից 1921թ. փետրվար ամիսներին Հայաստանում, համաշխարհային հեղափոխության դրոշի տակ, կատարած հանցագործությունները: Ինչ վերաբերում է նոյեմբեր ամսին քեմալականների ու բոլշևիկների մեջ առաջացած տարաձայնություններին, ապա դրանք լուրջ չէին, որովհետև հիմնականում հիմնված էին թուրքական բանակի ասկյարների այն խոսակցությունների վրա, թե իբր «շուտով իրենք լինելու են հարուստ քաղաքներ Թիֆլիսում և Բաքվում, որտեղից բացվելու է արևելքի լայն ճանապարհը»: Թալանի տենչով բռնված ասկյարների տարածում գտած այս և նմանատիպ խոսակցություններին քաղաքական կերպարանք էին տալիս Ալեքսանդրապոլի հեղկոմի անդամները Մոսկվա և Բաքու ուղարկած իրենց նամակներում: Շատ շուտով քեմալականների՝ հեղափոխականներից իմպերիալիստական ուժի փոխակերպվելու լուրերը ոչ միայն հերքվեցին, այլև հիմնավորվեց, որ այդ լուրերը տարածում են հակահեղափոխականները: Հանգամանք, որը որոշ սառնությունից հետո ջերմության նոր ալիք առաջացրեց դաշնակիցների գործողություններում: Քեմալականների՝ Անտանտի հետ մերձենալու և Բաքուն գրավելու մտադրությունները պարզելու նպատակով նոյեմբերի 25-ին ՌԿ (բ) Կ կովկասյան բյուրոյի կողմից Անատոլիա է գործուղվում թուրք կոմունիստներից կազմված հատուկ հանձնաժողով: Կարաբեքիրի հետ երկարատև զրույցներից հետո Մոսկվա և Բաքու հղած իրենց զեկուցագրով այդ հանձնաժողովի անդամները հավաստում են, որ «Անատոլիան հավատարիմ է արևելքի հեղափոխական ուժերին և պատրաստ է հետայսու ևս կատարելու իր գլխավոր դերն այդ շարժման մեջ: Անատոլիայի և Անտանտի միջև չկա որևէ համաձայնություն: Հայտնվել է ընկեր Լեգրանին, որ Կարսի հարցի բարձրացումը գտնում ենք աննպատակահարմար, որովհետև այն կունենա անբարենպաստ հետևանքներ»[59]: Բաքու ուղարկած մեկ այլ զեկուցագրում հանձնաժողովի նախագահ Հակին գրում է. «Հայաստանում ՌՍՖՍՀ ներկայացուցչի կարծիքն Անգորայի և Անտանտի հարաբերությունների մասին գտնում ենք ոչ ճիշտ: Հանձնաժողովը գտնում է, որ տարածքային հարցերի վերաբերյալ նրա (Լեգրանի- Կ. Ս.) հայեցակետն ամբողջապես հակասում է ընդհանուր նպատակներին»[60]: Փաստերը ցույց են տալիս, որ Կարսի հարցի բարձրացումն ամբողջապես Լեգրանի նախաձեռնություն էր, և Մդիվանին կենտրոնից նման հանձնարարական չէր ստացել: Չէր կարող նման հանձնարարական ստացած լինել, որովհետև երևանյան բանակցություններից հինգ օր հետո՝ նոյեմբերի 24-ին ՌԿ (բ) Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի՝ թուրք կոմունիստներից կազմված հանձնաժողովին տված հանձնարարականներում առանձին կետով նշված է. «Նախնական քարոզչություն տանել Ալեքսանդրապոլը Սովետական Հայաստանին թողնելու անհրաժեշտության մասին»: Սա նշանակում է, որ Կովբյուրոն մինչև նոյեմբերի 24-ը արդեն որոշել էր Հայաստանի խորհրդայնացման հարցը, իսկ մյուս կողմից էլ լույս է սփռում այն գլխավոր խնդրի վրա, թե որն էր բաժանման կամ գլխավոր գիծը, որի խախտման մասին խոսում էին բոլշևիկ ղեկավարները նոյեմբեր ամսին: Դա Արփաչայի գիծն էր: Սա էլ իր հերթին նշանակում էր, որ բաժանման գիծն անցնում էր համապատասխան Բրեստ-Լիտովսկի պայմանագրի: Քեմալականներն անցել էին Արփաչայի գիծը և իրենց այդ քայլով զայրացրել էին բոլշևիկներին: Բայց, ինչպես տեսանք, վերջիններիս

[59] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 16, թ. 63:
[60] Նույն տեղում, գ. 225, թ. 42:

զայրույթն անմիջապես փարատվեց, երբ Կովբոյուրոյի ուղարկած հանձնաժողովի անդամներին Կարաբեքիրը հավաստիացրեց, որ Անգորան հավատարիմ է մնում Արևելքը հեղափոխականացնելու գործին: Դրա վկայությունն էր նաև, որ Մղիվանին նոյեմբերի 20-ին մեկնեց Ալեքսանդրապոլ և միջնորդի իր առաքելությունը մոռացած, դարձավ Կարաբեքիրի ձայնափողը: Նա մասնակցում էր Ալեքսանդրապոլի հեղկոմի կազմակերպած միտինգներին և դատապարտում էր հակահեղափոխական Հայաստանը: «Հայաստանը և հայ ժողովրդին թուրքերից փրկելու» Լեգրանի գործադրած ջանքերն անցան ապարդյուն: Հայաստանի կառավարությունը մերժեց ռազմական միջամտությունը՝ դրանով իսկ 10 օրով հետաձգելով կարմիր բանակի մուտքը Հայաստան: Հայաստանի ղեկավարությունը որոշեց երկրի անկախությունը պահպանել Թուրքիայի հետ բանակցություններ վարելու միջոցով: Այս մոտեցումը կարելի էր օրինաչափ համարել, եթե այն մեկ տարով ուշացած չլիներ ու չկատարվեր պարտության հարկադրանքով: Նման մոտեցումը նորություն չէր հայ քաղաքական գործիչների համար: 1918թ. գարնանը նրանք հակադրվեցին Թուրքիայի և Ռուսաստանի միջև Բրեստ-Լիտովսկի պայմանագրով գծված սահմաններին և արդյունքում ստիպված ստորագրեցին ավելի աննպաստ Բաթումի պայմանագիրը: Այժմ տեսնենք, թե դաշնակցությունից բացի ստեղծված դրությունից ինչ ելք էին առաջարկում Հայաստանի մյուս քաղաքական ուժերը: Հայ ժողովրդական կուսակցությունը, որը երկրորդ քաղաքական ուժն էր Հայաստանում, 1920թ. նոյեմբերի առաջին օրերին հուշագիր է ներկայացնում կառավարությանը: Հուշագրում ասվում է. «Հայ ժողովրդական կուսակցության կենտկոմը 1920թ. հոկտեմբերի 31-ի իր նիստում միաձայն որոշեց, կատարելով պատմական այս ծանր մոմենտին իր քաղաքացիական պարտականությունը, առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որպես ելք ստեղծված կատաստրոֆիկ դրությունից դուրս գալու՝ հետևյալը. 1) Շարունակել պայքարը ընդդեմ արտաքին թշնամու ապահովելու համար հայ ժողովրդի կյանքն ու քաղաքական անկախությունը: 2) Անհապաղ կազմել կոալիցիոն կառավարություն Հայաստանի անկախությունն ընդունող բոլոր հայկական քաղաքական հոսանքներից, պայմանով, որ դաշնակցությունը լինի փոքրամասնության մեջ և որ վարչապետը լինի ոչ դաշնակցական: 3) Բոլոր կուսակցությունների մասնակցությամբ կազմակերպել պետական խորհուրդ, բարձրագույն օրենսդրական մարմնի լիազորություններով, որի կազմը պիտի որոշվի բոլոր քաղաքական հոսանքների փոխադարձ համաձայնությամբ: Թերևս ստեղծված կացության համար ոչ հայ ժողովրդական կուսակցությունը և ոչ էլ մյուս ընդդիմադիր քաղաքական հոսանքները պատասխանատու չեն և խիստ ծանր պիտի լինի այն լուրը, որ նրանք իրենց

վրա են վերցնում կառավարության մեջ մտնելը, բայց այնուամենայնիվ դա պիտի արվի հանուն մեր ժողովրդի ու պետության փրկության: Եթե այս անգամ էլ դաշնակցությունը պիտի լինի անզիջող իր քաղաքականության մեջ, ապա նա իր վրա է վերցնում պատասխանատվությունը հայ ժողովրդի և պետության վիճակի համար ներկա և ապագա սերունդների առաջ»[61]:

Կարսի անկումից հետո կառավարության փոփոխության մասին խոսում էին ոչ միայն ընդդիմադիր քաղաքական ուժերը: Հայաստանում ստեղծված ծանր կացության և ճգնաժամից դուրս գալու հնարավոր ելքերի մասին հարցը քննարկվում է նաև նոյեմբերի 13-ին գումարված խորհրդարանի արտահերթ նիստում: Էսէռական ֆրակցիայի անունից ելույթ է ունենում պատգամավոր Ա. Խոնդկարյանը: Նա կառավարության հասցեին իր քննադատական ելույթն այսպես է հիմնավորում. «Պատերազմը քաղաքական օրգանիզմի լարումն է, նրան կարող է դիմանալ միայն առողջ օրգանիզմը: Ահա այն դասը, որ մենք պետք է սովորենք այս պատերազմից: Հայաստանի պետական օրգանիզմը, հանդեպ հյուծվող Տաճկաստանի, դուրս եկավ թույլ և անառողջ: Էսէռական ֆրակցիայի կարծիքով բուժման հիմնաքարը դնելու համար անհրաժեշտ է վերակառուցել պետական մեխանիզմը սկզբից: Խոսքս վերաբերում է Հայաստանի կառավարությանը: Հայտնի է, թե ինչ պայմաններում սկիզբ առավ ներկա կառավարությունը, վերացել են այդ պայմանները, սակայն կառավարությունը դեռ շարունակում է գոյություն ունենալ, մեր հիմնական սխալներից մեկն այդ է: Կառավարությունը պիտի լինի համաժողովրդական: Կառավարության բնույթի փոփոխությունը դրական ազդեցություն կունենա ժողովրդական զանգվածների վրա: Մեր ախտավոր երևույթները բուժել կարող է միայն նորակազմ կառավարությունը: Կառավարության վերակազմության զուգընթաց պիտի տեղի ունենա ժողովրդի վերակազմությունը: Մենք ականատես եղանք այնպիսի իրադարձությանց, որոնք միայն ամոթ պիտի բերեն մեր ժողովրդին: Տեսանք այնպիսի թուլամորթություն, որ արհամարհանք պիտի առաջացնի շատերի մեջ հանդեպ մեր ժողովուրդը... Կառավարության ու ժողովրդի վերակազմության միջոցով միայն հնարավոր կլինի փրկել երկիրն այս ծանր փորձությունից»[62]: Կառավարության փոփոխության պահանջները կապված էին ինչպես պարտության, այնպես էլ Թուրքիայի հետ որակական նոր հարաբերություններ հաստատելու հանգամանքով: Այդ էր պատճառը, որ դաշնակցությունը հիշեց «թրքամետ» Հ. Քաջազնունուն: Վերջինս խորհրդարանական խմբակցությունների և մյուս քաղաքական ուժերի հետ խորհրդակցելուց հետո հրաժարվեց վարչապետ դառնալու առաջարկությունից: Նոյեմբերի

[61] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 497, թ. 40-41:
[62] Նույն տեղում, ֆ. 200, ց. 2, գ. 100, թ. 28-29:

24-ին կազմվեց նոր կառավարություն Ս. Վրացյանի գլխավորությամբ: Նույն օրը հրապարակվում է կառավարության դեկլարացիան վարչապետի ստորագրությամբ: Պատերազմում պարտության հետևանքով երկրում ստեղծված տագնապալի դրությունը նկարագրելուց հետո վարչապետը նշում է. «Վերջին տարիներին անդրկովկասյան ժողովուրդներին հասած բոլոր աղետների և դժբախտությունների պատճառը աշխարհի հզորների վարած իմպերիալիստական քաղաքականությունն է, որի հետևանքով անվերջ և արյունահեղ կռիվների և ավերածությունների թատերաբեմ է դարձել նաև Հայաստանը: Ներկա կառավարության առաջին և գլխավոր նպատակն է լինելու հանել մեր երկիրը քաղաքական այս շրջապտույտից և նրան ազատել օտար ուժերի քայքայիչ ազդեցությունից: Հայաստանի պետական կառուցվածքը խարսխելու ոչ թե օտարների սին ու վտանգավոր ներշնչումներից, այլ Հայաստանի դեմոկրատիայի իրական կարողությունից... Մեր գործողության նշանաբանն է լինելու անկեղծ հաշտություն Տաճկաստանի հետ և համերաշխություն ու խաղաղ գոյակցություն բոլոր հարևանների հետ... Մեր բուռն փափագն է ազատ և անկախ Հայաստանը դարձնել ապահով և բարգավաճ»[63]: Հայաստանի անկախությունը պահպանելու և Թուրքիայի հետ խաղաղ զարգացման նոր ուղեգիծ որդեգրելու հեռանկարին նորաստեղծ կառավարությունը հավատում էր նաև այն պատճառով, որ Լեգրանն ամիսներ շարունակ հավաստում էր, թե Ռուսաստանը չի ցանկանում խորհրդային կարգեր հաստատել Հայաստանում: Մյուս կողմից էլ աղոտ հույս էր ներշնչում այն հանգամանքը, որ նոյեմբերի 25-ին Ալեքսանդրապոլում սկսվելիք հայ-թուրքական բանակցություններում թուրքական կողմը որոշակի զիջումների կգնա: Այդ պատճառով էլ բարձրաձայն խոսվում էր սեփական քաղաքական գայթակղությունների մասին: «Հառաջ» պաշտոնաթերթն իր նոյեմբերի 23-ի «Դեպի հաշտություն» խմբագրականում գրում է. «Վաղը երեկոյան Ալեքսանդրապոլում պիտի սկսվեն հայ-տաճկական հաշտության բանակցությունները: Դժվար է այժմ գուշակել, թե ինչի պիտի հանգեցնեն այդ բանակցությունները: Տաճիկների առաջարկելիք հաշտության պայմանները ընդհանուր գծերով ձևակերպված են նոյեմբերի 8-ի նոտայի մեջ: Այդ պայմանները կռահել են տալիս, թե ինչ ռեալ կերպարանք պիտի ստանան հաշտության պայմանագրի մեջ, հարկավ շատ հեռու են այն պայմաններից, որոնց մասին երազել է հայությունը ամբողջ 30 տարի և որոնց իրագործման համար հարյուր հազարավոր զոհեր են տվել:

Մենք, որ օտարների ուժի վրա հույս դնելով շարունակ ձգտել ենք միանգամից ստեղծել Մեծ Հայաստան, մեր այս շշմեցնող պարտությունից հետո

[63] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 100, թ. 48-49:

համոզվեցինք, թե որքան խաբուսիկ և վնասակար էին մեզ համար այդ մեծ հույսերը: Եվ եթե մենք լինեինք ռեալ քաղաքագետներ և ժամանակին ընդունեինք, որ չի կարելի առաջադրել ազգային քաղաքական նպատակներ՝ հենվելով ոչ թե սեփական, այլ օտար ուժերի վրա և եթե մենք ի վիճակի լինեինք ճշտորեն չափելու մեր սեփական ուժի և կարողության իսկական կշիռը, մենք երբեք չպետք է ձգտեինք ստեղծել մի Մեծ Հայաստան, որ չգիտենք էլ թե ինչպես պետք է լցնենք ազգաբնակչությամբ, պահենք ու պաշտպանենք և վաղուց պիտի ունենայինք հաշտություն մեր թշնամու հետ... Հուսախաբվելով մեկ օտար ուժից, մեզանից շատերն իսկույն իրենց աչքերն ուղղում են մեկ ուրիշ օտար ուժի վրա, առանց ըմբռնելու, թե այդ երկրորդն էլ, ինչպես և երրորդը, չորրորդը պիտի ավելի մեծ հուսախաբություն, թերևս կործանում բերեն իրենց հետ... Թշնամին հալածել, կոտորել է մեզ միշտ մեր անուղղելի օտարամոլության համար: Մենք միշտ տուժել ենք, որովհետև գնացել ենք մեր թշնամիների, ամենաոխերիմ թշնամիների հետևից, որոնք շարունակ դավաճանել են մեզ:

Ժամանակն է, որ մենք բոլորս սթափվենք և հիմնովին փոխենք մեր մինչ այժմյան քաղաքական ընթացքը: Ամենից առաջ մենք պետք է հաշտ լինենք մեր հարևանների հետ: Մենք պետք է ձգտենք, որ այն հաշտությունը, որ կնքվելու է Ալեքսանդրապոլում, լինի սկիզբը պատմական մի նոր դարաշրջանի և նոր հայկական քաղաքականության: Մենք պետք է ձգտենք ամենայն անկեղծությամբ և վճռականությամբ վերացնել այն բոլոր խոչընդոտները, որոնք մինչև այժմ անկարելի էին դարձնում հայ-թուրքական բարեկամությունը...»[64]: Ընթերցողը տեսնում է, թե 1919թ. ազգային մակընթացությունն ինչպիսի տեղատվություն ապրեց: Միայն զարմանալ կարելի է, թե նման 180 աստիճան շրջադարձի հեղինակներն ինչպես չէին վախենում սեփական ժողովրդի զայրույթից: Ուստի շինծու են դաշնակցական գործիչների այն պնդումները, որ եթե իրենք 1919 թվականին համաձայնվեին Թուրքիայի առաջարկներին և պայմանագիր կնքեին վերջինիս հետ, ապա ժողովուրդը ոտքի կկանգներ ու դուրս կքշեր այդ կառավարությունը: Ժողովուրդը ոտքի չկանգնեց նաև այն ժամանակ, երբ նոյեմբերի 24-ի իր «Հաշտության խնդիրը և մեր օրիենտացիան» խմբագրականում նույն պաշտոնաթերթը, ավելի հեռուն գնալով, գրեց. «... Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել ու ապահովել իր պետական և ֆիզիկական գոյությունը հարատևորեն, նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա: Եթե հայ ժողովուրդը վերջին համաեվրոպական պատերազմի ժամանակ չունենար ռուսական օրիենտացիա, այլ լիներ թուրքերի հետ, ամենայն հավանականությամբ, նա խուսափած կլիներ կոտորածներից և նրա դրությունը վրացինե-

[64] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 100, թ. 55-57:

ից էլ լավ կլիներ: Մի անգամ ընդմիշտ մենք պետք է ըմբռնենք, որ օտարի վրա հենվելով չէ, որ մենք կարող ենք իրապես խաղաղություն ձեռք բերել մեր ժողովրդի համար, այլ միմիայն մեր սեփական ուժերին ապավինելով պիտի որոշենք մեր բախտը մեր ուժեղ հարևանների՝ թուրքերի հետ»[65]: Մի ծայրահեղությունից մյուսի մեջ ընկնելը թելադրված էր շշմեցուցիչ պարտության հարկադրանքով ու նաև այն միամտությամբ, թե հնարավոր է այդ ճանապարհով հաղթանակած Թուրքիային զիջումների տրամադրել և պահպանել Հայաստանի անկախ գոյությունը: Դրանով էր պայմանավորված նաև կառավարության փոփոխությունը: Թուրքիայի հետ նոր հարաբերություններ հաստատելու պատրաստակամությամբ Մ. Քեմալին հեռագիր է հղում վարչապետ Ս. Վրացյանը: Այդ մասին մենք իմանում ենք նոյեմբերի 29-ին Ս. Վրացյանին Մ. Քեմալի հղած հետևյալ նամակից. «Գոհունակությամբ ստացա Ձեր այն հեռագիրը, որով հայտնում եք, որ Օհանջանյանի կաբինետի հրաժարումով և պառլամենտի որոշումով նոր կաբինետ կազմելու հրավիրվել եք և կցանկաք ունենալ դրացի պետությունների հետ բարեկամական հարաբերություններ և տեսնել, որ Ալեքսանդրապոլում սկսված բանակցությունները կհանգեն երկու կողմերի փոխադարձ շահերը ապահովող մի ելքի»[66]: Այնուհետև Մ. Քեմալը հաջողություն է մաղթում «Հայաստանն արտաքին վնասակար ազդեցությունից ազատելու» կառավարության գործադրելիք ջանքերին: Սակայն մինչ այս նամակը կստացվեր՝ Երևանում արդեն պարզվել էր, որ Թուրքիան չի պատրաստվում տարածքային որևէ զիջում անել Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ: Բանակցություններն սկսվել էին նոյեմբերի 25-ին: Հայկական պատվիրակությունը ղեկավարում էր Ալ. Խատիսյանը, թուրքականը՝ Ք. Կարաբեքիրը: Բանակցությունների հենց առաջին նիստում Կարաբեքիրն այն շարունակելու նախապայման է դնում Սևրի պայմանագրից Հայաստանի հրաժարումը: Նոյեմբերի 26-ին Ալ. Խատիսյանն այդ մասին իր կառավարությանը հայտնում է հետևյալը. «Թուրքերը 1-ին նիստում ուլտիմատում պահանջեցին գրավոր հրաժարում Սևրի պայմանագրից: Պատվիրակությունը գտնելով, որ ներկա կոնֆերանսն արդեն իսկ նշանակում է հրաժարում Սևրից, միաձայն որոշեցին այսօր տալ գրավոր հրաժարում»[67]: Առաջին նիստում տեսնելով թուրքական պատվիրակության անզիջում դիրքորոշումը՝ 2-րդ նիստում, Սևրի պայմանագրից հրաժարումից հետո, հայկական պատվիրակությունը բարձրացնում է բանակցություններին Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցության հարցը: Հարցի բարձրացումը Կարաբեքիրին ուղղած Խա-

[65] Նույն տեղում, թ. 58-60:
[66] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 97, թ. 22:
[67] ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 714, թ. 6, թ. 8:

տիսյանի գրությունում այսպես է հիմնավորված. «Պատիվ ունեմ Ձեզ հայտնել, որ այս կոնֆերենցիային մասնակցեն Ռուսաստանի ներկայացուցիչները: Ես, պարոն նախագահ (նիստերը նախագահում էր Կարաբեքիրը – Կ.Ս.), պարտավոր զգացի Ձեզ հասցեագրել ներկա խնդիրս, որովհետև՝ 1.Իմ կառավարությունը, նույն խնդրով, ժամանակին դիմել էր ռուս կառավարությանը, որն, ինչպես Դուք գիտեք, տվել էր իր համաձայնությունը: 2. Ա. Մ. Ժ.-ի կառավարության ներկայացուցիչը այս խնդրի մասին խորհրդային կառավարության հետ համաձայնության էր եկել: 3. Ռուսաստանը Տաճկաստանի բարեկամն ու դաշնակիցն է և նրա ներկայացուցչի մասնակցությունը չի կարող որևէ կերպ վնասել բանակցությունների ընթացքին»[68]: Նոյեմբերի 27-ին Կարաբեքիրը Խատիսյանին հայտնում է, որ թուրքական կողմը մերժում է բանակցություններին ռուսական ներկայացուցչի մասնակցության հայկական կողմի պահանջը: Այդ հարցում որևէ հետաքրքրություն չի ցուցաբերում Ալեքսանդրապոլում գտնվող Ռուսաստանի հաշտարար միջնորդ Մդիվանին: Վերջինիս դիրքորոշումը պարզելու նպատակով հայկական պատվիրակության անդամներ Վ. Մինախորյանը և Լ. Զառաֆյանը հանդիպում և զրույց են ունենում նրա հետ: Նոյեմբերի 27-ին Ա. Խոնդկարյանին հասցեագրած նամակում այդ մասին Վ. Մինախորյանը գրում է հետևյալը. «Ես և Զառաֆյանը գնացինք Մդիվանու մոտ՝ նրա տրամադրությունը հասկանալու: Միջնորդությանը վերաբերող խնդրի մասին դրական որոշման չեկանք: Չի հրաժարվում պնդել յուր մասնակցության վրա ցանկալիության տեսակետից, բայց որովհետև դրանից որևէ արդյունք չի սպասում, կարևորություն էլ չի տալիս: 27-ի առավոտյան ստացանք մի գրություն (Կարաբեքիրից – Կ.Ս.), որով մերժվում է ռուսների միջնորդությունը»[69]: Հայ-թուրքական բանակցություններին սովետական կողմի նման վերաբերմունքը մի ավելորդ անգամ ապացուցում է, որ քեմալականների ու բոլշևիկների միջև ամեն բան կանխապես որոշված էր, և Մդիվանին Ալեքսանդրապոլում Կարաբեքիրի հետ կոորդինացնում էր Հայաստանի մնացած մասը կարմիր զորքեր մտցնելու և այն խորհրդայնացնելու գործողությունները: Այլ կերպ չի բացատրվում Ալեքսանդրապոլում Մդիվանու գտնվելու հանգամանքը: Նա նաև պարբերաբար հեռախոսով խոսում էր Երևանում գտնվող Լեգրանի հետ՝ նրան տեղյակ պահելով Ալեքսանդրապոլի բանակցություններում տիրող մթնոլորտի մասին: Սովետական կողմին մտահոգում էր այն հանգամանքը, որ իրենց և քեմալականների միջև հայտնված Հայաստանի կառավարությունը նախապատվությունը տվեց թուրքերի հետ բանակցությունների միջոցով կնճիռը հարթելուն և Հայաստանի անկախությունը

[68] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 97, թ. 17:
[69] Նույն տեղում, ց. 1, գ. 639, թ. 2:

պահպանելուն: Իրադարձությունների նման ընթացքը, բնականաբար, խաթարելու էր Հայաստանը խորհրդայնացնելու բոլշևիկյան ծրագիրը: Այդ պատճառով էլ նրանք ջանում էին Հայաստանը խորհրդայնացնել Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրելուց առաջ: Դրան նպաստում էր Ալեքսանդրապոլի բանակցությունների՝ Հայաստանի համար անբարենպաստ ընթացքը, որը և օգտագործում էր բոլշևիկյան քարոզչամեքենան: 1920թ. նոյեմբերի 26-ին Դիլիջանում գտնվող Սեպուհը բանակի հրամանատարին հայտնում է, որ «Ալեքսանդրապոլից Ղարաքիլիսա են եկել չորս բոլշևիկներ, որոնք մտադիր են սկսել քարոզչությունը: Նրանք գտնվում են թուրքական հանձնաժողովի հովանավորության ներքո, Ջալալօղլիում նույնպես նկատվել են բոլշևիկ պրոպագանդիստներ»[70]: Իր հերթին Հայաստանի կառավարության վրա ճնշումն ուժեղացնում է թուրքական կողմը: Նոյեմբերի 27-ին Կարաբեքիրը բողոքի նոտա է հղում հայկական զորքերի հրամանատարին, որով հայտնում է, որ իբր զինադադարի պայմանները խախտվում են Հայաստանի կողմից: Պահանջում է Ղարաքիլիսայից դուրս բերել գեներալ Արեշևին և հայկական զինված ուժերը: Նոտան վերջանում է հետևյալ տողերով. «Հակառակ դեպքում Ալեքսանդրապոլում նոր սկսված խաղաղ բանակցությունները կդադարեցվեն և կարգը պահպանելու համար մեր զորքերը կգրավեն հայ-թուրքական չեզոք գոտին»[71]: Զինադադարի պայմանները չկատարելու մի նոտա էլ Կարաբեքիրը նոյեմբերի 28-ին հղում է Հայաստանի կառավարությանը: Այդ մասին նոյեմբերի 29-ին Խատիսյանի հետ ունեցած հեռախոսազրույցում Վրացյանն ասում է. «Տաճիկները չեզոք գոտում աշխատում են բոլշևիկյան իշխանություն հաստատել, պետք է բողոքել դրա դեմ: Նոյեմբերի 28-ին Կարաբեքիրից ստացվեց նոր՝ լրացուցիչ պահանջ իբր թե պակաս տրված զենքերի, ռազմամթերքի, ձիերի և այլ իրերի, որ պետք է հանձնվի մինչև դեկտեմբերի 1-ը: Եթե կամենանք էլ, այդ պահանջները չենք կարող կատարել: Այդ իրերի մի մասը չունենք, իսկ եղածն էլ այդքան կարճ ժամանակում անկարելի է տալը: Դիմեցեք եռանդուն միջոցների վերացնելու այդ պահանջները: Տաճիկների ձգձգումը (պայմանագրի ստորագրման – Կ.Ս.) և նոր պահանջները մենք կարծում ենք առիթ են կոիվը վերսկսելու: Անհրաժեշտ ենք համարում հենց հիմա բանակցել Լեգրանի հետ: Ի՞նչ է Ձեր կարծիքը»[72]: Նոյեմբերի 30-ի առավոտյան Խատիսյանը Վրացյանի հարցադրմանը պատասխանում է. «Պատվիրակությունը և խորհրդականները միաձայն գտնում են, որ Լեգրանի հետ բանակցությունները պետք է հետաձգել մինչև մենք կգանք որոշ եզրակացության

[70] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 380:
[71] Նույն տեղում, թ. 393:
[72] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 67-68:

թուրքերի վերաբերմամբ: Եթե ուզում եք վճռական քայլեր անել ռուսների հետ, բոլորս գտնում ենք, որ նախօրոք պետք է մեզ հետ կանչել այստեղից, այլապես մեր դերը դառնում է անհասկանալի»[73]: Այժմ տեսնենք, թե ինչ էր կատարվում Ալեքսանդրապոլի բանակցություններում: Մենք կանգ առանք այնտեղ, երբ նոյեմբերի 26-ի նիստում հայկական պատվիրակությունը հայտարարեց Սևրի պայմանագրից հրաժարվելու մասին, որից հետո կողմերն անցնում են տարածքային հարցերի քննարկմանը:

Այդ մասին նոյեմբերի 27-ին Խատիսյանը Վրացյանին հեռախոսով հայտնում է հետևյալը. «Թուրքերի պահանջով պատվիրակությունը միաձայն որոշեց հրաժարվել Սևրի պայմանագրից: Մեր հայտարարությունը թուրքական պատվիրակությունն ընդունեց մեծ գոհունակությամբ և առաջարկեց անցնել սահմանների հարցին: Ես հայտարարեցի, որ մեր հիմնական ցանկությունն է. 1. Ելք դեպի ծով Բաթումի ու Ռիզեի միջև: 2. Ամբողջ Ռուսական Հայաստանը, Վանի վիլայեթը և Բայազետի սանջակը: 3. Տնտեսական զարգացման հնարավորություն:

Կարաբեքիրը պահանջեց, որ մեր պահանջի քարտեզը (բացատրագրով) ներկայացնենք վաղը ժամը 12-ին»[74]: Հայկական պատվիրակությունը նոյեմբերի 28-ին թուրքական պատվիրակությանն է ներկայացնում վերոհիշյալ տարածքային պահանջները: Չնայած որ թուրքական կողմը պետք է պատասխան տար նույն օրը, բայց այն երկու օրով հետաձգվում է: Նոյեմբերի 30-ին Ք. Կարաբեքիրի ստորագրությամբ ստացվում է ութ էջից բաղկացած պատասխանը: Փաստաթղթի մեծ մասը պատմական էքսկուրս է, որով թուրքական կողմը «հիմնավորում է» հայկական պատվիրակության պահանջների անհիմն լինելը և ուլտիմատում պնդում է, որ Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանագիծ է լինելու Երասխ գետը[75]: Փաստորեն, այդ փաստաթղթով թուրքական կողմը վերջնագիր է ներկայացնում հայկական պատվիրակությանը և սպասում է պատասխանի: Նոյեմբերի 1-ին Խատիսյանը հեռախոսով Վրացյանին հայտնում է. «Կարաբեքիրը կատեգորիկ պնդեց, որ առաջարկված սահմանների պայմանները վերջնական են... Նիստը կայանալու է այսօր ժամը 5-ին, որտեղ կհայտնենք մեր համաձայնությունը և կաշխատենք բոլորը վերջացնել ամենակարճ ժամանակամիջոցում»:

Վրացյանը պատասխանում է. «Սահմանների վերաբերյալ պայմանները, անկախ մեզանից, հայտնի դարձան այստեղ և բնակչության վրա ամենածանր տպավորությունը թողին: Այդ դրությունից մեծ չափով օգտվում են

[73] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 290 c, ց. 1, գ. 41, թ. 9:
[74] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 390:
[75] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 636, թ. 117-120:

բոլշևիկները և ժողովրդին գրգռում են կառավարության դեմ, որը գերմարդկային ջանքեր է գործադրում հավասարակշռությունը պահպանելու համար: Հետագա բանակցության պայմանները կարող են վճռական նշանակություն ունենալ հայ-տաճկական հարաբերությունների չարակամ ագիտացիան կասեցնելու համար»[76]: Տեսնում ենք, որ Վրացյանն ու Խատիսյանը համակարծիք են թուրքերի հետ պայմանագիր ստորագրելուն և դրանով կանխելու «հայ-տաճկական հարաբերությունների հետ կապված բոլշևիկների չարակամ ագիտացիան»: Սակայն այլևս անհնարին էր բոլշևիկյան ագիտացիան կանխել, որովհետև նոյեմբերի 29-ին կարմիր բանակի զորամիավորումները մտել էին Հայաստան և կառավարությանը կանգնեցրել կատարված փաստի առաջ: Այդ պատճառով էլ ստացվեց այնպես, որ Հայաստանի խորհրդայնացման համաձայնագիրը և Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրվեցին նույն օրը՝ դեկտեմբերի 2-ին:

Ամփոփելով կատարվածը, կարող ենք ասել, որ.

1. Սեպտեմբերի 13-ին քեմալական զորքերը հարձակվեցին և առանց որևէ դիմադրության գրավեցին Օլթին և դադար տվեցին:
2. Սեպտեմբերի 28-ին վերսկսեցին ռազմական գործողությունները և գրավելով Սարիղամիշի գիծը՝ հոկտեմբերի 1-ին դադարեցրին ռազմական գործողությունները:
3. Հոկտեմբերի 14-ին ՌԿ (բ) Կ Կենտկոմի քաղբյուրոն հավանություն տվեց քեմալական զորքերի հարձակման միջոցով Հայաստանը պարտության մատնելու և նրա մնացած մասում խորհրդային կարգեր հաստատելու ծրագրին: Գործողությունների ընթացքին հետևելու համար Բաքու է գալիս Ստալինը:
4. Հոկտեմբերի 14-ին հայկական զորքերը նախաձեռնեցին հակահարձակում: Այն հաջողություն չունեցավ, և դրանից հետո սկսվեց հայկական բանակի դասալքությունը: Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանը բանակի դասալքությունը կապում է հրամանատարության ապաշնորհության հետ: Իր մեծ դերը խաղաց նաև բոլշևիկյան քարոզչությունը:
5. Հոկտեմբերի վերջին քեմալականները անցնում են հարձակման և հոկտեմբերի 31-ին, առանց որևէ դիմադրության հանդիպելու, գրավում են Կարսը: Նոյեմբերի 7-ին թշնամուն է հանձնվում Ալեքսանդրապոլը
6. Նոյեմբերի 11-ին, երբ ակնհայտ էր, որ պատերազմում թուրքական կողմը հաղթել էր, Չիչերինը հանդես եկավ ռազմական գործողությունները դադարեցնելու միջնորդությամբ: Սովետական կողմը

[76] Նույն տեղում, ց. 2, գ. 100, թ. 67:

սկսեց իր քարոզչությունը, որ իրենք գնում են Հայաստանը և հայ ժողովրդին թուրքերից փրկելու: Նոյեմբերի 15-ին Լեգրանն առաջարկում է կարմիր բանակի զորամիավորումներ մտցնել Հայաստան և թուրքերից պահանջել ետ քաշվել 1914թ. սահմանները: Հայկական կողմը մերժում է այն՝ պնդելով դիվանագիտական միջնորդության վրա:
7. Նոյեմբերի 18-ին Հայաստանը ստորագրեց քեմալականների առաջարկած զինադադարի պայմանները, և նոյեմբերի 25-ին սկսվեցին Ալեքսանդրապոլի հաշտության բանակցությունները: Դեկտեմբերի 2-ին Հայաստանի և Թուրքիայի միջև կնքվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

ԳԼՈՒԽ IV

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Հասել էր ժամանակը Հայաստանի անպաշտպան մնացած տարածքով կարմիր զորքեր մտցնելու և Հայաստանը թուրքերից փրկելու: Նոյեմբերի 29-ին կարմիր բանակի զորամասերը Իջևանով մտան Հայաստան: Լեգրանը Երևանում վերջնագիր է ներկայացնում կառավարությանը՝ իշխանությունը բոլշևիկներին հանձնելու պահանջով: Կառավարությունը քննարկելով Լեգրանի առաջարկած պայմանները և ելնելով երկրում ստեղծված ծանր ու անելանելի վիճակից, դեկտեմբերի 1-ին որոշում է իշխանությունը հանձնել բոլշևիկներին: Նույն օրը Ս. Վրացյանը Ա. Խատիսյանին այդ մասին հայտնում է հետևյալը.«Տաճիկների առաջարկած ծանր պայմանները շատ ուժեղացրին կարմիրների դիրքը, որոնք արդեն գրավել են Դիլիջանը և գալիս են այն լոզունգով, որ իրենք գնում են Հայաստանը փրկելու տաճիկներից: Հայ զորքերը Դիլիջանում համբույրներով են ընդունել կարմիրներին: Այսպիսի պայմաններում կառավարությունը համաձայնվում է սովետիզացիայի, անկախության երաշխավորության հիմքերով»[1]: Դեկտեմբերի 2-ին Լեգրանի հետ ստորագրվում է Հայաստանը խորհրդայնացնելու հետևյալ համաձայնագիրը՝ «1. Հայաստանը հայտարարվում անկախ խորհրդային հանրապետություն: 2. Հայաստանի սահմանների մեջ մտնում են Զանգեզուրը, հայկական Ղազախը, Լոռին, Նախիջևանի կողմից օգոստոսի 10-ին բոլշևիկների հետ ստորագրված պայմանագրի սահմանը, Կարսի կողմից Արփաչայից 15 կմ դեպի հարավ: 3. Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում է պաշտպանել Հայաստանի սահմանները: 4. Հայկական բանակի հրամանատարական կազմը պատասխանատվության չի ենթարկվելու: 5. Քաղաքական կուսակցությունների անդամները պատասխանատու չեն մինչ այդ իրենց կատարած գործերի համար: Ոչ ոք չի պատժվելու կուսակցական պատկանելության համար: 6. Հայաստանի հեղկոմը կազմվելու է յոթ հոգուց, հինգ կոմունիստ և երկու ձախ դաշնակցական»[2]: Մինչև Հայհեղկոմի Երևան ժամանելն իշխանությունն անցնում է բանակի հրամանատար Դրոյին: Սակայն ինչպես Լեգրանի Հայաստանի կառավարության հետ ստորագրած հոկտեմբերի 28-ի պայմանագիրը, այնպես էլ Հայաստանը

[1] ՀՀ ՀԱՔՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 58, թ. 34:
[2] «Հայրենիք», ամսագիր, 1922, N 2, էջ 51:

խորհրդայնացնելու այս համաձայնագիրը մնաց թղթի վրա, իսկ կյանքում իրագործվեց ճիշտ հակառակ քաղաքականությունը:

1920թ. դեկտեմբերի 2-ին Լենինը Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին հղած ողջույնի հեռագրում նշում է. «...Չեմ կասկածում, որ դուք կգործադրեք բոլոր ջանքերը Հայաստանի, Թուրքիայի և Աղրբեջանի աշխատավորների միջև եղբայրական համերաշխություն հաստատելու համար»:

Պրոլետարիատի առաջնորդի ցուցումները դարձան գործողության ուղեցույց ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի համար: ՀԿԿ Կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթի առաջին համարի խմբագրական հոդվածը ի լուր ամենքի հավաստում է, որ «Խորհրդային Հայաստանը եղբայրական ձեռք է մեկնում Անգորայի ժողովրդական կառավարությանը, համոզված լինելով, որ համաշխարհային իմպերիալիզմի դեմ ծառացած հայ և տաճիկ մասսաների սերտ զինակցությունը հավասարապես բխում է երկու երկրների կենսական շահերից: Խորհրդային Հայաստանը ոչ միայն կապահովի Տաճկաստանի ռազմական թիկունքը բոլոր իմպերիալիստական դավաղրությունների դեմ, այլև իր գործուն աջակցությունը ցույց կտա նրա հեղափոխական պայքարին՝ դրանց դեմ: Մյուս կողմից, Խորհրդային Հայաստանը չի կարող ջերմ հավատ չունենալ, որ Անգորայի ժողովրդական կառավարությունը իր կողմից աջակից կլինի Հայաստանի ապստամբած ժողովրդին և կթեթևացնի նրա գործը նոր հանրակարգի ամրացման մեջ»[3]:

Այսպիսի լավատեսությունը մասամբ պայմանավորված էր քեմալականների այն հայտարարություններով, որ իրենց հարձակումը Հայաստանի վրա ուղղված է միջազգային իմպերիալիզմի դաշնակից դաշնակցության դեմ: Ճշմարտության հետ ոչ մի աղերս չունեցող այս թեզը նրանք կրկնում էին նաև Հայաստանում սովետական կարգեր հաստատելուց հետո: Թիֆլիսում քեմալականների ներկայացուցիչ Քյազրմ բեյը մամուլի ասուլիսում այդ առիթով հայտարարել է. «Հայաստանում խորհրդային իշխանություն սահմանելը մենք համարում ենք շատ նպաստավոր: Մինչև օրս միակ բանը, որ բաժանում էր Թուրքիան Հայաստանից, դա դաշնակների իշխանությունն էր: Նա ուղղակի վտանգավոր էր վերածնվող Թուրքիայի համար: Սակայն այժմ, երբ Հայաստանում սահմանվում է խորհրդային իշխանություն, մենք խորթ չենք լինի նրան»[4]:

Բայց շուտով պարզվում է, որ քեմալականները բարիդրացիական հասկացությունը յուրովի են ընկալում:

Սովետական Հայաստանի կառավարությունը քեմալականների հետ միջպետական նորմալ հարաբերություններ հաստատելու համար անկյու-

[3] «Կոմունիստ», Երևան, 1920թ., թ. 1:
[4] «Կոմունիստ» Եր., 1920թ., 15 դեկտեմբերի:

նաքար էր տեսնում Ալեքսանդրապոլի պայմանագրի չեղյալ հայտարարելը և նոր կոնֆերանսի հրավիրումը: Այս ոգով էլ 1920թ. դեկտեմբերի 10-ին քեմալական կառավարությանը նոտա է հղում Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Բեկզադյանը[5]: 1920թ. դեկտեմբերի 19-ին պատասխան նոտայում Թուրքիայի արտաքին գործերի կոմիսար Ահմեդ Մուհթարը հիմնավորապես հերքում և անհասկանալի է համարում Ա. Բեկզադյանի փաստարկները. «Ինչ վերաբերվում է հաշտության դաշնագրի փոփոխությանը, չենք հասկանում, թե ինչն է պարտադրում այդ բանին: Ազգերի ինքնորոշման վրա հիմնվելով այդ վայրերում Հայաստանը ոչ մի իրավունք չի կարող ունենալ, մանավանդ որ այդ տերիտորիաները անգլիացիներն էին տվել դաշնակներին ի դեմս նրանց ծառայության, ոտնահարելով մարդկային ամեն տեսակ իրավունքները: Այս հարցում Հայաստանում կոմունիստական կառավարությունը ավելորդ տեղը պնդելով ուրիշ բան արած չի լինի, եթե ոչ այն կարծիքը ներշնչելու, որ նույն իմպերիալիստական և աշխարհակալ ուղղության հետևելու նպատակ ունեցող անունը փոխած մի դաշնակ կառավարություն է: Դաշնագրի հոդվածների մեջ ևս առկայության արժանի և հաղթողի կողմից հաղթվողին ընդունելու կարծիք առաջացնող որևէ կետ չենք տեսնում[6]:

Քեմալականները լսել անգամ չէին ցանկանում Սովետական Հայաստանի հետ բանակցություններ սկսելու և նոր պայմանագիր կնքելու մասին՝ պատճառաբանելով, որ այդ հարցերը կլուծվեն Մոսկվայում գումարվելիք ռուս-թուրքական կոնֆերանսում: Միևնույն ժամանակ նրանք չէին թաքցնում, որ Մոսկվայի կոնֆերանսում հայ-թուրքական տարածքային հարցը պետք է լուծվի Ալեքսանդրապոլի պայմանագրին համապատասխան: Հիշատակված նոտայում Ահմեդ Մուհթարը Սովետական Հայաստանի կառավարությանը դաշնակցական դիտավորությունների մեջ մեղադրելուց հետո հռխորտում էր. «Ռուսների հետ գումարվելիք կոնֆերանսում պատրաստ ենք մեր տրված բացատրությունները կրկնելու և մեր անժխտելի իրավունքները հաստատելու»[7]:

Տեսնելով, որ քեմալականները կտրականապես հրաժարվում են հայ-թուրքական նոր կոնֆերանս հրավիրելու պահանջից և պնդում են Ալեքսանդրապոլի պայմանագրի օրինականության վրա՝ Հայհեղկոմը սահմանափակվեց Ալեքսանդրապոլի գավառը թուրքերից ազատելու պահանջով, որը համանուն պայմանագրով մնում էր Հայաստանին: Ալեքսանդրապոլի

[5] Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիան և Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Եր., 1960, էջ 4422:
[6] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, g. 1, գ. 6, թ. 18-19:
[7] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, g. 1, գ. 1 6, թ. 19:

գավառը թուրքական օկուպացիայից ազատելը Սովետական Հայաստանի համար ուներ նաև բարոյահոգեբանական կարևոր նշանակություն: Դժվարությունը նրանում էր, որ քեմալականները Ալեքսանդրապոլի գավառը գրավելուց հետո այնտեղ ստեղծել էին Հեղկոմ: Այս ակտով նրանք մի կողմից սովետական կողմին հասկացնում էին, որ վերադարձման է ենթակա միայն Ալեքսանդրապոլը, իսկ մյուս կողմից էլ իրենց գազանությունները կատարում էին սովետական իշխանության անունով: Այս երևույթը թերահավատ մտայնություն էր առաջացնում ժողովրդի մեջ, որը համոզված էր, որ Հայաստանում սովետական իշխանության հաստատվելուց հետո դրությունը արմատապես կփոխվի:

Ժողովրդի մեջ առաջացող կասկածները փարատելու համար 1921թ. դեկտեմբերի 26-ին «Կոմունիստ» թերթում տպագրվում է «Խորհրդային իշխանությունը և տաճկահայ աշխատավորությունը» հոդվածը: «Խորհրդային Հայաստանին և նրա հետ միասին տաճկահայ աշխատավորությանը հարկավոր է նախ և առաջ խաղաղություն Տաճկաստանի հետ իր վերքերը բուժելու համար: Իսկ ինչ վերաբերում է Տաճկաստանից ստանալիք Հայաստանի աշխատավորությանը անհրաժեշտ հողամասերին՝ Խորհրդային Հայաստանը այն կստանա ոչ թե կռվով, այլ խաղաղ ճանապարհով, իր դաշնակից ունենալով տաճիկ կոմունիստներին»: Իսկ Թուրքիայի կոմունիստական կուսակցությունն այս ժամանակաշրջանում ամբողջովին գործում էր Ազգային մեծ ժողովի կառավարության ցուցումով: Փույթ չէր, թե ամիսներ անց նրա ղեկավարները խեղդամահ կարվեին նույն կառավարության ցուցումով, բայց ազգային շահը նրանց համար վեր էր ամեն ինչից:

1920թ. դեկտեմբերի վերջին մի քանի օրով Հայաստանում է լինում նաև Թուրքիայի կոմունիստական կուսակցության քարտուղար Մուստաֆա Սուբխին[8]: Սովետական Հայաստանի քաղաքական և տնտեսական ծանր վիճակին ի մոտո ծանոթ լինելը բնավ չի խանգարում թուրք կոմունիստներին քեմալականների գործունեությունը արդարացնելու համար: ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի կողմից 1920թ. նոյեմբերի 25-ին Ալեքսանդրապոլ գործուղված թուրք կոմունիստների հատուկ հանձնաժողովի անդամների աչքում Հայհեղկոմի օրինական պահանջները հառնում էին որպես «քեմալականների մասին հակահեղափոխականների տարածած անհիմն լուրեր»[9]: Նույնանման դիրքերից էր հարցին մոտենում նաև Ալեքսանդրապոլում գտնվող Մղիվանին: Նա 1920թ. դեկտեմբերի 15-ին Ի. Ստալինին և Գ. Օրջոնիկիձեին հեռագրում էր, որ առանց ավելորդ կասկածանքի թուրքերը հավատացած են, որ սովետական իշխանության հաստատումով Հայաս-

[8] «Կոմունիստ», Եր., 1920, թ. 21:
[9] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, g. 1, գ. 16, թ. 62:

տանում ոչ մի փոփոխություն չի կատարվել և դաշնակները կվարեն նախկին քաղաքականությունը սովետական դիմակով»[10]: Աղմուկը հիմնականում պտտվում էր Դրոյի անվան շուրջ: Այս մասին դեռևս 1920թ. դեկտեմբերի 5-ին Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը և Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը Ալեքսանդրապոլում գտնվող Մդիվանուն հայտնել էին, որ Դրոն հանգամանքների բերումով և ժամանակավոր է զբաղեցնում հայկական բանակի հրամանատարի պաշտոնը և ամբողջովին ենթարկվում է հանրապետության զինվորական կոմիսարին[11]: Դաշնակցությունը թուրք ազգայնականների համար թիրախ էր Սովետական Հայաստանի նկատմամբ վարվող թշնամական քաղաքականությանը դասակարգային հնչեղություն տալու համար: Նրանք ինչքան որ մտացածին բաներ էին տարածում Հայաստանում կառավարության ձևական փոփոխության մասին, այնքան էլ եռանդուն կառչել էին նախկին կառավարության հետ կնքած Ալեքսանդրապոլի պայմանագրին: Այդ ոգով էլ քեմալականները շարունակեցին իրենց «փոխհարաբերությունները» Սովետական Հայաստանի հետ մինչև ռուս-թուրքական պայմանագրի ստորագրումը: Դրա առաջին վկայությունն այն էր, որ Սովետական Հայաստանում Թուրքիայի «լիազոր ներկայացուցիչ» մնաց կապիտան Բեհաէդդինը, որի մանդատի վրա գրված էր «Թուրքիայի և Հայաստանի դաշնագրի (Ալեքսանդրապոլի – Կ. Ս.) մի քանի կետերի հետապնդման համար Երևանում, որպես Արևելյան բանակի կապի սպա նշանակել կապիտան Բեհաէդդինին»[12]:

Քեմալականները ցանկանում էին, որ Սովետական Հայաստանի կառավարությունը լռելյայն կատարի իր բոլոր պահանջները:

1920թ. դեկտեմբերի 13-ին Թուրքիայի Արևելյան բանակի հրամանատար Քյազըմ Կարաբեքիրը, ի կատարումն դաշնակցության հետ կնքած զինադադարի պայմանների, Հայհեղկոմից պահանջում է 85 ձի և ամբողջ ռազմամթերքի տեղափոխումը Իգդիր, իսկ թուրքական բանակի համար Երևանում մթերքներ գնելու թույլտվություն[13]: Այսպիսի պահանջը բնականորեն չէր կարող ընդունվել Հայհեղկոմի կողմից, որը Ա. Բեկզադյանի ստորագրությամբ ՌԿ (բ) Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյին հայտնում է. «...Մենք այդ դիմումները գտնում ենք անթույլատրելի, հատկապես առաջինը, քանի որ մեզ պարտավորված չենք համարում կատարելու թուրքական հրամանատարության հետ դաշնակցական կառավարության կնքած զինադադարը կամ պայմանագիրը: Թող Սերգոն (Օրջոնիկիձեն – Կ. Ս.) անհապաղ մեզ

[10] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 1, գ. 50, թ. 20:
[11] ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1157, թ. 1:
[12] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 6, թ. 87:
[13] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 6, թ. 20:

հայտնի իր վերաբերմունքը[14]: Այսօր ինձ մոտ էր Բեհաէդդինը, բայց մենք դեռ պաշտոնական պատասխան չենք տվել: Հեղկոմի վերաբերմունքը այդպիսի պահանջների հանդեպ անպայմանորեն բացասական է»[15]: Քանի որ հարցը սկզբունքային նշանակություն ուներ Հայհեղկոմի համար, որովհետև խոսքը վերաբերում էր ոչ թե միջադեպին, այլ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի անփոփոխ քաղաքական կուրսին, ուստի և գնալով հարաբերություններն ավելի են սրվում:

1921թ. հունվարի 1-ին Բեհաէդդինը Ա. Բեկզադյանին բողոքում է, որ «փոստը չի ընդունել իր ծածկագիրը ուղղված Կարաբեքիրին՝ պատճառաբանելով, որ չկա Ձեր ցուցումը»: Հայտնում է նաև, որ իր մի քանի դիմումներ՝ հասցեագրված Բեկզադյանին մնացել են անպատասխան: Վերջում հիշեցնում է նաև իր ֆունկցիաների և լիազորությունների մասին: 1921թ. հունվարի 3-ին Ալ. Բեկզադյանը նրա հարցադրումներին պատասխանում է, որ «...Փոստը բնականորեն ոչ մի ծածկագիր չի ընդունում առանց արտաքին գործերի կոմիսարի կարգադրության: Ինչ վերաբերվում է Ձեր ֆունկցիաներին և լիազորությանը, ապա դուք ուղարկվել եք Երևան որպես սպա «պայմանագրի մի քանի կետերի կատարման համար», իսկ պայմանագիրը կնքվել է նախկին դաշնակցական կառավարության հետ: Ուրիշ լիազորությունների մասին սովետական իշխանության օրով մենք չենք ստացել ոչ Ձեր, ոչ էլ Ձեր հրամանատարության կողմից: Ձեր մանդատի վրա դրված է 2-12/1920թ. այսինքն՝ երբ ինձ ներկայացնող կոմիսարիատը դեռ չէր կազմավորվել: Բացի այդ, մանդատը տրված է Արևելյան ռազմաճակատի հրամանատարի, այլ ոչ թե Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության արտաքին գործերի կոմիսարիատի կողմից, որը ցավոք սրտի մեզ համար չի կարող ունենալ դիվանագիտական փաստաթղթի նշանակություն: Փաստորեն Ձեր միջոցով մենք չենք կարող լուծել այն բազմաթիվ քաղաքական հարցերը, որոնք գոյություն ունեն մեր պետությունների միջև»[16]: Բեկզադյանի պատասխանում բերված փաստարկները պարզորոշ հասկացնում էին, որ քեմալական կառավարությունը, Հայաստանում լիազոր թողնելով Արևելյան ռազմաճակատի ներկայացուցչին, չի ցանկանում ճանաչել Սովետական Հայաստանի անկախ գոյության փաստը, դրա համար էլ պահանջում է Բեհաէդդինի փոխարեն Հայաստան ուղարկել դիվանագիտական ներկայացուցիչ:

Բայց քանի որ քեմալականների համար Հայաստանի և Թուրքիայի միջև չլուծված «քաղաքական հարցեր» չկային, ուստի և նրանք շարունակում են

[14] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 6, թ. 32-34:
[15] Նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 15, թ. 29:
[16] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 6, թ. 40:

«ռազմական լեզվով» խոսել: Չնայած Ալ. Բեկզադյանի փաստարկներին՝ Թուրքիայի արտաքին գործերի կոմիսարի փոխարեն կրկին հարցը «լուծում է» Կարաբեքիրը: Նա հունվարի 3-ին հեռագրում է Բեհաէդդինին. «Մինչև Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության ներկայացուցչի Երևան ժամանելը, պարտականությունները դրվում են Ձեզ վրա»[17]: Հունվարի 4- ին Բեհաէդդինը Կարաբեքիրի հեռագիրը հանձնում է Ա. Բեկզադյանին:

Ա. Բեկզադյանի կողմից Բեհաէդդինին դիվանագիտական ներկայացուցչով փոխարինելու պահանջը բարձրացվել է նաև դեկտեմբերի վերջին, բայց կրկին «լուծվել է» զինվորական իշխանությունների կողմից: 1920թ. դեկտեմբերի 30-ին Բեհաէդդինը Բեկզադյանին հայտնում է. «Իմ երեկվա հարցմանը ի պատասխան ես գլխավոր շտաբից ցուցում ստացա շարունակելու ինձ վրա դրված ֆունկցիաները»[18]: Քեմալական Թուքիայի հետ միջպետական նորմալ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ Հայհեղկոմի ջանքերն անցան ապարդյուն: Դեռ ավելին, այս միջադեպից հետո Թուրքիայի ներկայացուցչի համար ստեղծվում են գործունեության բոլոր նպաստավոր պայմանները:

1921թ. հունվարի 6-ին Բեկզադյանի հրամանով ավելացվում է թուրքական ներկայացուցչության շենքային տարածքը: Բեհաէդդինի պահանջով նրանց է տրվում Ալի խանի բնակարանը[19]: Հեռագրատանը կարգադրվում է Բեհաէդդինի բոլոր հեռագրերն ընդունել առանց արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի ստորագրության[20]: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ այս միջադեպից հետո Հայաստանի կառավարությունը փաստորեն կատարել է քեմալականների բոլոր միջնորդությունները: Որպեսզի պատկերը պարզ լինի, բերենք դրանցից մի քանիսը:

Կարաբեքիր փաշան, որը թալանել և բացահայտ սովի էր մատնել օկուպացված տարածքները, 1920թ. դեկտեմբերի 3-ին հեռագրում է Բեկզադյանին՝ անհանգստություն հայտնելով Արարատ կայարանում գտնվող քառասուն իգդիրցի մուսուլման գաղթականների վիճակի առիթով[21]:

1921թ. հունվարի 3-ին Բեկզադյանը նրան հայտնում է, որ զինվորական իշխանություններին հրահանգ է տրված Արարատից Արալըխ կայարան փոխադրելու և հացով հատուկ գնացք է ուղարկել նրանց համար:

[17] Նույն տեղում, թ. 42:
[18] Նույն տեղում, գ. 6, թ. 31:
[19] Այս բնակարանը գտնվել է ներկայիս Սախարովի անվան հրապարակի տարածքում:
[20] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 6, թ. 46-47:
[21] Նույն տեղում, թ. 55:

1921թ. հունվարի 3-ին թուրքական կառավարությունը հայտնում է Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարին, որ Զանգիբասարի բնակիչներից դիմումներ են ստացվել սպանությունների և թալանի մասին: Գրությունը վերջանում է տեղում փաստերը ստուգելու խնդրանքով: Հունվարի 10-ին Բեկզադյանը հայտնում է Բեհաէդդինին, որ ըստ Ներքին գործերի ժողկոմի գրության այդպիսի փաստեր չկան Զանգիբասարի շրջանում: «...Ինչ վերաբերում է տեղում ստուգելուն, դա մտնում է Ներքին գործերի ժողկոմի պարտականությունների մեջ»[22]:

Քանի որ քեմալականները շատ էին աղմկում Հայաստանում մուսուլմանների նկատմամբ վարվող խտրական քաղաքականության մասին, ուստի և ցանկանում ենք ընդհանուր գծերով պատկերել հարցի իրական վիճակը: Սկսենք վերջին փաստից: Նախ որ Զանգիբասարում նման դեպքեր չէին կարող լինել, որովհետև գավառամասի հեղկոմի նախագահը մուսուլման էր: Եվ երկրորդ՝ եղել են ոչ թե սպանություն, այլ սովամահության դեպքեր, որը սովորական երևույթ էր Հայաստանի համար: Պարզ է նաև, որ այն տարածվում էր հանրապետության ողջ ազգաբնակչության վրա՝ հաշվի չառնելով կրոնական պատկանելությունը: 1921թ. հունվարի 31-ին Երևանի գավառի Հեղկոմների 1-ին համագումարին տված զեկուցման մեջ այդ մասին պարզորոշ ասել է նույն Զանգիբասարի Հեղկոմի նախագահ Քարիմովը. «... Գավառամասում կան քաղցած գաղթականների խմբեր, կան սովամահների դիակներ»:

Քեմալականների շրջափակման քաղաքականության հետևանքով նույն վիճակում էին գտնվում նաև հանրապետության մյուս շրջանները: Հայ ժողովրդի արյան խրախճանքով արբեցած Քյազրմ Կարաբեքիրը Սովետական Հայաստանի կառավարությանը մեղադրելու հարցում կորցրել էր չափի զգացումը: Չէ՞ որ նա ամենքից լավ գիտեր, որ շրջափակված Հայաստանը գտնվում է տնտեսական ողբերգական վիճակում: Եվ որ գաղթականներով ու որբերով լցված երկրի կառավարությունը, չնայած իր անելանելի վիճակին, այդ ամիսներին ընդունում և տեղավորում էր հազարավոր մուսուլման գաղթականների: Արդեն 1921թ. մարտին ՌԿ (բ) Կ 10-րդ համագումարին Ա. Բեկզադյանը զեկուցեց, որ Հայաստանը ընդունել է 50 հազար մուսուլման գաղթականների, և որ նրանց տեղավորման ժամանակ ոչ մի միջադեպ չի եղել[23]: Դեկտեմբեր-հունվար ամիսներին Երևանից հացով և պարենամթերքով բեռնված գնացքներ էին գնում Նախիջևան՝ հայ-թուրքական պատերազմի ժամանակ Հայաստանից Նախիջևան անցած մուսուլման գաղթականներին օգնելու համար: «Նախիջևանի շրջանի գաղթականներին

[22] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, թ. 16:
[23] Стенографический отчет X съезда РКП (б), М. 1963 ст. 17.

Խորհրդային Հայաստանը ցույց է տալիս պարենային օգնություն և լիակատար աջակցություն՝ իրենց ավերված օջախները վերադառնալու համար: Գաղթականների համար հիմնված են սննդատու կայաններ, ուր տրվում է հաց, կակաո, կոֆե և կաշա: Երեք հազար հոգի օրապահիկ են ստանում»[24]: Իսկ ՀԿԿ Կենտկոմը և Հայհեղկոմը որտեղից էին հայթայթում այդ նյութական միջոցները՝ մուսուլմանական աշխարհին իրենց ինտերնացիոնալիզմը հավաստելու համար: Քեմալականներն այդ ամենը լավ գիտեին: Գիտեին նաև, թե նման քաղաքականությունը ինչպիսի տպավորություն է թողնում ժողովրդի վրա և ինչ հետևանքով է հղի: Փաստորեն, հայ գյուղացուց բռնագրված մթերքները համարյա ամբողջությամբ հատկացվում էին մուսուլմաններին:

Երբ Հայհեղկոմը Կարաբեքիրի պահանջով 40 մուսուլման գաղթականների համար հացով բեռնված հատուկ գնացք էր ուղարկում, այդ նույն ժամանակաշրջանում Կարաբեքիրի «օրհնությամբ» բացահայտ սովի էին մատնված հազարավոր հայ որբեր և անօթևան արևմտահայ գաղթականներ:

1921թ. դեկտեմբերի 21-ին Թուրքիայի կոմունիստական կուսակցության հանձնաժողովի նախագահ Իսմայիլ Հաքին հեռագրով Կարաբեքիրից խնդրում է. «Սովյալ Հայաստանի պարենային դրությունից ելնելով և դժբախտ հայ ժողովրդին սովից փրկելու համար Բաքվից եկած 35 վագոն հացահատիկը բաց թողնել Ալեքսանդրապոլից»[25]:

Հիմնավորապես թալանվել էին նաև Ալեքսանդրապոլի որբանոցների պահեստները: 1920թ. դեկտեմբերի 25-ին Հայհեղկոմին հղած Ալեքսանդրապոլի հեղկոմի զեկուցագրում նշված է. «Խնդրում ենք որբ երեխաներին այստեղից փոխադրել Երևան, որովհետև սննդի և վառելիքի լիակատար բացակայության պայմաններում նրանք այստեղ դատապարտվում են անխուսափելի մահվան, բացի 1000 որբերից, որոնք գտնվում են ամերիկյան որբանոցներում, մեզ մոտ սովի են մատնված 4000 որբ երեխաներ»: Այսքանից հետո Կարաբեքիրի լկտիությունն էր հարկավոր՝ ազգային շահի և «դասակարգային գիտակցության» երկընտրանքում հեծող Հայհեղկոմի կառավարությանը մեղադրելու համար:

Եվ վերջապես, ինչպես կարող էր Հայաստանում մուսուլմանների նկատմամբ անարդար վերաբերմունք լինել, երբ Հայհեղկոմի 1920թ. դեկտեմբերի 20-ի որոշմամբ թուրք կոմունիստ Սուլեյման Նորին ընդգրկվել էր Հայհեղկոմի կազմում և աշխատում էր արդարադատության ժողովրդական կոմիսարիատում: Նույն կոմիսարիատի կոլեգիայի անդամն էր մուսուլման գործիչ

[24] «Կոմունիստ», Բաքու, 1921, թ. 15:
[25] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 32, թ. 13:

Ասադ Աղարբեկովը, իսկ Երևանի «թաթարական թաղամասում ժողովրդական դատավոր էր նշանակվել Հուսեյին Ղազիևը»[26]: Մենք այս փաստերը բերեցինք ոչ միայն հերքելու քեմալականների՝ ժամանակին տարածած ասեկոսեները, այլև ցույց տալու համար, որ ներքին քաղաքականության մեջ ընդգծված առանձնանում էր կառավարության բարեհոգի վերաբերմունքը մուսուլման ազգաբնակչության հանդեպ: Այդ փաստերին ականատես են եղել նաև Թուրքիայի կոմունիստական կուսակցության անդամները, որոնք մասնակցում են հայ-թուրքական բարեկամությանը նվիրված միտինգներին: 1920թ. դեկտեմբերի 27-ին Ալեքսանդրապոլից Ղարաքիլիսա (Վանաձոր) են ժամանում Մդիվանին և Թուրքիայի կոմունիստական կուսակցության նախագահը, որոնք ելույթ են ունենում քաղաքում կազմակերպված միտինգում: Մեկնելուց առաջ Մ. Սուբխին հայտարարությամբ դիմում է ՀԿԿ Կենտկոմին. «Մի քանի օր գտնվելով Հայաստանի տերիտորիայի վրա և ականատես լինելով բազմաթիվ փաստերի և դեպքերի, մենք եկանք այն խորը համոզման, որ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները լցված են պետական նոր կյանք ստեղծելու տենչով: Այսօր, երբ մենք մեկնում ենք ապստամբած Անատոլիա, հավատացած ենք, որ Հայաստանի խորհրդային հանրապետությունը, իրեն պաշտպան ունենալով աշխատավոր մասսաներին, կհանդիսանա Արևելքում ամենակարևոր հեղափոխական կենտրոններից մեկը»[27]: Կովկասյան բյուրոյի հանձնարարությամբ Ալեքսանդրապոլում գտնվող Թուրքիայի կոմունիստական կուսակցության հատուկ հանձնաժողովի նախագահ Իսմայիլ Հաքին դեկտեմբերի կեսերին Ստասովային հղած հեռագրում հավաստելով «Կարաբեքիրի նվիրվածությունը համաշխարհային հեղափոխությանը» և Լեգրանի կողմից տարածքային հարցի բարձրացումը համարելով «ընդհանուր նպատակին հակասող» հարցադրում, ավելացնում է. «Ես մնում եմ այստեղ Հայհեղկոմին կից և կձեռնարկեմ կազմակերպչական և պրոպագանդիստական աշխատանքներ մուսուլման ազգաբնակչության շրջանում»[28]: Շուրջ քսան օր Հայաստանի մուսուլմանաբնակ վայրերում շրջագայելուց հետո՝ դեկտեմբերի 31-ին նա Հայհեղկոմին ողջույնի հետևյալ հեռագրին է հղում. «Նկատի ունենալով սոցիալիստական հեղափոխության հաջող հոսանքը և տարածումը Հայաստանում և հայ ու մուսուլման աշխատավոր մասսաների ամուր եղբայրական համերաշխությունը և բարեկամությունը՝ գտնում եմ ինձ երջանիկ»[29]: Սա է իրողությունը, իսկ այդ հարցի մասին բարձրացրած աղմուկը նաև նրա համար

[26] Կոմունիստ, Եր., 1921թ. N 23:
[27] «Կոմունիստ», 1921, N 20:
[28] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 225, թ. 42:
[29] «Կոմունիստ», 1921, N 22:

էր, որ այդ առիթով Բեհաէդդինը հաճախակի լինի տեղերում և ուսումնասիրի հանրապետության վիճակը: Քեմալականները Սովետական Հայաստանի նկատմամբ օկուպանտի դիրքերից իրենց քաղաքականությունը շարունակեցին մինչև փետրվար: Հատկապես դրությունը ծանր էր Հայաստանի այն շրջանների համար, որոնք գտնվում էին զինադադարի տարածքում: Համաձայն 1920թ. նոյեմբերի 13-ի զինադադարի Նալբանդ կայարանից մինչև Ղարաքիլիսա հայտարարվում էր հայ-թուրքական չեզոք գոտի: Հայաստանում սովետական կարգերի հաստատվելուց հետո անփոփոխ է մնում նաև այս «չեզոք գոտու» ստատուսը: Միայն մի տարբերությամբ, որ Սուրեն Մելիքյանի գլխավորած դաշնակցական կառավարության միսիային, որպես «չեզոք գոտու» վրա հսկողություն սահմանող իրավական կողմ Սովետական Հայաստանի կողմից հանդես է գալիս Ղարաքիլիսայի հեղկոմը: Քեմալականների կողմից այն իրացնում էր արդեն Ղարաքիլիսայում գտնվող թուրքական ներկայացուցչությունը կապիտան Թեֆիկ բեյի գլխավորությամբ: Այս գոտին փաստորեն չեզոք էր միայն Հայաստանի համար, որովհետև այն նույնպես ենթարկվում է նույն ճակատագրին, ինչ որ օկուպացված մյուս տարածքները: Հայ-թուրքական «չեզոք գոտում» թուրքերի կատարած գազանությունների մասին են պատմում Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանի անունով ստացված՝ օգնություն հայցող բազմաթիվ դիմումները և զեկուցագրերը[30]: Այդ մասին հիշատակել է նաև Ղարաքիլիսայի հեղկոմի նախագահ Սերո Մանուցյանը. «Այս նոր Չեզոք գոտին ևս մի չարիք է Հայաստանի աշխատավորության համար: Խրոնիկական երևույթ են դարձել ալան-թալանները: Տաճիկ ասկյարները օրը ցերեկով անցնում են սահմանը և Հայաստանի սահմանակից գյուղերը ենթարկում կողոպուտի: Քանի անգամ այդ առիթով բողոք է ուղղվել Ղարաքիլիսայի տաճկական միսիային, սակայն ապարդյուն: Քանի անգամ Հեղկոմի ջանքերով ձերբակալվել են մեղսակից ասկյարները ու հանձնվել իրենց միսիային, սակայն մնացել են անպատիժ»[31]: Փաստորեն չեզոք գոտում կարգ ու կանոն վերահսկելու նպատակով Ղարաքիլիսայում գտնվող թուրքական միսիան ոչ միայն ոչինչ չէր անում այդ ուղղությամբ, այլև դարձել էր իսկական պատուհաս Ղարաքիլիսայի հեղկոմի համար: Այդ տարածքում միջնադարյան ձևերով և մեթոդներով իրացվող հարկահանությունը քողարկելու նպատակով նրանք առիթը բաց չեն թողնում միջադեպեր ստեղծելու և չեղած բաների շուրջ աղմկելու: Թեֆիկ բեյը Ղարաքիլիսայում կատարում էր նույն գործը, ինչ որ Բեհաէդդինը Երևանում: 1920թ. դեկտեմբերին «Կարաբեքիրը, հիմնվելով նրա տված տեղեկությունների վրա, բողոքել է կենտրոնին, որ իբր Ղարաքիլիսա-

[30] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 200. ց. 1. գ. 5, թ. 1-13:
[31] «Կոմունիստ», Եր., 1921, N 45:

յի հեղկոմը ոչնչացրել է այդ շրջանի երեք թուրքական գյուղ»[32]: Այս «փաստը» ստուգելու համար Ղարաքիլիսա է գալիս հատուկ հանձնաժողով Ադրբեջանի հեղկոմի անդամ Բ. Շահթահթինսկու գլխավորությամբ: «Հանձնաժողովը տեղում պարզում է, որ ոչ թե բնաջինջ են եղել, այլ այդ գյուղերում կազմված են հեղկոմներ, որոնք աշխատում են տեղական օրգանների հետ համերաշխ»[33]: Ղարաքիլիսայի ներքին գործերին միջամտելը, որն արտահայտվում էր չհիմնավորված պահանջներով, դարձել էր սովորական երևույթ թուրքական միսիայի համար: 1921թ. հունվարի 14-ին Ղարաքիլիսայի հեղկոմի նախագահը հայտնում է, որ «տեղի թուրքական միսիան ամեն օր մթերքներ է պահանջում, իսկ իրենք ոչինչ չունեն տալու»[34]: Հունվարի 3-ին թուրքական հրամանատարությունը վերջնագրով պահանջում է իրենց հանձնել 4 ցիստեռն մազութ: «Ղարաքիլիսայի հեղկոմը երկրի պարենային ու քաղաքական ծանր կացությունը նկատի առնելով՝ վճռեց ունեցած բոլոր մազութը հանձնել տաճիկներին, չնայած որ Խորհրդային Հայաստանը շատ մեծ կարիք ուներ հեղուկ վառելանյութի»[35]:

Սովետական Հայաստանի նկատմամբ թուրք ազգայնականների քաղաքականության տիրական ձևերն ու մեթոդները հասնում էին անթույլատրելի աստիճանի: 1921թ. հունվարի 31-ին Կարաբեքիրը հեռագրում է Բաքվում Թուրքիայի ներկայացուցիչ Մ. Շեֆքեթ-բեյին. «Տեղեկացել ենք, որ Ռուսաստանից Հայաստանի աշխատավոր ժողովրդին ուղարկված նվերների մեջ կա նաև նավթ: Մենք նավթի, մազութի և բենզինի խիստ պահանջ ունենք: Առաջին պարտիայով մեզ ուղարկեք՝ 10 վագոն բենզին, 10 վագոն նավթ և 20 վագոն մազութ»[36]:

1921թ. հունվարի 12-ին Ղարաքիլիսայի հեղկոմը տեղի թուրքական միսիայի անդամների իսկությունը պարզելու համար փաստաթղթերի ստուգում է կատարում: Այս միանգամայն օրինական գործելակերպը թուրքական կողմի համար մեծ աղմուկի առիթ է հանդիսանում: 1921թ. հունվարի 29-ին և 30-ին Կարաբեքիրը երկու նոտա է հղում Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարին, որոնցում ջանում է միջադեպը ներկայացնել ինչպես թշնամանք հեղափոխական Թուրքիայի նկատմամբ[37]: Օկուպանտի դիրքերից Հայաստանի կառավարության ամենաօրինական գործելակերպը մեծ աղմուկի նյութ դարձրած թուրք զորապետին 1921թ. փետրվարի 4-ին

[32] «Կոմունիստ», Եր., 1921, N 45:
[33] Նույն տեղում:
[34] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, . թ. 106:
[35] «Կոմունիստ», Բաքու, 1921, N 8:
[36] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, թ. 103:
[37] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1,գ. 6, թ. 110:

պատասխանում է արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ Ա. Մռավյանը: Հերքելով Կարաբեքիրի անհիմն փաստարկները՝ Ա. Մռավյանը ցույց է տալիս, որ Ղարաքիլիսայի հեղկոմի գործելակերպը բխում է միջազգային դիվանագիտության նորմերից: Հիշեցնում է նաև, որ Սովետական Հայաստանի ոչ մի քաղաքացի չի անցել Ալեքսանդրապոլ առանց Հայաստանում Թուրքիայի ներկայացուցիչ Բեհաէդդինի անցագրի[38]: Անդրադառնալով Կարաբեքիրի մեղադրանքներին, որ իբր «Հայաստանի կառավարությունը թերանում է հեղափոխական Թուրքիայի նկատմամբ իր պարտականությունների կատարման մեջ», Ա. Մռավյանը գրում է. «...Սովետական Հայաստանը իր դաշնակիցների՝ Սովետական Ռուսաստանի և Սովետական Ադրբեջանի բարեկամական հարաբերությունները հեղափոխական Թուրքիայի հետ պարտադիր է համարում նաև իր համար, որի ապացույցն է նրա ամենօրյա գործունեությունը հայ-թուրքական հարաբերություններում, բայց նա իրավացիորեն նույնը սպասում է Թուրքիայի կողմից: Ձեր նոտայում մենք կարդացինք գեղեցիկ խոսքեր հայ ժողովրդի նկատմամբ Ձեր տածած բարեկամական զգացմունքների մասին, բայց մարդկանց, մասնավորապես կառավարողների մասին դատում են ոչ թե նրանց խոսքերով, այլ գործերով... Եթե բանվորա-գյուղացիական Հայաստանի լսողությունը ամեն օր և ամեն ժամ չխլացնեին Ձեր զորքերի կողմից օկուպացրած տարածքներում մահացող հայկական ժողովրդական մասսաների հոգեվարքի ձայները, եթե տասնյակ և հարյուրավոր ավերված գյուղերի ծուխը և մոխիրը չհասնեին մեզ, եթե չլինեին այդ բոլոր սարսափները՝ բանվորա-գյուղացիական Հայաստանը ավելի շատ հիմքեր կունենար անկեղծորեն ուրախանալու այդ գեղեցիկ հնչող բառերով»[39]:

Այս նոտան ևս որևէ ազդեցություն չէր կարող ունենալ, որովհետև քեմալականները գտնում էին, որ իրենք են նպաստել Հայաստանի խորհրդայնացմանը և նրա հետ պետք է վարվեն ինչպես կամենան: Օկուպացված տարածքներում քեմալականները կիրառում էին իրենց նախորդների կողմից փորձված քաղաքականությունը: Կարսում, Սարիղամիշում, Իգդիրում և մյուս վայրերում, որոնք մտնում էին «Ազգային ուխտի» գծագրած տարածքների մեջ, բնաջնջվում էր հայ ժողովուրդը, իսկ «հայերի տները անմիջապես բնակեցվում էին թուրքերով»: Այդ տարածքներում թուրքերի կատարած գազանությունների մասին կարելի է երկար խոսել, բայց մեր խնդիրն է ցույց տալ, թե ինչ էր կատարվում Ալեքսանդրապոլի և Նախիջևանի գավառներում: Առաջին հերթին այն հիմնավոր պատճառով, որ այդ տարածքները այն կարևոր հանգույցներն էին, որոնցով քեմալականներն իրականացնում

[38] Նույն տեղում, թ. 111:
[39] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1,գ. 6,. թ. 103:

էին Հայաստանի շրջափակումը: Երկրորդ կովանն այն է, որ Ալեքսանդրապոլը համանուն պայմանագրով մնում էր Հայաստանին, իսկ Նախիջևանը Ադրբեջանի հեղկոմի 1920թ. դեկտեմբերի 1-ի դեկլարացիայով հանձնվել էր Սովետական Հայաստանին:

Քանի որ հիշատակված շրջաններում քեմալականների գործողությունները միանշանակ չէին, ուստի այն կշարադրենք առանձին-առանձին:

Արդեն ասել ենք, որ թուրքերը Ալեքսանդրապոլը գրավելուց հետո այնտեղ ստեղծեցին «սովետական իշխանություն», որին ոչ պատահական տրվել էր Հայաստանի հեղափոխական կոմիտե անունը:

Հայհեղկոմը Երևան ժամանելուն պես ի թիվս առաջին ձեռնարկումների զբաղվեց նաև այս չարաղետ և վտանգներով հղի հարցով: Լավ հասկանալով, որ Ալեքսանդրապոլում թուրքերը հեղկոմ ստեղծելով՝ ցանկանում են այն հակադրել Սովետական Հայաստանի օրինական կառավարությանը՝ Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը և Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Բ. Լեգրանը 1920թ. դեկտեմբերի 5-ին հեռագրում են Թուրքիայում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Մդիվանուն, որպեսզի նա ազդի Ալեքսանդրապոլի հեղկոմի վրա, որ նա վերջ դնի իր ինքնագլուխ գործունեությանը: Հեռագրում մասնավորապես ասված է. «Բացատրեք նրանց այն խայտառակ դերը, որը խաղում են թուրքական հրամանատարության ցուցումով»[40]:

Փոխանակ ենթարկվելու Հայհեղկոմի նախագահի ցուցումին և անմիջապես լուծարվելու՝ Ալեքսանդրապոլի հեղկոմը ոչ միայն շարունակեց իր գործունեությունը, այլև իր ընդունած մի շարք որոշումներով և անտրամաբան զեկուցագրերով, ուղղված ՌԿ (բ) Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյին խիստ դժվարեցրեց Հայհեղկոմի գործունեությունը: 1920թ. դեկտեմբերի 4-ին Կովկասյան բյուրոյին ներկայացրած զեկուցագրում կարդում ենք. «Նրանց (թուրքերի – Կ.Ս.) վերաբերմունքը մեր կազմակերպության (բոլշևիկյան – Կ.Ս.) նկատմամբ համակիր է այնքանով, որքանով մենք նրանց օգնում ենք մեր ընդհանուր թշնամու՝ դաշնակցական կառավարության դեմ պայքարում»: Այս զեկուցագրի հեղինակները թե ինչքանով են հասկացել քաղաքականությունից՝ երևում է վերը բերված տողերից: Բայց տարօրինակն այն է, որ նրանք, ականատեսը լինելով հանդերձ սեփական ժողովրդի տասնյակ հազարավոր զոհերի, բռնաբարված աղջիկների ողբ ու կոծին, միջնադարյան ձևերով և մեթոդներով իրագործվող թալանին՝ զեկուցագիրը վերջացնում են հետևյալ տողերով. «...ասկյարները մեծ հետաքրքրություն են հանդես բերում քաղաքականության նկատմամբ ընդհանրապես, իսկ բոլշևիզմի նկատմամբ մասնավորապես և շուտ են ըմբռնում կոմունիզմի գաղափարնե-

[40] ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 1033, ց. 2, գ. 1157:

ը»[41]: Այս ոգով են գրված նաև ՀԿԿ Ալեքսանդրապոլի շրջանային կոմիտեի օրգան «Կոմունիստ» թերթում տպագրված մի շարք հոդվածներ: Այդ հոդվածների հեղինակները ոչ միայն Հայաստանի օկուպացված տարածքներում դիտել են տալիս ինչպես «անհասկանալի լուրեր», այլև անհիմն պատմական էքսկուրսներ կատարում, որոնցով ձգտում են արդարացնելու Թուրքիայի քաղաքականությունը հայերի և Հայաստանի նկատմամբ Աբդուլ Համիդի ժամանակներից սկսած[42]: Հենց այդպիսի սովետական իշխանություն էր հարկավոր քեմալականներին Հայաստանում: Դրա համար էլ նրանք համառորեն չէին թողնում, որ Ալեքսանդրապոլի հեղկոմը լուծարվի, որովհետև այդ հենքի վրա շատ լավ էին մեղադրում Սովետական Հայաստանի կառավարությանը, որը «թերանում էր իր պարտականությունների կատարման մեջ հեղափոխական Թուրքիայի նկատմամբ»:

Ալեքսանդրապոլի հեղկոմը իր գործունեությամբ ավելի հեռուն է գնում: 1920թ. դեկտեմբերի 23-ին տեղի է ունենում գավառի պատասխանատու աշխատողների և Հեղկոմի ընդհանուր ժողովը: Ժողովում քննարկվում են Հայաստանի Հեղկոմի վարած ներքին քաղաքականությունը և մասնավորապես նրա վերաբերմունքը դաշնակցության նկատմամբ: Ժողովի ընդունած բանաձևում կարդում ենք. «Ժողովը գտնում է անհրաժեշտ ցուցանելու այն հանգամանքը, որ մեր իշխանությունը, որը մասամբ հենվում է Դրոյի և մյուս խմբապետների վրա, հեղինակազրկում է ինչպես մեր կուսակցությանը, այնպես էլ բանվորա-գյուղացիական իշխանությանը և ստեղծում է մեր իշխանության նկատմամբ կասկածելի վերաբերմունք ինչպես բանվորա-գյուղացիական մասսաների, այնպես էլ թուրքական ասկյարների կողմից, որի համակրանքը մեր իշխանության հանդեպ աճում է օրեցօր»[43]:

Մենք պարզորոշ տեսնում ենք, որ այս որոշումը ընդունված է քեմալականների ցուցումով: Սովետական Հայաստանի կառավարությանը մեղադրող ավելի լավ փաստաթուղթ դժվար թե գտնվի: Փույթ չէ, որ նրանում բերված փաստերը իրականության հետ ոչ մի աղերս չունեին:

Ինչպես տեսանք, քեմալականներն Ալեքսանդրապոլում գործի հրավիրելով հայ կոմունիստներին՝ նրանց իշխանությանը տվել էին Հայաստանի Հեղկոմ անունը: Այս հանգամանքն էլ պատահական չէր: Նրանք ամեն կերպ ջանում էին ցույց տալ, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատումը պայմանավորվում է Հայաստանի դեմ տարած իրենց հաղթական պատերազմով: Դե, քանի որ իրենք են նպաստել այդ իշխանության հանդես գալուն, ուստի և այն պետք է գործի իրենց կամեցողությամբ: Այսպես էին

[41] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 32, թ. 3:
[42] «Կոմունիստ», Ալեքսանդրապոլ, 1920թ. 3 դեկտեմբերի, N 6:
[43] ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 1033, ց. 2, գ. 1177, փ. 10:

մտածում քեմալականները, որովհետև նրանց տեսանկյունով Սովետական Հայաստանը ոչ թե անկախ հանրապետություն էր, այլ պարզապես «կոչված էր Ռուսաստանի և Թուրքիայի ժողովուրդների միջև անկեղծ կապ հաստատելու»[44]: Այսպիսին էր համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում զոհ գնացած երկրի ու նրա ժողովրդի ճակատագիրը:

Տեսնելով, որ Հայհեղկոմը կռահում է իրենց հեռուն տանող դիտավորությունները և համառորեն պնդում է, որպեսզի Ալեքսանդրապոլի հեղկոմը լուծարվի, քեմալականները թույլ տվեցին, որ այդ հեղկոմը դառնա գավառային հեղկոմ և «ենթարկվի» Հայհեղկոմին: Առաջին հայացքից թվում էր, թե այդ քայլը ձեռնտու էր Սովետական Հայաստանի կառավարությանը: Բայց դա միայն առաջին հայացքից, որովհետև այդ քայլով քեմալականները ավելի ծանրացրին Հայհեղկոմի վիճակը: Եթե մինչ այդ Ալեքսանդրապոլի հեղկոմի գործունեության համար Հայհեղկոմը կրում էր միայն բարոյական պատասխանատվություն, ապա դրանից հետո այն իրականորեն ենթարկվում էր Հայհեղկոմին, բայց փաստորեն գործելու էր թուրքերի ցուցումներով:

Պատահական չէ, որ ասում են թուրքերը ռեալ քաղաքագետներ են: Նրանք ստեղծեցին Ալեքսանդրապոլի հեղկոմը, որ մի կողմից նրա միջոցով տեղում իրագործեն իրենց դիվային պլանները, դրանով իսկ հեղինակազրկեն սովետական իշխանության գաղափարը, իսկ մյուս կողմից էլ այն դարձնեն գործիք Սովետական Հայաստանի կառավարության դեմ: Քեմալական կառավարության արտաքին գործերի կոմիսար Ահմեդ Մուհթարը Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ Ա. Բեկզադյանին հղած դեկտեմբերի 19-ի նոտայում (պատճենը՝ Չիչերինին) նշում է. «Մենք Ալեքպոլ մտնելուն պես գործի հրավիրեցինք կոմունիստներին և իշխանությունը տվեցինք նրանց»[45]: Այս փաստարկը նա բերում է ինչպես Սովետական Հայաստանի նկատմամբ բարեկամական տրամադրվածության հիմնավոր ապացույց: Հասկանո՞ւմ էին արդյոք Ալեքսանդրապոլի կոմունիստները, թե իրենց անհեռատես քայլով ինչպիսի դժվարին կացություն էին ստեղծել Հայաստանի օրինական կառավարության համար: Եթե նրանք ժամանակին հասկանային այդ պարզ ճշմարտությունը, որի համար առանձնահատուկ մտավոր կարողություն չէր պահանջվում, ապա իրենց թերթում չէին տպագրի հոդվածներ, որոնցում օկուպացված տարածքներում քեմալականների կատարած վայրագությունները ներկայացնում էին ինչպես դաշնակների տարածած պրովոկացիա[46]:

[44] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 1114, ց. 1, գ. 6, թ. 18:
[45] Նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 6, թ. 18:
[46] «Կոմունիստ», Ալեքսանդրապոլ, 1920թ., 3 դեկտեմբերի, N 6:

1921թ. հունվարի 13-ին Օրջոնիկիձեին հղած հեռագրում Չիչերինը, անդրադառնալով Հայաստանի վիճակին, նշում է. «Թող ընկ. Մդիվանին հատկապես ուշադրություն դարձնի Հայաստանին աղետալի վիճակից հանելու անհրաժեշտության վրա: Թուրքերը ոչ միայն աջակցություն ցույց չեն տալիս եղբայրական սովետական հանրապետությանը, այլև բլոկադայի են ենթարկում նրան, կողոպտում են, սովի դատապարտում: Ամեն մի Սովետական հանրապետության գործ մեր գործն է և մենք մեզ հավատարիմ չենք լինի, եթե անտարբերությամբ նայենք եղբայրական Սովետական հանրապետության կործանմանը»[47]: Նույն օրը՝ 1921թ. հունվարի 13-ին Հայհեղկոմի անունից Թուրքիայի արտաքին գործերի կոմիսար Ահմեդ Մուհթարին բողոքի նոտա է հղում Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Բեկզադյանը, որում մասնավորապես ասված է. «Ալեքսանդրապոլի Հեղկոմը փաստորեն դարձրել եք զենք օկուպացիոն թուրքական ջոկատի ձեռքին: Հայաստանի Հեղկոմը գտնում է, որ չի կարող ճանաչել նման օրգանի հետագա գոյությունը, որը աշխատավորության աչքում միայն հեղինակազրկում է Սովետական իշխանությանը: Այնտեղ, որտեղ զինվորական օկուպացիա է վերը նշված վայրերի մեթոդներով, այնտեղ չի կարող տեղ ունենալ բանվորա-գյուղացիական իշխանությունը... Խորհրդային Հայաստանի կառավարությունը չի կարող թույլատրել նմանօրինակ գործողություններ այն տերիտորիաներում, որոնք նա իրավացիորեն իրենն է համարում»[48]: Միևնույն ժամանակ Հայհեղկոմը հատուկ որոշում է կայացնում ուղղված Ալեքսանդրապոլի հեղկոմին, որով նրանից պահանջում է անմիջապես լուծարվել: Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Բեկզադյանը Մոսկվա մեկնելու ճանապարհին Հայհեղկոմի որոշումը հանձնում է Ալեքսանդրապոլի հեղկոմին: 1921թ. հունվարի 19-ին նա Ղարաքիլիսայից հեռագրում է Ս. Կասյանին. «Հայհեղկոմի որոշումը հանձնեցի Ալեքսանդրապոլի հեղկոմին»:

1921թ. հունվարի 25-ին Ալեքսանդրապոլի հեղկոմը հայտնում է թուրքական ջոկատի հրամանատար Ռուշտի փաշային, որ հեղկոմը հրաժարվում է իր իշխանությունից[49]: Թուրքերը այս ակտի դեմ բողոքից հետո լռեցին: Իշխանությունից հրաժարվելուց հետո Ալեքսանդրապոլի հեղկոմը հայտարարությունով դիմում է Հայհեղկոմին (պատճենը՝ ՌՍՖՍՀ ժողկոմսովետին, Ադրբեջանի Հեղկոմին և Կոմինտերնին). «... Մենք ենթադրում էինք, որ Անտանտայի դեմ մարտնչող Մուստաֆա Քեմալի բանակը, որը բազմիցս հայ-

[47] Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիան և Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, էջ 461:

[48] Документы внешней политики СССР, т. III, с. 486.

[49] «Կոմունիստ», Բաքու, 1921թ., N 38:

տարարել է իրեն Մեծ հեղափոխության լոզունգների կողմնակից, բերում է մեզ ազատություն դաշնակ մաուզերիստներից և չի հապաղի թողնել Հայաստանի տերիտորիան խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո: Մենք ենթադրում էինք, որ հասել է այն օրը, երբ ազատագրված Հայաստանը պետք է կարողանա իր խաղաղության ձեռքը մեկնել եղբայրական տաճիկ ժողովրդին»: Հայտարարությունում տրված է նաև քեմալականներից հիասթափվելու պատճառները: «Ի ապացույց հիասթափության, բերում ենք հետևյալ փաստերը: Ալեքսանդրապոլի գավառից ու քաղաքից հավաքված և Էրզրում են ուղարկված15.000 բանվոր և գյուղացի, ի թիվս որոնց բազմաթիվ կոմունիստներ: Անհայտ կորել և սպանվել են 5000 մարդ: Առաջին գավառամասում 34 գյուղից մնացել են չորսը, այն էլ առանց տղամարդկանց: 4-րդ գավառամասում մնացել է երեք գյուղ: Գավառի գյուղացիների ողջ ինչքը թալանված է... Հունվարի 17-ին ասկյարների կողմից մահափորձ է կատարվել Հեղկոմի նախագահի վրա: Հունվարի 20-ին հեղկոմի փոխ. նախագահի տունը թալանելու փորձ է արվել: Թալանված է հեղկոմի քարտուղարի տունը: Հունվարի 21-ից սկսվում է Ալեքսանդրապոլի բացահայտ թալանը: Տանում են ողջ շարժական գույքը՝ գրասեղաններ, աթոռներ, մահճակալներ, վերմակներ, հայելիներ, ամաններ և այլ կահ կարասիք... Բերված փաստերը հաստատում են, որ Ալեքսանդրապոլի հեղկոմի իշխանությունը դառնում է ֆիկցիա, որը վարկաբեկում է խորհրդային իշխանության գաղափարը»:

Թուրք ազգայնականների գործունեությունը բացահայտ հակահայկական բնույթ էր կրում Նախիջևանի գավառում: 1920թ. դեկտեմբերի 1-ին Բաքվի սովետի հանդիսավոր նիստում հռչակվում է Ադրբեջանի հեղկոմի դեկլարացիան, որով Նախիջևանը, Ղարաբաղը հանձնվում էին Հայաստանին: Այս ակտը ներգործող ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի վրա:

Բաքվի սովետի հանդիսավոր նիստում Գ. Կ. Օրջոնիկիձեն շնորհավորելով հայ ժողովրդին՝ ասել է. «Այդ ակտը (Ադրբեջանի հեղկոմի դեկլարացիան – Կ.Ս.) կարդացված այստեղ, մեծագույն կարևորության ակտ է, դա պատմական ակտ է, որի օրինակը չունի մարդկության պատմությունը»:

Հայ ժողովուրդը իր շնորհակալական զգացմունքներն արտահայտեց բազմաթիվ հեռագրերով, որոնք տարբեր ժողովների և հանդիսավոր նիստերի անունից հղվեցին Ադրբեջանի հեղկոմին: Հայհեղկոմի անունից շնորհակալական մի հեռագիր էլ Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին հղել է Ս. Կասյանը: Այս փոփոխությունները բնավ չեն ազդում քեմալականների վրա: Նրանք օգտվելով այն հանգամանքից, որ Նախիջևանում է գտնվում թուրքական 300 հոգուց բաղկացած ջոկատը, հասան այն բանին, որ Նախիջևանը փակեցին Սովետական Հայաստանի առաջ՝ նրան զրկելով

Պարսկաստանի հետ առևտուր անելու միակ հնարավոր ճանապարհից, որով և ամբողջականացրին Սովետական Հայաստանի շրջափակումը:

Նախիջևանի շրջանում թուրքերի կատարած կամայականությունների և բացահայտ հակասովետական գործելակերպի մասին է պատմում Նախիջևանի արտակարգ կոմիսար Վելիբեկովը 1921թ. հունվարի 23-ին Հայհեղկոմին հղած զեկուցագրում: Նա նշում է, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատումը շատ վատ դիմավորեցին թուրքերը, որից հետո նրանց վերաբերմունքը Նախիջևանի սովետական իշխանության նկատմամբ դառնում է թշնամական: Օգտվելով հարմար իրավիճակից և փաստելով Ալեքսանդրապոլի պայմանագիրը[50], քեմալականները բնակչության մեջ սկսում են բացահայտ պրոպագանդա տանել Նախիջևանը Թուրքիային միացնելու օգտին[51]:

«Հանկարծ Նախիջևան է գալիս Ադրբեջանի Հեղկոմի անդամ Բ. Շահթախթինսկին, որից էլ իմանում ենք,– գրում է Վելիբեկովը,– որ Ադրբեջանի Հեղկոմի դեկլարացիայով Նախիջևանը հանձնված է Հայաստանին»: Հետաքրքրազուրկ չէ, որ Նախիջևանի արտակարգ կոմիսարը մինչև դեկտեմբերի 20-ը տեղեկություն չի ունեցել, որ Նախիջևանը հանձնված է Հայաստանին, իսկ Բ. Շահթահթինսկին յուրովի մեկնաբանություն է տվել նրան՝ ժողովրդի մոտ հայտարարելով, որ «Ադրբեջանը Ձեզ վաճառեց, եթե ես Բաքվում լինեի, չէի թողնի բանը դրան հասներ»[52]: Այս միջադեպը ավելի է շիկացնում մթնոլորտը: Տեղեկանալով, որ Նախիջևանը հանձնված է Հայաստանին, Վելիբեկովը անմիջապես մեկնում է Երևան՝ ստեղծված իրավիճակի մասին Հայհեղկոմին զեկուցելու համար: Օգտվելով Վելիբեկովի բացակայությունից՝ Նախիջևանում գտնվող թուրքական ջոկատի հրամանատար Վեյսալ բեյը գրավում է իշխանությունը և միջնադարյան խառնիփնթոր ձևերով պրոթուրքական ագիտացիա ծավալում շրջանում: Այս դեպքերը կատարվել են դեկտեմբերի 20-21-ը, որովհետև արդեն դեկտեմբերի 22-ին Թուրքիայի Արևելյան բանակի Երևանի ներկայացուցիչ Բեհաեդդինը Հայհեղկոմի նախագահին հայտնում է, որ ինքը Նախիջևանի արտակարգ կոմիսար Վեյսալ բեյի կողմից նշանակվել է նաև Նախիջևանի ներկայացուցիչը Հայաստանում:

Դեկտեմբերի 27-ին Երմոլենկոն Շահթահթից Բ. Լեգրանին հայտնում է, որ «Նախիջևանի թուրքական զորքերի հրամանատար Վեյսալ բեյը օգտվելով արտակարգ կոմիսարի բացակայությունից իրեն հռչակել է Նախիջևանի արտակարգ կոմիսար: Ձերբակալված բոլոր հակահեղափոխականներին ազատ է արձակել: Թուրք ասկյարները թալանում և բռնաբարում են ժողովրդին: Վեյսալ բեյը հրաման է արձակել Երևանից եկած ոչ մի գնացք բաց չթողնել Նախիջևան»[53]: Հայհեղկոմը, լսելով Վելիբեկովի տված բացատրությունները, հրապարակում է դեկլարացիա, որով Նախիջևանի փոխհարաբերությունները Սովետական Հայաստանի հետ թողնվում է տեղի ազգաբնակչությանը: Այս քայլը ամենայն հավանականությամբ մի ավելորդ փորձ էր Հայհեղկոմի կողմից ազդելու քեմալականների վրա, որպեսզի նրանք փոխեն իրենց քաղաքական կուրսը Հայաստանի նկատմամբ: «Կոմունիստ» թերթի 28.12.1920 թվականի համարում Նախիջևանի դեկլարացիայի հետ համատեղ տպագրվում է հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող հոդված, որում ասված է. «Տաճկաստանին մնում է Խորհրդային Հայաստանի բնական իրավունքների հարգումը և դա պետք է անի Տաճկաստանը ճիշտ այնպես, ինչպես Խորհրդային Հայաստանը Նախիջևանի Հեղկոմի ճանաչմամբ հարգեց այդտեղի թուրք ազգաբնակչության ավտոնոմիայի իրավունքը»: Բայց այն բոլորովին չազդեց թուրքական պլանների վրա: Դրությունը տեղում պարզելու համար 1921թ. հունվարի 2-ին Վելիբեկովի հետ Նախիջևան է մեկնում Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը (որը Նախիջևանը Հայաստանին միացնելու համոզված կողմնակիցն էր): Վելիբեկովի վերադարձից մեկ օր հետո Վեյսալ բեյը հեռանում է Շահթահթ, նրա հետ գնում է նաև Բ. Շահթահթինսկին[54]: Բայց Հայաստանի Հեղկոմի դեկլարացիան էլ չի հանգստացնում մթնոլորտը: 1921թ. հունվարի 5-ին Վելիբեկովը Վեյսալ բեյից ստանում է հետևյալ հեռագիրը. «Ես ինչպես քաղաքական ներկայացուցիչ (Թուրքիայի) կապի սպա Իկլոտի միջոցով պահանջում եմ. 1) Ուղարկել Նախիջևանի վերաբերյալ Ադրբեջանի Հեղկոմի դեկլարացիայի պատճենը: 2) Ադրբեջանի Նախիջևանից հրաժարվելուց և Սովետական Հայաստանի դեկլարացիայից հետո ում է ներկայացնում ընկ. Վելիբեկովը և ում կողմից է լիազորված: 3) Ստացել է արդյոք ընկ. Վելիբեկովը Երևանից 20 միլիոն: Եթե այո, ուրեմն ումից և ինչու՞...

... Ինձ համար նորություն էր, որ Վեյսալ բեյը դիվանագիտական ներկայացուցիչ էր, իսկ մեր հրամանատարը (խոսքը Իկլոտի մասին է – Կ.Ս.) հանդիսանում է թուրքական հրամանատարության կապի սպա: Ի՞նչ անհեթեթություն»[55]: Վելիբեկովը պատասխանում է հարցադրումներին, բայց դրանից դրությունը չի փոխվում: Նախիջևանի արտակարգ կոմիսարը զեկու-

[50] Ալեքսանդրապոլի պայմանագրով Նախիջևանի ժամանակավոր հովա նավորությունը հանձնված էր Թուրքիային:
[51] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 67, թ. 10:
[52] Նույն տեղում, թ. 12:
[53] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 67, թ. 9:
[54] Նույն տեղում, թ. 2:
[55] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 67, թ. 13:

ցագրում իրենց վիճակի ծանրությունը բացատրում է կենտրոնից որոշակի ցուցում չունենալով, որի պատճառով նրանք ստիպված աշխատել են թուրքերի հետ պահպանել նախկին բարեկամական հարաբերությունը՝ «չնայած նրանց բացահայտ հակասովետական և պանիսլամական դիրքին»[56]:

Նախիջևանում սովետական իշխանության ձևական բնույթի և այնտեղ թուրքերի տեր ու տնօրինություն անող հարկադրանքի ու հակասովետական գործունեության մասին է պատմում այնտեղի գաղթականներին օգնող ջոկատում ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի լիազոր Հատիկ Ազիզյանի 1921թ. փետրվարի 25-ին ՌԿ (բ) Կ Կենտկոմին ուղարկած զեկուցագիրը[57]: «Վերջին ամսվա ընթացքում,– գրում է «Կոմունիստ» թերթը,– Նախիջևանում կատարված դեպքերը գալիս են համոզելու մեզ, որ Հայաստանի բանվորագյուղացիական իշխանության շուրջը համախմբված թշնամի ուժերն արդեն սկսել են ակտիվ քայլերի դիմել: Քյազըմ Կարաբեքիրի ներկայացուցիչների գործունեությունը Նախիջևանում ընդդեմ խորհրդային իշխանության, անկարելի է բացատրել միայն այդ ներկայացուցիչների անհատական հակահեղափոխական կամեցողությամբ... Հակահեղափոխական պրոպագանդան, թե Խորհրդային Ադրբեջանը Նախիջևանը վաճառել է Հայաստանին: Այս ստոր պրովակացիան արվել է ազգամիջյան նոր ընդհարումները առաջ բերելու դիտավորությամբ»:

Այժմ տեսնենք, թե Ադրբեջանի Հեղկոմի անդամ Բ. Շահթահթինսկին ի՞նչ նպատակով էր գնացել Նախիջևան, որտեղ նա մնացել է մոտավորապես 10-15 օր:

1921թ. հունվարի 23-ին Ա. Մռավյանը Բաքվում Սովետական Հայաստանի ներկայացուցիչ Մ. Աթաբեկովին հայտնում է. «...Կա մի զգայացունց փաստ, որը կհաղորդեմ ծածկագրով: Վելիբեկովը փաստաթղթերով մերկացնում է մի ընկերոջ, որին Սերգոն երաշխավորել է որպես Նախիջևանի արտակարգ կոմիսար: Նա Ձեզ հայտնի է, Բաքվի խոշոր աշխատող է, Վելիբեկովը փաստաթղթերով ապացուցում է Ձեզ հայտնի այդ աշխատողի բացահայտ հակասովետական գիծը»[58]:

Ինչպես վերը տեսանք՝ Բաքվից ուրիշ «խոշոր աշխատող» չի եղել Նախիջևանում, բացի այդ փաստաթղթեր ասելով՝ Մռավյանը հենց նկատի ունի Վելիբեկովի զեկուցագիրը: Պարզվում է նաև, որ Շահթահթինսկին հանձնարարականով է գնացել Նախիջևան, բայց անհասկանալի է, թե ինչու՞ է

[56] Նույն տեղում:

[57] Նույն տեղում, թ. 2-5:

[58] Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 467:

Օրջոնիկիձեն նրան երաշխավորել որպես Նախիջևանի արտակարգ կոմիսարի, այլ ոչ թե Հայհեղկոմի անդամներից որևէ մեկին: Այս հարցի պատասխանը գտնում ենք 1921թ. հունվարի 21-ին Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Բաքվի քաղաքային կոնֆերանսին Օրջոնիկիձեի տված զեկուցման մեջ: Խոսելով Թուրքիայի ոտնձգությունների մասին Նախիջևանի վերաբերյալ՝ նա եզրակացնում է. «Մենք չենք կարող թույլ տալ, որ Նախիջևանը՝ պարսկական Ադրբեջանի և Սովետական արևելքի այդ բանալին Ադրբեջանը բաց թողնի իր ձեռքից»[59]: Ահա թե ինչու էր Օրջոնիկիձեն հենց Շահթահթինսկուն գործուղել Նախիջևան: Քեմալականներն իրենց գործունեությամբ ոչ միայն բացառեցին Պարսկաստանի հետ առևտուր անելու հնարավորությունը, այլև հասան այն բանին, որ Նախիջևանը չմիացվի Հայաստանին:

Ստեղծված քաղաքական իրավիճակը հնարավորություն էր տալիս քեմալականներին շրջափակել Հայաստանը և քաղաքացիական պատերազմ հրահրել, որպեսզի Հայաստանին զրկեն Մոսկվայում գումարվելիք ռուս-թուրք-հայ- ադրբեջանական կոնֆերանսին մասնակցելու հնարավորությունից: Մենք տեսանք, թե քեմալականներն ինչպիսի միջոցներով էին ձգտում հասնել իրենց նպատակին: Այժմ անդրադառնանք այն հարցին, թե Հայհեղկոմն ու ՀԿԿ Կենտկոմն ի՞նչ ձևերով ու մեթոդներով էին ղեկավարում երկիրը, որը և հանգեցրեց քաղաքացիական պատերազմի: Նաև նրանց միջև եղած տարաձայնությունների մասին: Մի կողմում էին Ս. Կասյանը, Ա. Մռավյանը և Ալ. Բեկզադյանը, որոնք դեմ էին Հայաստանը միջազգային իմպերիալիզմի գործակալ որակելուն և քեմալականների հարձակման միջոցով այն խորհրդայնացնելուն, իսկ մյուս կողմում՝ Ա. Նուրիջանյանը, Ի. Դովլաթյանը, Հ. Կոստանյանը: 1921թ. հունվարին Դրոյին Հայաստանից արտաքսելուց հետո դրության տերը դարձան ՀԿԿ Կենտկոմում մեծամասնություն կազմող երիտասարդ բոլշևիկները: Կասյանի և Մռավյանի վիճակն ավելի է ծանրանում, երբ Ստալինի հանձնարարականով Հայաստան է գալիս ՌՍՖՍՀ ՉԿ-ի լիազոր Հյուսիսային Կովկասում իր հեղափոխական վայրագություններով աչքի ընկած Գ. Աթարբեկյանը: Աթարբեկյանի Երևան գալով բռնագրավումների ու բռնացումների քաղաքականության կողմնակիցները դառնում են դրության տերը՝ դրանից բխող աղետալի հետևանքներով: 1921թ. հունվարի վերջին, երբ ՀԿԿ ԿԿ-ի անդամների միջև տարաձայնությունները հասել էին գագաթնակետին, Ս. Կասյանը և Ա. Մռավյանը Գ. Օրջոնիկիձեի անունով, ՌԿ (բ) Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյին հղած

[59] ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 4005, ց. 1, գ. 26, թ. 4:

հունվարի 28-ի հեռագրում նշում են, որ «Կառավարության և կուսակցության անհամաձայնեցված գործունեությունը, մի շարք պատասխանատու աշխատողների անպատասխանատու և անհամաձայնեցված գործելակերպը ոչ միայն հեղինակազրկում է իշխանությանը բնակչության աչքում, այլև բերում է ապակազմակերպվածություն և անարխիա: Մյուս կողմից, առանց իշխանության թույլտվության վերջին բարիքի անսիստեմ և անպատասխանատու բռնագրավումները... և վերջապես անասելի ծանր սայլային տուրքը, բնականաբար, առաջ է բերում խուլ դժգոհության»[60]:

Զայրույթով բերված այս փաստերը արդյունք էին տնտեսական այն քաղաքականության, որից համառորեն չէր հրաժարվում ՀԿԿ Կենտկոմի մեծամասնությունը: Որպես արդարացում իրենց քաղաքականության՝ նրանք Կովկասյան բյուրոյին հայտնում էին, որ հանրապետության ներքին վիճակը բարվոք է[61]:

Իսկ ՀԿԿ ԿԿ-ի օրգան «Կոմունիստ» թերթում նրանք այդ օրերին տպագրում են հոդվածներ, որոնցում ջանում են ապացուցել բռնագրավումների տնտեսական և նույնիսկ քաղաքական անհրաժեշտությունը: 1921թ. հունվարի 29-ի «Կատարվում է անխուսափելին» առաջնորդող հոդվածում Երևանում կատարված բռնագրավումների մեջ, ոչ ավելի, ոչ պակաս, տեսնում է հեղափոխական միտում. «Խուզարկություններն ունեն գերազանցապես քաղաքական նշանակություն: Հայաստանում ձեռնարկելով տնտեսապես ուժաթափել, թուլացնել բուրժուա-սպեկուլյանտ էլեմենտներին, նախ զրկում են հակահեղափոխությանը իր հիմնական ուժից – հարստությունից և ապա, այդ նույն պրոցեսում կազմակերպվում են և ամրացնում իրենց դասակարգային տիրապետության օրգանները... Կատարվում է անխուսափելին, հեղափոխությունը մտնում է իր հունի մեջ»:

Այս և նման ճակատային դիտարկումներով գրված հոդվածները նաև յուրովի պատասխան էին Ս. Կասյանի և Ա. Մռավյանի իրապաշտ փաստարկներին, որոնք ապարդյուն ջանքեր էին գործադրում, որպեսզի ՀԿԿ Կենտրոնական կոմիտեն վերջ դնի իր անհեռատես քաղաքականությանը:

Իրապաշտության և պարտականության չափանիշների բացակայության վկայություն է նաև այն հանգամանքը, որ ՀԿԿ Կենտկոմը ոչ միայն փորձ չկատարեց հանրապետությունում ստեղծված ճգնաժամային իրավիճակը վերլուծելու և թույլ տված սխալներից համապատասխան եզրակացություն անելու, այլև այն պայմանավորեցին դասակարգային անբավարար պայքարով: Այդ ճանապարհին առաջին ձեռնարկ է նկատվում Հայաստանից նախկին սպաների արտաքսումը: Դեկտեմբերին այդ ուղղությամբ կատարվող նախապատրաստական աշխատանքներն ավարտվում են: Արդեն դեկտեմբերի 23-ին Արտակարգ հանձնաժողովի նախագահ Գ. Այվազյանի ազդը պարտավորեցնում է. «Բոլոր սպաներին ներկայանալ ՉԿ-ի գրասենյակ, մեկնելու հետ կապված մի քանի կարիքներ պարզելու համար, բոլոր սպաները բաժանվելու են տասնյակների, տասնյակի ավագը պետք է ունենա նրանց լուսանկարը»[62]: «Կոմունիստ» թերթի դեկտեմբերի 29-ի համարում տպագրվում է ՉԿ-ի հատուկ բաժնի պետ Կուզմինի հետևյալ հրահանգը. «11-րդ բանակի շտաբի տրամադրության տակ ուղարկելու համար ցուցակագրված սպաներին առաջարկվում է դեկտեմբերի 29-ին ժամը 1-ին ներկայանալ Հայաստանի Արտակարգ հանձնաժողովին»: Փաստորեն, դեկտեմբերի վերջերին սպաների արտաքսման նախապատրաստական աշխատանքներն ավարտված էին, բայց այն մեկ ամսով հետաձգվում է:

Դա պայմանավորված է Դրոյի հանգամանքով: Սպաների հարցը լուծեցին Դրոյին Հայաստանից արտաքսելուց հետո:

1921թ. հունվարի 29-ին «Կոմունիստ» թերթը տպագրում է իր թղթակցի հարցազրույցը ռազմական գործերի ժողկոմ Ա. Նուրիջանյանի հետ «Ինչու օֆիցերությունն աքսորվեց Խորհրդային Հայաստանից» վերտառությամբ: Ա. Նուրիջանյանը հարցին հետևյալ մեկնաբանությունն է տալիս. «Մենք դաշնակցական կառավարությունից ժառանգություն ստացանք բացի քայքայված երկրից մի քայքայված բանակ, որի գլուխ էր կանգնած մինչև վերջին օրերս, հին օֆիցերությունից: Այդ օֆիցերությունը հենարանն էր հին կառավարության և նրա ներկայությանը անուղղելի վնաս կհասցնի երիտասարդ կարմիր բանակին... Մեր բանակի շահերի տեսակետից անհրաժեշտ էր հին ապարատի արմատական մաքրումը, Խորհրդային Հայաստանի պարպումը օֆիցերությունից... Անտարակույս աքսորված օֆիցերների մեջ բազմաթիվ են գուցե այն մասնագետները, որոնք ոչ թե վախից, այլ իրենց խղճի թելադրանքով սկսել էին աշխատել Խորհրդային Հայաստանում: Երկրորդ ինտերնացիոնալը մեծ բանակ ունի: Եթե այդ ազնիվ սպաները օգուտ բերեն մի որևէ տեղ Ռուսաստանում կամ Ադրբեջանում, ապա դրանով նրանք օգուտ բերած կլինեն Հայաստանի բանվորներին և գյուղացիներին, նրա կարմիր բանակին: Անկասկած այդ սպաներին կօգտագործի խորհրդային Ռուսաստանը»: Իրավամբ, աքսորված սպաների զգալի մասը ծառայության անցավ Ռուսաստանում, որոնք հետագայում անմնացորդ նվիրումով կռվեցին գերմանա-ֆաշիստական օկուպանտների դեմ: Բայց

[60] ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 117, թ. 22:
[61] Նույն տեղում, ֆ. 4033, ց. 2, գ. 1201, թ. 2:

[62] «Կոմունիստ», 1920, N 13:

մեզ հետաքրքիր է այն հարցը, թե ինչու հակահեղափոխական ձևակերպումով աքսորված սպաները, որոնցով մեծ մասը ստեղծված պայմաններում իր ժողովրդի փրկության ճանապարհը տեսնում էր սովետական կարգերի հաստատման մեջ, տեղ չունեին Հայաստանում: Այս հարցերին նույնպես պատասխանել է Ա. Նուրիջանյանը. «Ռուսաստանի փորձը խիստ օրինակելի է, չէր կարելի չնախատեսել սպայության կուտակման վտանգը մեր երկրում, որտեղ դեռ չի եղել լուրջ հեղափոխական կռիվ, որտեղ խորհրդային իշխանությունը ժողովրդի, այդ թվում և սպայության շատ խավերի կողմից ընդունվել է որպես կռվելու միջոց իրենց երեկվա հաղթողների (թուրքերի – Կ.Ս.) դեմ... Մեր ձեռք առած միջոցով մենք փրկեցինք ոչ միայն Հայաստանի բանվորների և գյուղացիների կյանքը, այլև այն սպաների կյանքը, որոնք եթե չաքսորվեին՝ հակահեղափոխության զոհեր էին դառնալու»: Անդրադառնալով սպայության աքսորի հետ կապված դժգոհություններին՝ ռազմական ժողկոմն ասում է. «Կասկած չկա, որ այդ ակտը կտրտմեցնե հայ կոլոնիալ բուրժուազիային... Մենք, կոմունիստներս, արդարացի ենք այն դեպքում, երբ բուրժուազիան մեզ հայհոյում է: Հայ կոմունիստները այն դեպքում արդարացի կլինեն, երբ նրանց կհայհոյե հայ բուրժուազիան փրփուրը բերանին»: Նուրիջանյանի ասածներից պարզ երևում է, որ իրենց նպատակը քաղաքացիական պատերազմի հրահրումն է:

Այժմ տեսնենք, թե հանրապետության ղեկավարները համակարծի՞ք են եղել Ա. Նուրիջանյանի տեսակետների հետ, և արդյո՞ք սպաների աքսորումը միայն «հայ կոլոնիալ բուրժուազիային» է տրտմեցրել: Այն հանգամանքը, որ այդ ուղղությամբ աշխատանքներն ավարտվել էին դեկտեմբերի վերջերին, իսկ այն իրացվեց շուրջ մեկ ամիս ուշացումով, խոսում է այն մասին, որ հարցի հետաձգումը որոշակի պատճառներ է ունեցել: Հասկանալի է, որ քանի դեռ բանակի հրամանատարն էր Դրոն, հնարավոր չէր նրան թողնել, իսկ մնացած սպաներին աքսորել: Հունվարի 1-ին Դրոն արդեն ազատվել էր բանակի հրամանատարի պաշտոնից և նույն ամսի 11-ին մի խումբ սպաների հետ մեկնել էր Բաքու: Դրանից հետո՝ հունվարի 17-ին Բաքու է մեկնում սպաների երկրորդ խումբը: Վերջին խմբերը, շուրջ 600 հոգի Երևանից դուրս են եկել հունվարի 24-ին[63]: Առաջին երկու խմբերի սպաները մնացել են Բաքվի բանտերում, իսկ երկրորդ խումբը ուղարկվել է Ռյազան:

Տալիս ենք ՀԿ-ի կողմից կազմված աքսորված սպաների ցուցակները: Այդ ցուցակները ցույց են տալիս, որ սպաների հետ աքսորվել են նաև զգալի թվով պետական ծառայողներ:

[63] ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, . ֆ, ց. 2, գ. 202, թ. 16:

ԱՔՍՈՐՎԱԾ ՍՊԱՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

СПИСОК*

бывших офицеров, ныне состоящих на гражданской службе, как незаменимые сотрудники, подлежащих освобождению от призыва в армию

N	Имя, отчество и фамилия	Место службы	Занимаемая должность
1	Амлик Туманян	Ревком Армении	начальник канцелярии
2	Ерванд Тер-Казарян	Ревком Армении	комендант Арревкома
3	Ваган Гарибян	Наркомзем	агроном
4	Смбат Меграбян	Наркомзем	агроном
5	Артавазд Назаретян	Наркомзем	механик-агроном
6	Акоп Тер-Исаакян	Наркомрабкрестин	мл. инспект.
7	Гамаяк Вачян	Наркомрабкрестин	мл. инспект.
8	Дмитрий Слободчиков	Наркомрабкрестин	н-к факт. отд.
9	Семен Егиазаров	Наркомрабкрестин	инспектор
10	Иван Васильев	Наркомрабкрестин	мл. инспектор
11	Айказ Параджанян	Наркомрабкрестин	мл. инспектор
12	Абгар Хачатрян	Наркомрабкрестин	мл. инспектор
13	Рубен Мушегян	Наркомрабкрестин	начканц.
14	Степан Нерсисян	Наркомрабкрестин	счетовод
15	Сергей Арешев	Наркомфин	комендант
16	Александр Калантарян	Наркомфин	член совета
17	Левон Башинджагян	Армкаврост	художник-литератор
18	Джамгаров	Армкаврост	художник-литератор
19	Шеренц	Армкаврост	художник-литератор
20	Вахаг Мурадян	Наркоминдел	лич. секретарь
21	Левон Манучарян	Совнархоз	инсп. геодез. отд.
22	Александр Меликян	Совнархоз	н-к статист. отд.

* ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 3, 40,44,45,46,47,68,69,70 թերթեր:

23 Гарегин Сейранян	Наркомсобез	н-к статист. отд.
24 Айк Оввян	Верхревтрибунал	следователь
25 Михаил Экабашян	Верхревтрибунал	комендант
26 Богдан Мнацаканов	Наркомпут	смотр. зданий
27 Тигран Кнунян	Наркомпут	смотр. зданий
28 Михаил Харазов	Наркомпут	счетовод
29 Левон Манукян	Наркомпут	пом. начмил.
30 Левон Мирумов	Наркомпут	пом. начмил.
31 Александр Ромашев	Наркомпут	пом. начмил.
32 Артавазд Халатов	Наркомпут	делопроизводитель
33 Павел Пигуренко	Наркомпут	секр. юр. отд.
34 Петр Палиев	Наркомпут	пом слесар. депо
35 Левон Лисицян	Наркомпрос	комиссар эчмиадз. монаст.
36 Левон Туманян	Наркомпрос	зав. отд. театр. муз.
37 Иван Думанский	Наркомпрос	учитель муж. гимназии по руч. труду
38 Левон Малхасян	Наркомпрос	учитель муж. гимн. по физике
39 Григорий Бабаев	Наркомпрос	технолог
40 Сергей Эйранов	Наркомвнутдел	зав. центр. отд. гр. актов
41 Ковкас Саркисян	Наркомвнутдел	зав. адм. отд.
42 Абраам Малхасян	Наркомюст	народный судья
43 Сергей Тер-Арутюнов	Наркомзем	межевой землемер
44 Владимир Скачевский	Наркомзем	межевой землемер
45 Вагаршак Шаумян	Совнархоз	зав. с.н.х.в Дилижане
46 Норайр Исаакян	Наркомпочтель	инженер
47 Александр Мелик-Шахназаров	Наркомпочтель	ст. механик
48 Арменак Тер-Мкртчян	Наркомпочтель	ст. механик
49 Нерсес Тер-Аствацатурян	Наркомпочтель	завхоз
50 Александр Насибян	Эрузревком	техник
51 Левон Туманян	Наркомюст	
52 Григорий Вартанов		
53 Арменак Тагианосян		

СПИСОК

арестованных, числящихся за Чрезвычайной комиссией и Особоотделом ССР Армении

N	Фамилия, имя, отчество	чин
1	Попен Мих. Тимоф.	воен. вр.
2	Гаджиев Ал-др Иван.	ген.-м-р
3	Муратов Дмитр. Филип.	прапорщ.
4	Колькен Борис Берн.	ос. пор. при ген. Ерделе
5	Арутюнян Пог. Мот.	поручик
6	Бдаициев Темир Бул.	капитан
7	Михаилов Ал-др Петр.	поруч.
8	Андреевский Дм. Ив.	ген.-м-р
9	Бей-Мамокинбян Ал. нет.	ген.-м-р
10	Ильненко Вл. Кл.	полковн.
11	Иванов Влад. Степ.	ген.-м-р
12	Шишов Ник. Алекс.	полковн.
13	Караогланов Ал. Мих.	подп.
14	Ульянов Леонид Ник.	поруч.
15	Османьянц Фед. Ив.	шт.-кап.
16	Касабабаянц Хач. Семен.	подпор.
17	Якуценя Ник. Имунав.	шт.-кап.
18	Мелик-Агамалов Матв. Степан.	шт.-кап.
19	Мелик-Парсаданов Ник. А.	подпоруч.
20	Дилоньян Муш. Степ.	капитан
21	Кусикьянц Ал. Петр.	
22	Бабаян Гр. Хосроевич	капитан
23	Тер-Вартанов Аван.	
24	Мирокьянц Ар. Марк.	
25	Пироев Иван Павлов.	поруч.
26	Багатуров Арт. Ник.	
27	Агаханов Серг. Мануил.	
28	Пирумов Леон Аванес.	подпоруч.
29	Геворгизов Лев. Иос.	
30	Орловский Мих. Алекс.	полковник
31	Позоев Рубен Алекс.	генерал
32	Баграмов Ив. Серг.	ген.-м-р

33	Азатьян Гаик Григор.	подпор.
34	Джагарбеков Руб. Яковл.	шт.-кап.
35	Данильбеков Ал. Нерс.	полковник
36	Кирилович Ник. Филип.	нач. тюр., подпор.
37	Лиликов Конст. Ал.	полковник
38	Хороманский Вас. Мих.	ген.-м-р
39	Макинский Алех. Ванах.	корнет
40	Лазарев Иос. Вас.	полковн.
41	Шлиттер Пав. Влад.	полковн.
42	Бебутов Гр.	шт.-ротмистр
43	Бек-Пирумов Иосиф Гр.	полполковн.
44	Корганов Ник. Алек.	полковник
45	Орбельян А. Н.	подполковн.
46	Маниев ?. Е.	полковн.
47	Чареков С. М.	подполковн.
48	Каракишишев Г. А.	подполковн.
49	Павловский ?. Г.	ген.-м-р
50	Мадатов Г. А.	полковн.
51	Амазасп Серваздьян	хумбапет
52	Вартаньян Мовсес	его ордин.
53	Африкьян Багонаш	гордск. гол.
54	Сергей Мелик-Ельчян	губерн. Арар.
55	Макорьян Герасим	инженер
56	Келлер Евгений	полковн.
67	Георгий Еновский	подпор.
68	Кешешев Андрей	подпор.
69	Пасьянс Панос	подпор.
70	Нохорьян Арменак	
71	Котанджан Агарон	
72	Агабекьян Арам	
73	Зоробьян Татевос	
74	Ншаньян Вартан	
75	Топлакалтьян Ваган	гражд.
76	Меликьян Сергей	гражд.
77	Багдадьян Сергей	гражд.
78	Михайлов	гражд.
79	Григорьян Сукяс	гражд.
80	Бадарьян Егише	гражд.

81	Гаспарьян Гаспар	гражд.
82	Сардарьян Седрак	бандит
83	Папикьян Левон	бандит
84	Багдасарьян Исаак	бандит
85	Северджан Арменак	бандит
86	Авакьян Арутюн	бандит
87	Кукунян Зураб	бандит
88	Меликьян Хачатур	бандит
89	Худаян Егише	бандит
90	Мелик-Сетьян Агаси	бандит
91	Рштуни Самуэль	гражд.
92	Миранян Арташес	гражд.
93	Агоджаньян Арам	гражд.
94	Агониц Мкртич	мародер
95	Амиев Тигран	гражд.
96	Кананьян Гурген	гражд.
97	Хачикьян Степан	гражд.
98	Акопьян Цолак	гражд.
99	Авакимов Оган	гражд.
100	Аствацатурьян Аршалусь	гражд.
101	Маркорьян Александр	гражд.
102	Карапетьян Хачатур	гражд.

СПИСОК

зарегистрированных офицеров к высылке в РСФСР

N	Фамилия, имя, отчество	чин
1	Добровлянский Вадим Евгеньевич	подпоручик
2	Вардапетьян Г. Т. М.	квартирмейстер
3	Чилингаров Г. Г.	капитан
4	Жакян К. Н.	поручик
5	Мутафов	подполковник
6	Аносов Н. Н.	подпоручик
7	Осепьянц А. Г.	генерал-майор
8	Маркосьянц В. Ш. О.	подпоручик
9	Мисин Я. В.	прапорщик
10	Мамаджаньян М. С.	чиновн.в.в.
11	Хачатурьянц А. А.	подпоручик
12	Журавлев Н. Т.	чиновн. в.в.
13	Вартапетьян А. Н.	воен. чиновн.
14	Беляков П. П.	подпоручик
15	Даниэльян А. В.	прапорщик
16	Юзофович Н. Н.	полковник
17	Меграбаянц С. М.	прапорщик
18	Бржезимский Ю. М.	
19	Иванов В. А.	капитан
20	Тер-Даниэльян А. Т.	воен. чинов.
21	Гарибов В. С.	н-к Шт. корпуса
22	Мягков П. П.	прапорщик
23	Бобров С. И.	капитан
24	Мурадьян А. А.	прапорщик
25	Аккерберг Ф. К. С.	капитан
26	Кондратов М. П.	прапорщик
27	Назарбеков Ф. И.	генерал
28	Пирумов П. К.	генерал-майор
29	Тер-Саркисьян Г. А.	подпоручик
30	Першов П. Т.	поручик
31	Ильин В. Д.	прапорщик
32	Вундер В. А.	подпоручик
33	Азатьян А. Н.	
34	Сликов М. П.	генерал-майор

35	Тер-Мартиросьян С. Т.	шт.-капитан
36	Ивашков В. А.	поручик
37	Терунян П. Т.	прапорщик
38	Сарафов Н. Г.	чин. воен. вр.
39	Симоньян ?. К.	прапорщик
40	Хачатурьянц И. А.	ротмистр
41	Манников А. Г.	подпоручик
42	Карачаров Я. М.	подпоручик
43	Горшков С. А.	прапорщик
44	Газоян С. Н.	прапорщик
45	Газоян А. С.	чиновник
46	Тер-Осипов С. А.	поручик
47	Тер-Исааков А. С.	подпоручик
48	Равоев Т. А.	прапорщик
49	Агоронов Г. П.	подполковник
50	Бадалкехваянц А. А.	подпоручик
51	Назаретянц А. О.	прапорщик
52	Бекназаров Х. А.	подпоручик
53	Торосьян М. С.	прапорщик
54	Саркисьян А. А.	прапорщик
55	Оганджаньян С. А.	прапорщик
56	Бекжаньян С. И.	прапорщик
57	Тер-Аганесьян О. А.	подпоручик
58	Пигуренко П. П.	прапорщик
59	Яралов Р. А.	прапорщик
60	Пузумьянц Д. О.	прапорщик
61	Грабияс А. А.	прапорщик
62	Мануэльян Л. С.	прапорщик
63	Манучарьянц Л. Н.	прапорщик
64	Аллавердов В. Д.	капитан
65	Меликьянц П. Н.	прапорщик
66	Лейсиш Л. И.	штабс-капитан
67	Никогосьян Г. С.	прапорщик
68	Мелик Агамерьян И. М.	прапорщик
69	Дарбиньян С. А.	поручик
70	Тер-Григорьянц С. О.	подпоручик
71	Щербанин Ф. П.	полковник
72	Назаритьян Л. Н.	поручик
73	Малевич В. В.	чиновник в.в.

74	Марусин В. И.	колл. регистр.
75	Казанский П. А.	прапорщик
76	Давидов И. А.	прапорщик
77	Мушегаянц Р. П.	прапорщик
78	Егоров Ф. М.	чиновник
79	Московченко П. А.	воен. чиновн.
80	Бабаджанов А. А.	подпоручик
81	Тотолян А. А.	подпоручик
82	Вачьянц Г. В.	прапорщик
83	Тер-Давидьян	чиновн. воен.времени
84	Одабашьян С. М.	поручик
85	Тер-Аствацатуров М. Б.	подпоручик
86	Степаньян А. А.	штабс-капитан
87	Колонтаров А. А.	подпоручик
88	Насилов А. В.	прапорщик
89	Гульянс А. В.	штабс-капитан
90	Сарфрасбекян Н. А.	прапорщик
91	Хачикьянц Д. А.	прапорщик
92	Вартаньян К. А.	капитан
93	Агоронов С. М.	штабс-капитан
94	Шахатунов И. Г.	штабс-капитан
95	Мелик-Пашаян В. А.	прапорщик
96	Лисикьян Л. И.	поручик
97	Баграмьян А. Б.	прапорщик
98	Тер-Миносьян Е. С.	прапорщик
99	Гароянц А. С.	прапорщик
100	Мирзаян С. М.	прапорщик
101	Тер-Казарьян Г. М.	прапорщик
102	Бахромьянц Б. В.-	пор.
103	Скандарьян В. П.	подпор.
104	Маниев П. Е.	штабс-кап.
105	Тер-Степаньян С. М.	прапор.
106	Гарибов В. С.	прапорщик
107	Тимченко Н. В.	полковн.
108	Апоньянц Л. А.	прапорщик
109	Багратуни Р. А.	прапорщик
110	Тер-Егиазаров С. А.	шт.-кап.
111	Агабеков А. К.	прапорщик
112	Мелик-Парсаянов Н. А.	подполк.

113	Иванов А. Н.	капитан
114	Карокасян А. С.	прапорщик
115	Дилонян А. С.	капитан
116	Шаинян П. А.	прапорщик
117	Дандурян К. И.	подпор.
118	Тер-Понисян А. Я.	прапорщик
119	Огаян Г. К.	подпор.
120	Думанский И. Т.	прапорщик
121	Тер-Габриэлян А. С.	подпор.
122	Тер-Исаакян Э. И.	
123	Акопян А. А.	прапорщик
124	Мибояджян А. С.	прапорщик
125	Техмишан Е. А.	без чина
126	Гиворгизов М. И.	поручик
127	Элбакян Р. Н.	прапорщик
128	Юзбашев Н. А.	шт.-кап.
129	Канторян П. А.	подпор.
130	Шашиян А. С.	прапорщик
131	Мириджанян А. М.	подпор.
132	Вершишев А. А.	корнет
133	Кусекьянц А. П.	поруч.
134	Герасименко Ф. Е.	капитан
135	Скачевский В. А.	прапорщик
136	Тер-Вартаньянц О. Е.	шт.-кап.
137	Абозьян Г. М.	прапорщик
138	Миракаянц А. М.	прапорщик
139	Гаспорьянц В. С.	подпор.
140	Багатуров А. Н.	пор.
141	Аганов С. М.	прапорщик
142	Тер-Григорьянц Г. Г.	пор.
143	Мосесянц А. А.	пор.
144	Аревшатьянц С. К.	пор.
145	Шабоньян В. Т.	капит.
146	Амбарцумьян К. А.	пор.
147	Финазьян Г. А.	корнет
148	Искандаров М. Г.	прапорщик
149	Ягоянц Г. К.	прапорщик
150	Азнауров Т. М.	чин. в.в.
151	Косоев А. Д.	прапорщик

152	Кужижанян О. К.	прапорщик
153	Тарахчиан А. Т.	прапорщик
154	Антонов М. И.	пор.
155	Гозолян А. А.	пор.
156	Татевосян А. М.	пор.
157	Асатурян М. Ф.	подполк.
158	Малхосьян Л. С.	прапорщик
159	Мегвинов С. А.	шт.-кап.
160	Шах-Паронян П. С.	
161	Аван Юзбашев Б. Д.	пор.
162	Джамгаров С. Н.	подпор.
163	Коджоян Я. Г.	чин. в.в.
164	Худоян В. А.	подпор.
165	Анисьянц А. С.	подпор.
166	Новосардян Н. О.	подп.
167	Мкртычанц А. А.	кап.
168	Айвазьян Н. А.	прапорщик
169	Тердерян С. Т.	прапорщик
170	Мартиросов А. Г.	чин. в.в.
171	Аратюнянц Х. М.	пор.
172	Согоманянц Б.С.	подпор.
173	Айрапетьян А. А.	прапорщик
174	Бадирян Б. А.	подпор.
175	Мелик Мартиросов О. С.	подпор.
176	Суриньян А. Г.	подпор.
177	Тер-Каспаров А. А.	подпор.
178	Лисинян А. А.	подполк.
179	Тарисянц К. Т.	подпор.
180	Чонурьян В. Г.	пор.
181	Манукьянц Л. А.	подпор.
182	Ерукян Х. А.	подпор.
183	Ашчьян А. Г.	прапорщик
184	Агоян И. Г.	подпор.
186	Тер-Огаян А. М.	подпор.
187	Вартанов А. И.	подпор.
188	Тер-Сааков А. А.	прапор.
189	Гаспарян А. М.	шт.-кап.
190	Цатурян В. М.	прапор.
191	Товстомс Г. М.	пор.

192	Кристосатурян А. К.	подпор.
193	Асланян А. Г.	кап.
194	Тер-Авакян Г. М.	прапорщик
195	Тер-Исраильян Н. С.	пор.
197	Сукиасян А. Д.	прапорщик
198	Шагинян В. А.	подпор.
199	Агонян Б. А. М.	подпор.
200	Гулянц Е. А.	пор.
201	Тер-Вартанов	прапорщик
202	Манукян К. А.	пор.
203	Микомилян В. А.	прапорщик
204	Тер-Антонян М. А.	прапорщик
205	Арутюнов Е. Г.	прапорщик
185	Коукеян М. М.	подпор.
186	Сафаров М. И.	шт.-кап.
187	Осепьян С. Г.	прапорщик
188	Сароянц М. О.	подпрап.
189	Акопян Л. А.	шт.-кап.
190	Аветисян П. А.	прапор.
191	Мелик-Агамов М. С.	
192	Мушегян И. Д.	пор.
193	Мелик-Вартанов Х. В.	прапорщик
194	Мирзаян Н. М.	прапорщик
195	Панумцев С. Г.	ротмистр
196	Ахназарян И. А.	прапорщик
197	Хачатурян К. А.	подп.
198	Геворкян О. М.	подпор.
199	Ходжаян А. А.	подпор.
200	Хубларов Р. Е.	подпор.
201	Тер-Минасян С. Е.	
202	Цкалоян П. М.	шт.-ротм.
203	Тер-Погосов В. О.	шт.-кап.
204	Азарян Г. Г.	прапорщик
205	Тарикян Т. С.	прапорщик
206	Аладжан А. П.	подпор.
207	Князчьян С. Т.	в. чин.
208	Акопов С. М.	прапор.
209	Насибов А. Г.	

СПИСОК

офицеров, подлежащих отправке в Баку Штаб XI, освобожденных и оставленных на местах службы

N	Фамилия, имя, отчество	Место службы	Занимаемая должность
1	Агамахов	Штаб 3 Стр. Бр.	нач. Штаба
2	Худгарян	Штаб 3 Стр. Бр.	помначштаба
3	Енокян (коммунист)	Штаб 3 Стр. Бр.	секр. военкома
4	Тер-Вартанов	Штаб 3 Стр. Бр.	начснабриг
5	Лалаев	5-ый полк	завхоз
6	Акасаров	5-ый полк	старш. врач
7	Саркисян	5-ый полк	кон. разв.
8	Сагоян	5-ый полк	военком
9	Джанбянц	5-ый полк	пом. военкома
10	Кахиян	5-ый полк	ответрук.
11/а	Баделиян	5-ый полк	кам. ест
11/б	Агасянц	5-ый полк	адъютант
12	Толонян Симеон	5-ый полк	сотрудник
13	Хачатурян Баграт	5-ый полк	комсостав
14	Дондаров	6-ой полк	адъютант
15	Купальян	6-ой полк	н-к пул. к-ды
16	Авакимян	6-ой полк	н-к учебн. к-ды
17	Варданян	6-ой полк	к-р роты
18	Азатян	6-ой полк	ком. роты
19	Тер-Израелян	6-ой полк	ответрук.
20	Аракелов	6-ой полк	комсостав
21	Ходжамиров	6-ой полк	младш. врач
22	Хачатуров	6-ой полк	младш. врач
23	Алтециян	6-ой полк	делопроизв.
24	Минасян	6-ой полк	зав. оруж.
25	Драгнунц	6-ой полк	топограф
26	Саакян	6-ой полк	завразведкой
27	Карягин	6-ой полк	завхоз
28	Сосянц	6-ой полк	комсостав
29	Сардарян	6-ой полк	пул. команды
30	Саядян	6-ой полк	пул. команды

31	Мирзоев	Штаб Стр. Бриг.	врач
32	Рштуни	Штаб Стр. Бриг.	пом. военкома
33	Амлик Туманян	Ревком Армении	н-к канцел.
34	Эрванд Тер-Казарян	Ревком Армении	ком-т Арревк.
35	Ваган Гарибян	Наркомзем	агроном
36	Смбат Меграбян	Наркомзем	агроном
37	Артавазд Назаретян	Наркомзем	мех.-агроном
38	Рубен Мушегян	Наркомрабкрест.	нач. канц.
39	Степан Нерсисян	Наркомрабкрест.	счетовод
40	Александр Калантарян	Наркомфин.	член совета
41	Ваган Мурадян	Наркоминдел	личн. секр.
42	Левон Мамучарян	Совнархоз	инсп. геодез. отд.
43	Александр Меликян	Совнархоз	нач. стат. отд.
44	Георгий Сайракян	Наркомсобез	нач. стат. отд.
45	Петр Палиев	Наркомпут	пом. слес. депо
46	Левон Лисицян	Наркомпрос.	комис. Эчм. мон.
47	Левон Туманян	Наркомпрос.	Зав. отд. театр. муз.
48	Григорий Бабаев	Наркомпрос.	Технолог
49	Сергей Эйрамов	Наркомвнутдел	зав. центр. отд. гр. акт.
50	Ковкас Саркисян	Наркомвнутдел	зав. админ. отд.
51	Абрам Малхасян	Наркомюст.	народн. судья
52	Сергей Тер-Арутюнов	Наркомзем	межевой землемер
53	Владимир Скачевский	Наркомзем	межевой землемер
54	Вагаршак Шаумян	Совнархоз	зав. с.н.х. в Дилижане
55	Норайр Исаакян	Наркомпочт.	Инженер
56	Александр Мелик-Шахназаров	Наркомпочт.	ст. механик
57	Арменак Тер-Мкртычан	Наркомпочт.	ст. механик
58	Александр Насибян	Эрузревком	техник
59	Левон Туманян		
60	Григорий Вартанян		
61	Арменак Тагианасян		
62	Егиазаров Семен	Наркомрабкр.	инспектор
63	Димитрий Слобадчиков		нач. факт. отряда

64	Шелков-Езов Георгий Васил.	Управл. начар.
65	Машин Николай Дмитр.	Управл. начар.
66	Данилов Влад. Григор.	Управл. начар.
67	Огаджанян Гурген	Управ. 3-й артдивиз.
68	Грабмас Антоний Антониев.	Управ 4-й артдивиз.
69	Клич Николай Александрович	I-ая легк. батар.
70	Чайлохян Георгий Хачатур.	I-ая легк. батар.
71	Арутюнян Аветис	I-ая легк. батар.
72	Саккилари Владимир	2-ая гаубичм. батар.
73	Аттабеков Вагия	2-ая гаубичм. батар.
74	Акопьян Аветис Аркадьевич	2-ая гаубичм. батар.
75	Тер-Мосесов Иосиф Абрамов.	2-ая гаубичм. батар.
76	Бабаян Левон Лазаревич	2-ая гаубичм. батар.
77	Аматуни Ашато Ваганович	2-ая гаубичм. батар.
78	Завриев Сергей Семенович	Отд. 4-ой учебн. батар.
79	Завриев Борис Семенович	Отд. 4-ой учебн. батар.
80	Атанасян Саркис Андреасов.	Отд. 4-ой учебн. батар.
81	Мелик-Арутюнов Семен Захаров.	9-ая горная батар.
82	Тер-Микелян Тигран Мартынов.	9-ая горная батар.
83	Америков Виктор Павлович	4-ая горная батар.
84	Татевосов Викентий Георг.	4-ая горная батар.
85	Лесшинов Ипполитович	4-ая горная батар.
86	Бекзадов Сергей Артемьевич	2-ая легк. батар.
87а/	Ахшарумов Рубен	2-ая легк. батар.
87б/	Блинов	2-ая легк. батар.
88	Кянджумцев Гайк	Бронепоезд "Мануелян"
89	Бабаян Тигран	Бронепоезд "Мануелян"
90	Хамов Иван /коммунист/	Бронепоезд "Мануелян"
91	Худавердов Гайк	Бронепоезд "Азатамарт"
92	Мелик-Бабаханов Завен	Бронепоезд "Азатамарт"
93	Ахназаров Амаяк	Бронепоезд "Азатамарт"
94	Бадальян Ефрем	Бронепоезд "Азатамарт"
95	Павловский /инженер/	Бронепоезд "Азатамарт"
96	Сомичев Георгий Вас.	Управ. I артдивиз.
97	Аматуни Саркис Порегамов.	Управ. I артдивиз.

Предчека Армении (подпись)

Секретарь (подпись)

СПИСОК

офицеров, освобожденных и оставленных на местах службы, подлежащих отправке в гор. Баку (Штаб XI)

N	Фамилия, имя, отчество	Занимаемая должность	Бывший чин
1	Парсаданов Грачия	как инвалиды	
2	Навтиков Иван	как инвалиды	
3	Согомонян Реган	как инвалиды	
4	Априянц Иван	как инвалиды	
5	Шамуянц Оганес	как инвалиды	
6	Геворкян Геворк	как инвалиды	
7	Долпоковский		
8	Аракелов Яков	пом. ком. гор.	поручик
9	Саркисян Аршак	стар. адъютант	шт.-ротм.
10	Турпаев Тигран	адъютант	подпор.
11	Чалгоджян Артем	адъютант	подпор.
12	Аветисов Константин	адъютант	прапорщ.
13	Ехшатов Рубен	адъютант	прапорщ.
14	Ходжаян Александр	адъютант	подпоруч.
15	Ломидзе Мих. Христ.		
16	Шахазизов Вартан Иван.		
17	Языков Сергей Серг.		
18	Алтунян Торос Зеймарович		
19	Девоянц		
20	Коральков		
21	Ханосян		
22	Абиян		
23	Тамручи		
24	Назарбеков		
25	Додохли		
26	Тер-Хачатурьян		
27	Ходжян		
28	Дверницкий		
29	Мелик Кубджиев		
30	Хачатуров Амосия		
31	Абрамян		

32	Джалалов	
33	Хачатурьян Григорий	
34	Арутюнян	
35	Демуров	
36	Крунгян	
37	Тер-Габриелян	
38	Калантар	
39	Ишханов	
40	Малхазов	
41	Ханзадян	
42	Тер-Никагосов	
43	Ионесян	
44	Мириманов	
45	Лалаев Георгий	
46	Сагадян Лев. Иван.	ком. див.
47	Назаретов Аркадий	пом. ком. див.
48	Тер-Багдасаров	адъютант
49	Мугдуси Макарян Н. И.	н-к
50	Арташес Аствацатуров	
51	Иван Иван. Минасов	зав. мос.
52	Запет Ходжапарян	нач. дивиз. школы
53	Гегам Овалянц	нач. хозчасти
54	Варшаман Артак	нач. рац. отд. и военк.
55	Арамаис Хочарян	
56	Михайловский Константин	сотр. прав. воен. сообщ.
57	Лианозов Александр	пом. к-та этапа гор. Эривани

Предчека Армении (подпись)

Секретарь (подпись)

СПИСОК

освобожденных и оставленных на местах службы офицеров, подлежащих отправке в Штаб XI

N	Фамилия, имя, отчество	Место службы	Занимаемая должность
1	Беридов Петр		
2	Мурадянц Асатур		
3	Петросян Гарегин		
4	Клич Александр		
5	Хандаикянц Парух		
6	Владимиров Александр		
7	Ованесянц Оганес		
8	Айрианц Иван		
9	Гужинов Георгий		
10	Мелянц Александр		
11	Меграбянц Арам		
12	Арешов Сергей		
13	Думанский Иван		
14	Партанянц Григорий		
15	Махчаянц Левон		
16	Тамоносян Арменак		
17	Мирзоян Саша		
18	Ягоджанов Арам		
19	Михайловский Константин		
20	Лионидов Александр		
21	Нерсесов Вениамин		
22	Газарян Тигран		
23	Девоян		
24	Мелик-Вартанесов		
25	Джигитян Мкртич		
26	Межлумян Абрам		
27	Хачатуров		
28	Зартанянц Оганес	3 ст. полк	п. едячейки
29	Назаретян Левон	3 ст. полк	школьн. инстр.
30	Попов		
31	Качкачев		

32 Петросян
33 Тер-Гукасов Николай
34 Тер-Саркисян
35 Тасаиян
36 Сукясян Амасси
37 Панов Макар
38 Тер-Оганесов Александр
39 Тер-Газарян Гарегин
40 Джамгаров Степан
41 Тер-Саакян
42 Акопджанов
43 Тер-Аствацатурян
44 Тер-Петросян Григорий
45 Шелковникян Сергей
46 Лазарян Ованес
47 Башинджагян Левон
48 Абгарян Арто
49 Бекзатян Левон
50 Бханянц
51 Габриэлянц
52 Чащин
53 Даниелян Ашот
54 Павловский Святослав
55 Какхоян
56 Египиков Лазарь
57 Мовсесов Мкртич Исаевич

Предчека Армении (подпись)

Секретарь (подпись)

265

401

С П И С О К

Бывших офицеров ныне состоящих на гражданской службе и как незаменимые сотрудники подлежащих освобождению от призыва в армию.

1. Ревкома Армении- Начальник Канцелярии АМЛИК ТУМАНЯН
2. " " Комендант Арревкома Ерванд ТЕР-КАЗАРЯН
3. Наркомзема: Агроном Ваган ГАРИБЯН
4. " " Сибат МЕГРАБЯН
5. " механик агрр. Артавазд НАЗАРЕТЯН
6. Наркомрабкрестина: мл.инспект. Акоп ТЕР-ИСААКЯН
7. " " " Гамаяк ВАЧИН
8. " Н-к факт. отд. Дмитрий СЛОБОДЧИКОВ
9. " Инспектор Семен ЕГИАЗАРОВ
10. " мл. " Иван ВАСИЛЬЕВ
11. " " " Аиказ ПАРАДИЗАНЯН
12. " " Абгар ХАЧАТРЯН
13. " Начканц. Рубен МУШЕГЯН
14. " Счетовод Степан НЕРСИСЯН
15. НАРКОМФИНА: Комендант Сергей АРЕШЕВ
16. " Член совета Александр КАЛАНТАРЯН
17. АРМКАВРОСТА: Художник-литератор ЛЕВОН БАШИНДЖАГЯН
18. " " ДЖАМГАРОВ
19. " " ШЕРЕНЦ
20. НАРКОМИНДЕЛ: Лич.Секретарь ВАХАГ МУРАДЯН
21. СОВНАРХОЗА: инсп.геодезич.отд. Левон МАНУЧАРЯН
22. " Н-к статич.отд. АЛЕКСАНДР МЕЛИКЯН
23. НАРКОМСОБЕЗ: Н-к статист.отд. Гарегин СКЙРАНЯН
24. ВЕРХРЕВТРИБУНАЛ: Следователь Аик ОВВЯН
25. " Комендант Михаил ЭКАБАШЯН
26. НАРКОМПИТ: смотр.зданий Богдан МНАЦАКАНОВ
27. " " Тигран КНУНЯН
28. " счетовод Михаил ХАРАЗОВ
29. " пом. начмил. Левон МАНУКЯН
30. " " " Левон МИРУНОВ
31. " " " Александр РОМАШЕВ
32. " дело- тель Артавазд ХАЛАТОВ
33. " секр. юр.отд. Павел ПИГУРЕНКО
34. " пом слесар.депо ПЕТР ПАЛИЕВ

35. Наркомпрос: Комиссар эчмиазд.монаст. Левон ЛИСИЦЯН
36. " зав.отд. театр.-муз. Левое ТУМАНЯН
37. " учитель муж. гимназии Иван ДУМАЧСКИЙ
38. Левон МАЛХАСЯН
39. " технолог Григорий БАБАЕВ
40. НАРКОМВНУДЕЛ: зав.центр.отд.актов гр. Сергей ЭЛРАНОВ
41. " зав. адм. отд. Кокас САРКИСЯН
42. НАРКОМЮСТ: Наородный судья Абраам МАЛХАСЯН
43. НАРКОМЗЕМ: межевой землемер Сергей ТЕР АРУТЮНОВ
44. " " " Владимир СКАЧЕВСКИЙ
45. СОВНАРХОЗ: зав.с.н.х.в делижане Вагаршак ШАУЬЯН
46. НАРКОМПОЧТЕЛЬ: Инженер Норайр ИСААКЯН
47. " ст. механик Александр МЕЛИК ШАХНАЗАРОВ
48. " " " Арменак ТЕР МКРТЧЯН
49. " завхоз. Нерсес ТЕР АСТВАЦАТУРЯН
50. ЭРУЗРЕВКОМ: техник Александр НАСИБЯН

44

С П И С О К

арестованных, числящихся за Чрезвычайной Комиссией и Особотделом С.С.Р.Армении

№ № по порядку	Имя, отчество и фамилия.	чин.	№ анкет	Преступность	Примечание
1.	Попен Мих.Тимоф.	Воен.вр.	5.	дашнакцец	
2.	Гаджиев Ал-др Иван.	Ген.м-р	6.	" "	
3.	Муратов Дмитр.Филип.	прапорщ.	19	" "	
4.	Колькен Борис Бери.	Ос.пор.при ген.Бурделе	26	" "	
5.	Арутюнян Пог.Мот.	поручик	34	" "	
6.	Бдаицев Темир Бул.	капитан	40	" "	
7.	Михаилов Ал-др Петр.	поруч.	42	" "	
8.	Андреевский Дм.Ив.	Ген.м-р	45	" "	
9.	Бей-мамекиньян Ал.Пет.	"	46	" "	
10.	Ильненко Вл.Ал.	полковн.	92	" "	
11.	Иванов Влад.Степ.	Ген.м-р.	93	" "	
12.	Шишов Ник.Алекс.	полковн.	94	" "	
13.	Караогланов Ал.Мих.	подп.	107	" "	
14.	Ульянов Леонид Ник.	поруч.	137	" "	
15.	Османьянц Фед.Ив.	шт.кап.	180	" "	
16.	Касабабянц Хач.Семен.	подпор.	182	" "	
17.	Якуценя Ник.Имунав.	шт.кап.	199	" "	
18.	Мелик Агамалов Матв.Степан.	" "		" "	
19.	Мелик Парсаданов Ник.А.	Подпоруч.	202	" "	
20.	Дилоньян Мук.Степ.	капитан	207	" "	
21.	Кусикьянц Ал.Петр.		228	" "	
22.	Бабаян Гр.Хосроевич	капитан	230	" "	
23.	Тер-Вартанов Иван.Ник.		232	" "	
24.	Мирокьянц Ар.Марк.		233	" "	
25.	Пироев Иван Давидов.	поруч.	237	" "	
26.	Багатуров Арт.Ник.		238	" "	
27.	Агаханов Серг.Мануил.		239	" "	
28.	Пирумов Леон Аванес.	подпоруч.	241	" "	
29.	Геворгизов Лев.Мос.		218	" "	

30.	Орловский Мих.Алекс.	Полковник	II.	Опасн.элемент
31.	Позоев Рубен Алекс.	генерал	I7.	" " "
32.	Баграмов Ив.Серг.	Ген.майор	24	" " "
33.	Азатьян Г аик Григор.	подпор.	35	" " "
34.	Джагарбеков Руб.Яковл.	мт.кап.	4I.	" " "
35.	Данильбеков Ал.Н ерс.	полковник	73.	" " "
36.	Кирилович Ник.Филип.	Нач.тюр.	83	" " "
37.	Лиликов Конст.Ал.	подпор. полковник	74	" " "
38.	Хороманский Вас.Мих.	Ген.м-р	95	" " "
39.	Макинский Алех.Ванах.	корнет	12I	" " "
40.	Лазарев Иос.Вас.	полковн.		" " "
4I.	Шлиттер Пав.Влад.	" "		" " "
42.	Бебутов Гр. [illegible] т.	ротмистр	I95	" " "
43.	Бек-Пирумов Иосиф Гр.	Подполк.	I0	" " "
44.	Корганов Ник.Алек.	полковн.	I70	" " "
45.	Орбельян А.Н.	подполк.	204	" " "
46.	М аниев [illegible]	полковник	205	" " "
47.	Чареков С.М.	подполк.	220	" " "
48.	Каракишиев Г.А.	" "	224	" " "
49.	Повловский П.Г.	Ген.м-р	234	" " "
50.	Мадатов Г.А.	полковн.	247	" " "
51.	Амазасп Серваздьян-	хумбалет		Дашнак
52.	Вартаньян Мовсес-	его ордин.		" "
53.	Африкьян Багонам..	Гордск.гол.		" " -истка.
54.	Сергей Мелик-Ельчан	губерн.Арар.		контр-револ.
55.	Макорьян Гераски-	инженер-		" "
56.	Келлер Евгений-	полковн.		расх.народн. достояния
57.	Георгий Киовский-	подпор.		" " "
58.	Кешешев Андрей-	подпор.		" " "
59.	Пасьянс Панос-	"		контр-револ.
70.	Мохорьян А рменак-			расх.народн. имущества
71.	Котанджан Агорон-			" "
72.	Агабекьян А рам-			" "
73.	Зоробьян Татевос-			" "

45

74.	Ишаньян Вартан -	гражд.	Кража из со.ежития Ревкома
75.	Топлакалтьян Баган-	"	" " "
76.	Меликьян,у ергеа-	"	шпионаж
77.	Багдасян Сергей -	"	" "
78.	Михайлов -	"	бандитизм
79.	Григорьян Сукяс -	"	вооруж.ограбление
80.	Бадарьян Егише-	"	уничт.переписок резер.милиции
81.	Гаспарьян Гаспар	"	бандитизм
82.	Сардарьян Сетрак -	бандит	" "
83	Пашикьян Левон-	"	" "
84	Багдасарьян Исаак-	"	" "
85.	Северджан Арменак-	"	" "
86.	Авакьян Арутюн-	"	" "
87.	Кукуняи Зураб-	"	" "
88.	Меликьян Хачатур-	"	" "
89.	Худаян Егише -	"	" "
90.	Мелик Сетьян Агаси-	"	" "
91.	Ритуни Самуэль-	гражд.	хищение
92.	Мирапян Арташес-	"	" "
93	Агоджаньян Арам	"	" "
94.	Агокиц Миртич	народер	Дашнак-народер
95.	Аниев Тигран-	гражд.	из группы Оганджаньяна
96.	Камнаньян Гургеи-	"	" "
97.	Хачикьян Степан-	"	" "
98	Акопьян Цолак-	"	" "
99.	Авакимов Оган-	"	" "
100.	Аствацатурьян Аршалусь-	"	" "
101.	Маркорьян Александр-	"	" "
102.	Карапетьян Хачатур-	"	" "

СПИСОК

зарегистрированных офицеров высылке в Р.С.Ф.С.Р.

№№ по порядку	ИМЕНА И ФАМИЛИИ.	№№ анкет	Примечание
	I.		
I.	Добровлянский Вадим Евгеньевич / подпоручик.		
2.	Вартапетьян Г.Т.М. /квартирмейстер/	2.	
3.	Чилингаров Г.Г./ капитан./		
4.	Макян К.Н. / поручик /		
5.	Мутафов Ахмед Кадирович /подполковник		
6.	Аносов Н.Н. /подпоручик /		
7.	Асепьянц А.Г. /генерал-майор/		
8.	Маркосьянц В.Ш.О. /подпоручик/		
9.	Мисин Я.В. / прапорщик /		
10.	Мамаджанян М.С. /чиновн.в.в./		
II.	Хачатурьянц А.А. /подпоручик/		
12.	Муравлев-Н.Т.-чиновн.в.в.		
13.	Вартапетьян А.Н./воен.чиновн.		
14.	Беляков П.П. - подпоручик		
15.	Даниэльян А.Б.-прапорщик		
16.	Юзофович Н.Н.-полковник		
17.	Меграбсянц С.М.-прапорщ		
18.	Брженимский Ю.М.-		
19.	Иванов В.А.- капитан		
20.	Тер-Даниэльян-А.Г.-воен.чинов.		
21.	Гарибов В.Г.-Н-к Шт.Корпуса		
22.	Мягков П.П.- прапорщик		
23.	Бобров С.И.- капитан		
24.	Мурадьян-А.А.-прапорщик		
25.	Аккерберг Ф.К.С.-капитан		
26.	Кондратов М.П.-прапорщик		
27.	Назарбеков Ф.М.-генерал		
28.	Пирумов П.К.-генерал-майор		
29.	Тер-Саркисьян Г.А.- подпоручик		
30.	Першов П.Г.-поручик		
31.	Ильин В.Д.-прапорщик		
32.	Вундер В.К.-подпоручик		
33.	Азатьян А.Н.-		
34.	Сликов М.Н.- генерал-майор		
35.	Тер-Мартиросьян-С.Т.- Шт.К.		
36.	Ивашков В.А.-поручик		
37.	Теруняи П.Т.-прапорщик		
38.	Сарафов Н.Г.-чин.воен.вр		
39.	Симоньян М.Х.- прапорщик		
40.	Хачатурьянц М.А.-ротмистр		
41.	Маников А.Г.-подпоручик		
42.	Карачаров Я.М.-подпоручик		
43.	Горшков С.А.-прапорщик		
44.	Газоян О.Н.-прапорщик		
45.	Газоян А.С.-чиновник		
46.	Тер-Осипов С.А.-поручик		
47.	Тер-Исаков А.С.-подпоручик		
48.	Рабоев Т.А.-прапорщик		
49.	Агоронов Г.П.-подполковник		
50.	Бадалкехванц А.А.-подпоручик		
51.	Назаретянц А.О.-прапорщик		
52.	Бекназаров Х.А.-подпоруч		
53.	Торосьян М.О.- прапорщик		
54.	Саркисьян А.М.-прапорщик		
55.	Оганджанян С.А.-прапорщик		
56.	Бежанян С.Б.-прапорщик		
57.	Тер-Аганесьян С.А.-подпоруч		
	Пигуренко П.П.-прапорщик		

59.	Яралов Р.А. - прапорщик		
60.	Пузрмьянц Д.О.-прапорщик		
61.	Грабияо А.А.-прапорщик		
62.	Мануэльян Л.С.-прапорщик		
63.	Манучарьянц Л.Н.-прапорщик		
64.	Аллавердов В.Д. -капитан		
65.	Меликьянц П.Н.-прапорщик		
66.	Деисиш Л.И.-штабс капитан		
67.	Никогосьян- Г.С.-прапорщик		
68.	Мелик Агамерьян-И.А.-прапорщик		
69.	Дарбинян С.А.-поручик		
70.	Тер-Григорьянц С.С.-подпоручик		
71.	Щербанин Ф.П.-полковник		
72.	Назаритьян Л.Н.-поручик		
73.	Малевич В.В.-чиновник в.в.		
74.	Марусин В.И.-колл.регистр.		
75.	Казанский П.А.-прапорщик		
76.	Давидов И.А.- прапорщик		
77.	Мушегаянц Р.П.-прапорщик		
78.	Егоров Ф.М.- чиновник		
79.	Московченко П.А.- воен.чиновн.		
80.	Бабаджанов А.А.-подпоручик		
81.	Тотолян А.А.-подпоручик		
82.	Вачьянц Р.В.-прапорщик		
83.	Тер-Давидьян-чиновн.воен.времени		
84.	Одабашьян С.М.-поручик		
85.	Тер-Аствацатуров М.Б.-подпоручик		
86.	Степаньян А.А.-штабс-капитан		
87.	Колонтаров А.А.-подпоручик		
88.	Насилов А.В.-прапорщик		
89.	Гульянс А.В.-штабс-капитан		
90.	Сарфрасбекян Н.А.-прапорщик		
91.	Хачикьянц Д.А. -прапорщик		
92.	Вартаньян К.А.-капитан анк.№	II6	
93.	Агоронов С.М.-штабс капитан "	II7	
94.	Шахатунов И.Г.-штабс капитан "	II8	
95.	Малик Помоян В.А.-прапорщик "	II9	
96.	Лисикьян Л.И. - поручик "	I20	
97	Баграмьян А.Б.-прапорщик- "	I22	
98	Тер-Миносьян Е.С.-прапорщик "	I23	
99	Гарояиц А.С.-прапорщик- "	I24	
I00.	Мирзаян С.М.- прапорщик - "	I25	
I0I.	Тер-Казарьян Г.М.-прапорщ. "	I26	
I02.	Бахромьянц Б.В.-пор. "	I27	
I03	Скандарьян В.П.-подпор. "	I28	
I04.	Маниев П.Е.-штабс кап. "	I29	
I05.	Тер-Степаньян-С.М.-прапор. "	I30	
I06.	Гарибов В.С.-прапорщ.- "	I3I	
I07.	Тимченко Н.В.-полковн.- "	I96	
I08.	Апоньянц Л.А.-прапорщ. "	I97	
I09.	Багратунин Р.А.-прапорщ. - "	I98	
II0.	Тер-Егиазаров С.А.-шт.кап. "	I99	
II1.	Ага беков А.К.-прапорщ.- "	200	
II2.	Мелик-Парсаянов Н.А.-подполк. "	202	
II3.	Иванов А.Н.-капитан-капитан "	203	
II4.	Карокасян А.С.-прапорщ.- "	206	
II5.	Дилоняи А.С.-капитан- "	207	
II6.	Шамиян П.А.-прапорщ. "	210	
II7.	Дандурян К.И.-подпор.- "	209	
II8.	Тер-Понисян А.Я.-прапорщ.- "	210	
II9.	Огаян Г.К.-подпор. - "	2II	
I20.	Думанский И.Т.-прапорщ. "	212	
I2I.	Тер-Габриэлян А.С.- подпор. "	213	
I22.	Тер-Исаакян З.И.- "	214	
I23.	Акопян А.А. -прапорщ. "	215	
I24.	Мибояджан А.С.-прапорщ.- "	216	
I25.	Техмишян Е.А.-без чина - "	217	
I26.	Гиворгиев М.И.-поручик - "	218	
I27.	Эдбакян Р.Н.-прапорщик- "	220	
I28.	[illegible] Н.А.-шт.кап. "	221	

129. Канторян П.А.-подпор. - 223
130. Шашян А.С. - прапорщ. 225
131 Мириджанян А.М.-подпор. 226
132. Вершинев А.А.-корнет 227
133. Кусекьянц А.П.-поруч. 228
134 Герасименко Ф.Е.-капитан-229
135 Скачевский В.А.-прапорщ.231
136 Тер-Вартаньянц О.Е.-шт.кап.232
137. Аоовьян Г.М.-прапорщ.- 233
138 Мирракянц А.М.-прапор. 235
139 Гаспорьянц В.С.-подпор.236
140. Мирр Багатуров К.Н.-пор.238
141. Аганов Б.М.-прапорщ.- 239
142. Тер-Григорьянц Г.Г.-пор.240
143. Мосесянц А.А.-пор.- 242
144. Аревшатьянц С.К.-пор. 243
145 Шабоньян В.Т.-капит. 244
146 Амбарцумьян К.А.-пор. 245
147 Фанавьян Г.А.-корнет.- 246
148. Искандаров М.Г.-прапор.248
149. Ягоянц Т.К.-прапорщ. 249
150. Авнауров Т.М.-чин.в.в.250
151 Корогев А.Д.-прапор. 251
152 Кужиканян О.Н.-прап. 252
153. Тарахчиан К.Т.-прап. 253
154 Антонов М.И.-пор. 254
155. Гозолян А.А.-пор. - 255
156. Татевосян А.М.-пор. 256
157. Асатурян М.Ф.-подполк.257
158 Малхосьян А.С.-прап. 258
159. Мегвинов С.А.-Шт.Кап.259
160. Шах-Пароняи П.С.- 132
161. Аван Ювоашев Б.Д.-пор.133
162. Джамгаров С.Н.- подпор.134
163. Коджоян Я.Г.чин.в.в. 135
164 Худоян В.А.-подпор. 136
165 Анисьянц А.И.-подпр. 138
166 Новосардян Н.О.-подп.140
167 Мкртычанц А.А.-кап. 141
168 Аиваэьян Н.А.-прап. 142
169 Тердерян С.Т.-прап. 143
170. Мартиросов А.Г.-чин.в.в.144
171 Аратюнянц Х.М.-пор. 145
172 Согоманянц Б.О.-подпор.146
173. Айрапетьян А.А.-прапорщик-148
174. Бадирян Б.А.-подпор. 149
175. Мелик Мартиросов О.С.-подпор.150
176. Суриньян А.Г.-подпор. 151
177 Тер-Каспаров А.А.-подп.152
178. Лисинян А.А. подполк. 153
179 Тарисянц К.Т.-подпор. -154
180. Чонурьян В.Г.-пор. 155
181. Манукьянц Х.А.-подпор. 156
182. Ерукян Х.А.-подпор.- 157
183 Ашчьян А.Г.-прапорщ. 158
184 Агоян М.Г.-подпор. 159
186 Тер-Огаян А.М.-подпор. 161
187 Вартанов А.М.-подпор. 162
188. Тер-Сааков А.А.-прапор.163
189. Гаспарян А.М.-шт.кап.- 164
190. Цатурян В.М.-прапор.- 165
191. Товстоис Г.М.-пор. 166
192. Кристосатурян А.К.-подпор.167
193. Асланян А.Г.-кап.- 168
194. Тер-Аваканян Г.М.-прап. 169
195. Тер-Исраэльян Н.С.- пор.171
197. Сукиасян А.Д.-прапор.- 173
198. Шагинян В.А. подпор.- 174
199. Агонян Б.А.М.-подпор. 175

200. Гулянц К.А.-пор. 176
201. Тер-Вартанов -прап.177
202. Манукян К.А.-пор. 179
203. Микомилян В.А.-прап.181
204 Тер-Антонян-М.А.-прапор.183
205 Арутюнов Е.Г.-прапор.184
185 Коукеан М.М.-подпор.-185
186. Сафаров М.М.-Шт.кап. 186
187. Осепьян-С.Г.-прапорщ.187
188. Сароянц М.О.-подпрап.188
189 Акопян Л.А.-Шт.кап.- 189
190. Аветисян П.А. прапор.190
191. Мелик-Агамов М.С.- 191
192. Мушегян М.Д.-пор. 192
193 Мелик-Вартанов-Х.В.-прапор.193
194. Мирзаян Н.М.-прапор.194
195 Пайумцев С.Г.-ротмистр.260
196 Ахмазарян И.А.-прапор. 261
197. Хачатурян К.А.-подп.- 262
198 Геворкян О.М.-подпор.- 263
199 Ходжаян А.А.-подпор. 264
200. Хубларов Р.Е.-подпор. 265
201. Тер-Минасян С.Е.- 266
202. Цкадоян П.М.-шт.ротм.267
203. Тер-Погосов В.О.-Шт.Кап.268
204. Аваряи Г.Г.-прапорщ.- 269
205. Варикян Т.С.-прапорщ.- 270
206. Аладжан А.П.-подпор. - 281
207. Князьян С.Т.-в.чин. 272
208. Акопов С.М.-прапор. 273
209. Насибов А.Г.- 274

СПИСОК

офицеров подлежащих отправке в Баку Штаб XI. освобожденных и оставленных на местах службы.

№ по порядку.	ИМЕНА И ФАМИЛИИ.	Место службы.	Занимаемая должность.	ПРИМЕЧАНИЕ:
1.	Арамалов-	Штаб 3 Стр.Бр.	Нач.Штаба	По списку военкома Стрелк. Бригады
2.	Худгарян -	" - " -	Помнач.штаба	
3.	Енокян /коммунист/	" - " -	Секр.Военкома	
4.	Тер-Вартанов-	" - "	Начснабриг	
5.	Далаев -	5-ый Полк -	Завхоз	
6.	Акасаров -	" - "	Старш.врач	
7.	Саркисян -	" - "	Ком.роты	
8.	Сагоян-	" - "	Военком -	
9.	Джанолян -	" - "	Пом.Военкома	
10.	Нахиян -	" - "	Ответрук -	
11/а	Баделян -	" - "	Комвзвод	
12/б	Агасянц -	" - "	Адъютант -	
13.	Толоян Симеон -	" - "	Сотрудник -	
14.	Хачатурян Баграт-	" - "	Комсостав	
15.	Домдаров -	6-ый полк	Ад"ютант	
16.	Купадзян-	" - "	Н-к Пул.К-ды	
16.	Авакимян -	" - "	Н-к Учебн.К-ды	
18.	Варджян-	" - "	К-р роты	
18.	Аветян -	" - "	Пом.роты	
19.	Тер-Израелян -	" - "	Ответрук	
20.	Аракелов -	" - "	Комсостав	
21.	Ходжамиров -	" - "	Младш.врач	
22.	Хачатуров -	" - "	" - "	
23.	Алтецян	" - "	Делопроизв.	
24.	Минасян-	" - "	Зав.сруж.	
25.	Драгнунц-	" - "	Топог.аф	
26.	Саакян-	" - "	Завразведкой	
27.	Карягин-	" - "	Завхоз -	
28.	Сосянц-	" - "	Комсостав -	
29.	Сардарян -	" - "	Пул.Команды	
30.	Саядян -	" - "	" - "	
31.	Мирзоев -	Штаб Стр.Бриг.	Врач	
32.	Рштуни-	" - "	Пом.военкома	
33.	Амлик Туманян	Реввкома Армении	Н-к канцел.	По списку тов. Касьяна
34.	Эрванд Тер-Казарян	" - "	Ком-т Аррем.	
35.	Заган Гарибян -	Наркомзема	Агроном	
36.	Сибат Меграбян -	" - "	" - "	
37.	Артавазд Назаретян -	" - "	Мех.агроном	
38.	Рубен Мушегян-	Наркомрабкрест.	Нач.канц.	
39.	Степан Нерсесян -	" - "	Счетовод	
40.	Александр Калантарян	Наркомфин	Член Совета	
41.	Багах Мурадян -	Наркомнацдел	Лачн.секр.	
42.	Левон Макучерян -	Совнархоз	Инсп.геодез.отд.	
43.	Александр Меликян -	" - "	Нач.Стат.Отд.	
44.	Георгий Саирамян-	Наркомсобез	" - "	
45.	Петр Пахнев -	Наркомпут	Пом.слес.депо	
46.	Левон Лисицян-	Наркомпрос.	Комис.Очм.мон.	
47.	Левон Туманян-	" - "	Зав.Отд.театр.	
48.	Григорий Бабаев	" - "	Технолог	
49.	Сергей Эфраев-	Наркомвнудел	Зав.Центр.Отд.Акт.Гр.	
50.	Ковкас Саркисян-	" - "	Зав.Админ.Отд.	
51.	Абрам Малхасян-	Наркомюст	Народн.Судья	
52.	Сергей Тер-Арутюнов	Наркомзем	Межевой землемер	
53.	Владимир Скачевский	" - "	" - "	
54.	Багаршак Шаумян -	Совнархоз	Зав.С.Н.Х.В.Дилижане	
55.	Норайр Исаакян -	Наркомпочт.	Инженер	

Дмитрий Свободников — Нач. дивизионного отряда

56.	Александр Мелик-Шахмазаров-	Наркомпочт.	Ст.Механик	Список тов. Касьяна.
57.	Армемак Тер-Мкртычян -	" - "	" - "	
58.	Александр Насибян -	Эрзрезком	Техник	
59.	Левон Туманян -			
60.	Григории Варданян			
61.	Армемак Тагианасян -			
62.	Агнаазаров Семен	Наркомрабкр.	Инспектор	
63.	[illegible]	" - "	" - "	
64.	Мелков-Кзов Георгий Васил.	Управл.	Начар.	Список военкома артиллерии
65.	Машин Николай Дмитр.	" - "		
66.	Данилов Влад.Григор.	" - "		
67.	Огаджанян Гурген -	Управл.	3 Арт.дивиз.	
68.	Грабчас Антоний Антонович.	" - "	4-й "	
69.	Ким Николай Александрович-	I-ая Легк.	Батар.	
70.	Чайлохян Георгий Хачатур.	" - "	"	
71.	Арутюнян Аветис -	" - "	"	
72.	Саккилари Владимир -	2-ая Гаубичн.	Батар.	
73.	Аттабеков Вагиз -	" - "	"	
74.	Джопьян Аветис Аркадьевич -	" - "	"	
75.	Тер-Мосесов Иосиф Абрамов.	" - "	"	
76.	Бабаян Левон Лазаревич -	" - "	"	
77.	Аматуни Ашато Ваганович -	" - "	"	
78.	Завриев Сергей Семенович -	Отд. 4-я Учебн.	Батар.	
79.	Завриев Борис Семенович	" - "	"	
80.	Атамасян Саркис Андреевич.	" - "	"	
81.	Мелик-Арутюнов Семен Захаров.	9-ая Гаубичн	Батар.	
82.	Тер-Мкеляян Тигран Мартынов.	" - "	"	
83.	Амеряков Виктор Павлович -	" - "	"	
84.	Татевосов Викентий Георг.	" - "	"	
85.	Десятников Мифодий Иванович	" - "	"	
86.	Бекзадов Сергей Артемьевич	2-ая Легк.	Бат.	
87/а	Ахмарумов Рубен Петрович	" - "	"	
88/б	Бинков	" - "	"	
88.	Мнджуцев Гайк -	Бронепоезд "Мануелян"		
89.	Рабаян Тигран -	" - "	"	
90.	Хамов Иван /коммунист/	" - "	"Азатамарт"	
91.	Худавердов Гайк -	" - "	"	
92.	Мелик-Бабахамов Завен-	" - "	"	
93.	Ахмазаров Амаян -	" - "	"	
94.	Бадальян Ерем -	" - "	"	
95.	Пахановский /инженер/			
96.	Сонтчев Георгий Вас.	Управл.	I Арт.дивиз.	
97.	Аматуни Саркис Поретамов.	" - "	"	

Предчека Армении С. Меликов

Секретарь

276

69

С П И С О К

ОФИЦЕРОВ ОСВОБОЖДЕННЫХ И ОСТАВЛЕННЫХ НА МЕСТАХ СЛУЖБЫ, подлежащих отправке в гор.Баку / штаб XI.

№ по-ку.	ИМЯ И ФАМИЛИИ.	Занимаемая должность	Бывший чин.	ПРИМЕЧАНИЕ.
1.	Парсаданов Грачия -	Как инвалид		Предчека.
2.	Навтиков Иван.			
3.	Сагомонян Ротан			
4.	Апрянц Иван			
5.	Шамуянц Оганес			
6.	Геворкян Геворк			
7.	[illegible]			
8.	Дракелов Яков	Пом.Ком.гор.	Поручик	по списку Комендант. Пр.
9.	Саркисян Аршак -	Стар.Адъют.	Шт.ротм.	
10.	Турпаев Тигран -	Ад"ютант	подпор.	
11.	Чалгоджан Артем	" - "	-	
12.	Аветисов Константин	" - "	прапорщ.	
13.	Ехматов Рубен -	" - "	-	
14.	Ходжаян Александр-	" - "	Подпоруч.	
15.	Мих.Христ.Лоинидзе-			Список Нач.Снабж. войск Сев.Армии
16.	Вартан Иван.Шахазизов -			" - "
17.	Сергей Серг.Яшков -			" - "
18.	Порос Зейнарович Атунян -			Распо.Р.В.С.XI
19.	Девонц-			Список Комсостава. главинбаза
20.	Корольков			
21.	Ханоян			
22.	Дзиян-			
23.	Тамручи			
24.	Казарбеков			
25.	Долохи			
26.	Тер-Лачатурьян			
27.	Ходжян			
28.	Дворкинский			
29.	Мелик Кулжиев			
30.	Хочатуров Амосия -			
31.	Абрамян -			
32.	Джаналов -			
33.	Хачатурьян Григорий -			
34.	Аратюнян -			
35.	Демуров -			
36.	Крунтин -			
37.	Тер-Габриелян -			
38.	Калантар -			
39.	Мнацанов -			
40.	Малхазов -			
41.	Ханзадян-			
42.	Тер-Никагосов -			
43.	Конесян-			
44.	Мирманов-			
45.	Хадаев Георгий -			Нач.Опер.Отд.
46.	Сафадян Лев.Иван.	Ком.Див.		Список № 5 Комсостава - Дивизия.
47.	Назаретов Аркадий	пом.Ком.див.		
48.	Тер-Багдасаров -	Ад"ютант		
49.	Мугдуси Макарян Н.И.	Н-к		
50.	Артанес Аствацатуров			
51.	Иван Иван.Минасов -	Зав.мос.		
52.	Залет Ходжаперян -	Нач.Дивиз.школы		
53.	Геган Овадяни-	Нач.хозчасти		
54.	Варшаван Атах-	Нач.Рац.Отд. к Военк.		
55.	Армаис Хачарян -			по отчету прибыли
56.	Михайловский Константин	Сотр. прав.Воен.Сообщ.		военкомат. Воен. сообщ.
57.	Ананосов Александр-	Пом.К-та Эвакп. гор.Эривани		

Предчека Армении

Секретарь

13 г

274

донол ст. в уголе

70

V.

С П И С О К

освобожденных и оставленных на местах службы офицеров, подлежащих отправке Штаб XI.

№ по-ку.	ИМЯ И ФАМИЛИИ	Место службы	Занимаемая должность	ПРИМЕЧАНИЕ:
1.	Бериидов Петр-			Освоб. по списку врачебной комиссии.
2.	Мурадянц Аст[illegible]			
3.	Петросян Гарегин-			
4.	Ключ Александр			
5.	Хандамирянц Парух -			
6.	Владимиров Александр-			
7.	Овсепсянц Оганес-			
8.	Айрапетянц Иван-			
9.	Гукинов Георгий -			
10.	Меняпц Александр -			
11.	Меграбянц Арам-			
12.	Арешов Сергей -			По списку № 2 мед. Касьяна
13.	Думанский Иван -			
14.	Партанянц Григорий -			
15.	Махчаевянц Левон -			
16.	Тамонсян Армемак -			
17.	Мирзоян Саша -			
18.	Ягодкинов Арам -			
19.	Михайловский Константин-			
20.	Леонидов Александр-			
21.	Нерсесов Веникин -			
22.	Газарян Тигран -			
23.	Девонян -			
24.	Мелик-Вартанесов -			
25.	Джигитян Мкртич -			
26.	Мелумян Абрам -			
27.	Хачатуров -			
28.	Зартанянц Оганес -	3 Сд. Подк	Пулеметчики	По распор. Атарбекова.
29.	Назаретян Левон -	" -	Школы.Инстр.	Список тов. Касьяна № 3.
30.	Попов -			
31.	Качкачев -			
32.	Петросян -			
33.	Тер-Лукасов Николай -			
34.	Тер-Саркисян -			
35.	Тасаян -			
36.	Сукасян Амасси -			
37.	Панов Макар-			
38.	Тер-Оганесов Александр-			
39.	Тер-Газарян Гарегин-			
40.	Джамгаров Степан -			
41.	Тер-Саакян -			
42.	Акопджанов -			
43.	Тер-Аствацатурян -			
44.	Тер-Петросян - Григорий			
45.	Шелковникян Сергей -			
46.	Дазрян Оганес -			
47.	Баминжанян Левон			
48.	Абгарян Арто			
49.	Бекзатян Левон-			
50.	Бархаинянц -			
51.	Габриелянц-			
52.	Чацин-			
53.	Даниелян Ашот-			
54.	Павловский Станислав			
55.	Каклюян -			
56.	Егиников Лазарь-			
57.	Мовсесов Мкртич Исаакович			

Предчека Армении

Секретарь

Սպաներին աքսորելը ժամանակին զանազան կարծիքների և բախումների տեղիք է տվել ոչ միայն ժողովրդի տարբեր խավերի շրջաններում, որովհետև նրանց մեջ էին գտնվում ազգային-ազատագրական շարժումների ղեկավարները, Սարդարապատի ճակատամարտի հերոսները և ուրիշ երևելի զինվորական գործիչներ, այլև հանրապետության ղեկավարների շրջանում: Կասյանը դեմ է եղել այդ քաղաքականությանը, որովհետև այն «արհեստականորեն հող էր նախապատրաստում հակահեղափոխության համար»: Փաստերը ցույց են տալիս, որ սպաների վերջին և հիմնական խմբի աքսորի հետաձգումը կապված է եղել նրա դիրքորոշման հետ: Կասյանը ոչ միայն դեմ է եղել Հայաստանից սպաների աքսորին, այլև հրահանգել է Ադրբեջանում Հայաստանի ներկայացուցիչ Միքայել Աթաբեկյանին, որ նա թույլ չտա աքսորելու Բաքվում բնակվող հայ սպաներին:

1921թ. հունվարի 15-ին ՀԿԿ Կենտկոմին հղած նամակում Ս. Տեր-Գաբրիելյանը հայտնում է. «Վերջերս հատուկ բաժինը Պանկրատովից հեռագիր է ստացել, որում նա բողոքում է, որ Բաքվում Հայաստանի ներկայացուցիչը Հայհեղկոմի հանձնարարությամբ իրեն չի թույլատրում Ռուսաստան աքսորելու հակահեղափոխական հայ սպաներին: Այդ մասին հայտնել են նաև Ստալինին: Այդ առիթով հատուկ բաժինը հարցում արեց ինձնից: Ես նրանց պատասխանեցի, որ ընդհանրապես ցանկալի է նման հարցերը լուծել տեղում՝ Հեղկոմի հետ, որպեսզի տարաձայնություններ չառաջանան: Իսկ Ստալինի հարցին, թե ինչու Հեղկոմը թույլ չի տալիս Երկրամասը հակահեղափոխականներից մաքրել և ինչ է նշանակում Հեղկոմի և մասնավորապես Կասյանի վարքագիծը, որը անհարկի խոսակցությունների տեղիք է տալիս, պատասխանեցի, որ նրանց տեղում ավելի պարզ է, և որ ոչ մի կողմնակալություն չի կարող լինել»[64]: Այնուհետև Տեր-Գաբրիելյանը միջանկյալ հայտնում է նաև, որ Պանկրատովը հաղորդագրությունը կազմել է Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի նախագահ Այվազյանի բողոքի հիման վրա:

Ինչո՞ւ էր Կասյանը դեմ սպաների աքսորին, արդյոք նա չէ՞ր տեսնում այն վտանգը, որը տեսանելի էր նրա ընդդիմախոսներին: Իհարկե, նա տեսնում էր հանրապետության ծանր վիճակը, բայց դրա հետ մեկտեղ նա տեսնում էր նաև այն առանձնահատկությունները, որով Հայաստանը տարբերվում էր Ռուսաստանից և Ադրբեջանից, ուստի քաղաքական գիծը ոչ թե հետամուտ էր «սատարելու հակահեղափոխականներին», այլ խուսափելու հետագա բարդություններից: Այդ հարցերի վերաբերյալ իր տեսակետները 1920թ. դեկտեմբերի 9-ի ելույթում հիմնավորել էր հետևյալ փաստարկներով. «Տարածված է սխալ կարծիք, թե որտեղ մտնում է խորհրդային իշխանությունը և նրա ղեկավար կոմունիստական կուսակցությունը, իրեն հետ բերում է արյուն, երկաթ, գնդակահարումներ և ճնշումներ: Ճնշումը երբեք չի եղել և լինել չի կարող կոմունիստական կուսակցության նպատակը... Այնտեղ, որտեղ հնարավոր է, պետք է խույս տալ արյուն թափելուց: Տվյալ դեպքում Հայաստանի հեղափոխության առաջին քայլը, այսինքն իշխանության գրավումը անցավ հանգիստ և դեռ հանդիսանում է Հայաստանի բանվորագյուղացիական հեղափոխության դրական կողմը: Այժմ մեզ մնում է պաշտպանել և ամրապնդել այդ իշխանությունը: Այդ գործում կոմունիստական կուսակցությունը երբեք վրիժառությամբ չի առաջնորդվի և պետք է կատարի հեղափոխական ռեալ աշխատանք: Եվ այդպես մոտենալ խնդրին՝ նոր հեղափոխական իշխանությունը մտադիր չի դիմել ճնշումների՝ հին իշխանության կատարած գործողությունների համար: Բայց մենք անողոք կլինենք հակահեղափոխական փոքրիկ փորձի նկատմամբ: Հակահեղափոխական չնչին ագիտացիան կխեղդվի բնում»[65]:

Եթե Կասյանի այս ելույթի դրույթները համեմատենք Ա. Նուրիջանյանի 1920թ. հունվարի 29-ի տված մեկնաբանությունների հետ, ապա պարզ կտեսնենք, որ նույն հարցի վերաբերյալ նրանք ունեին հակամետ տեսակետներ: Բայց Տեր-Գաբրիելյանի նամակի միջոցով տեղեկացանք, որ Հայհեղկոմի նախագահի տեսակետները շրջանցելը միայն նրանով չէր պայմանավորվում, որ Կասյանը ՀԿԿ Կենտկոմում փոքրամասնություն էր կազմում:

Հանրապետության ղեկավարների մեծ մասը, ուղեցույց ունենալով ռուսական հեղափոխության անցած ճանապարհը, գտնում էր, որ քաղաքացիական կռիվները հեղափոխության զարգացման պարտադիր շրջան են, որով անխուսափելիորեն պետք է անցնի նաև Հայաստանը: Ռուսական հեղափոխության «շաբլոնով» առաջնորդվող գործիչներին դրության տերը դառնալու գործում նպաստում է այն հանգամանքը, որ նրանց քաղաքականությունը հովանավորվում էր որոշակի շրջանների կողմից: ՀԿԿ Կենտկոմի մեծամասնության քաղաքականությունը ավելի է ջերմացնում Ս. Տեր-Գաբրիելյանի 1921թ. հունվարի 15-ին Կենտկոմին հղած վերոհիշյալ նամակը, որը նա գրել է Ստալինի հետ երկարատև զրույցից հետո: Այդ նամակով նա պահանջում է մինչև ռուս-թուրքական կոնֆերանսի գումարումը ազատվել դաշնակցականներից: Որովհետև. «Ռուսաստանին հղած դիմումներում թուրքերը անվստահություն են հայտնում դեպի հայ կոմունիստները ընդհանրապես և մասնավորապես մատնացույց են անում Դրոյի և մյուսների գտնվելը կառավարության կազմում»[66]: Այս պահանջը դնելով՝ Ս. Տեր-Գաբրիելյանը կարծում էր, որ այդ ճանապարհով կարելի է չափավորել քեմալա-

[64] ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 4049, ց. 2, գ. 1, թ. 5:

[65] «Կոմունիստ», 1920, N 7:

[66] ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 4049, ց. 2, գ. 1, թ. 5:

կանների թշնամանքը Սովետական Հայաստանի նկատմամբ: Նա, գտնվելով Մոսկվայում, դեռևս չէր կռահել, որ քեմալականները Սովետական Հայաստանի կառավարության նկատմամբ վարվող քաղաքականությանը դասակարգային հնչեղություն տալով, ձգտում էին երկիրը ներքաշել քաղաքացիական պատերազմի մեջ: Ուրեմն, Սովետական Հայաստանի այն ղեկավար գործիչները, որոնք գտնում էին, որ երկրում դասակարգային պայքարի հող չկա և կործանարար է չեղած տեղում այն փնտրելը, և որ սովետական կարգերի խաղաղ ճանապարհով հաստատումը Հայաստանի հեղափոխության դրական կողմն է, ամենից շատ ձեռնտու չէին քեմալականներին: Պատահական չէ, որ Հայհեղկոմի բոլոր օրինական պահանջները նրանք ներկայացնում էին որպես հակահեղափոխական դիտավորություններ:

Նույնիսկ Ս. Տեր-Գաբրիելյանը չէր զգում, որ մատնացույց անելով Դրոյին՝ թուրքերը կրակն ուղղում են Հայհեղկոմի դեմ: 1921թ. հունվարի 24-ին Աղրբեջանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի անդամ Սարգիսը Բաքվից հեռախոսով հայտնում է Հայհեղկոմի անդամներ Ա. Նուրիջանյանին և Ի. Դովլաթյանին. «Թիֆլիսի և Բաքվի ընկերները որոշակի դժգոհ են դաշնակցականների նկատմամբ Ձեր վարած քաղաքականությունից, եթե ուզում եք նրանց լավ վերաբերմունքը դեպի Սովետական Հայաստանը չփոխվի և ես կարողանամ այստեղ աշխատել հօգուտ Հայաստանի, անհրաժեշտ է քաղաքական գիծն ուղղեք և ինքներդ ուղղվեք»[67]: Նման հարցադրումը զարմացնում է նույնիսկ Ավիսին և Դովլաթյանին, որովհետև գործերի իրական վիճակը չէր համատասխանում տարածում գտած մտայնությանը: Ա. Նուրիջանյանը պատասխանում է, որ. «Դաշնակցության կուսակցությունը միանգամայն հեղինակազրկվել է: Մաուզերիստների դեմ, որոնց վրա հենվում են դաշնակները, ընդհանրապես մղում ենք ամենաանողոք պայքար: Հայաստանից դուրս կանգնած ընկերներին զարմացնում է Դրոյի ներկայության փաստը մեր բանակում: Ես պետք է ասեմ, որ նա ամենաղժբախտ մարդն է: Նա օրերս մեկնել է Բաքու: Բանակում տարվող աշխատանքներն ընթանում են շատ հաջող: Ես չեմ հասկանում, թե ինչով է պայմանավորված մեր ընկերների այդ դժգոհությունը»[68]: Դաշնակցության նկատմամբ վերաբերմունքի հարցն արծարծվում է նաև 1921թ. հունվարի 25-ին Բաքվի կուսակցական կազմակերպության քաղաքային կոնֆերանսում: Այն հարցին, թե ինչու մեր կուսակցությունը Հայաստանում ընդունեց ձախ դաշնակցականներին, Գ. Կ. Օրջոնիկիձեն պատասխանում է. «Նախ և առաջ ձախ դաշնակներին մենք չենք ընդունել և նրանք կուսակցության մեջ չեն մտել: Կան այսպիսի փաստեր. Դաշնակցությունը բաժանվել է երեք

[67] ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1201, թ. 11:
[68] ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 36, թ. 6:

մասի, ձախ խումբը չնայած կոմունիստներ չեն, բայց նրանք գտնում են, որ հայ ժողովրդի միակ փրկությունը դաշինքն է սովետական հանրապետությունների հետ: Եվ ես մտածում եմ, որ ոչ մի հիմք չկա այլ կերպ մտածելու, որ նրանք անկեղծորեն ցանկանում են այդ դաշինքը: Բայց ոչ հանուն կոմունիզմի, այլ հանուն իրենց ժողովրդի փրկության»: Դրոյին Սովետական Հայաստանի կարմիր բանակի հրամանատար նշանակելու հարցին Օրջոնիկիձեն հետևյալ մեկնաբանությունն է տալիս. «Դրոն այլևս կոմիսար չէ, նա օրերս մեկնեց Մոսկվա: Գեներալ Դրոն Հայաստանում չէ, բայց ինչու՞ էին նրան նշանակել, որովհետև նա միակ մարդն է, որ ընդունեց սովետական իշխանությունը: Երբ մեր ընկերները Քարվանսարայում և Դիլիջանում ապստամբություն բարձրացրին, նա ինքը հայտարարեց (Հայաստանում- Կ. Ս.) Սովետական իշխանություն: Այն ժամանակ Դրոն տարբեր պատճառներով հանդես եկավ որպես սովետական իշխանության կողմնակից: Այդպիսի պայմաններում մենք հիմարներ կլինեինք, եթե ասեինք. «Չէ՞ որ Դուք դաշնակ եք, վերցրեք հրացանը և կրակեցեք»: Մեզ հետաքրքրում էր պառակտել նրանց կուսակցությունը և մենք հասանք դրան, իսկ հետո ոչ Դրոն և ոչ էլ որևէ մեկը չեն կարող մեզ խանգարել»[69]:

Դաշնակցության նկատմամբ տակտիկայի փոփոխման հարցը նաև պայմանավորված էր նրանով, որ արդեն պարզ էր, որ թուրքերը տարածքների հարցում անզիջում են: Սպաներին արտաքսելուց հետո բացահայտ դրվում է Հայաստանը դաշնակցությունից մաքրելու պահանջը: «Հայաստանը մեկ անգամ ընդմիշտ դաշնակցական գարշահոտությունից մաքրելու համար,– գրում է «Կոմունիստ» թերթը,– անհրաժեշտ է ունենալ բանվորա-գյուղացիական դասակարգային ինքնագիտակցությամբ զինված հզոր և դիսցիպլինար բռունցք: Այդ բռունցքը պետք է պատրաստ լինի ամեն րոպե ոչնչացնելու բոլոր նրանց, ովքեր հանդգնություն կունենան կարծելու, թե հնարավոր է խեղդել կոմունիստական հեղափոխությունը Հայաստանում: Այժմ հեղափոխության խորացման շրջանում Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաներն իրենց սեփական իշխանությունը պաշտպանելու համար հրաշքներ կգործեն, ինչպես նրանց եղբայրները Ռուսաստանում, և կստեղծեն մի հզոր կարմիր բանակ: Արդեն այդ բանակի հիմնական առողջ կորիզն ունենք: Հակահեղափոխական օֆիցերությունից մաքրված, նա այսօր կատարում է իր պարտքը հեղափոխության հանդեպ»[70]: Գնալով դասակարգային պայքարի անհրաժեշտության ձայները ավելի են շիկացնում մթնոլորտը: 1921թ. հունվարի 25-ին ՀԿԿ Կենտկոմը դաշնակցությանը վերացնելու որոշում է կայացնում: Բայց որպեսզի Կենտկոմի որոշումը օրենքի

[69] Նույն տեղում, թ. 7:
[70] «Կոմունիստ», 1921, N 44:

ուժ ստանար և իրագործվեր, պետք է հաստատվեր Հայհեղկոմի կողմից: Ս. Կասյանը և Ա. Մռավյանը գտնում են, որ նման միջոցառումը ժամանակավրեպ է և ավելի կխորացնի ճգնաժամը: Նրանք կտրականապես հրաժարվում են Կենտկոմի բանաձևը Հայհեղկոմում քննարկելուց և հրաժարականի սպառնալիքով պահանջում են հարցի լուծումը տեղափոխել Կովկասյան բյուրո: Կենտկոմի անդամները մեծ դժվարությամբ համաձայնվում են: Կողմերը իրենց տեսակետները շարադրում են Կովկասյան բյուրոյին հղած նամակներում:

Կենտկոմի ընդունած որոշումը մանրամասն շարադրված է 1921թ. հունվարի 27-ի Գ. Ալիխանյանի, Ա. Նուրիջանյանի և Ի. Դովլաթյանի ստորագրությամբ Կովկասյան բյուրոյին հղած նամակում, որում ասված է. «Անողոք պայքար Դաշնակցության կուսակցության դեմ... Այդ նպատակով բանտարկել և մեկուսացնել բոլոր դաշնակցականներին, կենտրոնական և գավառային կազմակերպությունների բոլոր ղեկավարներին, նախկին կառավարության բոլոր անդամներին, արտակարգ դատարանի բոլոր անդամներին, դատախազության աշխատողներին և պահեստի միլիցիայի անդամներին, բանտարկել «Ժողովրդական ազատություն» կուսակցության աչքի ընկնող բոլոր անդամներին: Այդ ամբողջ կամպանիան հանձնարարել անցկացնելու ՌՍՖՍՀ Արտակարգ հանձնաժողովի լիազոր ընկ. Աթարբեկյանին: Ընկ. Կասյանը և Մռավյանը կտրականապես հրաժարվեցին Հեղկոմի նախագահությունում անցկացնել այդ բանաձևը, հայտարարելով, որ իրենք հեռանում են զբաղեցրած պաշտոններից: Կենտկոմը հրաժարականը չէր կարող ընդունել, որոշեց հարցը տեղափոխել Կովկասյան բյուրո, հնարավոր չհամարելով հրաժարվել որևէ կետից (բանաձևի): Հայտնում ենք նաև, որ Երևանի կոնֆերանսը և կոմիտեն ընդունել են բանաձև Կենտկոմի պլենումի որոշման ոգով: Անհրաժեշտ է ամենահրատապ կարգով հայտնել Ձեր վերաբերմունքը այդ բոլորի մասին, ոչ մի րոպե ուշացնել չի կարելի»[71]: Ս. Կասյանը և Ա. Մռավյանը ՀԿԿ Կենտկոմի ընդունած բանաձևի դեմ իրենց դիրքորոշումը բացատրում են 1921թ. հունվարի 23-ին Օրջոնիկիձեի անունով Կովկասյան բյուրոյին հղած հեռագրում: Քանի որ հեռագիրը ծավալուն է, ուստի մենք մեջ կբերենք այն տեղերը, որոնք վերաբերում են Կենտկոմի որոշման դեմ նրանց հիմնական փաստարկներին. «...Կենտկոմի բանաձևը ուղղված է ամբողջ հայ մտավորականության դեմ, որովհետև առաջարկվում է վերացնել ոչ միայն նրանց, որոնք երբևիցե դաշնակ են եղել, այլև էսէռներին, հայ սոցիալ-դեմոկրատներին, որոնք նախկինում ևս ոչ մի քաղաքական դեր չեն խաղացել: Մտավորականության դեմ բանաձևի հայ-

[71] *Ս. Տ. Ալիխանյան,* Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Եր. 1966, էջ 300:

տարարած պայքարը առաջ է բերում հոգեբանական ուժեղ ռեակցիա սովետական իշխանության դեմ: Այդ պայքարը ջլատում է մեր շինարարական աշխատանքները և վերջնականապես խառնում է տնտեսական կյանքի վերականգնման մեր պլանները: Այն հաստատում է ՉԵԿԱ-ի դիկտատուրա: Այն արհեստականորեն հող է ստեղծում հակահեղափոխության համար»: Այնուհետև նրանք Կովկասյան բյուրոյից խնդրում են իրենց տեսակետը չպաշտպանելու դեպքում ետ կանչել զբաղեցրած պաշտոններից: Հեռագիրը վերջանում է հետևյալ տողերով. «Մեր կարծիքը հաղորդում ենք ուշացումով. ոչ մեր մեղքով, որովհետև մեզ դժվարությամբ հաջողվեց համոզել վեճի լուծումը փոխադրել Կովկասյան բյուրո»[72]: Կողմերի փաստարկները քննարկելուց հետո 1921թ. փետրվարի 1-ին Կովկասյան բյուրոյի որոշումը Օրջոնիկիձեի և Օրախելաշվիլու ստորագրությամբ ուղարկվում է Ա. Նուրիջանյանին և Ս. Կասյանին: Հավանություն տալով դաշնակցության կուսակցության վերացման, ինչպես նաև ղեկավարների ձերբակալման ու մեկուսացման ՀԿԿ Կենտկոմի քաղաքականությանը՝ միևնույն ժամանակ հրահանգվում է. «...Դաշնակցականների դեմ պայքարում չպետք է մոռանալ այն ներքին խմորումները, որոնց մասնակիցները պաշտպանում են սովետական իշխանությունը, օրինակ՝ Դրո-Վրացյան խումբը: Հակաժողովրդական կուսակցության վերացման համար մղվող պայքարը ոչ մի դեպքում չպետք է վերածվի մտավորականության դեմ հախուռն պայքարի, թեկուզև դաշնակցական անցյալով: Ոչ մի խոսք չի կարող լինել կուսակցական և պետական պատասխանատու պոստից այս կամ այն ընկերոջ հրաժարվելու մասին»[73]: Փետրվարի 4-ին Ա. Մռավյանը Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Մ. Աթաբեկյանին հղած հեռագրում անդրադառնալով այդ հարցին՝ նշում է. «Սերգոյի և Մամիայի պատասխանները մեր հարցերին այստեղ առաջացնում են տարբեր բախումներ և դարձել են անգուսպ խոսակցությունների նյութ: Վերադասավորումներն անհրաժեշտ են և անխուսափելի»[74]: ՀԿԿ Կենտկոմի մեծամասնությունը հարցը կրկին քննելու համար փետրվարի 7-ին հրավիրում է Կենտկոմի խորհրդակցություն, որին բացի Կենտկոմի անդամներից մասնակցում են նաև Հայաստանի կարմիր բանակի հրամանատար Մոլկաչանովը, կոմիսար Սվիրիդովը, ՌՍՖՍՀ ԱՀ-ի լիազոր Գ. Աթաբեկյանը և Հայաստանի ԱՀ-ի նախագահ Շ. Ամիրխանյանը: Վերջինս այդ մասին հիշատակում է. «Խորհրդակցությունը անմիջապես ընդունեց հախուռն բնույթ, կրկնվեցին մեծամասնության և փոքրամասնության նախկին փաստարկները և առաջարկությունները, կողմերը անզիջում պնդում

[72] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 117, թ. 2:
[73] *Ս. Տ. Ալիխանյան,* նշ. աշխ., էջ 392:
[74] ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1209, թ. 2:

էին իրենց տեսակետները: Խորհրդակցության արդյունքների մասին նույն օրը Կովկասյան բյուրոյին հայտնում է ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Ալիխանյանը: Նա նշում է, որ պլենումը որոշել է իրագործել Կենտկոմի մեծամասնության քաղաքականությունը, և որ Կասյանին ու Մռավյանին ժամանակավորապես փոխարինում են Դովլաթյանը և Ավիսը[75]: Փետրվարի 7-ի Օրջոնիկիձեին հղած հեռագրում Կասյանը և Մռավյանը իշխանությունից իրենց հեռանալը պայմանավորում են նրանով, որ «Կենտկոմի մեծամասնությունը անարխիա է մտցնում: Առանց Հեղկոմի գիտության նրանք տնօրինում և կարգադրում են, դա վերջնականապես կարող է կազմալուծել Հեղկոմի աշխատանքը: Սպասում ենք Կենտկոմի փոփոխմանը, հակառակ դեպքում համառորեն պնդում ենք մեր հրաժարականը»:

Կասյանի և Մռավյանի վիճակն անհույս էր նաև նրանով, որ նրանք փոքրամասնություն էին կազմում ոչ միայն Կենտկոմում, այլև Հեղկոմում: Համաշխարհային հեղափոխության ջատագովներ Ի. Դովլաթյանը, Ա. Նուրիջանյանը և Հ. Կոստանյանը Հեղկոմում համապատասխանաբար զբաղեցնում էին ներքին գործերի, ռազմական գործերի և աշխատանքի ժողովրդական կոմիսարների պաշտոնները: Խորհրդայնացվելուց հետո էլ Հայաստանը մնում էր քեմալա-բոլշևիկյան հարկահանումների ու բռնացումների դժոխային ճիրաններում: Չբավարարվելով կատարվածով՝ ՀԿԿ Կենտկոմի փետրվարի 7-ի պլենումը որոշում է ուժեղացնել դասակարգային պայքարը դաշնակցության դեմ: Այդ որոշման կատարումը հանձնարարվում է ՌՍՖՍՀ ՉԿ-ի լիազոր Գ. Աթարբեկյանին: Վերջինս փետրվարի 9-ին հեռագրով այդ մասին Օրջոնիկիձեին հայտնում է. «Կասյանի և Մռավյանի տարաձայնությունները մնացած ընկերների հետ մեծապես ազդում են գործերի վրա: Կամ պետք է մնան Կասյանն ու Մռավյանը, կամ էլ հեղկոմի ու Կենտկոմի մնացած անդամները: Ճիշտ է, նրանց մեջ նույնպես քիչ են պետական մարդիկ, բայց Կասյանն ու Մռավյանը բացարձակապես զրկված են հեղափոխական հոտառությունից և ընդունակ չեն կողմնորոշվելու, նրանց տակտիկան գարնանը կհանգեցնի բարդությունների: Եթե այստեղ լիներ Բեկզադյանը, նա նույնպես կպաշտպաներ Կասյանի գիծը: Կենտկոմն ինձ հանձնարարել է կյանքում իրագործել իր որոշումը»[76]: Տեսնելով, որ Կասյանն ու Մռավյանը իրական քաղաքականության վրա որևէ ազդեցություն չունեն՝ Ս. Վրացյանը վերահաս աղետը կանխելու նպատակով որոշում է հանդիպել Գ. Աթարբեկյանի հետ: Հանդիպումը կայանում է փետրվարի 4-ին: Ս. Վրացյանը բացատրում է, որ վարվող քաղաքականությունն անհեռատես է և այն հանգեցնելու է քաղաքացիական պատերազմի:

[75] Նույն տեղում:
[76] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 124, թ. 1:

Հանդիպմանը մասնակցող Ա. Նուրիջանյանը հավաստում է, որ քաղաքացիական պատերազմն անխուսափելի անհրաժեշտություն է, որին և ձգտում են իրենք: Վրացյանի հակափաստարկին, թե քաղաքացիական կռիվը բոլորովին կկործանի հայ ժողովրդին, Աթարբեկյանը պատասխանում է. «Մեզ համար ժողովուրդ գոյություն չունի: Մեզ համար գոյություն ունի դասակարգ: Մենք ձգտում ենք պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակի և համաշխարհային հեղափոխության: Եթե սոցիալական այդ համաշխարհային վայրիվերումների ժամանակ ոտքի տակ պիտի գնա հայ ժողովուրդը, թող գնա: Մենք Ռուսաստանում 15 միլիոն մարդ ոչնչացրինք: Եթե պետք լինի, մի 15 միլիոն էլ կոչնչացնենք, միայն համաշխարհային հեղափոխությունը հաղթանակի»[77]: Ս. Վրացյանը քաղաքացիական կռիվը կանխելու նպատակով փետրվարի 9-ին հանդիպում է նաև Մռավյանի հետ ու դարձյալ ապարդյուն: Փետրվարի 9-ին և 10-ին սկսվում են զանգվածային ձերբակալությունները: Փետրվարի 12-ին հարապարակվում է ՀԿԿ Կենտկոմի և Երևանի քաղաքային կոմիտեի՝ դաշնակցության դեմ պայքարելու կոչը, որում մասնավորապես ասված է. «Ընկերներ, արթուն եղեք, խտացեք ձեր կոմունիստական կուսացության շուրջը, լցրեք կարմիր բանակի շարքերը, անողոք կռիվ մղեցեք ձեր դասակարգային թշնամիների դեմ: Նրանց պետք է ոչնչացնել»: Քարոզչության բոլոր հնարավոր միջոցներով քաղաքացիական կռվի կոչեր են հնչում: Քաղաքացիական կռվի բոլշևիկյան քարոզչությունն ունեցավ այն արդյունքը, որ ժողովուրդը, ոտքի կանգնելով, համախմբվեց «փրկության կոմիտեի» շուրջ և փետրվարի 18-ին կատարելով հեղաշրջում՝ բոլշևիկներին դուրս քշեց Երևանից: Հարկ է նկատել, որ բոլշևիկներն իշխանությունից հեռացան առանց որևէ լուրջ դիմադրության: Նրանք նաև որևէ փորձ չարեցին իշխանությունը վերագրավելու մինչ 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում ռուս-թուրքական բարեկամության ու եղբայրության պայմանագրի ստորագրումը: Այդ բարեկամության հիմքը դրվել էր 1920թ. հուլիս-օգոստոս ամիսներին Մոսկվայում գումարված ռուս-թուրքական առաջին կոնֆերանսում: Այդ կոնֆերանսում էր, որ Թուրքիան դարձավ համաշխարհային հեղափոխության արևելյան պարտնյոր, իսկ բոլշևիկներն ընդունեցին Թուրքիայի պառլամենտի կողմից 1920թ. հունվարի 28-ին ընդունած «Ազգային ուխտի» գծագրած սահմանները, որի մեջ էր մտնում նաև Կարսի մարզը: Ռուս-թուրքական կոնֆերանսը պայմանագրային ավարտ չունեցավ միայն այն պատճառով, որ Թուրքիան պետք է լուծեր Հայաստանի հարցը: Ակնհայտ է, որ Հայաստանը պարտության մատնելու և նրա մնացած մասում խորհրդային իշխանություն հաստատելու գաղափարը բոլշևիկներին տվել էին քեմալականները հենց ռուս-թուրքական առաջին կոնֆերանսում:

[77] «Հայրենիք» ամսագիր, 1923 թ., N 4, էջ 40:

Բոլշևիկներն էլ այդ գաղափարը դրեցին սեպտեմբերին Բաքվում կայացած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի հիմքում և կազմեցին համաշխարհային հեղափոխական ուժերի կողմից Հայաստանը պարտության մատնելու ծրագիրը: Ահա պարտության էր մատնված Հայաստանը, և կատարվածին դիվանագիտական վավերացում տալու համար պետք է գումարվեր ռուս- թուրքական երկրորդ կոնֆերանսը: Այն նախատեսված էր գումարել 1921թ. փետրվարին Մոսկվայում: Թուրքական կողմին մտահոգում էր այն հանգամանքը, որ կոնֆերանսի աշխատանքներին պետք է մասնակցեր նաև Սովետական Հայաստանի պատվիրակությունը՝ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ալ. Բեկզադյանի գլխավորությամբ: Եվ քանի որ Ալ. Բեկզադյանը սակարկում էր Ալեքսանդրապոլի պայմանագրի շուրջ, ուստի թուրքական կողմին ձեռնտու չէր, որ նա մասնակցի կոնֆերանսի աշխատանքներին: Այդ պատճառով էլ քեմալականները ձգտում էին, որ Մոսկվայում գումարվելիք կոնֆերանսի նախօրեին իշխանափոխություն կատարվի Հայաստանում: Դա ձեռնտու էր նաև ռուսական կողմին, որովհետև նրանք գիտեին, որ Ալ. Բեկզադյանն իր հետ Մոսկվա է բերել Հայաստանի տարածքային իրավունքները պաշտպանող փաստաթղթեր, որոնց քննարկումը կոնֆերանսում ավելորդ գլխացավանք էր լինելու նաև ռուսական կողմի համար: Այդ էր պատճառը, որ փետրվարի 20-ին Կարախանը Բեկզադյանից վերցրել էր այդ փաստաթղթերը և չէր վերադարձրել: Այդ մասին մենք իմանում ենք 1921թ. ապրիլի 6-ին Կարախանին հղած Բեկզադյանի հետևյալ գրությունից. «Փետրվարի 20-ի Ձեզ և Չիչերինին իմ կողմից ներկայացրած փաստաթղթերը, որոնք պետք է ներկայացվեին ռուս-թուրք-հայ-ադրբեջանական կոնֆերանսին, Ձեր խնդրանքով մեկ օրով (հաջորդ օրը վերադարձնելու խոստումով) մնացին Ձեզ մոտ: Չնայած Ձեր բանավոր խոստումներին ցայսօր փաստաթղթերը չեմ ստացել (ընդամենը 12 փաստաթուղթ՝ Վելիբեկովի զեկույցը Նախիջևանի մասին, Կարսի մասին, Ալեքսանդրոպոլի մասին և այլն): Խնդրում եմ փաստաթղթերը վերադարձնելու Ձեր կարգադրությունը»[78]: Չնայած փետրվարի 26-ին սկսված կոնֆերանսը հայտարարվեց ռուս-թուրքական՝ թուրքական կողմի պնդմամբ, բայց փաստերը ցույց են տալիս, որ դրան դեմ չէր նաև ռուսական կողմը: Եվ դա այն հասկանալի պատճառով, որ կոնֆերանսի գլխավոր հարցը լինելու էր հայ-թուրքական տարածքների խնդիրը, որում Ռուսաստանը պաշտպանելու էր Թուրքիայի շահերը: Այդ մասին պարզ ու հստակ ասված է Ստալինի ղեկավարած Ազգային գործերի ժողկոմիսարիատի օրգան «Ժիզն Նացիոնալնոստեյ» հանդեսում 1921թ. մարտի 4-ին տպագրված «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածում: Հոդվածագիրը գալիք

[78] ՀՀ ՆԿՊԱ, ֆ. 114, ց. 1, գ. 8, թ. 8:

կոնֆերանսի աշխատանքները քննելով համաշխարհային հեղափոխության տրամաբանությամբ՝ գրում է. «Համաշխարհային մասշտաբով պրոլետարական պայքարի շահերը պահանջում են իմպերիալիզմի լծից ազատագրել միջազգային կապիտալիզմն իրենց ուժերով սնող գաղութային և կիսագաղութային երկրներին: Հենց սրանով իսկ պայքարի շահերը պահանջում են ամեն կերպ պաշտպանել Թուրքիային, որն այժմ Անտանտայի իմպերիալիստական պետությունների դեմ ակտիվ պայքարող Արևելքի միակ կիսագաղութային երկիրն է... Սոցիալիստական պետությունները, հավատ ունենալով պրոլետարական հեղափոխության անխուսափելիության նկատմամբ, պետք է հանուն այդ հեղափոխության հաղթանակի զիջումներ անեն նացիոնալիստական պետություններին... Այս բոլոր նկատումները վերաբերում են Հայաստանին, քանի որ ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ Ադրբեջանը Թուրքիայի հետ հարցեր չունեն: Կոնֆերանսի գլխավոր հարցը Հայկական հարցն է... Պայքար սկսել Թուրքիայի դեմ՝ նշանակում է տապալել հեղափոխությունը և անգլիական իմպերիալիզմի դեմ պայքարը ամբողջ Արևելքում: Պարզ է, որ Սովետական Ռուսաստանն այդ քայլը երբեք չի կատարի: Իսկ եթե ժամանակակից Հայաստանում Վանից և Բիթլիսից խոնված փախստականները ենթարկվեն անտանելի զրկանքների, եթե Թուրքիայում մնացած հայությունը կառավարության կողմից այժմ հետապնդվեն և ճնշվեն, միևնույն է, Հայաստանին ոչինչ չի մնում անել, քան հաշտվել ստեղծված դրության հետ և հանուն համաշխարհային հեղափոխության շահերի զոհաբերել թե իր նախկին տերիտորիաները և թե այնտեղ մնացած իր ժողովրդին»: Ովքեր չեն հասկացել Հայաստանում կատարվող քաղաքական խարդավանքների պատճառները և գտնում են, որ օր առաջ խորհրդայնացումով երկիրը կփրկվեր, թող վերստին կարդան այս մեջբերումը: Հայաստանը խորհրդային լիներ թե ոչ, միևնույն է, նա այնքան ժամանակ էր գալարվելու համաշխարհային հեղափոխության ճիրաններում, քանի դեռ Թուրքիան Ռուսաստանի հետ պայմանագրային ձևակերպում չէր տվել զենքի ուժով կատարած իր տարածքային նվաճումներին: Իսկ Չիչերինի իբր թե հայանպաստ դիրքորոշումը փաստողների համար տալիս ենք նրա՝ Թուրքիայի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Մուհթարին հղած դեկտեմբերի 19-ի նոտայի հետևյալ հատվածը. «Սովետական կառավարությունն իր խոր գոհունակությունն է հայտնում թուրքական Ազգային կառավարությունից ստացած վերջին երկու նոտաների առթիվ: Սովետական կառավարությունն ուրախ է հավաստել փոխըմբռնողությունը թուրք և ռուս աշխատավոր ժողովուրդների միջև, որոնք բնական դաշնակիցներ են եվրոպական իմպերիալիզմի դեմ մղվող պաշտպանողական պատերազմում: Սովետական կառավարությունը երբեք չի կասկածել Ռուսաս-

տանի նկատմամբ Ձեր անկեղծ զգացմունքների մեջ և պատրաստ է փոխադարձ վստահությունն ու ըմբռնողությունն ուժեղացնելու նպատակով շարադրել իր տեսակետը թուրքական կառավարության նոտաներում շոշափված հարցերի վերաբերյալ: Սովետական կառավարությունն այդ բանն անում է մեծ հաճույքով, որովհետև միայն երկու ժողովուրդների միասնական կամքը կարող է Անդրկովկասում հաստատել հաշտություն և խաղաղություն և որ միմյանց տեղեկացնելով սեփական եվրոպական քաղաքականության մասին, մենք կարող ենք խուսափել այնպիսի թյուրիմացություններից, որպիսիք մեր թշնամիները, անկասկած, կաշխատեն և արդեն աշխատում են, բայց ապարդյուն կերպով, առաջացնել թուրք և ռուս ժողովուրդների միջև»: Անցնելով Հայաստանի խնդրին՝ Չիչերինը նշում է. «Սովետական կառավարությունն ընդունում է, որ դաշնակների կառավարությունը թույլ է տվել խստություններ, որոնք չէին կարող անտարբեր թողնել Հայաստանի սահմանների մոտ կանգնած թուրքական բանակի հրամանատարությանը»[79]: Այնուհետև, փաստելով Հայաստանի խորհրդայնացումը, Չիչերինը պահանջում է թուրքական զորքերը հանել Ալեքսանդրապոլի շրջանից: Բարեկամության ու եղբայրության այս փոխըմբռնողության ոգով էլ անցավ 1921թ. փետրվարի 26-ին սկսված ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսը: Կոնֆերանսում Ռուսաստանը ներկայացնում էին Գ. Չիչերինը և Ջ. Կորկմասովը: Թուրքական պատվիրակության անդամներն էին Յուսուֆ Քեմալը, Ռիզա Նուրին և Ալի Ֆուաադը: Տարածքային հարցերը քննարկելիս կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին Ռուսաստանի ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար Ի. Ստալինը և Խորհրդային Ադրբեջանի պատվիրակության ղեկավար Բ. Շահթահթինսկին: Կոնֆերանսի աշխատանքներին մոտ չթողեցին միայն Սովետական Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանին: Արդեն նշել ենք, որ Կարախանը Բեկզադյանից վերցրել էր Հայաստանից բերած փաստաթղթերը: 1921թ. մարտի 16-ին ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի աշխատանքներն ավարտվեցին, և ստորագրվեց բարակամության ու եղբայրության պայմանագիրը: Համաձայն պայմանագրի Հայաստանից Թուրքիային էին անցնում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Նախիջևանը հանձնվում է Ադրբեջանին: 3-րդ հոդվածում նշվում է, որ Նախիջևանի ինքնիշխանությունը չի հանձնվի երրորդ պետությանը:

Մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով վավերացվեց համաշխարհային հեղափոխության դրոշի տակ Հայաստանում կատարվածը: 1921թ. հոկտեմբերի 13-ին Հայաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց

[79] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Եր. 1972, էջ 469-470:

Կարսի պայմանագիրը, որով օրինականացվեց հայ ժողովրդի թիկունքում ստորագրված Մոսկվայի պայմանագիրը:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից մինչև Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման ժամանակահատվածն ունի հետևյալ ամփոփումը.

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով իրադրությունը բացարձակապես չփոխվեց: Չկատարվեց Բ. Լեգրանի և կառավարության միջև ստորագրված համաձայնագիրը:

Շրջափակման հետևանքով դրսից որևէ օգնություն չէր ստացվում: Երկիրը շնչահեղձ էր լինում երիտասարդ բոլշևիկ ղեկավարների բռնացումների ու բռնագրավումների քաղաքականությունից:

Հունվարին Դրոյին արտաքսելուց հետո Հայաստան է գալիս ՌՍՖՍՀ ՉԿ-ի լիազոր Գ. Աթարբեկյանը, և իշխանությունն անցնում է Աթարբեկյան-Ավիս զույգին:

Հավաքվում և Բաքու ու Ռյազանի համակենտրոնացման ճամբարներ են արտաքսվում բոլոր նախկին սպաները և պետական ծառայողներ:

Քեմալականները Հայաստանի իշխանություններին մեղադրում էին հեղափոխական մեթոդներով չկառավարելու մեջ և ամեն միջոցի դիմում էին երկրում քաղաքացիական պատերազմ հրահրելու:

Այս ամենի արդյունքում փետրվարի 18-ին Հայաստանում տեղի ունեցավ իշխանափոխություն, երկիրը ներքաշվեց քաղաքացիական պատերազմի մեջ: Ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի հրավիրման քաղաքական տրամաբանությունն էր թելադրում Հայաստանում կատարվող իրադարձությունները:

1921թ. մարտի 16-ին կնքված ռուս-թուրքական պայմանագրով ավարտվեց համաշխարհային հեղափոխության քաղաքական տրագիկոմեդիայի վերջին արարը:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ*

Խորհրդային երկրում տիրող տնտեսական ճգնաժամը ստիպեց խոսել ճակատային գրոհով սոցիալիզմի կառուցման փորձի և նրա ողբերգական հետևանքների մասին: Նույնը չի կարելի ասել ազգային հարցի մասին: Այս կարևոր բնագավառում դեռևս գործում էին նախկին չափանիշները, ինչը և հուշում է, որ հասունացած խնդիրները ոչ միայն չէին լուծվելու, այլև գնալով ճգնաժամն ավելի էր խորանալու: Ժամանակն է գիտակցելու, որ ձախողումներն ինչպես մեկ, այնպես էլ մյուս բնագավառներում փոխկապակցված են և ունեն գրեթե նույն պատճառները: Խնդիրն այն է, որ բոլշևիկները ինչպես ճակատային գրոհով փորձեցին հասնել սոցիալիզմին, քանդելով տնտեսության դարավոր ավանդույթները, այնպես էլ ձգտում էին հասնել համաշխարհային հեղափոխության՝ աշխարհն արհեստականորեն բաժանելով համաշխարհային իմպերիալիզմի և նրա դեմ պայքարող համաշխարհային պրոլետարիատի: ԽՍՀՄ 1924թ. սահմանադրության մեջ այդ մասին ասված է, որ բոլոր երկրների աշխատավորների միացման ճանապարհին նոր՝ վճռական քայլ կլինի միջազգային սոցիալիստական խորհրդային պետության կազմավորումը: Այս հոդվածի խնդիրը չէ համաշխարհային հեղափոխության բոլոր դրսևորումներին անդրադառնալը: Այն շատ տարողունակ է, որովհետև վերաբերում է բոլշևիկյան կուսակցության և Կոմինտերնի 1919-1936թթ. գործունեությանը: Ասենք միայն, որ ի տարբերություն իր երկվորյակի՝ երկրում ճակատային գրոհով սոցիալիզմի կառուցման, որը վավերացվեց 1936թ. սահմանադրությամբ, համաշխարհային հեղափոխության գաղափարը դուրս մնաց այս սահմանադրությունից: Այդ ժամանակից էլ սկսած այն հանվեց շրջանառությունից: Նման վերաբերմունքը ուներ որոշակի նպատակ: Ստալինը, լինելով համաշխարհային հեղափոխության ջատագովներից մեկը և լավ իմանալով, թե այդ ճանապարհին որքան համաշխարհային հանցանքներ են գործվել, ձգտում էր փակել հարցի պատմությունը և այդպիսով մոռացության տալ ու սերունդների հիշողությունից ջնջել այն բոլոր հանցագործությունները, որոնք կատարվել էին համաշխարհային հեղափոխության խաչմերուկներում: Բազմաթիվ և բազմաբնույթ են այդ

* Այս հոդվածը լույս է տեսել «Գարուն» ամսագրի 1990թ. N4-ում:

հանցագործությունները: Սկսած գերմանական սոցիալ-դեմոկրատներից, որոնք «հեղափոխությունը Գերմանիայում ձախողելու համար» Կոմինտերնի կողմից այնպես հալածվեցին, որ հետագայում ֆաշիզմին հնարավորություն տվեցին իշխանության գլուխ անցնելու, և վերջացրած բոլոր դեմոկրատական և ազգային կուսակցություններով, որոնք դիմակայում էին համաշխարհային հեղափոխության իրագործմանը: Ահա այստեղից և հիմնականում այստեղից է ակունքվում բոլշևիզմի տխրահռչակ զայրույթը բոլոր դեմոկրատական ուժերի նկատմամբ, որոնք խանգարում էին կարմիր բանակին՝ «երջանկություն պարգևելու համաշխարհային պրոլետարիատին»: Բազմաթիվ են նաև այն երթուղիները, որոնցով կարմիր բանակը պետք է իրագործեր համաշխարհային հեղափոխությունը: Բավական է հիշել կարմիր բանակի «Կտա՛ս Վարշավան», «Կտա՛ս Բեռլինը» և այս բնույթի այլևայլ կարգախոսներ: 1920թ. Արևմուտքում հանդիպելով եվրոպական երկրների հավաքական կամքին՝ բոլշևիկները ծանրության կենտրոնը տեղափոխեցին մուսուլմանական Արևելք՝ ձգտելով Արևելքում հարված հասցնել «միջազգային իմպերիալիզմին»: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո գնալով ծանրացավ Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների վիճակը, որոնք դարձան «միջազգային իմպերիալիզմի գործակալներ»: Երկու հանրապետություններին սպառնացող վտանգը պարտադրում էր մտնելու ռազմաքաղաքական դաշինքի մեջ, սակայն այս ուղղությամբ տարվող աշխատանքները սպասված արդյունքը չտվեցին, որովհետև Վրաստանի կառավարությունը, հավատալով Վրաստանի անկախությունը պահպանելու հավաստիացումներին, հրաժարվեց Հայաստանի հետ դաշինքի գաղափարից և չեզոք դիրք գրավեց: Երբ Հայաստանի խորհրդայնացումից հետո հերթը հասավ Վրաստանին, այդժամ միայն վրաց քաղաքական գործիչներն զգացին, որ կրկին գործողության մեջ է դրվել «բաժանիր, որ տիրես» գաղութատիրական սկզբունքը:

1920թ. հուլիսին Հայաստանի Հանրապետությունը որպես «միջազգային իմպերիալիզմի գործակալ» հասկացությունը պաշտոնապես վավերացվեց Կոմինտերնի 2-րդ կոնգրեսի կողմից: Այս կոնգրեսում հայ բոլշևիկներ Հ. Նազարեթյանը և Ա. Նուրիջանյանը ներկայացնում են «Կոմունիզմը Հայաստանում» վերտառությամբ զեկուցումը, որում մասնավորապես ասված է. «Ռուսաստանի կոմունիստական պարտիան Հայաստանում պետք է պատրաստ լինի, որպեսզի Արևելքում ծագած ընդհանուր ապստամբության մոմենտին տապալի Դաշնակցության իշխանությունը, նրա ճակատը վերջնական հավասարեցնի արտաքին իմպերիալիստական ճակատին և Արևելքի ապստամբած ժողովուրդների օգնությամբ ընդհանուր ճակատ կազմի Սովետական Ռուսաստանի հետ ընդդեմ միջազգային իմպերիալիզմի»: Ըն-

թերցողը թող հաշվի, թե այս փոքրիկ պարբերությունում քանի անգամ է հոլովված «ճակատ» բառը: Սա հենց վերը ասած ճակատային գրոհով համաշխարհային հեղափոխության հաղթանակին հասնելու պնդաճակատ կամ նեղճակատ դրսևորման ոչ եզակի նմուշներից է: Այս ընդարձակ փաստաթղթում պարզ և հստակ ասված է, որ հանուն Հայաստանի աշխատավորության շահերի պետք է պարտության մատնվի նույն Հայաստանը: Սրանից ավելի անհեթեթ բան դժվար է գտնել, որովհետև հայ ժողովրդի ինչ-որ վերացական շահի համար (երևի միայն բոլշևիկները գիտեին, թե ինչ նկատի ունեին) պետք է պարտության մատնվեր նույն հայ ժողովրդի կողմից մեծագույն դժվարությամբ ստեղծված անկախ պետությունը: Չնայած այն բանին, որ 1920թ. մայիսին մեկ հարվածով Հայաստանի խորհրդայնացման փորձն անհաջող է անցել, և Մոսկվայում բանակցություններ էին սկսվել երկու կառավարությունների միջև, բայց և այնպես Խորհրդային Ռուսաստանը ձեռք չէր քաշել Հայաստանը պարտության մատնելու գաղափարից: Երկու ամիս շարունակ Մոսկվայում Լ. Շանթի ղեկավարած Հայաստանի պատվիրակությանը Չիչերինը և Կարախանը համոզում էին, որ համաշխարհային մասշտաբի պայքարում Հայաստանը պետք է որոշի իր տեղը: Նրանք փորձում էին հայ բանագնացներին համոզել, որ Հայաստանի անկախությանը ձեռք չեն տա, եթե նա լինի հեղափոխական ուժերի հետ: 1920թ. ամռանը ՌՍՖՍՀ կառավարության երկկողմ բանակցությունները Թուրքիայի և Հայաստանի բանագնացների հետ նման էին այն խաղին, ըստ որի Ռուսաստանը փորձում էր Թուրքիայի և Հայաստանի միջև գործն այնպես կարգավորել, որ և «գայլերը կուշտ լինեն և ոչխարներն՝ անվնաս»: Քանի որ նման բան միայն հեքիաթներում կարող է լինել, ուստի բանակցությունները Հայաստանի պատվիրակության հետ արհեստականորեն ձգձգվում էին հուսադրող խոստումներով: Հայաստանի հետ սկսված դիվանագիտական այս սիրախաղը հետապնդում էր մի նպատակ՝ ձգձգել բանակցություններն այնքան ժամանակ, մինչև Փարիզի խաղաղության կոնֆերանսում դաշնակից պետությունները որոշեն իրենց վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ: Այդ նպատակով էլ Չիչերինի միջնորդությամբ հետաձգվեց նաև Թուրքիայի՝ հունիսին նախատեսված հարձակումը Հայաստանի վրա: Այս ամենը բնավ չէր նշանակում, որ Ռուսաստանի կառավարությունը ձեռք է քաշել Հայաստանի վերաբերյալ իր պլաններից: Այդ մասին լավագույնս վկայում է այն փաստը, որ արդեն հունիսի 28-ին խորհրդային կողմը որոշում է Հայաստան ուղարկել, ոչ ավելի, ոչ պակաս, 54 հոգուց բաղկացած իր լիազոր ներկայացուցչությունը՝ Բ. Լեգրանի գլխավորությամբ: Հունիսի 29-ին Հայաստանի կառավարության հղած հեռագրում Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինը իր

կառավարության այդ քայլը բացատրում էր այսպես. «Նպատակահարմար ենք գտնում, որ Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվելիք դաշնագրի մշակումը կայանա Երևանում»: Նշելով նաև, որ «մոտ օրերս մեր ներկայացուցչությունը ընկ. Լեգրանի գլխավորությամբ ճանապարհ կընկնի դեպի Երևան»: Առանց Հայաստանի կառավարության հետ համաձայնեցնելու ՌՍՖՍՀ կառավարությունը որոշել և գտել էր, որ նպատակահարմար է բանակցությունները տեղափոխել Երևան: Այնուհետև Չիչերինը պահանջում է, որ մշտական կապ ապահովվի Լեգրանի առաքելության և Մոսկվայի միջև, մոռանալով, որ Մոսկվայում գտնվող Շանթի պատվիրակությունը ամբողջապես զրկված էր իր կառավարության հետ կապվելու հնարավորությունից: Այնուհետև զարմանք է հարուցում լիազոր ներկայացուցչության թիվը: Մի՞թե բարիդրացիական հարաբերություններ հաստատելու և պայմանագիր ստորագրելու նպատակով էր թելադրված 54 հոգուց բաղկացած պատվիրակության Հայաստան ուղարկելը: Կամ թե պայմանագիր ստորագրելը ի՞նչ կապ ուներ բոլշևիկյան գրականությունը վագոնով Հայաստան ուղարկելու հետ: Այս ամենը խոսում է այն մասին, որ այդ պատվիրակությունը Հայաստան է ուղարկվում բոլորովին այլ նպատակով: Այդ բանը նկատի ունենալով՝ Լ. Շանթը 1920թ. հուլիսի 8-ին Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին հղած հեռագրում նշում է. «Լեգրանն իր հետ բերում է մեծ թվով բոլշևիկյան գրականություն: Մենք բողոքեցինք: Կարախանը խոստացավ հեռագրել, որ դրանք թողնվեն Բաքվում: Ամենավճռական ձևով արգելեք ամեն տեսակի պրոպագանդա: Նրանք տեղի են տալիս միայն կամքի ու վճռականության առաջ»: Հեռագրում Շանթը նաև նշում է, որ բանակցությունների տեղափոխումը Երևան հարցը կբարդացնի և անվերջ կհետաձգվի պայմանագրի կնքումը: Այս հեռագրից պարզ երևում է, որ Շանթը կռահել է Ռուսաստանի կառավարության կողմից վարվող դիվանագիտական խաղի իմաստը: Եթե ՌՍՖՍՀ կառավարությունը ցանկանար ճանաչել Հայաստանի անկախությունը գոյություն ունեցող սահմաններում, ապա պայմանագիրը կստորագրվեր Մոսկվայում: Այդ բանը չկայացավ այն պատճառով, որ Ռուսաստանի կառավարությունը ձգտում էր բավարարել Ադրբեջանի և Թուրքիայի տարածքային պահանջները: Առաջինը պահանջում էր Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջևանը, ինչպես նաև Շարուրը և Սուրմալուն, իսկ քեմալականները պահանջում էին Կարսը և Արդահանը: Պարզ է, որ նման պայմանները կարելի է պարտադրել միայն Հայաստանը պարտության մատնելուց հետո: Այդ պատճառով էլ Ռուսաստանի կառավարությունը մի կողմից Մոսկվայում բանակցություններ է վարում Հայաստանի կառավարության հետ, իսկ մյուս կողմից նրա զորքերը անընդհատ հարձակումներ էին գործում Հայաստանի

վրա: Կարմիր բանակը 1920թ. հուլիսին արդեն գրավել էր Գորիսը: Բոլշևիկները համառորեն ձգտում էին բավարարել Ադրբեջանի պահանջը Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջևանի նկատմամբ և դրանով ապահովել կապը քեմալականների հետ: Նման պայմաններում խոսել Հայաստանի Հանրապետության նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի լոյալ վերաբերմունքի մասին և մեղադրել Շանթի պատվիրակությանը, ինչն այսօր անում են մեր որոշ պատմաբաններ, պարզապես նշանակում է չհասկանալ կատարվածի իմաստը: Նրանք տասնյակ փաստաթղթեր են վկայակոչում, որոնք իբր ապացուցում են, թե բոլշևիկները ցանկանում էին Հայաստանը դուրս բերել ծանր կացությունից: Մենք դրանց կհավելենք հարյուրները, բայց չէ՞ որ քաղաքականությունը որոշվում է ոչ թե խոսքով, այլ գործով: Մի՞թե թույլատրելի է անտեսել Հայաստանի տարածքների գրավման փաստը և շեշտադրել դիվանագիտական նպատակով շրջանառու դարձած փաստաթղթերը, որոնք այն ժամանակ մոլորեցրել են հայ քաղաքական գործիչներին: Շարունակ ցանկալին իրականության փոխարեն ներկայացնելով՝ մենք այդպես էլ չենք կարողացել մեր ժողովրդի այդ շրջանի անցած դժվարին ճանապարհին արժանի պատմություն ստեղծել և սովորել նրա դասերը: Նաև դա է պատճառը, որ այսօր էլ քաղաքականության մեջ չենք տարբերում թացը չորից՝ մնալով զգացմունքային և դյուրաթեք:

Տասնյակ փաստեր կարելի է բերել, որ Շանթի պատվիրակությունը Մոսկվայի բանակցություններում ոչ մի տարածքային հարց չի դրել: Նրա խնդիրն է եղել, որ Ռուսաստանը ճանաչի Հայաստանի անկախ պետությունը գոյություն ունեցող սահմաններում և բարիդրացիական հարաբերություններ հաստատվի երկու երկրների միջև: Արդեն ասվեց, որ տարածքային պահանջներ ոչ թե Հայաստանն էր դնում, այլ Ռուսաստանը: Ահա թե այդ մասին 1920թ. հուլիսի 6-ին վարչապետ Հ. Օհանջանյանին ինչ է գրում Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը. «Տեղեկանալով Մոսկվայում ստացված Շանթի հեռագրի հետ, ես հարկ եմ համարում իմ կարծիքը հայտնել այդ մասին: Իմ կարծիքով Սովետական իշխանության և ոչ մի առաջարկ ընդունելի չէ: Միակ տեսակետը, որի վրա մենք պետք է կանգնած մնանք, այն է, որ տերիտորիայի խնդրում ոչ մի զիջում չենք կարող անել հօգուտ Ադրբեջանի: Սովետական իշխանությունը, որ Ադրբեջանի շահերն է պաշտպանում, այն էլ այն ծավալով, որը վտանգում է մեր անկախությունը, այլևս մեզ համար վտանգավոր չէր կարող լինել ժողովրդի հոգեբանության տեսակետից: Որ Մոսկվան Ադրբեջանի փաստաբանն է, ուրեմն և Թուրքիայի և գործում է ի վնաս Հայաստանի անկախության՝ հերիք է մեր ժողովրդին զգաստացնելու և նրա մեջ եղած բոլշևիկյան տրամադրությունը հօդս ցնդեցնելու»: Ցավոք, մենք արխիվներում

չգտանք Բեկզադյանի հիշատակած Շանթի հեռագիրը, որում ցույց է տրված, թե Ռուսաստանը տարածքային ինչ պահանջներ է դրել հօգուտ Ադրբեջանի: Սակայն դա չի խանգարում պարզ տեսնելու, որ խոսքը վերաբերում է այն տարածքներին, որոնք սկզբից գրավվեցին կարմիր բանակի կողմից, որից հետո Հայաստանի կառավարությունը, երկյուղելով բոլշևիկների հետ հետագա առճակատումից, համաձայնեց զինադադար ստորագրել Հայաստանի համար շատ ծանր պայմաններով: 1920թ. օգոստոսի 7-ին Հ. Օհանջանյանը հեռագրում է Թիֆլիս Տ. Բեկզադյանին. «Կարմիրների ուժերը շրջապատում են և աշխատեք զինադադար կնքել՝ չբացահայտելով պատճառները: Հայտնեք Շանթին, որպեսզի նա ազդի կենտրոնի (Մոսկվայի – Կ.Ս.) վրա հարձակումները դադարեցնելու և զինադադար կնքելու»: Օգոստոսի 10-ին Թիֆլիսում ստորագրված զինադադարի համաձայնագրով դադարեցվեցին բոլշևիկների կողմից Հայաստանի դեմ մայիսից սկսած ռազմական գործողությունները: Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը վիճելի տարածքների անվան տակ գրավվեցին կարմիր բանակի կողմից: Սա առաջին հարվածն էր Հայաստանի անկախությանը և գալիք ողբերգության սկիզբը: Սա նաև առաջին պատասխանն էր Սևրի պայմանագրին, որին հաջորդեց Կոմինտերնի որոշումը՝ 1920թ. սեպտեմբերի 1-ին Բաքվում գումարելու Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը: Արդեն օգոստոսի 18-ին նորաստեղծ ՀԿԿ արտասահմանյան բյուրոյի անդամներ Ա. Նուրիջանյանը (24 տարեկան), Հ. Կոստանյանը (23 տարեկան) և Ի. Դովլաթյանը (23 տարեկան) դիմում են Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին: Այդ դիմումում ասված է. «Կոմունիստական ինտերնացիոնալի գործադիր կոմիտեն որպես բոլոր երկրների հեղափոխական աշխատավորական մասսաների կամքի անկաշառ արտահայտություն, իր սրբազան պարտքն է համարում խորհրդակցել Արևելքի ժողովուրդների պատգամավորների հետ բանվորա-գյուղացիական խավերի ընդհանուր թշնամու՝ համաշխարհային իմպերիալիզմի դեմ կռվելու վեհ գործի համար»: Ամբողջ աշխարհի պրոլետարիատին երջանկացնելու խոստումներից հետո նրանք ծանրանում են «միջազգային իմպերիալիզմի դաշնակից դաշնակցական Հայաստանի» խնդրին՝ հայ բանվորներին ու գյուղացիներին համոզելով, որ «դաշնակցականները ժողովրդի թշնամիներն են», «դաշնակցականները ժողովրդի դահիճներն են», «դաշնակցականները ազգամիջյան թշնամանք սերմանողներ են» և այսպես շարունակ: Այս դիմումից պարզ երևում է, որ Բաքվում գումարվելիք Արևելքի ժողովուրդների համագումարի բուն խնդիրն էր լինելու «Արևելքի ճնշված ու հարստահարված» ժողովուրդներին համոզելը, թե իր երջանկությունն խաթարողը «իմպերիալիզմի դաշնակից Հայաստանն է»: Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի դեմ սկսված

համաշխարհային անբարո այս գործընթացին մեծապես նպաստում էին հայ բոլշևիկները: Ասել, թե նրանք մոլորվել էին և կուրացել համաշխարհային հեղափոխության լուսարձակներից, սխալ կլինի: Նրանք չէին կարող չտեսնել, թե ինչպիսի ընդգծված ազգայնական և նվաճողական քաղաքականություն են վարում իրենց ադրբեջանցի կուսակիցները: Նրանք չէին կարող չտեսնել, որ բոլշևիզմը Ադրբեջանի ղեկավարության համար միջոց էր Հայաստանի հողերը գրավելու համար: Նրանք չէին կարող նաև չտեսնել, թե ինչպիսի ողբերգություն է սպասում իրենց ժողովրդին, եթե Թուրքիան համաշխարհային հեղափոխական ուժերի աջակցությամբ հարձակվի Հայաստանի վրա: Ինչպե՞ս բացատրել այն միջադեպը, երբ Ադրբեջանի հեղկոմի կողմից բանտարկյալներ փոխանակելու նպատակով 1920թ. հոկտեմբերին Հայաստան է գործուղվում հայ բոլշևիկ Ի. Դովլաթյանը, Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Մ. Հարությունյանը առարկում է նրա թեկնածության դեմ, որ նա հրեշավոր ստեր է տարածում Բաքվում Հայաստանի կառավարության մասին: Եվ առաջարկում է նրա փոխարեն թուրք գործիչ ուղարկել Հայաստան: Նարիմանովը չարախնդալով պատասխանում է, որ «իրենք ինտերնացիոնալիստներ են և որ ազգային պատկանելությունն իրենց համար ոչ մի նշանակություն չունի»: Ահա նման տրամադրությամբ էլ հայ բոլշևիկները նախապատրաստվում էին Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարին, որտեղ համաշխարհային հեղափոխական ուժերը պետք է որոշեին Հայաստանի Հանրապետության ճակատագիրը: 1920թ. սեպտեմբերի 1-ին Բաքվում իր աշխատանքն է սկսում այդ համագումարը, որին մասնակցում էին 1891 պատգամավորներ՝ հիմնականում մուսուլմանական երկրներից (Թուրքիա, Պարսկաստան, Եգիպտոս, Աֆղանստան և այլն): Համագումարի աշխատանքը ղեկավարում էր Կոմինտերնի գործադիր կոմիտեի նախագահ Գ. Զինովևը: Սեպտեմբերի 4-ին համագումարը լսում է Հայաստանի կոմկուսի պատվիրակների «Հայաստանում տիրող դրության մասին» զեկուցումը: Զեկուցման հիմնական բովանդակությունն այն է, որ Հայաստանում «մաուզերիստների իշխանության լծի տակ» տանջվում է աշխատավորությունը, և որ հանրապետությունում հասունացել է հեղափոխական իրադրությունը: «Անընդհատ ազգային պատերազմները... սպեկուլյացիան, գողությունն ու կաշառակերությունը, որոնք որոշակի սիստեմ են դարձել, բանվոր դասակարգի իրավազուրկ վիճակը և աղքատիկ ռոճիկը, անտանելի ծանր ռեժիմը բանակում – այս բոլորը լինելով դաշնակների, սպեկուլյանտների ու մաուզերիստների կառավարության ծանր ճնշման հետևանքը, իր հերթին անխուսափելի է դարձնում այդ կառավարության անկումը»: (Թե այս որակումները որքանով էին համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում տիրող վիճակին, թողնենք փաստաթղթի

հեղինակների խղճին, բայց որ դրանք ամբողջապես բնութագրում են մեր այսօրվա կյանքը՝ կասկածից վեր է):

Այս զեկուցումը փաստորեն կրկնությունն է Կոմինտերնի 2-րդ կոնգրեսում հայ բոլշևիկների կարդացած արդեն հիշատակած զեկուցմանը: Ինչպես այն, այնպես էլ այս փաստաթուղթը վերջանում է նույն տողերով. «Հայաստանում չկա ազգային հարց, Հայաստանում կա միայն սոցիալական հարց և կոմպարտիան պետք է Հայաստանում պատրաստ լինի, որ Արևելքում ընդհանուր ապստամբության մոմենտին տապալի դաշնակցության իշխանությունը...»: Սեպտեմբերի 4-ին Հայաստանի կոմկուսի պատվիրակությունը նաև դիմում է համագումարին՝ կոչ անելով տապալել «ռազմատենչ ու արյունարբու» դաշնակցության տիրապետությունը: «Մենք չենք թույլ տալ,– ասված է կոչում,– որ Հայաստանը դառնա Սովետական Ադրբեջանի, ռևոլյուցիոն Արևելքի վրա իմպերիալիստական Արևմուտքի հարձակման բազա և դրանով դարեդար խայտառակենք մեզ ամբողջ աշխարհի ռևոլյուցիայի առջև: Մենք չենք կարող թույլ տալ, որ մեր ընդհանուր թշնամին՝ Անտանտի իմպերիալիզմը, մեր միջոցով և մեր մեջքով հաղթական երթ կատարի Արևելքի ռևոլյուցիոն մասսաների դեմ»: Սեպտեմբերի 5-ին համագումարին են դիմում Կարսի մարզի մուսուլման և ռուս ազգաբնակչության ներկայացուցիչները: Սրանք ևս կոչ են անում տապալել Հայաստանի կառավարությունը և հաստատել խորհրդային իշխանություն: Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարի ընդունած բոլոր փաստաթղթերում հստակ բանաձևվում է, որ Հայաստանը միջազգային իմպերիալիզմի դաշնակիցն է և հարկավոր է պարտության մատնել նրան: Մնում էր գործողությունների ծրագրի մշակումը: Այն հանձնարարվում է համագումարի կողմից ընտրած Արևելքի ժողովուրդների պրոպագանդայի ու գործունեության խորհրդին, որի անդամներն էին ընտրվել Օրջոնիկիձեն, Ստասովան, Նարիմանովը, Նուրիջանյանը և ուրիշներ: Այս խորհրդի նախագահությունն էլ համագումարի ավարտից հետո մշակում և 1920թ. սեպտեմբերի 17-ին Կոմինտերնի գործադիր կոմիտեի նախագահությանը, ՌԿ(բ)Կ Կենտկոմին և ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատին է ուղարկում «Մերձավոր Արևելքի քաղաքական ներկա պահի մասին» եզրակացությունը: Այս ընդարձակ փաստաթղթում էլ տրված է Հայաստանի վրա հարձակման ծրագիրը:

Փաստաթղթի առաջին կետում տրված է Պարսկաստանում իրավիճակի վերլուծությունը: Նշվում է, որ այնտեղ բոլշևիկների դիրքերը թուլացել են հօգուտ անգլիացիների: Սրանով փաստաթղթի հեղինակները ցուցում են անգլո-պարսկական դաշինքը, որին քիչ հետո միացնելու են նաև Հայաստանին: 2-րդ կետով «վերլուծվում է» Հայաստանի վիճակը: Նշվում է, որ օգոստոսի 10-ին Ռուսաստանի և Հայաստանի միջև ստորագրված զինա-

դաղարը «դաշնակցական կառավարության կողմից ընդունվեց որպես մեր թուլության ապացույց և նրանց հնարավորություն տվեց ամրապնդելու իրենց դիրքերը և պաշտպանողական գործողություններից անցնելու հարձակողականի: Ներկա պահին դաշնակցական կառավարությունը գործնականորեն նախապատրաստվում է մեր դեմ պատերազմի: Անգլիացիներից ստանալով ռազմական մատակարարում՝ նրանք ձգտում են զինվորական ուժով գրավել պայմանագրով իրենց տրված Ջուլֆայի երկաթգիծը...»: Ընթերցողը պարզ տեսնում է, որ մեջբերված մտքերը ոչ մի քննադատության չեն դիմանում, որովհետև, ինչպես տեսանք, օգոստոսի 10-ի զինադադարը Հայաստանին պարտադրվեց: Տրամաբանության այդ ո՞ր օրենքով է, որ ուժեղ և ագրեսիայի նախապատրաստվող պետությունը հակառակորդին է զիջում իր տարածքների մի մասը: Կամ թե տրամաբանակա՞ն է այն անմիտ հայտարարությունը, թե Հայաստանի կառավարությունը ձգտում է գրավել Ջուլֆայի երկաթգիծը: Ումի՞ց է գրավելու այդ երկաթուղին, եթե օգոստոսի 10-ի զինադադարով նրա օգտագործման իրավունքը մնում էր Հայաստանին: Այս ամբողջ անհեթեթությունը հյուսվում էր, որպեսզի «ապացուցվի», թե Հայաստանի զինված ուժերը ձգտում են միանալ իրենց դաշնակիցների՝ անգլո-շահական ուժերի հետ: Պարզվում է նաև, որ «դաշնակցական կառավարության գործակալները կոմունիստների դիմակով Ադրբեջանում և հատկապես Ղարաբաղում, Զանգեզուրում ու Ղազախում գործնական հող են նախապատրաստում դաշնակիցների հարձակման համար»: Ահա, այսպես, ոչ ավելի, ոչ պակաս, հայ բոլշևիկները, որոնք, ինչպես տեսանք, ձգտում էին օր առաջ տապալել Հայաստանի կառավարությունը, դիտվում են որպես այդ կառավարության գործակալներ: Առաջին հայացքից այս ամենը հառնում է որպես ցնորք: Իսկապես, ի՞նչ անհրաժեշտություն կար ամենախաղաղասիրական պետությանը, որը հարցերի օրինական լուծումից բացի ուրիշ ոչինչ չէր պահանջում, ներկայացնել այդչափ ագրեսիվ: Բայց դա միայն առաջին հայացքից: Փաստաթղթերի հետագա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլշևիկները պատահական չէին դիմացինին վերագրում սեփական մտադրությունները: Այնուհետև վերլուծվում է հեղափոխական Թուրքիայի վիճակը և ցույց է տրվում, որ եթե մոտ ապագայում Ռուսաստանը գործնական օգնություն ցույց չտա քեմալականներին, ապա նրանք համաշխարհային իմպերիալիզմի ճնշմանը կարող են դիմանալ մեկ ամսից ոչ ավելի: Որից հետո անգլո-շահական և դաշնակցական ուժերը պարտության կմատնեն համաշխարհային հեղափոխական ուժերին Արևելքում: Ահա թե ինչ անհրաժեշտություն կար և ինչ նպատակով էր Հայաստանը ներկայացվում ագրեսորի կերպարանքով: Նշվում է նաև, որ «Հայաստանի վրա հարձակումը բացի թուրքական ազգայնական շարժումը փրկելուց... մեզ հնարավորություն կտա առանձին-առանձին ջարդելու թշնամիներին, որոնք պատրաստվում են մեզ վրա հարձակվելու մասին: Հայաստանը շարքից դուրս կգա ավելի շուտ, քան կհասնեն անգլո-շահական զորքերը, իսկ Վրաստանը, որին մենք չենք դիպչի այդ հարձակման ժամանակ, կվախենա խառնվելու այդ պայքարին: Բացի դրանից, Հայաստանի վրա հարձակումը կլինի շատ ավելի դյուրին, քան թե նրանից պաշտպանվելը...»: Այսքանից հետո գալիս է Հայաստանի Հանրապետության վրա համաշխարհային հեղափոխական ուժերի հարձակման գործնական մասը: Այդ պատճառով էլ այն մեջ եմ բերում ամբողջությամբ. «Ռազմական գործողությունները մեր կողմից ոչ մի լրացուցիչ ուժ չեն պահանջի: Ըստ էության դրանք կիրագործվեն թուրքական էրզրումյան կորպուսի միջոցով: Մեր կողմից հարձակումը կլինի մոտավորապես ցուցադրական, որի համար մեր ուժերը բավական են... Դիվանագիտական առումով Արևմտյան Եվրոպայի հասարակության դժգոհության փոթորիկը դիմակայելու նպատակով Հայաստանի վրա հարձակումը պետք է իրագործվի հետևյալ ձևով. թուրքական զորքերը սկսում են հարձակումը Հայաստանի վրա, իսկ մենք մեր մամուլի և հրապարակայնության մյուս օրգանների միջոցով ահավոր աղմուկ ենք բարձրացնում Եվրոպայում նոր հայ-թուրքական կոտորածների և դրանք մեկընդմիշտ կանխելու անհրաժեշտության մասին: Եվ այդ կոտորածներին վերջ տալու նպատակով մեր զորքերը Հայաստան են մտնում նրա զորքերի կողմից անպաշտպան մնացած արևելյան սահմանից: Ազգայնական պատերազմը կանխվում է, և նրա փոխարեն հաստատվում է խորհրդային իշխանություն: Այնուհետև, մենք թուրքական զորքերը դուրս կբերենք Հայաստանի սահմաններից (որին թուրքերը կենթարկվեն անվերապահորեն) և հայերի և թուրքերի հետագա բախումը կանխելու համար մեր զորքերով գրավում ենք հայ-թուրքական սահմանը: Այսպիսով մենք արևմտաեվրոպական պրոլետարիատի աչքում կհառնենք խաղաղարի արտակարգ ազնիվ դերում, որը դեպի Հայաստան է շարժվել միայն նրա համար, որպեսզի վերջ դնի կոտորածներին և հայ ժողովրդի մնացած մասին փրկի վերջնական ոչնչացումից»:

Որքան էլ որ մեզ զայրացնի այս փաստաթղթի հեղինակների անբարոյական վարքագիծը, այնուամենայնիվ, պարտավոր ենք զսպել մեր զգացմունքները և աշխատել բացատրել, թե ինչու՞ էր Հայաստանի դեմ սկսվելիք պատերազմը նման մասշտաբներ ընդունել՝ քաղաքական անբարոյականության մեջ գերազանցելով մաքիավելականության բոլոր կանոնները: Իսկապես, ի՞նչ անհրաժեշտություն կար Բաքվում այդ խառնաժողովը հրավիրելու և հետո կազմելու իրականության հետ ոչ մի կապ չունեցող այդ եզրակացությունը: Բանն այն է, որ այդ համագումարով բոլշևիկները ձգտում էին

ազդել եվրոպական պետությունների վրա, որպեսզի կանխեն նրանց կողմից ստորագրված Սևրի պայմանագրի իրականացումը: Հարկավոր էր նրանց ցույց տալ, որ կենսունակ Հայաստան ստեղծելու դեպքում նրանց դեմ է լինելու մուսուլմանական Արևելքը: Համոզված լինելով, որ եվրոպական պետությունների և հատկապես Անգլիայի շահերը թույլ չեն տա դեմ գնալու Արևելքի կամքին և ագրեսիայի ժամանակ չէին օգնի Հայաստանին: Բացի այդ, Զանգեզուրի ազատագրական պայքարի փորձը բոլշևիկներին համոզել էր, որ հայերը լավ կռվողներ են, եթե ունենան նվիրյալ հրամանատարներ: Եվ սա տրամաբանական է, որովհետև եթե Զանգեզուրի ժողովրդական վաշտերը կարող էին իրենց պաշտպանել, ապա Հայաստանի Հանրապետության 30-հազարանոց լավ զինված բանակը կարող էր կռվել և հաղթել, որովհետև նա կռվելու էր իր հայրենիքը պաշտպանելու համար: Ուրեմն, եթե ժողովուրդը մեկտեղվեր օջախը պաշտպանելու գաղափարի շուրջ, բոլշևիկա-քեմալական քաղցած և ցնցոտիների մեջ գտնվող բանակները պարտվելու էին: Այդ պատճառով էլ անհրաժեշտ էր հայկական բանակին ցույց տալ, որ քեմալականներն ու բոլշևիկները միասին են հարձակվում Հայաստանի վրա: Բոլշևիկները լավ գիտեին, որ նման պրոպագանդան մեծապես ազդելու է հայոց բանակի մարտունակության վրա: Նրանք լավ գիտեին նաև, որ հայ ժողովուրդը դեռևս վերջնականապես չի թոթափել ռուսական կողմնորոշման դարավոր գերությունը և Թուրքիայի հարձակման դեպքում, եթե Եվրոպան նրան չօգնի, նա կրկին հույսը դնելու է Ռուսաստանի վրա: Նման պարագայում, եթե քեմալականները հարձակվեն բոլշևիկյան լոզունգներով, ապա այն գիտակցությունից, որ Հայաստանը մենակ է մնացել, բանակը կդասալքվի և չի կռվի: Այնպես որ, հաշվի էին առնված Հայաստանը չեզոքացնելու, պարտության մատնելու բոլոր գործոնները: Եվ բնավ պատահական չէ, որ այս մահավճիռ- եզրակացությունը: Մոսկվա ուղարկելուց երեք օր հետո՝ 1920թ. սեպտեմբերի 20-ին Բաքվում գտնվող ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամների ստորագրությամբ «Հույժ գաղտնի» հետևյալ հրահանգն է տրվում Հայաստանի կուսակցության բոլոր կազմակերպություններին. «Հայաստանի կոմունիստների (բոլշևիկների) կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցության բոլոր կազմակերպություններին թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոտիներում և հատկապես Կարսի գարնիզոն մեկնող բոլշևիկներին, անհատ զինվորների շրջանում և առանձին հավաքույթներում, եթե հնարավոր է նաև թռուցիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պատերազմի, հիմնական խնդիր դարձնելով. 1. Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի: 2. Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է և պայքարում է իր ազգային ազատության համար՝ ընդդեմ իմպե-

ռիալիզմի (Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի): 3. Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի նկատմամբ կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվտանգվի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում, ապա նաև Արևելքի խորհրդայնացումը: 4. Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի՝ արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը: Այս նպատակի համար պետք է. 1. Կազմալուծել հայկական կռվող բանակը բոլոր միջոցներով, այն է. ա) կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին: բ) ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը վերադառնան թիկունք: գ) չենթարկվել սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց: 2. Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասկյարը հեղափոխական ասկյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որևէ գործողություն պարտված երկրի վերաբերյալ, այլ կօժանդակի աշխատավոր հայ ժողովրդին ազատվելու իմպերիալիզմի գործակալ դաշնակցականների տիրապետությունից: 3.Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցականների տիրապետությունից ազատվելով Հայաստանն ընդմիշտ կկապվի Խորհրդային Ռուսաստանի հետ, վերջ կտրվի պատերազմին ու սովին, ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլիանա Ռուսաստանի հացով և մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործին»: Որ ՀԿ(բ)Կ Կենտկոմի հայ բոլշևիկներին հղած այս ազգադավ հրահանգը սերտորեն կապված է և բխում է Արևելքի ժողովուրդների պրոպագանդայի և գործողության խորհրդի նախագահության կողմից սեպտեմբերի 17-ին Բաքվում կազմված եզրակացությունից, կարծում ենք, որ կասկած չի հարուցում:

Սկզբից կայացավ Արևելքի ժողովուրդների համագումարը, որը որոշեց, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է պարտության մատնվի: Այնուհետև նրա հիմնադրույթների ոգով կազմվեց և Մոսկվայի հաստատմանն ուղարկվեց համաշխարհային հեղափոխության ուժերով Հայաստանը պարտության մատնելու ծրագիրը: Այս ծրագիրը շարունակությունը և ավարտական փուլն էր հանդիսանալու 1920թ. մայիսից Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականության: Առաջին հարվածը հասցվել էր օգոստոսի 10-ի պայմանագրով, որով օրինականացվեց Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի անեքսիան կարմիր բանակի կողմից: Փաստորեն, վճռական գործողություններից առաջ Հայաստանի Հանրապետությունն օղակվեց թշնամական ուժերով: Հայաստանի կառավարությունը, ստորագրելով օգոս-

տոսի 10-ի զինադադարը, տանուլ տվեց ոչ միայն ռազմաստրատեգիական, այլև հոգեբանական առումով: Բանն այն է, որ մինչ այդ էլ պարզվել էր, որ Հայաստանի կառավարությունը խուսափում է բոլշևիկների հետ առճակատումից: Դրա լավագույն վկայությունն է Դրոյի գլխավորած էքսպեդիցիոն կորպուսի անփառունակ նահանջը Ղարաբաղից և Զանգեզուրից: Պարզ է, որ նման պարտվողական հոգեբանությունը ազդելու էր բանակի և ժողովրդի մարտունակության վրա: Այդ բանը շատ լավ տեսնում էին թշնամիները և համոզված էին, որ իրենց ծրագրի իրագործման ճանապարհին լուրջ դժվարության չեն հանդիպի:

Հայաստանը պարտության մատնելու ծրագիրը Մոսկվա ուղարկելուց մի քանի օր հետո թուրքական էրզրումյան կորպուսը Ք. Կարաբեքիրի հրամանատարությամբ հարձակվեց Հայաստանի վրա: Քեմալականների արշավանքը ուղեկցվում էր կարմիր դրոշներով և հեղափոխական լոզունգներով:

Անշուշտ, ընթերցողին կհետաքրքրի նաև, թե Հայաստանի կառավարությունը տեղյա՞կ էր իր դեմ նյութվող դավերին: Նրանք ընդհանրապես գիտեին, որ բոլշևիկներն անհաշտ վերաբերմունք ունեն և չեն ցանկանում ճանաչել Հայաստանի Հանրապետության գոյությունը: 1920թ. սեպտեմբերի 25-ին Մոսկվայում Հայաստանի Հանրապետության ժամանակավոր դիվանագիտական ներկայացուցիչ Եղ. Եղիազարյանին հղած նամակում Տ. Բեկզադյանը, անդրադառնալով այդ հարցերին, նշում է. «...Սովետական զորքերը Դիլիջանի և Քարվանսարայի շրջանում, իսկ տաճկական զորքերը Օլթիի, Սարիղամիշի և Շահթահթի շրջանում շարունակում են իրենց անընդհատ հարձակումները մեր տարածքների վրա: Մեր բողոքներին Լեգրանից միշտ ստանում ենք մի պատասխան, որ կամ դրանք պատահական միջադեպեր են, կամ թե չէ նախահարձակը մենք ենք եղել և ոչ իրենք: Քարվանսարայի շրջանում դրանք ունեն մի ինչ-որ Վելիկանով հրամանատար, որը հասել է այնպիսի խելառության, որ մոռանալով բոլոր օրենքները՝ հայտարարում է մեր զորամասերի պետին, որ նա թողնի Հայաստանին պատկանող գյուղերը և հեռանա, հակառակ դեպքում խոստանալով բոլոր հայ գերիներին գնդակահարել: Մեր ընդհանուր կարծիքն է, որ այժմ արդեն Լեգրանն է ձգձգում իր Հայաստան գալը և միաժամանակ ինչ-որ դավադիր ծրագիր է իրագործում, օգակելով Հայաստանը ռուսական և տաճկական զորքերով, երբ նա (Հայաստանը – Կ.Ս.) ստիպված կլինի շնորհիվ իր նեղ կացության իր դեմ կռվողներից ողորմություն հայցել, ահա այդ պահին գնալ Հայաստան և առաջարկել իր բարեկամության պայմանները»: Տեսնո՞ւմ եք, թե Բեկզադյանը ինչպես է կռահել գալիք արհավիրքը: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ նա ծանոթ է եղել սեպտեմբերի 17-ի փաստաթղթի բովանդակությանը: Սակայն նամակի հետագա ընթերցումը ցույց է տալիս, որ

նրան թվում է, թե Մոսկվան այդ դավադիր ծրագրին տեղյակ չէ, և որ այդ ճանապարհով Հայաստանի պարտությանն են ձգտում Անդրկովկասի բոլշևիկները և Լեգրանը: «Մենք ենթադրում ենք,– իր միտքն է շարունակում Տ. Բեկզադյանը,– որ կենտրոնը տեղյակ չի այդ դավադիր ծրագրին և հազիվ թե նրան ստույգ տեղեկություններ են տրվում... Ինչքան Չիչերինի տոնը մեղմ է, թեկուզ և թվում է, թե այդ մեղմությունն էլ արհեստական է, այնքան նրա այստեղի ներկայացուցիչների տոնը, մեծի թե փոքրի, ռուսի թե հայի, շատ է խրոխտ, պահանջկոտ, կտրուկ և ագրեսիվ»: Հոկտեմբերի 20-ին վարչապետ Հ. Օհանջանյանին հղած պատասխան նամակում Եղ. Եղիազարյանը-, անդրադառնալով Բեկզադյանի այն հարցադրմանը, որ Մոսկվան տեղյակ չէ Հայաստանի դեմ նյութվող դավերին, նշում է. «Ինչպես երևում է, Ձեզ մոտ այդտեղ մտածում են, որ Հայաստանի սահմանների վրա սովետական զորքերի կողմից կատարվող հարձակումները տեղական իշխանությունների կամ թե զինվորական հրամանատարության ձեռքի գործն է: Դա ամբողջապես սխալմունք է: Ամեն ինչ արվում է կենտրոնի ցուցումով»: Այս նամակով Եղիազարյանը հայտնում է նաև, որ Թուրքիայի հարձակումից հետո ինքը հանդիպել է Կարախանի հետ, որը կրկնել է իր կառավարության նախկին պահանջը՝ թույլ տալ անմիջական կապ հաստատել քեմալականների հետ Անտանտի դեմ կռվելու համար: Չնայած այդ ամենին, Հայաստանի կառավարությունը ապարդյուն ջանքեր է գործադրում Մոսկվային համոզելու, որ պանթուրքիզմի հետ բարեկամությունը սխալ է և հեռանկարային չէ հենց Ռուսաստանի շահերի տեսանկյունից (այսօր էլ այս հոգեբանությունից զերծ չեն մեր այն գործիչները, որոնք կաշվից դուրս են գալիս Մոսկվային բացատրելու, թե որն է իր շահը): Հայաստանի կառավարության բռնած նման դիրքը ժողովրդին փորձով համոզում էր, որ կառավարությունը խուսափում է կարմիր բանակի հետ զինաբախումից: Առանց այն էլ մենք տեսանք, որ բոլշևիկները ամեն միջոցի դիմում էին հայկական բանակը դասալքելու համար, որպեսզի համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում նա չխաղա այդ դերը, ինչը որ Արևմուտքում խաղաց Լեհաստանը: Որպեսզի պատմությունը չկրկնվեր, մեծ աշխատանք կատարվեց Հայաստանի դիվանագիտական չեզոքացման ուղղությամբ: Հաջողվեց ապահովել եվրոպական պետությունների և հատկապես Անգլիայի չեզոքությունը թուրք-հայկական պատերազմի շրջանում: Անգլիային հարկավոր էր Արևելքում իր կորցրած հեղինակությունը վերականգնել: Սևրի պայմանագիրը ստորագրելուց հետո մուսուլմանական երկրներում հակաանգլիական մեծ շարժում էր սկսվել Թուրքիայի ամբողջականությունը պաշտպանելու նպատակով: Որ արևմտյան պետությունները հակված չէին հայ ժողովրդի շահերը պաշտպանելու, պարզվել էր դեռևս Սևրի պայ-

մանագիրը ստորագրելուց առաջ, երբ ֆրանսիական զորքերը լուռ վկաները դարձան հայերի կոտորածին Կիլիկիայում: Չնայած դրան և այն բանին, որ Անդրկովկասում ևս 1918-20թթ. Անգլիան վարում էր հակահայկական քաղաքականություն, բայց և այնպես Հայաստանի կառավարությունը հույս էր կապում Սևրի պայմանագրի իրագործման հետ և կարծում էր, որ այդ գործում Անտանտի պետությունները կօգնեին իրեն: Հույսը սեփական ուժերի վրա դնելու և իրապաշտ քաղաքականություն վարելու ձայները նվաղում էին հակաթուրքական աղմուկ-աղաղակում: Բոլշևիկ գործիչները շատ լավ տեսնում էին, որ իրենց ծրագրերը իրագործվելու էին, որովհետև, կանգնելով կատարված փաստի առաջ, Հայաստանի կառավարությունը ստիպված է լինելու ընդունելու իրենց «միջնորդությունը»: Այդ պատճառով էլ նրանք շարունակում էին դիվանագիտական խաղը Հայաստանի հետ՝ իրենց ծրագրերը թաքցնելով բարեհաճ բառերով, ինչը և հույս էր ներշնչում, որ Մոսկվան միակարծիք չէ Հայաստանի անկախության հարցում: Ահա թե այդ մասին 1920թ. հոկտեմբերի 25-ին Տ. Բեկզադյանը ինչ է հայտնում Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Ս. Հարությունյանին. «Շանթի տպավորություններից և նրա ունեցած բանակցություններից պարզվեց, որ այնքան էլ ճիշտ չէր մեր այն ընդունված տեսակետը, որ իբր սովետական կենտրոնը բարյացակամ վերաբերմունք ունի դեպի Հայաստանի Հանրապետությունը: Երևում է, որ այս հարցում սովետական կենտրոնը միակարծիք չէ... Լենինը, Չիչերինը, Կարախանը բարյացակամ վերաբերմունք ունեն դեպի մեր դատը և Հայաստանի անկախությունը, Տրոցկին, գլուխ անցած զինվորական ուժերի, դեմ է թե անկախ Հայաստանի և թե անկախ Վրաստանի գոյությանը: ...Թե այդ տեսակետներից որին է կողմնակից Լեգրանը, այժմ մի քիչ դժվար է որոշել: Սակայն ուշագրավ է հետևյալ հանգամանքը: Շանթի Հայաստան վերադառնալուց հետո պետք էր ենթադրել, որ Լեգրանն էլ անմիջապես կտեղափոխվի Հայաստան, մեր կառավարության հետ վերջնական համաձայնության գալու նպատակով: Լեգրանի Հայաստան գալը նախ հետաձգվեց Բաքվում Արևելքի ժողովուրդների համագումարին մասնակցելու պատրվակով, ի դեպ այդ համագումարի արդյունքն այն եղավ, որ մինչ այդ ենթադրական և ոչ այնքան պարզ հարաբերությունները բոլշևիկների և Քեմալի միջև կոնկրետ ձև ստացան: Այսօր արդեն մենք կանգնած ենք տաճկա-բոլշևիկյան այդ ռեակցիոն բլոկի առաջ... Տաճկական առաջխաղացման հետ պետք է կապել Լեգրանի հետագա ձգձգումները... Մեր դրությունը շատ վտանգավոր կլինի, եթե տաճիկների հետ միասին քաղաքական բարդություններ առաջանան մեր և Սովետական Ռուսաստանի միջև... Պետք է նկատի ունենալ, որ մեր ժողովրդի և բանակի դիմադրության թափը կկոտրվի, եթե Սովետական Ռուսաստանը հայտարարի, որ մեզ հետ

գտնվում է պատերազմական դրության մեջ»: Այս նամակը գրվել է Կարսի անկումից ընդամենը հինգ օր առաջ: Բեկզադյանը դեռևս տեղյակ չէր, որ բանակի և ժողովրդի դիմադրական ոգին արդեն կոտրվել էր հենց այդ պատճառով: Կոտրվել էր նաև այն պատճառով, որ կառավարությունը հայրենիքի համար այդ ճակատագրական պահին փոխանակ զորքի ու ժողովրդի մարտունակությունն ապահովելը, ավելի շատ զբաղված էր Անտանտի և Ռուսաստանի հետ բանակցություններ վարելով: Մոռանալով և՛ իր ժողովրդի պատմության դասերը, և՛ Խրիմյան Հայրիկի՝ «սեփական ուժերին ապավինելու» հայրական պատգամները, և՛ 1918թ. Հայաստանի Հանրապետության ստեղծման փորձը, և՛, վերջապես, աչքաթող անելով այն կարևոր հանգամանքը, թե իրենց աչքի առաջ ինչպես էր մարտնչում Զանգեզուրի հերոսական ժողովուրդը:

Մեր այնօրյա քաղաքական գործիչները և նրանց ինչ-որ տեղ ձայնակցող պատմաբանները պնդում են, որ Հայաստանը պարտվեց, որովհետև ուժերը անհավասար էին: Առաջինների մոտ դա միջոց է սեփական սխալներն ու մոլորությունն արդարացնելու, իսկ երկրորդները պարզապես լավ տեղյակ չեն իրադարձություններին: Խնդիրն այն է, որ հայկական բանակը պատերազմի դաշտում չի պարտվել: Նա պարզապես չի կռվել և կրել է բարոյական պարտություն: Չի կռվել, որովհետև իրենից ներկայացնում էր տարբեր կողմ տրամադրված մարդկանց հավաքատեղի՝ զինվորական հանդերձանքով: Օտար ուժերին ապավինելու այն կործանարար հոգեբանությունը, որը տիրում էր հանրապետությունում, նույնությամբ արտացոլվում էր բանակում: Հայկական բանակում տիրող դասալքության տրամադրվածությունը անպաշտպան դարձրեց նաև Կարսի դժվարամատչ ամրոցը: Կարսի դատական քննիչ կոմունիստ Արամ Եսայանը վկայում է, որ «մինչև թուրքերի մուտքը, հայկական զորամասերում մտցվել էր այն համոզմունքը, որ քաղաքի վրա են հարձակվում բոլշևիկյան-թուրքական զորամասերը, որի հետևանքը եղավ այն, որ նրանք քաղաք մտան առանց որևէ դիմադրության»: Կարսի անկումից հետո հայրենիքը պաշտպանելու կոչված բանակը առանց կրակոցի փախչում է Ալեքսանդրապոլ: Նոյեմբերի 7-ին թուրքական զորքերը մտան Ալեքսանդրապոլ և տեղի բոլշևիկյան կազմակերպության ուժերով ծնունդ տվեցին Ալեքսանդրապոլի հեղկոմին: Վերջինս, որպես հերթական ամոթ ու խայտառակություն հայ բոլշևիկների, երկու ամիս շարունակ դարձավ քեմալականների ձայնափողը: Նրանք Մոսկվա ու Բաքու հղած իրենց բազմաթիվ գրություններում ապացուցում էին, որ նրանց հարձակումը ուղղված է ոչ թե հայ ժողովրդի, այլ դաշնակցության դեմ, այսինքն՝ անում էին այն, ինչը ծրագրված էր սեպտեմբերի 17-ի փաստաթղթե-

ղով: Այդ փաստաթղթի ոգուց էր բխում նաև բոլշևիկյան մամուլի աղմուկն այն մասին, որ Հայաստանն ու հայ ժողովուրդը կրկին կանգնած են թուրքական վտանգի առաջ, և որ հարկավոր է ջարդերը կանխել ու փրկել կործանման եզրին կանգնած հայ ժողովրդին: Չնայած բոլշևիկյան պրոպագանդայի գործադրած ջանքերին, որպեսզի թաքցվի իր մասնակցությունը Հայաստանի դեմ սկսված ագրեսիային, բայց և այնպես ժողովուրդը տեղյակ էր, թե իրականում ինչ էր կատարվում: 1920թ. հոկտեմբերի 6-ին Թիֆլիսում կայացած վրացահայության բազմահազարանոց միտինգի բանաձևում ասված է. «Տաճկաբոլշևիկյան ռեակցիոն բլոկի նոր արշավանքը ընդդեմ Հայաստանի և հայ աշխատավորության, խորապես ցնցել է Թիֆլիսի ու Վրաստանի ողջ հայությանը, որն անկարող է լուռ հանդիսատեսի դերում մնալ այն ժամանակ, երբ նրա եղբայրներն արյունաքամ են լինում... Մենք պատրաստ ենք կատարելու մեր պարտքը հայրենիքի հանդեպ նրա առաջին իսկ պահանջի դեպքում: Կորչի՛ թուրք-թաթար-բոլշևիկյան ռեակցիան: Կեցցե՛ն անկախ Հայաստանն ու Վրաստանը»: Նույն օրը Թիֆլիսում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Ստարկը իր ճառում հետևյալ բացատրությունն է տալիս Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին. «Մեզ համար աշխատավոր հայ ժողովրդի շահերն ու երջանկությունը թանկ են այնպես, ինչպես Հնդկաստանի, Պարսկաստանի և մյուս երկրների աշխատավորների շահերը: Սակայն Հայաստանում կառավարող կուսակցությունը նախընտրում է լինել իմպերիալիստների կողմում, որոնք ցանկանում են Հայաստանը զենք դարձնել իրենց ռեակցիոն քաղաքականության ձեռքում: Հայ ժողովուրդը վերջապես պետք է անի իր ընտրությունը, նա պետք է ասի, ցանկանու՞մ է գնալ Հեղափոխական Ռուսաստանի հետ, թե՞ նախընտրում է մնալ Անտանտի ձեռքին որպես զենք և խաղալ այն դերը, որն Արևմուտքում խաղում է Լեհաստանը»: Կարդալով բոլշևիկյան գործիչների այս և նման համաշխարհային մարմաջները, թվում է, թե սրանց բոլորին մի մայր է ծնել, և այդ մոր ամբողջ դժբախտությունն այն էր, որ իր նեղճակատ որդիների ծավալած գործունեությունը համաշխարհային ողբերգությամբ է ավարտվելու: Այդ բանը պարզ էր նաև 1920թ. Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների փորձով: Ինչպե՞ս կարելի էր հանուն հայ աշխատավորության երջանկության ոչնչացնել նրա ազգային պետականությունը: Սա ինքնընստինքյան անբարոյականություն էր, որը պետք է ունենար իր տրամաբանական շարունակությունը: Կամ թե ովքե՞ր էին այն ստարկները, որոնք խոսում էին հայ ժողովրդի երջանկության մասին:

Այժմ գանք սեպտեմբերի 17-ի փաստաթղթի վերջին մասին գործնական կերպարանք տալու քայլերին: Այսինքն՝ այն մասին, թե ինչպես Հայաստանի պարտությունից հետո Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Չիչերինի միջոցով դիմեց կողմերին միջնորդության պահանջով: Եվ թե ինչպես ծնվեց այն լեգենդը, թե Խորհրդային Ռուսաստանը հայ ժողովրդին փրկել է վերջնական կործանումից:1920թ. հոկտեմբերի 14-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն հաստատում է Հայաստանի վերաբերյալ Չիչերինի արած հետևյալ երեք առաջարկությունները. 1. Համաձայնել Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու անհրաժեշտության մասին Հայաստանի ԿԿ Կենտկոմի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի կարծիքի հետ: 2. Նրան քաղաքական օգնություն ցույց տալ թուրքերի հետագա առաջխաղացումը կասեցնելու համար: 3. Պաշտպանել նոր սովետական կառավարությունը: Պարզ երևում է, որ քաղբյուրոն հավանություն է տվել և փաստորեն վավերացրել է Արևելքի ժողովուրդների գործադիր մարմնի նախագահության սեպտեմբերի 17-ի եզրակացության հիմնադրույթները: Քանի որ վերջինս կազմվել էր խիստ գաղտնի և հրապարակման ենթակա չէր, ուստի միանգամայն հասկանալի է, թե ինչու քաղբյուրոյի որոշման մեջ ոչ մի խոսք չկար այդ փաստաթղթի վերաբերյալ: Չնայած այն բանին, որ քաղբյուրոյի որոշումն ինքնընստինքյան խոսում է մեր ասածի օգտին, բայց և այնպես անհրաժեշտություն ունի լրացուցիչ բացատրության, որպեսզի կապը այդ երկու փաստաթղթերի միջև ավելի պարզ լինի: Մինչև հոկտեմբերի 14-ի որոշումը կայացնելը, նախորդ օրը Մոսկվայում կայացել էր խորհրդակցություն քաղբյուրոյի անդամների և Բաքվի Արևելքի ժողովուրդների համագումարի 27 պատգամավորների մասնակցությամբ: Այս խորհրդակցության արդյունքների հիման վրա ընդունվել էր հոկտեմբերի 14-ի որոշումը: Ուրեմն, Մոսկվան Հայաստանի Հանրապետության դատավճիռը վավերացրեց հոկտեմբերի 14-ին: Այդ բանի վկայությունն է նաև այն, որ քեմալականները Մոսկվայի հետ նախնական պայմանավորվածության համաձայն Սարիղամիշի գիծը գրավելուց հետո հոկտեմբերի 1-ից դադարեցրել էին հետագա հարձակումը: Ինչի՞ էին սպասում նրանք: Իմ կարծիքով, Անկարան սպասում էր իր դաշնակցի վերջնական որոշմանը, որից հետո միայն քեմալական զորքերը հոկտեմբերի վերջերից սկսեցին հարձակումը ամբողջ ճակատով: Կարծում եմ նաև, որ սեպտեմբերի 17-ից հոկտեմբերի 14-ը ընկած ժամանակամիջոցում կողմերի միջև լրացուցիչ համաձայնություն է կայացվել Հայաստանի Հանրապետության տարածքների վերաբերյալ:

Քաղբյուրոյի այս որոշման նախօրեին Լեգրանը վերջապես եկավ Երևան, և հոկտեմբերի 28-ին Հայաստանի կառավարության հետ ստորագրվեց մի պայմանագրի նախագիծ, որով Ռուսաստանը ճանաչում էր Հա-

յաստանի Հանրապետության անկախությունը: Բոլշևիկյան դիվանագիտության այս քայլը պարզապես ծաղր էր Հայաստանի անկախության հանդեպ: Ռուսաստանը հինգ ամիս շարունակ քաշքշեց բանակցությունները և պայմանագիրը ստորագրեց միայն այն ժամանակ, երբ պարզից էլ պարզ էր, որ Հայաստանը պարտված է, և իրենց ծրագիրը հաջողությամբ իրագործվում է: Հոկտեմբերի 28-ին ստորագրված այս պայմանագրի դիվանագիտական խաբկանքն այն էր, որ դրանով Ռուսաստանը ցույց էր տալիս, թե ինքը ոչինչ չունի Հայաստանի անկախության դեմ և հանգստացնում էր վերջինիս կառավարությանը: Նույնիսկ խոստանալով, որ Ռուսաստանը կմիջնորդի, որպեսզի Թուրքիան իր զորքերը ետ քաշի 1914թ. ռուս-թուրքական սահմանագիծը: Կարծում եմ, որ այսքանը բավական է պատկերացում կազմելու, թե ի՞նչ նպատակով էր ստորագրված հոկտեմբերի 28-ի փաստաթուղթը: Մնում է ավելացնենք, որ այն ուներ երկու հավելված, որոնցում հիմնականում խոսվում էր Հայաստանի վրայով Ռուսաստանի և Թուրքիայի միջև հաղորդակցական կապի, ճանապարհների, երկաթուղով զորք և զենք տեղափոխելու և ռուս-թուրքական դաշնակցային կապերն ապահովող մյուս գործոնների մասին, որոնք գալիս են ապացուցելու, որ Հայաստանի տարածքը դառնալու էր կապող օղակ բոլշևիկների և քեմալականների միջև: Վերջապես այս պայմանագրի մասին լուրջ չի կարելի խոսել (ինչը արել է մեր պատմագրությունը), որովհետև այն ամբողջապես հակասում էր քաղբյուրոյի հոկտեմբերի 14-ի Հայաստանի մասին ընդունած որոշմանը, որը և իրագործվեց կյանքում: Քաղբյուրոյի այս որոշումից հետո էր, որ Մոսկվայում Հայաստանի ներկայացուցիչ Եղիազարյանը հոկտեմբերի 20-ին վարչապետ Օհանջանյանին ահազանգում էր. «**Հնարավոր է, որ մուսուլմանների ճնշման տակ հայերի դեմ ակտիվ ելույթներն ավելի ուժեղանան, դրան պետք է պատրաստ լինել: Հարձակումը Հայաստանի վրա թելադրվում է նաև Կովկասի նկատմամբ ընդհանուր քաղաքականությամբ... Իրենց կարծիքով Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը պետք է հանդիսանա մոտ ապագայի գործ: Մասնավորապես Հայաստանի նկատմամբ հնարավոր է շատ ակտիվ ռազմական ելույթ ամենամոտ ժամանակներում**»: Այս նամակով տեղեկացվում է նաև, որ Էնվեր փաշան գտնվում է Մոսկվայում և թե բոլշևիկներն ինչպիսի փառահեղ ընդունելություններ ու ճաշկերույթներ են կազմակերպում թուրք գործիչների պատվին: Թե ինչպես Մոսկվան թուրք և թաթար գործիչների համար դարձել է քաղաքական Մեքքա: Խոսվում է Էնվերին և Քեմալին հաշտեցնելու նպատակով բոլշևիկների գործադրած ջանքերի մասին: Նաև այն մասին, որ սովետական կառավարությունը Թուրքեստանում և Ադրբեջանում ստեղծում է հատուկ զորաբանակ՝ Էնվերի հրամանատարության տակ դնելու համար:

Թուրքական զորքերի՝ Ալեքսանդրապոլ մտնելուց հետո, երբ պարզ դարձավ, որ Հայաստանը պարտված է, իսկ եվրոպական պետությունները մատը մատին չեն տալիս, վերջինիս կառավարությունը դիմեց Մոսկվային՝ միջնորդելու, որ արյունահեղությունը դադարեցվի: Նոյեմբերի 11-ին Չիչերինը Թուրքիայի և Հայաստանի միջև պատերազմը դադարեցնելու «միջնորդությամբ» դիմեց կողմերին և այն իրագործելու նպատակով գործողությունների վայր ուղարկեց իր լիազոր ներկայացուցիչ Բ. Մդիվանուն: Նույնիսկ դրանից հետո կարմիր բանակի զորամասերը Նախիջևանից շարունակում էին հարձակումը Հայաստանի Հանրապետության վրա: 1920թ. նոյեմբերի 13-ին Երևանում գտնվող Ռուսաստանի ներկայացուցչության անդամ Սիլինը Լեգրանին հեռագրում է. «**Նախիջևանից Շարուրի վրա են հարձակվել սովետական զորքերը գնդացիրներով և երեք թնդանոթով: Ջոկատը խախտել է օգոստոսի 10-ի համաձայնագիրը և վտանգում է մեր միջնորդությունը: Անհրաժեշտ է դադարեցնել այդ հարձակումը... Հայերը մեզ հարցնում են, թե դա չի՞ նշանակում թուրքերի հետ միասնական գործողություններ**»: Հենց այդ օրերին բոլշևիկյան մամուլը աղմկում էր, որ Ռուսաստանը ցանկանում է կանխել հայ ժողովրդի գլխին կախված արհավիրքը: Այս ամբողջ աղմուկը հետապնդում էր հասարակական կարծիքը մոլորեցնելու նպատակ: Նույն նպատակով նոյեմբերի 11-ին Չիչերինը Լոնդոնում իրենց առևտրական ներկայացուցիչ Կրասինին հեռագրում է. «Սովետական Ռուսաստանը Թուրքիային և Հայաստանին առաջարկել է իր միջնորդությունը: Թուրքական ազգայնականների վերջին հաջողություններից հետո Հայաստանի վիճակը օրհասական է, և Ռուսաստանը երբեք չի ցանկացել զավթել Նախիջևանը, Ջուլֆան, Զանգեզուրը և Ղարաբաղը: Ռուսական բանակը գրավել է այդ վիճելի տարածքները մինչև հարցի լուծումը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Այդ պետություններից յուրաքանչյուրը հայտարարում է իր իրավունքը այդ տարածքների վրա: Նախիջևանում ազգաբնակչությունը մուսուլմանական է, Զանգեզուրում՝ խառը, ինչը որ բարդացնում է այդ հարցը»: Տեսնու՞մ եք, թե ինչպես է քաղաքական իրադարձությունները գլխիվայր շուռ տալիս Չիչերինը և ինչպիսի անմեղ բացատրություններ է տալիս կարմիր բանակի կողմից Հայաստանի տարածքների գրավման փաստը: Չնայած նա նշում է, որ այդ տարածքները վիճելի են Ադրբեջանի և Հայաստանի միջև, բայց և այնպես հեռագրի վերջին տողերից երևում է, որ այդ տարածքները օկուպացվել են Ադրբեջանին հանձնելու համար: Այդ է պատճառը, որ երբ նա անդրադառնում է այդ տարածքների

բնակչության էթնիկական կազմին, ամբողջությամբ կեղծում է իրականությունը: Նախ «մոռանում է» Լեռնային Ղարաբաղը, որովհետև նրա բնակչության 95 տոկոսը հայեր էին: Այնուհետև նշում է, որ Նախիջևանի ազգաբնակչությունը մուսուլմանական է, իսկ Զանգեզուրինը՝ խառը: Այս կեղծիքը Չիչերինը հայտնում է Կրասինին, որպեսզի նրա միջոցով այն տարածվի Եվրոպայի քաղաքական շրջաններում, և արդարացվի բոլշևիկների քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Չնայած դրան, խորհրդային կողմը շարունակում էր մոլորեցնել Հայաստանի կառավարությանը, որ եթե նա համաձայնվի Հայաստանի խորհրդայնացմանը, իրենք կստիպեն, որ թուրքերը ետ քաշվեն 1914թ. սահմանից այն կողմ: Այդ միտքը հատկապես ընդգծվեց նոյեմբերի 19-ին, երբ Երևանում Հայաստանի ղեկավարները հանդիպեցին Լեգրանի և Մդիվանու հետ: Սա Հայաստանում զարգացող քաղաքական իրադարձությունների վերջին արարողության սկիզբն էր, որի նպատակն էր Հայաստանի մնացյալ մասի խորհրդայնացումը առանց դիմադրության: Այս հանգամանքը բոլշևիկներին անհրաժեշտ էր, որպեսզի աշխարհին ցույց տան, թե իրենք ոչ մի կապ չունեն քեմալականների հարձակման հետ և որ ոչ թե բռնակցում են Հայաստանի մնացած մասը, այլ «օգնության եղբայրական ձեռք են մեկնում կործանման եզրին հասած հայ ժողովրդին»: Այս և նման խոստումներն իրենց ազդեցությունն ունեցան անելանելի վիճակի մեջ ընկած Հայաստանի կառավարության վրա: Հայ քաղաքական գործիչների մի զգալի մասը, որն ի սկզբանե խուսափում էր Ռուսաստանի հետ առճակատումից, հավատաց և կառչեց այս խոստումներից: Հենց այդ խումբն էլ (Վրացյան, Տերտերյան, Դրո և այլք) նոյեմբերի 23-ին կազմեցին միջանկյալ կառավարություն, որը սկսեց երկկողմ բանակցությունները քեմալականների և բոլշևիկների հետ: Այդ բանակցությունները շարունակվում էին, երբ նոյեմբերի 29-ին «Հայաստանի անպաշտպան մնացած հյուսիսային սահմաններից», առանց որևէ դիմադրության հանդիպելու, Քարվանսարա (Իջևան) են մտնում կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի զորաջոկատները: Սրանք Կյուրիշկոյի ղեկավարած այն զորքերի մնացուկներն էին, որոնք պարտված հեռացել էին Զանգեզուրից Քարվանսարա մտնելուց ութ օր առաջ: Քարվանսարայում հայկական սահմանապահ զինվորներին ձերբակալելուց հետո Կյուրիշկոն կարգադրեց մի քանի ոչխար մորթել և հարիսա եփել: Նա տանտիրոջ իրավունքով այդ հարիսայով հյուրասիրեց Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին՝ նրան հասկացնելով, որ դրության տերը ինքն է: Այնուհետև կարմիր զորամասերը անցան Դիլիջան, այնտեղից՝ Ղարաքիլիսա (Վանաձոր) և կանգ առան, որովհետև հրաման ունեին հայ-թուրքական զինադադարի գիծը չանցնել: Ղարաքիլիսան էր զի-

նադադարի գիծը: Իսկ Նալբանդ կայարանից մինչև Համզաչիման հայ-թուրքական չեզոք գոտի էր, որը փաստորեն ենթարկվում էր քեմալականներին: Ահա այսպես երկու եղբայրական բանակները հանդիպեցին: Սա այն գիծն էր, որով շատ էր անհանգստանում Օրջոնիկիձեն: Մինչև կարմիր բանակի Հայաստան մտնելը նրան անընդհատ հետաքրքրում էր այն հարցը, թե թուրքերը չե՞ն գրավել Ղարաքիլիսան: Հանգամանք, որը հուշում է, որ թուրքական զորքերը այդ գծից այն կողմ չպետք է անցնեին: Այդպես էլ եղել էր: Քեմալականները չմտան Ղարաքիլիսա՝ թեկուզև դրա հնարավորությունը ունեին և բավարարվեցին նրանով, որ Ղարաքիլիսայում ունենան զինվորական հանձնաժողով՝ կապիտան Թեֆիկ բեյի գլխավորությամբ, որը և ողջունեց բոլշևիկյան զորամասերի մուտքը քաղաք: Կարմիր բանակի կողմից Քարվանսարա-Դիլիջան-Ղարաքիլիսա գիծը գրավելուց հետո Հայաստանի կառավարությունը կանգնեց կատարված փաստի առաջ: Նոյեմբերի 30-ին Լեգրանը Վրացյանին և Դրոյին հայտնում է, որ ՌԿ(բ)Կ Կենտկոմը որոշել է Հայաստանում մտցնել խորհրդային կարգեր: Վրացյանի վկայությամբ՝ իրենց բողոքին Լեգրանը պատասխանում է, որ այդ քայլն անխուսափելի էր, քանի որ իրենք համառում ու ձգձգում էին: Դեկտեմբերի 1-ին Լեգրանը Հայաստանի կառավարությանն է ներկայացնում Հայաստանի խորհրդայնացման գրավոր վերջնագիրը: Նույն գիշերը, երբ կառավարությունը քննարկում էր այդ վերջնագիրը, Ալեքսանդրապոլից Խատիսյանը հեռախոսով հայտնում է, որ տաճիկները ներկայացրել են շատ ծանր հաշտության պայմաններ և առաջարկում են քառասունութ ժամվա ընթացքում ստորագրել այն: Նշելով նաև, որ Կարաբեքիրը շատ լավ տեղյակ է Երևանում կատարվող քաղաքական անցուդարձին: Այս իրադարձությունները ևս ապացուցում են, որ սկզբից մինչև վերջ քեմալականների և բոլշևիկների գործողությունները համաձայնեցված էին: Բոլշևիկները Երևանում էին վերջնագիր ներկայացնում, քեմալականները՝ Ալեքսանդրապոլում: Փաստորեն, Երևանից Լեգրանն էր ստիպում, որ Ալեքսանդրապոլում Խատիսյանը ստորագրի պայմանագիրը, իսկ Ալեքսանդրապոլից՝ Կարաբեքիրը, որ Երևանի կառավարությունը կապիտուլացվի բոլշևիկների առաջ: Նրանք հասան իրենց նպատակին: 1920թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրվեց կապիտուլյացիոն ակտը և իշխանությունը հանձնվեց բոլշևիկներին: Նոր կառավարության ցուցումով Ալեքսանդրապոլում ստորագրվեց նույնանուն պայմանագիրը քեմալականների հետ: Փաստերը ցույց են տալիս, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրվել է բոլշևիկների կամեցողությամբ: Այդ մասին վկայում են նաև Խատիսյանն ու Վրացյանը: Խատիսյանի պատվիրակությունը Ալեքսանդրապոլում պայմանագիրը ստորագրելուց

հետո եկավ Երևան, կատարվածի մասին զեկուցեց Հայհեղկոմին ու Լեգրանին և վերջինիս ցուցումով դեկտեմբերի 6-ին անցագիր ստացավ անարգել արտասահման անցնելու: Այդ այն դեպքում, երբ նրա քսան գործընկերները դեկտեմբերի 19-ին ձերբակալեցվին Դիլիջանում և բերվեցին Երևանի բանտ: Պարզ է, որ բոլշևիկները նման վերաբերմունք ցույց տվեցին Խատիսյանին և պատվիրակության մյուս անդամներին, որովհետև նրանք ստորագրել էին պայմանագիրը: Ճիշտ է, բոլշևիկյան պրոպագանդան Ալեքսանդրապոլի պայմանագիրը որակեց որպես «հայ ժողովրդի շահերը դավաճանելու եզակի օրինակ», սակայն քեմալականների հետ Հայաստանի տարածքների «կազմավորման» գործում ամուր կանգնեց այդ պայմանագրի գծած տարածքների դիրքում: Պատահական չէ, որ Հայաստանի տարածքների հարցում 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական մոսկովյան պայմանագիրն ամբողջապես համընկնում էր Ալեքսանդրապոլի պայմանագրին: Հանգամանք, որը գալիս է ապացուցելու, որ տարածքների հարցը ևս կանխապես որոշված է եղել: Այդ մասին պարզորոշ ասել է Լենինը 1920թ. դեկտեմբերի 13-ին Հայհեղկոմի անդամներ Տեր-Գաբրիելյանին և Մռավյանին: Նա այդ հանդիպման ժամանակ ասել է, որ «Թուրքերի հետ բանակցություններ կսկսենք և երկաթուղին կազատենք»: Նշելով նաև, որ «Ձեր դժվարությունը այն է, որ համաշխարհային հեղափոխության ֆրոնտներից մեկը անցնում է Հայաստանի վրայով»: Բնականաբար հարց է ծագում, որ եթե չկար գաղտնի պայմանագիր և ըստ օգոստոսի 24-ի պայմանավորվածության թուրքական զորքերը պետք է հասնեին մինչև Սարիղամիշ, այդ դեպքում ինչո՞ւ էր Լենինն ասում, թե կազատենք Ալեքսանդրապոլը՝ մոռանալով, որ համանուն պայմանագրով Ալեքսանդրապոլը մնում էր Հայաստանին: Բայց նա այդ ասում էր, որովհետև հայ ժողովրդին պետք էր ցույց տալ, որ բոլշևիկները մի բան ազատում են «թուրքական զավթիչներից»: Նույնիսկ Ալեքսանդրապոլում թուրքական զորքի ժամանակավոր մնալը համաձայնեցված էր Մոսկվայի հետ, ինչի մասին պարզորոշ ասել է Լենինը. «...Բանակցություններ կսկսենք, երկաթուղին կազատենք»: Մոսկովյան պայմանագիրը ստորագրելուց հետո միայն Ռուսաստանի կառավարությունը Թուրքիայից պահանջեց զորքերը դուրս բերել Ալեքսանդրապոլից:

Այսպիսով, 1920թ. դեկտեմբերի 2-ին Երևանում և Ալեքսանդրապոլում ստորագրված պայմանագրերով ավարտվեց քաղաքական տրագիկոմեդիայի վերջին արարը: Պարտության էր մատնված Հայաստանի անկախ հանրապետությունը: Հիացած էին հայ ժողովրդի ազգային պետականությունը ոչնչացնողները: Մեկը մյուսին հաջորդում էին համաշխարհային հեղափոխության «ասպետների» հեռագրերը Երևան: Դրանց մեջ առանձնանում է համաշխարհային հեղափոխության առաջնորդի 1920թ. դեկտեմբերի 2-ի հեռագիրը, որը լավագույն ձևով հանրագումարում էր Հայաստանում կատարված իրադարձությունները. «...Ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական սովետական Հայաստանին: Ձեմ կասկածում, որ դուք կգործադրեք բոլոր ջանքերը՝ Հայաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի աշխատավորների միջև եղբայրական համերաշխություն հաստատելու համար»: Տեղին է ասելը՝ այսքանից հետո՞ էլ կասկածեիր: Դեկտեմբերի 4-ին «Պրավդա» թերթում առաջնորդին հավելեց նրա ամենասիրելի աշակերտը՝ Անդրկովկասի գործերը տնօրինող Ստալինը. «...Այսպես կոչված հայկական «պրոբլեմը», որի վրա գլուխ էին ջարդում իմպերիալիստական դիվանագիտության հին գայլերը, կարողացավ լուծել միայն սովետական իշխանությունը»: Այո, հին գայլերը չկարողացան լուծել, լուծեցին նորերը: Լուծեցին նորովի՝ ինտերնացիոնալի հնչյունների տակ Հայաստանը եղբայրաբար բաժանելով իրար մեջ: Իր դաշնակիցներին երրորդեց Քեմալը: Ահա թե 1922թ. մարտին ինչպես է կատարվածը Մեջլիսին ներկայացնում նա. «Այսպես կոչված Հայկական հարցը (Ստալինի բառերն են)... իր ամենաճիշտ լուծումը ստացավ Կարսի պայմանագրով»: Այս փաստերը, որոնք պատահական զուգադիպություններ չեն, ես չեմ բերում կույր ատելություն առաջացնելու համար: Ո՛չ և կրկին ո՛չ: Քաղաքականությունը զգացմունքների հետ կապ չունի, և ատելությունը ոչինչ չի տալիս: Պարզապես սա մեր պատմությունն է, մեր կենսագրությունը, որը պարտավոր ենք լավ իմանալ: Այսօրվա և վաղվա համար մենք պետք է լավ գիտենանք մեր անցած բարդ ու հակասական ճանապարհի մանրամասները: Պարտավոր ենք իմանալ, որ 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված ռուս-թուրքական բարեկամության պայմանագիրը արդյունքն ու հետևանքն էր քաղաքական այս կոմբինացիաների: Պայմանագիրը վավերացրեց այն բարեկամությունը, որը հաստատված էր բոլշևիկների ու քեմալականների միջև համաշխարհային հեղափոխության դրոշի տակ: Այս միտքը ընդգծել է Չիչերինը պայմանագիրը ստորագրելուց հետո կայացած մամուլի ասուլիսում: Այնպես որ, մինչև պայմանագրի ստորագրումը ամեն բան կանխորոշված էր: Դեռևս 1921թ. մարտի 4-ին Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի օրգան «Ժիզն նացիոնալնոստեյ» հանդեսում տպագրված «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» ընդարձակ հոդվածում մանրամասն տրված է, թե ինչո՞ւ է Հայաստանը բարձրացվել համաշխարհային հեղափոխության զոհասեղանին: Հոդվածի հեղինակ Ս. Կաչկովն ընդգծում է, որ «Հայաստանին ոչինչ չի մնում անել, քան հաշտվել ստեղծված դրության հետ և հանուն համաշխարհային հեղափոխության շահերի զոհաբերել թե

իր նախկին տերիտորիաները և թե այնտեղ մնացած իր ժողովրդին... Կարսի և Արդահանի մարզերը չպետք է կովախնձոր դառնան Հայաստանի և Թուրքիայի միջև: Հայկական կառավարության կողմից այդ տերիտորիաների գրավումը պետք է դիտել որպես իմպերիալիստական ակտ, քանի որ այդ տերիտորիաների բնակչության 67 տոկոսը կազմում են մուսուլմանները: Այդ իսկ պատճառով Հայաստանը ազգային ինքնորոշման սկզբունքով ոչ մի իրավունք չունի այդ տարածքների նկատմամբ որևէ պահանջ ներկայացնելու»: Ահա այսպես էին բոլշևիկները հասկացել ազգերի ինքնորոշման իրավունքը և մինչև այսօր էլ առաջնորդվում են այդ «սկզբունքով»: Եթե մեջբերումը համադրենք քեմալական գործիչների դրույթներին, ապա պարզ կտեսնենք, որ կարծիքների մեջ ոչ մի տարբերություն չկա: Կարծում եմ, որ բերված փաստերը բավարար են, որպեսզի ընթերցողը պարզ պատկերացում կազմի պանթուրքիզմի և բոլշևիզմի մասին: Նրանց նմանության և տարբերության մասին: Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքի մասին: Համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում բոլշևիզմի և պանթուրքիզմի կատարած հանցագործությունները մեզ այսօր պարտադրում են քաղաքականության մեջ շատ զգույշ ու սթափ լինել: Ձերծ մնալ քաղաքական մեծ տեղաշարժերի մեջ մեր ազգային հարցերի լուծման միամտությունն ունենալու գայթակղությունից: Այստեղ ևս մեզ ուղեցույց պետք է լինեն մեր պատմությունը և նրա դասերը: Բազմաթիվ անգամ է կրկնվել, որ մենք ոգևորվել ենք քաղաքական մեծ իրադարձություններով՝ կորցնելով իրապաշտությունը, մխրճվել ենք նրա հորձանուտը, իսկ հետո, երբ ամեն ինչ ետևում է մնում, և ունենում ենք ցավալի կորուստներ, սկսում ենք մեղադրել բոլորին և ամեն մեկին: Մոռանալով, որ կատարվածի համար նաև մենք ենք մեղավոր, որովհետև միշտ ուրիշներին քննադատելով ոչինչ չենք սովորել մեր պատմությունից: Ուրիշներին քննադատելով՝ ծածկել ենք մեր սխալները, դրանով իսկ հող նախապատրաստելով գալիք նույնանման սխալների համար: Այսպես եղավ նաև, երբ Թուրքիան պարտվեց Առաջին աշխարհամարտում: Այդ պահից սկսած Հայաստանի քաղաքական գործիչները մոռացան, թե ինչպիսի մեծ դժվարությամբ ձեռք բերվեց Հայաստանի անկախությունը: Անտեղի ոգևորությունը կորցրեց չափի և սեփական հնարավորությունների զգացողությունը, ինչը քաղաքականության մեջ միշտ էլ ծանր հետևանքներ է ունենում: Նրանք մոռացան, որ տեղի ունեցած իրադարձություններից առավելագույն շահը, որ ունեցավ հայ ժողովուրդը, այն էր, որ Հայաստանի տարածքներն ընդլայնվեցին, դառնալով շուրջ 60 հազար քառ. կիլոմետր: Փոխանակ այդ տարածքի վրա ամրապնդվելու, հզորանալու և հող նախապատրաստելու

հայոց պետականության հետագա զարգացման համար, նրանք գնացին «մեծ հույսի» իրականացման զգացմունքային ճանապարհով, որը և վերջացավ ունեցածի կորուստով: Այս հարցում հատկապես մեղքի իր բաժինն ունի հայ զգացմունքային մտավորականությունը, որը կազմում էր «Դաշնակցություն» կուսակցության կորիզը: Դաշնակցությունը, դառնալով կառավարող կուսակցություն, չկարողացավ միջպետական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ: Հայաստանի Հանրապետության պառլամենտը և կառավարությունը, հիմնական ուշադրությունը դարձնելով Փարիզում և Մոսկվայում վարվող բանակցություններին, չփորձեց և չհամաձայնեց բանակցությունների մեջ մտնել հարևան Թուրքիայի հետ: Ուրիշ հարց է, թե ինչով կավարտվեին բանակցությունները, բայց փաստ է, որ այն աններելի բացթողում էր: Մանավանդ, որ դրա համար հիմքեր կային. չէ՞ որ 1918թ. Թուրքիան ճանաչել է Հայաստանի անկախությունը: Ասել, թե նման գործընթացին դիմակայողներ չկային, սխալ կլինի: Սակայն ցանկությունները սեփական ուժերին համադրելու և պետական սթափության կոչող ձայները խեղդվում էին հակաթուրքական համընդհանուր աղմուկ-աղաղակում: Ամենացավալին այն էր, որ նման գործիչները որակվում էին որպես թուրքամետներ և հայոց պահանջատիրոջությունից հրաժարվողներ: Հարկ է նկատել, որ զգացմունքներով առաջնորդվողները հոխորտացին, հայհոյեցին և հրապարակն անմիջապես դատարկեցին, երբ լսեցին թուրքական թնդանոթների ավերիչ համազարկերը: Չկարծեք, թե նրանք գնացին ռազմաճակատ հայրենիքը պաշտպանելու: Ոչ, այդպիսիները կոչված չեն հայրենի հողի համար արյուն թափելու: Դրանք օտար ուժերին ապավինող ազգային գազրախոսներն են, որոնք միայն ապակողմնորոշում են ժողովրդին: Նրանց կոչումն է անընդհատ ժողովրդի չսպիացած վերքերի քչփորումը և հիշեցումը, որ թուրքի հարևանությամբ հնարավոր չէ ապրել: Այստեղից է ակունքվում փոքրի, խեղճի և վերջապես զոհի կեցվածքի հոգեբանական այն բարդույթը, որը և դառնում է օտար ուժերին ապավինելու մեր դժբախտությունը: Այս հոգեվիճակն էր պատճառը Հայաստանի Հանրապետության անփառունակ պարտության: Մենք պարտավոր ենք ասելու նաև մեր սխալները: Նշելու, որ եթե չլիներ այդ կործանարար հոգեբանությունը, հայկական բանակը և հայ ժողովուրդը կկռվեին իրենց անկախությունը մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանելու համար: Մենք պարտավոր ենք նշել, որ այդ անփառունակ պարտությունը 20-րդ դարի մեր մեծագույն ողբերգությունն էր, որովհետև հայ ժողովուրդը կորցրեց դարերով երազած և մեծագույն դժվարությամբ ձեռք բերած ազգային պետականությունը: Միայն պարտությունից հետո, երբ հայ քաղաքական գործիչները պարզ տեսան, որ իրենք երազատեսու-

թյամբ են զբաղվել՝ հույսը դնելով ուրիշների վրա, սթափվեցին և, ինչպես միշտ, խելոքացան ետին թվով: Ահա թե ինչ է գրում այդ մասին դաշնակցության պաշտոնաթերթ «Հառաջը» 1920թ. նոյեմբերի 28-ի համարում. «Մենք, որ օտարների ուժի վրա հույս դնելով շարունակ ձգտել ենք միանգամից ստեղծել Մեծ Հայաստան, մեր այս շշմեցնող պարտությունից հետո համոզվեցինք, թե որքան խաբուսիկ և վնասակար էին մեզ համար այդ մեծ հույսերը: Եվ եթե մենք լինեինք ռեալ քաղաքագետներ և ժամանակին ընդունեինք, որ չի կարելի առաջնորդել ազգային քաղաքական նպատակներ, հենվելով ոչ թե սեփական, այլ օտար ուժերի վրա, և եթե մենք ի վիճակի լինեինք ճշտորեն չափելու մեր սեփական ուժի և կարողության իսկական կշիռը, մենք երբեք չպետք է ձգտեինք ստեղծել մի Մեծ Հայաստան, որ չգիտեինք էլ, թե ինչպես պետք է լցնենք ազգաբնակչությամբ, պահենք ու պաշտպանենք և վաղուց պիտի ունենայինք հաշտություն մեր թշնամու հետ... Հուսախաբվելով մեկ օտար ուժից, մեզանից շատերը իրենց աչքերն ուղղում են իսկույն մեկ ուրիշ օտար ուժի վրա: Առանց ըմբռնելու, թե այդ երկրորդն էլ, ինչպես և երրորդը, չորրորդը պիտի ավելի մեծ հուսախաբություն, թերևս կործանում բերեն իրենց հետ... Ժամանակն է, որ մենք բոլորս սթափվենք և հիմնովին փոխենք մեր մինչայժմյան քաղաքական ընթացքը: Ամենից առաջ մենք պետք է հաշտ լինենք մեր հարևանների հետ»: Տեսնո՞ւմ եք, թե հոխորտանքը ինչպես փոխվեց խոհեմության: Ճիշտ է, այն այլևս իրաղրությունը փոխել չէր կարող, որովհետև ուշացած դատողություն էր օտար ուժերին ապավինելու կործանարար հետևանքի մասին: Այո, այն օրվա համար ուշացած էր, սակայն տեղին և ուսանելի է այսօրվա համար: Չէ՞ որ պատմությունը մեզ այսօր պետք է, որպեսզի չկրկնենք երեկվա սխալները:

ԿՏՐԻԾ ՍԱՐԴԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

(ինչպե՞ս կործանվեց Հայաստանի Հանրապետությունը)

Խմբագիր՝ *Հ. Խ. Այվազյան*
Նկարիչ՝ *Գ. Վ. Մարիկյան*
Տեխ. խմբագիր՝ *Մ. Է. Ճանճապանյան*
Սրբագրիչ՝ *Մ. Գ. Ստեփանյան*
Նկարների մշակումը՝ *Ա. Ա. Վարդանյանի*
Համակարգչային շարվածքը՝ *Ա. Զ. Եսայանի*
Էջադրումը՝ *Օ. Ղ. Թերզյանի*

Պատվեր՝ 24: Տպաքանակ՝ 500:
Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ
Երևան-9, Տերյան 91